ՇԱԲԱԹ
ԱՊՐԻԼ 1

SAMEDI
1er AVRIL
2006

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.425 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.425

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԱՒԵՐԱՑՈՒՑ ՕՐԷՆՔԸ

ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԳՐԳՌՈՒԹԻՒՆ ԿԸ ՈՐԱԿԷ ԵՂԱԾԸ

ՄԹՆՈԼՈՐՏԸ ԿԸ ՎԱՏԹԱՐԱՆԱՅ

Հինգշաբթի, Մարտ 30ին, ամբողջ օրը կը սպասուէր Սահմանադրական Խորհուրդի որոշումին: Ժամը 19ի շուրջ է որ որոշումը կը տրուէր: Առանց որեւէ վերապահութեան, Սահմանադրական Խորհուրդը կը վաւերացնէր օրէնքը: Միաժամանակ կը յայտարարուէր որ Շիրաք խօսք կ'առնէ յաջորդ օրը, այսինքն Ուրբաթ օր, ժամը 20ին եւ շատ հաւանական կը նկատուէր որ նախագահը անմիջապէս պիտի հռչակէ օրէնքը, առանց իսկ օգտագործելու ինը օրերու պայմանաժամը, զոր ունի: Խորհուրդը կ'արտայայտուէր միայն օրէնքին սահմանադրական օրինաւորութեան մասին եւ ոչ խորքին: Արդարեւ, բազմաթիւ անտեսումներու կարգին, օրէնքը (Սէ. Փէ. Ը.) նկատի չէ առած նոյնիսկ միջազգային օրէնսդրութիւնը: Արդարեւ, Աշխատանքի Միջազգային Պայմանագրութիւնը (թիւ 158) կը ճշդէ որ ոեւէ աշխատաւոր իրաւունքն ունի կանխաւ ազդարարութեան, հարկ եղած պայմանաժամով, պաշտօնազրկուելէ առաջ: Խորհուրդին վաւերացման լուրին հետ, կ'ըսուէր թէ հաւանական կը նկատուի որ Նոր Կրենէլ մը կազմակերպուի: Անունը մնացած է 1968էն, երբ դէպքերու աւարտին Շապան-Տէլմաս կազմակերպած էր հանդիպում մը սենտիքաներուն հետ Աշխատանքի նախարարութեան մէջ, ուր տը Կրընէլ: Ի դէպ, Փոնփիտուի կառավարութեան կողմէ այս բանակցութիւններուն մասնակցած է աշխատանքի երիտասարդ ենթանախարար մը՝ Ժագ Շիրաք:

Ամէն պարագայի մէջ, կացութիւնը շատ ծանր է եւ կը թուի որ Շիրաք եւ տը Վիլփէն չեն ուզեր նկատի առնել, կը յամառին եւ չեն ուզեր հասկնալ որ բանակցութիւններ տեղի կ'ունենան օրէնքէն առաջ եւ ոչ՝ վերջը: Ընդդիմադիրներուն նախապայմանը չէ փոխուած, որեւէ բանակցութեան համար նախ պէտք է օրէնքը վերցնել:

ԴԷՊՔԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

ՅՈՒՆՈՒԱՐ 16.– Տ. տը Վիլփէն կը յայտարարէ որ Առաջին Աշխատանքի Պայմանագիր մը (Սէ. Փէ. Ը.) կը ստեղծէ, որ յաւելուած մըն է կարելիութիւններու հաւասարութեան օրէնքին: Կը ճշդէ որ ստիպողական է:

ՅՈՒՆՈՒԱՐ 31.– Վիճարկումը կը սկսի Ազգ. Ժողովին մէջ: Տեղի կ'ունենան առաջին թափօրները:

ՓԵՏՐՈՒԱՐ 7.– Առաջին ցոյց մը ուսանող եւ աշխատաւոր միասնաբար:

ՓԵՏՐՈՒԱՐ 9.– Ազգ. Ժողովը կը քուէարկէ Սէ. Փէ. Ը.ն, գիշերը: Կէսօրէ ետք, կառավարութիւնը կ'օգտագործէ Սահմանադրութեան 49-3 յօդուածը ընդունիլ տալու համար օրէնքին ամբողջութիւնը:

ՓԵՏՐՈՒԱՐ 14.– Ռէնի ուսանողները արգելքի տակ կ'առնեն համալսարանը:

ՓԵՏՐՈՒԱՐ 21.– Վիճարկում եւ մերժում ընկերվարականներու արգելքի բանաձեւին:

ՄԱՐՏ 9.– Վերջնական ընդունում օրէնքին:

ՄԱՐՏ 11.– Գրաւուելէ ետք, 300 ուսանողներու կողմէ, Սորպոնը կը պարպուի:

ՄԱՐՏ 13.– Լիսէներու աշակերտները կը բազմացնեն ընդհանուր ժողովները եւ ցոյցերը:

ՄԱՐՏ 14.– Ընկերվարական կուսակցութիւնը կը դիմէ Սահմանադրական Խորհուրդին:

ՄԱՐՏ 18.– Ազգային ցոյց: Սիտ – Փէ. Թէ. Թէ.ի անգամ մը կը վիրաւորուի:

ՄԱՐՏ 23.– Բիրտ արարքներ Էնվալիտ:

ՄԱՐՏ 24.– Վիլփէնի հետ սենտիքաներու հանդիպումը կը ձախողի:

ՄԱՐՏ 28.– Մէկէն երեք միլիոն ցուցարարներ կը տողանցեն Սէ. Փէ. Ը.ի դէմ. գործադուլի օր մը:

ՄԱՐՏ 30.– Սահմանադրական Խորհուրդը վաւերացուց օրէնքը:

***

Ձախին, ուսանողներուն, սենտիքաներուն հակազդեցութիւնը շատ խիստ է եւ բոլորը համաձայն են գրգռութիւն որակելու համար կատարուածը: Աւելին՝ կոչ մըն է վտանգաւոր ճակատում մը, որուն ծաւալը օրէ օր կը մեծնայ: Արդէն իսկ, Մարտ 30էն առաջ 513 լիսէներ գրաւուած էին եւ բիրտ հակամարտութիւններ ալ տեղի կ'ունենային բանթողներուն եւ աշխատիլ ուզողներու միջեւ: 84ի վրայ 58 համալսարան փակ էին եւ հոս ալ միջադէպեր կային: Ժողովուրդին միայն 6%ը կողմնակից է Սէ. Փէ. Ը.ին, բայց այլեւս յստակ է որ Սէ. Փէ. Ը.ն պատրուակ մը կը մնայ եւ հարց շատ աւելի խոր է: Ճակատում մըն է իշխանութեան եւ ընդդիմութեան մը միջեւ եւ այդ ընդդիմութեան մաս կը կազմեն շատ շատեր, ուր կան ուսանող, դպրոցական, աշխատաւոր, ծնողք, վերջապէս դժգոհներու զանգուած մը: Եթէ Շիրաք յիշելով 68 Մայիսը, յոյս ունի որ Նոր Կրընէլ մը կը բաւէ ամէն բանի վերջ տալու համար, կը սխալի. ոչ երկրին դիմագիծը նոյնն է, ոչ ալ ինք տը Կոլ է:

***

Տ. տը Վիլփէն ութ նախարարներու հետ ճաշած է Մարտ 30ին, բոլորն ալ չիրաքեան նկատուած: Նախարարապետը չէ ուզած մանրամասնութիւններ տալ, միայն յայտնած է որ աւարտին "1940ի Ֆին չամփանեը մը" խմած են, ինչպէս կը գրէ Ֆիկառօ: Ֆրանս-էնֆօ ալ դիտել կու տայ որ ընտրուած տարին շատ յաջող չէ...:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՇԻՐԱՔ Մարտ 30ին, ԱՄՆ-ու Արտաքին նախարարը ընդունած է եւ այդ առթիւ յայտնած որ "տեսակէտներու նոյնացում մը" կայ Մերձաւոր-Արեւելքի գլխաւոր հարցերուն շուրջ: Ֆրանսայի նախագահը իր խոր մտահոգութիւնը յայտնած է Իրանի հիւլէական ծրագիրներուն մասին: Ծանօթ է որ Ապահովութեան Խորհուրդը երեսուն օրուան պայմանաժամ մը տուած էր Թեհրանի, որ վերջ տայ հիւլէական իր գործունէութեան, ինչ

ՏԷՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Տէսինի քաղաքապետ Փ. Գրէտոզի նախաձեռնութեամբ քաղաքապետական խորհուրդը դիմումներ յղած է Հանրապետութեան նախագահին, վարչապետին, Ազգ. Ժողովի, Ծերակոյտի նախարարներուն որ հարկաւոր միջոցները ձեռք առնեն հակահայ ժխտողականութիւնը պատժելի արարք դարձնելուն ի նպաստ: Առիկա կարելի կը նկատուի Կէսոյի օրէնքին կիրարկութեան դաշտին ընդլայնումով, կամ Ցեղասպանութեան Ֆրանսայի կողմէ ճանաչումին 2001 Յունուար 29ի օրէնքին վրայ յօդուածի մը յաւելումով:

Ակնարկելով Մարտ 18ի Թրքական ցոյցին տրուած արտօնութեան, Պ. Գրէտոզ կը գրէ թէ նման պատահար, այդքան ցնցող ու հոգեբեկիչ բնոյթով, պէտք չէր որ կարենար արձանագրուիլ մեր Հանրապետութեան մէջ որ օրէնքով պաշտօնապէս ճանչցած է Ցեղասպանութեան պատմական իրողութիւնը:

"Ֆրանսա ո՛չ կրնայ արտօնել, ոչ ալ հանդուրժել քննապաշտութեան այս կարգի արտայայտութեան որ պէտք է պատժուի, որպէսզի վերջնապէս յաղթահարուի" կը գրէ Տէսինի քաղաքապետը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԴԱՆԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Դանիոյ "Եւրոպական շարժում" կուսակցութեան նախագահը Է. Պոէլ պաշտօնական այցով Երեւան գացած է: Այցելած է Ծիծեռնակաբերդի եղեռնի յուշարձանն ու թանգարանը, յուշամատեանին մէջ արձանագրած. "Ողբերգութիւնը երբեք պէտք չէ մոռցուի": Ան ծաղկեպսակ մըն ալ զետեղած է 1915ի զոհերուն յիշատակին: Նոյն ատեն ըսած է թէ ինք ու իր երկիրը համոզուած են թէ 1915ին կատարուածը ցեղասպանութիւն էր եւ թէ բոլոր ազգերը պէտք է ուժը ունենան չեզոքելի նայելու իրենց անցեալին, պատրաստ գտնուելու համար ապագային. այս ուղղութեամբ լաւագոյն օրինակը նկատած է Գերմանիան, յանցաւոր անցեալի մը նըկատմամբ ունեցած կեցուածքով: Շեշտած է թէ Թուրքիոյ ալ շահը կը պահանջէ հայկական ցեղասպանութիւնը ճանչնալ, Եւրոպայի անդամակցութեան համար տեղին պայման համարելով նոյն ճանաչումը:

Այսուհանդերձ աւելցուցած է թէ Եւրոպական միութիւնը եւ Հայաստան պէտք է քաջալերեն ըլլան այդ անդամակցութեան,

(Շար.ը Դ. էջ)

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԵՐԺԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒԸ

Պուլկարիոյ Խորհրդարանը մերժած է Հայկական Ցեղասպանութեան ճանաչումի եւ Ապրիլ 24ը անոր զոհերուն ոգեկոչումի օր հռչակելու բանաձեւը: Ան ներկայացուած էր Յունուարին, "Աթաքա" կուսակցութեան կողմէ: Հայաստանի Սոֆիայի դեսպանը Ս. Մանասէրեան ըսած է թէ 2006ի ընթացքին դժուար է որ հարցը վիճարկումի նիւթ ըլլայ նոյն Խորհրդարանին մէջ: Մերժումին մէջ կարեւոր դեր վերապահած է "Ազատութիւններու եւ իրաւունքներու շարժում" կուսակցութեան որ լայն մեծամասնութեամբ ծագումով թուրքեր կը խմբէ եւ մասնակից է համախոհական կառավարութեան: Այլ պատճառ մըն ալ Թուրքիոյ հետ տնտեսական եւ առեւտրական սերտ կապերն են, կայ տակաւին 2007ին Եւրոպական Միութեան անդամակցելու յոյսը եւ Պուլկարիա ատոր նախօրեակին չի փափաքիր յաւելեալ խնդիրներ ունենալ դրացի Թուրքիոյ եւ իր թուրք փոքրամասնութեան հետ որ մեծագոյնն է երկրին:

Ս. Մանասէրեան ըսած է թէ ինչպէս ամէն տարի, այս Ապրիլ 24ին եւս հայաշատ քաղաքներու մէջ Ցեղասպանութեան 91ամեակը պիտի ոգեկոչուի:

գոնէ խուսափելու համար այդ երկրին անդամակցութեան ուժերուն հզօրացումէն:

Ինչ կը վերաբերի Ղարաբաղի հարցին, ըսած է թէ ան առաջնային տեղ մը չունի եւրոպացիներուն համար որոնք աւելի մտահոգ են Միջին Արեւելքի ու Քոսովոյի հարցերով:

***

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ

Հայեւադրբեջանական հրադադարին Ղարաբաղի ճակատին վրայ Մարտ 29ին նախատեսուած դիտարկումը կարելի չէ եղած ադրբեջանական կրակոցներու պատճառով: Օ-էս-Սէ-Ը-ի նախագահին անձնական ներկայացուցիչը Ա. Կասպրշիկ եւ ընկերացող պատուիրակութիւնը հարկադրուած են յետաձգել իրենց առաքելութիւնը, ապահովութեան երաշխիքներ բացակայած ըլլալով ադրբեջանական կողմէն: ԼՂՀ արտաքին գործերու նախարարութենէն տեղեկացուցած են որ դիտերու խումբը Բաքուի դրամաշնորհ տակ մնացած Կարմիրաւան գիւղէն արձակուած կրակոցներու տակ մնացած է:

ՎԱՂԸ՝

«ՅԱՌԱՋ- ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ»

Վաղը լոյս կը տեսնէ "Յառաջ – Միտք եւ Արուեստ"ի նոր (323) թիւը հետեւեալ բովանդակութեամբ. –

Իրական կամ ընդհանրական՝ հետամուտ հետքին Գ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

Mélancolie — Génie et folie en Occident Ch. MATOSSIAN

ՓԱՐԻԶԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՏ 26-Ի ԺՈՂՈՎԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՊԷՍ ԱԼ ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՄԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Kégham TOROSSIAN

ԽՄԲ.— Մարտ 28ի մեր թիւով (Ա. էջ) հակիրճ կերպով անդրադարձած էինք Փարիզի Եկեղեցւոյ Կրօնական Ընկերակցութեան Մարտ 26ի անորակելի ընդհանուր ժողովին: Ստորեւ, կու տանք այդ ժողովին մանրամասնութիւնները, բացառաբար բնագրին լեզուով, խուսափելու համար թիւրիմացութիւններէ: Սկիզբն ալ հակիրճ պատմականը թեմիս կանոնագրին:

***

BREF HISTORIQUE DES STATUTS DU DIOCESE DE FRANCE :

— 1925-27? : Projet de Statuts pour le Diocèse arménien d'Europe occidentale.

— 05/07/1984 : Gontag N[0] 1271 de S.S. Vazkèn Ier confirmant l'élection de Mgr Kude comme Prélat de Paris.

Extraits : «...Comme vous [Mgr Kude] le savez, il est prévu que des délégués de Paris, Lyon et Marseille constitueront un conseil diocésain qui élira le Prélat du Diocèse de France en fonction de nouveaux Statuts.

Nous pensons que ceci pourrait se faire au cours de l'an prochain.

Nous espérons que ceci se réalisera rapidement...».

— 17/07/1985, 04/11/1987, 01/02/1988 : Projets de Statuts pour le Diocèse arménien de France restés sans suite.

— 07/02/1997 : Réunion de représentants de toutes les paroisses de France à ce sujet à Paris sous la présidence de S.S. Karékine Ier.

— 12/09/2002 : Réunion à Paris des représentants des paroisses de France par Mgr Kude.

— 03/11/2003 - 31/03/2004 : Etude nouveau Projet de Statuts du Diocèse de France.

— 01/10 au 31/12/2004 : Demande aux représentants des paroisses de formuler leurs observatons et propositions

— Fin septembre 2005 : Projet de Statuts du Diocèse de France approuvé par Etchmiadzine.

— 25/09/2005 : Marseille élit ses 13 Délégués Diocésains (dont Nice?).

— 26/10/2005 : L'Assemblée des Délégués Parisiens accepte à l'unanimité les nouveaux Statuts.

— 02/11/2005 : Réunion du Conseil Spirituel Suprême à Etchmiadzine où il a été demandé que toutes les paroisses mettent leurs Statuts actuels en conformité avec ces nouveaux Statuts diocésains jusqu'au 31 mars 2006 pour que S.S. Karékine II puisse les promulguer officiellement.

— 20/11/2005 : Confirmation par lettre de S.S. Karékine II de lancement de ce processus.

— Du 03/12 au 28/12/2005 : Demandes incessantes verbales, écrites et par réunions avec Mgr Kude pour qu'il lance ce processus à Paris.

— 12/02/2006 : Lyon en Assemblée Générale Extraordinaire approuve les Statuts et élit ses 8 Délégués Diocésains.

— 26/02/2006 : Chaville en Assemblée Générale Extraordinaire approuve les Statuts et élit ses 3 Délégués Diocésains : Hraïr HRATCHIAN, Jacques PANOSSIAN et Krikor PAPAZIAN.

— 10/03/2006 : Convocation d'une Assemblée Générale Extraordinaire par courrier au tarif lent posté les 13 et 14/03/2006 (reçus en général entre le 17 et le 22/03/2006) avec copie des Statuts dans lesquels manquent le préambule, le chapitre VIII, l'article 23, la mention des quatre églises parisiennes dans la liste des paroisses de France. De plus les résolutions proposées ne correspondent pas à la convocation et les textes arménien et français de la convocation sont différents.

— 18/03/2006 : Les conclusions de l'AFAJA (Association des Avocats Arméniens) exposent toutes les irrégularités de convocaton de cette Assemblée Générale Extraordinaire.

— 23/03/2006 : L'Assemblée des Délégués de Paris élit ses 15 Délégués Diocésains : MM. ARSLANIAN Mourad, ASLANIAN Patrick, Mme ATTAMIAN Sona, MM. AZNAVOUR Jean, FINDIKIAN Puzant, GARABEDIAN Garo, GORDEBACK Dertad Haïgaz, GOSTANYAN Armand, KARAGOZ Gérard, KAYAN Nisan, KHAVESSIAN Télémaque, KOUZOUYAN Armen, TCHERPACHIAN Roger, TOPCIYAN Harutyun et TOROSSIAN Kégham.

— 26/03/2006 : Assemblée Générale Extraordinaire de Paris.

***

ASSEMBLEE GENERALE EXTRAORDINAIRE DU DIMANCHE 26 MARS 2006

Le pointage d'entrée retarde l'ouverture de la séance du fait du paiement des cotisations des retardataires et du refus (contrairement aux dispositions de la loi de 1901) d'accepter les pouvoirs des absents représentés. Dans la salle, une véritable version complète des Statuts est enfin donnée à ceux qui la désirent. Par ailleurs, il n'y aura pas de secrétaire de séance ni apparemment de compte-rendu ni de procès verbal.

En conséquence, la réunion convoquée pour 15 heures n'a commencé qu'à 15h45 par une prière générale prononcée par Mgr Kude.

Le T.R. Père Jiraïr Tashjian, Président de l'Assemblée des Délégués exprime sa satisfaction de voir le grand nombre de présents (qui ne sera timidement annoncé qu'en toute fin de réunion : 140 sur un total de 342 membres suivant comptes 2005) et indique que les présents ne sont pas ici pour dire oui ou pour dire non sur des Statuts que l'Assemblée des Délégués a accepté à l'unanimité le 26/10/2005.

Il donne la parole à M. Jacques Panossian qui rappelle que cette Assemblée Générale Extraordinaire ne peut pas être considérée comme valable puisque nos Statuts actuels précisent qu'il fallait l'annoncer et la convoquer trois mois avant et demande pourquoi nous sommes ici s'il n'est question ni de oui ni de non.

Pendant tout son exposé, Mgr Kude tentera à plusieurs reprises de l'empêcher de parler, dans un certain brouhaha et réprobations exprimées qui dureront pendant toute la réunion. C'est le T.R. Père Jiraïr Tashjian qui forcera Mgr Kude à se taire avant d'annoncer qu'il ne peut diriger des débats dans une telle et «anormale» atmosphère.

M. Kégham Torossian dans la suite de Jacques Panossian rappelle qu'il a été nommé parmi les rédacteurs du projet le 03/11/2003, qu'il en a été le secrétaire et qu'il connaît donc bien ces Statuts qu'il approuve dans sa globalité. Il donnera la liste de toutes les lenteurs et irrégularités apportées à cette réunion, le rejet des procurations présentées, les contradictions entre convocation en arménien et en français, les manques dans les Statuts envoyés et dans la liste des paroisses où Paris ne figure pas...

Au cours d'autres essais de prise de parole, celle-ci ne lui sera que rarement accordée comme à d'autres dans le grand et difficile tumulte ainsi créé

Mgr Kude après avoir exprimé son étonnement d'entendre des interprétations hors de propos (sic), indique que 2/3 des membres sont présents (suivant quel calcul?), que l'ordre du jour est clair (resic), qu'il nous est connu depuis les premiers jours pour garder constamment notre église sur la voie de la perfection et mener nos enfants en bon ordre dans la seule loi qui est celle de l'Evangile. Il fait ensuite un long rappel historique (3/4 d'heure) sur la création des différentes paroisses de France en citant l'appel de S.S. Vazkèn Ier pour la création d'un seul diocèse jusqu'à S.S. Karékine II qui a nommé un comité de rédaction en 2003 dont le texte définitif a été approuvé par Etchmiadzine fin septembre 2005. Enfin les nouveaux Statuts diocésains ont été acceptés par l'Assemblée des Délégués le 26/10/2005 et nous sommes ici, conformément aux dispositions de nos Statuts (triple sic, sic, sic) pour la création de l'union diocésaine de France. Vous êtes ici pour donner votre approbation.

Mourad Arslanian, Président du Conseil d'Administration intervient alors pour indiquer qu'il y a eu une erreur d'impression sur «l'oubli» de la 1ère et dernière page des Statuts envoyés avec la convocation, qu'il n'y a pas à tenir compte du retard de trois mois pour le lancement de cette convocation du fait que «nous ne faisons pas de changement» à nos Statuts adoptés par les Délégués le 26/10/2005.

Patrick Aslanian insiste sur l'article 22 de nos Statuts concernant la dissolution de notre association.

Mgr Kude rappelle alors que nous devons respecter nos Statuts (SIC, SIC, SIC) et invite les présents à faire une approche juridique de ceux-ci pour que ce projet soit adopté au plus tôt.

M. Hraïr Ayvazian se plaint qu'il n'y ait pas de secrétaire de séance et demande ce que nous faisons après avoir lu une liste de griefs concernant cette convocation.

Maître Sarkis Balian répond aux doutes soulevés par Patrick Aslanian en disant qu'il n'y a pas de changement de Statuts (sic), que la convocation a été écrite par erreur (sic) et qu'il n'y avait donc pas besoin de convoquer trois mois à l'avance, que la convocation avait été faite en respectant (sic) les 15 jours réglementaires, qu'il y avait peut-être eu quelques retards mais que cela avait été annoncé dans les églises, publié dans la presse, affiché dans les églises, dit sur AYP-FM. Il ajoute la question de savoir si cette Assemblée Générale Extraordinaire pouvait décider ou non et a conclu en disant que cette Assemblée n'était pas indispensable mais que ce n'était pas parce que cette Assemblée n'était pas indispensable que c'était interdit! L'Assemblée des Délégués pouvait prendre la décision toute seule mais a jugé digne ou courtois de convoquer une Assemblée Générale Extraordinaire. Il dira plus loin qu'il faut répondre le plus vite possible (sic) au vœu du Véhapar.

M. Kégham Torossian rappelle que pour changer ou modifier nos Statuts actuels ceux-ci prévoient la réunion indispensable d'une Assemblée Générale Extraordinaire avec un pourcentage de votes favorables à hauteur des 2/3 des membres. De plus, la première annonce faite à l'église de Paris date du 12/03/2006, le premier affichage du 19/03/2006, la première annonce n'est parue que dans le numéro datée du 15/03/2006 du journal «Haratch», que les convocations datées du 10/03/2006 n'ont été postées que les 13 et 14/03/2006 (cachet de la poste faisant foi!) avec un timbrage au tarif lent (vue l'urgence?) et ont été reçues au plus tôt que le 17/03 jusqu'au 21-23/03/2006 et pour certains encore plus tard!!!

M. Sarkis Bédoian redit que l'Assemblée des Délégués a entériné à l'unanimité les Statuts le 26/10/2005 et s'est obligée à convoquer une Assemblée Générale Extraordinaire à laquelle a été rajoutée après coup, la scission en quatre de Paris pour répondre à l'organisation paroissiale, qu'il ne fallait pas tenir cmpte des erreurs portées sur les convocations et voter exclusivement pour ce projet unique de Statuts.

A la suite de protestations, Mgr Kude précise que l'on interdit à personne le droit de prendre la parole et qu'il lui semble qu'il y a un manque de prise de responsabilité individuelle. Il indique que les notes ajoutées à la fin des Statuts envoyés (KT : il s'agit des lettres d'approbation de Marseille) montrent la marque de notre devoir et de ce que nous avons à faire et que rien ne nous détournera de notre devoir face au Véhapar qui va en faire la promulgation et qui restera étonné de la «tempête» d'aujourd'hui. Il rajoute que les déclarations irréfléchies qui ont été faites aujourd'hui n'ont aucun sens.

Vers 17h05, Mme Sona Attamian, constatant comme tous, les départs de plus en plus nombreux des présents, demande si on peut arriver à une conclusion et voter.

M. Chavarche Mardirossian pense que c'est inutile puisque l'Assemblée des Délégués a voté oui le 26/10/2005 et que nous sommes ici aujourd'hui pour être simplement mis au courant.

M. Yervant Dadian insiste sur l'importance de ces nouveaux Statuts, demande son texte en arménien et présente un certain nombre de souhaits ou ajouts à faire à ceux-ci, à savoir les obligations réciproques des paroissiens et élus, l'envoi régulier de comptes-rendus à tous les membres sur le fonctionnement de la paroisse et du Diocèse...

M. Hraïr Ayvazian reprend la parole pour dire qu'en fin de compte, s'il comprend bien, nous avons donc été convoqués dans le cadre d'une banale réunion amicale.

Mgr Kude lit alors un projet de résolution et dit que l'on ne vote que pour les Statuts et rien d'autre.

M. Kégham Torossian fait remarquer que cette résolution lue à cet instant, ne mentionne pas la loi de 1901 dont nous dépendons avant celle de 1905 et se voit refuser par Mgr Kude d'obtenir une copie de cette nouvelle résolution uniquement «verbale» pour laquelle il est demandé de voter.

M. Jacques Panossian demandera à nouveau le nombre de présents sans obtenir de réponse et fera remarquer que rares sont les membres qui ont eu un temps suffisant pour étudier ces Statuts et en tirer une opinion et des conclusions sérieuses.

M. R.G. Tcherpachian commente cette réunion en disant que le Catholicos n'a certainement pas souhaité une réunion aussi irrégulière que celle d'aujourd'hui et qu'il aurait peut-être fallut rester sur l'adoption du 26/10/2005. Mgr Kude intervient pour demander ce qu'a répondu le Catholicos à cela ? R.G. Tcherpachian dira : il n'avait pas à répondre.

A l'invitation de passer au vote par Mgr Kude, M. Arthur Haïrabédian demande si on peut voter "non".

Le Père Haroutioun Tachedjian déclare qu'il ne s'agit pas de procéder à un vote juridique mais à un vote moral et de faire attention que si on accepte

ԱՄԱԶՈՆԵԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒ ՎԱՃԱՌՔԸ

Պրազիլի նախագահը Լուլա երբ առաջին անգամ խօսեցաւ ամազոնեան անտառները սեփականաշնորհելու իր ծրագրին մասին, անոր նախարարները կարծեցին թէ կը կատակէ: Խօսքը կը վերաբերէր երկրին 73% տարածքին: Բայց առաջարկը ընդունուեցաւ: Քուէարկուած օրէնքը կը նախատեսէ 5 միլիոն քառ. քմ. տարածքին 130 հազարը վճարումի փոխարէն սեփականաշնորհել: "Երկրագունդին թոքերը" անուանուած այդ անծայրածիր անտառներուն մէկ հատուածը ծախել նպատակը կը հետապնդէ անոնց շահու ակնկալութեամբ ապօրինի շահագործումէն խուսափելու: Այդ շահագործումը գլխաւորաբար կ'ըլլայ արկածախնդիրներու կողմէ. անոնք կը գործեն ամբողջովին անօրինական ճամբաներով: Անոնցմէ մէկը պետական սեփականաթուղթ մը խարդախելով սեփականացուցած է հինգ միլիոն հեկտար տարածութիւն եւ երկու տարիէն անհաշուելի հարստութիւն դիզած է, արժէքաւոր փայտերու վաճառքով:

Նախագահին բուն նպատակը անտառային գօտիին լաւագոյն պաշտպանութիւնն է: Ան հաշուած է որ սեփականատէրերը ապօրինի շահագործողներուն, ոսկի եւ արժէքաւոր քարեր փնտռողներուն դէմ պիտի փակեն անտառին մուտքը: Նոյնիսկ պիտի չթոյլատրեն որ ոչ կառավարական կազմակերպութիւնները ազատօրէն մտնեն հոն, քանի տեսնուած է որ այս վերջինները օգնելու պատրուակով բժշկական բոյսեր կը գողնան, դեղագործական մեծ ընկերութիւններու ծախելու համար: Միւս կողմէն, անտառը վաճառելու որոշումը ցոյց կու տայ որ անոր հսկողութեան համար արբանեակով հսկելու համակարգը յաջողութիւն չէ արձանագրած:

Ծրագրին հակառակորդները վախ կը յայտնեն որ առաջին սեփականաշնորհումին կը յաջորդեն ուրիշներ ու երկիրը այդ տարածքին գերիշխանութիւնը աստիճանաբար կը կորսնցնէ: Վախը կայ նաեւ որ անտառը միջազգային սեփականութեան կը վերածուի ու ամէն լեզուով, ամէն գոյնի դրօշակով կը յայտարարուի. "Մուտքը արգիլուած է":

Հակառակորդները չեն կարծեր ալ որ գնողները պիտի յաջողին յարգել օրէնքով իրենց պարտաւորութեան բերուած սահմանափակումները: Օրինակ, օրէնքը կը նախատեսէ որ սեփականաշնորհումը միայն 40 տարուան պայմանաժամով պիտի ըլլայ, երեք տարին անգամ մը անտառային վարչութեան քննութեան ենթարկուելու պարտադրութեամբ: Պիտի հիմնուի անտառներու պրազիլական սպասարկութիւն մը որ պիտի որոշէ սեփականաշնորհելի մակերեսին սահմանները, կարմրամորթերուն կալուածները պաշտպանութեան տակ առնելով: Անոնք գետերու նման ռազմավարական կէտերը իրենց ուշադրութեան կեդրոնին պիտի պահեն, օտար շուկաներ ղրկուած ապրանքը քննելու համար:

Ծրագրուած գործարքը պետութեան շուրջ չորս միլիառ տոլարի եկամուտ պիտի ապահովէ, հինգ հազար աշխատատեղի բանայ: Մինչ այսօր նոյն շրջանին մէջ գործադրկութիւնը մրցանիշ աստիճանի հասած է:

Հետաքրքրական է տեսնել թէ նախագահ Լուլա Ամազոնի փրկի՞չը պիտի հանդիսանայ, թէ բնապահական աղէտի մը հեղինակը:

ՔԱՂՀԱՆ

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ԹՈՐՈՆԹՈՅԻ Սրնիպրուք հիւանդանոցին մէջ, Մարտ 17ին, իր մահկանացուն կնքած է Գէորգ Գոլոլեան: Գահիրէէն Թորոնթօ հաստատուած, ողբացեալը 1979ին ստանձնած էր Թորոնթոյի ՀՕՄ-ի ամենօրեայ նախակրթարանի բարերարութիւնը, որ կը մկրտուէր իր անունով:

***

ԷՇՐԷՖԻԷԻ (Լիբանան) Սէն Ժօրժ եկեղեցւոյ մէջ, Մարտ 8ին, Լիբանանի ազգային սէնֆոնիք նուագախումբին (խմբավար Շարուլ Փալլեան) հետ ելոյթ ունեցած է լիբանահայ դաշնակահարուհի Ձելլա Մարկոսեան: Երեկոյթը նուիրուած էր Կիներու Միջազգային տօնին: Յայտագրի ընթացքին նուագուած են Սմեթանայի, Չայքովսկիի եւ Փրոքոֆիեւի գործերէն: Դաշնակահարուհին իր նախակրթութիւնը ստացած է Համազգայինի "Բարսեղ Կանաչեան" երաժշտական քոլէժը, միաժամանակ ուսանած է Լիբանանի Պետական երաժշտանոցը: Ներկայիս կը յաճախէ Երեւանի Կոմիտաս երաժշտանոցը:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Յակոբ Տէր-Մելքոնեան սրահին մէջ, Մարտ 2ին, Վահրամ Փափազեան թատերախումբը ներկայացուցած է Տիմիթրիս Փսաթասի "Ստախօս կ'ուզուի" կատակերգութիւնը: Թատերախումբը կը վայելէ ՀԲԸՄ-ՀԵԸ- հովանաւորութիւնը: Բեմադիրը եղած է Հայաստանէն փրոֆ. Երուանդ Ղազանճեան: Ներկայացումը փայլուն յաջողութիւն արձանագրած է:

***

ՊՈՒՐՃ-ՀԱՄՄՈՒՏԻ "Յովհաննէս Պօղոսեան սրահին մէջ, Մարտ 12ին, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջ. Վարչութեան տեղի ունեցած է երգիչներ՝ Լէյլա Սարիբէկեանի եւ Արսէն Գրիգորեանի համերգը: Բացումը կատարելով, Արսէն Գրիգորեան նշած է, որ ինք Լիբանանի մէջ ելոյթ ունեցած է ինը տարի առաջ եւ թէ Լիբանանի հայ համայնքը կը նկատէ "Երկրորդ Հայաստան" մը: Պարերու բաժին մըն ալ ստանձնած էր Համազգայինի Գայեանէ պարի դպրոցին սաներու խումբը: Յայտագրին գլխաւոր բաժինը կը պատկանէր երգերուն:

***

ՖԻՔՍԻ (Յունաստան) Ս. Կարապետ եկեղեցւոյ սրահին մէջ, Մարտ 12ին, պաշտօնական բացումը կատարուած է հայ գիրքի առաջին ցուցահանդէսին, հովանաւորութեամբ ազգային Առաջնորդարանին եւ կազմակերպութեամբ "Քոբան" գրատան: Բացումը կատարած է Յունահայոց թեմի առաջնորդ Խորէն Եպսկ. Տողրամաճեան, որ շեշտած է հայ գիրքի կարեւորութիւնը որպէս առօրեայ սնունդ, մտերիմ ընկեր եւ ինքնազարգացման աղբիւր: Այցելուները հոն գտած են զանազան գիրքեր, գրական, պատմական, կրօնական, եւլն., եւլն.: Ցուցահանդէսը կրկնուած է Մարտ 19ին, այս անգամ Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ սրահը:

***

ՄՈՆՐԷԱԼԻ Փ.Պ. Պանքէ սրահին մէջ, Մարտ 12ին տեղւոյն ՀՕՄ-ի Սօսէ եւ Լաւալի Շուշի մասնաճիւղերու կազմակերպութեամբ, տօնուած է Կանանց Միջազգային Օրը: Նախաճաշի սպասարկութենէն ետք, բացման խօսքը արտասանած է հանդիսավարը՝ Հուրի Հայրապետեան, անդրադառնալով հայ կնոջ առաքինութիւններուն եւ կոչ ըրած երիտասարդուհիներուն որ միանան ՀՕՄ-ի շարքերուն: Օրուան բանախօսը եղած է Ցոլինէ Շամըլեան-Աֆարեան: Ան ընդգծած է հայ կնոջ դերը հայ մշակոյթի եւ ինքնութեան գոյատեւման մէջ: Գեղարուեստական յայտագրի գործադրութենէն ետք, պատուած են այն հայ կիները, որոնք մասնայատուկ աշխատանք տարած են ընկերային եւ բարեսիրական մարզերու մէջ: Պարգեւատրուած են հինգ կիներ:

***

ԳԷՄՊՐԻՃԻ (Գանատա) մէջ, Մարտ 3ին, կազմակերպութեամբ Համազգայինի Տաթեւ մասնաճիւղին, տեղի ունեցած է երեկոյթ մը նուիրուած Վեր. Յովհաննէս Սարմազեանի նոր հրատարակած "Հայ ընտանիքը հայ եւ քրիստոնեայ պահել, ինչո՞ւ եւ ի՞նչպէս" հատորին: Հանդիսավարը եղած է Վահագն Գազուեան: Գիրքը ներկայացուցած է Կոմիտաս Քհնյ. Փանոսեան, որ գնահատական արտայայտութիւններ ունեցած է: Հատորը կը բաղկանար ինը քարոզներէ:

---

ces nouveaux Statuts, il ne s'agit pas de la version qui a été envoyée par erreur avec la convocation.

Mgr Kude tenant à rappeler que ce n'était pas eux qui les avaient envoyés (triples SIC).

Mme. Lilian Chukurian dit alors que finalement il n'est demandé qu'une simple ratification.

Il est ensuite distribué des enveloppes à tous les présents restants avec carton bleu pour "oui" et carton rouge pour "non".

Résultats : Au total 78 votants, 74 votes bleus et 4 rouges.

M. Mourad Arslanian les proclame en disant que les Statuts sont adoptés puisqu'acceptés par plus des 2/3 des votants!!!

M. Kégham Torossian rappelle que nos Statuts disent que les 2/3 des membres de l'Association doivent donner leur approbation et non 2/3 des votants.

Mgr Kude apporte la conclusion disant qu'il va immédiatement transmettre ce résultat à S.S. Karékine II qui recevra avec joie l'expression de notre cordial et constant dévouement qui est de servir notre Eglise et notre Partie et que par courtoisie il ne signalera pas tous ceux qui sont partis avant la fin de la réunion. Il citera enfin une réflexion du regretté Sétrak Karian qui lui aurait dit un jour de ne jamais prendre de décision sans avoir mûrement réfléchi jusqu'au lendemain et que l'essentiel était de se saluer et de se respecter les uns les autres et que si des paroles blessantes avaient pu être prononcées, qu'elles restaient tout à fait superficielles.

Avant la prière de clôture (18h30), Mgr Kude a entonné "Der getso" avec les derniers présents. La suggestion de Sarkis Balian de sortir en groupe en chantant un "Tapor" n'a pas été adoptée.

Avant de sortir, Mgr Kude, entouré de ses proches, est venu ostensiblement saluer Kégham Torossian pour sa participation aux débats.

L'impression générale a été à nouveau désastreuse devant un tel contentement et devant le mépris affiché envers les fidèles ainsi que des règles les plus élémentaires de fonctionnement de l'Eglise et de l'Association Cultuelle.

K. TOROSSIAN
Président de l'Ephorie de Paris
Délégué Diocésain

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Արագ արագ, երկու օրուան մէջ բարեփոխուած չարաթաթերթը պատրաստ է, ջղային եւ ստիպողական հարցումներով լի (բայց իրականութեան մէջ Երուանդ շատ մը հարցումներու պատասխանները կը կռահէ արդէն...):

Անուշ Մարիան հիանալի կարտոնիկներու խոշոր փունջ մը կը ստանայ – ծաղիկ մը որ Երուանդ շատ կը սիրէ – եւ ծաղիկներուն միջեւ յայտնի կերպով դրուած ոսկեզօծ տուփիկ մը, որուն մէջ ալպեան տեսարանով մետալ մը, շատ նուրբ փորագրուած եւ կիտուածապատ: Երուանդ գիտէ որ ան Զուիցերիան կը սիրէ. անգամ մը զինքը իրեն հետ Ցիւրիխ տարած է:

Կոմս Ծուսթօ տէլլի Ատիմարի, նախկին դեսպան Պէրլինի մէջ, որուն տղան Երուանդ ազատեց յաջող գործողութեամբ մը հակառակ մահուան վտանգի մէջ ըլլալուն, ստիպողական հեռաձայն մը կը ստանայ, եւ կը փութայ իր համբաւաւոր բարեկամին օգնութեան: Հալէպ ղրկուելիք չարաթաթերթը քա՞նի մը օրուան ընթացքին կը մեկնի:

Ապա կոմսը իր վիրաբոյժ բարեկամին հաճելի ըլլալու համար իրեն հարցով կը հետաքրքրուի, եւ ինչ որ կ'իմանայ զինքը կը սառեցնէ: Տրապիզոնի հիւպատոս Կոռինի արտաքին գործոց նախարարութեան նամակ նամակի վրայ կը գրէ պատմելով ականատես վկայի սարսափելի եղելութիւնները, որոնց համար անկարող է բան մը ընելու: Նոյնիսկ իր կեանքը ապահով չէ եւ հակառակ ատոր հիւպատոսարանին մէջ կը յաջողի հայ երախաներ պահել:

Տրապիզոնի բոլոր հայ այր մարդիկը, կը գրէ Կոռինի, Սեւ Ծովու մէջ խեղդամահ ոչնչացան: Ինք ականատես եղաւ նաւակներու մէջ լեցուած շղթայակապ մարդոց որ կը հրուէին ծովուն բացերը եւ զինուորներուն կրակոցներուն տակ ծովամոյն կ'ըլլային: Տեսաւ թշուառ տարագրեալներուն կարաւանները. կիներ, ծերունիներ, պզտիկներ, որոնք հսկողութեան տակ առնուած հիւպատոսարանին փակ պատուհաններուն առջեւէն կը քալէին եւ օգնութիւն կը հայցէին: Եւ գիշերը, իր անձը վտանգելով, հակառակ լուսարգելի հրահանգին, Ծաքքոմօ Կոռինի դուրս ելած է անոնց օգնութիւն տալու:

Իբրեւ միակ օգնութիւն, երբ յուսահատ մայրեր իրեն կը վստահէին իրենց պզտիկները, կրցաւ այդ փոքրիկները հետը տանիլ: Բայց հետեւեալ օրերը խուզարկուած են հիւպատոսարանը եւ բոլոր պզտիկները տարուած են, բացի երկու փոքրիկներէ որ Կոռինիի կինը սեղմած է իր թեւերուն մէջ եւ իր զաւակները յայտարարած: Խուզարկութեան ջոկատին սպան հասկնալով, մէկ աչքը գոցած եւ մեկնած է: Ի վերջոյ ի՞նչ կ'արժեն երկու հոգի հազարաւորներու մէջ: Եւ յետոյ, մտածած ըլլալու է, իբրեւ իտալացի մեծնան, որով նմանապէս նպատակին հասած է:

Ծուսթօ տէլլի Ատիմարի շուտով գործի կը լծուի: Ամէն օր նոր հեռագիրներով յաւելուածական լուրեր կը պահանջէ եւ քիչ ժամանակուան մէջ կարող կ'ըլլայ Երուանդին հաղորդելու ճշգրիտ, թէեւ սարսափելի լուրեր: Փափկանկատ ձեւով իրեն կը գրէ պարզ բացիկ մը եւ ժամադրութիւն կու տայ Փետրոքի սրճարանին մէկ մասնակի սրահին մէջ: Յետոյ հոն առնելով անոր ձեռքերը իրեններուն մէջ, կը խօսի:

Ամբողջ հայկական Անատոլուէն կարաւանները ճամբայ ելած են ամէն մէկ բնակուած տեղէ, քաղաքներէ եւ գիւղերէն, Հայերու անվերջանալի շարքեր շարժման մէջ են դէպի հարաւ, Տաւրոսի դժուար լեռնաշղթային վրայով, ուղղուած դէպի Հալէպ:

Սուրիական քաղաքը խճողուած, պաշարուած է: Օտար հիւպատոսները, չարագուշակ լուրերու տակ ճնշուած, հրահանգներ կը սպասեն իրենց նախարարութիւններէն: Բայց ոչ մէկը գիտէ ընելիքը: Հարաւային Զօրաբանակին հրամանատարութիւնը ճիշդ Հալէպ իջեւանած է, Ճէմալ փաշայի հրամանին տակ որուն նպատակները ոչ ոք կը բացատրէ: Ծանօթ է անոր մրցակցութիւնը Էնվէրի եւ Թալաաթի, եռապետութեան այս երկու կոստանդնուպոլսեցի կիսաստուածներուն հետ, բայց հայկական խնդրին վրայ ինքը բացայայտ կերպով չէ արտայայտուած, հաւանաբար խորամանկութեամբ, շարժումի որոշ ազատութիւն ունենալու համար արաբական քաղաքի մը մէջ ուր թրքական տիրապետութեան հանդէպ արդէն որոշ անհանդստութիւն կայ եւ ուր քրիստոնեաներուն թիւը բարձր է:

(Շար. 76)

(Շար. Ա. էջէն)

որ Ի.ան մերժած էր: Գ. Ռայս Փարիզէն Լոնտոն անցած է:

ԵՐԵՔ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐ մեռած են Մարտ 30ին Այսրյորդանանի հիւսիսը գործուած անձնասպանական ոճրափորձի մը ընթացքին: Զոհերը երկու կիներ եւ մէկ այր մարդ են: Արարքին տէր եղած են ալ-Աքսայի նահատակներու Ջոկատները (Ֆաթահին կապուած): Քամիքազը 24 տարեկան Պաղեստինցի մըն է, Հեպրոնէն, որ ինքզինք ներկայացուցած է որպէս ուղղափառ Հրեայ մը:

ՄԱԿ-Ի Ապահովութեան Խորհուրդը արտօնած է որ բանակցութիւններ սկսին ՄԱԿ-ի եւ Լիբանանի միջեւ յատուկ դատարանի մը ստեղծման համար դատելու համար Ռ. Հարիրիի մարդասպանները:

ՖՐԱՆՍԱՅԻ գործազուրկերու թիւը 10.100 հոգիի նուազում մը արձանագրած է Փետրուարին: Համեմատութիւնը չի փոխուիր, միշտ 9,6% է:

ՏԻՅԱՐՊԷՔԻՐԻ մէջ, Մարտ 30ին, երրորդ օրն ըլլալով խռովութիւններ տեղի ունեցած են երիտասարդ Քիւրտերու եւ ոստիկանութեան միջեւ: Զոհերուն մէջ 8-9 տարեկան տղեկ մը կայ:

ԹԻՖԼԻՍԻ փողոցները իջած են, Մարտ 30ին, քանի մը հազար Վրացիներ, պահանջելով Սահակաշվիլիի հրաժարականը: Վարդերու յեղափոխութենէն ի վեր, յուսալքումը մեծ է եւ մթնոլորտն ալ մըտահոգիչ: Գորի (Ստալինի ծննդավայրը) վերադարձած ժողովրդական երգիչը՝ Միշիկօ Կոչկածէ թաքստոցի մէջ կ'ապրի, որովհետեւ կը հետապնդուի երգիծական երգի մը համար, որ կը քննադատէ իշխանութիւնը: Ռուսաստանէն հայրենիք վերադարձած էր, քաջալերուած՝ Սահակաշվիլիի խօսքերէն:

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՊԱՏԱՆԴԸ՝ Ճիլ Գարոլ, որ առեւանգուած էր Իրաք, Յունուար 7ին, ազատ արձակուած է: Լրագրողուհին չի գիտեր թէ ինչո՞ւ առեւանգուած է, ըսած է նաեւ թէ լաւ պայմաններու մէջ ապրած է:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ արեւմտեան շրջանը՝ Լորեստան երկրաշարժ մը պատահած է Մարտ 31ին եւ առաջին հաշուեկշիռի մը համաձայն 38 մեռեալ կար, 700 վիրաւոր եւ հարիւրաւոր գիւղեր քարուքանդ եղած էին:

ՊԱՀՐԷՅՆԻ բացը զբօսաշրջութեան նաւ մը ընկղմած է Մարտ 30ին, հաւանաբար անոր համար որ ծանրաբեռնուած էր, այսինքն իր տարողութենէն աւելի ճամբորդ ունէր: 130 ճամբորդի վրայ 53 մեռեալ կար առնուազն:

ՉԻՆԱՍՏԱՆ աշխարհի մեծագոյն դանձանակին տէրն է 853,7 միլիառ տոլար պահեստով, Փետրուարի վերջ, եւ այս ձեւով կը գէ կ'անցնի Ճափոնը (850,06 միլիառ):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE

Փ Ա Ր Ի Զ

ՁԱՏԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,
ժամը 13էն սկսեալ

Restaurant «Les Diamantaires»
60 rue La Fayette — 75009 Paris
Métro Cadet

Հաճելի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 կամ 01 45 93 00 25 թիւերուն:

ՄԵԾ ՊԱՀՔ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 5.–
ԼԸ. օր Մեծ Պահոց
Հսկումի՝ խաղաղականի եւ Հանգստեան ժամերգութիւն
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 18:00ին:

***

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 7.–
Աւետումն Սուրբ Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.30ին:
Պատարագ՝ ժամը 10ին:

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ-ԼԻՈՆ

ՄԵԾ ՊԱՀՔԻ ՀՍԿՈՒՄ ԵՒ ԱՐԱՒԱԳԱԼ

Մեծ Պահքի հետեւեալ Չորեքշաբթիները Արեւագալի ժամերգութիւն կը կատարուի ժամը 10.30ին, իսկ երեկոյեան ժամը 17ին՝ Հսկում.–

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 5:

Իսկ Արեւագալի ժամերգութիւնները կը կատարուին Մեծ Պահքի Կիրակիներուն պատարագէն առաջ:
Ժամերգութիւն՝ ժամը 8.45ին,
Արեւագալ՝ ժամը 9.45ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին,
Քարոզ եւ հոգեհանգիստ՝ ժամը 11.45ին:

***

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

ժամը 17.30ին

Մ Ի Ջ Ի Ն Ք

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 5.–
Ս. Աստուածածին Եկեղեցի (Նիս)
Քարոզիչ՝
ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 7.–
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցի (Փրատօ)
Քարոզիչ՝
ՉԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.

Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

PROJET «RETOUR AUX SOURCES»

Inauguration d'un Centre d'Accueil et de Formation destiné aux demandeurs d'asile de nationalité arménienne

L'Association Arménienne d'Aide Sociale en coopération avec l'Agence Nationale de l'Accueil des Etrangers et des Migrations et cofinancée par le Fonds Européen pour les Réfugiés a inauguré le 15 novembre 2005 son centre d'accueil et de formation destiné aux nationaux arméniens qui sont en situation irrégulière en France.

Avec ses partenaires, l'AAAS accompagne le retour volontaire en Arménie, en soutenant financièrement et matériellement leur réinsertion par des formations professionneles et des aides à la création d'entreprises.

Pour tout renseignement contactez-nous à l'adresse suivante :
AAAS - Centre d'Accueil et de Formation
5, rue du Marché Ordener
75018 Paris
Tél. : 01. 42. 63. 32. 45
Fax : 01. 42. 63. 32. 81
E-mail : aaas.retour@free.fr

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Տօն Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յԵրուսաղէմ
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8:30ին:
Սուրբ Պատարագ՝ ժամը 10:30ին:
Դռնբացէք՝ ժամը 16:00ին:
(Քանզի զկատարածի գալստեանն՝ եւ զդատաստանի աւուրն ունի զխորհուրդ)

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ-ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Ժամերգութիւն՝ ժամը 8.45ին,
Պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ
Կը քարոզէ՝
ԴԱՒԻԹ ԱՐՔ. ՍԱՀԱԿԵԱՆ
Երեկոյեան Դռնբացէք ժամը 16ին:

REPAS PAROISSIAL DES RAMEAUX

le dimanche des Rameaux
9 avril, à 13 heures
l'Association Sainte-Croix de Paris
organise
UN DEJEUNER COMMUNAUTAIRE
dans la salle polyvalente
de la Cathédrale Sainte-Croix,
au 13 rue du Perche — PARIS 3e

après la Divine Liturgie
et avant la Cérémonie de l'Ouverture des Portes.

Réservations :

— Paroisse : 01. 44. 59. 23. 50
— Eparchie : 01. 40. 51. 11. 90.

P.A.F. :	Adultes: 15 Euros
	Adhérents: 12 Euros
	Enfants, étudiants: 10 Euros

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

COMMUNIQUE

La Croix Bleue des Arméniens de France est heureuse de vous annoncer que les festivités du 50ème anniversaire de la colonie de Bellefontaine ont généré un bénéfice de 40.000 Euros.

La première tranche des travaux de rénovation du centre de vacances sera lancée dès avril 2006.

A tous les participants, nos plus chaleureux remerciements pour leur générosité.

LE CONSEIL D'ADMINISTRATION DE LA C.B.A.F.

□

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —
un Voyage en Arménie
Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine	: 06 12 93 09 80
Jeanine	: 04 94 32 11 87
Marie-Rose	: 06 22 11 81 75

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

RECRUTEMENTS POUR LES SEJOURS DE BELLEFONTAINE (JURA)

ETE : JUILLET ET AOUT

- **Directeurs diplomés BAFD**
- **Animateurs diplomés BAFA ou stagiaire BAFA**
- **Infirmière**
- **Econome**
- **Intendant(e)**
- **Coursier**

Candidatures à adresser à :
CBAF — 17 rue Bleue 75009 PARIS,
par e-mail : cbaf@wanadoo.fr ou par fax : 01 53 34 12 13
Date limite des candidatures : 10 AVRIL

A la rencontre de l'Arménie et du Karabagh avec l'UCFAF

du lundi 24 juillet au dimanche 6 août
1420 Euros tout compris au départ de Paris
(sauf visas et taxes aéroports)
base chambre double et demi-pension
excursions et visites quotidiennes avec guide francophone
ainsi que circuit 4 jours jusqu'au Karabagh
Renseignements et inscriptions :
UCFAF : 6, Cité du Wauxhall — 75010 Paris
Tél. 01 42 08 76 49 (de 15h à 17h) - Fax 01 42 08 09 70
www.ucfaf.com
Madame YAZIDJIAN — 29-33, avenue Pasteur — 93100 Montreuil
Tél. 01 42 87 95 98 heures bureau

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84876

ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 2
DIMANCHE
2 AVRIL
2006

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Թիւ 323

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS

TÉL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70

COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տարի · 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ

Արտասահման : Տարի · 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)

270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ

C.C.P. PARIS 15069-82 E

81րդ ՏԱՐԻ - Թիւ 21.426

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

81e ANNEE — N° 21.426

ԻՐԱԿԱՆ ԿԱՄ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ՝ ՀԵՏԱՄՈՒՏ ՀԵՏՔԻՆ

Գրեց՝

ԳՈՒՐԳԷՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆԻ «ԵՐԿՈՒՔ» ՀԱՏՈՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՈՎ

Պատմութիւնը պատմել, այսինքն պատմութիւնը գրկել իր կազմարար տարրերից, եւ դա կատարւում է ի գոհացում այն հարցումին, թէ գիրքը ի՞նչի մասին է, նաեւ այն նպատակով, որ հաւանական ընթերցողը ամփոփումի միջոցով ծանօթանայ գրքին եւ հաւանելու դէպքում նախաձեռնի ընթերցումը, առնուազն, երբեմն յաջողած գրքի վերլուծութիւնները Timesերում առաջնորդւում են այդ ըսկըզբունքով:

Սակայն, ոչ անպայման այդ սկզբունքով, այլ ընթերցումի թելադրանքից ելնելով է միայն որ կարելի է կեդրոնանալ նշուած տարրերի վրայ, որոնք որպէս "ի՞նչպէս" ինքնին աւելի խօսուն եւ յատկանշական են, քան թերեւս պատմութիւնը որպէս "ի՞նչ", սակայն կազմարար այդ տարրերի տարանջատումը ոչ միշտ յաջողած այն հետաքրքրասիրութեան է նման, որ ժամացոյցը բացել, մասնիկները անջատել, սարքի աշխատելու գաղտնիքին ձգտել, իսկ վերջում ոչ այդ գաղտնիքը իմանալ, ոչ էլ կարողանալ ժամացոյցը վերահաւաքել, յատկապէս երբ ժամացոյցը արուեստի գործ է եւ ժամանակը չապառող:

"Երկուք"ը Գրիգոր Պըլտեանի գեղարուեստական արձակ շարքից վեցերորդն է: Այս նշումը անցեալ եօթ տարիների ընթացքին հեղինակի գրական վաստակը թուարկելու նպատակով չէ միայն, այլ, այս շարքի առաջին հատոր "Սեմեր"ից սկըսեալ մինչեւ "Երկուք"ը, դէմքերն ու դէպքերը, ժամանակներն ու վայրերը, անկասկած լուսանկարներն ու պատկերները ուժեղ կամ նուազ ներկայութեամբ, յաջորդաբար, ի յայտ են գալիս գրութիւններում, իւրաքանչիւր անգամ կրելով մի յաւելում, բացայայտելով մի գաղտնիք, ասելով չասուած մի խօսք: Այս երեւոյթը ա՛յն տպաւորութիւնն է ստեղծում որ նոյն պատումն է որ շարունակւում է հատորից հատոր որպէս վիպաշար, մինչդեռ կարելի է նաեւ հասկանալ ոչ թէ նոյն պատումը, այլ ընթացող կեանքն է, այդ կեանքի հետքն է, որ շրջանակւում է լեզուի մէջ:

Ասպարէզին ձգտում է առաջին տասնըեակ էջերի ընթերցումով որոշել պատումի վայրն ու ժամանակը, յստակացնել ներկան ու անցեալը, զատորոշել իրականն ու անիրականը, կամ գտնել ընթերցողի ապահով անկիւն՝ հետամուտ լինելու պատումի զարգացումին. այս բոլորը, միահիւսուած, ընթանում են ժամանակի արագութեամբ եւ ընթերցողը պարտաւոր է հրաժարուել անմիջապէս կռահելու, հասկանալու եւ կողմնորոշուելու ցանկութիւնից:

Նախ՝ կայ Լուքսեմբուրգ... Նախ՝ կայ Լութֆիկ քեռիի ժամագործի սեղանը որ այժմ ծառայում է որպէս գըրասեղան, յետոյ սենեակը, ուր մերթ ընդ մերթ լսւում է ձայնը, "չմոռնա՛ս" յուշող մօր ձայնը, երբեմն սպառնալի, ապա յանկարծ օդանաւն է, ուր երկու ժամ մնացած նպատակակէտին առաջարկւում է նախաճաշ: Զգիտես այս օդանաւը վայրից վայր սուրացող իրական օդանա՞ւ է, թէ՞ ժամանակից ժամանակը փոխադրող հնարք. յաջորդող պատկերը այցելուներն են որ պիտի գան բարի գալուստի՝ մանկութիւնից մոռացուած դէմքեր, Վարդուհի մօրաքոյրը, մօրաքրոջ որդի Վահանենք:

Խօստումի եւ հանդիպումի մէջ կայ երկար սպասումի պահ, կատարւում է մանրագնին նախապատրաստութիւն գրեթէ տասնեակ դլուխների վրայ ձգուող որ հանդիպումը, այլ պարագաներին դէպքը, կամ խօսքը մարմնաւորուի, իմաստ ըստանայ, վերածուի ծաւալուն տեսարանի: Սա կատարւում է ոչ թէ ընթերցողին յարատեւ սպասողական դրութեան մէջ պահելով, այլ ընդհակառակը, տեղի է ունենում հատուածաբար, ոչ կարեւոր խօսք ասելու պէս, աննկատ, մինչեւ որ ընթերցողը յանկարծ իրեն գտնի դէմ յանդիման դէպքին կամ տեսարանին առանց այն որ զգայ իր սպասումի պահերը, ինչպէս որ ասւում է՝ "ժամանակի պէտք ունիս, խոչընդոտի, պատնէշի, սպասման, լռութեան... որպէսզի կարենաս գաղտնի պատմութիւն մը... արձակել հեռապատկերին վրայ" (էջ 542):

Նաեւ չգիտես որ այս բոլորը կատարւող, կամ կատարուած դէպքե՞ր են ասենք անցեալի ներկայում որ գրւում են, թէ՞ մտմտուք են գրասեղանի առջեւ, ուր պիտի մնալ եւ համբերել մինչեւ ծայրը, ինչպէս խոստանում է գրողը: Կարծես փորձը ժամանակ կոչուածի եթէ ոչ յաղթահարումը, այլ սահմանումը լինի գրելու արարքով եւ Լութֆիկ քեռիից պատահական կերպով հասած ժամագործի սեղանը, պատահական ոչ մէկ դեր ունի եւ ծառայում է այդ նպատակին իր բոլոր խորհրդանշաններով:

Արագ անցումները դրուագից դրուագ, քողածածկ ցատքերը տեսարանից տեսարան, ժամանակի խախտումը՝ վիպային թէ այն որ գիտենք, երազային թուացողը դարձնում է իրական, իսկ իրականը կասկածելի՝ "հիմա չես ուզեր շարժիլ աթոռէդ, կարծես թէ տակաւին կը դիտես խաղանկար իրականութիւնը, չես հասած հոս, միշտ ճամբորդութեան մէջ ես դէպի Պէյրութ, դէպի Փարիզ. հո՞ս թէ՞ հոն, ո՞ւր, կը խարխափես, կարծես թէ վերադարձ ու մեկնում ջնջուեր են նոյն ատեն, միացեր են, իսկ միանալու համար հարկ է անջատուիլ, չէ՞, կամ պատրանքի զօրութեամբ հաստատել որ տեղերը նոյնն են, չեն փոխուած մէջդ" (էջ 11):

Երեւութապէս "Երկուք"ը պարունակում է մէկ պատումի մէջ զուգահեռաբար զարգացող եւ կիզակէտին հասնող երկու գլխաւոր պատումներ, ինչպէս իրարից անջատաբար ընթացող երկաթուղծեր, որոնց հատման ու միացման կէտը վրայից անցնող գնացք է, գնացքը ժամանակի, կերպարների, մէկից միւսը փոխանցուող դէպքերի ու զուգորդումների: Անջատումով, պատրանքի զօրութեամբ, կամ ընդառաջելով ձայնին, առաջին գըլխում սաղմնաւորւում է յետագայի պատումները՝ ամառնային արձակուրդին աշխատանք փնտռող Ճեմարանի աշակերտի պատմութիւնը ճարտարապետական գրասենեակում, եւ Վարդուհի մօրաքրոջ, աւելի ճիշդ ընտանիքի պատումը, արդէն այսպէս սահմանուած "բլուր"ի միջավայրում: Բացի երկու հիմնական այս պատումներից՝ կան տասնեակ չերտաւորուած դրուագներ, դէպքեր եւ պատկերներ, որոնք ինչքան ձուլուած եւ իմաստաւոր են ամբողջականի մէջ, նոյնքան ներկայանալի են հատուածաբար:

Ընդհանրապէս արձակ այս գործերում միշտ հետաքրքրական է պատմողի տեսանկիւնը, ձայնը: Գրիգոր Շահինեանը մի ուսումնասիրութեան մէջ "Հարուած" հատորին պատմողին սահմանում է այսպէս՝ "միեւնոյն անձի երեք իրավիճակներ կը գոյակցին վէպի մէջ. մասնակից-կերպար պատանիինը, անոր դուրսէն նայող պատմողինը եւ զանոնք վէպի բեմին վրայ տեղադրող հեղինակինը"(*): Այս սահմանումը ինչ որ չափով նաեւ համապատասխանում է "Երկուք"ի պատմողին: Ընտանիքի պատումի պատմողը դէպքերին մասնակից եւ "ես"ով պատմող պատանին է, ճարտարապետական գրասենեակի պատմողը դէպքերին հեռուից հըսկող եւ "դու"ով նոյն "ես"ի մասին խօսող հեղինակն է, ոչ թէ գրքի, այլ պատումի հեղինակը, թերեւս տեղ ու ժամանակ փոխած՝ արդէն ուսանող, եւ բազմաձայն հեղինակից անկախ, այս անգամ կայ նաեւ գրողը, այն որ ստացել է սեղանը եւ այն որ հայելուն մէջ յանկարծ նկատել է առաջին ճերմակող մազը, սա եւս որպէս ժամանակի խորհրդանիշ, ինչպէս այլ տեղերում նշուած 60ական թուականների քաղաքական դէմքերն ու դէպքերը, դերասանների անունները, ճաղ երաժշտութիւնը, ժամանակի սիրուած պարերը, կամ դպրոցական յուշատետրի արձանագրութիւնների թուականները:

"Ես"ի եւ "դու"ի այս կիրառումը, յարատեւ փոփոխութիւնները, կարծես ժամանակի տարածութեան կառավարման միջոց լինեն, բլուրի պատմութիւնը, որ թւում է հեռաւոր ժամանակի պատմութիւն, "ես"ի գործածութեամբ աւելի է մօտենում ներկային, մօտութիւնը նաեւ որպէս հարազատութիւն, իսկ ճարտարապետական գրասենեակի առաւել մօտաւոր թուացող ժամանակի դէպքերը "դու"ի գործածութեամբ տեղադրւում են հեռաւոր ժամանակների կալուածում:

Վերադառնալով պատումին, ինչպէս որ ասուեց, առաջին պատումը կատարւում է ճարտարապետական մի գրասենեակում: Ճարտարապետական ընկերութեան տէրն ու տիրականը Միացեալ Նահանգներից այցելած եւ Պէյրութում կայք հաստատած Պայրոն Շահէնն է Ամերիկացիներին յատուկ վարք ու բարքով: Գրասենեակի աշխատակիցներն են օրիորդ Ընծայ, Ռոզա Ֆէթթէլ, Արտաւազդ, մի շարք ուրիշներ, ինչպէս եւ ամառնային արձակուրդին աշխատող՝ Ճեմարանի ուսանողը, որ ամերիկամէտ այդ գրասենեակում պիտի կոչուի պօյ, կամ օֆիսպօյ, ստանձնելով մի շարք պարտականութիւններ, ինչպէս մաքրարարութիւն, նամակների ցրւում, սուրճի պատրաստում, որը ըստ դերասանուհի Գլխադիրի արուեստ է: Տասնեակ միջադէպերից եւ ցնցող պատկերներից յետոյ, պատումը հասնում է կիզակէտին եւ գրեթէ աւարտւում է Ռոզի անյայտացումով տեղի տալով ոստիկանական քննութիւնների:

Զուգահեռաբար զարգանում է այն ինչ որ կոչեցինք ընտանիքի պատմութիւն: Նկարագրւում է պատանիի եւ իր հօր յարաբերութիւնները, մօր եւ մօրաքրոջ գաղտնի զրոյցները, չարքաշ կեանքը թաղի մարդկանց, որոնք կարի մեքենայի առջեւ, կամ գործագործութեան սարքի դիմաց, կամ կօշկակարութեան կրպակում օրն ի բուն պիտի աշխատեն որ կեանքը շարունակուի, սակայն հիւանդութիւնը, վարակիչ ախտը, ինչպէս որ իրենք պիտի ասէին՝ "վէրէմ" խուսափելով բուն բառից, պիտի կործանի ընտանիքը տնտեսապէս ու ֆիզիքապէս:

Մամասի եւ որդու՝ Վահանի հիւանդութիւնից յետոյ, բժշկութեան ծախսերը հոգալու նպատակով, Վարդուհին տան կարասիները ծախում է եւ որպէս վերջին միջոց լծւում է իր առողջութիւնը վտանգող գործագործութեան աշխատանքին, գործի վիշապի եղրանախշը ինչքան ձեւ է ստանում, այնքան Վարդուհու առողջութիւնը վատթարանում է: Պատումը աւարտւում է Վարդուհի մօրաքոյրի մահուամբ ու թաղման տեսարանով, կարծես վիշապն էր իրեն կլանողը, աշխատանքի ու թշուառութեան վիշապը: Վերապրող և արդ այլ մի կործանման ենթակայ այս մարդկանց համար, Տեքարթի "Մտածում եմ, ուրեմն կամ"ը պերճանք է ու դատնաթափ խօսք, քանի որ նրանք, "այնքան ատեն որ ոտքի էին ու կը բանէին՝ կային" (էջ 202): Բանելը որպէս լինելութեան գրաւական:

Այդու ամենայնիւ պարզամտութիւն կը լինի եթէ գրքի սկզբում որպէս բնաբան բերուած, "Ծագումով եկուոր, էութեամբ մէկ է / Երեւման պահով միայն երկուք է" Լաօ-Ձէի տողերը վերագրել երկի երկպատումին, քանի որ ամբո՛ղջ գրքի տարածքին առկայ է երկուութեան գաղափարը՝ երբեմն իրերամերժ, երբեմն իրար լրացնող: Փարիզ ու Պէյրութ, Հայ ու Արար, մայր ու մօրքուր, հայր ու որդի, հինն ու նորը, քանդուողն ու սարքուողը, ինքնութիւնն ու անինքնութիւնը, անջատումն ու միացումը եւ այսպէս շարունակ կարելի է թուել բազմաթիւ այլ երկուութիւններ, որոնք առանցքն են կազմում պատումեան:

"Երկուք"ը, ամենածաւալունը, թերեւս ամենատիրապետուածը արձակ այս շարքից, բաղկացած է 39 գլուխներից: Իւրաքանչիւր գլխի առաջին բառի առաջին տառի հաւաքականութիւնը կազմում է այբուբենը, իսկ 39րդ գլուխը որ սկսում է առաջին գլխի նոյն "ամէնէն առաջ" բառերով, խորհրդանշում է վերադարձ սկզբին, սկիզբը վերջում, կամ վերջն ու սկիզբը նոյն կէտում, այն տարբերութեամբ, որ վերջին գլխի առաջին "ամէնէն" բառի այբը գլխագրուած չէ, որը կարող է նշանակել բացուող այլ մի շրջագիծ շրջագծի վրայ, կամ քեղիկոնա-

●►

MELANCOLIE-

génie et folie en Occident

Galeries nationales du Grand Palais, Paris, 10 octobre 2005 - 16 janvier 2006

Neue Nationalgalerie, Berlin, 17 février - 7 mai 2006.

Catalogue, Réunion des Musées Nationaux / Gallimard, 2005, 502 p.

par Chakè MATOSSIAN
Docteur en Philosophie et Théorie de la Communication

De longues files de spectateurs se sont pressés à l'exposition que le Grand Palais consacrait à la mélancolie : **«Mélancolie — génie et folie en Occident»** organisée par Jean Clair, commissaire général de l'exposition, en hommage à Raymond Klibansky à qui on doit de belles recherches pionnières en ce domaine. Humeur d'élite, la mélancolie, depuis Aristote, caractérise l'homme d'exception, le génie marqué par la bile noire et reconnaissable à sa pose (la main à la mâchoire, le coude sur le genou), — ou à la principale d'entre elles, puisque Maxime Préaud nous en indique plusieurs [1] —, de même qu'à sa planète, Saturne. Un tel sujet n'a pas manqué d'attirer des files de visiteurs espérant peut-être voir dans la noirceur de notre époque, le stress et la déprime sinon même la folie meurtrière qui la marquent, un symptôme de mélancolie, un signe de génialité, une explication. Mais la mélancolie reste insaisissable, exigeant une multiplicité d'approches, se faufilant entre le corps et l'âme, changeant de couleur, allant du jaune au noir en passant par la chromophobie ou le bleu du «blues» [2], lequel révèle aussi le rôle de la musique dans l'apaisement de ce mal, comme l'analyse Jean Clair, de David et Saül à Nietzsche et Wagner [3]. Circulant entre l'art, la médecine, la philosophie, la théologie, la chimie, l'astrologie ou la géométrie, la mélancolie récuse les compartiments et produit une scénographie. Il y a «tout un théâtre de la Mélancolie» [4], affirme Jean Clair qui en relève la marque dans la gravure de Dürer cherche à le montrer dans l'exposition à travers des bestiaires, lapidaires et herbiers, une multitude d'approches et d'objets hétéroclites, dont la présence semble parfois un peu forcée par rapport au sujet. A l'inverse, on aura pu s'étonner d'une absence de la peinture contemporaine non figurative, telle que celle d'un Soulages. Quoi qu'il en soit, le sujet a permis de réunir un ensemble considérable d'œuvres rares et célèbres, antiques, classiques, romantiques ou contemporaines, de la célèbre gravure de Dürer à l'étonnant bonhomme de l'australien Ron Mueck, en passant par les paysages sublimes et solitaires de Friedrich, les dessins cauchemardesques d'un Goya, les arrêts sur image d'un Edward Hopper (dont les œuvres font l'objet d'un ouvrage de Martin Melkonian [5]) l'œuvre d'un Robert Burton

---

●►

յին կառոյցք: Որոշ բացառութիւններով, գրեթէ զոյգ թուեր խորհրդանշող գլուխների վրայ զարգանում է ճարտարապետական գրասենեակի, իսկ կենտ թուերի վրայ ընտանիքի պատումը: Կայ աւելի մի կարեւոր երեւոյթ այբուբենին առընչուող, որը հանդիպում ենք գրքի վերջին հատուածում. "Լեզուդ բռնկեր է բերնիս մէջ: Կը պակսին միայն բառերը, անոնք որ թերեւս այբբենարանիդ տառերուն պէս հեգելով կ'ընծայես ինծի" (էջ 549): Այս եւ լեզուին առընչուող բազմաթիւ այլ մտմտուքներ, կառուցայինը վերածում են բովանդակայինի եւ ամէն ինչ դառնում է մայրենիի, այդ ընծայումի արդիւնքը:

Սկզբի էջերում, ինչպէս եւ տեղ-տեղ ընթացքին, ընթերցողը պիտի հանդիպի դրուագների որ մօր ձայնը պատմում է մոռացուած պատմութիւններ եւ թելադրում է՝ չմոռանաս, ստեղծելով այն տպաւորութիւնը պատմողի մօտ թէ՝ "պիտի ուզէր անկասկած մրմնջալ եւ քեզ դարձնել իր գրագիրը" (էջ 21): Գրագրութիւնը, յատկապէս գրել կամ արձանագրելը որպէս չմոռանալու միջոց, սակայն գրագիր դառնալու փոխարէն, պատմողը դառնում է ունկնդիրը ձայնի:

Եթէ "Սեմեր"ի մէջ կատարւում է լուսանկարների տրցակի փոխանցում, այստեղ կատարւում է բառերի ընծայում, առաջինի մէջ թելադրանքը պահելն է, պահպանելը, իսկ երկրորդի մէջ՝ յիշել եւ չմոռանալը: Առաջինի մէջ պատկերն է որ վերածւում է գրի, երկրորդի մէջ ընծայուած բառերն են որ պատկերում են պատումը, ոչ թէ պահպանելու կամ չըմոռնալու նպատակով, այլ ընդհակառակը, կորցուածի հետքերով գտնելու ուրիշ իրականութիւն: "Առանց մոռացումին ինչպէ՞ս մտաբերել, առանց անհետացումին ինչպէ՞ս հետեւիլ հետքի մը" (էջ 16) կարդում ենք փակագծերի մէջ ինչ որ տեղ: Ուստի ձայնին ընդառաջելու առաջին պայմանը ձայնին հակադրուելն է, եթէ թելադրւում է չմոռանալ, պէտք է մոռանալ, որ ի հետեւանք կարելի լինի մըտաբերել, հարկաւ, եթէ չմոռանալն ու մտաբերելը նոյն բաներն են: Նոյն տրամաբանութեամբ արծարծւում է անհետացումի, հետեւաբար հետքին հետեւելու գաղափարը՝ Վարդուհու մահից սկսեալ մինչեւ Ռոզի անհետացումը, կամ ինչու ոչ, Երկրից մինչեւ Պէյրութի թաղերը:

Կարելի է ասել որ ամբողջ գիրքը կառուցուած է այդ հետքերի վրայ, հետքը մարդկանց ու դէպքերի, բանաւորից առարկայականին՝ ինչպէս պատմութիւնից ժամանակներ ու վայրեր, եւ երազայինից իրական՝ ինչպէս Վահանի անսպասելի այցը դէպի այդքան անմատչելի թըւացող "Երկիր"ը, կամ նոր ժամանակաշրջաններում, ճարտարապետական գրասենեակի տնօրէն պարոն Ծահէնի վերստին Միացեալ Նահանգներ հաստատուելու նախանշանները: Այնպէս որ, չպիտի զարմանալ, եթէ Գրիգոր Պըլտեանի յաջորդ արձակներից մէկը առընչուի այդ համայնքի Գալիֆորնիա հաստատուած չաւուշի հետքերի փնտռտուքին՝ խօսքի կամ մէկ լուսանկարի կայծկլտումով, ինչպէս այս հատորի մէջ երեւող կամ չերեւող լուսանկարները:

Վահանի այցի պատմութեան հետեւելով, մայրը, Վահանի մօրաքոյրը, փափաքում է թէ՝ "ի՜նչ լաւ կ'ըլլար պատկեր քաշէիր" (էջ 538), սակայն, պարզւում է որ լուսանկարչական մեքենան պաշտօնեայ էֆէնտիի կողմից գրաւուած է եղել եւ Վահանը չի յաջողել լուսանկարելու այժմ իր նկարագրածները: Խորքում, մօր խռովքը ոչ թէ լուսանկարի չգոյութիւնից է, այլ, Վահանի նկարագրութիւններից, որոնք չեն համապատասխանում իր մտապատկերներին, հետեւաբար հէնց այդ անհամապատասխանութիւնից դրդուած, յաջորդ պարբերութեան մէջ աւելացնում է՝ "գացիք ամմա, սանքի չէք գացեր" (էջ 538) երկդիմի նախադասութիւնը, որը պարզապէս նշանակում է ձեր տեսածը մեր տեսածը չէ, յատկապէս երբ տեսնելը պայմանաւորուած է իմացականութեամբ՝ "ինչ գիտէին որ տեսնային" (էջ 538): Ահաւասիկ այլ մի երկուութիւն, տեսողութեան ու վայրին առընչուող:

Լուսանկարների միտումնաւոր կերպով ներառելու փաստին համաձայն, հատորից հատոր վկան ենք լինում զարգացումների եւ լուսանկարները նորովի օգտագործելու հոյակապ հնարքներին, ինչպէս 29րդ էջում առաջին մուտքը քոյրերը պատկերող լուսանկարի, ուր նախ նկարագրւում է լուսանկարը նախքան նկարուելը, յետոյ նկարուելու պահին, ապա նկարուելուց յետոյ, այսինքն ինչ որ լուսանկարիչը անշարժացրել է մէկ վայրկեանում, գրողը շարժման մէջ է դնում շրջանակից դուրս մնացած մասերը երեւակայութեամբ լրացնելով, տրամաբանութեամբ ամբողջացնելով կամ երեւացող նախափաստերի հիման վրայ մանրամասներով, այս միջոցառումով պատկերը վերածւում է շարժապատկերի, երբեմն այնքան յաջողած, որ բառերը վերանում են եւ ընթերցողը կարծես ակնդիրը չէ բառերի, այլ գրաւիչ մի տեսաժապաւէնի:

Նաեւ կայ հակառակ պարագան, երբ պարբերութիւնից պարբերութիւն, դէպքից դէպք արագընթաց պատումի թափը դանդաղելով մէկից, կանգ է առնում եւ պատմըւում է չգոյ թուացող մի լուսանկար համոզիչ այն ոճով, որ կարծես նկարագրութեան ակունքը ձեռքի տակ գտնուող ու դիտուող լուսանկարն է եւ ոչ թէ մըտապատկերը:

"Երկուք"ը նաեւ անմասն չէ հակապատումից, անշուշտ, եթէ կայ այդպիսի ըմբռնում: 25րդ գլուխը սկսում է "հարկ չկայ որեւէ բան պատմելու, յարմարցընելու" (էջ 321) երկդիմի նախադասութեամբ, նախադասը թէ՛ վերաբերում է այդ բաժնի պատումին եւ թէ՛ պատճառաբանութիւն է դասընկերուհի Զարմինէին հեռաձայնելու: Եւ իրօք ամբողջ գրքի տարածքին երբեք չի նկատւում հարկադրանքը պատմելու եւ յարմարեցընելու, մէկ բառ, երկու, արդէն ընթերցողը կամայ թէ ակամայ ընկղմուած է երբեմն ժամանակներն ու վայրերը "խախտած" դէպքի չերտաւորուած խորքը:

Այլ տեղ դասարանակից Զօհրապը անսպասելի կերպով ներկայանում է որպէս պատանութեան հետք փողոցային կռւում ատամը կորցրած թաքսիի վարորդ, մինչ-թաքսի առնող պատմողը կարծես մնացել է նոյնը, երկու համատարիք անձերի տարբերուած տարիքների անկարելի հանդիպում:

Հակապատումային կարելի է համարել նաեւ հեգնական արտայայտութիւնները վիպասանի նկատմամբ՝ վիպասանի տաղանդ, լարախաղաց վիպասան, կամ փակագծերի մէջ ասուող երկար պարբերութիւնները, ինչպէս եւ պատմութեան մէջ անտէր մնացած խօսքը (էջ 314):

Սակայն հակապատումի ամենացայտուն եւ հակակառոյցային օրինակը Ռոզի անպատճառ անհետացումն է: Գրողի սեղանին դարսուած թղթերի խախտումի կամ մէկ էջի չքացումի պատճառով է կարծես որ նաեւ անհետացել է Ռոզը: Ոստիկանական քննութիւններից եւ գրասենեակի աշխատակիցների առաջարկած զանազան վարկածներից բացի, անհետացումի պատճառները նաեւ քննարկւում են գրող-պատմողի կողմից առանց յանգելու համոզիչ եզրակացութիւնների: Ռոզը պարզապէս չքացել է, եւ պատումը արդէն մուտք է գործել ինքնաշխատ ընթացքի մէջ ուր ոչ մէկ արտաքին ձեռք կարող է դեր ունենալ ընթացքը որոշելու:

Գրասենեակի աշխատակից Ռոզը, շատ սովորական կերպար, կարեւորութիւն է ստանում երբ անհետանում է, այսինքն իր անհետացումով առիթ է ընձեռնում հետեւելու հետքին եւ սա ինքնին լքուած թուացող կերպարի թէ՛ խնդիրն է եւ թէ՛ լուծումը միաժամանակ:

Եթէ կաղապարապաշտ ոեւէ վիպասանի համար այս եւ նման մօտեցումները քննադատելի են, բանաստեղծ արձակագրի համար գնահատելի երեւոյթներ են անկասկած, ինչքան էլ որ գրողի լեզուով խօսող Արտաւազդը հակադրի հէնց ինքը գրողին ասելով՝ "...մոլորեալ մըն ես, հանդիսաւոր ու բանդէտ՝ պիտի Նարեկացի արտասանէր՝ ձիդ վարատակա՛ն, կորստակա՛ն, յիմար մը, որ կ'անգիտանայ իրողութիւնը, փաստը, կը տարուի քնարական զեղումներով, իբր թէ բանաստեղծ մը ըլլաս, կ'ապաւինիս բառերուն, գեղեցկութեան, ոճին ու չքեղ դարձուածքին..." (էջ 524): Սակայն, պէտք է խոստովանել որ արտաքին գրողը եւս ապաւինում է բառերին, ոճին ու չքեղ դարձուածքներին, որոնք ընթերցումը պահում են լարուած մինչեւ վերջին վայրկեան առանց մի պահ կորցնելու իրենց ուժականութիւնը:

Եւ ամէնից առաջ սկսուողը ամէնից առաջ վերջանում է վերջին կատարեալ անջատումով երկրից ու երկնքից, քաղաքից ու մարդկանցից, մէկ խօսքով ամէն ինչից: Ակնարկը վերաբերում է գրքի վերջին տեսարանին, երբ պատմողը ծովին է յանձնւում, իր բառերով ասած՝ հագնում է ջրերի դանդաղ կչռոյթը: Եթէ բառերի ծով է ջուրն է ծփում, եթէ ջրի ծով է վէտվէտում են կոհակները խօսքի՝ ինչքան դաւեշտական, նոյնչափ ողբերգալի, առաջարկելով միանալու համար՝ անջատում, գտնելու համար՝ կորուստ, յիշելու համար՝ մոռացում... ինչպէս եւ "Երկուք":

ԳՈՒՐԳԷՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

(*) Գրիգոր Շահինեան. "Գրիգոր Պըլտեան՝ վիպագիր", Յառաջ – Միտք եւ Արուեստ. 2000, Փետրուար 6:

(**) Սոյն գրութիւնը վերանայուած օրինակն է այն գրութեան որ ընթերցուեց 2006 Փետրուար 4ին Կլէնտէյլի Հանրային Գրադարանում "Երկուք" գրքի ներկայացման առիթով:

(**The Anatomy of Melancholy**, 1621), ou le geste d'un Vésale. Il reste le catalogue.

Divisé en 8 parties suivant une chronologie assez académique, allant de la «Mélancolie antique» à «L'Ange de l'histoire, Mélancolie et temps modernes», le catalogue, dirigé par Jean Clair qui y intervient lui-même à huit reprises, s'ouvre sur un texte du poète Yves Bonnefoy. Un texte dense, menant le lecteur au fond du questionnement de notre finitude, le renvoyant aux deux sources ultimes, le platonisme et le christianisme. D'une part, la recherche de la belle forme liée à l'Un, d'autre part, la présence. Distinguant la mélancolie du «génie», Yves Bonnefoy souligne en la première une conscience de notre finitude et une complaisance dans l'inadéquation des signes à un réel qui nous échappe; il raccorde le second à sa dimension métaphysique, non pas qu'il s'agisse d'un «don du ciel» mais d'une énergie par laquelle l'individu se bat et se débat contre les apories de l'existence auxquelles il confronte ses œuvres et ses actions. Bonnefoy sépare la poésie de la mélancolie en ce que la poésie oppose le déni du rêve aux «complaisances mélancoliques» et qu'elle se révèle comme une critique aimante du concept, un consentement de l'auteur à toutes ses finitudes, à son devoir de parole («le son soulève le sens», comme il le dit si magnifiquement) qui se distingue de l'orgueil engendré par le concept, cette «illusion de maîtrise».

Complétant l'entrée du catalogue, Jean Starobinski, retrace, dans un article de 1963 repris ici, le parcours de la bile noire tout en accordant son attention à Charles d'Orléans. La bile noire, dans la théorie des quatre tempéraments ou humeurs, échappe à toute donnée physiologique et s'inscrit d'emblée dans l'imaginaire. Les noirceurs mélancoliques prédisposent l'individu à la présence des démons et du diable. Miroir noir reflétant l'Ange rebelle, la mélancolie, à l'époque de l'allégorie, se personnifie et emprisonne le je. Tantôt la mélancolie se fait espace enfermant le je, tantôt le je devient lui-même le lieu de la mélancolie. L'enfermement propre aux enfants de Saturne, cet ennui qui en découle, produisent la naissance du chant comme «compensation symbolique et traduction sensible» du manque d'espace, comme promesse d'ouverture. Assigné à l'étude, le mélancolique écrit, sa bile noire se fait encre. La limpidité de l'eau cède le pas à l'encre noire qu'il reviendra à Shakespeare de faire rayonner : **That in black ink my love may stil shine bright.** L'arménien semble bien inspiré en appelant l'encre «melan».

Se méfiant de l'iconographie (une Athéna dite 'mélancolique' dont Alain Pasquier affirmera que c'est par «méprise» [6]) à laquelle il préfère l'étymologie, Paul Demont rappelle :

> Le verbe mélancholân **renchérit sur le verbe simple** cholân, «**avoir de la bile**», «**être colérique**», **et plus généralement «être fou»**. **La bile** (cholè) **et la colère** (cholos) **sont des mots apparentés en grec ou en français, «cholère» signifiait aussi «bile»** [...] melancholân **suppose une coloration de la bile, devenue noir** (melan-), **et liée à une certaine espèce de folie, qu'on peut à l'occasion rendre par une image encore vivante en français, «avoir les idées noires»** [7].

Il évoque bien sûr la théorie des quatre humeurs en accord avec les quatre éléments, le lien entre mélancolie et folie et la différence entre épilepsie et mélancolie, la première essentiellement physique, la seconde orientée vers l'esprit plus que vers le corps, ce qui explique sa présence chez les êtres de génie et d'exception, qu'ils soient mythiques (Heraclès) ou historiques (Ajax, Empédocle, Socrate, Platon, Lycurge...). Le mélancolique, homme d'exception, est celui qui parvient à maintenir un équilibre dans la chaleur et la concentration de la bile noire, interprétation reprise à la Renaissance par Marsile Ficin pour lequel «l'exception semble tenir à la possibilité d'un équilibre du déséquilibre», et l'homme de génie un «presque fou, à la limite de la maladie, mais parvenant à stabiliser son état instable» [8]. Diffusée par les Arabes, la théorie galénique valorisant la mélancolie se rattache alors à l'astrologie, assignant les génies à la planète Saturne. Le succès de Galien retentira longtemps encore puisque le spleen qui «de Keats à Baudelaire, frappera les dandys de l'âge romantique» [9], fait écho à la «veine splenitis» sur laquelle le médecin de l'Antiquité pratiquait la saignée du mélancolique.

Alain Pasquier se penche davantage sur la tristesse que sur la mélancolie même et se pose la question de savoir si le mot mélancolie «a quelque chance de s'appliquer avec pertinence à telle attitude, à telle physionomie aperçue ici ou là dans le répertoire de l'art grec» (p. 39). Il commente quelques images antiques de la tristesse, liée au deuil, en accordant une importance particulière au suicide d'Ajax auquel se rattache le célèbre torse du Belvédère ainsi qu'une belle statuette de la collection de George Ortiz. La figure d'Ajax aura pu servir à des fins politiques, notamment comme évocation de la mort d'Antoine et George Ortiz, dans son analyse de l'œuvre pense que le commanditaire pouvait être Archelaus de Cappadoce : «Comme Juba II de Mauritanie, l'historien, et Artavasdès Iᵉʳ d'Arménie, le dramaturge, Archelaus était un roi dont la culture grecque pouvait l'inciter à passer la commande d'Ajax» (p. 46).

Yves Hersant entame son analyse de l'acédie du moyen âge en se référant aux auteurs du XIXème siècle qui, de Chateaubriand à Flaubert en passant par Kierkegaard, ont redécouvert cette forme de mélancolie typique des moines et des ermites solitaires. Ennui, lassitude, l'acédie s'entrelace au **taedium vitae** romain, ce sentiment que «la vie est toujours la même chose» (p. 55) comme le disait Sénèque. Elle rejoint les péchés capitaux et engendre une série de fautes, ses «filles». Dans sa version populaire, l'acédie délaisse l'intellect pour la chair et devient paresse ou mollesse. Si la mélancolie se distingue alors de l'acédie comme la maladie du péché, il reste qu'

> **entre acédie et mélancolie, le Moyen Age multiplie les échanges et les emprunts, entrecroisant les symptômes, notant les affinités conceptuelles, tissant un réseau d'interactions. De l'une à l'autre, la relation est assurée par le Diable [...] L'acédie appelle le Diable, qui suscite une humeur d'autant plus noire qu'il est luimême mélancolique, ou bien le Diable inspire l'acédie et la mélancolie appelle le Diable, en lui préparant le terrain** [10].

Leur relation montre que l'enjeu n'est rien moins que le lien entre l'âme et le corps. Plus que négative, l'acédie s'avère ambivalente, le négatif pouvant se retourner en positif, comme un processus alchimique : «les alchimistes attribuent à la 'souffrance' de la matière un sens proprement initiatique : la régénération passe par la torture. Au demeurant, l'alchimie, qui est une théologie gaie aussi, désigne parfois son fourneau du nom même de **l'acedia**» (p. 58). Au reste, comme le note Jörg Völlnagel [11], c'est l'alchimie qui offre un remède à la mélancolie et toutes deux se relient par l'intermédiaire de la planète et dieu Saturne, associé au plomb, point de départ de la transmutation du métal en or purificateur par l'alchimiste qui, lui, dépend de Mercure dont les instruments se retrouvent dans la gravure de Dürer dont Peter Klaus Schuster [12] examine avec érudition la polysémie.

La mélancolie frôle la sorcellerie, notamment dans le cas de la lycanthropie ou folie louvière étudiée par Jean Clair [13]. Le loup-garou, mélancolique au départ, se révèle, au XVIIème siècle surtout, la proie et la preuve du démon marquant une distinction sociale dans la mélancolie : au noble la mélancolie du génie, au pauvre l'animal sauvage, la brute démoniaque, ennemie du soleil, c'est-à-dire du roi. Image négative qui aboutira à celle du dégénéré au XIXème siècle.

Au fil de la lecture, de nombreuses répétitions apparaissent, beaucoup d'auteurs se sentant obligés de commencer par l'explication du terme grec ou latin et par la théorie des quatre humeurs, éléments et tempéraments, informations déjà fournies par les textes portant sur l'Antiquité, le Moyen Age et la Renaissance. Arrivé à la partie consacrée à l'âge classique et au début de la modernité, le lecteur s'étonne de lire encore les mêmes prémisses dans le texte de Noga Arikha qui assigne la désuétude de la théorie des humeurs aux expériences anatomiques d'un Vésale et à la découverte de la circulation du sang par Harvey en 1620, tout en affirmant que la théorie des humeurs, comme théorie psychologique, n'a cessé de fonctionner et fonctionne toujours : «On pourrait même avancer que les neurotransmetteurs et les hormones d'aujourd'hui sont les nouvelles humeurs — que, métaphoriquement du moins, l'explication humorale est encore puissante» [14]. L'historienne des idées évoque Robert Burton et Timothy Bright qui influença Shakespeare et donna une vision bipolaire de la mélancolie qu'elle actualise: «vue de l'extérieur c'est-à-dire dans l'optique d'un clinicien cherchant les symptômes d'un dérèglement humoral, ce pourrait bien être une patologie; vue de l'intérieur, c'est-à-dire dans l'optique de l'observation psychologique ou de l'autoanalyse, c'est une façon d'appréhender et d'habiter le monde, un aspect de notre appareil cognitif» [15]. Après avoir étalé quelques paragraphes de poncifs scolaires sur Descartes et la division âme - corps ce dernier étant traité par Descartes, de façon mécaniste, l'historienne des idées en vient à écrire: «La notion de l'homme machine, affinée au XVIIIème siècle par La Mettrie, ne peut qu'être odieuse Une machine n'expérimente pas la mélancolie, ne crée pas d'œuvre d'art et ne trouverait aucun intérêt à l'histoire de la mélancolie» (p. 239). Il est pour le moins étrange de constater, en guise d'étude, un jugement moral («odieuse») sur un auteur du XVIIIème siècle. Hélas pour elle, les textes de La Mettrie démontrent le contraire. L'auteur de **l'Homme-machine** a également écrit un traité du vertige et l'idée de l'homme-machine vient elle-même des exemples de délire mélancolique, comme l'homme de verre auquel La Mettrie se réfère [16]. Signalons de surcroît qu'au sein même du catalogue, Jean Clair intitule l'un de ses textes «Machinisme et mélancolie»

L'auteur termine par un retour au dualisme cartésien et associe la mélancolie à notre condition de «créatures incarnées, et mortelles» qui rechercheraient une unité préexistant à la conscience. Sans doute Freud et sa lecture de Platon, qui ne sont pas cités, se trouvent-ils à l'arrière plan de cette conclusion un peu confuse.

C'est Freud que rejette Marc Fumaroli pour examiner les tempéraments nationaux à l'aune de la mélancolie en prônant la «fertilité heuristique» de la science antique dans l'étude des arts. Il se réfère à la violente mélancolie anglaise qu'avait analysée Lawrence Babb en 1971 dans son ouvrage **Elizabethan Malady**, pour examiner ce qu'il en est de la représentation du caractère national français, lequel se définit dans son opposition à celui des autres nations et en particulier celui de l'Espagne. Aux XVIème et XVIIème siècles l'Espagne s'accorde, par l'intermédiaire du livre du médecin Huarte de San Juan, un tempérament mélancolique qui lui confère une suprématie dans les choses de l'esprit, comme la théologie ou la poésie et relègue la France aux côtés de l'Italie dans la sphère sanguine. Les Français, contre l'ennemi héréditaire espagnol, élaborent quant à eux une image du caractère national «gai» lié au beau climat tempéré du pays. L'on voit ainsi les guerres se perpétuer sous le couvert du masque médical et de celui du tempérament national représenté par la culture. La joie de vivre française n'exclut pas la mélancolie, comme on le voit chez Montaigne et, bien sûr, les massacres de la Saint Barthélémy y jouent un grand rôle. Marc Fumaroli montre que le tempérament national en France (ou plutôt sa représentaton) se caractérise par un effet de balancement entre mélancolie et tempérament joyeux qui se maintiendra jusqu'au XXème siècle. La mélancolie française se différencie des autres en ce qu'elle s'éloigne de la plongée dans la terreur à laquelle elle préfère le détachement, ce qu'indique le manque de succès du «caravagisme» à Paris, à la différence de ce qu'il en a été dans les autres pays. La mélancolie s'infiltre à travers les procès de sorcellerie, les guerres de religion mais le noir jésuitisme espagnol sera exclu au bénéfice d'un nouveau type de jésuite, à l'italienne, porteur d'une éloquence fleurie menant à l'«honnête homme» défini par le moraliste Nicolas Faret en 1629 et que cherchera à incarner Louis XIV, non sans avoir au préalable confié la scène théâtrale à ce rabelaisien de Molière, remède à l'humeur noire mais trop direct pour le nouveau style de l'honnêteté. La brillante analyse de Marc Fumaroli révèle ainsi la culture comme écran du poitique et le maintien de la problématique du caractère national dans la longue durée. Elle éclaire, d'une part, le choix d'une «douce mélancolie» faite par la France des Lumères qui la projette dans la sphère des sentiments et que donnent à voir, selon Guillaume Faroult, les œuvres d'un Watteau ainsi que deux œuvres (une peinture de Vien et une sculpture de Falconet) présentées au Salon entre 1757 et 1765 [17]. Elle annonce, d'autre part, une utilisation politique de la mélancolie en une époque troublée et indécise, le tournant de 1800 minutieusement analysé par Stéphane Guégan [18]. L'épisode de la Terreur et l'effondrement du modèle néoclassique académique de même que la mode des romans mélodramatiques donneront lieu, au tournant de 1800, à un romantisme noir qui s'expose, entre autres, chez le peintre Constance Charpentier.

Néoclassicisme et romantisme réalisent la coïncidence des opposés, comme le montre Vincent Pomarède. Cultivés et raffinés, les artistes de 1750 à 1850, synthétisent «dans leur œuvre les idées en apparence antithétiques de leur époque» [19]. L'analyse des tableaux de paysages montre à travers une évolution du paysage héroïque sublime au paysage apparemment réaliste, celle de la mélancolie qui, de convulsive en arrive une voluptueuse tristesse. Le paysage de tempête, de ruines et de volcan (Pierre Henri de Valenciennes, Hubert Robert), marqués par les textes de Jean-Jacques Rousseau et la philosophie de Kant sur le sublime, cède le pas aux représentations d'arbres (Théodore Rousseau), au rythme de la nature (Corot) avec laquelle l'artiste entretient une relation fusionnelle. Cet accord entre l'art et la nature (**Stimmung**) sera, pour Kandinsky, le départ de l'abstraction. La poétique des ruines, reste inséparable de l'état de désolation des monuments après le vandalisme révolutionnaire, comme le montre Roland Recht [20] qui examine l'apparition de la notion et de la problématique de la «restauration», liée à une «anatomie» de l'architecture dont Viollet-le-Duc est le principal représentant. C'est encore «la mélancolie des ruines» qui aura fasciné tant d'artistes allemands du XXème siècle, héritiers de Grünenwald, tel Otto Dix, et elle encore qui, selon Jean Clair [21], reste visible dans la nostalgie néoclassique de l'architecture totalitaire, jusqu'à ce que la réalité apocalyptique de l'histoire détruisant Berlin et Moscou comme Dresde et Londres, n'en vienne à supprimer aussi, avec les édifices machines faits de métal et de verre, l'idée d'une Europe durable. Nostalgiquement critique et saisissant l'occasion d'égratigner l'art contempo-

●►

rain, le commissaire général de l'exposition déclare :

L'Europe ne construit plus non plus aere perennius, plus durablement que le bronze — et elle ne possède même plus, contrairement aux vainqueurs de Rome, le secours d'une religion du salut, puisque son héritage judéo-chrétien lui a été dénié par la Communauté européenne.

Brûlés ses monuments de pierre et envolés ses rêves, le monde occidental ne construira plus, en fait d'édifices, que des machines. Faites comme elle (sic) de métal et de verre, le premier pour transporter des énergies, des courants d'électrons ou d'humains, le second pour en isoler et en observer les flux, elles sont, aéroports, stations de chemins de fer, hôpitaux ou musées d'art contemporain, indéfiniment réparables par substitution de leurs éléments usagés. Obsolètes, elles ne laisseront derrière elles ni fragment ni ruine à éplorer. La mélancolie puissante qui parfois s'en dégage ne relève plus que de la thérapie des molécules [22].

Dans son magnifique essai, Robert Kopp [23] trace la filiation du **René** de Chateaubriand : «Chateaubriand a inventé, selon le mot de Théophile Gautier, 'la mélancolie moderne' et **René** a donné naissance à toute une lignée de héros solitaires» (p. 330) dont le Joseph Delorme de Sainte-Beuve qui démocratise le milieu de la mélancolie et Baudelaire à sa suite, «poète par excellence de la mélancolie» (p. 332). Pour l'auteur de **Phares**, marqué par le vocabulaire théologique, un grand artiste (Delacroix, c'est-à-dire lui-même) est nécessairement mélancolique et se confronte à la partie noire et satanique de l'existence. La terminologie médicale fera irruption avec les analyses de l'ennui publiées par Pierre de Boismont que Baudelaire et tous ses contemporains lisent et connaissent. Flaubert quant à lui restera obsédé par la Tentation de Saint Antoine, une vision de la mélancolie déclanchée par le tableau de Bruegel qu'il voit au Palais Balbi de Gênes. L'excès de dégoût physique créé par Huysmans dans **A Vau-l'eau** laisse entrevoir une forme de thérapie par la création, thérapie que relancera Sartre dans la **Nausée** «dont le premier titre était **Melancholia**» (p. 337), comme le rappelle R. Kopp en concluant sur une note quelque peu mélancolique :

Sartre n'a pas repris, dans la suite de son œuvre, cette idée du salut par la création esthétique. Il se méfiait sans doute trop de l'art; il ne pensait pas que l'art pût révéler quoi que ce soit ni donner un sens à la vie. Aussi est-il peut-être un grand écrivain malgré lui. Comme tous ceux qui ont essayé d'exprimer la mélancolie, il y a réussi en faisant semblant de la combattre. Mais comment accéder à un discours qui ne serait pas un semblant ?

Le chapitre dédié à «La naturalisation de la mélancolie» s'ouvre sur un texte de Jackie Pigeaud qui y examine la «mélancolie des psychiatres» et particulièrement la «lypémanie d'Esquirol» qui a tenté d'entraîner la mélancolie dans un champ exclusivement médical et envers le champ de ce qui s'appellera la «psychiatrie». Mais, comme le montre Pigeaud dans ce texte pointu, comme à son habitude, il importe de rechercher l'évolution du nom, ce qu'il signifie, ainsi du terme de «nostalgie», pour saisir la nouvelle contextualisation d'un problème souvent ancien. «La mélancolie, c'est ce qui nous fait communiquer **immédiatement** avec un fait biologique en même temps qu'avec la tradition la plus ancienne de notre culture occidentale», déclare Pigeaud, ajoutant: «Nous n'avons jamais rompu avec la mélancolie; les tentatives diverses pour l'éliminer ou la réduire à une autre maladie (celle par exemple d'Esquirol), ont échoué. Il faut donc prendre acte de ce caractère obstiné de la mélancolie et de sa permanence. Ou alors montrer que c'est un fossile, un résidu archéologique» [24].

Le texte captivant de Laura Bossi examine la mélancolie vue comme symptôme de dégénérescence dans un XIXème siècle ou culmine son envers, l'idéologie du progrès. L'analyse vise à montrer —dans un esprit qui n'est pas sans rappeler les études de Michel Foucoult — les liens entre le champ médical et le champ politico-social. Une notion comme celle de dégénérescence ne peut évidemment être sans conséquences. Ainsi l'aliéniste Morel pour qui les dégénérés sont incurables propose-t-il de protéger la société en les isolant. La mélancolie classée dans la «famille névropathique» s'explique par l'héridité dégénérative qui circulera dans les romans d'un Zola et verra son application au niveau des masses chez Lebon, Durkheim ou Taine. Ainsi Féré, avec **Dégénérescence et criminalité**, en 1888, annonce-t-il la politique du national socialisme. Laura Bossi consacre plusieurs pages passionantes aux recher ches hallucinantes de Cesare Lombroso (1835-1909), juif italien du Nord, à l'origine de l'anathropologie criminelle. Celui-ci renvoie la délinquance à l'atavisme dont il observe la marque dans les anomalies physiques :

Selon l'hypothèse de l'atavisme, crime, folie, génie et prostitution seraient dus à des altérations régressives analogues, à un retour aux origines, à l'enfance primitive, sauvage et diabolique de l'humanité [25].

La frontière entre le génie et la folie reste fragile (l'inspiration agissant chez tous deux), et les fous comme les génies se caractérisent par les deux stades opposés de l'inspiration et de l'épuisement; loin de produire nécessairement la décadence de l'espèce, ils introduisent au contraire du changement, donc du nouveau, sans lequel, d'après Lombroso, l'immobilisme règnerait puisque la majorité s'y cramponne toujours Au contraire, pour l'Anglais Maudsley, la dégénérescence a des conséquences directes sur la politique, comme en témoignerait la lutte des classes. Laura Bossi établit une sorte de catalogue des théoriciens de la dégénérescence de Griesinger à Nordau (1849-1923), médecin juif, auteur de **Dégénérescence** (1892) qui connut un «grand succès» mais dont la notoriété «fut éphémère». Nordau qui se rallie au sionisme en 1869, soutient, à la différence de Lombroso, qu'il n'y a de génie qu'en bonne santé physique et psychique. On est génie ou dégénéré, la frontière est radicale. Il inclut parmi les artistes dégénérés les mystiques préraphaélites anglais, les symbolistes français, les tolstoïens, les wagnériens. Mais c'est Nietzsche qui, pour Nordau, incarne la «quintessence de la dégénérescence intellectuelle et morale, de l''égocentrisme ambiant' et de la 'déification de l'ordure', 'la lascivité, la maladie et la corruption'» (p. 408). Laura Bossi note ce qu'il y a finalement de commun entre les deux hommes : la préoccupation de la normalité et de l'anormalité, la maladie, la décadence, la dégénérescence; la critique du wagnérisme; l'éloge de l'idéal masculin, le désir d'hommes en bonne santé, régénérés, aux muscles durs...; et bien sûr une participation commune au discours sur la dégénérescence» (p. 408). Après avoir cité un passage du **Zarathoustra**, elle affirme un peu vite et sans donner de raison convaincante : «La conception nazie de la dégénérescence était clairement inspirée par Nietzsche, non par Nordau». C'est pourtant Nordau qui parle d'«artistes dégénérés» et les classe. La dégénérescence a été reprise et instrumentalisée par Adolf Bartels (historien antisémite) et Hildebrandt (eugéniste) jusqu'à l'issue bien connue du national-socialisme. Laura Bossi termine en observant notre monde quotidien et l'exigence de jeunesse éternelle de beauté et de santé obligatoires que véhicule le marketing à laquelle s'ajoute les recherches sur la génétique des maladies mentales traquant les êtres de plus en plus jeunes et leurs familles.

Jean Clair prend seul en charge la dernière section du catalogue «L'Ange de l'histoire — Mélancolie et Temps modernes» pour examiner les œuvres d'Antonin Artaud et les photographies macabres de Nebreda (né à Madrid en 1952) à travers le délire de Cotard, délire de négation qui porte sur l'intégrité corporelle, un délire mélancolique d'immortalité [26]. On se souviendra des pages que Lacan avait consacrées à ces patientes comparées à des lunes, n'ayant ni bouche ni estomac, n'en ayant nul besoin puisque étant toujours déjà mortes, elles étaient immortelles. La mélancolie de Giorgio de Chirico et de Sironi occupe le centre de sa réflexion sur «Machinisme et mélancolie», lien qui se fait par la géométrie associée à la mélancolie dans le platonisme et le néoplatonisme que véhicule la gravure de Dürer et qu'étaie la perspective comme «machinerie». C'est elle que détourne Chirico : «la machinerie de la perspective est bien réintroduite, à l'exemple des maîtres de la Renaissance, mais elle n'est plus un instrument d'ordre ou de rassemblement, elle est devenue un instrument de dispersion et de désordre. De là que chez De Chirico, l'idée de métaphysique soit associée à l'idée de 'la solitude des signes'» [27]. Les machines de la technique hanteront quant à elles les œuvres de Heise, Grossberg, ou Dix. Le catalogue se clôt sur «Une mélancolie faustienne» Jean Clair se penche sur la crise de l'intelligence qui va du Faust de Valéry — éclairant l'esthétique d'aujourd'hui, c'est-à-dire l'anesthésie ou l'hyeresthésie : «Que peut l'art face à ce désarroi de l'âme et à cette inoccupation de l'esprit ? Paul Valéry, on l'a vu, se fait le prophète d'un art de rien, qui est devenu le nôtre» [28] — au **Maître et Marguerite** de Bulgakov en passant par le **Docteur Faustus** de Thomas Mann pour voir en l'inquiétude envers les sciences et les techniques de même qu'en leur origine en Occident, la présence d'un «vide intérieur» «soudain comblé» qu'auront su illustrer Dürer et Vinci, «parmi d'autres génies».

En se précipitant à l'exposition, les foules d'individus ne s'y sont pas trompés, elles ont d'emblée saisi que le spectacle leur renverrait comme en un miroir noir la réalité simulacrale de leur sombre époque.

Chakè MATOSSIAN

(1) Maxime Préaud, «Et sur la tête un oiseau solitaire», *Mélancolie — génie et folie en Occident*, (pour la suite *Catalogue*), Paris, Gallimard/RMN, 2005, pp. 225-231.

(2) Jean Clair «Un musée de la mélancolie», *Catalogue*, p. 87.

(3) Jean Clair «Musique et mélancolie». *Catalogue*, pp. 242-245.

(4) Jean Clair «Un musée de la mélancolie», p. 82.

(5) Martin Melkonian, *Edward Hopper luttant contre la cécité*, Paris, éditions d'écarts, 2005. En notre époque vouée à l'image, M. Melkonian a osé renouer avec la tradition de l'*ekphrasis*.

(6) Alain Pasquier, «Tristesse et mélancolie dan l'art grec», *Catalogue*, p. 41 : «Quant à l'*Athéna mélancolique*, il y a risque qu'elle n'ait reçu ce nom que par méprise : Si elle baisse la tête, ce ne serait point par un quelconque abattement ni pour s'abstraire dans la méditation, mais parce que, sur un ex-voto offert sans doute par un athlète vainqueur, elle contemplerait la borne du stade, symbole du succès remporté par le donateur».

(7) Paul Demont, «La mélancolie dans l'Antiquité : de la maladie au tempérament», *Catalogue*, p. 34.

(8) Paul Demont, p. 36.

(9) Jean Clair, «Un musée de la Mélancolie», p. 82.

(10) Yves Hersant, «L'acédie et ses enfants», *Catalogue*, p. 57. Son autre texte, «mélancolie rouge», consacré à Lucas Cranach, avait été publié dans une version plus complète en 1991, ce que l'auteur aurait pu mentionner d'emblée ou de manière nette, comme l'a fait Jean Starobinski, au lieu de l'annoncer discrètement dans la dernière note de l'article.

(11) Jörg Völlnagel, «Mélancolie et alchimie», *Catalogue*, pp. 106-109.

(12) Peter Klaus Schuster, «*Melancolia*/ lancolie dans l'art grec». *Catalogue*, p. 41; 103.

(13) Jean Clair, «*Aut deus aut daemon* La mélancolie et la folie louvière», *Catalogue*, pp. 120-127.

(14) Noga Arikha, «La mélancolie et les passions humorales au début de la modernité», *Catalogue*, p. 233.

(15) Noga Arikha, «La mélancolie et les passions humorales au début de la modernité», p. 235.

(16) Nous nous permettons de renvoyer à notre étude «Terre de verre ou le délire mélancolique des philosophes», *Traverses*, Paris. Centre George Pompidou 1989, pp. 34-41.

de la mélancolie, (Sanancour) — Le paylancolie', selon Watteau et Diderot — Représentations mélancoliques dans les arts en France au XVIIIème siècle». *Catalogue*, pp. 274-283.

(18) Stéphane Guégan, «Orgie noire : terreur et mélancolie au Salon de 1801», *Catalogue*, pp. 284-294.

(19) Vincent Pomarède, «'La volupté de la mélancolie' (Sanancour) — Le paysage comme état d'âme». *Catalogue*, p. 318.

(20) Roland Recht, «'La beauté du mort' Ruskin, Viollet-le-Duc et le sentiment de la perte», *Catalogue*, pp. 342-349.

(21) Jean Clair, «La mélancolie des ruins», *Catalogue*, pp. 350-353.

(22) *Catalogue*, p. 353.

(23) Robert Kopp, «'Les limbes insondées de la tristesse' Figures de la mélancolie romantique de Chateaubriand à Sartre», *Catalogue*, pp. 328-340.

(24) Jackie Pigeaud, «La mélancolie des psychiatres — Esquirol: *De la lypémanie ou mélancolie*», *Catalogue*, p. 393.

(25) Laura Bossi, «Mélancolie et dégénérescence», *Catalogue*, p. 402.

(26) Jean Clair, «L'immortalité mélancolique», *Catalogue*, pp. 434-438.

(27) Jean Clair, «Machinisme et mélancolie», *Catalogue*, p. 443.

(28) Jean Clair, *Catalogue*, p. 458, également pp. 454-455 : «La vie nue considérée comme le comble de l'art. Le présent devenu sans importance et sans profondeur, et l'infini défini : Valéry esquisse ici, à son corps défendant, le manifeste d'une esthétique qui, de Marcel Duchamps se définissant comme 'un respirateur', et rien d'autre, à Joseph Beuys, désignant tout un chacun comme un artiste, fait de l'*Ars* une activité sans œuvre, ou de la *tekhnè* un savoir inutile. En matière d'esthétique, nous entrons là dans une ère qui va osciller entre l'an-esthésie et l'hyper-esthésie, entre la blancheur clinique du carré blanc et l'excrément proposé comme œuvre».

Imprimé sur les Presses du Journal «Haratch» — 83 rue d'Hauteville 75010 Paris — Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 4
MARDI
4 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.427 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.427

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՇԻՐԱՔ ՀՌՉԱԿԵՑ ՕՐԷՆՔ ՄԸ ՈՐ ՊԻՏԻ ՉԳՈՐԾԱԴՐՈՒԻ

ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ Բ. ՕՐԷՆՔ ՄԸ ՈՐ ՊԻՏԻ ՍՐԲԱԳՐԷ ԱՌԱՋԻՆԸ

ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՒ ՑՈՅՑԵՐ

ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՇՇՄԱԾ Է

Ուրբաթ, Մարտ 31, ժամը 20ին, նախագահ Շիրաքի ելոյթը իւպիւէսք բընոյթ մը ունէր թէ արտաքին թէ ներքին ճակատներու վրայ: Արտաքինը շատ ձախող էր, երբ նկատելի էր որ խօսքը եւ դիմագիծը չէին համապատասխաներ, իսկ խորքին մէջ, կարելի չէր երեւակայել որ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ մը այսքան ձախաւեր եւ հակասական ելոյթ մը կրնար ունենալ նման տագնապալի շրջանի մը մէջ:

Շիրաք ըսաւ որ օրէնքը կը հռչակէ յաջորդ օրն իսկ (Ապրիլ Մէկին...), բայց, յետագային Ազգ. Ժողովը պիտի պատրաստէ երկրորդ օրէնք մը որ պիտի սրբագրէ առաջինը, այսինքն այս երկրորդին մէջ Սէ. Փէ. Ը.ի երկու կէտեր պիտի փոխուին. այդ կէտերը կը վերաբերին փորձի ժամանակաշրջանին որ երկու տարիէն պիտի իջնէ մէկ տարիի եւ պաշտօնազրկման պարագային, պատճառաբանութիւն պէտք է տրուի: Այլ խօսքով, Ֆրանսայի հանրապետական պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով օրէնք մը պիտի հռչակուի, որ պիտի չգործադրուի, մինչեւ որ երկրորդ մը գայն սըրբագրէ...: Դժուար չէ երեւակայել այն հսկայ խորագրերը որոնք կը գրուէին յաջորդ օրուան թերթերուն ճակատները (այն ալ Ապրիլ 1 թուականը կրող) ուր հեգնանքը մանաւանդ, լայն տեղ կը գըրաւէր: Շիրաքի ելոյթին առաւօտն իսկ ձախի 11 կազմակերպութիւնները (բացի Բանուորական Պայքարէն) հանդիսաւոր կոչ մը ըրած էին նախագահին որ օրէնքը չհռչակէ: Նոյն դիրքն ունէին սենտիքաները եւ հարկ է խոստովանիլ որ տը Վիլփէն փառաւոր յաղթանակ մը տարած է այս ճակատին վրայ՝ միացնել ձախի բոլոր ուժերը, որոնք կը մոռնան ներքին տարակարծութիւնները եւ մէկ ձայնով կ'արտայայտուին. նոյնը կ'ընեն սենտիքաները:

Շիրաք, իր ելոյթին մէջ կ'ըսէ թէ ոչ յաղթող ոչ պարտեալ պիտի ըլլայ եւ կը ջանայ ոչ ոքի սիրտը կոտրել: Նոր օրէնք մը պիտի փրկէ առաջինը: Ի՞նչ տրամաբանութեամբ, յայտնի չէ; Ինչ որ յստակ է սակայն, ծագած անմիջական անխուսափելի հակազդեցութիւնն է: Նոյն իրի-

(Շար.ը Դ.. էջ)

ԹՈՒՐՔԻԱ

ՔՐՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԶԷՆՔՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՐՁ

Թուրք զինեալ ուժերը երկրին հարաւ-արեւելեան շրջաններուն մէջ զինեալ միջամտութիւններ կ'ունենան լռեցնելու համար քրտական դժգոհութիւնները, ցոյցերը: Կացութիւնը լրջօրէն վատթարացած է Մուշի մէջ 14 քիւրտ կեռիլլաներու ըսպանութենէն ի վեր: Քիւրտերը կը պընդեն թէ այդ սպանութիւնները կատարուած են քիմիական զէնքերով: Սպանեալներէն վեցին մարմինները իրենց ընտանիքներուն յանձնելու մերժումն ալ կը դօրացնէ անոնց թեզը:

Ցատուկ գայրոյթի հակազդեցութեան պատճառ եղած էր Մարտի վերջին օրերուն անչափահասներու եւս Թուրք զինուորներու կողմէ սպանութիւնը: Կացութիւնը բոլորովին լարուած է երբ վարչապետ Էրտողան յայտարարած է. "Երախայ կամ կին, ապահովութեան ուժերը հարկաւոր քայլերը պիտի առնեն":

Քրտական ամէնօրեայ ցոյցեր տեղի կ'ունենան այլ շրջաններու մէջ ալ, մինչեւ Պոլիս ուր Ապրիլ 2, Կիրակի քիւրտ ցուցարարներ պայթուցիկներ, քարեր նետած են ապահովութեան ուժերուն վըրայ:

Քիւրտերը Թուրքիոյ իշխանութեանները կ'ամբաստանեն որ հարցին փոխանակ քաղաքական լուծում բերելու, կը նախընտրեն ուժ կիրարկելով լռեցնել հակազդեցութիւնները: Բախումներուն ընթացքին մինչեւ հիմա 13 հոգի սպաննըւած են ու ցոյցի ալիքը կը տարածուի նաեւ Եւրոպայի քիւրտ կարեւոր բնակչութեան տէր ոստաններուն մէջ: Ապրիլ 2ին ցոյցեր տեղի ունեցած են Փարիզի, Վիէննայի, Գերմանիոյ զանազան քաղաքներուն, Լոնտոնի, Հոլանտայի, Զուիցերիոյ մէջ:

Թուրք մամուլը բնականաբար ամէն ձեւով կը վարկաբեկէ քիւրտ զանգուածները, առ ոչինչ համարելով ծաւալուն դժգոհութիւնը, պոռթկումը: Ցայտնըւած մտահոգութիւնը քրտական շրջաններու տնտեսութեան կրած ծանր հարուածին առընչուած է, քանի որ վերջին տարիներու յարաբերական հանդարտութենէն քաջալերուած կատարուած ներդրումները –պանդոկ, ճաշարան, գործատեղի, եւլն.– արդէն սկսած են վնասել:

«HARATCH» ne paraîtra pas mardi 4 avril

«ՅԱՌԱՋ» ԼՈՅՍ ՉԻ ՏԵՍՆԵՐ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 4ԻՆ

Ապրիլ 4ի ընդհանուր գործադուլին կը հետեւին նաեւ փարիզեան օրաթերթերու աշխատաւորները (գիրքի բանուորներ), ուրեմն "Յառաջ" ևս լոյս չի տեսներ (Չորեքշաբթի, Ապրիլ 5ի թիւ):

ԹԷՆԻՍ

Մայամիի Ա. Թի. Փի. մրցաշարքի կէս աւարտականին խրոուաթ Լուպիչիչ յաղթեց Դաւիթ Նալպանտեանի 6 – 1, 6 – 2:

ԼԻՈՆ

ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՍԵՑՈՒՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈԹՈՂԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Լիոնի վարչարարական ատեանը Մարտ 30ին որոշած է կասեցնել Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողին կառուցումը որ սկսած էր Փետր. 27ին եւ որուն բացումը կը ծրագրուէր Ապրիլ 24ին: Դատաւորը հիմնուած է այն պատճառաբանութեան որ կոթողին ու զետեղուելիք վայրին մաքրութիւնն ու խնամքը նախատեսուած չեն, քանի որ շինութեան ընկերակցութիւնը միայն կազմ մը չէ ու պիտի ցրուի կոթողը աւարտելէ ետք:

Նոյն օրը կէսօրէն ետք շինութեան աշխատանքը դադրած է:

Ծանօթ է որ Թրքական կազմակերպութիւններ ամէն միջոցի կը դիմէին այդ յուշարձանին արգելք ըլլալու համար: Կար այլ խմբակ մըն ալ որ կ'առարկէր ընտրուած վայրին, ըսելով թէ Պելքուր հրապարակը յարմար վայր չէր: Այս վերջիններէն նոյն հրապարակին պահպանութեան ընկերակցութեան նախագահ Շանթալ Լըֆորթ եւ քաղաքապետարանի խորհրդական Շանթալ Տըպազէյլ (Իւ. Էմ. Փէ.) պահանջած էին որ կոթողին համար Լիոնի քաղաքապետին տուած արտօնութիւնը ջնջուի:

Շ. Տըպազէյլ հաղորդագրութիւն մը հրապարակած է ուր կ'ըսէ թէ ինք անձամբ պիտի հսկէ շինութիւնը կասեցնելու դատարանին վճիռին գործադրութեան:

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՀԵՐՔԷ ԲՆԱՊԱՀՆԵՐՈՒ ՉՔՄԵՂԱՆՔԸ

Մարտ 30ի մեր թիւով գրած էինք թէ Եւրոպական Միութեան մարդկային իրաւունքներու ենթայանձնախումբին նախագահուհին Հ. Ֆլօթր Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբին իրեն ուղղած ժըխտողականութիւնը քաջալերելու ամբաստանութիւնները մերժած էր: Բնապահներու խումբէն Ֆրանսացի երեսփոխանուհին չեշած էր թէ անհիմն էին իրեն ուղղուած ամբաստանութիւնները:

Հայ Դատը Բաց Նամակով մը կը պատասխանէ Հ. Ֆլօթրի չքմեղանքին, յիշեցնելով թէ անոր պատկանած խմբակը երկու տարիէ ի վեր կը պայքարի Եւրոպական Խորհրդարանին կողմէ Ցեղասպանութիւնը ճանչնալու Թուրքիոյ եղած դիմումներուն դէմ, թէ Թուրք հանրութեան մէջ նիւթին մասին բացուած վիճարկումը ոչինչով կրնայ եւրոպացի բնապահները ետ կեցնել Թուրքիոյ ճանաչումին պահանջէն:

Բաց Նամակը, ի միջի այլոց, կ'անդրադառնայ նոյն խումբին (Ֆրանսացի բնապահներու) 2004 Դեկտ.ի քուէին, որով դէմ արտայայտուած էին Թրքական պատժական օրէնսգրքին 305րդ բաժանումին դէմ պատիժ մը սահմանելու պահանջին. յօդուած որ ինչպէս ծանօթ է, Ցեղասպանութիւնը հաստատող ամէն արտայայտութիւն պատժելի արարք կը հռչակէ:

Բաց Նամակը կը տեղեկացնէ տակաւին թէ Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբը մօտ ժամանակին ժամադրութիւն մը ուզած է Հ. Ֆլօթրէն, որ համաձայն գտնուած է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԲԱՔՈՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԵՏ ԿԸ ԲԱՆԱԿՑԻ ԵԹԷ...

Ազրպէյճանի Արտաքին գործերու նախարարը յայտարարած է թէ իր երկիրը պատրաստ է Ղարաբաղի հետ բանակցելու, այն պայմանով որ "Լեռնային Ղարաբաղի հայ համայնքը" ընդունի թէ Ազրպէյճանի քաղաքացիներ են: Այդ համայնքը տակաւին պէտք է ընդունի Ազրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, անոր օրէնքները. իսկ Հայաստան պէտք է քաշուի բանակցութենէն:

Նախարար Է. Մամէդեարով յայտնած է թէ կը վախնան որ Հայաստան չի փափաքիր Բաքու – Ստեփանակերտ ուղղակի բանակցութիւնը: Յայտարարութիւնը աւարտած է այն յանկերգով որ եթէ կարգաւորման հոլովոյթով յառաջդիմութիւն չարձանագրուի, Ազրպէյճան պարտադըրուած կ'ըլլայ հողերը ազատագրելու համար ուժի դիմելու:

Բաքուի այս յայտարարութեան պատասխանած է ԼՂՀ Արտաքին գործերու նախարարութիւնը, ըսելով թէ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները երբեք չեն եղած ու չեն ըլլար Ազրպէյճանի քաղաքացի: Անկէ զատ Ղարաբաղի իշխանութիւնները միշտ պատրաստակամ գտնուած են բանակցութեան մասնակցելու, առանց նախապայմանի:

Իսկ Հայաստանի Արտաքին գործերու նախարարի բանբեր Հ. Գասպարեան իր կարգին աւելցուցած է թէ Հայաստան չի կրնար լուրջ մօտեցում ունենալ Ազրպէյճանցիներու նման յայտարարութիւններուն ու չի պատրաստուիր բանակցութենէն քաշուելու:

Է. Մամէդեարով չէ ըսած թէ իր պայմանները ընդունելու պարագային Ղարաբաղի Հայերը բանակցելու ի՛նչ կը գտնեն Բաքուի հետ:

***

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստանի մէջ Մեսրոպեան ուղղագրութեան վերադարձի միաւորումին նախագահը՝ Ռաֆայէլ Համբարձումեան Մարտ 30ին Գրականութեան ու արուեստի թանգարանին մէջ կոչ մը հրապարակած է. ան կը վերաբերի Մեսրոպեան ուղղագրութեան վերադարձի հիմնադրամ մը ստեղծելու: Խորհուրդը բոլորը կը հրաւիրէ շարժումին միանալու եւ Հայաստանի տարբեր քաղաքներուն, մարզերուն, ուսումնարաններուն, նաեւ Սփիւռքի մէջ մասնաճիւղեր ունենալու: Կը նախատեսուի հիմնադրամ մըն ալ ստեղծել որ պիտի ծառայէ նոյն ուղղագրութեամբ բազմապիսի հատորներու հրատարակութեան:

Երեւանի "Արդշինպանք"ին մէջ բացուած են հաշիւներ (դրամով – 247 0100 51446, տոլարով – 247 0100 51446 0001, եւրոյով – 247 0100 51446 0049): Կարելի է Սփիւռքէն ալ գումար փոխանցել (Եւրոպա — Dresden Bank AG Գերմանիա 499/0800065700/888 հաշիւին, ԱՄՆ – American Express Bank Ltd. 750 455, և Citibank NA CitiUS 33, հաշիւի 36209105 թիւին):

ԷՍՕՐ ՈՒՐԲԱԹ Է, ՊԱՍ Է...

Մեծ պահքի չորրորդ Ուրբաթն է...
Մաղ-մաղ անձրեւին տակ
մթնշաղին
քայլերուս հետ
կ'երթամ լսելու
առանձին
մօտիկ ընելու
այն անծանօթ բանախօսին
որ պիտի պատմէ
այն ձայնին մասին
որ միշտ կը հնչէ
մէջն ականջին...

..., ուուուուուուուուու...

Ձայն մը
անսկիզբ
անվերջ
թէ լսելի
թէ անլսելի
թերեւս սօլ մը
կամ լա մը
մի՞ մը
ֆա՞ մը
չո՛ւնչ մը
որ կը փչէ՛
հովե՛ր արձակ մազերուս
ու կը գծագրէ՛
լեռնե՛րը վիթխարի
ու կը կերտէ՛
ճարտարապետութի՛ւնը հաւատքի
ու կը սփռէ՛
բո՛յրը խունկի...

..., ուուուուուուուուու...

Ժիրայր է անունը
ինծի անծանօթ այս բանախօսին
որ չեմ գիտեր ինչպէ՞ս
մեր այսօրուան աղմուկէն
յարութիւն է առած
Տէր Յարութիւնեան կոչուած
եւ հանգի՛ստ
ու խաղա՛ղ
կը ներկայացնէ հզօրութիւնը
այս պահուած ձայնին՝
ներշնչո՛ւմ
արտաշնչո՛ւմ
շղթայակապ ձայնապահութիւն
դարերէն չա՛տ հին
ամբողջ մեր պատմութեան
ընթացքին...

..., ուուուուուուուուու...

Պահուած ձայնին հետ միասին
Հայրիկ Մուրատեանն է կը ձայնէ
ու կը պղեցնէ
Դաւիթը Սասունցի...
Զրա՛հը գօտի՛ն
Թո՛ւր կեծակին
Խա՛չ պատերազմին
Տէ՛ր կենդանին,
իսկ Քուռկիկ Ջալալին՝
թա՛մբը սատաֆին...

..., ուուուուուուուուու...

Պահուած ձայնին հետ միասին
Քերովբեան Արա՛մն է կ'երգէ
եւ թերեւս խորանէն
կամ գաւիթէն
Զոլաքեան Ժիրայրը կ'արձագանգէ...
Ժամերգութիւնն է խաւարումի...
Արեւագալ մայրամուտ
արեւելք արեւմուտք
ձայնապահութիւնը կ'երկարի՛
մերթ հորիզոնական
մերթ ուղղահայեաց
անշուշտ խաչաձեւ
կը հանգուցէ երկնէ՛ր երկիր
ու կը կերտէ
խնկաբոյր ճարտարապետութիւնը
հաւատքի...

..., ուուուուուուուուու...

Քամանչային մէկ լարին վրայ
Գագիկ Մուրատեանն է
կը հնչեցնէ այս ձայնը հողին
ու կը նուագէ
երկարո՛ղ այս մէկ ձայնո՛վ
հոռովելը հողին...

...ուուուուուուուուուու...

Կը քաշէ՛ բանախօսը տակաւին
պահուած այս ձայնը
ու կը հասցնէ մինչեւ
Ցարալէզները Շամիրամին
որոնք կը լիզեն անվերջ
վէրքերը մեր պառկած
գեղեցի՛կ Թագաւորին...
Յաւերժութեան ձայնն է
Հայոց Աշխարհին...

...ուուուուուուուուուու...

Մեծ պահքի չորրորդ Ուրբաթն է...
Մաղ-մաղ անձրեւին տակ
մո՛ւս մութին
բանախօսին պատկերներուն հետ
միասին ու առանձին
կը վերադառնամ ճեղքելով
մեր այսօրուան աղմուկը նողկալի...

Այստեղ պարահանդէ՛ս...
երգիչնե՛ր
կը գովերգեն
ու կը դրկեն
Հայոց աղջիկներ նազանի
մազերով սեւ սաթի...

Վրա՞ս կը խնդաք...
ո՞ւր է սեւը սաթին...
Հայոց աղջիկները նազանի
բոլորն ալ այսօր
դեղի դեղին մազեր ունին...
Ձե՞ս հաւատար
թուղթ մատիտ առ
մէկի՛կ մէկիկ գրէ առ...
Սեւ մազերով հայ աղջի՛կ
այսօր ընդհանրապէս
չէ՛ մնացած...

Նուրեմ խնդրե՛մ
ա՛յ երգիչներ
սա ձեր ծամծմած երգերէն
քանի մը ածական
առանց վարանելու
ծո՛վը թափեցէք...
Ձեզի բան մը ըսե՞մ...
քանի մէյ մը թափելու ելեր էք
մէկ անգամէն
սա ծամծմուած երգերն ալ թափեցէք
եւ մեզի ա՛լ
հանգի՛ստ ձգեցէք:

Մազը սե՛ւ է
թէ դեղին է,
հիմա խնդիրը ատիկա չէ՛,
այլ դժբախտութիւնը՝
մէկ ուրիշը
չեմ գիտեր ուրկէ՞ բուսեր է,
սա երգիչին սիրած եարը
առեր տարեր է...
Գետնին տա՛կը անցնէր,
ծօ աստնկ բան կ'ըլլա՞յ,
օր ցերեկով, լոյս աչքով...
Կ'ըլլա՛յ կ'ըլլա՛յ
բայց խօսքը մեր մէջ թող մնայ,
սա նազանի աղջիկը
աչքը բա՛ց է,
ի՛նքը ելեր
կծիկը դրեր
ուրիշին հետ փախեր է...
Ուր հաց
հոն կաց...

Վնաս չունի՛
շատ շուտով
սա մեր երգիչին
ուրիշ սիրուհի մը կը ճարուի
եւ նո՛յն երգը
նոր սիրուհիի՛ն կ'երգուի.
ուստի այսպիսով
սիրուհիներուն թիւը
Ցիսուսին ձուկերուն նման
կ'օրհնուի՛...

Այստեղ երգահանդէ՛ս...
կ'երգեն նազանի երգչուհինե՛ր...
Մազերուն մասին
այլեւս բա՛ն ման
պիտի չըսե՛մ...
Ի՞նչ է
սա մազի պատմութիւնը
մատի փաթթո՞ց ընեմ...
Հիմա
երգչուհին լսելու տեղ
եկէք դառնանք
սրահին մէջ բազմած
հո՛ծ բազմութիւնը դիտենք...

Ականջներուն հասնող
լա՛յն ժպիտով
տղամարդի՛կ...
Ա՛յ նապաստակ նապաստակ,
ի՞նչ ես նստեր պատին տակ...
Զէ՛, չէ՛,
այս մէկը չէ՛ր...
Ներող եղէք...
Ա՛յ տղա՛յ մարդ, տղա՛յ մարդ,
ի՞նչ ես նստեր
հպա՛րտ ու գոհունակ...

Հանգի՛ստ ձգեցէք
սա հայ տղամարդը,
քանզի կը մտածէ՛
թէ ե՞րբ
ինչպէ՞ս
լեռնուհիները Հայոց Աշխարհի
դարձան այսօր գեղեցկուհի...
Կարծես ըլլան Եւրոպացի՛...

Ի՛նչ Եւրոպացի...
յապաղած չնորհակալութիւնը
վերի յարկը ապրող
մեր դրացիին՝
խարտեաշ ռուսին
հարկ է յայտնել...

Պարահանդէ՛ս,
երգահանդէ՛ս,
այստե՛ղ այնտե՛ղ
բայց մե՞նք...
Մեղա՛յ մեղայ
պա՛հք բռնած ենք
կենդանիի միս
բերաննիս դրած չե՛նք...

Մեր աղմուկէն նողկալի
կը փախչի՛մ
հեռուները
բարձունքները
կը հասնիմ հոն
մենաւոր վանքին
վիթխարի լերան գագաթին...
Կը նստիմ կողքը տապանաքարին
ու ձեռքս սահեցնելով
կ'ընթերցեմ մատներով
փորագրուածը պա՛ղ մարմարին...

– Այս է հանգիստ
Սրբոյ վարդապետին
եւ քահանայապետին
Գրիգորի Տաթեւացւոյ –

... հազարերեքհարիւրքառասունվեց...
...հազարչորսհարիւրեինն...
Ի՛նչ հանգիստ...
Ինչպէ՞ս հանգչի Գրիգոր Տաթեւացին
մէջն իր դամբարանին
Այսօր՝
երրորդ հազարամեակին
վեցերորդ տարին,
ծիրչ տակը պատին
քահանայապետին վանքին
վառուած է կրակը խորոված...

խորովածը ինչ լաւ բան ա,
վա՛յ տուտուդ, տուտուդ, տուտուդ...
Քէֆ անելը ինչ լաւ բան ա,
վա՛յ տուտուդ տուտուդ տուտուդ

Խե՛ղճ վանքը
մէջն այս աղմուկին,
իսկ յետոյ
չուրջը սոյն վանքին
աղբ կոչուած զիպիլը կերուխումին...

Խորովածի
ծուխով մուխով
եւ աղմուկով
փակուած են ճամբաները աղօթքի...
Բռնաբարուած են վանքերը
մէկիկ մէկիկ
մե՛ր իսկ ձեռքերով...
Այս ճակատագրէն
փրկուած են բարեբախտաբար
աւդին անդին

լքուած մոռցուած
եկեղեցիներ կիսաքանդ...
Առայժմ բախտաւոր
սակայն շատ շուտով
իրենց հաշւին ալ կը մաքրուի,
քանզի խիստ է եղանակը
Հայոց Աշխարհի...

Հաշիւը կը մաքրուի՛
այստեղ եւ այնտեղ
իսկ մե՞նք...
Ծա՛փ ծա՛փ ծա՛փ
պա՛ր ենք բռնած
չուրջը Սուրբ լերան...
Երկու քայլ առջեւ
երկու քայլ ետեւ
ո՛չ ձախ
ո՛չ աջ
ամբո՛ղջ աշխարհին
մենք ցո՛յց կու տանք...
Ծա՛փ ծա՛փ ծա՛փ...

Իսկ Սուրբ լերան գագաթը
ըսե՞մ թէ չըսեմ կատարուածը...
Սրբապղծուած է լեռը...
դարձած է պարզապէս
մե՛ծ խաչանոց...

Խաչանո՛ց
խորովածանո՛ց
Երկի՛ր Հայոց...
Խաչին խորովածին
մէջը ծուխին մուխին
ոտքի ենք կանգնած
այսօր ուշացած
երբ բանը բանէն շատո՛նց է անցած
ու կ'ողբա՛նք
թշնամի՛ն կ'անիծենք
երբ մեր քիթին տակ
Բագրատունի փլատակ քաղաքին դիմաց
քարի հանք ենք սարքած
եւ քարահանքի պայթումներով
պայթումներուն ցնցումներով
քար մըն ալ մե՛նք կը քանդենք
որբացած մեր Անիէն
դէպի կործանումը կը գլորենք...

Հէ՛յ...
Վնաս չունի՛...
Տակաւին ունինք քանի մը վանք
ու կը պարծենա՛նք...
է հէյէ՛յ...
քանի մը վանք
տակաւին ինչքա՞ն
այս նողկալի
աղբ աղմուկին դիմանան
ու օտարին
զբօսաշրջիկին
ցոյց տան
թէ ա՛յս է
Հայ ու Հայաստան...

Մեծ պահքի չորրորդ Ուրբաթն է...
Մաղ-մաղ անձրեւին տակ
մո՛ւս մութին
քայլերուս հետ
ծա՛նր ու առանձին
կը հարցնեմ ես ինծի
թէ ե՞րբ
ինչո՞ւ
ինչպէ՞ս սկսաւ
մեր այս աղմուկը նողկալի...

Մեր մթութեան մէջ աղմկալի
կը վերադառնամ ծանրաքայլ
ես ու պահուած ձայնը
միասին առանձին...

...ուուուուուուուուուու...

Յաւե՛րժ պառկած է
գեղեցիկ Թագաւորը մեր...
Ցուսահատ փակուած է
Դիւցազն մեր...
մինչ քանի մը խենթ տակաւին
աւդին անդին
շնչասպառ կը պահեն
այս ձայնը
մեր հաւատքին
Հայոց Աշխարհին...

...ուուուուուուուուուու...

Պարզապէս
քանի մը խենթ
եւ քանի մը վանք...
Շա՛տը գնաց
ո՞վ
ի՞նչը մնաց...

Քառասունս շատո՛նց անցած եմ
ուստի ձայնս
համարձա՛կ կը բարձրացնեմ...
Մեր այս աղմուկը նողկալի
կամ կը դադրի
կամ ալ...
աա՛յ
լեզուս չորնայ ու չըսեմ...
վա՛յ...
գրիչս գրկող մատներս կոտրին ու
չգրեմ...
կամ ալ...
Աստուա՛ծ չընէ
կը լռէ յաւերժ
այս պահուած ձայնը
մեր հաւատքին
Հայոց Աշխարհին...

Մեծ Պահքի չորրորդ Ուրբաթն է...
ծոմապահութիւն...
ձայնապահութիւն...
եւ վերջապէս...
Յարութիւն...

Էսօր Ուրբաթ է պաս է...
ուուուուուուուուուու...

ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ

ՈՐՊԷՍԶԻ «ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋ ՀԻՄԵՐԸ ԴՐՈՒԷԻՆ»...

ԸՍՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՊՁՏԻԿԵԱՆԻ

Սփիւռքի մեր մշակութային երեւոյթներէն ամենանշանաւորը Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարեան միաբանութիւնն է, որ 300 տարի արդէն իտալական հողի վրայ կը պահէ ու կը զարգացնէ հայ գիրն ու մշակոյթը: Նկատի ունենալով Մխիթարեան միաբան Հայր Յարութիւն Պձտիկեանի՝ Հայաստանի մէջ գրեթէ մշտական դարձած ներկայութիւնը եւ իրբեւ մեր կեանքին եւ ժողովրդի հոգսերուն քաջատեղեակ անձնաւորութիւն, որուն անդրադարձները իր բազմաթիւ գիրքերն են, եւ այդ պատճառով ալ ան դարձած է մեր ժամանակի ճշմարիտ վաւերագիրներէն մէկը, նաեւ հաշուի առնելով իր գրութիւններու հիմնական սկզբունքը՝ հետամուտ մեր ազգային ինքնութեան տարրերու՝ լեզու, մշակոյթ, հաւատ-եռախմաստութեան ապահովութիւնը, խնդրեցինք յայտնել իր նկատառումները:

"Ազգ"

***

ՀԱՐՑՈՒՄ. – Հայր Յարութիւն, որպէս մտաւորական եկեղեցական, ինչպէ՞ս էք գնահատում գրողների համահայկական գ. համաժողովի արտերկրում անցկացնելու գաղափարը:

ՊԱՏԱՍԽԱՆ. – Մխիթարեան Միաբանութիւնը երեք հարիւր տարուան մշակութային միաբանութիւն է, եւ կը զարմանամ, որ Արամ Ա. Կաթողիկոս կը կազմակերպէ գրողներու համաժողով մը եւ ամէնէն հին կազմակերպութիւնը կը մոռնայ հրաւիրել: Ես անձնապէս չէի ուզեր երթալ, կարեւոր չէ, բայց գոնէ քաղաքավարութեան համար Մխիթարեան Միաբանութեան հրաւէր մը ղրկուէր: Իբրեւ գրական – մշակութային – կրթական հաստատութիւն, միաբանութիւնը տակաւին 10–12 դպրոց ունի ըՍփիւռքի մէջ եւ համաժողովի մասնակիցներուն մէկ մասն ալ մեր աշակերտները եղած են: Բայց միաբանութիւնը կ'անտեսուի եւ սա առաջին անգամը չէ. ասիկա ցոյց կու տայ, որ հոս խախուտ բան մը կայ, ծրագրուած բան մը:

Հ. – Ի՞նչ նկատի ունէք:

Պ. – Նկատի ունենալու ոմանք, եւ ոմանք՝ ոչ: Հրաւիրեալներուն մէջ շատ պատուական մարդիկ կան, ծրագիրը շատ գեղեցիկ է, օգտակար գործ է, վստահաբար բարերարն ալ գտնուած է, որովհետեւ մեծ ծախքեր պիտի ըլլան:

Հ. – Կարծիք կայ, որ մտաւորական այս շարժումը, սակայն, քաղաքական ոլորտի քայլ է:

Պ. – Որեւիցէ բանի մասին, որ ստոյգ չեմ գիտեր, չեմ կրնար արտայայտուիլ: Կրնայ ըլլալ, քանի որ քիչ թէ շատ գիտենք, որ համայնավարութեան ատեն Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը սովետական ճնշումի տակ էր, միեւնոյն ատեն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Դաշնակցութեան ձեռքերուն մէջ առնուած էր: Պայքարը ոչ թէ եկեղեցիներու մէջ էր, այլեւ կուսակցութիւններու, եւ դժբախտաբար, կարծեմ թէ այն կը շարունակուի տակաւին: Եկեղեցին որպէս միջոց կը գործածուի պայքար մը ստեղծելու անիմաստ կերպով. փոխանակ միացնելու, աւելի պառակտելու կը նպաստեն: Ըստ ինծի, այդ համաժողովը պիտի երկու կաթողիկոսներու հրաւէրով ըլլար: Քանի որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսն է կոչ ընողը, լաւ պիտի ըլլար, որ երէց Աթոռին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ալ գործակցութեամբ ըլլար: Այդ ատեն կը ստեղծուէր նաեւ եկեղեցիներու այս բախումին հետզհետէ նուազումը եւ միասնութեան գործակցութեան առողջ հիմերը կը դրուէին:

Կարելի է քաղաքական նպատակներ տեսնել, որովհետեւ եթէ իսկապէս մէկը կ'ուզէ իր կոչումին մէկ մնալ, նախ պէտք է եկեղեցական հոգերով զբաղի: Այսօր այնքան հարցեր ունինք թէ՛ Սփիւռքի մէջ, թէ՛ Հայաստանի մէջ՝ աղանդաւորներու հարցեր կան, ջլատումի, քայքայումի հարցեր կան, մեր նաւը ամէն կողմէ ջուր կ'առնէ: Այս վերջին երկու տարիներուն 147.000 Հայ հեռացած է Հայաստանէն, ասանկ եթէ շարունակուի տարիներ ետք Հայաստան չի մնար: Այս մտահոգութիւնները կարծես թէ գիրենք չեն հետաքրքրեր:

Ինչ կը վերաբերի համաժողովը Սփիւռքի մէջ կազմակերպելու հարցին, կը կարծեմ՝ շատ օգտակար է: Այսօր ըՍփիւռք ըսելով Լիբանան, Սուրիա կը հասկընանք: Լիբանանը աւելի դիւրամատչելի է եւ Անթիլիասը շատ ենթակառոյցներ ունի (սրահներ, դպրոցներ), այդ առաւելութիւնները կարելի է օգտագործել: Անթիլիասը կրնար այդ ենթակառոյցները տրամադրել, բայց նաեւ ստեղծել յանձնախումբ մը Հայաստանի Գրողներու Միութեան անդամներէն, ըՍփիւռքի մեր գրողներէն, նաեւ Ս. Էջմիածնի ներկայացուցիչներէն բաղկացած, ինչու չէ, նաեւ Մխիթարեաններէն, որպէսզի եղբայրական գործակցութեամբ անիմաստ պառակտում չըլլար: Որովհետեւ այս ձեւով գրգռիչ բնոյթը ունի կարծեմ, գուցէ մտադրութեան մէջ բնաւ չըկայ, բայց կրնայ այդպիսի ենթադրութեան մը տեղի տալ:

Հ. – Անտեսուած լինելը վիրաւորական հանգամանք ունի անշուշտ: Երկու կարծիք կայ՝ նախ որ այս համաժողովը զուտ գրական բնոյթ ունի եւ միաւորելու միտում, եւ հակառակը, որ կարող է աւելի խորացնել եկեղեցական պառակտումները՝ կուսակցական երանգաւորումներով:

Պ. – Ակամայ կրնանք այդ եզրակացութեան յանգիլ: Որովհետեւ բան մը որ ես չէի նկատած, դուք կը նկատէք՝ պառակտում ստեղծելը: Ուրեմն կազմակերպողները պէտք է մտածէին այնպէս ընել, որ առիթ չտան նոր պառակումի, այլեւ ըստեղծեն նոր միութեան շարժառիթ: Գաղափարը հրաշալի է, որովհետեւ հոն ունինք մեծ գաղութ եւ մանաւանդ գրական գաղութ: Սա կարեւոր է: Օրինակ, Մոսկուան աւելի մեծ է, բայց գրական գաղութ չէ: Եւ Սփիւռքի Հայութեան համար ալ բարոյական մեծ նեցուկ մը կ'ըլլայ. հայրենիքէն մտաւորականներ կու գան: Բայց որքան գեղեցիկ կ'ըլլար երկու կաթողիկոսութիւնները, մեր միաբանութիւնն ալ մասնակցէին, եւ համաժողովը ստանար իսկական հոգեւոր-գրական բնոյթ:

Հ. – Խետեւողական լինելով մեր մշակութային արժէքների պահպանութեան խնդիրներում, մտահոգութիւններ ունէք մասնաւորաբար հարեւան երկրների տարածքում մնացած մշակութային անցեալի մեր ժառանգութիւնների՝ յուշարձան-կոթողների ճակատագրերի նկատմամբ: Այդ երկրներում (Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան) ցայսօր շարունակւում է մըշակութային վանտալիզմ – ոճրագործութիւնը:

Պ. – Միջերկրականի ափերէն մինչեւ Կասպից եւ Սեւ ծովերը ստեղծած ենք հսկայական գանձեր: Բարձր Հայքի մէջ կը գտնուին մեր լաւագոյն ճարտարապետական կոթողները, թէեւ չեն քանդըւած, բայց արդէն ուրիշին կը վերագրուին: Ասիկա ցոյց կու տայ, որ մենք ունինք նաեւ Ցեղասպանութեան մշակութային տարբերակը: 1915 թուականը մեր ժողովուրդը ջնջեց իր պատմական հայրենիքին մէջ, հիմա հետքերը կը ջնջեն: Հետքը մշակոյթն է: Ասիկա շատ լուրջ հարց է եւ համամարդկային: Սա ոճիր մըն է եւ պիտի դատապարտուի, ինչպէս կը դատապարտուի Ցեղասպանութիւնը: Պոնիայի պատերազմի ատեն Խրուաթները կամուրջ մը փլցուցին Փրիշտինայի մէջ: Օսմանեան կամուրջ մըն էր, գեղեցիկ կամուրջ էր, բայց հին պատմութիւն մը չունէր: Այս կամուրջին համար ամբողջ աշխարհը ոտքի ելաւ եւ մէկ տարի չանցած ՄԱԿ-ի միջնորդութեամբ վերաշինուեցաւ: Ինչո՞ւ մենք ալ միեւնոյն կերպով չենք պահանջեր, որ մեր յուշարձանները վերաշինուին: Ճիշդ է, որ Եւրոպական Միութեան Խորհրդարանին մէջ դատապարտած են Ադրբեջանը, բայց չի բաւեր, այդ խօսքերը շատ լաւ ենք: Ես առաջարկ մը ըրի՝ անցրնել ժողովրդական հանրաքուէ՝ մենք պէ՞տք է շարունակենք բանակցիլ Ղարաբաղի հարցով: Եւ կը կարծեմ՝ բանակցութիւններու մենք պիտի չնստինք՝ մինչեւ Ադրբեջանը յարգէ մեր յուշարձանները: Սակայն կը կարծեմ, թէ մենք անտարբեր դարձած ենք: Լեզուն, որ ամենամեծ մշակութային յուշարձանն է ժողովուրդի մը, մեր հայրենի հողին վրայ անտեսուած է, ուրեմն ինչպէ՞ս կրնանք գիտակցիլ, որ մեր մըշակոյթը կը քանդուի եւ գայրոյթ արտայայտենք:

Կը կարծեմ՝ համահայկական հզօր շարժում պիտի սկսինք միասնական՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ բողոքի հզօր ալիք բարձրացնելու մշակութային այս ոճրագործութիւնը կանխելու համար:

Ամբողջ Նախիջեւանը զրկուած է հայկական յուշարձաններէ: Այսօր Ագուլիսի մէջ ոչ մէկ եկեղեցի մնացած է, վանքերը հողին հաւասարած են: Խաչքարը վերջինն էր, սահմանին մօտ էր՝ տեսնուեցաւ, միւսները ներքին սահմաններու մէջ են, չեն տեսնուիր, փլած են, այլեւս չկան:

Եւ կրկին կը դառնամ իմ սկզբունքային հարցադրումին՝ մենք ազգային յստակ քաղաքականութիւն պիտի մշակենք:

Բայց քիչ մը անհոգ, անխնամ դարձած ենք. հանդէսներ, յոբելեաններ աքանչելի կերպով կը տօնենք: Հանդէսները կը դիտեմ՝ կը յուզուիմ, երբ իրականութիւնը կը տեսնեմ՝ կու լամ:

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Պզտիկ քաղաքը, կը տեղեկացնէ Ատիմարի, տեղահանութեան խաչմերուկներէն մէկն է: Ընտանիքին մասին, բնականաբար, ոչ մէկ լուր կայ: Բայց քաղաքը պարպուած է իր հայ բնակիչներէն: Հալէպի խտալացի հիւպատոսէն պիտի պահանջուի գգուշութեամբ հետեւիլ եղելութիւններուն: Երուանդ քարացած կը լսէ այս լուրերը: Պաղ քրտինք մը վիզէն կ'իջնէ կռնակն ի վար. քիչ վերջ ամբողջովին քրտինքի մէջ է, կարծես ամբողջ մարմինը արտասուէր եղբօր համար գոր, այլեւս վստահ է, կրկին պիտի չըտեսնէ:

Շնորհակալութիւն կը յայտնէ բարեկամին եւ կը մեկնի, կռնակը շիտակ, թաղուած իր առանձնութեան մէջ:

***

Այժմ հոս երեք ճանապարհներ, երեք ընթացքներ գիրար կը խաչաձեւեն: Շուշանիկի եւ Իսմէնէի ճանապարհները զուգահեռ կ'ընթանան. թէեւ մահուան ճանապարհը հասաւ կեանքի ճանապարհին, բայց արդիւնքը անյայտ է: Զանազան ծուղակներու վտանգը կայ, զանազան առեղծուածներ կը մթագնեն տեսողութիւնը:

Կղզիացած, առանձին է երրորդ ճամբան, Երուանդի ճամբան: Ան՝ անհամբեր, արագաշարժ վիրաբոյժը, պէտք է կրկին վարժուի արեւելեան համբերութեան, հասնող լուրերէն կախեալ ըլլալու վիճակին, կարելիութիւններու ընտրութիւն չունենալու, բան մը չկարենալ ընելու իրականութեան: Ուրիշ կարելիութիւն չունի, այլ սպասել եւ անձնական հպարտութեան շարունակական անէացման գիտակցութիւնը ունենալ: Եթէ ետ դառնար, ստորադաս մը պիտի ըլլար, ուրիշներու պէս թշուառ մը... Վիրաւորուած ինքնավստահութեան պարապ յոխորտանքի ցուցմունքին մէջ, այդ մահացու ամբան ընթացքին Երուանդ մինչեւ իր խորքը զգաց տարբեր ըլլալու գիտակցութիւնը եւ դադրեցաւ ինքզինք հանելէ:

Շուշանիկ, պզտիկները, աղջիկները կը քալեն ցաւերու ճամբայէն: Տաւրոսի զարհուրելի լեռներ ցցուած են իրենց դէմը: Հրաշքով բերուած Գոնիայի ժողովուրդին սփոփարար օգնութիւնը, մինչեւ վերջին փշրանքը օգտագործելով, իրենց թոյլ տուաւ վերապրիլ, բայց մանաւանդ վերածնաւ, թէեւ տկար բայց հաստատամիտ, իրենց մէջ մինչեւ Հալէպ հասնելու յոյսը: «Հոն մեր հրեշտակները մեզի կը սպասեն, հոն պիտի ուտենք» կը փափսայ Շուշանիկ պզտիկներուն: Եւ նուպար, հանդիսաւոր կերպով, բթամատը կը խոթէ բերնին մէջ եւ լռջութեամբ «անօթի չեմ» կ'ըսէ միշտ. բան չի պահանջեր, չի գանգատիր:

Տաւրոսի լեռնաշղթային լանջերուն տակի ընդարձակ տափարակներուն վրայ, ուժաթափ եւ հիւծած, կը հասնին կարաւաններու մնացորդները: Քանի՛ այրերու, քանի՛ կիներու ոսկորները կը սկսին արդէն ճերմկնալ ճամբաներու երկայնքին, քանի՛ ուռած դիակներ կը փոխադրէ Եփրատը, քանի՛ պզտիկներ, քանի՛ աղջիկներ անյայտացած են: Պզտիկ քաղաքին մնացորդացի խմբակը տաժանելիօրէն կը ջանայ վրանի մը հովանիին մէջ պատսպարուիլ երկու ցամաք ծառերու տակ, մինչ բազէ մը բարձր կը թռչի պայծառ երկնքին մէջ: Յուլիս ամիսն է, ո՛վ գիտէ: Ոչ ոք այլեւս օրերու հաշիւը կը պահէ:

Ո՞ւր են Կիլիկիոյ դղեակները, ո՞ւր է Լուսինեաններու խաչակիր թագաւորութիւնը: Մշուշին մէջ, աչքերը խանձող տաքութեան տակ, հպարտ ժողովուրդին թշուառ մնացորդացին մէջ կը շրջին Բագրատունիներու անյաղթ նետաձիգներուն, ոսկեվառ դրօշակներով ձիաւորներուն ուրուականները: Եւ մահուան մեղմ զեփիւռ մը կը շոյէ տաքցած այտերը, խանձած երեսները, սփռելով վոլութիւն, լքուած անշարժութիւն եւ սփոփանք: Եւ Շուշանիկ կը տեսնէ զօրեղ, գեղեցիկ պատերազմող հրեշտակները որոնք կը մօտենան զինքը տանելու, ձիուն վրայ նստած Սմբատին հետ, որ այնպէս գեղեցիկ է ինչպէս էր երբ իր լաւ բարեկամին հետ որսորդութեան կ'երթար:

Բայց ամուր ձեռք մը կը թօթվէ, կը ցնցէ զինքը, արգիլելով մեկնումը: Նազիմն է որ ըստ իր խոստումին, չի լքեր իր Վալիտէ հանըմը: Թշուառ մը թշուառներու մէջ, առաւօտուն կանուխ սպրդեցաւ յուսալքուածներու հաւաքատեղին մէջ: Հիմա կը սնուցանէ եւ կը խնամէ Շուշանիկը, ոչխարին թարմ կաթը կը խմցնէ, արիւնոտած ոտքերը վիրակապերով կը փաթթէ: Եւ յետոյ, կ'առնէ գլուխը թեւերուն մէջ եւ բարեպաշտութեան օրհնաբանութիւններով կ'օրօրէ...

Զափթիէն որ կաշառք առած է, ուրիշ կողմ նայիլ կը ձեւացնէ, մինչ պզտիկները կը կերակրուին, քիչ կամ շատ գաղտնի կերպով, որպէսզի ուրիշները չանդրադառնան: Ցուասհատներու միջեւ եղած սարսափելի զատողութիւնն է: Բայց բոլորին համար ալ ապագան ոչնչութիւնն է. բոլոր այս մարդիկը, ուշ կամ կանուխ, սահմանուած են մեռնելու: Հոս կամ Այնթապի մէջ, Հալէպի կամ Տէր-Էս-Զօրի մէջ: Այս վերջին տեղը կ'երեւի ըլլայ իրենց վերջնական աքսորավայրը, բայց ինչ՞ կարեւորութիւն ունի: Նոյնիսկ անգթութիւն է - կը մտածէ զափթիէն - անոնց մահը երկարաձգել: Նոյնիսկ կը փորձուի պահ մը մտնել այս զարմանալի մուրացկանը որ կրկին եկաւ օգնելու այս կնկան եւ իր ընտանիքին: Բայց ահաւասիկ Նազիմ, ամսեղուկ, որ ուրիշ ոսկեդրամ մը ցոյց տալով՝ "ասիկա եւ ուրիշ տասը հատ, եթէ Հալէպ հասնին" կը սուլէ ակռաներուն մէջէն, կրկին հըմնագանդութիւն պարտադրելով իր մեղսակցին: Որովհետեւ Նազիմ գիտէ որ Տաւրոսի դժուար լեռնաշղթան անցնելու ատեն Շուշանիկ կրկին առանձին պիտի ըլլայ: Ինք կաղ է, եւ անոնց մօտ Իսմէնէն եւ Իսաագը դնել չի համարձակիր:

(Շար. 77)

(Շար. Ա. էջէն)

կումը, ուսանողական համախմբումներ եղան բոլոր մեծ քաղաքներու մէջ, Փարիզ Թալանողներ ալ եղան եւ երեք հարիւր երիտասարդներ քարուքանդ ըրին Փիէր Լըլուշի կեդրոնավայրը (ռիւ տը Մօպէօժ)։ Միջադէպեր պատահած էին գրեթէ ամէն կողմ եւ մտահոգիչ խոստումներ ալ կային Ապրիլ 4ի համար։ Կը թուի որ գործադուլը շատ աւելի ծաւալուն բնոյթ կ'ունենայ եւ կայարաններու եւ հաստատութիւններու գրաւման սպառնալիքներ ալ կան, ինչպէս եղաւ Մարսէյլ անցեալ շաբթու եւ նաեւ այլ քաղաքներ։

Ներկայիս, քաղաքական գետնի վրայ, բուն միակ յաղթականը Նիքոլա Սարքոզին է, քանի որ Իւ. ԷՄ. Փէ.ի խորհրդարանականներուն յանձնուած է Բ. օրինագիծին պատրաստութիւնը։ Թէեւ, անմիջական կերպով այդ Բ. օրէնքը օգուտ մը չունեցաւ, բայց հաւանական կը նկատուի որ ան գրեթէ ամբողջովին պարպուած ըլլայ առաջինին բաղդատմամբ, այլ խօսքով, Սարքոզի պիտի ջնջէ Վիլըփէնի օրէնքը, ինչ որ Շիրաք չհամարձակեցաւ ընել բացէ ի բաց։ Հրապարակի վրայ է Ֆրանց-Օլիվիէ Ժիսպէրի նոր հատորը Շիրաքի մասին, ուր ան կ'արձագանգէ տը Վիլըփէնի իրեն ըրած խոստովանութիւններուն։ Վիլըփէն ըսած է.- "Նախագահը չի կրնար դիս ճամբու դնել։ Շատ բան գիտեմ։ Սիսթէմէն դուրս՝ յապաղումով պայթելիք ռումբի մը կը վերածուիմ"։ Եւ դեռ գիրքին հեղինակը այլ մանրամասնութիւններ ալ կու տայ այն ազդեցութեան մասին, զոր տը Վիլըփէն ունի Շիրաքի ուղեղին վրայ։

Օրէնքը որ պիտի չգործադրուի, հրատարակուեցաւ Պաշտօնաթերթին մէջ Ապրիլ 2ին, օրէնք մը որ արդէն աղբամանը նետուած է եւ խօսքը կը պատկանի Սարքոզիի, ինչ որ կը նշանակէ թէ Վիլըփէնի հաշիւները սխալ ելան։ Ներքին նախարարը, որ արդէն իսկ Բ. նախարարապետ մըկըրտուած է, Ապրիլ 1էն իսկ հեռաձայնած է բոլոր սենտիքաներուն, ուսանողական միութիւններուն, հանդիպումներ առաջարկելով։ Հակառակ այդ ջանքերուն, Ապրիլ 4ի գործադուլը շատ աւելի ծաւալուն պիտի ըլլայ քան նախորդը Մարտ 28ին։ Շարժումը կը վերաբերի երկաթուղիին, մեթրոյին, հանրակառքերուն, օդանաւերուն, թղթատարին, ու ժանիւթի, առեւտուրի, շինարարութեան լողատեսողական եւ մամուլի մարզերուն (օրաթերթեր լոյս պիտի չտեսնեն)։ Կրթական գետնի վրայ կացութիւնը կը մտահոգէ ծնողքները, քանի բախումներ կը պատահին անոնց միջեւ որոնք գործադուլի մէջ են եւ ուրիշներու որոնք աշխատիլ կ'ուզեն։ Գործադուլին կ'ընկերանան ցոյցեր Փարիզէն գաւառ։ Այս ամբողջ իրարանցումը նոր օրէնքի մը անհեթեթ ճակատագրին հետեւանքով...։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

12 ԹԻՒԸ, որ տեղեկութիւններու աղբիւրն էր Ֆրանսայի հեռաձայնին, ջնջուեցաւ Ապրիլ 2ի գիշերը եւ զայն կը փոխարինեն 24 նոր թիւեր, որոնց առաջին երեքը 118 է եւ 24 ուրիշ 3 թիւեր ալ կը կցուին, ինչ որ ահաւոր բարդութիւն մը կը ստեղծէ։ Բայց, Ֆրանսացին արդարացի կերպով կ'ըսէ՝ ինչո՞ւ պարզ ընել, երբ կարելի է բարդ ընել։ Ամէնէն բանուկը կը թուի 118.818ը, բայց այս մարզին մէջ գիներու մրցակցութիւն մը կայ։

ՉԵԽԻՈՅ մէջ մահացու ողողումներ կը շարունակուէին, նաեւ Սլովաքիոյ մէջ եւ չուրջ տասը մեռեալ կար։ Հիւսիսային եւ արեւելեան Գերմանիան ալ խնայուած չէն բայց Ապրիլ 3ին, կացութիւնը բարելաւուած էր։

ԱԼՔԱԹԷԼ, որու տնօրէն-նախագահն է դեռ քանի մը տարի, Սերժ Ջիւրիւք (բացառիկ արտօնութեամբ մինչեւ 68 տարեկան) գնեց ամերիկեան Լըսէնթը եւ Ալքաթէլի բաժնետէրերը 60%ը կ'ունենան ամերիկեան ընկերութեան։ Ջիւրիւք կը մնայ ընդհանուր ոչ-գործադիր տնօրէնը եւ Փէթ Ռուսօ՝ տնօրէնուհին։ Նոր ընկերութիւնը 21 միլիառ Եւրոյի գործառնութիւն կ'ունենայ, կեդրոնատեղին Փարիզ կը մնայ։ Աշխատաւորները մտահոգ են, պաշտօնազրկումներ կը պատրաստուին։

ԱՊՐԻԼ 2ԻՆ Վատիկանէն Լեհաստան եւ այլուր ոգեկոչուեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. Պապի վախճանման տարելիցը։ Բենեդիկտոս ԺԶ. ժամը ճիշդ 21.37ին պատշգամէն ոգեկոչեց անոր յիշատակը ծովածաւալ բազմութեան մը առջեւ։ Մասնաւոր արարողութիւններ ալ եղան Լեհաստան, Պապին ծննդավայրը։

Ս. ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳԻ մէկ դատարանը եօթը պատանիներ դատապարտած է 18 ամիսէն հինգ ու կէս տարուան բանտարկութեան։ Սպաննած էին տաճիկ աղջնակ մը։ Օրէ օր կ'աւելնան օտարներու դէմ յարձակումները։

ԼԵՀԱՍՏԱՆԻ Մշակոյթի Նախարարութիւնը դիմած է ԻՒՆԷՍՔՕ-ին, որպէսզի Աուշվիցի արգելափակման կայանը, որ տեղ ունի համաշխարհային հարստութեան ցանկին մէջ, այլեւս կոչուի՝ "Աուշվից - Պիրքընաուի նացիական եւ գերմանական արգելափակման նախկին կայան"։ Վարչաւա չուզեր որ "լեհական" ածականը գործածուի, ինչպէս կ'ընեն մետիաները։ Լեհաստան կը յիշեցնէ որ Գերմանացիները հաստատած են այդ կայանները 1939էն 1945, երբ երկիրը գրաւուած էին։

ՄԵԾ ՊԱՀՔ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 5.-
ԼԸ. օր Մեծ Պահոց
Հսկումի՝ խաղաղականի եւ Հանգստեան ժամերգութիւն
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 18:00ին։

***

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 7.-
Աւետումն Սուրբ Աստուածածնի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.30ին։
Պատարագ՝ ժամը 10ին։

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

ՄԵԾ ՊԱՀՔԻ ՀՍԿՈՒՄ ԵՒ ԱՐԱՒՕՏԱԼ

Մեծ Պահքի հետեւեալ Չորեքշաբթիները Արեւագալի ժամերգութիւն կը կատարուի ժամը 10.30ին, իսկ երեկոյեան ժամը 17ին՝ Հսկում.-

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 5։

Իսկ Արեւագալի ժամերգութիւնները կը կատարուին Մեծ Պահքի Կիրակիներուն պատարագէն առաջ։
Ժամերգութիւն՝ ժամը 8.45ին,
Արեւագալ՝ ժամը 9.45ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին,
Քարոզ եւ հոգեհանգիստ՝ ժամը 11.45ին։

***

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

ժամը 17.30ին

ՄԻՋԻՆՔ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 5.-
Ս. Աստուածածին Եկեղեցի (Նիս)
Քարոզիչ՝
ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 7.-
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցի (Փրատօ)
Քարոզիչ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Հայաստանցի կին մը տարեց կամ մանուկ խնամելու կամ այլ աշխատանք կը փնտռէ։

Հեռաձայնել Տիկին Կարինէին. – 06. 64. 45. 30. 24

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.-
Տօն Գալստեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յԵրուսաղէմ
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8:30ին։
Սուրբ Պատարագ՝ ժամը 10:30ին։
Դռնբացէք՝ ժամը 16:00ին։
(Քանզի զկատարածի գալստեանն՝ եւ զդատաստանի աւուրն ունի զխորհուրդ)

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11.-
Ցիշատակ Տասն Կուսանաց
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 16.30ին։

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.-
Ժամերգութիւն՝ ժամը 8.45ին,
Պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ
Կը քարոզէ՝
ԴԱՒԻԹ ԱՐՔ. ՍԱՀԱԿԵԱՆ
Երեկոյեան Դռնբացէք *ժամը 16ին։*

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11.-
Ցիշատակ Տասն Կուսանաց
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 16ին։

REPAS PAROISSIAL DES RAMEAUX

le dimanche des Rameaux
9 avril, à 13 heures
l'Association Sainte-Croix de Paris
organise
UN DEJEUNER COMMUNAUTAIRE
dans la salle polyvalente
de la Cathédrale Sainte-Croix,
au 13 rue du Perche — PARIS 3e

après la Divine Liturgie
et avant la Cérémonie de l'Ouverture des Portes.

Réservations :

— Paroisse : 01. 44. 59. 23. 50
— Eparchie : 01. 40. 51. 11. 90.
P.A.F. : Adultes: 15 Euros
Adhérents: 12 Euros
Enfants, étudiants: 10 Euros

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» 83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՏԷՍԻՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Տէսինի քաղաքապետ Փ. Գրէտոզի նախաձեռնութեամբ քաղաքապետական խորհուրդը դիմումներ յղած է Հանրապետութեան Նախագահին, վարչապետին, Ազգային Ժողովի, Ծերակոյտի նախագահներուն որ հարկաւոր միջոցները ձեռք առնեն հակահայ ժխտողականութիւնը պատժելի արարք դարձնելու ի նպաստ։ Ատիկա կարելի կը նկատուի կէսոյի օրէնքին կիրարկութեան դաշտին ընդլայնումով, կամ ցեղասպանութեան Ֆրանսայի կողմէ ճանաչումին 2001 Յունուար 29ի օրէնքին վրայ յօդուածի մը յաւելումով։

Ակնարկելով Մարտ 18ի թրքական ցոյցին տրուած արտօնութեան, Պրն. Գրէտոզ կը գրէ թէ նման պատահար, այդքան ցնցող ու հոգեբեկիչ բնոյթով, պէտք չէր որ կարենար արձանագրուէր մեր Հանրապետութեան մէջ որ օրէնքով մը պաշտօնապէս ճանչցած է ցեղասպանութեան պատմական իրողութիւնը։

«Ֆրանսա ո՛չ կրնայ արտօնել, ոչ ալ հանդուրժել քննապաշտութեան այս կարգի արտայայտութիւն որ պէտք է պատժուի, ... որպէսզի վերջնապէս յաղթահարուի» կը գրէ Տէսինի քաղաքապետը։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Լիոն-Վիլըէօրպանի Արաքս մասնաճիւղը, ի գիտութիւն Լիոնի եւ շրջակայից հայ գաղութին կը տեղեկացնէ թէ, Կիրակի Ապրիլ 9, Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ, մասնաճիւղէն յաւերժ բաժնուող խաչուհիներու հոգիներուն ի հանգիստ։

Արարողութեան աւարտին կը նուիրուի հոգեճաշ անոնց քաղցր յիշատակին։

Անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ այս հոգեճաշին հաճին հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝
04 78 45 17 55 *կամ* 04 74 04 74 97

□

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —
un Voyage en Arménie
Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné
Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...
3 jours au KHARABAGH Hôtel
Départ de Marseille via Paris Érevan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris
Prix : 1750 Euros par personne
en chambre double.

Réservations :

Christine	: 06 12 93 09 80
Jeanine	: 04 94 32 11 87
Marie-Rose	: 06 22 11 81 75

***

Section **«SEVAN»** de Vienne

Le Samedi 8 avril à partir de 10 heures
à la Maison de la Culture Arménienne de Vienne
(9 rue du Cirque)

VENTE DE SPECIALITES CULINAIRES ARMENIENNES
préparées par la Croix Bleue des Arméniens de Vienne
A déguster sur place ou à emporter.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE

ՓԱՐԻԶ

ԶԱՏԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,
ժամը 13էն սկսեալ
Restaurant **«Les Diamantaires»**
60 rue La Fayette — 75009 Paris
Métro Cadet

Համեղի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ։

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 *կամ* 01 45 93 00 25 *թիւերուն։*

***

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN
«Le Génocide en moi»
Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25
— Entrée libre —

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 6
JEUDI
6 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS

TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70

COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ

Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)

270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ

C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.428 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.428

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՖՐԱՆՍԱ

ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՑՈՅՑԵՐ, ԹԱԼԱՆՆԵՐ, ՎԻՐԱՒՈՐՆԵՐ

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՄԱՍՆԱԿԻ ԲՆՈՅԹ ՈՒՆԷՐ

Երեքշաբթի, Ապրիլ 4ին, ամբողջ Ֆրանսայի մէջ ցոյցերը զանգուածային նոյն բնոյթը ունէին, բաղդատմամբ Մարտ 28ին, բայց գործադուլի շարժումները շատ մասնակի բնոյթ ունէին։ Փոխադրական միջոցները գրեթէ կանոնաւոր էին, թերթերու մէկ մասը լոյս կը տեսնէր, հակառակ նախորդ օրուան յայտարարութիւններուն։

Ցոյցերը սկսած էին առաւօտուն իսկ, գաւառը։ Փարիզի ցոյցը կը սկսէր ժամը 14.30ին եւ թափօրը կը մեկնէր Ռեփիւպլիքի հրապարակէն եւ վերջ կը գտնէր Իթալիի հրապարակը։ Ըստ ոստիկանութեան, ցուցարարներու թիւը 1.028.000 էր, ըստ սենտիքաներուն՝ 3.100.000։ Ուսանողներուն, լիսէի աշակերտներուն եւ սենտիքաներուն համար որեւէ երկխօսութիւն կամ բանակցութիւն չի կրնար տեղի ունենալ ցորչափ չէ ջնջուած Սէ. Փէ. Ը.ի օրէնքը։ Այս հարցը միշտ կը ծեծուի, քանի բոլորն ալ -եւ իրաւագէտ ըլլալու պէտք չկայ- կը շեշտեն այն աննախընթաց երեւոյթը, զոր հրապարակեց Շիրաք հռչակելով օրէնք մը որ պիտի չգործադրուի։ Սահմանադրութեան ծանօթ մասնագէտ մը յայտնեց թէ նման ընթացք մը "բարձր դաւաճանութիւն" է եւ նախագահն ալ դատապարտելի։ Երկրորդ դատապարտելի անձն է Ընկերային հարցերու նախարար Ժան-Լուի Պորլօն, որ օրէնքին հռչակման յաջորդ օրն իսկ նամակներ ղրկած է գործատէրերուն, հրահանգելով որ հրաժարին Սէ. Փէ. Ը.ի պայմանագրեր ստորագրելէ, հարկ է ըսպասել Բ. օրէնքին։ Այս պարագան ալ նախընթաց չունի եւ Պորլօ կրնայ -սկըզբունքով- հինգ տարուան բանտարկութեան դատապարտուիլ, քանի կ'ըսէ թէ օրէնք մը կայ որ պէտք չէ գործադրել...։ Այս մթնոլորտին մէջ էր, որ Ապրիլ 4ին, մինչ Փարիզէն գաւառ փողոցները լեցուն էին, Ազգային Ժողովին մէջ կը ծեծուէր հարցը։ Ընդդիմութիւնը (ընկերվարական, համայնավար) դիտել կու տար Վիլըփէնի որ այլեւս գործ չունի եւ կ'առարկէին որ նոր՝ Բ. օրէնքը պէտք չէ պատրաստուի միայն Իւ. ԷՄ. Փէ.ի խորհրդարանականներուն կողմէ, այլ պէտք է բոլոր հոսանքները մասնակցէին։ Բայց ընթացք չէր տրուէր։ Տ. Կալուզօ ըը Վիլըփէն կը պնդէր որ նախագահը կը նախագահէ, կառավարութիւնը կը կառավարէ, Ազգ. Ժողովը օրէնքները կը պատրաստէ։

Փարիզ թէ գաւառը լոզունգները խորքին մէջ չէին փոխուեր։ Կը պահանջըւէր Շիրաքի, Վիլըփէնի, Սարքոզիի հրաժարականները։ Լիպէրասիոն, որուն համար (Ապրիլ 5) ցուցարարներու ամբողջ թիւը երկու միլիոն է, կը գրէ թէ Փարիզի մէջ 300 հազար պէտք է հաշուել, 180 հազար Մարսէյլ, 65.000՝ Թուլուզ, 70.000՝ Նանթ, 60.000՝ Պորտօ։ Այս քաղաքներն են որոնք ցուցարարներու ամենէնբարձր թիւերը արձանագրած են։

(Շար.ը Դ. էջ)

ԹՈՒՐՔԻԱ

ՔՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՈՒ ՀԱԼԱԾԱՆՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Թուրքիոյ քրտական շրջանները հանդարտած չեն, Քիւրտերու դէմ հալածանքը կը շարունակուի, մինչ քրտական բազմաթիւ քաղաքներու մէջ ցոյցեր, մամուլի ասուլիսներ, յայտարարութիւններ իրար կը յաջորդեն։ Քիւրտերը կը բողոքեն նոյնիսկ անչափահասներու կիրարկուած չարչարանքին, երկխօսութեան ամէն առաջարկ մերժելու Թրքական պաշտօնական կեցուածքին դէմ։ Հարիւրաւոր Քիւրտեր հսկողութեան տակ առնուած են, մինչ տեղ-տեղ բախումներ տեղի կ'ունենան Թուրք զինեալ ուժերու հետ։ Քրտական աղբիւրներ կը տեղեկացնէին Ապրիլ 4ին թէ Շըրնաքի մօտ Ճուտի լեռան վրայ քիւրտ զինեալներ դիմադրելով Թուրք զինեալ ուժերու գործողութեան 17 զինուոր սպաննած են, իրենք ալ չորս կեանք զոհ տուած։

Կացութիւնը չարժման մղած է Եւրոպայի Խորհրդարանը որուն երեսփոխանները պատրաստած են նամակ մը որուն նպատակն է Անգարայի ու Քիւրտերուն միջեւ երկխօսութիւն մը հաստատել։ Հոն ըսուած է. "Անհանդուրժելի է ժողովուրդի մը ինքնութիւնը ճանչնալու Անգարայի կառավարութեան մերժումը"։ Եւրոպայի ընդլայնումի պատասխանատու Օ. Ռէն կոչ ուղղած է Թուրք իշխանութիւններուն որ հրաժարին ուժի չափազանցըւած գործածութենէն։

Թուրքիոյ զարգացումները որոշ մտահոգութիւն պատճառած են Թեհրանի եւս. Անգարայի պարբեկ դեսպանը պատասխանելով Թուրք մամուլի հարցումներուն, ըսած է թէ Իրանի ու Թուրքիոյ իրաքեան եւ քրտական քաղաքականութիւններուն մէջ ոչ մէկ ձեղք պէտք է արտօնուի. հակառակ պարագային ԱՄՆ առիթէն կ'օգտուին հիմնելու համար քրտական պետութիւն մը որուն համար թէ՛ Թուրքիայէն, թէ՛ Իրանէն հողային պահանջ կրնայ խնդրոյ առարկայ ըլլալ։ Դեսպանը համոզում յայտնած է որ ԱՄՆ-ու միջինասիական ծրագիրը անկախ Քիւրտիստան մըն ալ կը նախատեսէ, քանի որ Ուաշինկթըն այդ շրջանին մէջ կը նախընտրէ փիւրաւ հակակշռելի փոքր պետութիւններ։

ՊՈՒՏԱՓԷՇՏ

ԱՏՐՊԷՋԱՆՑԻ ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԴԱՏԸ

Ապրիլ 3ին Պուտափէշտի մէջ շարունակուած է հայ սպայ Գուրգէն Մարգարեանի ոճրագործին դատավարութիւնը։ Դատախազը բաւական խիստ ելոյթով մը ցմահ բանտարկութիւն պահանջած է, անզօր համարելով Ռ. Սաֆարովի պաշտպան փաստաբաններուն բոլոր պատճառաբանութիւնները։ Պնդած է որ գիտակցօրէն գործած է ոճիրը։ Ատեանը մերժած է պաշտպան կողմին բժշկական նոր քննութիւն կատարելու առաջարկն ալ։ Վճիռը կը հրապարակուի Ապրիլ 13ին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ ՄԱԿ-Ի ՄԷՋ

Հայկական եւ ռուանտական նախաձեռնութեամբ, Հ.Բ.Ը.Միութեան մասնակցութեամբ ՄԱԿ-ի մէջ ցեղասպանութեան նիւթով ժողով մը կազմակերպուած է Մարտ 30ին, "Ցեղասպանութիւնը՝ այն ատեն ու ներկան" խորագրով։ Գլխաւոր բանախօսը եղած է Զօրեան հիմնարկի ցեղասպանութեան հետազօտութիւններու տնօրէն փրոֆ. Վահագն Տատրեան։ Ըստ Թրքական լրատուութեան (Ապրիլ 2), ան ըսած է թէ հայկական կոտորածները սկիզբ առած են Ապտիւլհամիտի օրով, 200 հազար Հայերու բնաջնջումով. ապա խօսած է Անատոլուի 1915-18ի կանոնաւոր կոտորածներուն մասին։ Ելոյթ ունեցած են նաեւ յատկապէս Ցեղասպանութեան կանխարգիլման նիւթով ՄԱԿ-ի ընդհ. քարտուղարին խորհրդականը Ժ.-Է. Մենտէզ եւ Ողջակէզի ու ցեղասպանութեան ուսումնասիրութիւններու միջազգային ցանցին նախագահներէն տիկին Ե. Տանիէլի։

Տատրեանի ըսածներուն հակազդելու ճիգով մը Թուրք "պատմաբան" Թ. Աթաէօվ հարց տուած է. "Գերմանական աղբիւրներու գաղտնի տեղեկագրերուն վրայ հիմնուելով կ'ըսէք թէ օսմանցի ղեկավարները ցեղասպանութեան հրահանգ տուած են։ Կ'ըսէք թէ այդ փաստաթուղթերը տեսնողներ կան։ Ո՞վքեր են տեսնողները, ո՞ւր են այդ փաստաթուղթերը"։ Այս առարկութիւնը պատճառ եղած է որ ներկաներ յուեցնեն Թուրք փրոֆէսէօրը. այսուհանդերձ ան կրցած է ըսել թէ օսմանցիները Հայերուն կրօնական, կրթական, առեւտրական իրաւունքներ տուած էին, պետական կարեւոր պաշտօններ յանձնած անոնց, եւլն.։

***

Լոս Անճըլըսի մէջ ալ արգելք դրուած է երկու Թուրք նախկին դեսպանի նիւթին առընչուած թրքամէտ ելոյթներուն։ Կ. Աքթան եւ Էօ. Լիւթէմ Ուաշինկթընէն ու Նիւ Եորքէն եւք Լոս Անճըլըս գացած են, Հարաւային Գալիֆորնիայի համալսարանին մէջ Մարտ 28ին շարք մը բանախօսութիւններ տալու հայեւթուրք յարաբերութիւններուն եւ ցեղասպանութեան պնդումներուն նիւթով։ Թուրք մամուլը (Ապրիլ 2) տեղւոյն հայկական լոպիին կը վերագրէր անոնց բանախօսութիւններուն ջնջումը որ հաղորդուած է իրենց նոյն համալսարանին կողմէ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԵՏ ԿԱՊԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երեւանի Սոսիոմեթր կեդրոնին կատարած հարցախոյզը պարզած է որ հայ երիտասարդներու 90%ը դէմ է առանց հողային պահանջի ու Ցեղասպանութեան ճանաչումին Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացման։ Երիտասարդները նոյն դիրքը արտայայտած են նոյնիսկ տնտեսական հեռանկարով Թուրքիոյ հետ յարաբերութիւն հաստատելու վարկածին նկատմամբ։

Պատասխանողներու 91%ը դէմ արտայայտուած է Ատրպէջանի հետ բնականոն յարաբերութիւններու հաստատումին, առանց Ղարաբաղի հակամարտութեան վերջնական կարգաւորումին։ Միայն 2,9%ը ըսած է թէ կը համաձայնի առանց կարգաւորումին սպասելու յարաբերութիւն հաստատելու Բաքուի հետ։

ԳԱՆԱՏԱ

ԳՈԼՈՄՊԻԱ ՆԱՀԱՆԳԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՑԱԾ

Գանատայի Բրիտանական Գոլոմպիա նահանգին օրէնսդիր ժողովը Ապրիլ 3ին միաձայնութեամբ քուէարկած է Հայկական Ցեղասպանութիւնը ճանչնալու բանաձեւ մը որով Ապրիլ 24ն ալ հռչակուած է Ի. դարու առաջին ցեղասպանութեան զոհ մէկուկէս միլիոն Հայերուն յիշատակութեան օր։

Գանատայի Հայ Դատի յանձնախումբին վարչական տնօրէն Արիս Պապեան յանուն հայ համայնքին յայտարարած է թէ պատմական օր մըն է եւ միաձայնութեամբ քուէարկութիւնը ապացոյց է որ Թուրք կառավարութեան պատմութիւնը վերաշարադրելու ժխտողական քաղաքականութիւնը դատապարտուած է ձախողելու։

Քուէարկուած թիւ 59 բանաձեւով ըսուած էր. "Ժողովը Հայկական Ցեղասպանութիւնը կ'ընդունի որպէս մարդկութեան դէմ ոճիր մը։ Ժողովը ջերմապէս կը յանձնարարէ կառավարութեան որ Ապրիլ 24ը հռչակէ Ի. դարու առաջին ցեղասպանութեան զոհ մէկուկէս միլիոն Հայերու յիշատակութեան օր"։

Բրիտանական Գոլոմպիայի օրէնսդիր ժողովը կը գործէ Վիքթորիայի մէջ։ Երկու կուսակցութիւն ներկայացուած են հոն. Ազատական կուսակցութիւնը որ տէրն է մեծամասնութեան եւ ժողովրդավար նոր կուսակցութիւնը որ պաշտօնական ընդդիմութիւնը կը ներկայացնէ։

ՉԵԽԻԱ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՋ

Ապրիլ 4ին Չեխիոյ Ծերակոյտին լեփ լեցուն դահլիճին մէջ տեղի ունեցած է "Հայկական Ցեղասպանութիւնը" գիտաժողովը, 12 զեկուցաբերներու մասնակցութեամբ։ Բացումը կատարած է ծերակուտական Ե. Շտետինա որուն եւ "Արմենիա" ակումբին ջանքերով իրականացած է ժողովը, վայելելով երկրին նախկին նախագահ Վ. Հաւէլի հովանաւորութիւնը։

Հայաստանի կառավարութեան տեսակէտը ներկայացուցած է Արտաքին գործերու փոխ նախարար Արման Կիրակոսեան, ըսելով թէ Հայաստան դէմ չէ Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան եթէ յարգէ իրեն ներկայացուած պարտաւորութիւնները, բանայ Հայաստանի հետ սահմանը ու ճանչնայ Ցեղասպանութիւնը։ Հետաքրքրական ելոյթ մը ունեցած է Սլովաքիոյ Արդարութեան նախկին նախարար Ե. Ջառնոգուրսկի որ բացատրած է իր երկրին ճանաչումին հիմնական պատճառը, ապա կոչ ըրած չեխ խորհրդարանականներուն, որ հետեւին իրենց դրացիներուն օրինակին։

Ելոյթներով հանդէս եկած են ԱՄՆ-էն փրոֆ. Վահագն Տատրեան, Գերմանիայէն Թեսա Հոֆման եւ Մանֆրէտ Աչկէ-Լեփսիուս, Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբի նախագահ Հիլտա Չոպոյեան, Թուրք լրագրող Ե. Խօճեան, եւլն.։

Փրակայի "Օրեր" ամսագրի գլխաւոր խմբագիր Յակոբ Ասատրեան ամփոփ այս տեղեկատուութիւնը կ'աւարտէ ("Ազգ", Ապրիլ 5) նշելով որ Չեխիոյ Թուրք դեսպանը գիտաժողովին նախօրեակին պահանջելով հանդերձ որ ինք ալ հրաւիրուի, ներկայ չէ եղած։

Վ. ՍԻՐԱԴԵՂԵԱՆ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵՒ ՎԱՂՈՒԱՆ ՈՒ «ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆ»ՆԵՐՈՒՆ ԵՒ «ՀԱՅԴԱՏԱԿԱՆ»ՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

"Հայկական ժամանակ"ի Մարտ 25ի թիւով հրատարակած հարցազրոյցը Վանօ Սիրադեղեանի հետ, բաւական հետաքրքրաշարժ երեւոյթ էր. որքան ալ ըսուի, գրուի թէ յաջորդական իշխանութիւններու անձնակեդրոն, ապիկար, ժողովուրդին հանդէպ արհամարհանքով լեցուն քաղաքական կեցուածքը ամբողջական անտարբերութեան մատնած է բազմութիւնները, նման դէմքի հետ զրոյց մը անտարբերութիւնը գոնէ ատրիճան մը մեկդի ձգել տալու զօրութիւնը ունի: Մանաւանդ որ փախստականի, թաքնուած ապրողի անոր յատկանիշը ինքնին հետաքրքրական կողմ մը ունի:

Թերթին խմբագրութիւնը նախատեսելով նման հրապարակումի մը առթելիք թերահաւատութիւնը, զրոյցին ընկերացուցած է էջ մը որ կը տեղեկացնէ թէ զրոյցը Մարտ ամսուան Բ. կէսին կատարուած է: Յետոյ կու տայ Վ. Սիրադեղեանի քաղաքական անցեալին մասին բաւական մանրամասն ժամանակագրութիւն մը. Ղարաբաղեան յորձանքով քաղաքական մարզ անցած արձակագիր մըն է ան. 1992ին նշանակուած է ներքին գործերու նախարար ու կարճ ժամանակի մէջ վերջ դրած փողոցային զինեալ հակամարտութիւններուն որոնք բաւական երիտասարդ կեանք արժեցին երկրին: 1996–98 գործեց որպէս Երեւանի քաղաքապետ: Նոյն տարուան իշխանութեան փոփոխութեան հետ քրէական հետապնդումի առարկայ եղաւ, շարք մը սպանութիւններ կազմակերպելու ամբաստանութեամբ: Մինչ դատը կ'ընթանար, գլխաւոր դատախազ Ա. Յովսէփեան յաջողեցաւ զինք ձերբակալելու լիազօրութիւն առնել խորհրդարանէն. մինչ այդ Վանօ Սիրադեղեան մեկնած էր երկրէն: Քանի մը ամիս ետք վերադարձաւ որպէս երեսփոխանութեան թեկնածու: Մայիսին վերընտրուեցաւ: 2000 Ապրիլին գլխաւոր դատախազ Բորիս Նազարեան որոշեց իր կարգին ձերբակալել երեսփոխանը, խորհրդարանը զինք լիազօրեց, բայց այդ շրջանէն ի վեր յայտնի չէ Վ. Սիրադեղեանի գտնուած վայրը: Անցեալ խորհրդարանը ջնջած է անոր երեսփոխանի կարգավիճակը, այն պատճառով որ քուէարկութիւններու կէսին աւելիէն բացակայած է: Իսկ յաջորդ ընտրական յանձնաժողովները չեն արտօնած որ թեկնածու ներկայանայ, քանի որ վերջին հինգ տարուան ընթացքին մշտական բնակութիւն չէ ունեցած Հայաստանի մէջ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ

Անցնելէ առաջ քաղաքական հարցերու, կացութեան վերլուծումին, Վ. Սիրադեղեան իւրայատուկ երգիծող շեշտով կը հերքէ 2000էն ի վեր Հայաստան գտնուելուն շշուկները. կ'աւելցնէ թէ այդ ընթացքին ոչ մէկ բանով զբաղած է, ոչինչ գրած է :

Յետոյ անցնելով իրեն դէմ բացուած դատական հետապնդումին, հարց կու տայ իր կարգին. «Ո՞ւմ ընտրէին: Կառավարութեան անդամներից ո՞վ է վատամարդը. պաշտօնի բերումով ներքին գործերի նախարարը: Եւրոպական երկրներում ո՞վ է ամենախոցելին, եթէ ոչ քաղաքական գործիչ ներքին գործերի նախարարը»:

Կ'ըսէ թէ Հայաստան կը վերադառնայ, արդէն վերադարձած կ'ըլլար եթէ իշխանութիւնը թոյլ տար որ դատը ընթանար քրէադատավարական օրէնսգրքին չափանիշերով: Հիմա պէտք է սպասել իրադրութեան փոփոխութեան:

Զրոյցին շարունակութիւնը մնայուն այն տպաւորութիւնը կը գործէ որ այդ փոփոխութեան նիւթը այժմէականացնելու մտադրութիւն մը կայ թէ' զրոյցը վարողին (Ն. Փաշինեան), թէ Վ. Սիրադեղեանի մօտ. կամ գոնէ միտքեր նման հեռանկարի պատրաստելու:

Վ. Սիրադեղեան քաղաքական դասը "չփոթի մատնուած", իսկ ընդդիմադիր դերքի վրայինները "խուճապահար" կը տեսնէ: Երկրին մէջ «քաղաքական կեանքի նշոյլ չկայ գոնէ վերջին մէկուկէս տարուայ ընթացքում»:

Աւելի փայլուն չէ Ղարաբաղի հարցին վիճակը: Կը վախնայ որ Իրանի հարցին անմիջական հետեւանքներէն կ'ըլլայ Ղարաբաղի ձախ ափէն հայկական ուժերու ետ քաշուիլը: «Պատերազմի վտանգը լուրջ է, կ'ըսէ, որովհետեւ իշխանութեան քաղաքական – դիւանագիտական աղբիւրները սպառուել են: Եւս մէկ-երկու հանդիպումը ոչինչ կը նշանակի: Երկու ելք է մնում. կա՛մ հրաժարական, կա՛մ պատերազմ»: Ինք հրաժարականը աւելի հաւանական կը կարծէ:

1998ի իշխանափոխութենէն ետք Հայաստանի կորած ճամբան դէպի անել ընթացք կը նկատէ Վ. Սիրադեղեան: Ատոր մէջ իշխանութեան ապօրինութենէն, միլիոններ շինելու զբաղումէն աւելի պատասխանատու կը դատէ «հայդատականութիւնը պետական քաղաքանութեան մակարդակի բարձրացնել կամ իջեցնելը» որով «մի ողջ ժողովրդի զցել են այդ ցնորամտութեան թակարդը»: Այդ ազդակը "հայդատականութիւնը" կ'որակէ «տարագիր մարդու կիրակնօրեայ մտածմունք»: Իսկ երբ ատիկա կը փոխադրուի գործնական քաղաքականութեան մարզ, կը վերածուի "քաղաքական բռշայութեան»:

Այս քիչ մը աժան ու քաղաքական վերլուծումի մակարդակին անյարիր բացատրութիւնը մաս կը կազմէ ներկայի իշխանութիւնը քննադատելու, անոր մօտ ոչ մէկ դրական նշմարելու կեցուածքի մը: Ան կը տարածուի նաեւ այն հաւանականութեան վրայ որ նոյն դաստիարակութեամբ ու աշխարհընկալումով, նոյն մըտային մակարդակով ընդդիմութիւնը գայ գործի գլուխ:

Իսկ ՀՀՇ՞-ն. ինչպէ՞ս կը տեսնէ Վ. Սիրադեղեան այդ կուսակցութեան յետագայ գործունէութիւնը: Իշխանութիւն – ընդդիմութիւն ճակատներուն արժեզրկումէն ետք ուղղուած այս հարցումը անոնց հակադրութեան դիրքին վրայ կը դնէ Վ. Սիրադեղեանի պատկանած ՀՀՇ–ն: Պատասխան ալ նոյն ոգիով է: Անկախ Հայաստանի առաջին իշխանութեան տէր այդ կուսակցութիւնը որուն օրով դրուեցան այսօրուան լաւին ու գէշին արմատները, ներկայիս «որպէս կազմակերպութիւն փաստօրէն չկայ», բայց անոր «երդուեալ գաղափարակիրները մտաւոր կարողութիւններով, գիտելիքներով եւ քաղաքական հասունութեամբ առաջին շարքում են»: Այս քիչ մը շատ դրական մօտեցումը գագաթնակէտին կը հասնի երբ Վ. Սիրադեղեան իշխանութեան եւ ընդդիմութեան գործունէութեամբ տրուած ապացոյց կը նկատէ այն որ «Լ. Տէր Պետրոսեանին այլընտրանք չկայ»: Յետոյ նոյն անձնաւորութեան վերադարձին մասին թեզեր կը զարգացնէ:

"Իշխանութեան ճգնաժամ"ու կացութեան մէջ ներկայացնելով ներկայի ղեկավարութիւնը, ընդդիմութեան ալ կրաւորական կեցուածքին առջեւ Վ. Սիրադեղեան անկարելի չի նկատեր որ այսօրուան վարչակազմը նախաձեռնէ իր հրաժարականին ու վարէ այդ ընթացքը: Առաջին տարբերակով մը Սահմանադրական ատեանը Լ. Տէր Պետրոսեանի 1998ի հրաժարականին խորհրդարանէն ընդունուիլը հակասահմանադրական կը հռչակէ, ապացոյցը տալով որ ատոր ընթացակարգը կասկածելի էր: Լ. Տէր Պետրոսեան կը վերահաստատուի իր պաշտօնին վրայ եւ անմիջապէս խորհրդարանական եւ նախագահական միաժամանակ ընտրութիւն կ'որոշէ: Ինք ալ թեկնածու կը ներկայանայ: Երկրորդ տարբերակով ալ իշխանութեան ոչ մասնակից «քաղաքական հեղինակութիւն, փորձ եւ կշիռ ունեցող մի գործիչ, ասենք Բաբգէն Արարքցեանը» կը նշանակուի վարչապետ. Ազգային Ժողովը կը մերժէ անոր նշանակումը եւ նախագահը կը լուծէ Ազգային ժողովը, արտակարգ ընտրութիւն նշանակելով որպէս առաջին քայլ:

Այս բացատրութիւններուն մէջ Վ. Սիրադեղեան յաճախ կը գործածէ "հայաստանակենտրոն ուժեր" որակումը: Զրուցավարին հարցումին պատասխանելով կը բացայայտէ ատով նշանակածը. «Բոլոր այն ուժերը ովքեր հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, մշակութային, ընկերային, գիտական գործունէութեան կենտրոնը համարում են Հայաստանը: Ոչ թէ Հայաստանը ու նաեւ Պէյրութը, Հայաստանը եւ Լոսը, չգիտեմ էլ ինչ գաղութ, այլ հէնց Հայաստանը: Եզակիօրէն Հայաստանը»: Կ'աւելցնէ թէ քաղաքական եւ հանրային կեանքի գործօն մասնակիցներու գերակշիռ մասը կը համապատասխանէ այս գաղափարին: «Բացի Դաշնակցութիւնից' իր հայդատական արբանեակներով հանդերձ»:

Վ. Սիրադեղեան Ղարաբաղեան հարցի բեմադրութեամբ գրական ոլորտէն քաղաքականին անցած մը ըլլալէ ետք, 1988ի ազգային քիչ մը կուրցնող խանդավառութեան ազդեցութիւնը չտեսնող թօթափուած դէմք է. հրապարակներու բոցաշունչ ճառերէն անմիջապէս ետք դէմ յանդիման մնալ որոշ չափով բիրտ իրականութեան մը, անկախութեան առաջին շրջանի քաղաքական դէմքերու ամէնէն իրատեսներէն մէկը ըրած է զինք: Այս առումով մեծապէս հետաքրքրական պիտի ըլլար վերլուծումը եթէ ՀՅԴ–ի արմատական իր (իրենց) հակառակութիւնը այդ ատրիճան նախնական բնոյթով չմիջամտէր անոր. մանաւանդ քիչ մը պաղարիւնով յաջողէր արհամարհանքի նոյն կաթսային մէջ չըձուլել այդ կուսակցութիւնն ու "հայդատականութիւնը": Ամէն մարդ կրնայ դէմ ըլլալ քաղաքական կազմակերպութեան մը. ամէն մէկուն լրջութենէն կախում ունի սիրածն ու չսիրածը որակելու ձեւը, գործածած բառամթերքը: Բայց Հայ Դատի հետապնդումին ըծուածներու հասցէին այդքան նուաստացուցիչ կեցուածք կարելի՞ է հասկնալ, արդարացնել:

Հայ դատի աշխատանքը նախ ՀՅԴ–ի մենաշնորհը չէ: Ամէն Ապրիլ 24ի հայաբնակ ամէն ոստանի մէջ արեւուն կամ անձրեւին տակ դէպի Թրքական ներկայացուցչութիւն դիմող թափօրներուն ութսունը անց, երբեմն նոյնիսկ իննսունին մօտեցած մասնակիցներուն ամէն մէկը բաժին ունեցած է այդ աշխատանքին մէջ: Դիւրին է գոհացուցիչ ըլլալէ հեռու, թերի, սխալ նկատել 90 տարիէ ի վեր տարուած գործը: Բայց ներելի չէ մոռ՛ալ, անտեսելը թէ ան տասնամեակներով նեցուկ ունեցաւ վերապրողներու հողազուրկ, պետականութենէ զուրկ, օտարութեան հովերուն դէմ ծառացող շարանները. անո՛նց հաւատքը, կամքը, նիւթական պայմանները. այս բոլորը՝ շատ յաճախ պահպանուած, գործի լծուած ոչ բարեացակամ միջավայրերու մէջ ուր գլխու ցաւ կը նկատուէր հակաթուրք ցոյցը, արտայայտութիւնը: Եւ ամէնէն սարսափելին այն էր վերապրող ժողովուրդին համար որ ընդհանուր քանդումէն մնացած հայրենիքն ալ չէր կրնար իրեն ձայնակցիլ. կամ ինք չէր կրնար անկէ զօրակցութեան ամէնէն փոքր յոյսը ունենալ: Այս երէկուան յաջորդած այսօրը ընդունելի՞ է որ նոյն Դատին վերաբերի "անկարելի"ն "անբաղձալի"ի վերածելով:

Վ. Սիրադեղեանի հետ հարցազրոյցին համար ընտրուած ժամանակը, հարցումներով բնորոշուած միջուկը, պատասխանները նախանշանն են ՀՀՇ-ի վերադարձի մը տրամադրութեան: 1998էն մօտ տասնամեակ մը անցած է ու հաւանօրէն մտածողներ կան ներսը կամ դուրսը թէ այդ վերադարձին մասին կարելի է հրապարակաւ արտայայտուիլ: Հայաստանի ժողովուրդը պատրա՞ստ է նման հեռանկարի. կամ համոզիչ տուեալ կա՞յ փորձուածը կրկին փորձելու: Ինչ որ ալ ըլլան նման հարցականներու պատասխանները, ազգային դատին այդքան աժան, այդքան ուղղակի արհամարհանքը դրական ոչինչ կրնայ աւելցնել անոնց վրայ: Նոյնիսկ եթէ իշխանափոխութենէն ասդին անցած ժամանակը Քոչարեան – ՀՅԴ գործակցութեան նկատմամբ սնուցուած երազները խորտակած ըլլայ, ոչ մէկ պատճառ կայ Հայ Դատը այդ կառքին մէկ անիւը նկատելու: Մանաւանդ երբ այդ կեցուածքը նախընթաց ունի ՀՀՇ-ի համար եւ Թուրքերէն իսկ գնահատուած հըլլայուն փաստը:

Այս փակագիծէն անդին հետաքրքրական երեւոյթ է զրոյցը որ գոնէ պահ մը ուշադրութիւնները սեւեռելու կը մղէ "հայաստանակենտրոն" ճակատին գլխաւոր դէմքին՝ Լեւոն Տէր Պետրոսեանի մտադրութեան վրայ:

Ա. ԹՈԹՈՑԵԱՆ

ՅՈՅՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԻԶՄԻՐԻ ԳՐԱՒՈՒՄԷՆ ԵՏՔ

ՅՈՅՆ - ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թրքական ազգայնական շարժման եւ յոյն – թրքական պատերազմի սկզբնաւորութեան մասին խօսած էինք նախորդ յօդուածով. այժմ կը ներկայացնենք պատերազմին հոլովոյթը, երբ յունական բանակը սկզբնական շրջանին անարգել յառաջացաւ Անատոլուի խորերը եւ իր հակակշռին տակ առաւ Թրքաբնակ, յունաբնակ եւ հայաբնակ բնակավայրեր, բայց յետոյ, յաջորդական պարտութիւններէ ետք բռնեց նահանջի ճամբան:

ՅՈՒՆԱԿԱՆ ՅԱՌԱՋԽԱՂԱՑՔԸ ԴԷՊԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՆԱՏՈԼՈՒ ԵՒ ԻՆԷՕՆԻՒԻ ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆԵՐԸ

Յունական բանակը, Իզմիրը իբրեւ կեդրոն ունենալով մինչեւ 1920 Հոկտեմբեր բաւական յառաջանալով՝ արդէն գրաւած էր ընդարձակ շրջաններ: Նոյն օրերուն Բրիտանիոյ վարչապետ Տէյվիտ Լոյտ Ճորճ Յոյներուն թելադրեց շարունակել յառաջխաղացքը դէպի արեւելեան Անատոլու՝ առիթ չտալու համար Թուրքերուն, որպէսզի վերակազմակերպուին եւ հակայարձակողականի անցնին: Բրիտանիոյ նեցուկը ապահոված նկատելով՝ վարչապետ Վենիզելոս հրահանգեց շարունակել արշաւանքը: Սակայն Նոյեմբերին Վենիզելոս հրաժարեցաւ եւ զայն փոխարինեց Տիմիթրիոս Ռալլիս, իսկ 1921 Փետրուարին վարչապետ եղաւ Նիքոլաոս Քալոկերոփուլոս:

Յունական բանակը, գրեթէ առանց դիմադրութեան հանդիպելու, 1921ի տարեսկիզբին լայնածաւալ յարձակողականի անցաւ եւ Պուրսայէն ու Ուշաքէն յառաջանալով՝ Յունուար 6ին քալեց Աֆիոն Գարահիսարի վրայ, ուրկէ երեք օր շարունակ յառաջանալէ ետք, Յունուար 9-ին հասաւ Էսքիշէհիրի մօտակայ Ինէօնիւ գիւղը: Յունական բանակը այսպէսով ռազմագիտական շատ կարեւոր դիրքեր՝ Պոլիս – Էսքիշէհիր – Պաղտատ մայրուղին կ'առնէր իր հակակշռին տակ:

Ստեղծուած կացութեան առջեւ Մուս-

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՊԷՅՐՈՒԹԻ Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ սրահին մէջ, Մարտ 10ին, կազմակերպութեամբ Հաճնոյ Հայրենակցական Միութեան, տեղի ունեցած է մեծարանքի երեկոյթ մը նուիրուած հաճնցի ուսուցիչ – ուսուցչուհիներուն: Ներկայ եղած են պաշտօնական բազմաթիւ անձնաւորութիւններ: Հայրենակցական վարչութեան անունով բացման խօսքը արտասանած է Շիրազ Ճէրէճեան ապա Անի Եփրեմեան բեմ հրաւիրած է օրուան գլխաւոր չորս մեծարեալները, որոնք ստացած են յուշանուէրներ, ինչպէս նաեւ 23 վաստակաշատ եւ երիտասարդ ուսուցիչ – ուսուցչուհիներ, որոնք ստացած են ծաղկեփունջեր: Մեծարեալ ուսուցիչներէն ոմանք հանդէս եկած են սրտի խօսքով: Հուսկ, ելոյթ ունեցած է Հայրենակցական Միութեան վարչութեան ատենապետը՝ Նազարէթ Ճէրէճեան:

***

ՄՈՆՐԷԱԼԻ Պոլսահայ Մշակութային Միութեան սրահին մէջ, Փետր. 22ին, Պոլսահայ Մշակութային Միութեան "Մէկ" յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցած է Պարոյր Սեւակի մահուան 35ամեակի ոգեկոչումը: Բացման խօսքը արտասանած է տիկին Իրմա Աշճեան, որ բարի գալուստի խօսքերէն ետք, անդրադարձած է բանաստեղծին պատանեկան շրջանէն քաղուած հետաքրքրական մանրամասնութիւններու: Ապա, բեմ կը հրաւիրէր օրուան բանախօսը՝ տիկին Քրիստինէ Տ. Գույումճեան որ ներկայացուցած է Պարոյր Սեւակի կեանքն ու վաստակը: Յիշած է անոր կեանքին կարեւոր դրուագները, իր գործերուն անունները ինչպէս նաեւ անոնց մասին արտայայտուած կարծիքներ Անդրանիկ Ծառուկեանէ, Գուրգէն Մահարիէ եւ այլ բազմաթիւ մտաւորականներէ: Գործադրուած է գեղարուեստական բաժին մը, որու ընթացքին արտասանուած են հեղինակին գործերէն:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Հայկազեան Համալսարանի Մուկար շէնքին մէջ, Մարտ 4ին համալսարանը ինքնուրոյն ձեւով նշած է Ուսուցչաց Օրը: Բացումը կատարած է համալսարանի հանրային կապերու գրասենեակի պատասխանատու՝ տիկին Միրա Եարամեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք գնահատած է ուսուցիչը ընկերութեան մէջ, իր առաջնակարգ դիրքով: Այնուհետեւ "Ուսուցիչը որպէս դաստիարակ" թեմա ունեցող կլոր սեղան մը տեղի ունեցած է, որու համադրումը վստահուած էր օր. Արփի Համբարեանի. Մասնակցած են Պեպօ Սիմոնեան, Շաղիկ Մկրտչեան, Արմէն Իւրնէշլեան: Գլխաւոր թեման իր երեք ստորաբաժանումներով ներկայացուցած են զեկուցաբերները.– «Ուսուցիչը դասարանի դաստիարակչական պատասխանատու» (Պեպօ Սիմոնեան), «Գիտելիքի փոխանցում եւ դաստիարակութիւն» (Շաղիկ Մկրտչեան), «Ուսուցիչը եւ դաստիարակութեան արդի հարցերը» (Արմէն Իւրնէշլեան): Գործադրուած է գեղարուեստական բաժին մը: Վերջին շնորհակալական խօսքը արտասանած է համալսարանի նախագահը՝ վերապատուելի Փոլ Հայտոսթեան:

ԶԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐՈՒՆԸ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Մարտ 18, Շաբաթ, ժամը 20.30ին, Կրընոպլի Հայ Մշակոյթի Տան Ժ. Մարանճեան սրահին մէջ, տեղի ունեցաւ բանաստեղծներու տարեկան գարնան երեկոյթը, որուն իրենց կազմակերպչական մասնակցութիւնն ալ բերին Ռօն-Ալփի Բանաստեղծական Տունը, գլխաւորութեամբ Փիէր Վիէօկէի: Նոյն օրը տեղի ունեցաւ նաեւ պաստառներու ցուցահանդէս մը երեւանցի Ս. Ներսիսեանի նաթիւր-մորթերով, բնանկարներով, ազգային ինքնութեան ոճով:

Երեկոյթին բացումը կատարեց Տան նախագահը՝ Տ. Մարանճեան, որմէ ետք բանաստեղծութեան խումբին պատասխանատուն՝ Ժ. Ֆորէսթիէ բեմ հրաւիրեց օրուան հիւրը բանաստեղծ եւ թարգմանիչ Վահէ Կոտէլը: Ան իր ջերմ արտայայտութիւնները ունեցաւ եղած հրաւէրին համար: Խօսեցաւ նաեւ Հայաստանի նոր բանաստեղծներուն մասին եւ անոնց բովանդակութեան ու թարգմանութիւններուն, զորս կ'ընէ եւ կը ներկայացնէ հայկական տարբեր գաղութներու մէջ: Խօսեցաւ մանաւանդ վերջերս լոյս տեսած եւ իր թարգմանած "Լա Փօէզի արմէնիէն" հատորին մասին, ուր տեղ գտած են Զահրատի, Պարոյր Սեւակի, Ս. Զիլոյեանի, Հ. Էդոյեանի, Վ. Գրիգորեանի, Յ. Մովսէսի, Մ. Պետրոսեանի, Ն. Աւետեանի, Ա. Ոսկանեանի գործերը: Այդ գրողներու գործերուն հայերէն բնագիրները կարդացին Ն. Գարունճեան, Պ. Սթերվիոն, Մ. Շեխլեան, Ա. Յակոբեան եւ Շ. Մանուկեան: Իսկ ֆրանսերէն արտասանեցին դերասանուհի Քրիս Տէյս եւ դերասան Լորան Մաբիէլ-Թրէուար: Ամէն ընթերցումի աւարտին, սոփրանօ Ա. Կարապետեան մեներգեց հայկական ժողովրդական երգեր, որոնց քանոնով կ'ընկերանար Ա. Գէորգեան: Բոլոր մասնակցողները մեծ տպաւորութիւն գործեցին եւ ոգեւորութիւն ստեղծեցին ներկաներուն մօտ:

ՇԱՔԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

թաֆա Քէմալի միլլիական ուժերը վճռեցին ամէն գնով կասեցնել յունական յառաջխաղացքը. սակայն անոնք բաւականաչափ զինուած չէին, իսկ զինամթերքը այնքան աղքատ էր, որ իւրաքանչիւր զինուոր միայն հինգ փամփուշտ ունէր իր տրամադրութեան տակ:

Յոյներ Յունուար 10ին մեծ յարձակողական մը շղթայազերծեցին հիւսիսային դիրքերէն, Ինէօնիւի կայարանէն, բայց Թուրքերու կատաղի դիմադրութեան առջեւ յաջորդ առաւօտուն նահանջեցին:

Յունական բանակը, իր այս առաջին պարտութենէն ետք, պահ մը կանգ առաւ, վերակազմակերպուեցաւ եւ Մարտ 23ին Պուրսայէն եւ Ուշաքէն շարժեցաւ դէպի Էսքիշէհիր: "Պուրսայի գումարտակ" կոչուած յունական զօրամասը 1921 Մարտ 24ին գրաւեց Պիլէճիքը եւ Մարտ 26ին կրկին յայտնուեցաւ Ինէօնիւի առջեւ: Մարտ 28ին Յոյները հարուածեցին Թրքական բանակին աջ թիկունքը եւ մեծ կորուստներու մատնեցին զայն: Մարտ 29-30ի կռիւները եւս աւարտեցան Յոյներու յաղթանակով, բայց Մարտ 31ին Թուրքերը անակնկալ յաղթանակ մը տարին եւ յաջորդ օր նահանջի մատնեցին յունական բանակը:

ՅՈՒՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆՈՐ ՅԱՌԱՋԽԱՂԱՑՔ

Սակայն քէմալական ուժերը տակաւին ի վիճակի չէին ուժգին հակահարուած տալու արդիական զէնքերով զինուած յունական բանակին, որ արդէն գրաւած էր Տումլուփընարը եւ կը յառաջանար դէպի Զայ – Պոլվատին եւ Գոնիա: Փութով Ինէօնիւէն զօրամասեր ուղարկուեցան Ալթընթաշ՝ կասեցնելու յունական յառաջխաղացքը: Յոյներ նկատի ունենալով, որ նեղ կացութեան կրնան մատնուիլ, Ապրիլ 7ին պարպեցին Աֆիոն Գարահիսարը:

Մինչ անդին Յունաստանի մէջ 1921 Ապրիլ 8ին իբրեւ վարչապետ Նիքոլաոս Քալոկերոփուլոսի յաջորդեց Տիմիթրիոս Կունարիս. ան անմիջապէս Թագաւորին ամէնէն հաւատարիմ նկատուող սպաներուն հրամանատարական պատասխանատու պաշտօններ յանձնեց, իսկ Կոստանդին Թագաւոր զօրավար Փափուլասը բանակի հրամանատար նշանակեց:

Յունական բանակը 1921 Յունիսին վերսկսաւ յառաջխաղացքը, իսկ Թրքական բանակը նահանջեց մինչեւ Էսքիշէհիրի շրջակայքը: Նոյն օրերուն Մուսթաֆա Քէմալ փաշա ռազմական այցելութիւն մը տուաւ իր ուժերուն եւ հրահանգեց նահանջել Սաքարիա գետի աջ ափը՝ պաշարուելու վտանգին տակ չիյնալու համար:

Յոյները Յուլիս 25ին անցան Սաքարիա գետը եւ 100 քմ. հեռաւորութեան վրայ մօտեցան Անգարայի: Նոյն օրերուն Անգարայի ազգայնական կառավարութիւնը Մուսթաֆա Քէմալ փաշան բանակի ընդհանուր հրամանատար հռչակեց:

Զօրավար Փափուլաս կազմեց Թրքական բանակը երկու կողմէն պաշարելու ծրագիր՝ արեւելեան կողմէն անցնելով Սաքարիա գետը, իսկ հիւսիսէն՝ Թրքական Ըլըճայի դիրքերուն առջեւ յայտնուելով:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝ ՎԱՀԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Որով այս երրորդութիւնը միասին պիտի յառաջանայ աւելի կարճ, ուղիղ ճամբայէն, ունենալով պզտիկ խնդիրներ ալ. լուսափայլ գիշեր մը Իսմէնէ ջանաց Իսաագը հրապուրել եւ մերժուեցաւ: Թէեւ քիչ համոզումով, բայց մերժուեցաւ: Ասիկա պզտիկ սրտնեղութիւն մը յառաջ բերաւ: «Անկարող քահանայ» փսփսաց Իսմէնէ, բայց մտքէն անգամ չանցաւ Նազիմը փորձել: Ամէն պարագայի այս երեքը իրարու շատ փարած են. Հերոսներ են անգամ մը համար, գլխաւոր դերակատարները խոշոր եւ սարսափելի պատմութեան մը: Արկածախնդրութեան ոգի մը մտած է այս խմբակին մէջ որ բաւական կասկածներու առիթ ալ կու տայ, նոյնիսկ բանտարկութեան վտանգի մը դէմ առ դէմ կը դնէ արաբական գիւղի մը մէջ, ուր քիչ մը անյարմար նկատուած երգերը ամբողջ հաւաքականութիւնը արթնցուցին: Ստիպուեցան արագօրէն փախչիլ, թէեւ ոչ մէկը զիրենք հալածեց: Փորձանքով լի ատեններ են...

Մեծ թիւով չթաղուած դիակները սկսած են համաճարակի սկիզբ տալ. միեւնոյն ժամանակ պատերազմն ալ լաւ չընթանար: «Հայերու վերջն է» կը մրմռայ ինքն իր մէջ Ճէմալ փաշա որ Հալէպ քաղաքը կը մնայ, գայրացած որ Էնվէրի եւ Թալաաթի խոշոր ծրագիրը իր վրայ կը պարպէ աքսորեալներու ալիքը, կմախացած բազմութիւնները, որ կը քշուին դէպի իր քաղաքը եւ կը շրջապատեն ամէն կողմէ:

Հալէպի Հայերը փակուած իրենց գեղեցիկ տուներուն մէջ, անհանգիստ են եւ կը փսփսան: Բոլոր օտարները, եւրոպական երկիրներու հիւպատոսները, միսիոնարները, բոլոր անոնք որոնք Պարոն պանդոկը կը բնակին, ամէնքն ալ կը փըսփըսան: Նոյն ինքն Ճէմալ ինքզինքը պաշարուած կը զգայ, լեարդի ցաւէ կը տառապի եւ գիշերները կ'արթննայ ստամոքսին վրայ ծանր բեռով եւ լեզուն քիմքին փակած:

ՆՆՆ հիւանդանոցին մաքուր զգեստաւորուած հիւանդապահուհիները Հայեր պատսպարած են: Դիւանագիտական առաքելութիւնները նմանապէս: Անապատի պետուինները աքսորուած հայուհիներուն մէջէն իրենց համար կիներ կը գտնեն (կը բաւէ զիրենք լուալ, սնուցանել եւ քեզի կը պատկանին), իրենց ամէնէն յանդուգն երազներուն մէջ անգամ երեւակայած պիտի չըլլային: Հանրատուներու տէրերն ալ կ'երթան եւ կը գտնեն. մայրերը նոյնիսկ անոնց կ'առաջարկեն իրենց աղջիկները, որոնք արդէն այլեւս անարատ չեն: Սուէյի մէջ, Միջնաբերդի շուքին տակ, ամէն տեսակի առուծախ կ'ըլլայ:

Նազիմ, Իսմէնէ եւ Իսաագ գիշերամուտին քաղաք կը հասնին: Կենդանիներուն եւ իրենց համար պատսպարուելու տեղ կը փնտռեն: Կը գտնեն բաւական հանդըստաւէտ ախոռ մը: Ինքզինք ցոյց տալէ պէտք է խուսափիլ, մանաւանդ Յոյներէ, որոնք երկդիմի են, շատախօս եւ ջըղային, կը վախնան նոյնիսկ իրենց շուքէն: Թէեւ մասնաւոր հրամանագիր մը փակցուած է ամէն ճամբու խաչմերուկին որ պարտականութիւն կու տայ մատնելու քաղաքի այն Հայերը որոնք կը ջանան գաղթականներ ազատել:

Նազիմ անմիջապէս յարաբերութեան մէջ կը մտնէ իր Եղբայրակցութեան հետ: Յայտնի կ'ըլլայ որ բաւական վրդովում եւ վախ կը տիրէ: Պատերազմ կայ որ շատ հեռաւոր խնդիր մը չէ: Հայերու ներկայութիւնը կայ որ անմիջական խընդիր մըն է: Քաղաքը ճնշումի տակ է: Քաղաքին պատերէն դուրս գտնուող հաւաքատեղիներուն տարագրեալներուն առողջական վիճակը սարսափելի է: Ըստ օրէնքի, ոչ ոք կրնայ մտնել ու ելլել հաւաքատեղիներէն, բայց իրականութեան մէջ ոմանք, եթէ հարկ է, կրնան ընել:

«Ժանտախտ կայ, Թիֆօ կայ – կ'ըսեն, բայց» կը փսփսայ մուրացկաններուն պետը «քանի մը օրուան մէջ ամէն բան կարգի պիտի մտնէ: Հայերը բռնի ուժով պիտի պարպուին եւ պիտի ճամբուին երկաթուղիի երկայնքին, դէպի անապատ, մինչեւ Տէր-Զօր, կամ Ռաս-ուլ-Այն, ուրկէ», կը շարունակէ, «ոչ մէկուն պիտի թողուն ետ գալ»:

«Բայց դուն, Թուրք, ինչ՞ գործ ունիս հոս: Ինչո՞ւ այդքան հարցումներ կ'ընես» և յետոյ, առանց համակրութեան, կարծես զղջալով բառերին կ'աւելցնէ. «Տակաւին կողոպտելու Հայ մը ունի՞ս»:

«Ես ուխտի մը համար հոս եմ» հպարտութեամբ կ'ըսէ Նազիմ «Հայերը չեն հետաքրքրեր զիս: Բայց պէտք չէր բոլորը սպաննել»:

«Մեզի համար մեծ դժբախտութիւն է» կը համաձայնի միւսը, եւ կը հառաչէ: «Հակառակ որ այս շրջանիս շատ շահաբեր գործեր կ'ընենք: Անմիջապէս վերջ այստեղի Հայերն ալ պիտի ճամբուին կ'ըսեն, բայց ես չեմ հաւատար ատոր» կ'ըսէ քմծիծաղով մը, պեխերուն մէջէն. «ճակատը շատ հեռու չէ, եւ Արաբները...»: Յետոյ կը դիտէ Նազիմը եւ կը լռէ: Եղբայրակցութիւնը Եղբայրակցութիւն է, գիտեմ, բայց Թուրքերը Թուրք են, եւ Արաբները՝ Արաբ:

Նազիմ շատ լաւ կը հասկնայ դիմացինին վերապահութիւնը եւ ինք ալ իր կարգին կը լռէ: Յետոյ, պատահական չեշտով, կը հարցնէ:

"Տակաւին հո՞ս է արդեօք Զարեհ անունով հայ բժիշկ մը: Իր ընտանիքը իմ գիւղէս էր, եթէ իրեն թարմ լուրեր տամ, հարկաւ ինծի լաւ կը վճարէ":

"Պիտի հետաքրքրուիմ" կ'ըսէ միւսը չոր կերպով: "Չեմ ճանչնար: Բայց մահուան լուրերը լաւ արդիւնք չեն տար" կ'աւելցնէ գործնական կերպով:

"Հիւանդանոցի մը մէջ կը գործէր" կ'աւելցնէ Նազիմ: Ամբողջ գիտցածս աս է.

Յետոյ հապճեպով կը հեռանայ: Կը վախնայ որ Իսմէնէ եւ Իսաագ, առանց իրեն, չեն յաջողիր տակէն ելլել: Կը վախնայ որ Շուշանիկ արդէն հասած ըլլայ, կամ բնաւ հասած չըլլայ, եւ մահամերձ վիճակի մէջ տեղ մը, ճամբուն վրայ, լքուած ըլլայ: Կը վախնայ որ մուրացկանի իր խեղճ խորամանկութիւնները այս անգամ լաւ արդիւնք չտան, ինքզինքը մերկ կը զգայ եւ յանցաւոր Ամենակարողին առջեւ: Ի՜նչ լաւ պիտի ըլլար կարենալ որեւէ տեղ մեկուսանալ, անյայտանալ... Բայց ետ դառնալ, երբեք:

(Շար. 78)

(Շար. Ա. էջէն)

Փարիզի ցոյցին վերջաւորութենէն ետք է, ժամը 20ի շուրջ, որ սկսած են ծանր միջադէպեր: 41 վիրաւորներ կային եւ 381 ձերբակալուած: Բախումներ պատահած էին նաեւ Մարսէյլ, Թուլուզ, Ռէն, Նանթ: Բայց, հարցը չէ փակուած Ապրիլ 4ին, յաջորդ օրը բազմաթիւ ուսանողներ ճամբաներ կը փակէին դարձեալ, քաղաքներու մուտքը կ'արգիլէին: Նման դէպքեր տեղի կ'ունենային Թուլուզ եւ Պրըթանըի գանազան քաղաքներ (Նանթ) եւ Փուաթիէ ու այլուր: Կը թուի որ ուսանողական շարժումը աւելի արմատական բնոյթ առած է եւ հրահանգ կայ քաղաքներու մուտքերը փակելու:

Գործադուլի գետնին վրայ, շարժումները շատ մասնակի էին: Պաշտօնատարներու մարզին մէջ, տասնի վրայ երկու պաշտօնատար չէին աշխատեր, Թղթատարի եւ Ֆրանս-Թելեքոմի ճիւղին մէջ, համեմատութիւնը 8,4% էր (նախորդ շաբթու՝ 14), երկաթուղին հազիւ 18,3% համեմատութեամբ բանթող ունէր, մեթրօ-հանրակառք գրեթէ ամբողջովին կանոնաւոր էին, թերթերու մէկ մասը միայն լոյս չէր տեսներ:

***

Այս պայմաններուն մէջ, Ապրիլ 5ին, սենատեքաները առանձին-առանձին կ'ընդունուէին Իւ. էՄ. Փէ.ի Ազգ. Ժողովի եւ Ծերակոյտի խումբերու նախագահներուն կողմէ, որոնք նամակով եւ "առանց նախապաշարումի" երկխօսութեան հրաւիրած էին: Նամակին մէջ չեշտուած էր որ նոր օրէնքին պատրաստութեան հետանկարին մէջ՝ "կը փափաքինք ձեզի հանդիպիլ լսելու համար ձեր առաջարկները եւ վիճարկելու առանց նախապաշարումի օրինագիծին բովանդակութեան մասին":

***

Գործատիրութեան (ՄԵՏԻՖ) նախագահուհիին համար, կացութիւնը կը վնասէ երկրին տնտեսութեան:

ՄԵԾ ՊԱՀՔ

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 7.–

Աւետումն Սուրբ Աստուածածնի

Սկիզբ ժամերգութեանց՝ *ժամը* 8.30*ին:*

Պատարագ՝ *ժամը* 10*ին:*

***

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

ժամը 17.30ին

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 7.–

Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցի

(Փրատօ)

Քարոզիչ՝

ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

ԶԱՏԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,

ժամը 13էն սկսեալ

Restaurant **«Les Diamantaires»**

60 rue La Fayette — 75009 Paris

Métro Cadet

Համեղի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 *կամ* 01 45 93 00 25 *թիւերուն:*

***

C I N E M A

Samedi 22 avril à 20 heures

Maison de la Culture Arménienne

17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Տօն Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յառանակաւ յԵրուսաղէմ

Սկիզբ ժամերգութեանց՝ *ժամը* 8:30*ին:*

Սուրբ Պատարագ՝ *ժամը* 10:30*ին:*

Դռնբացէք՝ *ժամը* 16:00*ին:*

(Քանզի զկատարածի գալստեանն՝ եւ զդատաստանի աւուրն ունի զխորհուրդ)

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11.–

Յիշատակ Տասն կուսանաց

Երեկոյեան ժամերգութիւն՝ *ժամը* 16.30*ին:*

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Պատարագ՝ *ժամը* 10*ին,*

Դռնբացէք՝ *ժամը* 12*ին:*

***

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Ժամերգութիւն՝ *ժամը* 9*ին,*

Պատարագ՝ *ժամը* 10.30*ին,*

Դռնբացէք՝ *ժամը* 17*ին:*

***

ԱՌՆՈՒՎԻԼ ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Ժամերգութիւն՝ *ժամը* 9*ին,*

Պատարագ՝ *ժամը* 10.30*ին,*

Դռնբացէք՝ *ժամը* 17.30*ին:*

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Ժամերգութիւն՝ *ժամը* 8.45*ին,*

Պատարագ՝ *ժամը* 10*ին:*

Կը պատարագէ՝

ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

Կը քարոզէ՝

ԴԱՒԻԹ ԱՐՔ. ՍԱՀԱԿԵԱՆ

Երեկոյեան Դռնբացէք *ժամը* 16*ին:*

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11.–

Յիշատակ Տասն կուսանաց

Երեկոյեան ժամերգութիւն՝ *ժամը* 16*ին:*

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Առաւօտեան ժամերգութիւն՝ *ժամը* 8.30*ին,*

Պատարագ՝ *ժամը* 10*ին:*

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

Հայրապետական Պատուիրակի փոխանորդ

Հարաւային Ֆրանսայի

Դռնբացէքի *արարողութիւն՝* *ժամը* 17*ին:*

***

ՍԷՆ ԼՈՒ - ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–

Պատարագ՝ *ժամը* 10*ին:*

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ՇԱՀԷՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ

Պատարագի աւարտին՝ Դռնբացէք:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Լիոն-Վիլըէօրպանի Արաքս մասնաճիւղը, ի գիտութիւն Լիոնի եւ շրջակայից հայ գաղութին կը տեղեկացնէ թէ, Կիրակի Ապրիլ 9, Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ, մասնաճիւղէն յաւերժ բաժնուող խաչուհիներու հոգիներուն ի հանգիստ:

Արարողութեան աւարտին կը նուիրուի հոգեճաշ անոնց քաղցր յիշատակին:

Անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ այս հոգեճաշին հաճին հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝

04 78 45 17 55 *կամ* 04 74 04 74 97

□

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Պօմոնի "Նայիրի" մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Լենա Սարգիսեանի, ինչպէս նաեւ Նաճարեան ընտանիքին, իրենց հօր եւ ամուսնոյն՝ Գէորգ Նաճարեանի *մահուան առթիւ:*

□

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Պօմոնի "Նայիրի" մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները հոգեհանգստեան առթիւ.–

Գուլումեան ընտանիքին հոգեհանգստեան առթիւ՝ Բ. Գուլումեան 70 Եւրօ, Թ. Գուլումեան եւ Ռմն 50ական Եւրօ: Քիւրտօղլեան ընտանիքին հոգեհանգստեան առթիւ՝ Քիւրտօղլեան ընտանիք 300 Եւրօ:

□

ՑՈՒՑԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի "Արշալոյս Թաղէոսեան" մասնաճիւղի ժողովը Շաբաթ, Ապրիլ 8, ժամը 14.30ին, սովորական հաւաքատեղին:

□

M A R S E I L L E

La Croix Bleue REGION MARSEILLE

organise

DU 24 MAI AU 8 JUIN

— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète

Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan

Visas Arménie et Kharabagh

taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80

Jeanine : 04 94 32 11 87

Marie-Rose : 06 22 11 81 75

□

Section **«SEVAN»** de Vienne

Le Samedi 8 avril à partir de 10 heures

à la Maison de la Culture Arménienne de Vienne

(9 rue du Cirque)

V E N T E
D E S P E C I A L I T E S
C U L I N A I R E S
A R M E N I E N N E S

préparées par la Croix Bleue des Arméniens de Vienne

A déguster sur place ou à emporter.

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Հայ տիկին մը տարեց կամ մանուկ խնամելու աշխատանք կը փնտռէ:

Հեռաձայնել, Տիկին Մնացականեանի.– 06. 98. 02. 74. 08

Fondation Léa et Napoléon Bullukian

Subventions 2006

offre aux associations arméniennes de bienfaisance

ENVOYER UN DOSSIER AVANT LE 31 MAI 2006.

Fondation Léa et Napoléon BULLUKIAN :

2 rue du Professeur Pierre Marion — 69410 CHAMPAGNE au MONT D'OR

Chaque dossier doit impérativement comporter un descriptif détaillé du projet, un budget, un RIB, les statuts, la composition du Bureau et du Conseil d'Administration. Tout dossier incomplet sera refusé.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

RECRUTEMENTS POUR LES SEJOURS DE BELLEFONTAINE (JURA)

ETE : JUILLET ET AOUT

- **Directeurs diplomés BAFD**
- **Animateurs diplomés BAFA ou stagiaire BAFA**
- **Infirmière**
- **Econome**
- **Intendant(e)**
- **Coursier**

Candidatures à adresser à :

CBAF — 17 rue Bleue 75009 PARIS,

par e-mail : cbaf@wanadoo.fr ou par fax : 01 53 34 12 13

Date limite des candidatures : 10 AVRIL

REPAS PAROISSIAL DES RAMEAUX

le dimanche des Rameaux

9 avril, à 13 heures

l'Association Sainte-Croix de Paris

organise

U N D E J E U N E R
C O M M U N A U T A I R E

dans la salle polyvalente

de la Cathédrale Sante-Croix,

au 13 rue du Perche — PARIS 3e

après la Divine Liturgie

et avant la Cérémonie de l'Ouverture des Portes.

Réservations :

— **Paroisse : 01. 44. 59. 23. 50**

— **Eparchie : 01. 40. 51. 11. 90.**

P.A.F. : Adultes: 15 Euros

Adhérents: 12 Euros

Enfants, étudiants: 10 Euros

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»

83 rue d'Hauteville 75010 Paris

Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 7
VENDREDI
7 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.429 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 81e ANNEE — N° 21.429

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՍԵՆՏԻՔԱՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ՝

ՋՆՋԵԼ ՕՐԷՆՔԸ ԱՊՐԻԼ 17ԷՆ ԱՌԱՋ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ցոյցերու եւ գործադուլի օրէն ետք, Ապրիլ 5ին եւ 6ին, ուսանողները սկսան այլ միջոցներու դիմել, որոնք ուրիշ դեր չեն խաղար քան թունաւորել հասարակ մահկանացուներու, ի մասնաւորի աշխատաւորներու կեանքը: Այս նոր միջոցները կը կայանան պատնէշներ բարձրացնելու մէջ քաղաքներու մուտքին, գործատուներու, կայարաններու, օդակայաններու առջեւ: Նման գործողութիւններ տեղի ունեցան Ապրիլ 5ին Նանթ, Թուլուզ, Փուաթիէ, Ռէն: Նանթի մէջ, քանի մը հարիւր ուսանողներ Ազգ. Մեծ Շուկային առջեւ համախմբուած են եւ արգելք հանդիսացած որ բեռնակառքերը մտնեն: Ճամբաները փակուած են Ռէն եւ Լորիան: ԻՒՆԷՖ-ի նախագահն ալ՝ Պրիւնօ Ժիւլլիար, կոչ ըրած է որ նման շարժումներ ծաւալին եւ ամրապնդուին:

Ապրիլ 5ին, սենտիքաներու պատասխանատուները ընդունուած են Ազգ. Ժողովի եւ Ծերակոյտի խորհրդարանական խումբերուն (ԻՒ. ԷՄ. ՓԷ.) կողմէ եւ բոլորն ալ նոյն եզրակացութեան յանգած են՝ լսեցին, բայց մտիկ չըրին: Իրենց պահանջը մէկ է՝ ջնջել Սէ. Փէ. Ը.ի օրէնքը Ապրիլ 17էն առաջ (խորհրդարանական արձակուրդներէն առաջ): 12 սենտիքաներու ռազմավարութիւնը նոյնն է՝ նախապայմանը (ջնջումը) պէտք է գործադրուի, երկխօսութիւն եւ բանակցութիւն տեղի կ'ունենան միայն անկէ վերջ: Սէ. Ժէ. Թէ.ի ընդհ. քարտուղարը՝ Պ. Թիպօ ըսած է որ ոչ մէկ խօսք եղած է այդ մասին, այսինքն չէ ըսուած թէ այդ ջնջումը կարելի՞ էր թէ ոչ: Նոյն օրը, Ապրիլ 5ին, Վիլփէն երկրիմի արտայայտութիւն մը ունեցած է Ազգ. Ժողովին առջեւ, որ որոշ մեկնաբանութեան մը պատճառ եղած է: Ըսած է թէ սենտիքաներու եւ ԻՒ. ԷՄ. ՓԷ.ի միջեւ տեղի ունեցող տեսակցութիւններէն ետք հարկ եղած եզրակացութիւններուն կը յանգի, ինչ որ ոմանց համար կը նշանակէ՝ կրնար հրաժարիլ:

Ինչ կը վերաբերի Ն. Սարքոզիի, նոյն օրը իր կուսակիցներուն առջեւ, որու օրակարգն էր երկրին հիմնարկները, պարզեց իր ծրագիրները: Ան, որ Լիպէրասիոն (Ապրիլ 6) "գերեզմանափոր" կ'որակէ, ընտրապայքարի մէջ է: Տխուր պատկեր մը պարզելէ ետք չիրաքեան Ֆրանսային, կը ներկայացնէ վաղուան Ֆրանսա մը: Վերջ պէտք է տալ Ֆրանսայի անշարժութեան, չհրաժարիլ գաղափարներու վիճարկումէն: Իրեն համար, Ֆրանսացիները ժողովրդավար կեանքի այլ ոճ մը կ'ուզեն:

***

Եթէ աջ կողմը շատ կը խօսուի Սարքոզիի մասին, նոյն օրերուն ալ գրեթէ բոլոր շաբաթաթերթերուն հերոսուհին էր Սեկոլէն Ռուայալ, նկարներով, յօդուածներով, հարցազրոյցներով, ամոլին կեանքին նկարագրութիւններով: Աջ թէ ձախ, անպաշտօն թեկնածուներով արդէն իսկ ընտրապայքար կը մղեն, մինչ երկիրը...:

ՔԻՒՐՏԵՒԹՈՒՐՔ ՀԱԿԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Թրքական զինեալ ուժերուն քրտական շրջաններուն գործողութիւնները կը շարունակուին: Ապրիլ 5ին երկրին հարաւ-արեւելեան շրջանին, Շըրնաքի լեռներուն վրայ քիւրտ զինեալներու կրակոցներուն թիրախ հինգ թուրք զինուորներ մահացած են: Պինկէօլի մէջ ոստիկանատան մը վրայ կատարուած յարձակումն ալ պատճառ եղած է ոստիկանի մը մահուան ու եօթը ուրիշներու վիրաւորուելուն:

Քիւրտերը զայրոյթ կը յայտնեն յատկապէս վարչապետ Թ. Էրտողանի դէմ որ առանց տարիքի ու սեռի խտրութեան, անվերջում պայքար հրահանգած էր "քիւրտ ահաբեկիչներ"ու դէմ: Անոր պատկանած ու երկրին իշխանութեան տէր ԱԶ կուսակցութեան Պոլսոյ մէկ մասնաճիւղը Ապրիլ 5ին պայթուցիկներու թիրախ եղած է ու լրջօրէն վնասուած, երկու հոգի ալ վիրաւորուած է: Պայթուցիկներ նետուած են նաեւ Թուրքիոյ Փարիզի հիւպատոսարանի շէնքին վրայ: Արարքը ոչ ոք ստանձնած է, բայց Թուրքերը կը վերագրեն քրտական կազմակերպութեան:

Քրտական մամուլը մատնացոյց կ'ընէ թրքական իշխանութիւններու անհեթեթ արարքները, ինչպէս անչափահաս պատանիներու ձերբակալութիւնը, չարչարանքը: "Թուրք պետութիւնը խենթեցաւ" կը խորագրէր "Էօզկիւր Փոլիթիքա" Ապրիլ 6ին, գրելով թէ որպէս ահաբեկիչ ձերբակալուած պատանիներ դատարան յանձնուած են "Պետութեան հողերուն ամբողջութիւնը կամ մէկ մասը օտար պետութեան մը գերիշխանութեան ենթարկելու" ամբաստանութեամբ ու ցկեանս բանտարկութեան պահանջով:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԷՐԼՈՒՍՔՈՆԻ - ՓՐՈՏԻ վերջին վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ Ապրիլ 3ին եւ կը թուի որ այս անգամ ոչ ոք յաղթած է: Վերջին պահուն, երբ այլեւս Փրոտի չէր կրնար պատասխանել, Պէրլուսքոնի խոստացած է որ պիտի ջնջէ բնակութեան տուրքը: Վիճաբանութեան ընթացքին, աւելի անհատական բնոյթ ունեցող յարձակումներ տեղի ունեցած են, քան բուն հարցերու արծարծումը: Նորութիւն չէ որ Պէրլուսքոնի շատ պատկերալից ոճով կ'արտայայտուի եւ Ապրիլ 4ին ալ "գուլոն" որակած է բոլոր անոնք որոնք ձախի ի նպաստ կը քուէարկեն: Անցեալին ալ, անուանի տարօրինակ արտայայտութիւններ ունեցած է, թէեւ ոչ այսքան գռեհիկ: Իր շարքերուն, օրինակ, ըսած է՝ "Քաղաքականութեան Յիսուս Քրիստոսն եմ, համբերատար զոհ մը, որ բոլորին համար կը զոհուի":

ԹՈՒՐՔԻԱ դեռ մուտք չէ գործած Եւրոպա, բայց իր դրամը մտած է ապօրինի ճամբով եւ սկսած է աւերիչ դեր կատարել: Արդարեւ՝ թրքական մէկ լիրան յար եւ նման է 2 Եւրոյի եւ պատճառ, որ նոր տեսակի դրամաշորթութիւն կատարուի: Թրքական լիրան (61 սանթիմ կ'արժէ) 26 մմ. տրամագիծ ունի եւ 8,52 կրամ կը կշռէ եւ ուրեմն բազմաթիւ ճամբորդներ, որոնք Թուրքիայէն Եւրոպա կու գան, լաւ ու մաքուր կը գործածեն այդ լիրան որպէս 2 Եւրօ եւ դեռ մնացեալն ալ կը գանձեն...: Փարիզեան դրամագիտութեան ընկերութեան տնօրէնը, որ կը հետաքրքրուի այս հարցով, 2005ի ամառն իսկ դիտել տուած է Թուրք պաշտօնակիցներու, որոնք տեղեկացուցած են որ պարզեւ մը իսկ կայ այդ թրքական 1 լիրային վրայ, որովհետեւ փոխանակ գործածելու իրենց գնումներուն համար, կը պահեն, ապա կը ծախեն արժէքէն աւելի Եւրոպա գացող ճամբորդներուն: Թուրք մը, Էտիրնէէն, բացատրած է սխեմը: Ըսած է թէ այլեւս տեղւոյն վրայ թրքական մէկ լիրա չէ մնացած: Մոնտ (Ապրիլ 6) կը նկարագրէ որ պատմութիւնը շատ ծանօթ է մասնաւորաբար Փարիզի 10րդ թաղամասը, ուր Թուրք համայնք մը կ'ապրի եւ Թուրքերը կը խոստովանին որ շատ լաւ գիտեն անցուդարձը:

ՇԱՐՈՆ, որ Յունուար 4էն ի վեր մահաքունի մէջ է, անգամ մը եւս վիրաբուժական գործողութեան ենթարկուեցաւ: Գանկին այս գործողութիւնը "յաջողութեամբ" պսակուեր է...

ԻՐԱՔԻ դատաւորը՝ Ալ-Ճուհի յայտարարած է որ Ս. Հիւսէյն պիտի դատուի ցեղասպանութեան համար Քիւրտերու դէմ 1987-88ին, եւ որու ընթացքին 150էն 200 հազար Քիւրտ ջարդած է:

ՀԱՄԱՍԻ մէկ նախարարը լեզուական սխալ մը գործած է, որ թիւրիմացութիւններ ստեղծած էր Ապրիլ 4ին: Արդարեւ, ՄԱԿ-ին ուղղուած նամակի մը մէջ, ըսած էր թէ Իսրայէլ գոյութեան իրաւունք ունի, ողեկոչելով "լուծում մը որ երկու պետութիւն կրնայ նախատեսել": Այս նախադասութիւնը կարծել տուած էր որ Համասը պատրաստ է ճանչնալու Իսրայէլը: Բայց յաջորդ օրն իսկ Համասը հերքած էր նման յայտարարութիւն եւ կը պարզուի որ Նախարարը՝ Մ. Զահար սխալմամբ ստորագրած է նամակը հասկցած չըլլալով անգլերէն նախադասութիւնը...:

«ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԶՕՐԱԿՑԻԼ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ» Կ'ԸՍԷ ԹՈՒՐՔԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ

Թուրքիոյ Հանրապետութեան նախագահը Ա.-Ն. Սեզէր պաշտօնական այցով Բաքու գացած է Ապրիլ 2ին: Բարեկամութեան, եղբայրութեան սերտ յարաբերութիւններու մասին խօսելով ըսած է թէ երկու երկիրներուն միջեւ առեւտուրի շրջանառութեան 2004ի 550 միլիոն տոլարը 2005ին 795 միլիոնի բարձրացած է, իսկ այս տարի մէկ միլիառի հասնելու նպատակը կը հետապնդուի: Թուրքիայէն գործի մարդիկ 4,5 միլիառի ներդրում ըրած են Ատրպէյճանի մէջ եւ այդ գումարին 2,5 միլիառը քարիւղէն դուրս մնացած մարզերու առընչուած է:

Ի. Ալիեւ պատասխանելով Թուրք նախագահին հետ իր հանդիպումին մասին հարցումներու, ըսած է թէ նիւթ եղած է Ղարաբաղի հարցն ալ, թէ Թուրքիա միշտ Ատրպէյճանի կողքին է: Ապա կրկնած է թէ լուծումը միջազգային իրաւական չափանիշներու վրայ միայն կրնայ հիմնուիլ եւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան յարգանքով միայն իրականանալ:

Ա.-Ն. Սեզէր իր կարգին հարցումներու պատասխանելով կրկնած է իր երկրին զօրակցութիւնը, ըսելով. "Թուրքիոյ եւ Ադրբեջանի յարաբերութիւնները կրնան օրինակ հանդիսանալ շրջանի բոլոր երկիրներուն":

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼՂՀ

ԿՐԱԿՈՑՆԵՐՈՒՆ ԻՄԱՍՏԸ

Վերջին շրջանին յաճախակի դարձած են ատրպէյճանական կողմէն Հայաստանի զինուորական դիրքերուն կրակ բացուելու լուրերը. Ատրպէյճանցիներն ալ նոյն մեղադրանքը կը ներկայացնեն հայկական կողմին: Ապրիլ 2ին անոնք տեղեկութիւն տարածած են որ հայկական կրակոցներէն (Ֆիզուլիի եւ Ղազախի ուղղութեամբ) սպաննուած է ատրպէյճանցի զինուոր մը: Ղարաբաղէն կատարուած լրատուութեամբ չեշտուած է թէ ո՛չ Ֆիզուլիի, ոչ ալ Ղազախի ուղղութեամբ կրակ բացուած է եւ թէ ատրպէյճանական յետին միտքով այդ կարգի յայտարարութիւններուն նպատակն է հրադադարի ոտնահարման դէպքերուն Հայերը պատասխանատու ներկայացել: Ի դէպ, վերջերս Օ. ԷՍ. ՍԷ. Ը.ի նախագահի անձնական ներկայացուցիչը Ա. Կասպրչիկ շրջան տուած այցը ընդմիջած էր երբ ատրպէյճանական կողմէն կրակոցներ սկըսած էին լսուիլ:

***

ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ԲԱՆԱԿՑԻ ԵԹԷ...

Վարչապետ Ա. Դանիէլեան Երեւանի մէջ լրագրողներու հետ հանդիպումին յայտարարած է թէ հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները բնականոն ուղիով կ'ընթանան, թէ այդ կարգաւորումը հասկալի է որ բարդ հարց է. ըսած է թէ ներկայի լաւատեսութիւնը թէեւ չի նշանակեր թէ 2006ի ընթացքին հարցը անպայման կը լուծուի:

Ա. Դանիէլեան անդրադարձած է Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարար Է. Մամէդեարովի ըսածին թէ Ղարաբաղցիներուն հետ բանակցելու համար Բաքու պայման կը նկատէ որ անոնք ներկայանան որպէս Ատրպէյճանի քաղաքացի, Ղարաբաղն ալ Մամէդեարովի հետ կը բանակցի եթէ վերջինս ընդունի Ղարաբաղի քաղաքացիութիւն որպէս ԼՂ ատրպէյճանական համայնքի ներկայացուցիչ, ըսած է վարչապետը:

ԿԻՊՐՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Նիկոսիայի քաղաքապետարանը սպառնացած է դատի տալ տեղւոյն Հայկական եկեղեցին, այն ամբաստանութեամբ որ 300 տարուան գերեզմանատունը նորոգելու դատական հրամանագիրը գործադրուած չէ:

"Հրամանագիրը մօտ տարի մը առաջ յղուած է եւ անտեսուած. գերեզմանատան վիճակը աւելի եւս վատթարացած է. չորս կողմը աղբակոյտեր կազմուած են" ըսած է համայնքէն Պ. Գույումճեան, աւելցնելով որ առաջնորդարանը տարի մը առաջ սկսած է գերեզմանները փորելու, աճիւնները մատուռին շուրջ ընդհանուր շիրիմի մը մէջ ամփոփելու աշխատանքը, բայց ծայր առած շըշուկներու վրայ Ներքին գործերու նախարարութիւնը այդ հոլովոյթը դադրեցուցած էր. շշուկներով կը պնդուէր որ հողը պարտէզի կը վերածուի ու յետագային կը վաճառուի:

ԱՅՑ ՄԸ ԱԽԱԼՑԽԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՆ

10րդ դարէն առաջ գրուած հայերէն ձեռագրերէն միայն աւի մը մեզի հասած է։ Այս հազուագիւտ գանձերէն մէկը, 974 թուագրութեամբ հարաւային Վրաստանի, Ախալցխայի մօտ հայաբնակ գիւղի մը մէջ կը գտնուի։ Այս Աւետարանին գոյութեան բոլոր հայագէտները տեղեակ են, բայց հազիւ քանի մը հատը զայն տեսած են։ Առաջին ընդարձակ ուսումնասիրութիւնը 1898էն է, Գարեգին Յովսէփեանին հեղինակութեամբ։

Վերջերս Հայաստան կը գտնուէի, Մարսէյլի մէջ նախատեսուած "Հայոց գիրերը ու գրութիւնը" ցուցահանդէսին պատրաստութեան համար։ Մտածեցի որ այս ձեռագիրը ցուցադրել կրնար մեծ հետաքրքրութիւն արթնցնել։ Երբ ընկերներուս հետ այդ մասին կը խօսէի, պատասխանը անխուսափելի էր. «Մենք ես, երբեք չեն տար, չեն իսկ ձգեր որ նայիս կամ լուսանկարես»։ Շատ յոյս չունէի, սակայն որոշեցի որ կ'արժէր փորձել։ Կիրակի, Մարտ 19ին, չորս հոգիով ճամբայ ելանք. ինծմէ զատ, պատմաբան ու ձեռագրագէտ Ազատ Բոզոյեանը, ծանօթ արուեստաբան Շահէն Խաչատուրեանը, ու Պարաճանովի թանգարանին տնօրէն Զաւէն Սարգսեանը, որ իր կառքը կը վարէր։

Առաջին խոչընդոտը շատ անհետացաւ. ոչ Հայաստանի քաղաքացի, ոչ ալ ֆրանսացի քաղաքացին Վրաստան մտնելու համար վիզայի պէտք ունին։ Սակայն անսպասելի երկրորդ խոչընդոտ մը բարձրացաւ. ձիւնը։ Գիւմրիէն յետոյ ճանապարհը մինչեւ 2·200 մեթր բարձրութեան կը հասնի, ու երբեմն ձիւնը այնքան առատ էր որ միակ լուծումը առջեւի կառքին հետքերուն հետեւիլն էր։ Բարեբախտաբար Զաւէնը բացառիկ վարորդ է։ Սահմանը անցանք, Ջաւախք մտանք, Ախալքալաքը տեսանք. քանի մը անգամ ստիպուեցանք դուրս ելլել ու կառքը հրել, բայց ողջ առողջ Կուր գետին հովիտը հասանք։ Անկէ սարսափելի ճանապարհներով գիւղը գտանք։ Այս ամբողջ տարածքին բնակչութիւնը հիմնապէս Հայ է։ 1828ին՝ Թիւրքմենչայի պայմանագրէն յետոյ, ռուս զօրավար Պասկեվիչը Էրզրումէն քաշուելով, տեղական հայ բնակչութիւնը իրեն հետ Ռուսաստան գաղթելու հրաւիրեց։ Շատերը համաձայնեցան եւ այս տարածքին վրայ (այդ ժամանակ Ռուսաստանին մէջ) հաստատուեցան։ Բնականաբար, հայ բնակչութեան թիւը Եղեռնէն յետոյ աճեցաւ։

Մօտաւորապէս ժամը 16ին գիւղ մըտանք։ Փողոցները ցեխոտ գիւղ մըն է, ուր շուրջ 300 ընտանիք կ'ապրի, բոլորը Հայեր։ Իրենց նախնիները Էրզրումի Իլիճէ գիւղէն գաղթած էին։ Իմանալով որ բոլորը Իլիճեցի են, Շահէնը շատ յուզուեցաւ. իր հայրը այդ նոյն գիւղէն էր, Եղեռնի ժամանակ գաղթական։ Առաջին հանդիպած գիւղացիին Աւետարանին ուր ըլլալը հարցուցինք. վերջապէս հասարակ տուն մը մտանք։ Տանտիկինը մեզ փոքր սենեակ մը հրաւիրեց. փայտէ մասնատուփի մը մէջ, մոմերու ետին, իր արծաթէ կազմով նշանաւոր Աւետարանը կ'իշխէր։ Խնդրեցինք ձեռագիրը բանալ ու լուսանկարելու արտօնութիւն. շատ սիրալիր ձեւով համաձայնեցան։ Ոսկէ մատեանին մէջ մեր անունները արձանագրեցինք ու Աւետարանը պատշգամ բերին. բաւական թիւով գիւղացիներ հաւաքուած էին, երբ Ազատը սկսաւ էջերը դարձնել, որպէսզի Զաւէնը լուսանկարէ։ Մանրանկարները ու լուսանցքազարդերը շատ գեղեցիկ էին, ու մագաղաթին վրայ երկաթագիրեր բացառիկ չքեղութիւն ունէին։

Երբ այդ գործը վերջացաւ, մեզ քոնեակով հիւրասիրեցին ու սկսայ ցուցահանդէսին մասին խօսիլ։ Շեշտեցի որ եթէ համաձայնին բերել, իրենցմէ զատ ոչ մէկը ձեռագրին ձեռք կու տայ, եւ ցուցափեղկին բանալին իրենցմէ մէկուն մօտ կը մնայ մինչեւ փակումը։ Տանտիկինը աղուորէն իմ միամիտ ճառս ընդհատեց, ըսելով որ այս Աւետարանը ամբողջ գիւղին կը պատկանի, իրենց մասունքն է ու որեւէ պատրուակով դուրս չի կրնար հանուիլ։ Ուրիշ հետաքրքրական բաներ ալ սորվեցանք։ Եթէ մէկը ծանր հիւանդ է, Աւետարանը իր մօտ կը տանին որ բուժուի։ Եթէ երկար ատեն անձրեւ չէ տեղացած, Աւետարանը բռնելով թափօր մը կը կազմակերպեն։ Այսինքն, Աւետարանին դուրս ելլելու պարագային եթէ մէկը արկածի ենթարկուի, պատճառը Աւետարանին բացակայութիւնը պիտի դառնայ։ Մէկ խօսքով՝ պնդելը աւելորդ էր։ Այս գանձը տեսնելը արդէն մեծ հաճոյք մըն էր։

Գիտէինք որ նոյն գիւղին մէջ ուրիշ ձեռագիր մը կար. այդ մասին հարցուցինք ու տունը ցոյց տուին։ Ան ալ նոյն ձեւով պահուած էր. լուսանկարեցինք. գեղեցիկ, նկարազարդ Աւետարան մըն էր, սակայն թուղթի վրայ ու քանի մը դար աւելի ուշ։

Գիշերը Ախալցխա մնացինք, պանդոկի մը մէջ որմէ սովետական բոյրը կը տարածուէր։ 1928ի շէնք մըն էր, առաստաղները շուրջ 5 մեթր բարձրութեամբ, անկողիններէն քանի մը փայտէ կտոր մնացած էին, ու մէջտեղերը փոսեր։ Դուռները չէին գոցուեր, լոյսը այնքան տըկար էր որ կարդալը անկարելի էր. ջուր կար բայց սպասուած տեղէն չէր հոսեր, եւայլն։ Մէկ խօսքով՝ շատ անոյշ պանդոկ մը որ սովետական ռակեղարան կարօտը կ'արթնցնէր։

Յաջորդ առաւօտը, Երկուշաբթի օրը, քաղաքը պտըտեցանք։ Հայախօսներուն քանակը գէշ զարմացուց. հակառակ Հայաստանի հեռաւորութեան, այս շրջանը այնքան ալ հայաթափ չէ եղած։ Բարձունքի մը վրայ Հայոց եկեղեցիներէն մէկը այցելեցինք։ Տեսարանը հոյակապ էր. ձիւնոտ լեռներ, գետը, քանի մը հին հայկական ազնուականի տուներ իրեց փայտէ պատշգամներով...

Մեր ծրագրին մէջ ուրիշ գիւղ մը կար, 4 քմ. հեռու։ Իմացած էինք որ հոն ալ ձեռագիր մը պահուած էր։ Այս երրորդ Աւետարանը, երկրորդին նման թուղթի վրայ է, նկարազարդ, ու 14–15րդ դարէն, բայց խոնաւութենէն շատ վնասուած։ Երբ Ազատը առաջարկեց որ Մատենադարան տարուի, որպէսզի մասնագէտները զայն վերանորոգեն, գիւղացիները պատասխանեցին որ կը նախընտրէին մասնագէտին իրենց մօտ գալը։ Բացէ ի բաց չըսին, սակայն յայտնի էր որ ոչ մէկ վստահութիւն ունէին...

ԱՐՄԷՆ ՄՈՒԹԱՖԵԱՆ

ՓՈՒՇԸՆ ՏՈՄՍԻ

ԱՌԱՆՑ ԵՐԳԻ ՈՒ ԹԱՓՕՐԻ...

Ծանօթ է որ Մարտ ամիսը կարկտախառն մի ամիս է։ Ֆրանսայի զանգուածային ցոյցերի հերթին, թւում է որ զերծ չմնաց բնութեան այդ քմայքից, մեր Եկեղեցւոյ Կրօնական Ընկերակցութիւնը։ Կիրակի, Մարտ 26ի անդամների արտակարգ ժողովի առթիւ, "կարկուտ տեղաց" Նուրհան Ֆրէնկեան սրահում...

Պատճառը, նախ, այդ ժողովի անվաւեր ու անօգուտ բնոյթն էր, քանի որ արդէն 2005 Հոկտեմբեր 26ին Կրօնական Ընկերակցութեան ներկայացուցչական անդամներ, համաձայն Կանոնագրին, միաձայնութեամբ ընդունել էին Ֆրանսայի Թեմի ծրագիրը։ Ինչպէս որ դիպուկօրէն ճշդեցին զայն ժադ Փանոսեան եւ Գեղամ Թորոսեան։ Բայց, ցաւօք սրտի, բիրտ ընդմիջումներով կոխկռտուեց խօսքի ազատութիւնը... Ժողովականները չհանդուրժեցին այդ միջադէպին ու բաց թողին "ջերմ" բողոքներ։ Մանաւանդ երբ պարզուեցին մի քանի անմե՛ղ "սխալ"ներ...

Այդ "սխալ"ներից մէկը, հրաւիրագրի պահարանի մէջ սահեցուած, անանուն մի թղթիկ էր, խորագրուած՝ «Résolution unique»։ Իսկ վերջի էջում –Թեմական Կանոնագրին– "Թլփատուած" էր յօդուած 23ը։ Այս երկու անմե՛ղ "սխալ"ների նպատակն էր խափանել Ֆրանսայի Թեմի ծրագիրը։

Սովետական երջանկութեա՛ն տարիներին, գիտէինք որ դասական գողութեան, ծպտուած կոչումն էր՝ "Փափախ"։ Ընդունուած մի սովորութիւն որ քուէարկուած մի օրէնք չէր... Իսկ հիմա էլ, այս Թեմի ծրագրի շուրջ, նորաբոյս մի ոմն սարկաւագ, ծամածռութեամբ, գործած կեղծիքը մկրտեց՝ "տպագրական մի սխալ"։ Երանի՛ պարզամիտ հաւատացողին...։

Արդար էին ուրեմն ժողովականների չարունակուող բուռն բողոքները, յատկապէս երբ կոշտ կարկտանով փորձ եղաւ թաքցնել լարախաղերը...։ Այդ պատճառով էլ ներկաների կէսից աւելի, վիրաւորուած՝ սրահից հեռացաւ։

Եթէ այս անվաւեր ժողովը բաւական աղմկալի եղաւ, այնուամենայնիւ, կարելի է համարել որ արդիւնքը դրական էր, քանի որ գրեթէ հակառակորդներ չեղան Թեմական ծրագրին, բացի մի քանի "թալա–թիւլաներ"... Նկատի առնենք նաեւ որ վերջապէ՛ս պիտի իրագործուի, երկար տարիներից յետոյ, երջանկայիշատակ Վազգէն Ա.ի իղձը։

Ժողովը վերջ գտաւ en queue de poisson։ Ներկաները, "սխալ"ների անմե՛ղ դոհերի հետ, սրահից հեռացան առանց երգի ու թափօրի...։

Կ. ՋՐԲԱՇԵԱՆ

Փարիզ, Մարտ 31

ՅՈՅՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԻԶՄԻՐԻ ԳՐԱՒՈՒՄԷՆ ԵՏՔ

ՅՈՅՆ - ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Բ. եւ վերջին մաս)

ՍԱՔԱՐԻԱՅԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Թշնամի երկու բանակները Օգոստոս 23ին (1921) դէմ դիմաց յայտնուեցան Սաքարիա գետի ափին. Յոյները հոն կեդրոնացուցած էին 100 հազար զինուոր, Թուրքերը՝ 90 հազար։ Այդ օր Յոյները յարձակեցան Իլիճայի Թրքական դիրքերուն վրայ եւ խորտակեցին զանոնք։ Միաժամանակ անոնք սկսան յառաջանալ Հայմանայի բարձունքները, դէպի Մանկալ Տաղ եւ Չալ Տաղ, եւ Թրքական կատաղի դիմադրութիւնը խորտակելով գրաւեցին Մանկալ Տաղը՝ նեղ կացութեան մատնելով Թրքական զօրքերը։

Յունական յառաջխաղացքի դիմաց Մուսթաֆա Քէմալ փաշա խիստ հրահանգ արձակեց իր զօրքերուն՝ ամէն գնով դիմադրել եւ արգիլեց որեւէ զօրախումբի նահանջ։ Իր կարգին, Ֆեւզի փաշա որոշեց ամէն գնով պաշտպանել Չալ Տաղը։

Հակառակ Թրքական դիմադրութեան, Յոյները արիւնահեղ կռիւներէ ետք, Սեպտեմբեր 2ին գրաւեցին Չալ Տաղը։ Կարգ մը տուեալներու համաձայն, Մուսթաֆա Քէմալ փաշա յուսալքուեցաւ եւ հոգեկան ծանր տագնապի մատնուեցաւ։

Ճակատամարտի սկզբնաւորութենէն ի վեր զօրավար Փափուլաս իր զօրքերուն արգիլած էր ամէն նահանջ եւ միշտ յարձակողականի հրաման տուած էր. բայց Սեպտեմբեր 4ին, ի տես Թրքական յամառ դիմադրութեան, ստիպուեցաւ փոխել մարտավարութիւնը։ Թուրքեր Սեպտեմբեր 8ին մեծ յարձակողական մը շղթայազերծեցին եւ գրաւեցին Չալ Տաղը, բայց չյաջողեցան նահանջի մատնել յունական բանակը, որովհետեւ Յոյները բաւականաչափ փոխադրակառքեր ունենալով՝ կրցան օգնական ուժեր հասցնել։

Սեպտեմբեր 10ին Թուրքերը բոլոր ճակատներուն վրայ եւ յատկապէս Պէյլիքօփրուի արեւելեան դիրքերէն մեծ յարձակողական մը շղթայազերծեցին յունական բանակին գլխաւորաբար ձախակողմեան դիրքերուն վրայ եւ երեք օրուան գիրկընդխառն արիւնահեղ կռիւներէ ետք ստիպեցին անոնց նահանջի ճամբան բռնելու։ Սեպտեմբեր 13ին յունական բանակը արագօրէն սկսաւ նահանջել, բայց Թուրքերը յաջողեցան կտրել յունական բանակին պարէնաւորման ճամբաները եւ նեղ կացութեան մատնեցին զայն։

Սաքարիայի 21 օր տեւած ճակատամարտին Յոյները տուին 4 հազար զոհ, 19 հազար վիրաւոր եւ 15 հազար գերի։ Թուրքեր տուին 3700 զոհ, 18 հազար վիրաւոր եւ հազար գերի։

ԱՌԺԱՄԵԱՅ ԶԻՆԱԴԱԴԱՐ ԵՒ ՆՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ. ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՔԻՆ

Սաքարիայի ճակատամարտէն պարտըւած դուրս գալէն ետք յունական բանակը զօրավար Փափուլասի հրամանատարութեան տակ քաշուեցաւ դէպի Էսքիշեհիր եւ Աֆիոն Գարահիսար եւ պաշտպանողական զօրաւոր դիրքեր կառուցեց։

Հակառակ ճնշումին եւ Անգարայի բռպառնացող վտանգին, Մուսթաֆա Քէմալ փաշա սպասեց եւ օգտագործեց առժամեայ զինադադարը՝ իր ուժերը վերակազմելու եւ դաշնակիցներուն հետ բանակցութեան մէջ մտնելու համար։ Ան համոզուած էր, որ Ֆրանսա եւ Իտալիա աւելի Թուրքիոյ, քան Յունաստանի կողքին են, եւ ի վերջոյ յաջողեցաւ անոնց զօրակցութիւնը ապահովել։ Այսպէսով, Յունաստանի կողքին գտնուող Բրիտանիա քաղաքականօրէն առանձին մնաց։

Մինչ այդ Կոստանդին թագաւոր զօրավար Փափուլասը հանեց բանակի հրամանատարի պաշտօնէն եւ փոխարէնը զօրավար Հածիանեսթիսը նշանակեց։ Սակայն Հածիանեսթիս բանակին կողմէ անկարող, տկար եւ նոյնիսկ յիմար մէկը կը նկատուէր եւ ժողովրդականութիւն չէր վայելեր։ Յունական բանակին կորովը, գրաւեալ թշնամի հողի վրայ, արդէն բարձր չէր, մանաւանդ որ սկսուած պատերազմն ալ անվերջանալի կը նկատուէր։

Նոյն ժամանակաշրջանին Թուրքերը մեծ քանակութեամբ զէնք, զինամթերք եւ յատկապէս ծանր հրետանի ձեռք ձգեցին եւ զօրացուցին հեծելազօրքը։ Սակայն յունական բանակը բաղդատաբար աւելի լաւ զինուած էր հրացաններով, մեքենայէն զէնքերով եւ փոխադրամիջոցներով։

Յունական կառավարութիւնը, նեղ կացութեան մատնուած ըլլալով, դիմեց դաշնակիցներուն՝ օժանդակութեան խնդրանքով, բայց 1922ի տարեսկիզբին Բրիտանիա, Ֆրանսա եւ Իտալիա յայտնեցին, որ իրենք ի վիճակի չեն Թուրքիոյ պարտադրելու Սեւրի դաշնագիրը եւ աւելցուցին, որ հաւանաբար անիկա վերանայումի ենթարկուի։

Միաժամանակ Ա. Աշխարհամարտէն ետք Թուրքիա մտած իտալական եւ ֆրանսական գրաւող ուժերը պարպեցին իրենց դիրքերը եւ հեռացան Թրքական հողերէն։

Այնուհետեւ դաշնակից պետութիւններ 1922 Մարտին զինադուլի եւ հաշտութեան առաջարկ ներկայացուցին կողմերուն. բայց Մուսթաֆա Քէմալ փաշա պատասխանեց՝ ըսելով, որ հաշտութիւն չկայ, այնքան ատեն որ յունական բանակը կը մնայ Անատոլուի մէջ։

Մինչ առժամեայ զինադադարը կը շարունակուէր, թշնամի երկու կողմերը միաժամանակ աշխոյժ պատրաստութիւն սկսան տեսնել՝ պատրաստուելով վճռական գօտեմարտին։

Մուսթաֆա Քէմալ փաշա, իբրեւ բանակի ընդհանուր հրամանատար, վճռեց զօրաւոր հարուածով մը նահանջի մատնել յունական բանակը եւ դուրս մղել զայն ամբողջ Անատոլուէն։ Ան առանց ուշադրութիւն դարձնել տալու զօրացուց Նուրէտին փաշայի հրամանատարութեան տակ գործող Թրքական առաջին բանակը եւ Աֆիոն Գարահիսարի հարաւային ճակատներուն պաշտպանութեան պարաականութիւնը անոր յանձնեց։ Միւս կողմէ, սակայն, Յոյները պաշտպանողական զօրաւոր եւ անառիկ դիրքեր ունէին եւ Մուսթաֆա Քէմալ փաշա տակաւին կը գգուշանար արագ շարժելէ։

Միւս կողմէ, Յունաստանի մէջ պատերազմին ջերմ կողմնակիցներէն վարչապետ Տիմիթրիոս Կունարիս 16 Մայիս 1922ին հրաժարեցաւ եւ զայն փոխարինեց Նիքոլաոս Սթրաթոս, որ քանի մը օր ետք քաշուեցաւ եւ Մայիս 22ին զայն փոխարինեց Պետրոս Փրոթոփափաաքիս, որ վճռեց ամէն գնով շարունակել պատերազմը։

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

«Ազդակ»

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ԵՒՍ ՄԷԿ ՓՈՐՁ

Մխիթարեան միաբանութեան վարդապետ Հայր Յարութիւն Պզտիկեանը Հայաստանում այսօր ամենաճանաչուած այն Սփիւռքահայն է, որի շուրջը համախմբուած կարելի է տեսնել ամենաինտելեկտուալ մտաւորականներից մինչեւ ամենապարզ հայ մարդուն ու գիւղացուն։ Մարդու հոգին ճանաչելու եւ մարդկային յարաբերութիւններում զարմանալի նուրբ զգացողութիւն ու ըմբռնում ցուցաբերելու իր յատկանիշները դժուար թէ միայն հոգեւորական լինելով է պայմանաւորուած։

Երէկ նրա հետ Գրողների միութիւնում՝ մտաւորական այն սակաւ շերտի, որ ազգի սերուցքն է ներկայացնում եւ դեռ մնացել է Հայաստանում, մի հանդիպում կայացաւ եւ ինչպէս օրուայ աւարտին ըզգացի, հանդիպումը ծնուած էր իրական անհրաժեշտութիւնից։ Հայաստանեան կեանքի մասին իր այս էլ երրորդ գիրքն ընդամէնն առիթ էր, եւ հեղինակն էլ իմ տպաւորութեամբ խորհրդանիշ էր, պարզապէս գաղափարակիր, որի շուրջն այսօր կարող է հաւաքուել ազնիւ, մարդասէր միտքը։

Երեւանեան՝ մեզ համար սովորական դարձած առօրեան, վաւերացուած Հայր Յարութիւնի այս վերջին՝ "Երեւանեան պատկերներ" գիրք – անդրադարձումը, հայրենասիրութեան մերկ դրսեւորում է, առանց սեթեւեթանք–հաճոյախօսութեան, շիփ–շիտակ։ Մեր այսօրը. Երեւանը՝ նրա ձեւափոխում–ձեւախեղումը, մեր լեզուն՝ նրա բովանդակազրկում – աղճատումը, մեր մշակոյթը՝ օտարահաճ–դիմազրկուած, մեր գիւղերը՝ լքուած, ճանապարհները՝ քանդուած, մեր կանայք...

Եւ ինչու այսպէս փութկոտ ընդառաջում ենք մարդկային բարոյազրկութեան այս խայտառակ արշաւին։ Դադար առնենք ու շրջահայենք, արդեօք մենք ճանաչո՞ւմ ենք մեզ ու մեր քաղաքը. ահա այս ճանաչմանը մասնակից եղան նաեւ մեր յարգելի մտաւորականները. Լեւոն Զուքասեան. "Նա բարձանում է հայ մարդու ինքնութեան խնդիրը, ինքնութիւն, որ կորչում է իր հայրենիքում", այս կորստի ճանապարհին արւեստաբանը աններելի է համարում քաղաքի ճարտարապետների լռութիւն – կոմրոմիսը, որի ներքոյ քանդւում – վերանում է ԺԹ. դարի Երեւանը, սարսափելի է համարում մեր երկրի՝ քաղաք – պետութեան վերածուելու իրողութիւնը, որտեղ վերացել է մտաւորական խօսքի կարիքը և "մտաւորականը չի կարողանում իրեն լսել տալ տիրող անուսեալներին"։ Իր գնահատանքով հանդերձ հանդէպ հեղինակի մշակութային իմացութիւնը եւ ազգանպաստ գործունէութիւնը, Լ. Զուքասեանը նրանից ակնկալեց Ս. Ղազարի գանձերի վերաբերեալ ամփոփ մի աշխատութիւն։

Փարիզի "Յառաջ" օրաթերթի մշտական ընթերցող, նկարիչ Յակոբ Յակոբեանը, որ "Ազգ"ում իր հրապարակումներով արդէն յայտնի է հանրային իր բոլոր մտահոգութիւններով, հեղինակի գործերին ծանօթացել է "Յառաջ"ի ընթերցումներով, մտերիմ եւ հարազատ զգացել. "Իր համար հայկական ամէն ինչ նուիրական է, թէ՛ Հայաստանի փոշին, թէ՛ Հայաստանի դրօշը, իր գրքերում տեսնում եմ ֆանտաստիկ հետաքրքրութիւն հայրենականի հանդէպ, իր համար սրբութեան սրբոցը Հայոց լեզուն է"։

Յ. Յակոբեանը յիշեց քանի տարի առաջ Հայաստան եկած մեքսիքացի յայտնի նկարիչ Սիքերիոսին, որ այցելելով ժամանակակից արուեստի թանգարան, հիացել է մեր գեղանկարչութեամբ, բայց եւ նկատել. "Դուք էդ փարիզեան դըպրոցի եռեւից շատ մի վազէք, դուք ձեր պատմութիւնը նկարէք", Հայր Յարութիւն վարդապետն այսօր մեր ժողովրդի պատմութիւնն է գրում։ Ազնիւ էր նաեւ Լեւոն Լաճիկեանի խօսքը. "Երբ քննադատութիւնը սուր է, փոփոխութեան կարիքը նոյնպէս սուր է", դառնալով հեղինակին, թէ՝ "դուք հաւատո՞ւմ էք, որ կարող է փոխուե՞լ"։

Դահլիճի երկխօսութիւնը հրաշալիօրէն կազմակերպող Սուրէն Դանիէլեանը յիշատակեց Հայր Ղեւոնդ Ալիշանին, որ հեռուից մանրակրկիտ գծում էր Հայաստան երկրի աշխարհագրութիւնը. "Հ. Յարութիւնը քայլ առ քայլ գնում է նրա եռեւից, բայց շատ մօտից՝ ոչ թէ տեղանքի, այլ մարդկային յարաբերութիւնների փոփոխութեան քարտէզն է գծագըրում, եւ ոչ եւրոպացու, այլ հայ մարդու հայեացքով"։

Վարդապետ Պզտիկեանը դրուատանքի ու քննադատութեան խօսքերն ընդունեց հանդարտ սիրով։ Խոստովանեց, որ ինքը յեղափոխական վարդապետ է, յիշեց ժամանակին իր մասնակցութիւնը փարիզեան մտաւորական շարժումներին, ցոյցերին եւ սիրով ընդառաջ եկաւ Զուքասեանի առաջարկին՝ նկատելով նման գրքի ուշացման պատճառները։

Իր հայրենասիրութիւնն անսակարկ է։

Իրեն ժողովրդի ձայնը համարող Մխիթարեան վարդապետն օտարի եւ օտար մշակոյթների հանդէպ ունեցած յարգանքով հանդերձ, ընդվզում է մեր սարկամըտութեան դէմ, որ ի հաշիւ սեփական արժէքների անդիտութեան է։

Վարդապետ Յարութիւն Պզտիկեանի պարզած հայելին արտացոլում է մեզ եւ մեր իրականութիւնը. վրդովուելու փոխարէն փորձենք փոքր–ինչ ներհայել պարզապէս։ Իսկ Լեւոն Լաճիկեանի հարցին նա լաւատեսօրէն արձագանգեց՝ այսպէս էլ չի մնայ...

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ

"Ազգ"
Մարտ 31

ՊԱՏԱՆԻ ՊՈՒՏՏԱՅԻՆ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ

Հաստաբուն ծառի մը խոռոչին մէջ տասը ամիս խոկումի մատնուած մնալ առանց ուտելու, խմելու, միլիոնաւոր բարեպաշտի աչքերուն առջեւ, շատ սովորական եղելութիւն չէ։ Նեփալցի պատանի մը իր այդ ընթացքով ամբողջ աշխարհին ուշադրութիւնը գրաւեց։ Բայց Մարտ 11ին լրատուիչները յայտարարեցին թէ ան անյայտացած էր իր ծառին խոռոչէն։ Անոր հաւատարիմները խորապէս ցնցուած էին այդ անյայտացումէն։ Բայց կարճ ժամանակ ետք հաղորդուեցաւ որ զայն գտած էին երեք քմ. հեռուն, խիտ անտառներու մէջ։

Ան զինքը գտնողներուն խօսած էր կէս ժամու չափ. ըսած էր թէ նախկին տեղը խաղաղութիւն չգտնելով հոն ապաստանած է։ Խնդրած էր որ ծնողքը տեղեակ պահեն որ չմտահոգուին։ Ապա յայտնած էր թէ վեց տարի ետք կրկին կը յայտնըւի։

Պատանիին որ Համ Պոմժան կը կոչուի, հաւատարիմները ոչ մէկ կասկած ունին թէ ան Պուտտայի վերամարմնաւորումն է. ան ալ Նեփալի մէջ ծնած էր աւելի քան 2500 տարի առաջ։ Պատանին ոչ միայն օդով կը սնանի, այլ բոցերու տոկալու փաստն ալ տուած է։ Յունուար 19ին յանկարծ կրակ առած է։ Ինը ամիսէ ի վեր հագած զգեստները մոխրացած են, բայց մարմինը ոչ մէկ հետք կրած է բոցերէն։ Ըսուածին փաստը կու տայ հաւատարիմներէն մէկուն տեսագրութիւնը։

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊԷՅՐՈՒԹԻ "Յովհաննէս Պօղոսեան" սրահին մէջ, Մարտ 12ին, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջ. Վարչութեան, երգահանդէս մը տեղի ունեցած է, մասնակցութեամբ Հայաստանէն հրաւիրուած երկու արուեստագէտներու՝ Լէյլա Սարիբէկեանի եւ Արսէն Գրիգորեանի։ Այս վերջինը համերգային երեկոյթը բացած է հայ ազատագրական պայքարի հերոս՝ "Գարեգին Կարնեցի" երգով։ Երգահանդէսի այս առաջին բաժնին մէջ, երգիչ եւ երգչուհի ներկայացուցած են իրենց երգացանկը։ Լէյլա Սարիբէկեան նաեւ երգահան է եւ հեղինակն է գրեթէ իր բոլոր երգերուն։ Բեմ եկած է նաեւ Համազգայինի "Գայեանէ" պարախումբը։

***

ՊԷՅՐՈՒԹԻ Յակոբ Տէր Մելքոնեան սըրահին մէջ, Մարտ 17ին, կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. ԼԵՄ-ի "Ա. Շիրակեան" մասնաճիւղին, ոգեկոչուած է Գարեգին Նժդեհի մահուան 50ամեակը։ Բացման խօսքը արտասանած է Մարի Եղոյեան, որ ծանրացած է Նժդեհի դաշնակցական արժէքներուն վրայ։ Բեմ բարձրացած է օրուան բանախօսը՝ Նազարէթ Պէրպէրեան, որ իր ամբողջութեան մէջ ներկայացուցած է Գարեգին Նժդեհի արժէքն ու տիպարը։ Ձեռնարկի աւարտին, երգիչ Հրաչ Կայծակեան ազգային յեղափոխական երգերով փակած է յայտագիրը։

***

ՊԷՅՐՈՒԹԻ Հ. Մ. Ը. Մ.ի Կեդրոնական Վարչութեան Նստավայրին մէջ, Մարտ 17ին, հիւրասիրութիւն մը տեղի ունեցած է "Մարզիկ" ամսաթերթի 25-ամեակի եւ բարեզարդուած կեդրոնի բացման առիթով։ Կեդրոնական Վարչութեան անունով բարի գալուստ մաղթած է Կեդրոնական Վարչութեան ատենապետը՝ Գառնիկ Մկրտիչեան։ Նշած է թէ Կեդր. Վարչութեան հիմնական նպատակներէն եղած է մնայուն նստավայր մը ունենալու պարագան։ Համառօտ կերպով ներկայացուցած է 1974 – 1985 տարիներուն այդ ուղղութեամբ տարուած աշխատանքները։ Լիբանահայոց Թեմի առաջնորդը՝ Գեղամ Եպիսկ. շնորհաւորած է Կեդրոնական Վարչութիւնը եւ նշած թէ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ ունեցած է հայ ժողովուրդին բարոյական աջակցութիւնը։

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Այն վայրկեանին նեղ փողոցի մը անկիւնի եռեւի ճամբէն հացի սուր բոյր մը կ'առնէ։ Կը հետեւի անոր եւ Միջնաբերդի պատերուն վերջաւորութեան ճամբու կիսուն տկար լոյս մը կը տեսնէ որ հացագործին խանութը ցոյց կու տար։

Եւ ճիշդ այդ վայրկեանին դուռը կը բացուի, զանգակի մը թեթեւ հնչիւնը կը լսուի եւ ելքին կը տեսնուի Ճելալը, տեղակալը, Ազնիւի սիրահարը, իր մատնութեան արդիւնքը, որ ախորժակով հացը կը խածնէ։ Եւ Նազիմ կը զգայ որ ասիկա նշան մըն է։ Աստուած պատասխանեց իրեն։

Կը մօտենայ, չեղակի բայց արագ եւ ուրախալի զարմանքով, օգնութեան խընդրանքով, ընդհանուր յիշատակներով ճանաչումի ծէս մը կը բեմադրէ։ Հիմա իր արուեստին մէջ կը լողայ այնպէս ինչպէս Արքայութեան թռչուն մը կը թռի ոսկեզօծ տարածքներու վանդակի մը մէջ, օդին մէջ հիւսելով շողոքորթութեան եւ խաբէութեան նուրբ ուռկան մը։

Ճելալ, կախարդուած – բայց դաստիարակուած յարգանք ունենալու մուրացկանին, Աստուծոյ Աղքատին հանդէպ («ասիկա մանաւանդ դէպի Մէքքէ ուխտաւոր է» կը մտածէ), կ'ընդունի հանդիպումը, կ'ընդառաջէ, կը յիշէ անցեալը։ Լայն ժեստով առատ նուէր մը կու տայ եւ կը դառնայ, մեկնելու համար։ Բայց Նազիմ միւս կողմէ կը ցատքէ իր դիմացը եւ օդին մէջ, կախարդանքով կը գծէ այն գեղեցիկ աղջիկը զոր Ճելալ այնքան հետապնդեց. ժպտուն բերնով Ազնիւը։ Տեղակալը անմիջապէս վերյիշեց անոր ժպիտը, ծաղիկը մազերուն մէջ, արագ շարժումները։ Ի՞նչ եղաւ Ազնիւը։

Իր յիշողութեան եւ ներկայի միջեւ կը տարածուի սարսափի ծովը, բոլո՛ր այն բաները որ Ճելալ ամէն օր կը տեսնէ։ Ճէմալ փաշայի՝ իր զօրավարին օրէ օր աւելցող ջղագրգռութիւնը, տարագրեալներու դաշտերը, մեռեալներու գարշահոտը, ճամբաներու վրայի դիակները, հրաւիրագրերը, մայրաքաղաքէն հասած հեռագիրները, պատերազմը, որ սատանային մատով անյաջող կ'ընթանայ Կայսրութեան համար։ Ճելալ ամէն օր կը տեսնէ կմախացած պզտիկները որ կը շրջին ամէն կողմ, որ այլեւս հաց ալ չեն խընդրեր, միայն կը շրջին եւ պաղ աչքերով կը դիտեն միւսները, բոլոր անոնք որ իրաւունք ունին ապրելու։ Բոլոր այս բաները ալ մաս կը կազմեն Հալէպի կեանքին։

Բոլոր այս բաներուն հետ չկապեց Ազնիւը։ Նոյնիսկ քիչ մը նեղուած մնաց անոր որ փինքը մերժեց։ Հիմա, յանկարծ, սարսափը գինքն ալ կը պաշարէ, կը ճնշէ, եւ Ազնիւի հետ անապատին մէջ կը գտնէ ինքզինքը. հիմա որ խնկապէս գինքը յաւիտեան կորսնցուց։

Նազիմ կը հետեւի իր մտածումներուն, կարծես քարտէսախտակի մը վրայ գըրուած ըլլային. եւ քանի մը բառեր կ'արտասանէ Սմբատի մահուան, կիներուն մղձաւանջին, աքսորի պայմաններուն աուլնչութեամբ։

«Ո՞վ գիտէ» կը վերջացնէ «թէ անոնցմէ քանի մը հոգի ազատեցան են հասան մինչեւ Հալէպ։ Անոնք որ չմեռան, բոլորն ալ հոս են»։

Հիմա երկու անձերը իրարու կը նային եւ իրար կը հասկնան։ Աստուծոյ կամքն է որ իրարու հանդիպիլ տուաւ, իւրաքանչիւրը իր սրբազան առաքելութեան մէջ։ Ճելալ չի հարցներ, Նազիմ չի բացատրեր, բայց միայն կը հարցնէ. «Ո՞ւր կը բնակիք։ Վաղը ժամը տասնին ձեր քովը պիտի ըլլամ»։

***

Պէտք է Զարեհը գտնել, եթէ տակաւին հոս, քաղաքն է. Հալէպցի շատ Հայեր փախուստ կու տան որչափ ատեն որ տակաւին կարելի է։ Ամբողջ ընտանիքներ են որ միշտ Հալէպ կ'ապրին։ Կարելի՞ բան է որ Զարեհ անտարբեր ըլլայ իր ընտանիքին հանդէպ։ Իմացա՞ւ արդեօք պատահածները։ Ի՞նչ միջոցներ ձեռք առած է։ Նազիմ կը հասկնայ որ այս պահուն Իսմէնէի միջամտութեան պէտքը կայ։ Ան անմիջապէս կասկած չարժեցընէր Հայերուն աչքին. եւ յետոյ կը ճանչնայ Զարեհը, եղբայրը որ աղջիկներուն Դամասկոսի մեծաքսէ կերպասներ կ'ուղարկէր։

Իջեւանին մէջ Նազիմ կը գտնէ Իսաադը եւ Իսմէնէն որոնք ոտքերնին ծալած են անասուններուն քով եւ խռոված աչքերով իրարու կը նային։ «Դուն ալ անասուն մըն ես, անկարող քահանայ» կը մրմռայ Իսմէնէ թէեւ առանց բարկութեան։ «Ինծի մի պատմեր որ տակաւին խեղճ Գաթերինայէն սուգը կը կրես։ Քիչ վերջ մենք ալ իր քովը պիտի ըլլանք»։

Մինչ այդ կը պատրաստուի։ Իսմէնէ ալ աճպարար մըն է։ Լաւ գիտէին ընտանիքին տղաքը որոնք կը հիանային անոր ճարպիկութեան վրայ երբ գունաւոր թաշկինակները դուրս կը հանէր։ Քանի մը վայրկեանի մէջ կը վերափոխուի գընչուի. եւ ահաւասիկ, մէկ գրպանէն դուրս կ'ելլեն կլոր օղեր որ իր ամերիկացի ամուսինը նուիրած էր, փայլուն ապարանջանները՝ ուրիշ գրպանէ մը, նոյնիսկ խոզի սրուակ մը կը հանէ մազերուն հաստ հիւսքին փայլ մը տալու համար։ Կարմիր ժապաւէն մըն ալ կը կապէ ծայրը։

Աւելի տարիքոտ եւ աւելի տգեղ կ'երեւայ Իսմէնէ, կարծես յուսահատ ըլլայ, կարծես եղերական դիմակ մը անցուցած է։ Բայց ժողովուրդը որ այս շրջանին Հալէպի մէջ գիշերները կը շրջի, շատ բարակը նայող չէ եւ Նազիմ հմայուած, բերանը բաց կը նայի։

«Ամերիկացի կիները երբեք չե՞ս տեսած դուն, մազերը թափած տգեղ շուն» կը խնդայ Իսմէնէ եւ կը պատրաստուի մեկնելու։ Նազիմ անոր խօսքերէն չի վիրաւորուիր, ինք ալ կը խնդայ եւ կը հրահանգէ. «Փնտռէ Զարեհը եւ ջանա իրեն հետ խօսիլ։ Եւ շատ կը խնդրեմ, լուսնալէն առաջ վերադարձած ըլլաս»։ Գիտէ որ Իսմէնէ գիշերային կին մըն է, գիշերը անոր բան չի կրնար պատահիլ։ Ցերեկին, գինովներու շրջող դունդէն կը վախնայ։ Իսաադ եւ Իսմէնէ առանց ինքնութեան թուղթի են, եւ Մուրացկաններու Եղբայրակցութեան հովանիին տակ ալ չեն։

(Շար. 79)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

ԶԱՏԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,
ժամը 13էն սկսեալ

Restaurant **«Les Diamantaires»**
60 rue La Fayette — 75009 Paris
Métro Cadet

Հաճելի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 *կամ* 01 45 93 00 25 *թիւերուն:*

***

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

«ՅԱՌԱՋ»ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԿՐԸՆՈՊԼԸ.– Տիկին Շաքէ Մանուկեան 50 *Եւրօ:*

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Իսիի "Տ. Սէրէնկիւլեան" մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Աննիկ Սարգիսեանին, Լիոնէլ Սարգիսեանին, Տէր եւ Տիկին Լօրան Սարգիսեանին եւ զաւակներուն՝ Վահանին եւ Մելինէին, իրենց ամուսնոյն հօր, մեծ հօր՝ Ալպէր – Արմենակ Սարգիսեանի *մահուան առթիւ: Այս առթիւ շնորհակալութեամբ ստացած է* 100 *Եւրօ Պարպարեան ընտանիքէն, փոխան ծաղկեպսակի:*

Association Arménienne d'Aide Sociale
A.A.A.S.
Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

PROJET «RETOUR AUX SOURCES»

Inauguration d'un Centre d'Accueil et de Formation destiné aux demandeurs d'asile de nationalité arménienne

L'Association Arménienne d'Aide Sociale en coopération avec l'Agence Nationale de l'Accueil des Etrangers et des Migrations et cofinancée par le Fonds Européen pour les Réfugiés a inauguré le 15 novembre 2005 son centre d'accueil et de formation destiné aux nationaux arméniens qui sont en situation irrégulière en France.

Avec ses partenaires, l'AAAS accompagne le retour volontaire en Arménie, en soutenant financièrement et matériellement leur réinsertion par des formations professionnelles et des aides à la création d'entreprises.

Pour tout renseignement contactez-nous à l'adresse suivante :
AAAS - Centre d'Accueil et de Formation
5, rue du Marché Ordener
75018 Paris
Tél. : 01. 42. 63. 32. 45
Fax : 01. 42. 63. 32. 81
E-mail : aaas.retour@free.fr

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ԼՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Լիոն–Վիլլէօրպանի Արաքս մասնաճիւղը, ի գիտութիւն Լիոնի եւ շրջակայից հայ գաղութին կը տեղեկացնէ թէ, Կիրակի Ապրիլ 9, *Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ, մասնաճիւղէն յաւերժ բաժնուող խաչուհիներու հոգիներուն ի հանգիստ:*

Արարողութեան աւարտին կը նուիրուի հոգեճաշ անոնց քաղցր յիշատակին:

Անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ այս հոգեճաշին հաճին հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝
04 78 45 17 55 *կամ* 04 74 04 74 97

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի "Արշալոյս Թադէոսեան" մասնաճիւղի ժողովը Շաբաթ, Ապրիլ 8, *ժամը* 14·30*ին, սովորական հաւաքատեղին:*

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —
un Voyage en Arménie
Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

Section **«SEVAN»** de Vienne

Le Samedi 8 avril à partir de 10 heures
à la Maison de la Culture Arménienne de Vienne
(9 rue du Cirque)

VENTE DE SPECIALITES CULINAIRES ARMENIENNES
préparées par la Croix Bleue des Arméniens de Vienne
A déguster sur place ou à emporter.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Տօն Գալստեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յԵրուսաղէմ
Սկիզբ ժամերգութեանց՝ *ժամը* 8:30*ին:*
Սուրբ Պատարագ՝ *ժամը* 10:30*ին:*
Դռնբացէք՝ *ժամը* 16:00*ին:*
(Քանզի զկատարածի գալստեանն՝ եւ զդատաստանի աւուրն ունի զխորհուրդ)
ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11.–
Յիշատակ Տասն Կուսանաց
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 16·30*ին:*

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Պատարագ՝ *ժամը* 10*ին,*
Դռնբացէք՝ *ժամը* 12*ին:*

***

Ս. ՊՕՂՈՍ–ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Ժամերգութիւն՝ *ժամը* 9*ին,*
Պատարագ՝ *ժամը* 10·30*ին,*
Դռնբացէք՝ *ժամը* 17*ին:*

***

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Ժամերգութիւն՝ *ժամը* 9*ին,*
Պատարագ՝ *ժամը* 10·30*ին,*
Դռնբացէք՝ *ժամը* 17·30*ին:*

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Ժամերգութիւն՝ *ժամը* 8·45*ին,*
Պատարագ՝ *ժամը* 10*ին:*
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ
Կը քարոզէ՝
ԴԱՒԻԹ ԱՐՔ. ՍԱՀԱԿԵԱՆ
Երեկոյեան Դռնբացէք *ժամը* 16*ին:*

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11.–
Յիշատակ Տասն Կուսանաց
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 16*ին:*

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8·30*ին,*
Պատարագ՝ *ժամը* 10*ին:*
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի
Դռնբացէքի *արարողութիւն՝ ժամը* 17*ին:*

***

ՍԷՆ ԼՈՒ – ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 9.–
Պատարագ՝ *ժամը* 10*ին:*
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ
Պատարագի աւարտին՝ Դռնբացէք:

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ ազդերու սակագինը

	€	
Մահազդ	150	(179,40)
Հոգեհանգիստ	135	(161,46)
Շնորհակալիք	135	(161,46)
Հարսնիք-Նշանտուք	135	(161,46)
Ծնունդ	135	(161,46)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% *Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհանուր գումարը):*

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, *ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ* (25 *տող) մահազդներու պարագային եւ* 1/8*րդ* (12-13 *տող) մնացեալին:*

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին Վարչութեան:

ESPOIR POUR l'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...
Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

A la rencontre de l'Arménie et du Karabagh avec l'UCFAF

du lundi 24 juillet au dimanche 6 août
1420 Euros tout compris au départ de Paris
(sauf visas et taxes aéroports)
base chambre double et demi-pension
excursions et visites quotidiennes avec guide francophone
ainsi que circuit 4 jours jusqu'au Karabagh
Renseignements et inscriptions :
UCFAF : 6, Cité du Wauxhall — 75010 Paris
Tél. 01 42 08 76 49 (de 15h à 17h) - Fax 01 42 08 09 70
www.ucfaf.com
Madame YAZIDJIAN — 29-33, avenue Pasteur — 93100 Montreuil
Tél. 01 42 87 95 98 heures bureau

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

RECRUTEMENTS POUR LES SEJOURS DE BELLEFONTAINE (JURA)

ETE : JUILLET ET AOUT

- **Directeurs diplomés BAFD**
- **Animateurs diplomés BAFA ou stagiaire BAFA**
- **Infirmière**
- **Econome**
- **Intendant(e)**
- **Coursier**

Candidatures à adresser à :
CBAF — 17 rue Bleue 75009 PARIS,
par e-mail : cbaf@wanadoo.fr ou par fax : 01 53 34 12 13
Date limite des candidatures : 10 AVRIL

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 8-9
SAMEDI-DIMANCHE
8-9 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.430 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 81e ANNEE — N° 21.430

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՅԴ-Ի ՕՐԻՆԱԳԻԾԸ

Երկքաղաքացիութեան չարչրկուած ,չաչարկուած ու տեղքայլի մէջ ձգուած հարցին մասին օրինագիծ պատրաստելու տրամադրութեամբ հանդէս եկած է Հ.Յ.Դ.ն: Ազգային Ժողովի Հ.Յ.Դ. խմբակցութեան ներկայացուցիչները Ա. Ռուստամեան եւ Լ. Մկրտչեան յայտնած են թէ որոշուած է "Արտերկրի Հայերին Հայաստանի երկքաղաքացիութեան կարգավիճակ տալու մասին" օրինագիծը հանրային քննարկումի ենթարկել նախապէս իբրեւ հայեցակարգ: Մասնագէտներու խումբին հետ մշակուած սկզբունքները կը կարգաւորեն ընտրական իրաւունքը, հարկային պարտաւորութիւնները, զինուորութեան ծառայութիւնը, եւլն.:

***

ԵՐԳԻՉ ԱՆՏՐԷ ՄԱՀՈՒԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԿԸ ՍՏԱՆԱՅ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԷ

Ղարաբաղցի երիտասարդ երգիչը Անտրէ որ Հայաստանը պիտի ներկայացնէ Եւրովիզիոնի երգի մրցումին, համացանցի իր կայքէջին վրայ մահուան ըսպառնալիքներ կը ստանայ Ադրբեջանցիներէ: Այս մասին Ապրիլ 5ին յայտնած է մամուլի ասուլիսի մը, աւելցնելով որ երկար ատեն կարեւորութիւն չէ տուած այդ կարգի սպառնալիքներու:

Նոյնպէս ան լրջութեամբ չի վերաբերիր իր ներկայացնելիք երգին ուղղուած քննադատութիւններուն, քանի որ ինչպէս ըսած է, իր կարծիքը ամէնէն կարեւորն է իրեն համար: Անոնց որոնք չեն սիրած երգը, կ'առաջարկէ մտիկ չընել զայն:

***

ԼՂՀ

ՊԵՏՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման 15րդ տարեդարձին նըշումին համար կառավարութեան որոշումով կազմակերպիչ յանձնախումբ մը կազմուած է. մաս կը կազմեն նախարարներ, տարբեր գերատեսչութիւններու ղեկավարներ: Յանձնախումբը Ապրիլ 4-ին անդրանիկ նիստը գումարած է փոխ վարչապետ Արարատ Դանիէլեանի նախագահութեամբ: Որպէս ծրագիր, ան ըսած է թէ կը նախատեսուի Ստեփանակերտի ուսումնարաններուն մէջ, Վերածնունդի հրապարակին վրայ, զօրամասերուն, շրջաններու կրթական եւ մշակութային հիմնարկներուն մէջ մարզամշակութային տարաբնոյթ հանդիսութիւններ կազմակերպել: Նոյն առիթով հայերէն, ռուսերէն եւ անգլերէն դրոշմաթուղթերու հաւաքածոյ կը հրատարակուի, յուշամետալներ, հեռատեսիլի ֆիլմեր կը պատրաստուին, Արցախեան պայքարի լուսանկարներ, հայ նկարիչներու գործեր կը ցուցադրուին: Այս բոլորէն զատ, Կրթական նախարարութեան եւ Արցախի պետական համալսարանին միասնական ջանքերով Յունիս 20 - 25 միջազգային գիտաժողով կը կազմակերպուի:

ԼԻՈՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ԿԸ ԿԱՌՈՒՑՈՒԻ

Լիոնի մէջ Ցեղասպանութեան յուշարձանին կառուցումը որ դատական վճիռով մը կասեցուած էր անցեալ շաբաթավերջին, Ապրիլ 6ի առաւօտուն վերսկսած է: Շինութեան ընկերակցութիւնը յաջողած է նախորդ իրիկունը վերստանալ արտօնութիւնը որ եւ առնուած էր իսկապէս "Թուքով կպցրած" պատճառաբանութեամբ մը: Ծանօթ է որ Թուրքերը եւ անոնց համակիր ու համախոհ Ֆրանսացիներու խումբ մը ժխտողականութեան ակներեւ կեցուածքով ջանացած էին արգելք ըլլալ շինութեան:

Շինութեան մարմինը լուրը հաղորդելով կը տեղեկացնէ թէ բացումը տեղի կ'ունենայ Ապրիլ 24ին, ինչպէս նախատեսուած էր:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԵՐՋԱՊԷՍ ԴԷՏ ԿԸ ՂՐԿԷ ՋՈՒՂԱ

Գարուն է, արեւը կը փայլի, օրերը երկարած են, բնութիւնը ծաղկած: Ամէն բան բացօթեայ շրջագայութեան փափաք կ'արթնցնէ: Կը նշանակէ թէ հիմնականը կայ արդէն որպէսզի եւրոպացի դէտեր ճամբայ ելլեն վայելելու գարունը: Մանաւանդ որ Նախիջեւանի մէջ քանդուած հայկական պատմական գերեզմանատան պատրուակն ալ կայ, արեւելքի երկինքն ու արեւը վայելելու: Ուրեմն, Եւրոպական Խորհրդարանէն վեց երեսփոխաններու խումբ մը պիտի երթայ տեղւոյն վրայ ստուգելու կատարուածը: Այցը հաւանօրէն տեղի կ'ունենայ Ապրիլի վերջին օրերուն:

Աւելորդ չէ հաւանօրէն յիշեցնել թէ Ջուղայի հայկական գերեզմանատան վերջին փշուրներն ալ Արաքսը տարած, անհետացուցած է ու վայրը ներկայիս կը գործածուի որպէս ադրբեջանցի զինուորներու նշանառութեան դաշտ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՀԱՐՑԵՐԸ

Մարտ 30ին կլոր սեղանի մը քննարկումի նիւթ եղած են Վիրահայոց թեմին հարցերը, յատկապէս իրաւաբանական կարգավիճակը թեմապատկան վեց եկեղեցիներուն վերադարձը: Հանդիպումին մասնակցած են թեմին, Վրաստանի խորհրդարանին, Ժողովրդական պաշտպանի գրասենեակին եւ շարք մը հանրային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Վիրահայոց թեմը կը ձգտի երկրի կառավարութեան հետ համաձայնագիր կընքելու որով թեմը ճանչցուի իրաւաբանական անձնաւորութիւն եւ ըստ այնմ սահմանուին անոր իրաւունքներն ու պարտականութիւնները: Ինչ կը վերաբերի հայկական եկեղեցիները վերադարձնելու խնդրին, մասնակիցները ցաւ յայտնած են որ վրաց հանրութիւնը ժխտական մօտեցում ունի: Շեշտուած է նաեւ որ կառավարութիւնը քայլերու չի ձեռնարկեր փոքրամասնութիւններու խընդիրները կարգաւորելու ուղղութեամբ, որպէս վերջին ճար ձգելով Ստրազպուրկի ատեանին կատարուելիք դիմումը:

ՏԽՐՈՒԻՆԻ

ՆԱԶԱՐԷԹ ՊՇՏԻԿԵԱՆ

Ապրիլ 24ին դրեթէ երկու չարաթ մընացած, "վերջին"ներէն մէկն ալ մեկնեցաւ, Զէյթունի լեռներուն վրայ բացուած մօտ հարիւրամեայ կեանքի մը փարիզեան վերջակէտով: Նազարէթ Պշտիկեանի դարը եղաւ անոնցմէ մէկը որ ամփոփած էր սարսափին, թափառումին, դառնութեան, կարօտին ամէնէն ամէնէնը: Նազարէթ Պշտիկեան իր մահկանացուն կընքեց Ապրիլ 5ին, փարիզեան հիւանդանոցի մը մէջ:

1915ին եօթը-ութ տարեկան պատանի, կեանքի առաջին փորձառութիւններէն մէկը ըրած էր մահուան հետ տարագրութեան ճամբաներուն վրայ որոնք անցեր էին արհաւիրքին բոլո՛ր կայաններէն, հասնելու համար Տէր Զօր: Անկէ ետք հազար-հազար փշուրներէն մէկն ալ եղած էր իր կեանքը. աստանդական անտէրի թափառում, չորս օր հոս, քանի մը ամիս հոն, դիպուածները զինք տարեր էին քիչ մը ամէն տեղ ուր որ հայկական խլեակներ կային, տարիներ ետք վերադարձի առիթ ալ տալով: Կարծես կեանքը ուզեր էր չափել անոր դառնութեան բաժակին խորութիւնը. զինք ականատեսն ու մասնակիցը ըրեր էր Կիլիկիոյ ֆրանսական գրաւումին, յետոյ տեսնելու համար այդ մխիթարութեան չքացումն ալ: Հեգնանքի նշոյլով մը ժպտուն աչքերուն հետ ամբողջական հակասութիւն կը կազմէր ցասում պարտկած ձայնը երբ կը պատմէր թէ ֆրանսական զօրաբաժինները գիշերով լքեր էին Կիլիկիան, ձիերուն ոտքերը քուրջով փաթթած, որպէսզի իրենց մեկնումը ուշադրութիւն չգրաւէր: Իրականութի՞ւն էր պատմածը,թէ հայկական դառնութեամբ յօրինուած պատկեր: Ինչ որ ալ ըլլայ պարագան, այդ դրուագը լայն չերտ մը կ'ամփոփէր վերապրած Հայուն ո՛վ գիտէ քանիերորդ պատրանքէն: Մարաշ, Հալէպ, Պէյրութ փողոցէ փողոց, որբանոցէ որբանոց, եւ Երուսաղէմը անիծեալ տարիներու իր բաժինին վերջին կայքը եղած էր: անկէ երեսունական տարիներուն սկիզբը հասած էր Ֆրանսա. Իսիի մէջ բնակութեան շուրջ երկու տասնամեակ ետք, 1943էն ի վեր, ինչպէս կը սիրէր ըսել, հաստատուած էր Սաքրէ Գէօրի շուքին տակ, Փարիզի 18րդ թաղամասը:

Երուսաղէմ գտնուած տարիներէն համակրած էր Հնչակեան կուսակցութեան ու 1935ին անդամակցած: Այդ տարիներուն Հնչակեան մասնաճիւղեր կային Իսիի, Մէօտոնի, Գլամարի, եւլն. մէջ. միայն Փարիզի կոմիտէն 300 անդամ ունէր: Հասած էր կուսակցութեան ղեկավարութեան: 1999 Ապրիլին իր 90ամեակին առթիւ կուսակցութիւնը շքանշանով մը պատուեց զինք:

Հայկականին երկրորդ առանցքը թատրոնը եղած էր իր մօտ. բեմ բարձրացած էր նախ արուարձաններու մէջ, յետոյ փարիզեան բեմերու վրայ խաղացած Խորէն Փափազեանի կազմակերպած ներկայացումներուն մէջ, Արտաշէս Գմբէթեանի, Գրիգոր Վահանի, Տէրվիշեանի հետ: "Թշուառները", "Նամուս"ը, " Ցո՞ երթաս"ը, "Ուշ լինի, նուշ լինի"ն առաջին յիշածներէն կ'ըլլային այդ թատերգութիւններէն: Յատուկ հպարտութեամբ մը կ'աւելցնէր թէ Արաբօն, մշեցի Արաբօն մարմնաւորած է: Խաղընկեր ունեցած է նաեւ Ազնաւուրեանները. Միշան, Քնարիկը, Այտան:

Վերջին տարիներուն տարիքին հետ առողջական որոշ հարցեր զինքը հեռու պահած էին ազգային կեանքէն որուն ամէնէն հաւատաւոր ներկաներէն եղած էր ամբողջ տասնամեակներ, Զէյթունէն չեչտ մը, երանգ մը տանելով արարողութեան, հանդիսութեան, զուարճութեան մեր սրահները:

Այսօր իր մեկնումով Զէյթունն ալ քայլ մը եւս կը հեռանայ մեր իրականութենէն, քիչ մը եւս թաղուելու համար պատմութեան հատորներուն մէջ: Բայց ինք ոչ մէկ կասկած որ հոն վերադարձած է արդէն ու հոգին կը սաւառնի իր կարօտին լեռներուն վրայ որոնցմէ ո՛չ մէկ ուժ այլեւս կրնայ վտարել զինք:

***

Յուղարկաւորութեան մանրամասնութիւնները յետագային:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

Ք Ա Ն Ի Մ Ը Տ Ո Ղ Ո Վ

ՖՐԱՆՍԱՅԻ ուսանողները կը շարունակեն իրենց նոր քաղաքականութիւնը որ կը կայանայ արգելքներ հաստատելու մէջ ուր որ կրնան: Ապրիլ 6ին, դէպի Օրլիի օդակայանը տանող ճամբաները փակուած էին եւ ճամբորդները, ճամպրուկ ի ձեռին, քալելով կ'երթային դէպի Օրլի: Նման արգելքներ եղած են քիչ մը ամէն կողմ: Նոյն օրուան ընթացքին գըրաւուած են Կառ տիւ Նորի, Կառ տը լ'Էսթի, Կառ Սէն Լազարի գիծերը, արգելք հանդիսանալով կառախումբերու երթեւեկին, մինչ ապահովութեան ուժերը կը պարպէին եւ արգելքները ժամանակաւոր բնոյթ ունէին: Ամբողջ երկրին մէջ նման գործողութիւններ՝ "գու տը փուէն" որակուած, բազմացած են ինչ որ կը հաստատէ որ ուսանողական շարժումը չի մեղմանար, ընդհակառակն աւելի արմատական բնոյթ ունի: Լիլ, Փօ, Գան, Թուլուզ, Մարսէյլ նոյնպէս գոհ գացին նման գործողութիւններու: Ցուցարարներն ալ շարունակած են իրենց պահանջները տողանցելով փողոցէ փողոց, ինչպէս Ապրիլ 6ին, Սէն Լազարէն Կառ տիւ Նոր, ուր 2000 ուսանող կը կրկնէին նոյն լոզունգները՝ "Սէ.Փէ.Ը.ն պէտք է վերնայ, կարելիութիւններու հաւասարութեան օրէնքն ալ եւ Սարքոզիի օրէնքը գաղթի վերաբերեալ": Միջա-

(Շար.ը Դ. էջ)

ՌՈՒԱՆՏԱՅԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՅԻՇԵԼՈՎ ՀԱՅԿԱԿԱՆԸ

Ապրիլ 7 Թուականը Ռուանտայի Թութսիներուն ցեղասպանութեան ոգեկոչումի օրն էր (1994): Այդ առիթով հրապարակուած հաղորդագրութիւն մը նիւթ ըրած է ժխտողականութեան երեւոյթը որուն թիրախներէն է Հայկական Ցեղասպանութիւնը, Թուրքիոյ քարոզչութեամբ որուն սահմանները ամէն օր կ'ընդլայնին:

Ի տես այդ երեւոյթին, ստորագրողները կ'անդրադառնան Ֆրանսայի մէջ 1995 Մարտ 23ին հռչակուած օրէնքին որ պատժելի արարք կը նկատէր նացիներու գործած ցեղասպանութեան ուրացումը: Կը պահանջեն որ այդ օրէնքին սահմանները ընդլայնուին ու ան ընդգրկէ հայկական եւ ռուանտական ցեղասպանութիւններն ալ:

Հաղորդագրութիւնը ստորագրած են Հրէական աշխարհայար համայնքին կեդրոնը, Պելժիոյ Հայերուն կոմիտէն, Հայ Դատի Եւրոպայի կեդրոնը, "Յիշողութիւն եւ արդարութիւն"ը, Ցեղապաշտութեան, հակասեմականութեան, օտարատեացութեան դէմ շարժումը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ուղղագրութեան բանավէճին մէջ կարեւոր ներդրում մըն է Երեւանի պետական համալսարանի դասախօս Արշակ Մադոյեանի 2002ին գրուած եւ վերջերս լոյս տեսած փոքրածաւալ հատորը՝ "Հայագիտութեան դասականները միասնական ուղղագրութեան մասին" (Երեւան, 2005), որուն նուիրուած էր տիկ. Հիլտա Գալֆայեան – Փանոսեանի գրախօսականը ("Յառաջ", Մարտ 1 եւ 2, 2006): Գրախօսին արծարծած որոշ միտքեր մեզ մղեցին մտածելու յաւելեալ անդրադարձի մը մասին:

Հատորը կարեւոր է զոյգ պատճառներով. –

ա) Հեղինակը գիտնականին վայել բարեխղճութեամբ կը քննէ փաստերը եւ զուսպ կերպով եզրայանգումներու կը յանգի, առանց աւելորդ հռետորականութեան եւ առանց անձնական վիրաւորանքի դիմելու ընդդիմախօսներուն նկատմամբ:

բ) Առաջին երկու բաժիններուն պատմական ամփոփ ակնարկը, ուր նորութիւնները չեն պակսիր, համոզիչ կերպով ցոյց կու տայ, որ 1922էն սկսեալ բազմաթիւ բաներ ծուռ հայելիի մէջ ներկայացուած են եւ պէտք ունին ճիշդ հասկցուելու:

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆԻ ԴԵՐԸ

Շատ խօսուած է Մանուկ Աբեղեանի դերին մասին 1922ի ուղղագրութեան փոփոխութեան մէջ: 1913ին ան ներկայացուցած էր զանազան վիճելի կողմերով ծրագիր մը, իսկ 1922ին առաջարկած է ուրիշ նախագիծ մը, աւելի եւս վիճելի: Ինչպէս կ'ըսէ Մադոյեան, անոնց միջեւ "հսկայական տարբերութիւններ" կան (էջ 27): 1913ի Աբեղեանի այն իրաւացի պնդումը, թէ «մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ(...): (...) Եթէ որեւէ փոփոխութիւն պէտք է մեր ուղագրութեան մէջ աւելի խառն դրութիւն մտցնի եւ մեր գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի», ինչպէ՞ս կրնայ 180 աստիճան շրջադարձով վերածուիլ 1922ի "բարեփոխում"ին:

1913ի տեսական ու գործնական առաջարկներուն գրեթէ նոյնական հաւասարակշռութիւնը ցոյց տալով, Մադոյեան հարց կու տայ, թէ "այսքանից յետոյ կարելի՞ է պնդել, թէ Մ. Աբեղեանն ինքն է 1922 թ. հրամանագրի նախաձեռնողը: Բացի օ–ո–ին վերաբերող դիտողութեան (...), Աբեղեանի մնացած բոլոր դիտողութիւնները անտեսուած են 1922 թ. հրամանագրով» (էջ 33):

Սակայն, համաձայն ենք Հ. Գալֆայեան–Փանոսեանի հետ թէ «իր իսկ տեսակէտներուն հակասող եւ առաւելագոյն փոփոխութիւններով անընդունելի ուղագրութեան մը առաջարկը ներկայացնելու մեղքը Աբեղեանինն է միայն»: 1922ի հրամանագրին նախաձեռնողը Աբեղեանը չէր, սակայն Յունուար 1921ին, այսինքն, Հայաստանի խորհրդայնացումէն մէկ ամիս յետոյ, օրուան Կրթութեան նախարար ("Լուսաւորութեան ժողովրդական կոմիսար" լուսժողկոմ) Աշոտ Յովհաննիսեանի գումարած յատուկ խորհրդակցութեան ան ներկայացուցած էր "Ուղղագրութեան ռեֆորմը" խորագրուած զեկուցում մը, ուր արդէն խտացած էր այն բոլորը, որ տարի մը ետք գործադրութեան մէջ պիտի դրուէր (1): Ինչո՞ւ, տեղի ունեցած է շրջադարձը: Յարց յայտնի չէ:

«ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՀԵՂԻՆԱԿՆ Է»

Աւելի քան ութսուն տարիէ ի վեր, "հայաստանեան" ուղղագրութեան թեր ու դէմ գրուած յօդուածներուն եւ գիրքերուն թիւը մեծաքանակ է: Հիլտա Գալֆայեան-Փանոսեան դասական ուղղագրութեան վերականգնումին ամէնէն եռանդուն պաշտպաններէն մէկն է, ինչպէս եւ անոր դէմ արտայայտուողներուն ամէնէն յարձակունակ քննադատներէն մէկը: Մադոյեանի կողմէ աւանդական ուղղագրութեան ("է"ի, "օ"ի եւ "յ"ի) վերականգնումի առաջարկը զայն մղած է յայտնելու, թէ «Արշակ Մադոյեան առաջին հայաստանցի հեղինակն է, որ իր այս գիրքով կը հակադրուի հայաստանցի լեզուաբաններու անխախտ պնդումներու(...) Կարելի է ըսել, ուրեմն, որ մեր մղած աննկուն պայքարը վերջապէս իր արդիւնքը տալ սկսաւ եւ պատմական իրողութիւնը վերջապէս տեղ գտաւ հայաստանցի հայագէտի մը գիրքին մէջ» ("Յառաջ", Մարտ 2):

Կը թուի, թէ մոռացութեան մատնուած է այն "հայաստանցի հայագէտ"ը, որ այդ պնդումները քննադատած էր խորհրդային շրջանին եւ որ արդէն 1979ին արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի երկճիւղումը քննարկող եւ անոր մասին նկատումները եզրափակող գիրքին վերջի պարբերութիւնը շարադրած էր հետեւեալ կերպով.–

«(...) Օգտակար կը լինէր նաեւ ուղղագրական բաժանումի վերացումը, անշուշտ, դասական ուղղագրութեան հիմքի վրայ (որ նշանակում է ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՆԷ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ) (գլխագրումը մերն է. Վ. Մ.)» (2):

Միեւնոյն հայագէտը՝ հանգուցեալ Ռաֆայէլ Իշխանեանը, հանգամանօրէն անդրադարձած էր ուղղագրութեան խնդրին 1983ին հրատարակած "Մեր լեզուական հիմնահարցը" երկրաշունչ յօդուածով, որ լայնօրէն արտատպուած էր Սփիւռքի մամուլին կողմէ, իսկ առանձին գրքոյկով՝ Նոր Ջուղայի մէջ: Արցախեան շարժումի սկիզբէն, Ռ. Իշխանեան ո՛չ միայն գրած էր դասական ուղղագրութեան վերականգնումի ի նպաստ, քննադատելով ու քննադատուելով, այլեւ հրատարակած էր «Դասական ուղղագրութեան կանոններ» (Երեւան, 1991) հատորիկը եւ խմբագրած՝ այդ ուղղագրութեամբ տպուած առաջին պարբերականներէն մէկը, եթէ ոչ առաջին–ը՝ "Լուսաւորիչ"ը: Թերեւս սխալ չէ ըսել, թէ վերջին 15ամեակին Հայաստանի մէջ լսուող ձայներէն շատերը իրենց ներշնչումը կը պարտին շարժումին առաջնորդ Ռ. Իշխանեանի (3):

Ա. Մադոյեան 1992ին գրած ու 1999ին դասական ուղղագրութեամբ լոյս ընծայած էր "Խորհուրդ մեծ եւ սքանչելի" վերնագրով հայ մատենագրութեան դասագիրքը, հացէապրուած՝ ուսանողութեան, լուսահոգի Մեսրոպ Արք. Աշճեանի հովանաւորութեամբ (4): Բանաւէճը նորութիւն մը չէ, ուրեմն, դասական ուղղագրութեան ջատագովներուն շարքին եւ հաւանաբար տիկ. Փանոսեանի վերջին տարիներու բազում յօդուածներուն ընթերցումը իրեն անհրաժեշտ չէ եղած այդ եզրակացութեան յանգելու համար:

«ՓԱՓԿԱՆԿԱՏՈՒԹԻՒՆ»

Յաւօք, բանավէճին ընթացքին փոխադարձաբար մերթ գործածուած անվայել ածականները, հեգնական խօսքերը եւ անձնական վիրաւորանքները ոչինչ իրագործած են, բացի անհանդուրժողութեան մթնոլորտը խորացնելէ եւ անվստահութիւն սերմանելէ: Օրինակները բազում են, թէ՛ մէկ եւ թէ միւս կողմի հրապարակումներէն:

Հեղինակը իր գիրքին մէջ կ'օգտագործէ "Խորհրդային ուղղագրութեան անյարմարութիւնները" խորագիրը (էջ 95) եւ դիտել կու տայ, որ "վերոյիշեալ պնդումը, թէ խորհրդային դարաշրջանում լոյս տեսած գրականութիւնը իր ծաւալով եւ արժէքով չի զիջում անցած աւելի քան 1500 տարիների արտադրանքին՝ պարզապէս "բարի ցանկութիւն" է, որ թիւրիմացութեան մէջ է գցում իրենց՝ ցանկացողներին» (էջ 85):

Յամի Տեառն 2006ին, շատոնց հասունցած է բանավէճի մշակոյթի մը անհրաժեշտութիւնը, ուր ընդդիմախօսը չդիտուի որպէս թշնամի, այլ՝ տարակարծիք կողմ: Ինչպէս նշեցինք, Մադոյեանի նոր հատորին արժանիքներէն մէկը ճշմարտութիւն թելադրելու իրողութիւնն է՝ առանց դիմելու պոռչտուքի կամ վիրաւորական խօսքի: Հեղինակը մեզի կը յիշեցնէ, որ «բանավիճում ենք, շատ յաճախ չյիշելով, որ վիճելիս թոյլատրելի համարուող զէնքերն են բացառապէս փաստը եւ տրամաբանութիւնը: Հակառակ դէպքում այդ գործողը լինքնանըպատակ է դառնում» (էջ 77. ընդգծումը իրն է):

Վերոյիշեալ երկու արտայայտութիւնները գրախօսին կողմէ "փափկանկատութիւն" կը կոչուին, թերեւս որովհետեւ անոնց փոխարէն աւելի հուժկու բառեր չեն գործածուած: Սակայն, կը կարծենք, որ շատ աւելի հաւանական է, որ առաւել ազդու եւ համոզիչ ըլլայ թելադրող, քան բարձրաղաղակ ըսուած ճշմարտութիւն մը: Երբեմն էականը ձեւն է եւ ո՛չ թէ խորքը:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ ՄԸ

Մադոյեան իրաւացիօրէն կը յիշեցնէ ընթերցողին, թէ որքա՜ն անհարթութիւններ ունին այն լեզուները, որոնք հայաստանեան ուղղագրութեան այնքան չեփորուած "մէկ հնչիւն, մէկ գիր" իբրեւ թէ կատարեալ սկզբունքին փոխարէն, ունին մէկ հնչիւնի դիմաց մէկէ աւելի գիրեր, եւ այսուհանդերձ ուղղագրական "բարեփոխում"ի չեն դիմեր: Դժբախտաբար, իր բերած օրինակները մասամբ խոցելի են (էջ 94):

Այսպէս, "Ֆրանսերէն՝ факвлтэт, կարդալ факвлтэ" ճիշդ չէ (5): Ֆրանսերէն բառը կը գրուի faculté: Բառը չըփոխուած է գերմաներէն fakultätին հետ, որմէ կու գան ռուսերէնն ու, վերջինիս ճամբով, արեւելահայերէն факвлтэтը:

Ինչ կը վերաբերի "անգլերէն՝ Isaak, կարդալ Այզէկ"ին, թէեւ ճիշդ են տառադարձութիւնն ու հնչումը սակայն վիճելի է շարունակութիւնը, թէ՝ «ոչ մի Անգլիացի չի տրտնջում եւ պահանջում, որ Այզէկ կարդալու համար Այզէկ գրեն, որովհետեւ դրանով կը խախտուի գարաւոր աւանդութիւնը, կը կորչի բառի կենսագրութիւնը»: Աւանդութենէն ու բառի կենսագրութենէն անդին, կ'արժէ յիշեցնել, որ եթէ Isaac աստուածաշնչական անունը անգլերէն Aizek գրուէր, վերջինս պիտի հնչուէր, մօտաւորապէս, "Էյզըք" եւ ո՛չ թէ "Այզէք":

ՄԻԱՍՆԱԿԱՆԱՑՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Մադոյեան դասական ուղագրութեան վերականգնումին չի հետամտիր, այլ՝ մերձեցումի փորձի մը: Առ այդ, ունի երեք առաջարկներ:

Առաջինը կը վերաբերի "բաղաձայն ու–ին", այսինքն, բաղաձայնէն ետք "վ" հնչիւնի գրութեան որպէս "ու": Ըստ հեղինակին տեսակէտին, «նախընտրելի ենք համարում երկրորդ սկզբունքը՝ բաղաձայն ու–ն գրել ւ. հովւում է, հոլովւում է» (էջ 101): Հոս, սակայն, քիչ մը շփոթ է իր ձեւակերպումը, քանի որ իր օրինակները երկու յաջորդական "ու"–երու բայական գործածութեան կը վերաբերին: Գրախօսը գրած է, թէ «ինք [այսինքն՝ Ա. Մադոյեանը. Վ. Մ.] կ'առաջարկէ ընդունիլ պարսկահայ գրելաձեւը եւ բաղաձայնին յաջորդող "ուա, ուէ ուի, ուը, ուո, ուու" տառակապակցութիւնները իրենց նման գրել(...)»: Հայրենի բանասէրին սեղմ տողերուն մէջ բացայայտ որեւէ ակնարկութիւն չկայ այդ ուղղութեամբ:

Բառավերջի յամր "յ"ին մասին, Մադոյեան կ'առաջարկէ հրաժարիլ անկէ (էջ 103): Հ. Փանոսեան կը նշէ, որ յատուկ անուններուն չգոյ "յ"ն կը վերականգնուի սեռական հոլովին մէջ (Ագլիայի, Եւրոպայի) եւ նոյնը կարելի է կիրարկել հասարակ անուններուն պարագային: Սակայն, կ'արժէ յիշել, որ արեւմտահայերէնի "իա"ով վերջացող յատուկ անունները սեռական հոլովին մէջ կը դառնան "իոյ", այսինքն, Անգլիոյ, Իտալիոյ, ուստի կ'ենթադրենք, որ նման պարագային պէտք է գրել Անգլիո, Իտալիո: Բաց կը մնայ գրաբարէն եկող միւս հոլովումներուն հարցը (լոյս–լուսոյ, Պոլիս–Պոլսոյ, եկեղեցի–եկեղեցւոյ), որ այս մեկնակէտով պէտք է դառնան լուսո, Պոլսո, եկեղեցւո:

Երրորդ առաջարկը սկզբնագիր "յ"ին եւ բառամէջի "է"ի եւ "օ" ուղղագրութեան վերականգնումն է, որ առարկութիւն չունի (էջ 104): Վերջին հաշուով, արեւմտեան որեւէ լեզու իր ուրոյն ուղղագրական դժուարութիւնները ունի. եթէ գրագէտ մարդ մը կրնայ անթերի սորվիլ այդ ուղղագրութիւնները, ինչո՞ւ չկարենայ սորվիլ բառասկիզբի հ–յ, բառամէջի է–ե եւ օ–ո զոյգերուն ուղղագրութիւնը:

Իր նախագիծին մէջ, Մադոյեան հաւանաբար կրնար ընդգրկած ըլլալ երեք ուրիշ կէտեր՝ բառավերջի "է"ին, "իւ" ու "եա" տառախումբերուն եւ ձայնաւորէ ետք "ւ"ի վերականգնումը: Անոնց կիրարկումը ընդամէնը քանի մը ուղղագրական կանոններու իմացութիւնը կ'ենթադրէ եւ գլուխկոտրուկ մը չէ հայերէն խմացող ոեւէ մարդու համար:

Ըստ Մադոյեանի, «մեր լեզուական քաղաքականութեան արդի պայմանները թելադրում են սահմանափակուել չափաւոր փոփոխութիւններով եւ հաշուի առնելով անցեալի ու ներկայի արհամարհելի փորձն ու լեզուի զարգացման ընթացքը՝ աստիճանաբար վերացնել թէ՛ աւանդական, թէ՛ խորհրդային ուղղագրութեան անհարթութիւնները եւ տասնամեակներ անց հասնել միասնական – համազգային ուղղագրութեան, որ Ն. Ադոնցից ու Մ. Աբեղեանից սկսած համարել են կենսականօրէն կարեւոր խնդիր» (էջ 104 – 105): Այսինքն, ի տարբերութիւն 1922ի "յեղաշրջական" հրովարտակին, հեղինակը կ'առաջարկէ 1940ի բնաշրջական ճանապարհը: Շարունակել անկէ ետք կիսատ մնացած գործը, ոչ-մօտաւոր ապագային միասնականութեան հասնելու հեռանկարով:

Որքա՞ն իրատեսական է այս առաջարկը: Մարդ կրնայ զուգահեռի կարգով յիշել, որ սպաներէնի պարագային, Լեզուի Արքայական Ակադեմիան (կեդրոնը՝ Մատրիտ) լեզուական քաղաքականութիւնը կը վարէ եւ իր որոշումները ի զօրու են սպանախօս ամբողջ աշխարհի տարածքին: Ան հաշուի կ'առնէ թէ՛ ամէնօրեայ գործածութենէն բխած հարցերը եւ թէ տեսական խնդիրները: Կարելի՞ է ենթադրել, որ համանման մարմին մը ապագային զբաղի ուղղագրութեամբ, ամբողջ հայախօս աշխարհին պարտադրուող որոշումներով, եւ հասնի թէ՛ հին խնդիրները լուծելու եւ թէ նորերը պատշաճ քննարկումի ենթարկելու: Կը մնայ ուսումնասիրել հարց մը:

Ըստ Հիլտա Գալֆայեան – Փանոսեանի, հեղինակը "միջին ճամբայ մը գտնել ուզած է" հայաստանեան եւ դասական ուղղագրութիւններուն միջեւ (6): Թերեւս: Սակայն, չենք կարծեր, որ ան տուրք տուած ըլլայ "Հայաստանի մէջ ընդհանրացած կարծիքին", թէ սփիւռքահայերն ալ զիջումներ պէտք է ընեն: Համոզուած ենք կարծելու, որ ան պարզապէս ձգտած է ուղղագրական հարցերու աստիճանական լուծումին՝ համերաշխ կերպով, քանի որ դասական ուղղագրութիւնը եւս կատարեալ չէ:

Արդարեւ, կը խորհինք, որ 1913ի Հ. Գաբրիէլ Մէնէվիշեանի յայտարարութիւնը, թէ "ուղղագրական խնդիր չկայ հայուն համար" (միայն կայ՝ "արեւելեան հայերէնը" գործածողներուն համար) (7) առաջնորդուած էր զուտ աւանդապահ ոգիէ մը: Ինչպէս բազմիցս ըսած ենք անցեալին, խնդիրը քաղաքական է եւ կը կարօտի քաղաքական լուծումի մը, որ ներկայ պայմաններուն տակ անիրական բաղձանք մըն է լոկ: Մադոյեանի հատորը, ամէն պարագայի, յաջող քայլ մըն է լուսաբանելու համար խնդրին երբեմն մութ ծալքերը:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Նիւ Ճըրզի

---

(1) Մանրամասն տե՛ս. Լ. Գ. Խաչերեան, *Հայոց համազգային մաշտոցեան համակարգուած եւ միակերպ ուղղագրութեան պատմութիւնը* (Ե. – Ի. դարեր), Լոս Անճելըս, 1999, էջ 265 – 282):

(2) Ռաֆայէլ Իշխանեան, *Նոր գրական հայերէնը ԺԷ. – ԺԸ. դարեր*, Երեւան, 1979, էջ 144:

(3) 1992ին հեռացուած է Երեւանի պետական համալսարանէն՝ "դասական ուղղագրութեան պատճառով" (Ռաֆայէլ Իշխանեան, *Իրական պատմութիւններ*, Երեւան, 2004, էջ 107):

(4) Դասական ուղղագրութեամբ հրատարակութիւնը դժուար թէ Մեսրոպ Սրբազանէն պարտադրուէր, քանի որ ան հովանաւորած է թէ՛ դասական եւ թէ հայաստանեան ուղղագրութեամբ գիրքեր:

(5) Հ. Գալֆայեան – Փանոսեան, իր մէջբերումէն դուրս ձգելով այս օրինակը, չէ անդրադարձած անոր ("Յառաջ", Մարտ 2, 2006, էջ 2):

(6) Մասնակի փոփոխութեան առաջարկներ բրած էին Ռ. Իշխանեանը՝ 1983ի յօդուածաշարքին, եւ Հ. Լեւոն Զէքիեանը՝ 1987ի զեկուցումին մէջ (տե՛ս. Հ. Լեւոն Զէքիեան, *Հայաստանում... ներտողային*, Լոս Անճելըս, 2001, էջ 195):

(7) Խաչերեան, *Հայոց համազգային...* էջ 245:

ՊՈԼԻՍ

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԵՍԱՐԻՈՅ, ԻՍՔԵՆՏԵՐՈՒՆԻ, ՎԱԳԸՖԳԻՒՂԻ ՄԷՋ

Պոլսոյ Մեսրոպ Պատրիարքը հաւատացեալներու խումբով Մարտ 24ին ներկայ գտնուած է Կեսարիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ մատուցուած պատարագին եւ քարոզած է:

Պատարագէն առաջ Պատրիարքը ընդունած է ու պատասխանած տեղացի լրագրողներու հարցումներուն. անոնք չօշափած են վագըֆներու տնօրէնութեան կողմէ ոչ մահմետական փոքրամասնութիւններու ազօթատեղիներուն նորոգութեան նիւթը, Իրաքի պատերազմը, Կեսարիոյ եկեղեցիին վրայ գործուած յարձակումը, եւլն.:

Եկեղեցական արարողութենէն ետք Մեսրոպ պատրիարք այցելած է քաղաքին կուսակալին. հանդիպումին ներկայ գտնուած է քաղաքին ապահովութեան տնօրէնն ալ: Պատրիարքը այդ առիթով արծարծած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին վագըֆին ղեկավարներուն հարցը: Ըսած է թէ ներկայիս Պոլիս ապրող կեսարացի գործարարներէ հարկ է ընտրուին անոնք, մանաւանդ որ նեկայի կազմը դժգոհութեան պատճառ է. տարիներէ ի վեր ոչ հաշիւ կը ներկայացնէ, ոչ Պատրիարքարանէն ամէն ամիս կանոնաւոր կերպով ուղարկուած գումարներուն մասին համարատու կ'ըլլայ: Կուսակալը ըսած է թէ առաջին անգամ կը տեղեկանայ հարցին ու խոստացած է հետաքրքրուիլ:

Կուսակալէն ետք Պատրիարքը այց մըն ալ տուած է քաղաքապետին:

Կեսարիայէն անցած է Գ. Կիւլպէնկեանի ծննդավայրը Թալաս ուր այց մը տըւած է ներկայիս մզկիթի վերածուած նախկին հայկական եկեղեցիին, որպէս կուսակալութեան շէնք գործածուած Կիւլպէնկեաններու բնակարանին:

Նոյն երեկոյեան Մեսրոպ Պատրիարք ու հետեւորդները գացած են Իսքէնտէրուն, հոն դիմաւորուած Ս. Քառասուն Մանկանց եկեղեցիին վարչականներուն կողմէ:

Յաջորդ օրը, Մարտ 25ին, պատարագ մատուցուած է նոյն եկեղեցիին մէջ ուր Պոլիսէն գացողներու հետ ներկայ գտնուած են տեղացի Հայեր ու Հաթայի Թաղերէն, գիւղերէն հասած բազմութիւն մը:

Ս. Պատարագէն ետք այց մը տրուած է գերեզմանատան ուր Գրասէր Հայոց 1935ին կանգնած կոթողին առջեւ Պատրիարքը հոգեհանգստեան պաշտօն կատարած է:

Պահքի կերակուրներով կէսօրուան ճաշէն ետք խումբը այց մըն ալ տուած է Գըրըքխանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին որուն կիսափուլ վիճակը խոր սրտաբեկում պատճառած է: Հաւատացեալներու երգած "Հայր մեր"էն ու "Տէր ողորմեա"յէն ետք Մեսրոպ Պատրիարքը իր հետեւորդներով գացած է Անթաքիա, այցելած կուսակալին. անոր ուշադրութեան յանձնած է Գըրըքխանի եկեղեցիին հարցը: Քաղաքավարական այց մը տըւած է քաղաքապետին ալ:

Մեսրոպ Պատրիարք օրուան վերջին այցը կատարած է Անթաքիոյ օրթոտոքս Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցիին:

Մարտ 26ին պատարագ մատուցուած է Վագըֆ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին: Պատրիարքը նախապէս գացած է Մուսա լերան գիւղերէն Պիթիաս, Խըտըրպէկ, Եողունօլուք: Պիթիասի մէջ այցելած է Ս. Աստուածածին եկեղեցին որ նորոգութեան մէջ է տեղացի մահմետականի մը խնամքով:

Վագըֆգիւղի պատարագէն ետք տեղւոյն գերեզմանատան մէջ հոգեհանգիստ կատարուած է համայն Մուսա լերան գիւղերուն հանգուցեալներուն յիշատակին:

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՊԼ. ՕՏՏՈՅԻ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

ՄԱՐՍԷՅԼ ("Յառաջ") .–

Ապրիլ 2ին, Մեծ Պահոց Զ. Կիրակին, Պլ. Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ հոգեւոր հովիւ Մակար Ա. Քհնյ. Նաճարեան պատարագ մատոյց եւ ապա կատարեց Արեւագալի կարգը: Ֆրանսահայ Կապոյտ Խաչի տեղւոյն "Լէօլա Սասունի" մասնաճիւղը յաւարտ եկեղեցական արարողութիւններուն կազմակերպեց մերձակայ Թաղապետական սրահին մէջ Միջինքի ճաշ մը: Ձեռնարկին մասնակցեցան անդամուհիները իրենց ընտանիքներով, ինչպէս նաեւ համակիրներ եւ բարեկամներ:

Մակար Ա. Քհնյ. Նաճարեան օրհնեց սեղանները, վերյիշեցուց Մեծ Պահոց աւանդութիւնները եւ գնահատեց տիկիններու իրենց հաստատակամութեան եւ հաւատարմութեան համար հանդէպ եկեղեցւոյ սրբութիւններուն, կարգերուն եւ ժողովրդական բարքերուն:

Մասնաճիւղին կողմէ Մարի-Ռոզ Սահակեան բարի գալուստի եւ շնորհակալութեան խօսքեր արտասանեց:

Կարօ Յովսէփեան, Մարսէյլի 13րդ եւ 14րդ Թաղամասերու քաղաքապետը, հայերէն եւ ֆրանսերէն խօսեցաւ Կապոյտ Խաչի տասնամեակներու ներկայութեան եւ գործունէութեան մասին հայ կեանքէն ներս, յատկապէս դաստիարակչական, կրթական, ընկերային բնագաւառներուն մէջ, եւ այսօրուան ներդրումը Հայաստան: Յարգանքի եւ ակնածանքի խօսքեր ունեցաւ կազմակերպութեան վէմ քարը խարսխող եւ անոր վրայ ամուր եւ հաւատարիմ շարունակականութիւնը ապահովող բոլոր անձերուն, որոնք նուիրումով գրեցին պատկերազարդ պատմութիւնը Պլ. Օտտոյի Թաղամասին որ այսօր իր հայկականութիւնը կ'ապրի եւ կը պահէ իր եկեղեցւոյ պլպլացող կանթեղով եւ Կապոյտ Խաչի մասնաճիւղի հոգատար շունչով:

Պատուոյ սեղանին ներկայ էր Ս. Յակոբ եկեղեցւոյ Թաղական խորհուրդի երիտասարդ ատենապետ Սագօ Տէմիրճեան, որ իր կարգին ջատագովեց Կապոյտ Խաչի գործօն ներկայութիւնը հըրջանէն ներս եւ բերաւ իր վարչութեան նեցուկը:

Պուշ-տիւ-Ռոն նահանգի Ընդհանուր Խորհուրդի փոխ նախագահ՝ Հանրի Ժիպրայէլ մասնակցեցաւ օրուան հանդիսութեան, արտայայտեց իր ջերմ բարեկամութիւնը եւ խոստացաւ հետեւիլ ու օժանդակել Կապոյտ Խաչի Պլ. Օտտոյի մասնաճիւղի ձեռնարկներուն:

Միջինքի այս սեղանը իր ճաշերով, անուշեղէններով ընթացաւ ընտանեկան մթնոլորտի մը մէջ, համեմուած ինքնաբուխ երգերով, խմբերգներով եւ նոր հանդիպումներու խոստումով:

ԹՂԹԱԿԻՑ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊԷՅՐՈՒԹԻ Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ, Մարտ 19ին, տօնուած է "Մարզիկ"ի 25ամեակը: Հ.Մ.Ը.Մ.-ի պաշտօնաթերթին տարեդարձը կազմակերպած էր ամսաթերթին 25ամեակի յանձնախումբը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ նախագահութեամբ Թեմին առաջնորդ Գեղամ Եպիսկ.ի: Բացման խօսքը արտասանած է Լուսին Գազէզեան, յանուն կազմակերպիչ յանձնախումբին: Շրջանային վարչութեան անունով խօսք առած է Յակոբ Քէշիշեան ,որմէ ետք բեմադրուած է կարճ թատերգութիւն մը: Ապա խօսք առած է "Ազդակ"ի տնօրէնը Շահան Գանտահարեան, որ լուսարձակի տակ առած է "Մարզիկ"ի ներկայութիւնը հայ մամուլի անդաստանին մէջ: Ցուցադրուած է "Մարզիկ"ի պատմական ուղին, դժուարութիւնները, տարուած աշխատանքը ներկայացնող տեսերիզ մը: Կեդրոնական Վարչութեան անունով խօսք առած է "Մարզիկ"ի խմբագիր Վիգէն Աւագեան, որ անդրադարձած է պարբերականին դերակատարութեան, աշխարհասփիւռ մասնաճիւղեր իրարու օղակելու, միութեան գործը ծանօթացնելու եւ անոր խօսքը տարածելու իմաստով: Իր խօսքի աւարտին, Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան յուշանուէրներ բաշխած է հիմնադիր սերունդի անդամներուն կամ անոնց ընտանեկան պարագաներուն եւ բոլոր անոնց որոնք իրենց նպաստը բերած են "Մարզիկ"ի վերելքին ու գոյատեւման: Ձեռնարկին փակման խօսքը արտասանած է Գեղամ Եպիսկ. Խաչերեան եւ "Յառաջ Նահատակ"ով վերջ գտած է հանդիսութիւնը:

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝ ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Հիմա Իսմէնէ կ'ելլէ մութին մէջ. կ'աղօթէ որ հրաշք մը պատահի: Ով գիտէ ուր է Զարեհ, անպայման տանը մէջ քաշուած է: Բայց ո՞ւր կը բնակի այս մեծ քաղաքին մէջ: Իսմէնէ խանդով կ'աղօթէ, միաժամանակ մութ սպառնալիքներ կ'ուղղէ անտես Աստուծոյ որ կարծես իր խօսքերուն ականջ չի կախեր: «Շատ, շատ: Շատ դէշութիւն եկաւ անոնց գըլխուն: Չե՞ս կարծեր որ բաւական է» կը գանգատի, երեք անգամ խաչակնքելով: «Գոնէ Իսաագը մտիկ ըրէ. քու քահանաներէդ մէկն է: Նայէ որ ինք ալ քեզի կ'աղօթէ»: Բայց Իսաագ միայն ուժաթափ է. քունը տարած է. մինչդեռ Նազիմ անխօս կը ծխէ դրան առջեւ, կտոր մը հաց ծամելով:

Եւ Իսմէնէ կը քալէ գիշերուան մէջ, մէկ սրճարանէն միւսը կ'երթայ եւ թէեւ քիչ յոյսով, գլուխը ներս կ'երկարէ: Ամէն տեղ կը տեսնէ մարդիկ որ լռութեան մէջ նարտ կը խաղան, ծխելով եւ հանդարտութեամբ խօսելով: Անոնցմէ ոչ մէկը Հայու կը նմանի, բայց բնական է, Հայերը այս ժամանակներուն գիշերները փողոցները չեն շրջիր:

Եւ սակայն քաշողական բան մը կայ որ գինքը կը հմայէ եւ խաղացողներուն կը նայի յիշելով բան մը. բան մը որ Ազնիւի խօսակցութիւններուն կ'առաջնորդէ ու չի կրնար միտքը բերել: Բան մըն է որ խաղին հետ կապուած է, վստահ է, բայց ի՞նչ:

Բերդին վարի կողմը, միւսներէն աւելի լաւ լուսաւորուած փողոցի մը մէջ, Իսմէնէ կ'որոշէ գինետուն մը մտնել որ քիչ մը յունական հով ունի: Եւ չի սխալիր: Տէրը Մէթոնիէն է եւ իրեն անկիւն մը ցոյց կու տայ նստելու: Պնակ մը թանձըր հիւթով ոչխարի ճաշ կը բերէ: Ճաշած ժամանակ Իսմէնէ կը լսէ կարճ նախադասութիւններ եւ սեղանին վրայ նետուած խաղաթուղթի ձայն որ իր կըռնակէն կու գան: Կը դառնայ, չորս մարդիկ են որ թուղթ կը խաղան. կրնան Ռուս ըլլալ, կարելի է Իտալացի: Այն ատեն կը յիշէ եւ փառք կու տայ սրբուհի Փարասկեւիի, վերջին սրբուհին որուն դիմած էր:

Զարեհ թուղթ կը խաղայ: Պրիճ, անգլիական այդ նոր խաղը: Ազնիւ իրեն կ'ըսէր, հազար տարի առաջ, որ կ'ուզէր Հալէպ իր եղբօր քով երթալ եւ սորվիլ այս նուրբ մարդոց խաղը որպէսզի նախանձը շարժէ քաղաքին բարեկամուհիներուն:

"Ֆրանսացիները պէտք է փնտռել" կը մտածէ բրաւոյ Իսմէնէ եւ կը հարցնէ ճաշարանապետին, թէ ո՞ւր կը մնան Ֆրանսացիները:

Այդ վայրկեանէն ամէն բան աւելի դիւրին կը դառնայ: Շատ տեղեր չկան ուր Ֆրանսացիները կարելի ըլլայ գտնել. Դեսպանութեան ընդունելութիւններուն, որ հիմա բողոքի համար դադրած են, Հայերուն պատճառաւ: Բայց այս շրջանին Հայերը կը տեսնուին Մազլումեանի նոր պանդոկը (մինչեւ որ գիրենք ալ ձգեն, Հայ են), Հօթել Պարոնը. Հալէպի ամէնէն նորը եւ շքեղը: Նոյնիսկ Ճէմալ փաշան իր ընդունելութիւնները հոն կու տայ:

«Հոն գնա, հոս մօտն է. եւ խոհանոցներէն անցիր: Իմ զարմիկս Եորղոն քեզի կ'օգնէ. հոն իբրեւ պնակ լուացող կ'աշխատի» կը փսփսայ ճաշարանապետը:

Իսմէնէ կը բռնէ մարդուն ձեռքը եւ կը համբուրէ, շնորհակալութիւն կը յայտնէ ճաշին համար եւ կ'աճապարէ մեկնելու: Երբ դուրս կ'ելլէ, արեւմտեան զարմանալի երգի մը գուարթութիւնը ամբողջ ճամբան բռնած է: Կը հետեւի ձայնին, կը դառնայ անկիւն մը, յետոյ ուրիշ մը, եւ ահա, պարօք ճաշակով սանդուխ մը որ լոյսերուն մէջ կը փայլի, պաշտօնական զգեստով դռնապանը, ահա ընդարձակ պանդոկը արեւմտեան ճաշակով որ ամբողջ արեւելքը երազել կու տայ. Իսմէնէ զմայլած կը դիտէ վարէն: "Ի՜նչ գեղեցիկ է" կը մտածէ "այսպէս պէտք է ըլլայ արքայութիւնն ալ" եւ զգոյշ կ'ըլլայ որ չերեւի:

Ինքնաշարժ մը կը հասնի, շարժավարը կը կեցնէ եւ կը վազէ դուռը բանալու, խոնարհութիւն մը ընելով: Սպայ մը կ'իջնէ եւ ձեռքը կու տայ գեղեցիկ կնոջ մը, փայփլող կօշիկներով, մերկ թեւերով: Մետաքսի ամպ մը կը ծածկէ մարմինը եւ անուշահոտ բոյր մը կը պատէ զինքը: Հանդարտութեամբ կը բարձրանան, ինքզինքնին նուիրելով շրջապատի հիացմունքին: «Գերմանացի զօրավարն է» կ'ըսէ Իսմէնէի քով ձայն մը: «Աւելորդ է ողորմութիւն խնդրելը, հաւատա՛ ինծի: Ոչ մէկուն բան կու տան»: Յետոյ անծանօթ մուրացկանը կ'երթայ ամենավերջին աստիճանին վրայ կը նստի:

Իսմէնէ հրապուրուած է, ինչպէս միշտ, բոլոր այն բաներէն որ կը փայլին եւ կը փլփլան. վայրկեանի մը համար պիտի ուզէր միայն տեսիլքին հետեւիլ: Յետոյ, սակայն կը հետեւի ինքնաշարժին, որ – կը կռահէ – ախոռ կը տարուի: Անշշուկ կը սահի ազնուական ձիերու եւ նշանաւոր կառքերու մէջէն: Համազգեստով շարժավարը կը բարեւէ ախոռապանները եւ կառապանները որ բոլորակաձեւ նստած կը ծխէին եւ արագ ծածկոց մը կը նետէ շարժամեքենային վրայ ինչպէս պիտի ընէր վազքէ մը վերջ քրտնած ձիու մը:

Այդ ինքնաշարժը առասպել մը եղած է քաղաքին մէջ եւ մարդիկ երբ առիթ մը ըլլայ, իրար կը հրմշտկեն, կարենալ տեսնելու համար: Շարժավարը այնպէս կը խնամէ կարծես կենդանի արարած մը ըլլար: Գրեթէ մութ է ախոռը եւ Իսմէնէ երկչոտ կերպով ձեռքը կ'երկարէ շոյելու համար փայլուն կառքը:

«Ինչպէ՞ս կը համարձակիս, պառաւ գնչու» կը պոռայ շարժավարը: Իսմէնէ անմիջապէս ձեռքը ետ կը քաշէ կարծես տաքութենէն այրած ըլլար:

«Գէշ բան մը ըրած չունիմ» կը պատասխանէ եւ կը ստանձնէ ինքնածին հըպարտութեան կեցուածք: Ապա քայլ մը ընելով՝ «Ուշադիր եղիր, ամբողջ աշխարհի անէծքները գիտեմ արտասանել»: Իր եղերական դիմակը հիմա լոյսին մէջ կ'երեւի եւ շուրջը նստողները կը զգան թէ այդ կինը իր վրայ կը կրէ զուտ չարութեան յատկանիշերը, աշխարհի սարսափը: Եւ կը հասկնան:

(Շար. 80)

(Շար. Ա. էջէն)

դէպքեր ալ պատահած են, ինչպէս Գան, ուր 11 վիրաւորներ կային: Նոյն օրը, խորհրդարանականներու եւ սենատորներու բանակցութիւնները կը շարունակուէին:

Տ. ՏԸ ՎԻԼՔԸՓէՆ, Ապրիլ 6ին, իններորդ մամուլի ասուլիս մը տուաւ, ինչպէս կ'ընէ ամէն ամիս: Միտք չունի հրաժարելու եւ դեռ կը փորձէ պաշտպանել չպաշտպանուելիք իր Սէ. Փէ. Ը.ն: Իրեն համար ճկունութիւնը անհրաժեշտ միջոցն է աշխատանք հայթայթելու համար եւ սենատորները պէտք է հասկնան: Ընդունելով հանդերձ որ Սէ. Փէ. Ը.ն "գործիք" մըն է աշխատանքին համար, կ'ուզէ որ մթնոլորտը հանդարտի եւ երկխօսութիւն տեղի ունենայ առանց որեւէ նախապաշարումի, հարկ է վերջ տալ տագնապին:

ՍԱՐՔՈԶԻԻ մէկ հարցազրոյցին հարցը զանազան մեկնաբանութիւններու դուռ բացած էր Ապրիլ 7ի առաւօտուն: Արդարեւ նոյն օրը այդ հարցազրոյցը լոյս պէտք է տեսնէր Ֆիկառոյի մէջ, բայց վերջին պահուն (նախորդ իրիկունը ժամը 19·30ի շուրջ) Սարքոզի կը հեռաձայնէր թերթին խմբագրութեան որպէսզի յետաձգուի: Թերթը, նոյն թիւին մէջ կը բացատրէր որ Սարքոզի չէր ուզած արտայայտուիլ ցորչափ շփումները կը շարունակուէին սենատորներուն հետ: Որոշուած էր հրատարակութիւնը յետաձգել յաջորդ օրուան: Այլ բացատրութիւններ ալ կը տրուէին, որոնց կարգին կ'ըսուէր թէ Շիրաք միջամտած է, որպէսզի չհրատարակուի, որովհետեւ հոն Սարքոզի նոր առաջարկներ կ'ընէր փոխարինելու համար Սէ. Փէ. Ը.ն, առանց խօսելու ջնջումի մասին:

ՆԱՃԱՖԻ մէջ (Իրաքի հարաւը) թակարդ կառք մը պայթած է Ապրիլ 6ին եւ 13 հոգի մեռած են առաջին հաշուեկշիռի մը համաձայն: Արարքը կատարուած է շիիներու մզկիթին մօտ:

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ս. ՅՈՎՀԱՆՆէՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Ապրիլ 13·–

Յիշատակ ընթրեաց
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Ժամերգութիւն՝	*ժամը* 8ին,
Կարգ ապաշխարողաց՝	*ժամը* 10ին,
Պատարագ՝	*ժամը* 11·30ին,
Կարգ ոտնլուայ՝	*ժամը* 17ին:

□

Հսկումն յիշատակ մատնութեան
եւ չարչարանաց Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի

Սկիզբ ժամերգութեանց՝ *ժամը* 19ին:

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 14·–

Յիշատակ խաչելութեանն եւ թաղման
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Սկիզբ երեկոյեան ժամերգութեան՝ ժամը 17ին:

***

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, Ապրիլ 11·–

Յիշատակ տասը կուսանաց

Երեկոյեան ժամերգութիւն՝ *ժամը* 17ին:

ՀԻՆԳՇԱԲԹԻ·–

Սկիզբ ժամերգութեանց՝	*ժամը* 9·30ին,
Կարգ ապաշխարութեան՝	*ժամը* 10·15ին,
Պատարագ՝	*ժամը* 11ին,
Ոտնլուայ՝	*ժամը* 17ին,
Սկիզբ գիշերային ժամերգութեան՝	*ժամը* 19·30ին:

ՈՒՐԲԱԹ·–

Յիշատակ խաչելութեան եւ թաղման

Սկիզբ երեկոյեան ժամերգութեան՝ ժամը 17ին:

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ·–

Ժամերգութիւն՝	*ժամը* 9ին,
Ընթրեաց պատարագ՝	*ժամը* 10ին:

Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀէՔԻՄԵԱՆ

Ոտնլուայ՝	*ժամը* 16ին,
Կարգ չարչարանաց՝	*ժամը* 19·30ին:

ՈՒՐԲԱԹ·–

Թափօր թաղման՝ *ժամը* 17ին:

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ·–

Ընթրեաց պատարագ՝	*ժամը* 10ին,
Ոտնլուայ՝	*ժամը* 16ին,
Խաւարում՝	*ժամը* 18·30ին:

ՈՒՐԲԱԹ·–

Թափօր թաղման՝ *ժամը* 17ին:

***

Ս. ՊՕՂՈՍ–ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ·–

Սկիզբ ժամերգութեանց՝	*ժամը* 9·30ին,
Պատարագ՝	*ժամը* 10ին,
Ոտնլուայ՝	*ժամը* 16·30ին,
Խաւարում՝	*ժամը* 20ին:

ՈՒՐԲԱԹ·–

Թափօր թաղման՝ *ժամը* 17ին:

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ·–

Վերջին ընթրեաց, պատարագ՝ ժամը 10ին:

Կը պատարագէ՝
ԶԱՏԻԿ. ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

Ոտնլուայ՝	*ժամը* 17ին,
Կարգ խաւարման՝	*ժամը* 19·30ին:

ՈՒՐԲԱԹ·–

Թաղման կարգ եւ թափօր՝ *ժամը* 17ին:

***

ՍԷՆ ԼՈՒ – ՍՈՒՐԲ ԳէՈՐԳ

ՀԻՆԳՇԱԲԹԻ·–

Ոտնլուայ՝ *ժամը* 18ին:

Կը պատարագէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏէՏէԵԱՆ

ՈՒՐԲԱԹ·–

Թաղման կարգ՝ *ժամը* 18ին:

***

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

ՈՒՐԲԱԹ·–

Թաղման կարգ եւ թափօր՝ *ժամը* 17ին:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՆԻՍ. – Պ. Շ. Կէտիկ 50 Եւրօ:

ԼԵԶՈՒՆ ԱԶԳԻՆ ՀՈԳԻՆ Է,
ԴՊՐՈՑԸ ԱԶԳԻՆ ՏՈՒՆՆ Է:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

2006–2007 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
տեղի կ'ունենան
ԱՊՐԻԼ 25–էն *մինչեւ* ՄԱՅԻՍ 31

RENTREE DES CLASSES 2006/2007

Inscriptions ouvertes du **25 avril** au **31 mai 2006**

TEBROTZASSERE

Ecole mixte bilingue
Franco - Arménienne
(Académie de Créteil)
1 Boulevard du Nord —
Carrefour d'Arménie
93340 LE RAINCY

Chef d'Etablissement :
Monsieur HAIG SARKISSIAN

- Maternelle: 3 sections
- Primaire: Sous Contrat Simple
- Collège: Sous Contrat d'Association avec l'Etat

Equipe pédagogique compétente et motivée

- Programmes officiels de l'Education Nationale
- Enseignement de la langue et de la culture arménienne
- Cours de chant : «Chorale Tebrotzassère»
- Cours d'informatique dès le primaire
- Langue vivante 1 : anglais
- Langue vivante 2 : allemand ou espagnol.

Equipements pédagogiques évolutifs :

Laboratoire de langues — Centre de Documentation et d'Information — Salle d'ordinateurs — Laboratoire de physique-chimie.

Ramassage scolaire par autocars suivant possibilités.
Cantine assurée.

Pour tout renseignement :

Tél. / fax : **01. 43. 81. 01. 72**
direction@tebrotzassere.com

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.

Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

ՎԵՐԱԴԱՐՁ ԴէՊԻ ԱԿՈՒՆՔՆԵՐ

2005 *Նոյեմբեր 15ին* Ը. Օ. Հ. *Ընկերակցութիւնը բացաւ իր նոր կեդրոնատեղին, Ֆրանսայի մէջ ապրող ապաստանի դիմումը մերժուած եւ ապօրինի կացութեան մէջ գտնուող Հայերուն համար:*

Գրասենեակիս աշխատակազմը սիրով կ'ընդառաջէ եւ կը տրամադրէ բարոյական ու դրամական աջակցութիւն եւ ցոյց կու տայ մասնագիտական տեղեկութիւններ բոլոր այն անձերուն, որոնք կ'ուզեն վերադառնալ Հայաստան եւ հոն լծուիլ նոր կեանքի մը:

Հայաստանի մէջ եւս կը շարունակէ ուղեկցիլ վերադարձողներուն եւ կ'օգնէ վերահաստատուելու գործընթացին, ընծայելով փոքր ձեռնարկութիւն ստեղծելու հնարաւորութիւններ:

Սոյն ծրագիրը կ'իրագործուի ապաստանեալներուն յատկացուած Եւրոպայի Հիմնադրամի ֆինանսաւորմամբ և համագործակցութեամբ Գաղթականութեան Ազգային Գործակալութեան:

Հասցէ՝
5 rue Marché Ordener — 75018 Paris
Métro : Guy Moquet (ligne 13)
Jules Joffrin (ligne 12)
☎ 01 42 63 32 45 / 01 48 78 02 99
Ընդունելութեան ժամ. –
Աշխատանքի օրերուն ժամը 10էն 18:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine	: 06 12 93 09 80
Jeanine	: 04 94 32 11 87
Marie-Rose	: 06 22 11 81 75

ESPOIR POUR l'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complete
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc.
Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

ԶԱՏԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,
ժամը 13էն *սկսեալ*

Restaurant «Les Diamantaires»
60 rue La Fayette — 75009 Paris
Métro Cadet

Հաճելի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 *կամ* 01 45 93 00 25 *թիւերուն:*

***

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ, 11
MARDI
11 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար· 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·431 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 81e ANNEE — N° 21·431

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱՅՍ ՀԱՆԳՋԻ «CPE»Ն

ՕՐԷՆՔԸ ՓՈԽԱՐԻՆՈՒԵՑԱՒ

Երկուշաբթի, Ապրիլ 10, վճռական օրն էր Սէ· Փէ· Ը·ի ճակատագրին համար: Ժամը 8·30ին Տ· տը Վիլփէն Էլիզէ կ՚երթար, ուր կը տեսնուէր Շիրաքի հետ, գլուխ գլխի: Կէս ժամ յետոյ կը ժամանէին խումբ մը նախարարներ (Սարքոզի, Պորլօ, Լարշէ) եւ խորհրդարանական Իւ· ԷՄ· Փէ· խումբերու նախագահները, վերջնական ձեւ մը տալու համար "լուծում"ին, ապա տը Վիլփէն կը վերադառնար Մաթինեոն, ուրկէ ժամը 10·30-ին ելոյթով մը կը յայտնէր գտնուած դարմանը:

Ժամը 10ի շուրջ Էլիզէ (նախագահութիւնը) զեկոյցով մը կը յայտնէր որ Հաւասարութեան Կարելիութիւններու օրէնքին թիւ 8 յօդուածը (Սէ· Փէ· Ը·) պիտի փոխարինուի նոր տնօրինութեամբ մը, դժուարութեան մէջ գտնուող երիտասարդներուն համար, որոնք արհեստի կ՚ուզեն դիմել: Ժամը 10·30ին ալ, այս անգամ Մաթինեոնէն Տ· տը Վիլփէն կարճ զեկոյց մը կը կարդար, ուր նախ ձեւով մը իր մէա գուլփան կ՚ընէր, աւելի ճիշդ կ՚ուզէր արդարացնել իր առած քայլը, բայց կը նկատէր որ երիտասարդներու ապահովութիւնը երաշխաւորուած չէ եւ հարկ եղած վստահութիւնը եւ հանդարտութիւնը չկան թոյլ տալու համար այդ յօդուածին գործադրութիւնը, ուրեմն առաջարկած էր փոխարինումը: Ուզած էր արագ շարժիլ, պատասխան մը բերել երիտասարդներուն, չէր հասկցուած: Ուրեմն կ՚առաջարկէր անոր փոխարինումը, որու համար վիճաբանումներ պիտի սկսին առանց որեւէ նախապաշարումի:

Մինչ այդ, շաբաթավերջին եղած էին նոյն թելադրանքները Սէ-Փէ-Ը-ն ջնջելու եւ այս անգամ գլխաւորաբար աջերու կողմէ, ինչպէս նախկին նախագահ՝ Վ· Ժիսքար տ՚Էսթեն (Ժուռնալ տիւ Տիմանշ, Ապրիլ 9) եւ Ֆր· Պայրու:

Լիպէրասիոն (Ապրիլ 10) Ապրիլ 7ին խմբագրատունը համախմբած էր չորս դէմքեր, օրակարգի նիւթ ունենալով "Դեռ կարելի՞ է բարեփոխել Ֆրանսան": Վիճաբանումի մասնակցողներն էին Փաթրիք Տէվէճեան (նախկին նախարար, Ն· Սարքոզիի քաղաքական խորհրդական), Պեռնար Քուշնէր (նախկին նախարար, ընկերվարական), Ժան-Քրիսթոֆ լը Տիկու (Սէ-Ժէ-Թէ-ի համադաշնակցային քարտուղար), Ժան-Փօլ Ֆիթուսի (տնտեսաբան): Տէվէճեան կը գտնէ որ Ֆրանսացիք շատ համբերատար են, հակայ քանակութեամբ բարենորոգումներ կըրեցին, յաճախ հակասական: Կը բաւէ մտածել կրթական մարզին մասին կամ արդարութեան: Մեր երկիրը, կ՚ըսէ, կեդրոնացումի քաղաքական մշակումը ունի: Մեր քաղաքական ժառանգութիւնը, միապետութենէն ժագոպեան յեղափոխութիւնը այնպէս ըրաւ որ կառավարութիւնները կը խորհին թէ իրենց կոչումն է ամբողջ երկիրը մղել դէպի լոյս մը, զոր իրենք տեսած են առաջին անգամ:

Սարքոզիի հարցազրոյցը որ չէր հրատարակուած Ուրբաթ (Ապրիլ 7) նախարարին դիմումին վրայ, պէտք է հրատարակուէր յաջորդ օրը, ինչպէս յայտնած էր Ֆիկառօ: Ի վերջոյ, Ապրիլ 10ին ալ չէր հրատարակուած եւ Ֆիկառոյի աշխատակիցը՝ Ալեքսի Պրէզէ "Վիլփէն-Սարքոզի պատերազմի սրտին վրայ" խորագրով հակիրճ պատմական մը կ՚ընէր:

***

Ուրբաթ, Ապրիլ 7ին, մինչ ուսանողներ հաւաքուած էին Պուլվար Սէն-Միշէլ կառք մը կը խուժէր իրենց վրայ անցնելու համար, 11 թեթեւ վիրաւորներ կային, որոնց մէջ կառքին վարորդը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱՔԻ մէջ, շաբաթավերջին, յաջորդական ռմբափորձերու հետեւանքով 80 մեռեալ կար եւ 164 վիրաւոր, արարքները գործուած էին շիի մզկիթներու կամ շիի թաղամասերու մէջ: Ապրիլ 7ին, գործուած ռմբափորձը երեք քամիքազ կիներու գործն էր կամ այրեր որոնք կընոջ հագուստ կը կրէին: Ապրիլ 8ին, Նիւ Եորք Թայմզ հրատարակած էր Իրաքի ամերիկացի պատասխանատուներու մէկ տեղեկագիրը որ շատ խիստ էր ու ազդարարութեան բնոյթ ունի եւ 2006 Յունուար 31ի թուականը կը կրէ եւ երկրին ծանր վիճակը կը նկարագրէ, որ քաղաքացիական պատերազմի պատկեր կը պարզէ:

ԻՏԱԼԻԱ երեսփոխանական ընտրութիւններ կը կատարէր Ապրիլ 9ին եւ 10ին եւ առաջին տպաւորութիւնն այն էր որ մասնակցողներու համեմատութիւնը բաւական մեծ էր: Պէրլուսքոնի - Փրոտի մրցակցութիւնը շատ սեղմ էր եւ կարելի չէր յստակ նախատեսութիւններ ընել: Պէրլուսքոնի քուէատուփ դիմած էր 96 ամեայ մօրը հետ եւ մինչեւ վերջին պահը կոչ կ՚ընէր քուէարկութեան, այն մտավախութեամբ որ ձեռնպահները միշտ աջ հոսանքին կը պատկանին: Պէրլուսքոնի քուէարկելու հրաւէր կը կարդար առձերն հեռաձայններու վրայ՝ «Եթէ չքուէարկես, Փրոտին ընտրած կ՚ըլլաս: Եթէ յաղթէ, դուն կը կորսնցնես»:

ԻՍՐԱՅԷԼԱՅԻՔ ռմբակոծութիւններով 15 Պաղեստինցի սպաննած են շաբաթավերջին եւ անմիջապէս Համասը փոխ վրէժի սպառնալիք ըրած է: Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութիւնը սնանկութեան դուռն է քանի Եւրոպական Միութիւնն ալ առկախած է նիւթական օժանդակութիւնը:

ՊԷՌՆԱՏԷԹ ՇԻՐԱՔ Քապուլ (Աֆղանիստան) գացած էր բացումը կատարելու համար երախաներու համար Ֆրանսական Բժշկական Հիմնարկին: 2003ին ալ գացած էր հիմնարկէք ընելու: Այցելութիւնը դրեթէ պաշտօնական բնոյթ ունեցած է, քանի Ֆրանսայի նախագահին կինը ճաշի հիւրն ալ եղած է նախագահ Քարզայի: Հաղեպում ալ ունեցած է Ֆրանսական համայնքին հետ:

ՔԱՐԱՇԻԻ (Փաքիստան) մէջ հրմըշտուքի մը ընթացքին 26 կիներ եւ երախաներ կոխկռտուած են եւ մեռած, 19 հոգի ալ վիրաւորուած են, որոնց եօթը ծանր վիճակի մէջ են: Մահմետական արարողութիւն մը տեղի կ՚ունենար Մոհամէտ մարգարէին տարեդարձին առթիւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՈՍԿՈՒԱ ԱՅՑԸ

Արտաքին նախարար Վ· Օսկանեան երկօրեայ այցելութեամբ Մոսկուա գացած է Ապրիլ 6ին, քննարկելու համար հայ - ռուսական յարաբերութիւններուն ներկայ վիճակը եւ զանոնք զարգացնելու հեռանկարները: Ան հանդիպումներ ունեցած է Ռուսաստանի Պաշտպանութեան եւ Արտաքին նախարարներուն, Մինսկի խումբի ռուս համանախագահ Ե· Մերզլեակովի, այլ պաշտօնատարներու եւ Ռուսաստանի մէջ գործող հայ գործարարներու խումբի մը հետ:

Նախարար Օսկանեանի իր պաշտօնակից Ս· Լավրովի հետ տեսակցութեան, բացի քաղաքական ու ռազմավարական ոլորտներու մէջ երկու երկիրներու համագործակցութեան հարցերէն, արծարծուած է նաեւ Ղարաբաղեան հարցը: Ռուս նախարարը Հայաստանի ու Ռուսաստանի միջեւ առկայ ռազմավարական համագործակցութեան ու միջ-պետական կապերու դրական կշռոյթի որպէս լաւագոյն արտայայտութիւն նկատած է Ռուսաստանի մէջ Հայաստանի տարուան նշումը:

Վ· Օսկանեան այցելութեան շրջագիծէն ներս "Համագործակցութիւնն ու ապահովութիւնը՝ Հարաւային Կովկասի մէջ" թեմայով բանախօսութիւն մըն ալ տուած է Քառնըկի հիմնադրամի Մոսկուայի կեդրոնին մէջ, որու ներկայ եղած են պետական ու քաղաքական շրջանակներու, գիտահետազօտական ու բարձրագոյն կրթական հաստատութիւններու, դիւանագիտական ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

***

ԿԱԶԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ

Կառավարութիւնը եւ ռուսական Գազփրոմը 25 տարուան պայմանագիր մը ստորագրած են Ապրիլ 6ին, կարգաւորելու համար կազի գինին կատարուած մեծ յաւելումը: Հիմնական տուեալը այն է որ Հայաստան, մինչեւ 2009 չափաւոր նկատուած գինով մը կազ պիտի ստանայ, փոխարէն՝ կազի հայկական ցանցին վրայ հակակշիռ իրաւունքին որ կը տրուի ռուսական ընկերութեան եւ Հրազդանի ջրելեկտրակայանին 5րդ մասնաբաժնին նոյն ընկերութեան վաճառքին:

Ուժանիւթի նախարար Արմէն Մովսիսեան Ապրիլ 6ին մամուլի ասուլիսով մը յայտնած է թէ Ռուսերը յանձնառու եղած են Հրազդանի ջրելեկտրակայանին 5րդ մասնաբաժինը որ կիսակատար վիճակի մէջ է, լրացնելու:

***

ԼՂՀ

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԼՂՀ - Ազրպէյճան սահմանին վրայ վերջին շրջանին յաճախակի դարձած հրադադարի խախտումի դէպքերուն առնչութեամբ ԼՂՀ Արտաքին նախարարութիւնը յայտարարութիւն մը հրապարակած է: Այդ խախտումներուն պատասխանատուութիւնը վերագրելէ ետք ազրպէյճանական կողմէն հնչող ռազմատենչ յայտարարութիւններուն դատապարտումի բացակայութեան, յայտարարութիւնը կ՚ըսէ թէ ԼՂ Հանրապետութիւնը կը վերահաստատէ հակամարտութիւնը բացառապէս խաղաղ ճամբով լուծելու իր դիրքորոշումը և կը յայտնէ իր պատրաստակամութիւնը՝ հաւատարիմ մնալու հրադադարի ամրապընդման համար կողմերու ստանձնած յանձնառութիւններուն, որոնք նշուած են 1995 Փետր· 6ի համաձայնագրին մէջ, զոր ստորագրած են ԼՂՀ, Հայաստան եւ Ազրպէյճան: "Մենք կոչ ենք անում միւս երկու կողմերին՝ Ադրբեջանի Հանրապետութեանը եւ Հայաստանի Հանրապետութեանը, որոնք ստորագրել են վերոյիշեալ համաձայնագիրը, միանալ մեր նախաձեռնութեանը եւ յոյս ենք յայտնում, որ համատեղ ջանքերով եւ Օ·ԷՍ·Սէ·Ը·ի Մինսկի խմբի համանախագահների, ինչպէս նաեւ այլ միջազգային միջնորդների եւ շահագրգիռ կողմերի միջնորդութեամբ հնարաւոր կը լինի վերահաստատել հաւատարմութիւնը յիշեալ համաձայնագրին եւ իրականացնել փաստաթղթում ամրագրուած մեխանիզմները՝ զինուած ուժերի շփման գծում միջադէպերի տեղայնացման ուղղութեամբ" ըսուած է հոն:

ՄՈՍԿՈՒԱ

ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆ ԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԹԻՐԱԽ

Հասարակ քաղաքացիներէ, առեւտըրականներէ, գործի մարդոցմէն ետք ռուսական միջավայրին մէջ որպէս անբաղձալի անձ յարձակում կրելու կարգը այնպէս կը թուի որ հասած է քաղաքական մարդոց: Մարտ 30ին Հայաստանի երեսփոխան Տիգրան Արզաքանցեան Մոսկուայի գազինոներէն մէկուն մէջ յարձակումի ենթարկուած է: Ան ղեկավարն է նաեւ "Կրէյթ Վէլի" ընկերութեան: Իրմէ գողցած են թեւի ժամացոյցը ("Ֆրանք Միլլէր" մը) եւ առձեռն հեռաձայնը: Ըստ ռուսական աղբիւրներու, գողօնը 50 հազար տոլարի համաչափ է: Տ· Արզաքանցեան ուղեղի վնասուածքով ու մարմնի բազմաթիւ բեկումներով հիւանդանոց փոխադրուած է:

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ԿԸ ՀԱԿԱԶԴԷ 1915-Ը ԺԽՏՈՂՆԵՐՈՒՆ

Բողոքական այս շարժումին Ֆրանսացի նախագահը Ալպէր Հիւպէր եւ 12 պատուելիներ իրը երեսփոխանի եւ հինդ ծերակուտականի ուղղուած նամակով մը հարց տուած են թէ Ֆրանսայի նման երկրի մը մէջ ինչպէս արտօնուեցաւ Թուրքերու Մարտ 18ի Լիոնի ցոյցը: Նախագահը նամակ մըն ալ ղրկած է նախագահ Ժ· Շիրաքի: Ընդվզած կրօնաւորները պահանջած են, որ կառավարութիւնը բացատրէ այդ արտօնութեան առաջնորդած պարագաները եւ հարկաւոր կատարուի որպէսզի նման երեւոյթ չկրկնուի:

"Արեւելեան քրիստոնէական շարժում"ը հիմնուած է լուտերական կրօնաւոր Փօլ Պէրրոնի կողմէ· օգնութեան փութացած է 1915ի զոհերուն, Հալէպի մէջ:

Օ. ՓԱՄՈՒՔԻ «ՁԻԻՆ»Ը

"Գրական գործի մէջ քաղաքականութիւնը կը նմանի նուագահանդէսի սրահի մը մէջ ատրճանակի պայթումի մը: Կոպիտ բան է որուն անկարելի է չանդրադառնալ: Ուստի կը փորձենք գէշ բաներու մասին":

Սթենտալ

Իր վերջին վէպին որպէս բնաբան Օ. Փամուք ընտրած է Սթենտալի այս խօսքը: "Ձիւնը"(*) վէպ մըն է լեցուն անըրճանակի հարուածներով եւ կը բովանդակէ երկու հակադիր տիեզերք. քաղաքականութիւնը եւ բանաստեղծութիւնը: Անոնք զետեղուած են Թուրքիոյ ընկերութեան փափուկ հարցերու ոլորտին մէջ, որոնց մասին ազատ կարծիք ունենալ դժուար գործ է: Աւելորդ է յիշեցնել թէ Հայերու եւ Քիւրտերու Թուրքերու կողմէ բնաջնջումին մասին զուիցերական թերթի մը լրաբերը (2005 Փետր.) ի՛նչ արժեցին անոր:

Ձիւնը (Թրքերէն՝ Քար) առաջին անգամ լոյս տեսած է 2002ին Պոլսոյ մէջ "Իլէթիշիմ" (հաղորդակցութիւն) հրատարակչականէն: Մինչեւ այսօր մօտաւորապէս 200.200 օրինակ սպառած է Թուրքիոյ մէջ: Իսկ Ֆրանսերէն թարգմանութիւնը 2005 աշնան միայն լոյս տեսաւ: 2005ի օտար վէպի Մէտիսիս մրցանակն ալ իրեն տրուեցաւ:

Օ. Փամուքի դատավարութիւնն ալ մեծ աղմուկ բարձրացուց արտասահմանի մէջ: Կը բաւէ անդրադառնալ Ֆրանսական մամուլին ու հանրային կարծիքի լայն հետաքրքրութեան, վիպագիրին ժողովրդավարութեան ու պատմական իրողութեան չեչտումին ի նպաստ յայտնած գաղափարներուն:

Գիրքը կ'առընչուի Թուրքիոյ Եւրոպական միութեան անդամակցութեան փոթորկալի վէճին: Ան իր արմատները կը գտնէ իսլամականներու եւ աշխարհավար կողմնակիցներու քով: "Ձիւնը", ուրեմն, քաղաքական գործ մըն է, բուն նպատակ ունենալով Թուրքիոյ ժամանակակից ընկերութեան հիմնական խնդրին – ինքնութեան հարցին – վրայ լայն տեսանկիւն մը բանալ: Եւ մեզի համար զարմանալի չէ որ վէպին դիպաշարը Կարսի մէջ զետեղուած է:

ա) ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԷՊ ՄԸ

Վէպին գլխաւոր հերոսը Քա եւրոպականացած պոլսեցի Թուրք մտաւորական մըն է, "Նզովեալ բանաստեղծ"ին նման զոյգ ինքնութեան (Թրքական եւ գերմանական) պատճառով: Ինքզինք քիչ մը "աւանդական", քիչ մը "արդիական" կը զգայ: 12 տարիէ ի վեր աքսորեալի կեանք կ'ապրի Գերմանիոյ մէջ: Կարս կը մեկնի, խորհելով որ հոն պիտի գտնէ Թրքական իր արմատները. սակայն անսպասելի կերպով այլ իրականութիւն մը կը յայտնաբերէ. այս անգամ մութ եւ հակասական: Քա հոն կ'անդրադառնայ որ Կարս "Թրքական միքրոքոսմ" համարուելով հանդերձ, "քոսմոփոլիթ" քաղաք մըն է: Օ. Փամուք կը գրէ անոր հայկական անցեալին մասին, նկատելով ճարտարապետական գեղեցկութիւնը եւ ռուսական բաղաքաշինութիւնը:

Կարս երթալուն պատճառը պոլսական թերթի մը համար հետազօտութիւն մը կատարելն է, քանի որ կրօնամէտ երիտասարդուհիներու անձնասպանութեան ալիք մը նշմարելի է. Քա կ'ուզէ հասկնալ թէ այդ քայլը առնելու ի՛նչ բան կը մղէ զիրենք: Այդ ընթացքին ականատես կ'ըլլայ ազգայնականներու եւ աշխարհական արմատական կրօնամոլներու միջեւ ներքին ճակատումներու:

Կը հանդիպի քաղաքի տարբեր դէմքերուն. իշխանութեան ներկայացուցիչ, քաղաքային ոստիկանութեան անդամներ: Կը հանդիպի նաեւ քաղաքապետութեան թեկնածու Մուհթարին որ համալսարանէն իր ընկերն է եւ անգամ կրօնական կուսակցութեան մը: Կը հանդիպի յատկապէս Իփէքին որ իր սիրածն է եւ նոր բաժնուած Մուհթարէն: Այս ընթացքին երեք օր ու երեք գիշեր ձիւնը անդադար կը տեղայ, Կարսը մեկուսացնելով Թուրքիայէն ու աշխարհէն:

Այս միջավայրին մէջ Քա կը վերագտնէ ստեղծագործելու կայծը: Կարս մնացած օրերուն 19 բանաստեղծութիւն կը գրէ. անոնք ձիւնի փաթիլի նման վեցանկիւն կառոյցներ ունին: Կեդրոնական կէտը խորագրուած է "Ես Քա". միւսները կը հետեւին երեք առանցքներու. տրամաբանութիւն, յիշողութիւն, երազ: Անոնք աստիճանաբար կը պատմեն Կարսի իր օրերը, Իփէքին նկատմամբ խոր սէրը, եւլն.: Սակայն բանաստեղծութիւնները չեն տրուած վէպին մէջ:

Քա Կարս հասած է քաղաքապետութեան ընտրութեան նախօրեակին: Այդ փոթորկալի միջավայրը կացութիւնը կը վատթարացնէ: Կան քիւրտ ազգայնական թեկնածուներ, կայ իսլամական շարժում մը: Քէմալական կուսակցութիւնները շատ հաւանականութիւն չունին յաղթելու:

Քա հակառակ իր կամքին, միջնորդի, միջանկեալ անձի մը հանգամանքը կը կրէ ներքին հակադրութիւններով լարուած այդ միջավայրին մէջ: Հաւասարակշռութիւնը գտնելու դժուարութիւնը վըտանգի պիտի ենթարկէ իր անձը ու պիտի ստիպուի ընտրել մոլեռանդներուն ճակատը, կամ փախուստը: Ինք միակ նպատակ մը ունի. փախչիլ այդ անիծեալ վայրէն, հետը առած սիրած աղջիկը: Սակայն դէպքերը այնպէս պիտի բերեն որ առանձին պիտի մեկնի, վերադառնայ Գերմանիա, ուր մահը կը սպասէ իրեն: Իսլամականներ չեն ներած Կարսի մէջ անոր ներկայութիւնը, գործունէութիւնը:

բ) Ո՞ՒՐ ԳԱՑԻՆ ՀԱՅԵՐԸ

Իր հերոսը Կարս տանելէ ետք հեղինակը կը յիշեցնէ քաղաքին մէջ հայկական եւ ռուսական ներկայութիւնները: Յետոյ շատ մը մանրամասնութիւններով կ'անդրադառնայ Կարսի հայկական անցեալին. տուներ, եկեղեցիներ, հայկական թագաւորական մայրաքաղաքը՝ Անին: Ռուսական տիրապետութեան տարիներուն քաղաքին ստացած արդիական դիմագիծը, յետոյ Ստալինի օրով ներկայացուած Կարսի ու Արտահանի պահանջը ի նպաստ Վրաստանի... Փամուք կը նշէ այդ բաները ,ըսելով թէ ռազմավարական կարեւորութիւնը Թրքական բանակի զօրամասեր կեդրոնացած կը պահէ հոն:

Կարսի իւրայատկութիւնը գետին կը տրամադրէ Թրքական ինքնութեան հետազօտութեան. Ան բարգաւաճ էր Բ. աշխարհամարտէն առաջ, քանի որ առեւտուր ունէր Խորհրդային միութեան հետ: Ջլամարտին Ամերիկացիները փակել տըւին սահմանը ու Կարս հետզհետէ յետադիմեց, յիսուն տարի ետք դառնալու համար Թուրքիոյ գրեթէ ամէնէն աղքատ քաղաքը:

Կարսի հայկական անցեալէն Փամուք կու տայ աշխոյժ կեանքի մը պատկերը. յատկապէս մշակութային եւ արուեստի մարզերով: Յետոյ բեկումով մը գրեթէ կը զանազանէ անցեալն ու ներկան: Ստեղծուած տպաւորութիւնը այն է որ Կարս իր ոսկեդարը ապրեցաւ Հայերու օրով. յետոյ անոնք առանց մասնաւոր պատճառի անհետացան:

Կորսուած այդ անցեալը կը միջամտէ ընդդիմադիրներու գաղտնի ժողովի մը երբ մէկը հարց կու տայ. «Ո՞ւր գացին միլիոնաւոր Հայերը»: Ոչ ոք կը պատասխանէ հարցումին: Կարծես Փամուք կ'ուզէ յիշեցնել թէ ինչպէս քարտէսէն սրբըւեցաւ Արեւմտահայաստանը

գ) ՁԻԻՆԻՆ ԻՄԱՍՏԸ

Վէպին մէջ մատնանշուած է ձիւնին կարեւորութիւնը. ատիկա է տիտղոսը (Kar՝ Թրքերէն): Այդ եռատառ բառին մէջ կարելի է գտնել Կարս (Թրքերէն՝ Քարս) անունին ու վէպին հերոսին անունին – Քա – ցոլացումները: Փամուք կը շեշտէ ձիւնի փաթիլին ու մարդուն նմանութիւնը. ամէն մէկ փաթիլ տարբեր է. կարճատեւ կեանք մը միայն ունի: Սպիտակ ձիւնը Կարսի մութ ու յուսահատական տեսարանին մաս կը կազմէ, սակայն ինք է որ կը նպաստէ քաղաքին գեղեցկութեան:

Փաթիլին շատ կարճատեւ կեանքը կարծես գաղտնի պատգամ մը կու տայ որ կամայ ակամայ մահուան առընչուած է:

Կարսով յատկանշուած արդիական ու մռայլ Թուրքիան զոր կը ներկայացնէ Փամուք, հիւանդ է ու վիրաւոր, իր պատմութեան պատճառով: Ան կը տառապի իր անցեալով որ կ'արգիլէ որեւէ ուրախութիւն: Ձիւնը կը ծածկէ բոլոր վէճերը, հակադրութիւնները, բայց նոյն ատեն Կարսը, այսինքն Թուրքիան կը կղզիացնէ մնացեալ աշխարհէն:

ՏԻԳՐԱՆ ԵԿԱՒԵԱՆ

(*) Orhan Pamuk, *Neige*, Paris, "Gallimard, 2005, trad. J.-F. Perouse.

Ի՞ՆՉ ԷՐ ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հարցադրումը կը պատկանի հայրենի ըմբոստ մտաւորական ու վաստակաւոր լրագրող Սերգէյ Գալոյեանին:

"Իսկապէս ի՞նչ էր մեր այս երկրորդ Հանրապետութիւնը, Զարենցի հանգոյն ասած մի՞փ էր, թէ ապրած կեանք, չար իշխանութեան եւ սարսափի տակ գոյատեւած մի մեծ ժամանակաշրջա՞ն, թէ լուսաշող ու պայծառ նուաճումների եւ աշխարհաճանաչման բազմաբեղուն տարիներ" հարց կու տայ ան: Եւ որպէսզի ինք իբրեւ հարցադրող կողմնակալ կարիք յայտնած չըլլայ, խօսքը կու տայ Խորհրդային Հայաստանի օրով մտաւորական մարզի երկու դէմքերու՝ Սիլվա Կապուտիկեանին եւ նշանաւոր նկարիչ Եդուարդ Իսաբէկեանին, որ երկար տարիներ պետական պատկերասրահին տընօրէնը եղած էր: Երկուքն ալ իրենց վըկայութիւնները տուին, ի հարկէ, բայց մանաւանդ Ս. Կապուտիկեանին պատասխանը հանրութեան սեփականութիւնը դարձաւ սփիւռքահայ մամուլին մէջ, ուր ան լուսարձակի տակ կ'առնէր Խորհրդային Հայաստանի եօթանասունամեայ շըրջանը՝ ժողովրդային կեանքի տխուր ու ուրախ եւեւէջներով, ամպամած ու արեւաշող երկինքով:

Իսկապէս, մեր պատմութեան համար ի՞նչ կը ներկայացնէ Խորհ. Հայաստանը, որուն, ոմանք Բ. Հանրապետութիւն որակումն իսկ կը զլանան: Այս տեսակէտը դաւանողները, ի հարկէ, նկատի ունին այն իրականութիւնը որ Հայաստան մաս կը կազմէր Սովետական Միութեան: Բայց անոնք կը մոռնան որ այդ հսկայական պետութիւնը 16 անկախ հանրապետութիւններէ կը բաղկանար: Թէ անոնք որքանո՛վ անկախ կամ կախեալ էին Մոսկուայէն, ատիկա կախում ունէր տուեալ հանրապետութեան ղեկավարներու հասկացողութենէն, ազգային գիտակցութենէն եւ դիւանագիտական կարողութենէն: Իւրաքանչիւր հանրապետութիւն այնքան անկախ էր, որքան որ իր պետական ղեկավարները անկախ մտածողութեան տէր էին եւ անկախութեան գերագոյն իտէալը կը փայփայէին: Իսկ այդ իտէալէն զուրկ սարկամիտները միշտ ալ կախեալ եղած են:

Կախեալութեան անխուսափելի տուրք մը տալը պարտադիր էր անշուշտ, երբ չմոռնանք որ համայնավար կեդրոնացեալ վարչակարգով կը կառավարուէին այդ մեծ պետութեան բաղկացուցիչ երկիրները: Բայց, այդպէս ըլլալով հանդերձ, միջազգային եղբայրութեան լոզունգային ու ստապատիր մթնոլորտին մէջ, հայ ժողովուրդի խորապէս ազգասէր զաւակները խորհրդային վերնախաւին մէջ թափանցած Թուրքեւադերիական ազդեցութիւնը չէզոքացնելով, կրցան հայ ժողովուրդի շահերը կարելի առաւելագոյն չափով պաշտպանել, կառուցանելով Մեծ Եղեռնի, Սարդարապատի հերոսամարտի, կամ Կարէն Դեմիրճեան մարզա – համերգային համալիրի պէս յուշակոթողներ:

Հակահայ դաւադրութեան վտանգալից արարք մը եղաւ 1970ական թուականներուն Սովետական Սահմանադրութեան վերամշակման ընթացքին հայերէնը իբր Հայաստանի պետական լեզու դուրս ձգելու փորձը, որ Հայաստանի օրուան ղեկավար Կարէն Դեմիրճեանի ճկուն դիւանագիտութեան ու յամառ ընդդիմութեան շնորհիւ ձախողութեան դատապարտուեցաւ:

Ահա, ա՛յս էր Երկրորդ Հանրապետութիւնը:

Ճիշդ է որ 1918–20 տարիներուն, ստըրկութեան երկար ժամանակաշրջանէ մը յետոյ, գոյութիւն առաւ անկախ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը եւ ներկայիս կայ Երրորդ Հանրապետութիւնը. սակայն այդ երկուքին միջեւ գոյըւած եօթանասունամեակին գոյութիւն ունեցած Բ. Հանրապետութիւնը հայ ժողովուրդի վերջին հազարամեակի պատմութեան մէջ արձանագրուած պիտի մընայ անջինջ կերպով: Արդարեւ, այդ եօթանասունամեակի ընթացքին է որ ցեղասպանութենէն փրկուած հայ ժողովուրդի տարահալած բեկորները հայրենի հողին վրայ համախմբուելով վերակազմեցին հայ ազգը: Այդ ժամանակաշրջանին է որ հիմնուեցան մեր գիտութեան ու կրթութեան օճախները, վերածլեցան ու ծաղկեցան գրականութիւնը, երաժշտութիւնը, նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը եւ արուեստի բոլոր մարզերը: Վերջապէս, աւերակներու վըրայ վերաշինուեցաւ նոր հայրենիք, որուն հազիւ 800.000ի իջած բնակչութիւնը հասաւ երեք ու կէս միլիոնի:

Այսօրուան արտագաղթին հակառակ՝ ներգաղթ կազմակերպուեցաւ, դարերու ընթացքին առաջին անգամ ըլլալով:

Ահա ,ա՛յս էր Բ. Հանրապետութիւնը, որուն բարիքները վայելած, յաճախ նոյնիսկ տառապած հարիւր հազարաւոր տարագիրներ Լոս Անճըլըսներու մէջ կը թափառին այսօր:

Մեր մաղթանքն է որ գիտական ու արուեստի մակարդակներու վրայ, ճարտարապետական եւ ճարտարարուեստի մարզերու մէջ եւ մանաւանդ ազգասիրական ու հայրենասիրական մակարդակներու վրայ, Գ. Հանրապետութիւնը եւս կարենայ հասնիլ Բ. Հանրապետութեան, եւ երանելի օր մը նոյնիսկ գերազանցէ զայն, որպէսզի, աշխարհին ցոյց տանք, թէ մենք արժանի ենք անկախութեան:

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Մարտ 23

Livres reçus

LA POESIE ARMENIENNE

du Ve siècle à nos jours

Anthologie

VAHE GODEL

La Différence, Paris 2006

«ՖՐԷՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄԲ

"Ֆրէնի երաժշտական գարունը" փառատօնը ծանօթ է շրջանի երաժշտասէրներուն: Ամէն տարի լաւագոյն մեկնաբաններով համերգներ կը տրուին լեփ լեցուն դահլիճներու մէջ: Այս տարի եւս տարբեր չեղաւ ու Մարտ 24ին եւ 25ին երկու երեկոյ նուիրուեցաւ հայ դասական երաժշտութեան: Կազմակերպիչներն ու իրագործողներն էին երկու փայլուն արուեստագիտուհիներ. դաշնակահարուհի Ցամիկ Սիւրմէլեան ու երգչուհի Հերմինէ Երիցեան: Երկու համերգներուն ալ յատկանշական կողմը այն էր որ մասնակցող երաժիշտները ջախջախիչ մեծամասնութեամբ Հայեր չէին:

Ինչ կը վերաբերի հայկական անուններուն, Յ. Սիւրմէլեանի ու Հ. Երիցեանի միացած էին երգիչ Մկրտիչ Մկրտչեանը, երգչուհի Մանիկ Թերզեանը, երգարուեստի մարզին մէջ առաջին քայլերը առնող Օրէլի Տէյիրմէնճեանը, խոստմնալից երիտասարդ Ստեփան Կիւրեղեանը:

Առաջին երեկոյթին յայտագրին մէջ կային Կարօ Զաքարեանի, Ա. Բաբաջանեանի, Նիկոլ Գալանթարեանի, Գաբիկ Հովունցի, Ռ. Մելիքեանի, Պօղոս Ճելալեանի, Ալ. Յարութիւնեանի, Ա. Խաչատրեանի գործերէն ընտրուած երգչախումբի, դաշնակի կտորներ որոնցմով հանդէս եկան Միքայէլ Անտիէօի երգչախումբը, Լօրան Տուսէ (դաշնակ), Պէրնատէթ Կէնու (մեծծօ), Օտ-Իզապէլ Լը Սթան (սրինգ), Անտրէ Գլուքէօր (պարիթոն), Թոպի Քուհն (թաւջութակ), Փիէռ Փիշօ (փող), Ֆալիէն Ժէնսպիթթէլ (դաշնակ) Զէն – Կիհար – Գարվիլ երրեակը (սրինգ – ջութակ – դաշնակ): Յայտագիրը փակուեցաւ Սիւրմէլեան – Ժէնսպիթթէլի նուագած Բաբաջանեան – Յարութիւնեանի 2 դաշնակի ռափսոտիով:

Հայաստանի տարուան շրջանակին մէջ զետեղուած երկրորդ համերգին առաջին բաժինը յատկացուած էր Ի. դարու Բ. կէսին հայ երեւելի յօրինողներէն Է. Յովհաննիսեանի հնգեակին որ բարդ, բեմերէն քիչ անգամ հնչող գործ է: Յ. Սիւրմէլեանին հետ խումբը կազմուած էր Մարի-Ժոէլ Պաթիսթի – Հիզաքօ Ճին – Պէրլիէ (ջութակ), Կիյոմ Ուալփոէյն (ջութ) եւ Ալ. Լաքուրէ (թաւջութակ): Ունկնդիրները յատկապէս գնահատեցին հիմնական բաժինը ստանձնած դաշնակահարուհիին տիրական մեկնաբանութիւնը:

Համերգին Բ. բաժինը նուիրուած էր վաղ միջնադարէն մինչեւ Ի. դար երկարող հայ դասական երգարուեստի կտորներու: Նարեկացիի "Հաւուն հաւուն"ը, Գրիգոր Դանիէլեանի մշակումով միջնադարեան "Ո՞ւր ես մայր իմ"ը, Սայաթ Նովայի "Քանի վուր ջանիմ"ը, Արտեմ Այվազեանի "Աչուն"ը, Ռ. Մելիքեանի "Մի՛ լար"ը, Ալ. Յարութիւնեանի "Երգիր ինձ համար"ը մեկնաբանեց Հ. Երիցեան, մերթ սրինգի, երգէոնի, մերթ դաշնակի ընկերակցութեամբ: Խոր ապրումով, ձայնական նրբութիւններու վարպետ տիրապետութեամբ երգչուհին երգէ երգ աւելցուց ունկնդիրներու համակրանքը հայ դասական երգին նկատմամբ:

Վերջին մասը յատկացուած էր Հ. Երիցեանի կազմած ու ղեկավարած տարբեր ծագումներով 24 հոգինոց երգեցիկ խումբին: Հայերէնի խնամուած առոգանութեամբ անոնք երգեցին Յ. Մազմանեանի "Երազ"ը, հայկական պարերու թեմայով երեք փոլքլորիք երգեր, Մ. Եկմալեանի "Զարթիր որդեակ"ը, եւ Ալ. Յարութիւնեանի "Հայրենիքիս հետ"ը:

Երկու երեկոներուն ներկայացուեցաւ 17 հայ յօրինողի գործ. մասնակիցներու ընդհանուր թիւը աւելի քան 70 էր. անոնց մէջ կային Չինացիներ, Քորէացիներ, Ճափոնցիներ, Ֆրանսացիներ, Ռուսեր: Իսկապէս հայ դասական երաժշտութեան նուիրուած միջազգային փորում մըն էր ու ապացոյց՝ հայ դասական երաժշտութեան վայելած հետաքրքրութեան, գնահատանքին:

ԵՐԿՐՊԱԳՈՒ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Պէվըրլի Հիլզի համանուն պանդոկին դիմաց, Մարտ 24ին, տեղի ունեցած է բողոքի ցոյց մը Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Վէճտի Կէօնիւլի Լոս Անճըլըս այցելութեան դէմ, կազմակերպութեամբ Հ.Յ. Դաշնակցութեան: Մինչ պանդոկին մէջ Ուորլտ Աֆէրս Գաունսըլի կողմէ տրուած ճաշի ընթացքին Թուրք նախարարը կը բանախօսէր՝ "Ապահովական փոփոխուող միջավայրը եւ Թուրքիոյ ռազմագիտական դերը Եւրասիոյ մէջ" նիւթին շուրջ, դուրսը՝ հազարաւոր Հայեր, կարեւոր թիւով երիտասարդներ, պաստառներով եւ կոչերով իրենց բողոքի ձայնը բարձրացուցած են Թուրքիոյ ուրացման քաղաքականութեան դէմ: Խօսք առած են Հայ Դատի յանձնախումբի անդամ Րաֆֆի Համբարեան եւ Ներկայացուցիչներու Տան անդամ Պրատ Շըրմըն, դատապարտելով Թուրքիան:

***

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ Ի ՆՊԱՍՏ ՋԱՒԱԽՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Արեւմտեան Ամերիկայի Հ.Օ.Մ.ի Շրջ. Վարչութեան "Ջաւախք" հիմնադրամի յանձնախումբը կազմակերպած է հանգանակութեան ձեռնարկ մը, ի նպաստ Ջաւախքի Հայութեան կարիքներուն: Ձեռնարկը տեղի ունեցած է Մարտ 12ին, "ԷՄ. Վի. Մաճեսթիք" նաւուն վրայ: Բացումը կատարած է յանձնախումբին ատենապետուհին՝ Հայկուշ Քոհլըր, ներկայացնելով Ջաւախքի Հայութեան անձուկ վիճակը: Խօսք առնելով Ջաւախքի Հայութեան օգնելու կոչ ուղղած են առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Օ.Մ.ի Շրջ. Վարչութեան ատենապետուհի Անժելա Սաւոյեան եւ Լենա Պողոյեան: Հանգանակութիւնը վարած է Շրջ. Վարչութեան ընդհանուր հաշուապահ Ժասիկ Զառահեան, որ նաեւ ականատեսի վկայութիւններով եւ համոզիչ օրինակներով նկարագրած է Ջաւախքի Հայութեան մտահոգիչ վիճակը: Ձեռնարկի ընթացքին հանգանակուած է 60 հազար տոլար:

***

ՍԵՐԳԷՅ ԵՒ ԼՈՒՍԻՆԷ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Կլէնտէյլի "Ալեքս" թատերասրահին մէջ, Մարտ 15ին տեղի ունեցած է Սերգէյ (ջութակահար) եւ Լուսինէ (դաշնակահար) Խաչատրեանի նուագահանդէսը, հոծ բազմութեան ներկայութեամբ: Յայտագրի ընթացքին մեծ վարպետութեամբ մեկնաբանուած են Մոցարթի, Շումանի, Սեզար Ֆրանքի սոնաթները, Ռաւէլի "Ցիկան"ը եւ Առնօ Բաբաջանեանի "Վեց պատկերներ"ը:

***

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ "ՄԵՍՐՈՊԵԱՆ" ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Մոնթեպելլոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ, Մարտ 4ին տեղի ունեցած է Հ.Յ.Դ "Դրօ" կոմիտէի կազմակերպած հանգանակութեան ճաշը, ի նպաստ շրջանի "Մեսրոպեան" ազգային վարժարանին: Ձեռնարկի յայտագիրը վարած է Սագօ Նուրեան: Վարժարանին տնօրէնուհին՝ Հիլտա Սալիպա, անդրադառնալով յայտագրի վերջին բաժնի "յեղափոխական երգ"ի մշակոյթին, նշած է. «Հայոց մշակոյթը իր բազմերանգ բնոյթով նոր սերունդին սեփականութիւնը դարձնելը մեր սրբազան պարտականութիւնն է: Այդ իմաստով ալ Մեսրոպեան տառերը, Շիրազի բանաստեղծութիւնները, Աբովեանի "Վէրք Հայաստանի"ն, Սասնայ պարի իմաստը նոր սերունդը պիտի ստանայ վարժարանիս յարկին տակ: Իսկ յեղափոխական մեր մշակոյթը՝ խիզախութիւն, յանձնառութիւն, նուիրում եւ յարատեւ պայքար, երիտասարդութեան պիտի փոխանցուի մեր յեղափոխական շարժումին ընդմէջէն: Ահա թէ ինչու "Մեսրոպեան" ազգ. վարժարանի նուիրուած այս ձեռնարկը ունի յեղափոխական դիմագիծ»: "Դրօ" կոմիտէի ներկայացուցիչ Տիգրան Տէմիրճեան խօսք առնելով կոմիտէի զօրակցութիւնը յայտնած է վարժարանին, նշելով որ սերունդները հոն կը ստանան ազգային դաստիարակութիւն, ուսում, հաւատք եւ հաւատարմութիւն ազգային բոլոր աւանդութիւններուն նկատմամբ: Բեմ բարձրանալով երգիչ Գառնիկ Սարգիսեան, յեղափոխական երգերով մեծ խանդավառութիւն ստեղծած է ներկաներուն մէջ: Հանգանակուած է երեսուն հազար տոլար:

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԻԿ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ "ԱՒԱՐՏԱԽԱՂ"Ը ԼՈՅՍ ՏԵՍԱԾ

Երեւանի "Փրինթինֆօ" տպարանէն լոյս տեսած է բանաստեղծ, թարգմանիչ Կարիկ Պասմաճեանի գործերուն "Աւարտախաղ" հաւաքածոն: Գիրքը խմբագրած, յառաջաբանն ու վերջաբանը գրած է Եուրի Խաչատրեան: Հատորին մէջ առնուած են Կ. Պասմաճեանի "Լուսատիկ արեւի մէջ", "Շթաքարեր", "Բեղմնափոշի", "Մահուան եղանակներ" գործերը, "Ամերիկահայ անգլիագիր բանաստեղծներ" ծաղկաքաղը, "Յօդուածներ, թարգմանութիւններ, էսսէներ"ը, "Զրոյցներ ու հարցազրոյցներ"ը, քանի մը նմոյշ անոր ղրկած ու ստացած նամակներէն: Արուեստաբան Շահէն Խաչատրեան ալ տուած է կարճ յուշագրութիւն մը: Հատորը ճոխացած է նկարիչ Վիգէն Թադեւոսեանի գծանկարներով: Լոյս տեսած է Մոսկուայէն Վալենտին Բագիրեանի մեկենասութեամբ: 403 էջ է:

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝ ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

«Դուն Հայ չես» կ'ըսէ ախոռապանը. «բայց Հայերը տեսար: Ի՞նչ կ'ուզես մեզմէ»: Իսմէնէ անմիջապէս կ'որոշէ: Պէտք է վստահիլ: Եւ կը պատմէ իրականութեան մէկ մասը:

«Հալէպի Հայերէն մէկը կը փնտռեմ. բժիշկ մը որ իմ տիրուհիիս ազգականն է, Զարեհ է անունը: Պատերազմէն առաջ յաճախ ֆրանսացիներուն հետ կը տեսնուէր: Ըսին որ կարելի է հոս, հոթելը Բարոն» ("հոթել" բառը արտասանեց շեշտելով վերջին "լ" գիրը հեշտասէր երկար հնչիւնով մը, ինչպէս մէկը որ արեւմտեան արգիլուած հաճոյքներ կը մտածէ, մինչդեռ խեղճ Իսմէնէի ներկայ վիճակը շատ հեռու է այդ զգացումներէն):

«Զինքը գտնողին լաւ վարձատրութիւն մը կայ: Ես այլեւս ոչ մէկը ունիմ: Իրեն պէտք է պատմեմ իր ընտանիքին մասին թէ ինչպէս մեռան եւ իրենց նկարները պիտի յանձնեմ: Յետոյ, կարելի է որ ինքը զիս իբրեւ ծառայ առնէ: Երիտասարդ չեմ բայց ամէն բան գիտեմ ընել»:

«Այո, ամէն բան» կը խնդայ ախոռապանը «Թարմ միս մը չես: Բայց կ'ուզեմ օգնել քեզի: Դուն Յոյն ես չէ՞: Ուրկէ՞ ես»: Իսմէնէ կ'այրի անհամբերութենէն, տենդօրէն կը զգայ Շուշանիկի, աղջիկներուն, պզտիկներուն, հիւծած ընտանիքի ծանր քայլերը, որոնք կը մօտենան, կը մօտենան. եւ ինք ուշ հասնելու սարսափը ունի, որ արդէն Հալէպէն դուրս կը ղրկեն, հոն ուր ոչ մէկը կարելիութիւնը ունի գտնելու զիրենք. եւ ջանք մը կ'ընէ կրկին ժպտելու, իր փոքրիկ դերասանութիւնը ընելու, իր հնդիկ ամուսինը եւ երգերը յիշելու, իր աղաչանքները եւ ցանկութիւնները: Բայց ձայնը խռպոտ է եւ արցունքները խեղդուն:

Այն ատեն ախոռապանը գոհացած, քընոտ աչքերով, կարճ հրաման մը կ'արձակէ. «Մանուկ, վեր գնա՛, նայէ: Դռնապան Եաննաքիին հարցուր այս Զարեհին մասին»: Եւ Իսմէնէին դառնալով՝ «Ոսկեդրամ մը տուր: Ես քեզի պիտի ծառայեմ Աստուծոյ սիրոյն եւ քու գեղեցիկ պատմութեանդ համար, բայց Եաննաքիի համար ո՛չ Աստուած կայ, ո՛չ ալ Սուրբեր. ան կ'ուզէ կանխիկ վճարուիլ»:

Իսմէնէ ոսկեդրամ մը կը յանձնէ Մանուկին: Մանուկ կը բանայ պզտիկ դուռ մը որ կը բացուի տնօրէնին գրասենեակը տանող ներքին սանդուխին վրայ եւ անմիջապէս լոյսի եւ նուագի հոսանք մը կը մտնէ ախոռին մէջ: Մանուկ կ'անցնի անդին եւ կամաց կրկին կը գոցէ:

«Հիմա կը մնայ սպասել» կ'ըսէ մարդը «եւ աղօթել, եթէ կարող ես. կամ քու ճարպիկութիւններէդ բան մը ընել»:

Իսմէնէ շնորհակալութիւն կը յայտնէ եւ յոգնաբեկ՝ աչքերը կը գոցէ: Վայրկեանի մը համար քունը կը տանի: Կ'երազէ Սմբատը՝ ժպտուն, Շուշանիկին ձեռքը բռնած: Բայց Սմբատին գլուխը դէշ կերպով դրուած է վիզին վրայ եւ Իսմէնէ սարսափէն սառ կտրած, կը տեսնէ որ դէպի մէկ կողմ կը կախուի, պատրաստ անջատուելու – բայց Շուշանիկ չանդրադառնար եւ կը շարունակէ պատմել: Իսմէնէ երազին մէջ անոնց ետեւէն կը վազէ Իսաագի եւ Գաթէրինային հետ, կանչելով. բայց բառերը իսկապէս դուրս չեն ելլեր բերնէն եւ չի յաջողիր անոնց հասնիլ:

"Կարճատեւ մղձաւանջ մը, չարագուշակ" կը մտածէ Իսմէնէ: Իրեն կ'երեւայ որ անվերջ ժամանակ մը անցած է: Իր շուրջը կը նայի, մարդիկ ցած ձայնով իրարու հետ կը խօսին, բայց ինքնաշարժին վարորդը մեկնած է: Արդեօք զինքը մատնելո՞ւ: Իսմէնէ կը զգջայ հետը դէշ վարուած ըլլալուն համար. յետոյ կը զղջայ զղջացած ըլլալուն համար, կը ջանայ ոտքի ելլել, կը լափոտէ բաներ մը: Շատ ծանր գլուխ մը ունի եւ ձախ թեւը դէշ կը ցաւի: "Արդեօք մեռնելու վրա՞յ եմ" կը մտածէ: Բայց այդ պահուն դուռը կը բացուի ու սրտնեղած եւ անհանգիստ մարդ մը կ'երեւայ որ դէպի վար կը նայի:

Իսմէնէ կը ճանչնայ անմիջապէս: Ինքն է. Զարեհը: Ընտանեկան անշփոթելի խոշոր գլուխը, Սմբատին քիթը, փոքր եւ ճերմակ ձեռքերը, կլորաձեւ մատներով: Ահա, ինքը գիտէ ինչ պէտք է ընել, երկար մղձաւանջը կը սկսի թուլնալ: Ինք մինչ այդ ազատ է:

Շուրջի մարդիկը կը դիտեն հետաքրքիր, պատրաստ՝ պատմութեան եւ յետոյ խորհրդաւոր հանդիպումին: «Ձեզմէ ո՞վ հիւանդ է որ զիս փնտռեցիք աճապարանքով» կ'ըսէ Զարեհ ջղայնացած: «Կին մը, ըսին ինծի»: Իսմէնէ ոստումով մը կը մօտենայ իրեն եւ բարձր ձայնով կ'ըսէ. «Ես եմ, տոքթէօր, Իսմէնէ: Ձեր Սմբատ եղբօրմէն եւ ընտանիքէն լուրեր կը բերեմ: Առանձին եմ, հիւծած. Աստուծոյ սիրուն, ուտելիք բան մը տուէք»:

Կը յուսայ որ Զարեհ հասկնայ եւ հարցումներ չընէ: Հակառակ պարզ լեզուին, զինքը կը դիտէ յանդուգն աչքերով, ջանալով վստահեցնել ինքզինքը որ ծուղակ մը չէ: Մարդը իրեն հետ ներս բերաւ մաքուր զգեստներու, սուղ անուշահոտութեան, լաւ ծխախոտի բոյր մը որ Իսմէնէի սիրտը կը ճմլէ, յիշելով: Զարեհ ալ կը յիշէ, վախով, (նախորդ օրը ստացաւ Երուանդին ուղարկած թերթը որ զինքը մեծ անձկութեան մէջ դրաւ): Կը բռնէ դաստակէն եւ կը փափսայ, «Քեզ չեմ ճանչնար, բայց եթէ լուրեր կը բերես, բարի եկար: Պէտք է բարեւեմ բարեկամներս, սպասէ ինծի մեծ ելքին սանդուխներուն վարը, եւ մի՛ ցուցներ ինքզինքդ»:

(Շար. 81)

ՆԱԶԱՐԷԹ ՊՇՏԻԿԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նազարէթ Պշտիկեանի յուղարկաւորութիւնը կը կատարուի Չորեքշաբթի, Ապրիլ 12 ժամը 14ին Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Սիմըթիէռ Փարիզիէն տը Սէն Թ'Ուէն։

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ֆրանսայի Շրջանի վարիչ մարմինը խոր յուզումով կը գուժէ իր ղեկավար ընկերոջ՝

ՆԱԶԱՐԷԹ ՊՇՏԻԿԵԱՆ-Ի

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 5ին, փարիզեան հիւանդանոցի մը մէջ։

Թաղման արարողութիւնը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, Ապրիլ 12, ժամը 14-ին Փարիզի Սուրբ Յովհաննէս – Մկրտիչ եկեղեցւոյ մէջ,

15 rue Jean-Goujon - Paris 8e

որմէ ետք հանգուցեալին մարմինը կը փոխադրուի Սիմըթիէռ Փարիզիէն տը Սէն Թ'Ուէն։

***

Կուսակցութեանս մասնաճիւղերը, Տիկնանց յանձնախումբը, Հ.Մ.Մ.ի մարզական խումբը, Կայծ Նոր Սերունդը եւ Նազարէթի երիտասարդական կազմը խոր յուզումով կը բաժնեն ցաւը հանգուցեալին պարագաներուն։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՓԱՐԻԶ.– Պ. Կ. Ջրբաշեան առ ի գընահատութիւն Հ. Ցարութիւն Վրդ. Պըզտիկեանի հարցազրոյցին ("Յառաջ", Ապրիլ 4) 100 Եւրօ։

LA PAROISSE ARMENIENNE
CATHOLIQUE
SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR
DE MARSEILLE
vous invite à participer à la conférence
qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION DU GENOCIDE ARMENIEN

COMMIS PAR LES AUTORITES OTTOMANES . TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar
(Couvent et Siège Patriarcal
des Arméniens Catholiques
depuis 1749).

Un programme
d'inspiration «24 avrilienne»
suivra la conférence.
Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Ապրիլ 13.–
Յիշատակ ընթրեաց
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Ժամերգութիւն՝ ժամը 8ին,
Կարգ ապաշխարողաց՝ ժամը 10ին,
Պատարագ՝ ժամը 11.30ին,
Կարգ ոտնլուայ՝ ժամը 17ին։

□

Հսկումն յիշատակ մատնութեան
եւ չարչարանաց Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 19ին։

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 14.–
Յիշատակ խաչելութեան եւ թաղման
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Սկիզբ երեկոյեան ժամերգութեան՝ ժամը 17ին։

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ընթրեաց պատարագ՝ ժամը 10ին,
Ոտնլուայ՝ ժամը 16ին,
Խաւարում՝ ժամը 18.30ին։

ՈՒՐԲԱԹ.–
Թափօր Թաղման՝ ժամը 17ին։

***

Ս. ՊՕՂՈՍ–ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին,
Ոտնլուայ՝ ժամը 16.30ին,
Խաւարում՝ ժամը 20ին։

ՈՒՐԲԱԹ.–
Թափօր Թաղման՝ ժամը 17ին։

***

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Յիշատակ ընթրեաց՝ ժամը 10.30ին,
Ոտնլուայ՝ ժամը 17.30ին,
Խաւարում՝ ժամը 20ին։

ՈՒՐԲԱԹ.–
Թաղում՝ ժամը 17.30ին։

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Կարգ ապաշխարութեան՝ ժամը 10.15ին,
Պատարագ՝ ժամը 11ին,
Ոտնլուայ՝ ժամը 17ին,
Սկիզբ գիշերային ժամերգութեան՝ ժամը 19.30ին։

ՈՒՐԲԱԹ.–
Յիշատակ խաչելութեան եւ թաղման
Սկիզբ երեկոյեան ժամերգութեան՝ ժամը 17ին։

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ-ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ժամերգութիւն՝ ժամը 9ին,
Ընթրեաց պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՑ. ՀԷՔԻՄԵԱՆ
Ոտնլուայ՝ ժամը 16ին,
Կարգ չարչարանաց՝ ժամը 19.30ին։

ՈՒՐԲԱԹ.–
Թափօր Թաղման՝ ժամը 17ին։

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Վերջին ընթրեաց, պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ՝
ԶԱՏԻԿ. ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Ոտնլուայ՝ ժամը 17ին,
Կարգ խաւարման՝ ժամը 19.30ին։

ՈՒՐԲԱԹ.–
Թաղման կարգ եւ Թափօր՝ ժամը 17ին։

***

ՍԷՆ ԼՈՒ - ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ոտնլուայ՝ ժամը 18ին։
Կը պատարագէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՑ. ՏԷՏԷԵԱՆ

ՈՒՐԲԱԹ.–
Թաղման կարգ՝ ժամը 18ին։

***

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

ՈՒՐԲԱԹ.–
Թաղման կարգ եւ Թափօր՝ ժամը 17ին։

Informations artistiques

LES YEUX BRULANTS
Mémoire des Arméniens
par Antoine Agoudjian
Exposition du 20 avril au 27 mai organisée par «Pour que l'esprit vive», au : Fait et Cause - 58 rue Quincampoix 75004 Paris

***

Exposition du 13 avril au 1er juillet Bibliothèque Part Dieu, Espace Patrimoine, Lyon (organisée par la Bibliothèque Municipale)

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

ԼԵԶՈՒՆ ԱԶԳԻՆ ՀՈԳԻՆ Է,
ԴՊՐՈՑԸ ԱԶԳԻՆ ՏՈՒՆՆ Է։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

2006–2007 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
տեղի կ'ունենան
ԱՊՐԻԼ 25–էն մինչեւ ՄԱՅԻՍ 31

RENTREE DES CLASSES 2006/2007

Inscriptions ouvertes du **25 avril** au **31 mai 2006**

TEBROTZASSERE

Ecole mixte bilingue
Franco - Arménienne
(Académie de Créteil)
1 Boulevard du Nord —
Carrefour d'Arménie
93340 LE RAINCY

Chef d'Etablissement :
Monsieur HAIG SARKISSIAN

- Maternelle: 3 sections
- Primaire: Sous Contrat Simple
- Collège: Sous Contrat d'Association avec l'Etat

Equipe pédagogique compétente et motivée

- Programmes officiels de l'Education Nationale
- Enseignement de la langue et de la culture arménienne
- Cours de chant : «Chorale Tebrotzassère»
- Cours d'informatique dès le primaire
- Langue vivante 1 : anglais
- Langue vivante 2 : allemand ou espagnol.

Equipements pédagogiques évolutifs :

Laboratoire de langues — Centre de Documentation et d'Information — Salle d'ordinateurs — Laboratoire de physique-chimie.

Ramassage scolaire par autocars suivant possibilités.
Cantine assurée.

Pour tout renseignement :

Tél. / fax : **01. 43. 81. 01. 72**
direction@tebrotzassere.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

ԶԱՏԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,
ժամը 13էն սկսեալ

Restaurant **«Les Diamantaires»**
60 rue La Fayette — 75009 Paris
Métro Cadet

Հաճելի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ։

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 կամ 01 45 93 00 25 թիւերուն։

***

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

ESPOIR POUR L'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...
Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 12
MERCREDI 12 AVRIL 2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 – FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.432 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 81e ANNEE — N° 21·432

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՖՐԱՆՍԱ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

ԱՄԷՆ ԻՆՉ ՎԵՐՋԱՑԱ՞Ւ

ՍԷ·ՓԷ·Ը·-ԷՆ ԵՏՔ ՍԷ·ԷՆ·Ը·՞-Ն

Հարկ եղաւ աւելի քան երկու ամիս կորսնցնել, Ֆրանսայի նման երկրի մը մէջ, որպէսզի իշխանութիւնները, ի վերջոյ, տան այն անխուսափելի որոշումը, որմէ կարելի չէր խուսափիլ: Ֆրանսա երբեք այսքան անտրամաբանական, ծիծաղելի եւ նուաստացուցիչ դիրքի մէջ չէր եղած: Հանրապետութեան Նախագահէն սկսեալ յաջորդաբար գործադրուեցան որոշումներ որոնք հակասահմանադրական իսկ էին: Նախագահը Մարտ 31ի իր ելոյթով օրէնք մը հռչակեց (Սէ.Փէ.Ը.) որ պիտի չգործադրուէր աւելի լարելով մթնոլորտը, նախարար մը (Պորլօ) նամակներ գրեց գործատէրերուն ճշդելու համար որ պէտք չէ գործադրեն օրէնք մը որ հռչակուած էր...: Այս ամբողջը այնքան չէին համապատասխաներ իրաւական երկրի մը, որ ընդդիմութեան համար դժուար չէր հեգնել, ծաղրել, դիտել տալով մինչեւ իսկ, որ նախագահին պարագան ուրիշ բան չէր քան "բարձր դաւաճանութիւն", նախարարինն ալ 5 տարուան բանտարկութեան արժանի էր: Նոյն շրջանին նախարարապետը կրկնեց ու կրկնեց իր անզիջող դիրքը: Վճռած էր որ ոչինչ կը փոխուի Սէ.Փէ.Ը.-ի օրէնքին վերաբերեալ, ոչ անոր բնոյթը կրնայ փոփոխութիւն կրել, ոչ ալ բովանդակութիւնը եւ այսպէս երկիրը կրեց տնտեսական ծանր վնասներ, փողոցները լեցուեցան ցուցարարներով, գործադուլի շարժումներ խանգարեցին ժողովուրդին բնական կեանքը, դպրոց եւ համալսարան փակուեցան, ուսումը տուժեց եւ Տ. տը Վիլփէն շարունակեց յամառօրէն պնդել իր օրէնքին բարենպաստ նպատակին վրայ: Օրէնք մը, որ 8րդ յօդուածն էր կարելիութիւններու հաւասարութեան օրէնքին եւ որուն, խորքին մէջ ոչ ոք պէտք ունէր: Տ. տը Վիլփէն համոզուած է որ ինք ամէնէն խելացին է եւ ով որ իրեն հետ համաձայն չէ, բան չէ հասկցած, ապուշ է: Այս տեսակէտը պաշտպանեց մասամբ, նոյնիսկ Ապրիլ 10ի իրիկունը (հեռատեսիլի Ա. կայան), երբ պնդեց որ չէ հասկցուած կամ սխալ հասկցուած է, այս ամբողջն ալ իրեն համար փորձութիւն մը եղած է, որմէ դաս կը քաղէ: Հարցը հոն է, որ նախագահ եւ նախարարապետ վարկաբեկուած են, երկուքին համար ալ պարտութիւնը ծանր է եւ պարտութիւն է նաեւ երկրին հանրապետական հիմնարկներուն: Ֆրանսայի գործադիր իշխանութիւնը շատ տխուր պատկեր մը պարզեց եւ շատ բնական էր որ արտասահմանն ալ չխնայէ Ֆրանսայի: Այնքան բացայայտ էր որ բուն հարցը գործազրկութենէն անդին, երիտասարդներու ապագայի կարելիութիւններէն անդին, ուրիշ բան չէր եթէ ոչ տը Վիլփէն-Սարքոզի տգեղ մրցակցութիւն մը, ուր ի վերջոյ տը Վիլփէն ջախջախիչ պարտութիւն մը կրեց:

Երեւութապէս գոնէ, ուսանող եւ սենտիքա յաղթած են, բայց, ամէն բան շատ յստակ չէ: Ապրիլ 11ին, ուսանողներու մէկ մասը միայն զէնքերը վար կը դնէր, մինչ ուրիշներ կը շարունակէին շարժումները: Դեռ կային համալսարաններ, որոնք չէին կրցած դուռները բանալ եւ ուսանողներուն դասընթացքնե-դուրս ելլել: Մարսէյլի մէջ, Վիէօ Փորը րակառքերու կայանները արգելքի տակ առնուած էին եւ երթեւեկ չկար, ոչ մէկ հանրակառք կրցած էր կառատուններէն դուրս ելլել: Մարսէյլի մէջ, Վիէօ Փորը գրաւուած էր եւ հոս ու հոն նման շարժումներ կը շարունակուէին, ինչպէս Ապրիլ 11ին նախատեսուած ցոյցերը որոնք չէին ջնջուած, սկսելով Փարիզէն:

Այս վերապահ ընթացքը իր պատճառաբանութիւններն ունի: Նախ, սենտիքաներն ալ համամիտ են, վստահութեան պակաս մը կայ: Ի՞նչ կը պատրաստէ իշխանութիւնը այդ փոխարինող օրէնքով: Երկար վիճաբանութիւններէ ետք է որ գտնուած է այս փոխարինող բառը, որպէսզի ջնջում, առկախում որակումները չգործածուին: Յետոյ, նման յաղթանակէ մը ետք, ուսանողական որոշ շրջանակներ կը խորհին որ Սէ.Փէ.Ը.-էն ետք, կարելի է գրաւել Սէ.էն.Ը.-ով, որուն մասին խօսք չկար առայժմ: Այս մէկը՝ Պայմանագրութիւն Նոր Աշխատանքի համար, ցարդ բաւական արդիւնաւոր եղած էր եւ աւելի ընդհանուր բնոյթ ունէր, չէր սահմանափակուած (մինչեւ 26 տարեկան) եւ կը վերաբերէր 20 աշխատաւորներէն նուազ աշխատող ունեցող ձեռնարկներու:

***

Հակառակ անոր որ Տ. տը Վիլփէն, Ապրիլ 10ին, կառչած մնալով իր աթոռին շարունակեց յոխորտալ, պնդելով նաեւ թէ ձեռնթափ պիտի չըլլայ, կասկած չկայ որ իր պարտութիւնը շատ ծանր է, մանաւանդ երբ յիշուին իր յայտարարութիւնները: Ոչ մէկ ատեն, ուզեց տեղի տալ: Ապրիլ 10ին, բացատրեց թէ ուզած էր արագ ընթանալ եւ արդիւնքը այն եղաւ, որ այդ հապճեպ ընթացքը ամէն ինչ դանդաղեցուց եւ երկիրը մեծ վնաս կրեց, որպէսզի Տ. տը Վիլփէն փրկէ իր պատիւը...: Մնաց որ հաշիւներն ալ սխալ ելան, քանի Սարքոզի դէմ իր մենամարտին մէջ, յաղթողը – որու պարտութիւնը կը ծրագրէր – Սարքոզին եղաւ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻՈՅ խորհրդարանական ընտրութիւնները անբաղձալի պատկեր մը պարզեցին Ապրիլ 11ին, քուէատուփերու փակումէն 24 ժամ ետք (Ապրիլ 10, ժամը 13): Վերջնական արդիւնք չկար պաշտօնապէս եւ վերջին 24 ժամերուն գիրար հակասող լուրեր տրուեցան: Ի վերջոյ, Երեքշաբթի առտու (Ապրիլ 11) ապահով կը թուէր որ Ռ. Փրոտիի կեդրոն ձախ համախմբումը յաղթած է երեսփոխանական ժողովին մէջ, բայց Պէրլուսքոնիի աջն է որ մէկ աթոռի առաւելութեամբ (155/154ի դէմ) յաղթած է Ծերակոյտին մէջ: Ամէն բան կախում ունէր արտասահմանի Իտալացիներու քուէներէն: Ամէն պարագայի մէջ, ձախ ժողով մը եւ աջ Ծերակոյտ մը անկառավարելի կը դարձնեն Իտալիան:

ԱԼԺԵՐԻՈՅ նախագահ՝ Ապտէլազիզ Պութեֆլիքա յետաձգած է ֆրանքօ-ալժերական բարեկամութեան դաշինքին ստորագրութիւնը, այն պատճառաբանութեամբ որ երկու երկիրներու յարաբերութեանց վերահաստատումին անհրաժեշտ միջոցները չկան: Ֆրանսայի Արտաքին Նախարարին այցելութեան առթիւ է որ Պութեֆլիքա այս ընթացքը արտայայտած է, քանի Ֆ. Տուսթ-Պլազի չէ յաջողած մոռցնել Ֆրանսայի գաղթատիրութեան "դրական" որակումին հարցը:

ՍԱՐՔՈԶԻԻ հարցազրոյցը, որ պէտք է լոյս տեսնէր Ուրբաթ Ապրիլ 7ին, ի վերջոյ հրատարակուեցաւ Ֆիկառոյի Ապրիլ 11ի թիւին մէջ: Ան կը բացատրէ իր դիրքը Սէ. Փէ. Ը.ի նկատմամբ եւ կը շեշտէ թէ վտանգը՝ յամառիլն է: Չընդունիր որ սարքոզեաններ ըլլան, ինք նախագահն է բոլոր կուսակցականներուն, իր քաղաքական ընտանիքին: Չէ հրաժարած խզումէն, որ աւելի քան երբեք անհրաժեշտ կը նկատէ, յուսախաբ չընելու համար Ֆրանսացիները: Կը բացատրէ նաեւ թէ ինչո՞ւ յետաձգել տուած է հարցազրոյցին հրատարակութիւնը: Որպէս պատասխանատու անձ, չէր ուզած արտայայտուիլ, ցորչափ բոլորը համաձայնած չէին տագնապէն դուրս ելլելու համար:

ԵՈՒԿՈՍԻ փոխ նախագահը՝ Վասիլի Ալեքսանեան իր նշանակումէն 48 ժամ յետոյ կոպտօրէն ձերբակալուած է ոստիկաններու կողմէ, որոնք բիրտ կերպով բացած են դուռը այն յարկաբաժնին ուր կը գտնուէր: Իր փաստաբանը՝ Գէորգ Դաւթեան յայտարարած է, որ քննութեան տակ առնուած է ինչքերու եւ բաժնեթուղթերու խարդախութեան յանցանքով: Այս ձերբակալութեամբ, Ալեքսանեան կը միանայ Եուկոսի այլ պատասխանատուներու որոնք տարիներէ ի վեր բանտը են, գլուխն ունենալով Խոդորովսկին:

ՊԵԼՕՌՈՒՍԻՈՅ նախագահը՝ Լուկաշէնկօ եւ իր իշխանութեան երեսուն անձնաւորութիւններ վիզա չեն ստացած Եւրոպա գալու համար, ըստ Եւրոպական Միութեան որոշումին: Այս վերջինը այս ձեւով կը բողոքէ Լուկաշէնկոյի վերընտրութեան խարդախութիւններուն դէմ: Վերընտրուած էր ձայներու 83%ով, Մարտ 19ին:

ԳԱԶԱՅԻ գօտիին հիւսիսը՝ Պէյթ Լահիայի տան մը վրայ Իսրայէլացիք հրագունդ մը նետած են սպաննելով ութամեայ աղջնակ մը, 12 հոգի ալ վիրաւորուած են:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ նախագահը Մ. Ահմետինեճատ կրկնած է Ապրիլ 10ին, որ իր երկիրը եօթա մը իսկ չի նահանջեր հիւլէական իր ծրագրին մէջ: Միւս կողմէ, Պուշ հերքած է որ իր կառավարութիւնը զինուորական գործողութիւն մը կը պատրաստէ Իրանի դէմ, որպէսզի հրաժարի հիւլէական իր ծրագրէն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՇԱՐԼ ԱԶՆԱՒՈՒՐ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Նախագահ Ռ. Քոչարեան Ապրիլ 10ին ընդունած է Շարլ Ազնաւուրը որ Երեւան գացած է "Էօ Ֆրանս"ի դէպի Երեւան անդրանիկ թռիչքով: Տեսակցութեան նիւթ եղած են մարդասիրական խնդիրներ, անդրադարձած են "Ազնաւուր Հայաստանի համար" հիմնադրամի միջոցով իրագործուող ծրագիրներու ընթացքին եւ նոր ձեռնարկներուն: Նախագահը տեղեկացուցած է թէ ներկայիս Ֆրանսական կողմին հետ շփումներու մէջ են տարբեր ոլորտներ ընդգրկող հետաքրքրական ծրագիրներու առնչութեամբ: Ռ. Քոչարեան նոյն օրը ընդունած է նաեւ "Էօ Ֆրանս"ի պատուիրակութիւնը, Կի Տարթիի գլխաւորութեամբ, ինչպէս նաեւ անդրանիկ թռիչքով Երեւան ժամանած հիւրերու խումբը: Մանրամասնութիւններ՝ մեր յաջորդ թիւով:

***

ՖԱԴԷՅ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆՈՐ ՊԱՇՏՕՆԸ

Կառավարութեան Ապրիլ 6ի որոշումով վերջ տրուած է Գիտութեանց Ակադեմիայի Նախագահ Ֆադէյ Սարգսեանի պաշտօնին: Վարչապետին Ապրիլ 10ի որոշումով ան նշանակուած է վարչապետի խորհրդական:

ԹՈՒՐՔԻԱ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՐՇԱՒԻ ԿԸ ՁԵՌՆԱՐԿԷ

Թուրքիոյ Արտաքին Նախարար Ա. Կիւլ յայտարարած է թէ իր երկիրը պիտի աշխուժացնէ "ենթադրեալ Հայկական Ցեղասպանութեան" պնդումները ջրող տեղեկատուութեան արշաւը համացանցի վրայ:

Պատասխանելով ընդդիմադիր երեսփոխանի մը, Ա. Կիւլ ըսած է թէ Անգարա դիւանագիտական ճամբով արդէն իր դժգոհութիւնը փոխանցած է այն 18 երկիրներուն որոնց խորհրդարանները Հայկ. Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւեր քուէարկած են: Աւելցուցած է նաեւ թէ նշեալ երկիրներու հետ նախատեսուած ծրագիրները վերատեսութեան ենթարկուած են եւ կարգ մը ծրագիրներ առկախուած են:

Թուրքիոյ Արտաքին Նախարարը ըսած է նաեւ թէ իր նախարարութիւնը մօտէն կը հետեւի հայկական թեզը պաշտպանող բոլոր հրատարակութիւններուն: "Թրքերէնէ այլ մէկ միլիոն կայքէջեր գոյութիւն ունին համացանցի վրայ, որոնք կ'արծարծեն Հայկական Հարցը: Եթէ նկատի ունենանք նաեւ բոլոր լեզուներով քարոզչութիւն կատարելու Հայկական Սփիւռքին ջանքերը, այդ կը նշանակէ թէ երկար ժամանակ հարկ կ'ըլլայ սահմանելու համար ոչ թրքերէն հրատարակութիւններու թիւը: Կան շուրջ 450.000 կայքէջեր որոնք կը պաշտպանեն հայկական տեսակէտը եւ զայն կը սփռեն այլ լեզուներով, գլխաւորաբար անգլերէնով, ֆրանսերէնով, գերմաներէնով, իտալերէնով եւ սպաներէնով" եզրակացուցած է Ա. Կիւլ:

ԵՀՈՒՏԻ ՄԵՆՈՒՀԻՆԻ Ա. ՄՐՑԱՆԱԿԸ՝ ՀՐԱՉԵԱՅ ԱՒԱՆԷՍԵԱՆԻ

Եհուտի Մենուհինի ջութակի 12րդ միջազգային մրցումին, սենիորներու դասակարգին մէջ (16էն 22 տարեկան) Ա. մրցանակին արժանացած է (7.000 Եւրօ) 19ամեայ Հրաչեայ Աւանէսեան:

«ՄԻՍ ԻՐԱՔ – 2006»Ը ՀԱՅՈՒՀԻ ՄԸ

23ամեայ Իրաքահայ Թամար Կորեկեան ընտրուած է "Միս Իրաք – 2006": Ան ընտրուած է 12 մասնակիցներու մէջէն, որոնք կը ներկայացնէին կրօնական տարբեր համայնքներ: Մրցումը որ տեղի ունեցած է Ապրիլ 5ին Պաղտատի ակումբներէն մէկուն մէջ, ապահովութեան շատ խիստ միջոցներու ներքեւ, այն աստիճան որ նոյնիսկ լրագրողներու մուտքը արգիլուած է: Մահմետական հինգ թեկնածուներ ալ մրցումէն քանի մը օր առաջ քաշուած են, վախնալով հաւանական հետեւանքներէն:

ՆՈՐ ԱԹՈՄԱԿԱՅԱՆ ԻՆՉՈՒ, ԻՆՉՊԷՍ

Ամէն անգամ որ Հայաստանին առնչըւած ատոմակայանի նիւթ բացուի, շատեր կը յիշեն 1987 ուշ աշնան այն օրերը երբ ատոմակայանը յանկարծ ներկայացաւ քաղաքական յառաջապահ մարտիկի դերքով: Անոր լծակով արտայայտուեցան առաջին դժգոհութիւնները, զետեղուած՝ բնապահութեան գլխուն տակ, քանի որ խորհրդային իրականութիւնը ուղղակի քաղաքական ոլորտին բոլոր ճամբաները ամրապէս փակած էր: Ցեղասպանութեան յոյցեր տեղի ունեցան Երեւանի մէջ, շշմեցնելով ու նոյն ատեն խանդավառելով: Եօթանասուն տարուան ապրուած բնական հակազդեցութիւն կ'ընէր անշուշտ զարմանքը, իսկ խանդավառութիւնը յայտնուած մտահոգութենէն աւելի կ'ուղղուէր պարզուած երեւոյթին: Ու ընդհանուր այդ հոգեվիճակին մէջ թերեւս ոչ ոք անդրադարձաւ, կամ մտածեց որ ատոմակայանը կառուցւելի գործատան հետ կոչուած էր Հայոց պատմութեան մէջ նոր գլուխ մը բանալու առաքելութեան գլխաւոր դերակատարութեան: Բնապահութեան մտահոգութիւնը շուտով վերածուեցաւ Ղարաբաղի միացումին պահանջին, երկրին ժողովուրդին մօտ մէկ երրորդը խմբելով Օփերայի հրապարակը: Մնացածը ծանօթ է բոլորիս ու բոլորին: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ վաղուան պատմագիրը ի՛նչպէս պիտի մեկնաբանէ Ղարաբաղեան հարցին ատոմակայանով ու Նայիրիտով 1987ի նախաբանը, ի՛նչպէս պիտի բացատրէ մէկէն միւսին անցքին բեմադրութիւնը:

Ատոմակայանի հարց մը, աւելին՝ հետանկար մը այսօր ալ գոյութիւն ունի Հայաստանի համար: Ներկայի կայանին կեանք վճռուած է մինչեւ 2016· ու ծանօթ է որ երկրին ուժանիւթ հայթայթելու առումով ի՛նչ կենսական է անոր գոյութիւնը: Հետեւաբար ի՞նչ պէտք է ընել· նո՞րը կառուցել, հինին կեա՞նքը երկարել: Ապահո՞վ է Մեծամօրինը:

Նիւթին, տեսակէտներու, հարցականներու մասին համապարփակ գրութիւն մը ստորագրած է Արմէնուհի Մելքոնեան ("Հայաստանի Հանրապետութիւն", Մարտ 11):

Ատոմակայանը ուժանիւթի անհրաժաբելի աղբիւր ըլլալուն հետ ունի ընկերային, գիտական, տնտեսական երեսակներ: Հոն շուրջ 2200 մասնագէտներ կ'աշխատին, իսկ յետագային կառոյցը զարգացնելու պարագային շինարարութեան տասը հազար նոր աշխատատեղի կը բացուի: Ցետոյ կայ գիտական ամբողջ համակարգ մը որ հարկաւոր մասնագէտները կը պատրաստէ, պահելով գիտահետազօտական կառոյցներ:

Այս բոլորէն զատ, ռազմավարական անվիճելի իմաստ կը ներկայացնէ ատոմակայական մը որեւէ երկրի համար: Կը բաւէ յիշել Թրքական պարբերական ձայները որոնք կը բարձրանան Հայաստանը այդ հզօր ստացուածքէն զրկելու, չափով մը անզօրացնելու յետին միտքերով: Անոնք կը պահանջեն որ Մեծամօրը փակւի, ներկայացնելով բնապահութեան, ապահովութեան պատճառաբանութիւններ:

Եւրոպական միութիւնը "Նոր դրացիներ" ծրագրով խիստ պահանջ դրած է որ Հայաստան մինչեւ 2016 440 ՄՎԹ· հզօրութեամբ նոր ատոմակայան ունենայ: Ատիկա կը նշանակէ ճարել 1·5 միլիառ տոլար: Եւրոպան պատրաստակամ է 100 միլիոն տրամադրելու, իսկ Հայաստան պարզ է որ միայն պետական միջոցներով չի կրնար նման նախաձեռնութեան դիմել: Եւ եթէ տասը տարուան ընթացքին հարցին լուծում բերուած չըլլայ, Մեծամօրի պաշարները կը սպառին, երկիրն ալ ուժանիւթի 40% պակաս կ'ունենայ:

Այս կացութիւնը կը ստիպէ ճարերու մասին մտածել: Ինչպէս կը գրէ Ա· Մելքոնեան, որոշ հատուած մը կ'առաջարկէ գոյութիւն ունեցող կայանը ամբողջութեամբ պետական պահել, նորին կամ նորերու համար սեփական բաժնետիրութեան դիմել: Այլ խօսքով՝ 51% նուազագոյն մը յատկացնել պետական մարզին, մնացեալը սեփականացնել: Այս լուծումին կողմնակիցները օրինակ կու տան Սլովաքիոյ, Պուլկարիոյ, Լատվիոյ պարագաները:

Դէմ արտայայտուողները լսուածը համոզիչ չեն գտներ, ըսելով որ յիշուած երկիրներուն թէ՛ կարելիութիւնները, թէ՛ պարտաւորութիւնները տարբեր են: Ատկէ զատ, «միջուկային ուժանիւթի բնագաւառում պետական մենաշնորհը վերացնելու "շռայլութիւնը" իրեն կարող է տալ այն երկիրը, որը տնտեսական անվտանգութեան տեսակէտից բազմակողմանիօրէն երաշխաւորուած է, ուժանիւթի աղբիւրները բազմազանեցուած են»: Այսինքն Հայաստանի պայմանները առայժմ այդ քայլին դիմելու չեն արտօներ:

Ատոմակայանի նման հիմնարկի մը մասնաւորեցումը, որ ազգային ապահովութեան խնդիր է, կրնայ շատ անսպասելի փուլերու յանգիլ: Արդարօրէն հարց կու տայ յօդուածագիրը թէ ի՞նչ պիտի ըլլայ եթէ օրինակ Թուրքիան Հայաստանի մէջ ատոմակայան կառուցանելու կարեւոր ներդրում ընելու դիմում ներկայացնէ: Գործադիր իշխանութեան պատասխանը այն է որ նման պարագաներու համար մրցում կը յայտարարուի եւ այդ հանգրուանին անպայման նման պարագաներ կրնան մերժուիլ:

Յօդուածին մէջ մասնագէտներուն կարծիքն ալ առնուած է· անոնք Մեծամօրի եւ կառուցելի կայաններուն "ապահով գործածութիւն կը խոստանան": Իրենց առաջարկածը հետեւեալն է· ներկայինը ամենայն հանգստութեամբ պէտք է գործածել մինչեւ 2016 թուականը: Անոր ռէաքթէօր-ը շատ լաւ վիճակի մէջ է, ապահովութեան տեսակէտէ մտահոգութեան ոչ մէկ պատճառ կայ: Ցետոյ, եթէ նոր կայանի կամ մասնաբաժնի կառուցումը յետաձգուի, ի՞նչ պէտք է ընել: Մասնագէտներու կարծիքով հարկ է գոյութիւն ունեցող կայանին գործածութեան պայմանաժամը երկարաձգել: Կան ուրիշ օրինակներ:

Մէկուկէս միլիառ պիտաճէ պահանջող նոր ատոմակայանին ծրագիրը կասկած չկայ որ շատ դժուար իրագործելի բան է Հայաստանի նման երկրի համար: Մասնագէտներուն առաջարկած երկրորդ տարբերակը, կամ միջանկեալը որ կը վերաբերի ներկայի կայանին կեանքը երկարաձգելու, շատ տրամաբանական ըլլալով հանդերձ, կարգ մը անպատեհութիւններ կրնայ ներկայացնել: Նոյնիսկ ապահովութեան բոլոր պայմանները յարգելով, երկրին համար խոցելի կէտ մը կը կազմէ ան, ամէն անգամ որ Հայաստանի դէմ լծակներ գործի մղել մէկուն գործին գայ: Խօսքը չի վերաբերիր Թուրքիոյ տրտունջներուն, այլ ԱՄՆ-ու նման խաղաղութեան, ժողովրդավարութեան առաքեալներու որոնք ոչ մէկ խոչընդոտի առջեւ կանգ կ'առնեն, երբ որոշեն երկիր մը ուղիղ ճամբու վրայ դնել... Նաեւ չըլլալիք տեղէն կը ճարեն անհրաժեշտ պատըրւակը, պատճառաբանութիւնը: Գոյութիւնը երկարաձգուած ատոմակայան մը չահագործելի լաւագոյն ազդակ չի՞ ներկայանար:

Ոչ մէկ տարակոյս կայ որ լաւագոյնն է նոր ատոմակայանին կառուցումը: Քանի որ երաշխիքը կայ հարկաւոր թէքնիք ուժը, մասնագիտութիւնը, հակակշռի միջոցներ ունենալու, գտնելու: Սերտ կապեր կան ատոմային միջազգային կազմակերպութեան հետ: Ուրեմն կը մնայ ճարել միլիառուկէսնոց պիտաճէն: Արդեօք խնկապէ՞ս կարելի չէ այս ուղղութեամբ լուծումի մը մասին գլուխ յոգնեցնել:

Ա· Մելքոնեան կը գրէ թէ Եւրոպական միութիւնը պատրաստակամութիւն յայտնած է հարիւր միլիոն տալու· հաւանօրէն նման կարգ մը ուրիշ աղբիւրներ ալ կը գտնուին: Իսկ մնացածին համար կարելի չէ՞ "հայկական հրաշք" մը իրագործել: Օրինակ՝ բացառիկ նման ծրագրի համար մասնակցութեան հրաւիրել Հայաստանի անկախացումէն ի վեր մեծատուներու դասակարգը գոյացնողները: Հրաւիրել բոլոր անոնք որոնք ապարանքներու, դղեակներու, պարսպապատ բերդանման բնակավայրերու, սուղնոց ինքնաշարժերու, արտասահմանեան դրամատուներու մէջ պարարտ հաշիներու, անթիւ կալուածներու, հանրախանութներու, խաղատուներու, հեղուկ վառելանիւթի ցանցերու, ներածումի մենաշնորհներու եւ այլ տեսակի հազար բարիքի տէր են ու խընդրել, ի հարկին պահանջել որ ստանձնեն երկիրը նոր երկրորդ ատոմակայանով մը օժտելու գործը:

Թէ՛ Հայաստան կը փրկուի անելէ մը, թէ՛ այդ դասակարգը իր մեղքերը քաւելու առիթ մը կ'ունենայ:

Ա· ԹՈԹՈՅԵԱՆ

ԳՈՂԱՑՈՒԱԾ ՄԻ ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ԻՇԽԱՆԵԱՆ
"Արմէնրանաու"ի թղթակից

Էվելինա Գէորգեանը թուղթ է բացում: Բախտ բացելը մի զբաղմունք է, որից այլեւս սպասելիք չունի:

"Էլ ի՞նչ, իմ բախտը արդէն գցուել ա, ես պիտի մեծ երգչուհի դառնայի, բայց 58 յօդուածը թիկունքիս կպած էր, ո՞վ կը թողնէր, որ ես առաջ գնայի", - ասում է նա:

58 յօդուածը ՌՍՖՍՀ օրէնսգրքով հակասովետական գրգռութիւնն ու քարոզչութիւնն էր (հայկականում՝ 67ն էր), որով նա 1942 թ· դատապարտուել էր չորս տարուայ ազատազրկման:

86ամեայ Էվելինա Գէորգեանն ապրում է երգչախմբային ընկերութեան շէնքի պահակի 3,5 քառ· մեթր սենեակում: Նրա աշխատանքն ու կեանքը մի սենեակի մէջ են, որն աւելի փոքր է, քան ՔԿՊ-ի նրա խուցը: Բայց ոչինչ, նա շատերի պէս Խորհրդային Միութիւնը քաղցրութեամբ չի յիշում:

"Ես շատ ուրախացայ, որ Սովետը փլուեց: Ճիշդ ա, հիմա սէնց փոքր տեղ եմ ապրում, բայց ոչինչ, թող սէնց լինի, մենակ Սովետը չվերադառնայ":

Հայրը՝ Երուանդ Գէորգովը, վաճառական ու գիւղատնտես էր, Երեւանի ընտրախաւից: Կիրովի այգու տեղում նրա խանութներն էին, իսկ տունը՝ Երեւանի նորահարուստների ու միջին խաւի սիրած ժամանցի վայր "Պապլավոկ"ի տեղում:

1924ին նրան առանց դատաստանի գնդակահարում է մի չեկիստ: Ցետագայում, երբ Էվելինան բանտում էր, քննիչը նրա փեսացուին, որ եկել էր իմանալու, թէ ինչու են ձերբակալել աղջկան, ասում է· "Դուք գիտէք, թէ նա ո՞ւմ աղջիկն է":

Էվելինայի դատավճռում գրուած է՝ "սոցիալական վիճակը՝ նախկին կուլակաթափ եղածներից": Սովետի առաջին տարիներին, մինչեւ երեսնականների վերջը, ինչ-որ սեփականութիւն ունեցողները համարւում էին կուլակ: Նրանց կուլակաթափ էին անում, աքսորում եւ ունեցուածքը բռնագրաւում: Էվելինայի սոցիալական ծագումն արդէն յանցանք էր համարւում:

1942 թ· Մարտի 8ին՝ Կանանց միջազգային օրը, երաժշտական ուսումնարանի երկրորդ կուրսի ուսանողուհի 22ամեայ Էվելինային ձերբակալում են: Դատարանում նա առաջին անգամ է տեսնում այն մարդկանց, որոնց հետ հակասովետական խումբ ստեղծելու մէջ էր մեղադրւում:

Իր ազատազրկումը նա պէտք է կրէր Ուրալում, անտառահատութեան տաժանակիր աշխատանքով: Սակայն պատերազմը, որ շատերի համար դժբախտութիւն էր, Էվելինայի համար փրկութիւն է դառնում:

"Մեզ պիտի տանէին Սուխոյօ Բեզվոդնի, Գորկի քաղաքի մօտ: Եթէ տանէին, այնտեղից ես չէի վերադառնայ: Մեր բախտը բերեց, Գերմանացիները ռմբակոծում էին այդ կողմերը, ու օրական 12 ժամ ծառ կտրելուց ազատուեցինք":

Նրանց տանում են Բաքու, այնտեղից շոգենաւով՝ Կրասնովոդսկ: «Գերեզմանոցում էին իջացրել, ամէն մէկս մի քարի վրայ պառկեցինք, որ քնենք: Գիշերը հինգ-հինգ շարեցին» - յիշում է Էվելինան:

«Պիտի տանէին բաշխման կէտ, առեւցին՝ ով չկարողանայ քայլել, տեղում կը գնդակահարենք: Մի հայ աղջիկ կար՝ Ասիան, հագիւ էր քայլում, թոքերի բորբոքում ունէր: Հայ գողեր կային՝ Պաւլիկն ու Մուկուշը, ասին՝ մենք ձեր բեռները կը տանենք, դու օգնի Ասիային: Պիտի չթողնենք որ հայ աղջիկ սպանեն: Ես նրան օգնում էի, չէի թողնում ընկնի:

Հասանք բաշխման կէտ, Ասիան մահացաւ: Մեռնելուց առաջ խնդրեց՝ նամակ գրեմ քրոջը Լենինական, որ ինքն այլեւս չկայ: Նա երկրորդ ժամկէտն էր նստում, հինգ տարի եղել էր ճամբարում: Ազատուելուց յետոյ Կիրովականում տուն էր վարձել: Հարեւանը մատնութիւն էր արել թէ "ամէն անգամ, երբ Գերմանացիները քաղաք են գրաւում, Ասիան ուրախութիւնից դաշնամուր է նուագում"»:

Գնացքով տանում են Տաշքենդ, ամէն բաժանեակում 120 կալանաւոր: Խոլերայի համաճարակը հնձում է կալանաւորներին: «Անընդհատ մարդիկ էին մեռնում: Մէկ էլ գնացքը կանգնում էր անապատի մէջ· գալիս՝ մեռածների ոտուձեռից բռնում, դուրս էին շպրտում, ի՜նչ թաղել, ժամանակ չկար թաղելու:

Կողքս մի Գերմանուհի կար, խոլերայից մեռաւ: Կէս օր կողքս մեռած մնացել էր, մինչեւ էկան դուրս գցեցին: Ո՞նց էր չըվարակուեցի: Ինչո՞վ էին կերակրում· ցերեկը ձուկ էին տալիս, ահաւոր ծարաւում էինք, գիշերը՝ ջուր՝ մէջը որդեր:

Իսկ նաւի վրայ, կողքի տարածքում, որ փայտէ միջնորմով առանձնացուած էր, գերմանացի գերիներ էին, նրանց մենակ ձուկ էին տալիս, առանց ջրի: Խեղճերը ծարաւից մեռնում էին: Ես ու մի Գերմանուհի նրանց ջուր էինք տալիս»:

Գնացքում գտնուող մօտ 5·000 կալանաւորից Տաշքենդ հասնում է 1·700ը: Գաղութում միեւնոյն հիւղերում էին եւ գործարաններում միասին էին աշխատում քաղաքականներն ու քրէականները:

«Գաղութում չեկիստը հարցնում էր՝ ի՞նչ յօդուած է, ասում ես՝ 58, մռայլնայում էին· իսկ մէկ ուրիշն ասում էր՝ 226 (գողութիւն), ժպտում էին՝ ապրես, որ քաղաքական չես»:

Աշխատում են գործուածքի հաստոցների վրայ, Բերիայի հրամանն էր՝ քաղաքականներին ծանր աշխատանք: Գաղութներից մէկում դեղնախտով է հիւանդանում· «Հաստոցի մօտ աշխատում էի, մէկ էլ էնպէս ցաւ սկսեց, ընկայ, պատգարակով տարան: Պարզուեց՝ դեղնախտ եմ, գիտակցութիւնս կորցնում էի, շատ ծանր էի:

Մի բժիշկ կար՝ Արազով, եղել էր Թիւրքմէնստանի առողջապահութեան ժողկոմ (Նախարար), 16 տարի նստած էր, անյայտ էր՝ երբ կ'ազատուի: Նրա նմանների համար Բերիայի հրամանը կար՝ "Մինչեւ յատուկ կարգադրութիւն" մնա՛ էնքան, մինչեւ սատկես:

Արազովն ասաց՝ դու քաղաքական ես, ես քեզ չեմ թողնի մեռնես: Ինձ հետ դեղնախտով պառկած 7-8 հոգի մեռան: Ինձ չթողեց մեռնեմ: Մեզ քրէականների հետ նոյն հիւղն էին լցնում, որ նրանք մեզ ծաղրեն: Բայց կային, որ մեզ լաւ էին վերաբերւում:

Իմ կողքը քնում էր մի գող կին՝ Լենան: Մի ոտքը փայտ էր, սիֆիլիսով հիւանդ էր, գնացքներ էր թալանել: Գալիս էր հիւանդանոցից, հարցնում՝ ի՞նչ է քեզ պէտք, Լինա: Ասում էի՝ խաշած կարտոլ ու բարձ, յաջորդ օրը բերում էր»:

Ճամբարն այնքան սարսափելի չէ, ինչքան կեանքը ազատուելուց յետոյ: Քաղաքական դատուածները 39 քաղաքներում իրաւունք չունէին ապրել: Էվելինային Երեւանից քշում են, որոշ ժամանակ ապրում է մօր հետ Դիլիջանում, յետոյ մի ազգական նրա համար միջնորդում է բարձրաստիճան պաշտօնեայի մօտ, եւ նրան թոյլ են տալիս վերադառնալ:

«Ես քիչ քաղաքականներից էի, որ կարողացայ Երեւանում մնալ», - ասում է Էվելինան: Շարունակում է ուսումը, սակայն չորրորդ կուրսում նրան հեռացընում են, երբ կազմալուծիչ է, պատ-

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԵՒ ՍԱՀԻԿՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Սան Ֆրանսիսքոյի "Խաչատուրեան" Հայ Կեդրոնի "Սարոյեան" սրահին մէջ, Մարտ 10-12, տեղի ունեցած է լիբանանահայ լուսանկարիչ Յովհաննէս Ճէրճեանի (ծանօթ՝ Շիրազ անունով) լուսանկարներու եւ սահիկներու ցուցահանդէսը, նուիրուած՝ պատմական եւ ներկայ Հայաստանին: Բացումը կատարելով Հրբայր Շահինեան ներկայացուցած է արուեստագէտ լուսանկարիչը, որ քառասուն տարիներու ընթացքին բազմաթիւ անգամներ ճամբորդած է ներկայ եւ պատմական Հայաստանի զանազան շրջանները, լուսանկարելու եւ ցուցադրութիւններու միջոցով ծանօթացնելու համար պատմական բննագրաւեալ Հայաստանի գիւղերն ու քաղաքները, վանքերն ու եկեղեցիները, բերդերը, գետերն ու յիշատակարանները: Յովհաննէս Ճէրճեան իր խօսքին մէջ յիշած է Տարօնի Ծովասար լերան Բչուտ գիւղի բնակիչ Քէշիշեան ընտանիքը, նշելով որ տակաւին շուրջ հազար հինգ հարիւր Հայեր կ'ապրին հոն, կը խօսին Սասնայ գաւառաբարբառը ու կը հարցնեն, թէ Թագաւոր կամ Կաթողիկոս ունի՞նք տակաւին. եթէ կան, թող մտածեն մեր մասին:

*
**

"ԳԻՒՄՐԻԻ ՊԱՏԱՆԻ ԱՍՏՂԵՐ"ՈՒ ՀԱՄԵՐԳԸ

Կլէնտէյլի "Ալեքս" թատերասրահին մէջ, Մարտ 19ին տեղի ունեցած է "Գիւմրիի պատանի աստղեր" անուան տակ հանդէս եկող 11-էն 15 տարեկան վեց պատանիներու համերգը, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան: Շնորհալի պատանիներն ու պարմանուհիները հանդէս եկած են հայ եւ օտար երգահաններու երգերով, ինչպէս նաեւ ջութակի, դաշնակի եւ քանոնի համար գրուած նուագներու մեկնաբանութեամբ:

ԼՐԱՏՈՒ

ճառը՝ 58 յօղուածը: Այս անգամ քեռու միջնորդութեամբ վերականգնւում է ու աւարտում, սակայն էլ երաժշտանոց չի ընդունւում:

«Ճամբարում աւելի լաւ էր, մարդկանց գլուխը դինջ էր, յետոյ էր աւելի, ոչ մի տեղ մուտք չունէիր, 58 յօղուածը մէջքից գրուած է»:

1951 թուականին, երբ հայրենադարձ հայ ընտանիքների աքսորում էին Ալթայի երկրամաս, Խվէլինան իր ճամբրուկն է դասաւորում, սպասում է երբ են իր յետեւից գալու: Բայց Ալթայը չըջանցում է նրան: Ամուսնանում է իր նման բռնադատուածի հետ, 1955ին ծնւում է որդին:

1957 թուականին Խվէլինա Գէորգեանին եւ նրա հետ դատապարտուած հինգ հոգու արդարացնում են:

Տաս տարի երգում է պետական երգչախմբում, նաեւ՝ օփերայի երգչախմբում: 1975 թուականից աշխատում է Երգչախմբային ընկերութեան դահլիճում որպէս հսկիչ: 1984 թուականին բնակարանը վաճառում է, որ որդին հնարաւորութիւն ունենայ գնալ Հայաստանից:

Տարիներ ապրում է վարձով: Սակայն տնտեսական ճգնաժամի տարիներին այլեւս հնարաւորութիւն չունէր վարձ տալու: 1993ին նրան յատկացնում են Երգչախմբային ընկերութեան պահակի փոքրիկ սենեակը, որտեղ ապրում է եւ չէնքի պահակ աշխատում:

Նրա ամբողջ ունեցուածքը լուսանկարներն են ու մի քիչ ամանեղէն, որ տեղաւորել է սենեակում: Սենեակն այնքան փոքր է, որ հորիզոնական պառկել հնարաւոր չէ, ու Խվէլինան, երբ ուզում է հանգստանալ, ոտքի տակ տեղաւորում է աթոռն ու մեկնւում նեղ թախտին:

Բռնադատուածների մասին օրէնքով բնակարանի կարիք ունեցողներին հատնում է հողատարածք եւ արտօնեալ վարկ 25 տարով, մինչեւ 5 միլիոն դրամ (մօտ 11 հազար տոլար)՝ տարեկան մէկ տոկոսով, բնակարան գնելու կամ հողատարածքի վրայ տուն կառուցելու համար: Օրէնքների փոփոխութիւնների պատճառով 2003 թուականից՝ Երեւանում, իսկ 2005 թուականի դեկտեմբերից՝ այլեւս ամբողջ հանրապետութիւնում հողատարածք չի յատկացւում:

Բացի այդ, ըստ օրէնքի, բռնադատուածներին տալիս են 12 հազար դրամ միանուագ փոխհատուցում: 1996 թ. 6 հազար էր:

«Այդ փոխհատուցումը ձեւական է, առաջարկել ենք, որ գոնէ ամէն տարի տան 12 հազար, – ասում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութեան տարեցների հիմնահարցերի բաժնի վարիչ Անահիտ Գէորգեանը: – Նաեւ առաջարկել ենք, որ վարկի համար 300 միլիոն տան, բայց չեն անում»:

Նախարարութիւնում վարկ ստանալու համար բռնադատուածների 570 դիմում կայ, որոնցից 311ը հիմնաւոր է համարուել: Խվէլինան այդ ցուցակում 233րդն է: 2002 թուականից մինչեւ այժմ վարկ է տրամադրուել 165ին, անցեալ տարի՝ 42ին: Տարեկան, կառավարութիւնը յատկացնում է 100 միլիոն դրամ: Խվէլինան վարկ կը ստանայ 2010ին, երբ դառնայ 90 տարեկան:

«Նրանք ինձ ծաղրո՞ւմ են, ես ի՞նչ կը լինեմ 4 տարի յետոյ», – ասում է Խվէլինան:

Վ. Ի.

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԷ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԳՈՂԵՐԸ

Ռուսաստան մշակոյթի եւ պատմութեան հարուստ ժառանգութիւն մը ունի, որուն մաս կը կազմեն ուրոյն ոճով քանդակուած սրբապատկերները: Սակայն արուեստի այս հին գործերը կազմակերպուած աւազակախումբերու կողմէ կը գողցուին, բեռնակառքերով արեւմտեան Եւրոպա կը ղրկուին եւ աճուրդով կը ծախուին:

Արեւմտեան Եւրոպայի մէջ հաստատուած գաղտնի խումբի մը կողմէ կազմակերպուած այս աւազակները, վերջին քանի մը տասնամեակներուն թալանած են գիւղերը եւ ո՛չ մէկ եկեղեցի, ոչ մէկ թանգարան վրիպած է անոնց ճիրաններէն: Վերջիններս քլիուքվինիքի կոչուած ալ ստացած են որ ռուսերէն ֆլիուքվա բառէն կու գայ (որթատունկ): Այս անուանման պատճառն ալ ռուսական ուղղափառ եկեղեցիներու գմբէթին ողկուզանման զարդարանքն է:

Եարոսլավ շրջանի Իլինսկի գիւղի Հայր Կէննատին հերոս դարձած է իր եկեղեցին քանի մը առիթներով պաշտպանելով: Հ. Կէննատին նոյնիսկ ահազանգի համակարգ մը հաստատած է պաշտպանելու համար հին սրբապատկերներով հարուստ 18րդ դարու եկեղեցին, որ տարին 2-3 անգամ գողութեան փորձի կ'ենթարկուի: Քանի մը անգամ վիրաւորուած Հ. Կէննատին, կ'ըսէ թէ «Քլիուքվինիքները ամէնաւեր սերունդ մըն են, ոչ մէկ յարգանք ունին այս հին կոթողներուն»:

Ռուսաստանի ներքին գործերու նախարարութեան արուեստի գործերու մաքսանենգութեան արգելքի սպասարկութեան պատասխանատու Իլիա Ռիազնոյի կ'ըսէ, թէ անոնք սովետական միութեան նախկին բնակիչներ են, որոնք յելուզակներու խումբեր կազմած են, եւ տարբեր Եւրոպական միութեան երկիրներու մէջ հաստատուելով սրբապատկերներու վաճառքով կը զբաղին: Սրբապատկերներու եւ Ռուսաստանէն գողցուած գեղարուեստական հնութիւններու նշանակելի քանակութիւն մը կարելի է միշտ գտնել եկեղեցիներու, թանգարաններու, ինչպէս նաեւ անհատներու մօտ: Վիճակագրութիւններու համաձայն ոստիկանութեան կողմէ աւելի քան 48.000 պատմական կամ մշակութային առարկայ կը փնտռուի, որոնցմէ 35.000ը ռուսական այդ խիրայատուկ սրբապատկերներն են:

Մշակոյթի նախարարութեան համաձայն 9.400 կորսուած կոթողներ՝ գիրքեր, գեղանկարներ, կահ-կարասիներ, մանրանկարներ, կխանդրիներ եւ սրբապատկերներ կը գտնուին Ռուսիոյ մշակութային ժառանգութեան պաշտպանութեան բաժնի տուեալներու ցանկին մէջ: Այս վերջինին տնօրէնը, Անաթոլի Վիլքով, կ'ըսէ. «Օր մըն ալ կը տեսնես թէ այս ինչ գործը շուկային մէջ հնավաճառի մը մօտ է, աճուրդի դրուած է, կամ ալ ցուցասրահի մը մէջ է: Ամէնէն մեծ հարցն ալ այն է, թէ շատ անգամ այդ գողութիւնները չեն յայտարարուիր: Անոր պատճառ ալ կա՛մ թանգարանին անփութակցութիւնն է իր պահեստներէն կորսուած առարկաներէն, կամ ալ այդ ժառանգութիւնը պահելու կոչուած անձերու միջնորդութիւնն է այս օրինազանցումներուն»:

Վերջերս, Սեմիրացքիի գեղանկար մը, որ Տականրոգ թանգարանէն գողցուած էր, ու չէր յայտարարուած, Մոսկուայի մէջ ծախու դրուած գտնուած է: Նիժնի Նովկորոտի մէջ, ռուս քահանայ մը բուն սրբապատկերները կեղծելով մտածած է առաջքը առնել գողութեան ամէն փորձի: Ըստ Անաթոլի Վիլքովի, եօթը տարուան մէջ, Ռուսաստան գողցուած 5.000 հին գեղարուեստական գործեր վերստացած է:

Ի. Ռիազնոյի կ'ըսէ թէ Ռուսաստան մօտ 20.000 եկեղեցիներ, 2.500 թանգարաններ, 49.000 գրադարաններ եւ 6.000 հիմնարկութիւններ ունի, որոնք մշակութային առարկաներ կը պահեն: «Այնուամենայնիւ, մեր պատմական ժառանգութիւնը 80 միլիոն տարբեր հին ստեղծագործութիւններով կը գնահատուի: Ըստ Ինթէրփոլի, Իտալիայէն, Ֆրանսայէն եւ Իրաքէն յետոյ, Ռուսաստան միայն 16րդ տեղը կը գրաւէ որպէս գեղարուեստական ստեղծագործութիւններու գողութիւններուն թիրախ դարձած երկիր: Բոլոր նոր հարուստները կ'ուզեն հին սրբապատկերներ եւ ռուս նկարիչներու գործեր ձեռք ձգել»:

Վերջին տասը տարիներու ընթացքին, Ռուսաստանի սահմանի մաքսատուները մօտաւորապէս 90.000 հին գեղարուեստական գործեր ձեռք ձգած են, ընդորում գիտական հաստատութենէ մը գողցուած եւ 300.000 տոլար արժողութեամբ երկնաքար մը, ինչպէս նաեւ մամութի կնճիթներ: Իշխանութիւնները տակաւին հաստատ թիւ չունին երկրէն հանուած գողցուած հին գեղարուեստական գործերու քանակին մասին:

Իտալիոյ մէջ, երկու տարի առաջ ոստիկանութիւնը երեք բեռնակառքեր կանգնեցուցած է, անոնց մէջ 900 սրբապատկերներ գտած: Կիպրոսի մէջ ալ գողցուած 74 սրբապատկերներ վերադարձուած են ԿԳՊ-ի միջամտութեան շնորհիւ: Փետրուարին 688 նոր սրբապատկերներ, զարդանկարներ եւ մանրադրամներ կորսուած են Քամիշինսկի շրջանային թանգարանէն:

Օրինակները անվերջանալի են:

Թ.Ա.Թ.

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՇՈՒՇԱՆԻԿ

Յետոյ շուրջը կը դիտէ, կը տեսնէ հետաքրքիր դէմքերը որոնք զինքը կը զննեն վարէն. դժուարութեամբ կ'ըսէ, նետելով իրենց դրամ մը. «Առէ՛ք, կենացս բան մը խմեցէք»:

Բերնի ծամածռութիւն մը կ'ընէ եւ կ'աւելցնէ. «Կ'արժէ տօնելը, հաւանաբար ես միակ վերապրողն եմ ընտանիքէս: Եւ եթէ բանի մը պէտք ունենաք, եթէ հիւանդանաք, այս ժամը յիշեցուցէք ինծի: Ձեզի պարտական եմ»: Եւ կ'անյայտանայ: Իսմէնէ ալ կ'անյայտանայ, կըրցածին չափ արագ, տանց մոռնալու դրամ մը եւս տալ ախոռապանին: Եւ վարորդին մեկնումէն մտահոգ, կ'ըսէ. «Գոց պահեցէք դուք բերանները: Ո՞ւր գնաց օթոյին մարդը»: Ախոռապանը մատը շրթով բերնին կը տանի եւ ցած ձայնով, միայն իրեն լսելի, կ'ըսէ. «Անոր գործը ինծի ձգէ: Հանգիստ գնա եւ Աստուած հետդ ըլլայ»:

Իսմէնէ արագութեամբ վազեց դէպի լուսաւոր սանդուխին վարի աստիճանը: Ոչ մէկը կ'անդրադառնայ պառաւ գնչուի մը այնքան թափառաշրջիկներու միջեւ որոնք կը լեցնեն Հալէպը: Բայց խուսափեցաւ նախկին մուրացկանին մօտենալէ, որպէսզի չստիպուի հետը խօսիլ: Այս վայրկեանիս ամէն բանէ կը վախնայ եւ ջերմեռանդութեամբ կ'աղօթէ իրեն ծանօթ եւ անծանօթ բոլոր սուրբերուն, Ալլահին ալ, որ չի կրնար չարութիւն ընել: Իսմէնէ խորապէս համոզուած է որ աշխարհը չար է, բայց նոյնքան համոզումով հաւատք ունի Երկնային Աշխարհին վրայ, ուր բոլոր ճամբաները կը միանան, Աստուածները կը ժպտին:

Քանի՛ անգամ, որպէս եղերերգակ կարծեց տեսնել փառահեղ դուռները որոնք կիսով կը բացուէին եւ անմիջական պահանջը զգաց քալելու դէպի հոն ուր ժամանակը գոյութիւն չունի, հոն որ լի է անակնկալներով: Այդ տեղը կ'երեւակայէ լի արեւով, փուշով, սփոփանքով: Ուղղահայեաց արեւ եւ ժայթքող ջուրեր, արտոյտներու երգ եւ աղուոր պառնուկի մը հիւթեղ գիտը: Եւ ապակիէ կիտուածապատ երկնքին մէջ, յաւիտեանս կնքուած փառահեղ դէմքերը Քրիստոսի եւ իր համբերատար Մօրը:

Այսպէս, կրկին մխիթարուած, Իսմէնէ կը սպասէ, եւ կրկին քունը կը տանի: Կրկին կ'երազէ Շուշանիկը Սմբատի հետ. բայց հիմա Արքայութեան մէջ են ինչպէս կը մտածէր երբ արթուն էր: Եւ երբ կը հասնի Զարեհ, զինքը կը ցնցէ, կը հասկնայ հանդիսաւոր պահերու անմիջականութեամբ որ աւելա խրաւաբեր երազ մըն էր եւ որ Շուշանիկ պիտի երթայ Սմբատին մօտ: Բայց կը կռահէ միեւնոյն ժամանակ որ կենդանի է եւ Հալէպ պիտի հասնի:

*
**

Այս բաները եւ ուրիշ շատ բաներ, Իսմէնէ տենդագին պատմուածքով պիտի հաղորդէ Զարեհին: Կը խօսի, կը խօսի, կու լայ եւ շարժուձեւեր կ'ընէ, թեթեւցած որ զինքը գտաւ եւ առանձին չէ ընտանիքին մնացորդացին պատասխանատուութիւնը կրելու մէջ: Բայց նախ, Զարեհ երկրորդական ճամբաներով արագօրէն տուն կը տանի զինք եւ եռեւի դուռէ մը ներս կ'առնէ: Թէեւ Հալէպի Հայերուն առայժմ չեն դպած, բայց խիստ արգիլուած է օտարներու ապաստան տալը, նոյնիսկ ազգականի, կամ անդրադառնալ քիչ առ քիչ քաղաքին մէջ շրջող մարդկային հոսանքին ներկայութեան:

Նոյնիսկ բժիշկի իր հանգամանքը վըտանգէ վերծ չի պահեր Զարեհը: Բաւական պիտի ըլլար քմայք մը, պարագայական հրաման մը, եւ ինք ալ կը միանար թշուառներուն: Այսպէս, խոհանոցին մէջ Իսմէնէ կը պատմէ, անյագութեամբ ուտելով աւելցած ինչ որ կար: Սաիթիլէնի հանդարտ լոյսին տակ, սարսափելի բաները որոնց մասին կը խօսէր, գրեթէ ֆիզիքական իրականութիւն մը կը ստանային. թէ՛ եղբօրը, թէ՛ բարեկամներու, պզտիկ քաղաքին ամբողջ ժողովուրդին ստուերները կը խուժէին հոն. խղճալի, ողորմելի, իւրաքանչիւրը ջանալով պատմել իր պատմութիւնը:

Յետոյ, Իսմէնէ կը պատմէ Նաղիմի եւ Իսաագի մասին, որոնք ախոռին մէջ կը սպասեն: Զարեհի համար վտանգաւոր է հոն երթալ: Կապը պէտք է ըլլայ Իսմէնէի հետ: Ան, հաւատարիմ շունի պէս նայելով բժիշկին աչքերուն, այնպէս ինչպէս միշտ նայած էր Շուշանիկին, հրահանգի կը սպասէ: Ինչպէ՞ս մտնել ճամբարին մէջ: Մանաւանդ, ինչպէ՞ս գտնել զիրենք եւ դուրս հանել, միայն իրենք եւ ոչ ուրիշներ, պահակներուն քիթին տակ:

Արագ արագ, Զարեհ քիչ մը դրամ կը յանձնէ Իսմէնէի եւ ժամադրութիւն կու տայ հետեւեալ օրուան համար, այս գիշերուան պէս նոյն ժամուն, նոյն տեղը, պանդոկին գլխաւոր մուտքին սանդուխներուն վարը: Ինք պէտք է երթայ սովորական թղթախաղին, որպէսզի կասկած չարթնցնէ:

(Շար. 82)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ

13 rue du Perche 75003 Paris

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ոտնլուայ՝ ժամը 18ին,
Պատարագ՝ ժամը 19ին,
Խաւարում՝ ժամը 21ին:

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ.–
Թաղում՝ ժամը 18ին:

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ.–
Ժամերգութիւն՝ ժամը 17ին,
Ճրագալոյց՝ ժամը 18ին:

ԿԻՐԱԿԻ.– ԶԱՏԻԿ
Պատարագ՝ ժամը 11ին:

Մարսէյլ
ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
նահատակ բանաստեղծ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
կեանքի մասին գրուած

«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՑԵՏՈՅ»

վէպի

Կը բանախօսէ հեղինակը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՃԵԱՆ

Ռուբէն Սեւակէն քերթուածներ
կ'արտասանէ
Հայաստանի վաստակաւոր
արուեստագիտուհի
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՃԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 21, ժամը 20.30ին
Սահակ - Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնին
մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

— Մուտքը ազատ է —

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ HAMASKAINE

ՓԱՐԻԶ

ՃԱՇԿՈՒԱՆ ՃԱՇ

Կիրակի, Ապրիլ 16ին,
ժամը 13էն սկսեալ

Restaurant «Les Diamantaires»
60 rue La Fayette — 75009 Paris
Métro Cadet

Հաճելի մթնոլորտ, երաժշտութիւն, վիճակահանութիւն, հաւկթախաղ:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել՝ 01 43 76 67 37 կամ 01 45 93 00 25 թիւերուն:

***

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Ալֆորվիլի "Էլէն Բիւզանդ" մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Աստղիկ Տէր Պարամեանէ 50 Եւրօ եւ 100 Հայ Դատի յանձնախումբին համար իր զարմուհիին՝ Անահիտ Սէմէրճեանի մահուան առթիւ եւ ցաւակցութիւն կը յայտնէ ողբացեալին ընտանեկան պարագաներուն:

□

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne
en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

LA PAROISSE ARMENIENNE CATHOLIQUE
SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR DE MARSEILLE
vous invite à participer à la conférence qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION DU GENOCIDE ARMENIEN

COMMIS PAR LES AUTORITES OTTOMANES - TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar (Couvent et Siège Patriarcal des Arméniens Catholiques depuis 1749).

Un programme d'inspiration «24 avrilienne» suivra la conférence.

Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Ապրիլ 13.–
Յիշատակ ընթրեաց
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Ժամերգութիւն՝ ժամը 8ին,
Կարգ ապաշխարողաց՝ ժամը 10ին,
Պատարագ՝ ժամը 11.30ին,
Կարգ ոտնլուայ՝ ժամը 17ին:

□

Հսկումն յիշատակ մատնութեան եւ չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 19ին:

ՈՒՐԲԱԹ, Ապրիլ 14.–
Յիշատակ խաչելութեան եւ թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Սկիզբ երեկոյեան ժամերգութեան՝ ժամը 17ին:

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ընթրեաց պատարագ՝ ժամը 10ին,
Ոտնլուայ՝ ժամը 16ին,
Խաւարում՝ ժամը 18.30ին:

ՈՒՐԲԱԹ.–
Թափօր Թաղման՝ ժամը 17ին:

***

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին,
Ոտնլուայ՝ ժամը 16.30ին,
Խաւարում՝ ժամը 20ին:

ՈՒՐԲԱԹ.–
Թափօր Թաղման՝ ժամը 17ին:

***

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ցիշատակ ընթրեաց՝ ժամը 10.30ին,
Ոտնլուայ՝ ժամը 17.30ին,
Խաւարում՝ ժամը 20ին:

ՈՒՐԲԱԹ.–
Թաղում՝ ժամը 17.30ին:

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Կարգ ապաշխարութեան՝ ժամը 10.15ին,
Պատարագ՝ ժամը 11ին,
Ոտնլուայ՝ ժամը 17ին,
Սկիզբ գիշերային ժամերգութեան՝ ժամը 19.30ին:

ՈՒՐԲԱԹ.–
Յիշատակ խաչելութեան եւ թաղման
Սկիզբ երեկոյեան ժամերգութեան՝ ժամը 17ին:

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ-ԼԻՈՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ժամերգութիւն՝ ժամը 9ին,
Ընթրեաց պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ
Ոտնլուայ՝ ժամը 16ին,
Կարգ չարչարանաց՝ ժամը 19.30ին:

ՈՒՐԲԱԹ.–
Թափօր Թաղման՝ ժամը 17ին:

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Վերջին ընթրեաց, պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ՝
ԶԱՏԻԿ. ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Ոտնլուայ՝ ժամը 17ին,
Կարգ խաւարման՝ ժամը 19.30ին:

ՈՒՐԲԱԹ.–
Թաղման կարգ եւ Թափօր՝ ժամը 17ին:

***

ԱԷՆ ԼՈՒ - ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ՀԻՆԳՇԱԲԹԻ.–
Ոտնլուայ՝ ժամը 18ին:
Կը պատարագէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ

ՈՒՐԲԱԹ.–
Թաղման կարգ՝ ժամը 18ին:

***

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

ՈՒՐԲԱԹ.–
Թաղման կարգ եւ Թափօր՝ ժամը 17ին:

A la rencontre de l'Arménie et du Karabagh avec l'UCFAF

du lundi 24 juillet au dimanche 6 août
1420 Euros tout compris au départ de Paris
(sauf visas et taxes aéroports)
base chambre double et demi-pension
excursions et visites quotidiennes avec guide francophone
ainsi que circuit 4 jours jusqu'au Karabagh
Renseignements et inscriptions :
UCFAF : 6, Cité du Wauxhall — 75010 Paris
Tél. 01 42 08 76 49 (de 15h à 17h) - Fax 01 42 08 09 70
www.ucfaf.com
Madame YAZIDJIAN — 29-33, avenue Pasteur — 93100 Montreuil
Tél. 01 42 87 95 98 heures bureau

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

RECRUTEMENTS POUR LES SEJOURS DE BELLEFONTAINE (JURA)

ETE : JUILLET ET AOUT

- **Directeurs diplomés BAFD**
- **Animateurs diplomés BAFA ou stagiaire BAFA**
- **Infirmière**
- **Econome**
- **Intendant(e)**
- **Coursier**

Candidatures à adresser à :
CBAF — 17 rue Bleue 75009 PARIS,
par e-mail : cbaf@wanadoo.fr ou par fax : 01 53 34 12 13

ESPOIR POUR L'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...
Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84876

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 13
JEUDI
13 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

LE NUMERO: 1,20 €

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TÉL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամենօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.433 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 81e ANNEE — N° 21.433

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԻՏԱԼԻԱ

ՓՐՈՏԻԻ ՓՈՔՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ՊԷՐԼՈՒՍՔՈՆԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԴԱՇԻՆՔ ՄԸ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ

Բաւական վիճաբանութիւններէ եւ հաշիւներէ ետք է, որ պաշտօնապէս յայտարարուեցան Իտալիոյ խորհրդարանական ընտրութիւններուն արդիւնքները:

Երեսփոխանական Ժողովին մէջ, Ռ. Փրոտիի կեդրոն-ձախ համախմբումը 348 երեսփոխան կ'ապահովէ 281 աթոռ ալ ձգելով Ս. Պէրլուսքոնիի, բայց Ծերակոյտին մէջ Փրոտիի յաղթանակը շատ աւելի փոքր է, քանի 158 աթոռ ունի միայն, Պէրլուսքոնիի 156ին դէմ: Պէտք չէ անտեսել նաեւ որ Իտալիոյ ընտրական դրութիւնը շատ բարդ է: Պէրլուսքոնի ներշնչած էր այս նոր դրութիւնը ընտրութիւններէն չորս ամիս առաջ (ընդունուած՝ Խորհրդարանին կողմէ) բախելով ձախ ընդդիմութեան բուռն բողոքին: Հաստատուած էր համեմատականի դրութիւն մը, որու կցուած էր պարգեւներու դրութիւն մըն ալ, որ կը տարբերէր ըստ ժողովներու: Երեսփոխանական Ժողովին մէջ, համախմբումը ձեռք ձգած էր 630ի վրայ 340 աթոռ, այլ խօսքով քուէներու 54%ը: Կուսակցութիւն մը միացած համախմբումի մը, պէտք է առնուազն ձայներու 2%ը ստանայ աթոռ մը շահելու համար. այս համեմատութիւնը 4% է, երբ կուսակցութիւնը չէ միացած համախմբումի մը: Ծերակոյտին մէջ դրութիւնը տարբեր է եւ կը կատարուի շրջան առ շրջան:

Իտալիոյ ընտրողներու թիւը 47 միլիոն է, 38 միլիոն է արտայայտուողներու թիւը, մասնակցութիւնը՝ 83,6% եղած է:

Սիլվիօ Պէրլուսքոնիի համար պարտութիւնը, նոյնիսկ թեթեւ, ծանր է եւ դժնդոկ է. հաշիւներու սխալներ կը նկատէ, միաժամանակ առաջարկելով մեծ համախմբում մը (գերմանական օրինակով), զոր Ռոմանօ Փրոտի մերժած է: Պէտք է ըսել որ ընտրապայքարը շատ տգեղ էր եւ Պէրլուսքոնիի բոլոր փորձերը ի դերեւ ելան: Վերջին պահուն "քուէներ" ալ որակեց բոլոր անոնք որոնք ձախին ի նպաստ կը քուէարկեն, ինչ որ պատճառ եղաւ այդ քուէներու թիւին աւելնալուն: Պաշտօնական արդիւնքները հազիւ 25.224 ձայնի առաւելութիւն մը կու տան Փրոտիի որ ձայներու 49,9%ը ստացած է Պէրլուսքոնիի Ֆորցա Իթալիան ալ՝ 49,73%, բայց ըստ ընտրական այդ բարդ դրութեան 340 աթոռ կը շնորհուի գլուխը հասնող համախմբումին:

Ռոմանօ Փրոտի, 66 տարեկան, կաթոլիկ տնտեսագէտ մըն է եւ արդէն վարած է երկիրը 1996ի ընտրութիւններէն ետք, բայց համայնավարները տապալած էին իր կառավարութիւնը 1998ին: Աւելի ծանօթ է որպէս նախկին նախագահը Պրիւքսէլի Եւրոպական Յանձնախումբին:

***

Ամէն պարագայի մէջ, նոյնիսկ եթէ Պէրլուսքոնիի պարտադրած հաշիւներու հակակշիռը, որ Բեկանիչ Ատեանին գործն է, հաստատէ Փրոտիի յաղթանակը, բաւական դժուար պիտի ըլլայ իրեն

(Շար.ը Դ. էջ)

AIR FRANCE-ՈՎ
ՓԱՐԻԶ - ԵՐԵՒԱՆ - ՓԱՐԻԶ

Մարտ 28էն ի վեր Հայաստան նոր ու ամուր կապով մը եւս միացաւ Փարիզին ու անոր ընդմէջէն ամբողջ Եւրոպային ու աշխարհի մնացեալ ուղղութիւններուն: Ֆրանսական օդային գիծերը շաբաթական երեք թռիչք հաստատած են երկու մայրաքաղաքներուն միջեւ ու նորութիւնը ընդհանուր հետաքրքրութեան նիւթ է:

Նշելու համար նոր գիծը, Էռ-Ֆրանսը Փարիզ - Երեւան Ապրիլ 8ի թռիչքին հրաւիրած էր մօտ երեք տասնեակ հոգինոց խումբ մը որուն մաս կազմեցին երկու երկիրներու դեսպանները Հ. Գիւնի, Է. Նալպանտեան, Շարլ Ազնաւուր, Ֆրանսայի Ազգ. Ժողովի ու Ծերակոյտի Հայաստանի բարեկամութեան խումբերու նախագահները՝ երեսփոխան Ֆ. Ռոշպլուան եւ Պ. Փիրաս, Փարիզի առաջնորդ Գիւտ Արք. Նագդաշեան, վերապատուելի Ժ. Միքայէլեան, Ֆրանսայի մէջ Հայաստանի տարուան նախագահ Շիրաքի խորհրդականը Տիկ. Ն. Թարտիվիէ, Ֆրանսայի Հայկական Խորհուրդին նախագահը Ա. Կէօվճեան, Ժէ. ՀՒ. Ա.ի նախագահը Ս. Սոժի, "Յառաջ"ի ու "Նուվէլ տ'Արմէնի"ի ներկայացուցիչները, օդային ճամբորդութեան Մարսէյլէն, ԱՄՆ-էն գործակիցներ, եւլն.: Խումբին կ'ընկերանար Էռ-Ֆրանսի Եւրոպայի ճիւղին տնօրէնին գլխաւորութեամբ փոքր պատուիրակութիւն մը որ ամէն առիթով յայտնուեցաւ որպէս բացառիկ հիւրընկալութեան տէր, անթերի կազմակերպիչ ու վերջին ծայր ուժական կազմ մը:

Բացումի թռիչքէն զատ հրաւէրը կ'ընդգրկէր երկու օր, երեք գիշերուան երեւանեան կեցութիւն մը որուն յայտագիրը կազմուած էր այցերով, պտոյտներով, հանդիպումներով. Էջմիածին, Սեւան, Երեւանի շրջապտոյտ, շուկայ, ճաշարան, եւլն. յետոյ Ֆրանսայի դեսպանատան մէջ մամուլի ասուլիս ու քոքթէյլ մը:

Մամուլի ասուլիսին (Ապրիլ 10) տեղական թերթերու, ձայնասփիւռի, հեռատեսիլի թղթակիցներու ստուար խումբը ապացոյց էր նախաձեռնութեան արթնցուցած հետաքրքրութեան: Ողջոյնի խօսքով հանդէս գալով Ֆրանսայի Երեւանի դեսպանը Հ. Գիւնի երեք կէտով ամփոփեց բացուած նոր գիծին իմաստը. ան նախ ունէր քաղաքական նշանակութիւն. Էռ-Ֆրանսի հայկական հող ժամանումը ապացոյցն էր երկու երկիրներուն միջեւ քաղաքական յարաբերութիւններու չէզոքումին: Ու այդ ապացոյցը կը տրուէր Ֆրանսայի մէջ աշնան սկսող Հայաստանի տարուան նախօրեակին:

Երկրորդ կէտը տնտեսականին առընչուածն էր. համաշխարհայնացման մեր դարուն քաղաքական ցանկութիւնները միայն այդ ազդակով կրնային յաջողիլ: Էռ - Ֆրանսը այս նոր նախաձեռնութեամբ կը միանար ֆրանսական գործարարութեան Հայաստան հաստատուած ծանօթ անուններուն. Փէռնօ - Ռիքար, Գասթէլ, Պուիկ, Արեւա, Միշլէն, Փէօժօ, Ռընօ, եւլն.: Այս ցանկը կը վկայէր Հայաստանի տնտեսական զարգացումին, ցոյց տալով որ երկիրը հետաքրքրութեան առարկան էր ֆրանսական ներդրումներու:

Եւ վերջապէս կար ապագայի առումով կարեւորութիւնը, քանի որ Էռ-Ֆրանսի ու հայկական Արմաւիայի շաբաթական երեքական թռիչքներով գրեթէ ամէնօրեայ կապ կը հաստատուէր Փարիզի ու Երեւանի միջեւ, ինչ որ կը նշանակէր Հայաստանի Եւրոպային առաւել մերձեցումը:

Իրմէ ետք նախ հայերէնով, ապա ֆրանսերէնով ելոյթ մը ունեցաւ Ազնաւուր. կրկնեց 100% Հայ եւ Ֆրանսացի ըլլալու հանգամանքը, ուրախութիւն յայտնեց օդային նոր գիծին. "Էռ-Ֆրանսը մեր մօգական թռչող գորգն է" ըսաւ, աւելցնելով որ իր պայմանագիրները միշտ կը նախատեսեն ֆրանսական ընկերութեան օդանաւերով ճամբորդել, ինչ որ առիթ կու տար իրեն որպէս Էռ-Ֆրանսի ներկայացուցիչ խօսք առնելու:

Նախաձեռնութեան աւելի թէքնիք կողմերուն մասին լայն լուսաբանութիւններ տուին ընկերութեան Եւրոպայի, ապա ՀԱՊ-ի երկիրներու ղեկավարները Է. Ռաշու եւ Մ. Գոլօ: Արեւելեան եւ Կեդր. Եւրոպայի շրջանները յատուկ նշանակութիւն ունէին Էռ-Ֆրանսի համար. Երեւանի թռիչքներով այդ տարածքէն ուղեւորներու թիւի 10% յաւելում կ'ակընկալուէր: Նոյն ատեն նեցուկ կը տրուէր Հայաստանին ու աշխարհին կապուի, ֆրանսական օդային գիծերուն մօտ երկու հարիւր ուղղութիւնները գործածելու կարելիութեամբ:

Էռ-Ֆրանսի Փարիզ - Երեւան թռիչքները տեղի կ'ունենան Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Շաբաթ ժամը 13.20ին, 320 տեղի էռպիւսներով. Փարիզ վերադարձները Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Կիրակի օրերն են, ժամը 9.15ին: Էռ-Ֆրանսի երեւանեան գրասենեակը կը գտնուի Ալեք Մանուկեան 9 հասցէին: Տոմսի ներկայի գինը 399 տոլար է:

Նոյն երեկոյեան Երեւանի Ֆրանսայի դեսպանատան մէջ պարոն դեսպանը հիւրասիրեց խումբը եւ Երեւան գործող ֆրանսական ձեռնարկութիւններու ներկայացուցչական լայն շրջանակ մը: Իր ելոյթով ինք եւս շեշտեց օդային նոր գիծին առթած գոհունակութիւնը, քաղաքական ու տնտեսական նշանակութիւնը: Խօսք առին նաեւ Էռ-Ֆրանսի Երեւանի գրասենեակին տնօրէնը եւ Ազգ. Ժողովի նախագահին ներկայացուցիչը Մ. Շահգելդեան:

Այս բոլորին հետ երկու երկիրներուն միջեւ տարիներէ ի վեր արդէն գործող աշխոյժ կապին անդրադարձ եղաւ գրեթէ ամէն ելոյթի. խօսք առնողները շնորհակալութեան, գոհունակութեան արտայայտութիւններ ունեցան "Սապերաթուր"ի երկու անխոնջ դէմքերուն՝ Վ. Սարգիսեանի ու Լ. Պաղտասարեանի վաստակին նկատմամբ:

Յաջորդ առաւօտ կանուխ խումբը վերադարձաւ Փարիզ, արդէն ծրագիրներ որոճալով Էռ-Ֆրանսի թռիչքներով երեւանեան յաջորդ ուղեւորութիւններու:

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ ԴԷՄ Է ԵՒՐՈՊԱՅԻ ԴԷՊՔԵՐՈՒ ՋՈՒՂԱ ԱՑՑԻՆ

Գրած էինք թէ Եւրոպական Խորհրդարանը վերջապէս որոշած է տասը հոգինոց քննիչ պատուիրակութիւն մը ղրկել Նախիջեւան, տեղւոյն վրայ ստուգելու համար Ջուղայի խաչքարերուն քանդումին փաստերը: "Ազերիփրէս" գործակալութիւնը տեղեկացուցած է թէ Բաքու կը համաձայնի նման այցի, այն պայմանով որ ան "երկկողմանի հետաքննութեան" նպատակը ունենայ:

Ադրբեջանի դժգոհութիւնը հիմնուած է այն տուեալին վրայ որ Եւրոպական Խորհրդարանի ղեկավարութիւնը որոշած է այդ առաքելութիւնը յանձնել Հայաստանի հետ միջխորհրդարանական գործակցութեան յանձնաժողովին, փոխանակ յատուկ յանձնախումբ ստեղծելու:

ՏԽՐՈՒՆԻ

ԳՈՀԱՐ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

Ցաւով իմացանք որ Ապրիլ 11ին, Պոսթընի մէջ իր մահկանացուն կնքած է Գոհար Թէօլէօլեան, որ քանի մը օր առաջ հիւանդանոց փոխադրուած էր:

Մինաս Թէօլէօլեանի այրին ծնած էր Պարտիզակ 1912ին եւ ամբողջ կեանքին երկայնքին ունեցած հանրային բեղուն գործունէութիւն մը, որու կ'անդրադառնանք յետագային:

Մեր ցաւակցութիւնները՝ իր զաւակներուն՝ Խաչիկ Թէօլէօլեանի եւ քրոջը:

«ԱՄՕԹԱԼԻ ՑՈՅՑ»ԻՆ ՆԻՒԹՈՎ ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

"Լիոն Մակ" ամսաթերթին Ապրիլի թիւին մէջ (157) Ֆիլիփ Պրինէ-Լըքոնթ Բաց Նամակ մը ստորագրած է, Մարտ 18ի թուրք ժխտողներու ցոյցին նիւթով:

Ան կ'ըսէ. - «Պարոն նախագահ, Մարտ 18ին ամօթալի ցոյց մը տեղի ունեցաւ Լիոնի մէջ: Դուք ոչինչ իմացաք այդ մասին, որովհետեւ լրատուները լայն չափով լուռ մնացին, կամ շատ հապճեպ անդրադարձ մը տուին: ...Թուրքերը տողանցեցին պաստառներով ու միակ լոզունգով մը. "'Հայկական Ցեղասպանութիւն տեղի ունեցած չէ": Կազմակերպուած ոխի ցոյցն էր ան ուր ոչինչ ձգուած էր դիպուածին»:

Նամակագիրը առաջին դայթակղութիւն կը կոչէ այն որ ոստիկանապետարանը արտօնած էր նման ցոյց, աւելին՝ Իւ. ԷՄ. Փէ.ի երեսփոխան մը ձայնակցելով ժխտողներուն, դէմ արտայայտուած էր Լիոնի հայկական յուշակոթողին կառուցումին: Ապա յիշեցնելով Հիթլէրի ծանօթ խօսքը թէ "Այսօր ո՞վ կը յիշէ Հայերու բնաջնջումը", կ'ազդարարէ. "Անհանդուրժողութիւնը կը սնանի անտարբերութեամբ", ըսելու համար թէ նախագահը չի կրնար անտարբեր մնալ Մարտ 18ին պատահածին ու զինք կը հրաւիրէ հանդիսաւորապէս հակազդելու:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂԸ ԿԸ ՊԱՏԺՈՒԻ

Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահը Ռ. վան տէր Լինտըն ակնարկելով Ղարաբաղի հարցը զէնքի ուժով կարգաւորելու պարբերական տրամադրութիւններուն, յայտարարած է. "Եթէ Ղարաբաղի մէջ ռազմական գործողութիւնները վերսկսին, չեմ կարծեր որ Եւրոպայի Խորհուրդին մէջ կը շարունակուի ներկայութիւնը այն երկրին որ ռազմական ուժի կը դիմէ հակամարտութիւնը կարգաւորելու համար: Այդ պարագային ստիպուած կ'ըլլանք քննարկելու նման երկրի անդամակցութեան հարցը": Ան կոչ ըրած է տակաւին որ կողմերը հրաժարին ռազմաշունչ յայտարարութիւններէ եւ գիտակցին որ կարգաւորումը միայն խաղաղ ճամբով կարելի է:

Ռ. վան տէր Լինտընի այս յայտարարութիւնը ուշագրաւ եւ կարեւոր է այն առումով որ առաջին լուրջ անդրադարձն է պատերազմի ադրբեջանական կոչերուն որոնք մինչեւ այսօր լուրջ արձագանգ գտած չէին:

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Նիւթին մէջ խորամուխ ըլլալէ առաջ ինքզինք կը ներկայացնէ մեզի հետեւեալ հարցումը՝ կա՞յ հալէպահայ բանաստեղծութիւն կամ գրականութիւն, ընդհանրապէս. որովհետեւ այս արտայայտութիւնը՝ «Հալէպահայ բանաստեղծութիւն» կենթադրէ որոշ աւանդութիւն մը, անոր մէջ հոյլ մը բանաստեղծներու եւ հետեւողական ծաղկումը անոնց։

Գիտենք, որ Հալէպը գաղթի առաջին կայանն էր, ապա՝ Սփիւռքի մայր գաղութը, որ շատ արագ կրցաւ դիմագիծ ունենալ եկեղեցիներու, դպրոցներու եւ ակումբներու հաստատումի ցանցով. հետեւաբար բնական կը դառնայ ենթադրութիւնը, որ գրականութիւնն ու բանաստեղծութիւնը մասնաւորապէս, պատմութիւն եւ աւանդութիւն ունենան այնտեղ։

Արդեօ՞ք ճիշդ է մեր ենթադրութիւնը։

1945 թուականին "Ակօս" հանդէսին մէջ երեւցած գրախօսական մը, որ կը քննարկէր Մինաս Թէօլէօլեանի "Մթնոլորտ" բանաստեղծական գրքոյկը, կ'անդրադառնար նաեւ սուրիահայ (ինչպէս կ'ըսուի այնտեղ) գրականութեան եւ կ'ըսէր.

«Որքա՞ն ճիշդ է արդեօք սուրիահայ բանաստեղծութեան հասցէին նետուած սա մեղադրանքը թէ՝ ամէնէն շատ բանաստեղծ Սուրիան տուած է եւ սակայն հոնկէ քերթուած մը կարելի չէ կարդալ ծայրէ ծայր» (1)։

«Իրողութիւնն այն է սակայն, որ հակառակ ամէն ուրացումի Սուրիա եւ Լիբանան մշակուող գրականութիւնը տուած է արդէն անուրանալի անուններ եւ վաւերական արժէքներ, որոնց կու գան միանալու ուրիշ, տակաւին նոր, բայց խոստմնալից անուններ» (2)։

Կը տեսնենք թէ պատմութիւնը կը կրկնուի եւ նորեր կու գան փոխարինելու երէցները։

Գաղթէն մինչեւ այսօր Հալէպի պատմութիւնը կը հաշուէ ոչ արհամարհելի թիւ մը բանաստեղծներու, որոնք ծնած են, կամ շրջանի մը համար կայք հաստատած են այնտեղ։ Սակայն երկրին քաղաքական կացութիւնը, փոքրամասնութիւններուն պարտադրուած սահմանափակումներն ու կաշկանդումները պատճառ դարձած են, որ անոնցմէ շատերը հեռանան եւ այլ երկիրներ հաստատուին։

Համեմատականօրէն բեղուն եղած են 1930էն մինչեւ 1950 երկարող երկու տասնամեակները, երբ գաղթականները, թօթափած իրենց հետ բերած խեղճութիւնը, լծուած են նաեւ հոգիի քաղցը ամոքելու աշխատանքին։

1960ական թուականներուն սկիզբը ծայր առած քաղաքական վերիվայրումները կը կասեցնեն գիր ու գրականութեան, մանաւանդ մամուլի ծաղկումը։ Ոչ միայն թերթեր լոյս չեն տեսներ, այլեւ քաղաքը՝ պարպուած իր բանաստեղծներէն, ոչ մէկ նոր շունչ կը բերէ։

Սակայն, հակառակ պայմաններուն եւ Հալէպի աւանդապահութեան, արդիականութիւնը կարծես դաղտնի եւ անշշուկ մտած էր քաղաք եւ կը բոցավառէր երիտասարդ տղոց երեւակայութիւնը։ Շահպուն տակաւին 1927ին կը գրէր՝

«Ծննդաբերութիւն
Կուտ
Կուտ
Կարկուտ»։

կամ

«Մահագրութիւն
Ադամ
որդի»։

Համեմատականօրէն ամուլ շրջան մը կ'ապրի հալէպահայ բանաստեղծութիւնը մինչեւ 20րդ դարու վերջին տասնամեակը, երբ նոր թափով կ'արթննայ բանաստեղծութիւնը, նոր անուններու հետ նաեւ նոր շունչ բերելով։

Հալէպահայ բնաստեղծութեան ուրուագիծի այս պատրաստութիւնը քանի մը հարցերու առջեւ կը դնէ մեզ.

ա.– Կարելի՞ է հալէպահայ բանաստեղծ նկատի առնել այն անունները, որոնք ծնած են Հալէպ, կամ կանուխէն եկած են կայք հաստատել հոն, իրենց նախափորձերը այնտեղ կատարած են, սակայն շրջան մը ետք այլ երկիրներ կայք հաստատած եւ հռչակուած են որպէս բանաստեղծ։ Փոքր չէ անոնց թիւը՝ Երուանդ Պարսումեան, Զարեհ Մելքոնեան, Ստեփան Ալաջաջեան, Ջուլալ Գազանճեան, Վահէ Վահեան, Անդրանիկ Թէրզեան, Սմբատ Տէրունեան, Գառնիկ Ադդարեան, Անդրանիկ Ծառուկեան, Լեւոն Վարդան, Մանուէլ Քէօսէեան եւ ուրիշներ։

բ.– Անշուշտ կան նաեւ անոնք, որոնք շրջանի մը համար մամուլի մէջ երեւալէ ետք ինկած են մոռացութեան գիրկը՝ Վ. Նայիրեան, Մուշեղ Թահմազեան, Պետրոս Պարդեւ, Հարէն, Յակոբ Արմէն, Կարապետ Մկրտիչեան, Յոլակ, Յակոբ Վարսան, Պ. Մատուռեան, Գէորգ Գառեան, Աւետիս Հաննէսեան, Յարութիւն Պետոյեան, Մարալ Նալպանտեան, Յովհ. Հայկազուն, Բ. Արճան, Հ. Պ. Մովսէսեան, Յասմիկ, Պերճուհի, Ակիւնէ, Ս. Քաջիկեան, Գ. Գապպէնճեան, Վեհազատ, Արամ Գիտակից եւ շատ ուրիշներ։

Հալէպահայ բանաստեղծութիւնը, ինչպէս սփիւռքահայ բանաստեղծութիւնը ընդհանրապէս, քերթողական քանի մը առանցքներ ունի՝ սէր, հայրենիք, գաղթահայու վիճակ, իսկ ժամանակակից քերթողներու պարագային՝ նաեւ գիտական նիւթեր։

Կարեւոր տեղ կը գրաւեն արաբ ժողովուրդին նուիրուած քերթուածները, մանաւանդ հալէպահայ քերթողներու առաջին սերունդի բերքին, ինչպէս Զարեհ Մելքոնեանի, Արամ Արմանի, Հայկ Պաբիկեանի, Անդրանիկ Թէրզեանի եւ այլոց քերթուածներուն մէջ։

Անշուշտ այս նիւթերուն մօտենալու կերպը կը փոխուի երէց եւ կրտսեր քերթողներուն համար, ինչպէս օրինակ սիրային նիւթերու պարագային՝ մինչ երէցները միայն բարիք կը ցանկան իրենց "հեռաւոր" սիրածին, կրտսեր սերունդի քերթողները, ժամանակի պահանջներուն հաւատարիմ, աւելի յանդուգն մօտեցում կը ցուցաբերեն։ Մօտեցումի կերպն է, որ կը տարբերէ զիրենք, սերնդային տարբերութեան կողքին նաեւ խառնուածքի դաշտուածքով։

Երէց քերթողներէն շատերուն գիրքերը Հալէպի մէջ տպուելէ ետք Երեւան եւս լոյս տեսած են, ինչպէս Զարեհ Մելքոնեանի, Ժոզէֆ Հաճեանի, Անդրանիկ Ծառուկեանի, Անդրանիկ Թէրզեանի գործերը։ Այս անուններէն մէկ քանին արդէն ներգաղթած էին, իսկ միւսները, իրենց համոզումներով, քովը կը կանգնէին Խորհրդային Հայաստանին։ Հետեւաբար մնացեալները, որոնք հայրենիքի մէջ տպագրուելու բախտին չեն արժանացած, իրենց "անշնորհքութեան" համար չէր անշուշտ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՄՈՒԼ

Գրականութիւն մը կ'ապրի նաե՛ւ մամուլին մէջ, թէեւ միշտ չէ որ մամուլը մատչելի կ'ըլլայ ընթերցողին, մանաւանդ քանի մը տասնամեակներու հեռաւորութենէն։

Գաղթական Հայերը շատ կանուխէն Հալէպի մէջ թերթ եւ մամուլ ունեցած են, ինչպէս "Հայ ձայն" եւ "Տարագիր" օրաթերթերը, որոնք 1918ին իսկ "Եփրատ" շաբաթաթերթը 1919ին սկսած են լոյս տեսնել։

1930–50 թուականներուն մամուլը մեծ ծաղկում կ'ապրի Հալէպի մէջ, ուր կուսակցութիւնները, յարանուանութիւնները, միութիւններն ու նոյնիսկ դպրոցները ունին իրենց թերթերը, թէեւ այս վերջինները ընդհանրապէս խմորատիպ են։ Այս շրջանին լոյս տեսած թերթերը աւելի քան քառասուն անուն կը հաշուեն. այս քառասունէն տասը գրական բաժիններ ունին, "Դէպի երկիր"ն ու "Երկիր"ը "Գիրք գրականութեան եւ արուեստի" ենթախորագրուած են, Անդրանիկ Ծառուկեանի "Նայիրի" ամսագիրը, ինչպէս նաեւ տասնեօթը դպրոցական թերթերը ամբողջութեամբ գրականութեան նուիրուած են։ Հալէպ ունեցած է նաեւ եօթը տարեգիրքեր, բոլորն ալ առանձին գրական բաժիններով։

Այս թիւերը կը հաստատեն, որ 1930 – 1950ի շրջանին Հալէպի մէջ գրականութեան հանդէպ հետաքրքրութիւնը մեծ, իսկ գրական փորձերն ու արտադրութիւնը առատ եղած են։ Մուշեղ Իշխան Վահէ Վահեանի յոբելեանին առիթով խօսած իր խօսքին մէջ կ'ըսէ արդէն, թէ «Սուրիահայ գրականութիւնը տասնամեակի մը բան մը բոլորած էր արդէն թիթեղաշէն հիւղակներու տակ (1923–1933, ընդգծումը մեզմէ՝ Մ. Ե.)։ Հրապարակի վրայ կային քանի մը ծանօթ անուններ՝ Վարդան Գէորգեան, Լէյլանի, Լութեր, Արմէն Անոյշ եւ այլն» (3)։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առատ է թիւը դպրոցներու կազմած հրատարակութիւններուն, այսպէս.

"Մեր ուղին" հրատարակութիւն Հայ Ուսանողական միութեան (1923),

"Ուսում" հրատարակութիւն Հայ Երիտասարդաց ուսումնական միութեան (1925),

"Կեանք եւ արուեստ" հրատարակութիւն Կրթասիրաց դպրոցի (1929),

"Մուրճ" հրատարակչութիւն Կիլիկեանի նուցին (1931),

"Մուրճ" հրատարակութիւն Կիլիկեանի շրջանաւարտից միութեան (1936),

"Գրասէր" հրատարակութիւն Ալեփփօ գոլէճի (1942),

"Ծաղկեփունջ" հրատարակութիւն Ջասարեան դպրոցի (1944),

"Հայրենասէր Պատանի" հրատարակութիւն Կիլիկեան դպրոցի (1945),

"Հայկազն" հրատարակութիւն Հայկազեան դպրոցի (1946),

"Սեւան", Սիմոն Սիմոնեանի խմբագրութեամբ, հրատարակութիւն Հալէպահայ Ուսուցչական միութեան (1946),

"Հայ Պատանի" հրատարակութիւն Մեսրոպեան դպրոցի (1952),

"Առաքեալ" հրատարակութիւն Վարդանանց դպրոցի (1953),

"Փունջ" հրատարակութիւն Շէյխ Մագսուտի Արմէնեան ուսանողական միութեան (1954),

"Բամբիռ" ապա "Շիլեր" հրատարակութիւն Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանի (1953 եւ 1961),

"Ցանք" հրատարակութիւն Էմմանուէլ եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցին (1961),

"Բարձունք" հրատարակութիւն Լ. Նաճարեան – Գ. Կիւլպէնկեան վարժարանի, եւ այլն։

Թերթելով այս հանդէսներն ու պարբերաթերթերը, հետաքրքրական երեւոյթներու կը հանդիպինք։ "Հայկազն" հանդէսին մէջ 9–14 տարեկան պատանիներ ստորագրած են ոտանաւորներ, ուր հայերէն լեզուին իմացութիւնն ու գրականութեան հանդէպ սէրը ակնյայտ են, ինչպէս Վահէ Քիլէճեանի "Իմ Փափաքը", Գրիգոր Մակարեանի "Կանթեղը" կամ Անահիտ Սիսեռեանի արեւելահայերէնով (°) գրուած ոտանաւորը։ Կ'արժէ նշել, որ պրակին տասնհինգ գրութիւններէն ինը չափածոյ են։ Հետաքրքրական է տասներեք տարեկան Գ. Նումուրթաճեանի ոտանաւորը՝ "Հրաւէր", որ ձօնուած է Միսաք Մեծարենցի հոգիին.

«Հիւղակին դէմն ու ճամբան
Խոտ ու կակաչ կը պարեն.
Փունջ մը ծաղիկ ու վարդեր
Դուռին վրայ են կախուեր» եւ այլն։

"Հայ Պատանի" պարբերագիրքին մէջ երեւցած գրութիւններուն հետեւելով ի յայտ կու գայ, որ յաճախ թելադրուած շարադրութիւնները գրուած են որպէս ոտանաւոր, շատ հաւանաբար ուսուցիչին քաջալերանքով. "Մեր Հայրենիքը", "Գարուն", "Դպրոց", "Շնիկս" խորագրով մէկէ աւելի ոտանաւորները կը հաստատեն մեր ենթադրութիւնը։

"Վեհիլք" պարբերագիրքը ենթախորագիր մը ունի՝ «Երբ դէպի վեր ելլելով կը դժուարանայ ճամբադ, գիտցիր, որ կը յառաջդիմես»։ Այստեղ ուշադրութիւն կը գրաւէ Արաքսին, որ մէկէ աւելի ոտանաւորներ ստորագրած է, եւ որուն "Սայաթ Նովա" խորագրուած ոտանաւորը բաւական համակրելի է։

"Բարձունք"ին մէջ միջնակարգ գ. կարգէն Վերժին Քիսիքեան կը գրէ.

«Մթութիւն մը փայփայող կ'իջնէ
տակաւ ամէն կողմ
Ու կը լռեն դաշտերու երգն ու աղօթքը
վերջին,
Իրիկուան մէջ այս խորունկ,
խաղաղասէր ու անդորր,
Ուր աչուկներն երկնքին թեթեւ
քնքոյշ կը ժպտին»։

"Հայրենասէր Պատանի"ին մէջ (հրատարակութիւն Կիլիկեան վարժարաններու, 1954) դ. կարգէն Պերճ Գալէմքեարեան կը գրէ.

«Գարնան առտու մը պայծառ
Կողին վրայ բլուրին,
Մեղուշ ձայնը սրինգին
Բռներ էր լեռ, ձոր ու սար»։

Այս պարբերագիրքին մէջ ոտանաւոր մը ստորագրած է նաեւ բ. կարգէն Յակոբ Քէօսէեան, որ տարիներ ետք քերթուածներով եւ ուսումնասիրութիւններով պիտի երեւէր Սփիւռքի մամուլին մէջ։

Կ'ենթադրուի, որ երկրորդական վարժարաններու պարբերագիրքերն ու հանդէսները աւելի հետաքրքրական պէտք է ըլլան քերթողութեան առումով, եւ հոն պիտի հանդիպինք նախակրթարաններու պարբերաթերթերուն մէջ երեւցած անուններէն գոնէ մէկ քանիին։ Այդպէս չէ սակայն։ Որքան կարգերը բարձրանան, այնքան տղաքը կը հեռանան քերթողութենէն եւ կը մօտենան արձակին։

Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի "Բամբիռ" հանդէսին առաջին չորս թիւերուն մէջ կը հանդիպինք միայն Երուանդ Տէմիրճեանի անունին, որ ստորագրած է այն քերթուածները, որոնք նախապէս արդէն լոյս տեսած էին "Արեւելք" օրաթերթի յաւելուած՝ "Վահագն"ին մէջ, ինչպէս "Դէպի երիտասարդութիւն" կամ "Ապրիմ–չապրիմ" քերթուածները։

"Վահագն"ի առաջին թիւին մէջ երեւցած յայտարարութիւնը կ'ըսէ.

«Աշխատակցութիւն կրնան բերել մեր բոլոր պատանիները, պայմանաւ որ իրենց գրութիւնները շօշափեն պատմական, ազգային, մշակութային նիւթեր։ Ընթացիկ բանաստեղծութիւններու տեղ չենք տար։ Կը թելադրենք գրել արձակ» (ընդգծումը մեզմէ Մ.Ե.)։

Յաջորդ թիւին մէջ սակայն "Պատանեկան փորձեր" ենթախորագրին տակ կը կարդանք.

«Վահագնի բոլոր պատանի ընթերցողները կրնան բերել իրենց մասնակցութիւնը մեր այս սիւնակին»։

Այդ սիւնակին տակ, քանի մը յաջորդական թիւերու մէջ կը հանդիպինք գրեթէ միայն Երուանդ Տէմիրճեանի անունին։

Դիտելով պատկերը դպրոցական այս թերթերուն կրնանք ըսել, որ նախակրթարաններուն մէջ աշակերտները աւելի համարձակօրէն փորձած են ոտանաւոր գրել, մինչ հասունացումին հետ իրենց փորձերը ընթացած են արձակին ուղղութեամբ։ Անշուշտ տխուր է հաստատելը, որ երկրորդականէն ետք այդ տղոց շնչին տոկոսն է միայն, որ մօտ մնացեր է գրականութեան, եւ շարունակեր ստեղծագործել։

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

(Շար. 1)

---

(1) Խ. Ա. "Ակօս", Թ. գիրք, 1945, Պէյրութ, էջ 122։

(2) Նոյն տեղը։

(3) "Շիրակ", ԻԴ. տարի, 1980, թիւ 1–2, էջ 37։

ՓՃՈՏ ԳԻՐՔԻ ՄԸ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍԻ ԱՌԻԹՈՎ (*)

Մարտ 30ին, Հայաստանի գրողներու միութեան մեծ դահլիճին մէջ, լեցուն սրահով եւ մտաւորական հասարակութեան մը ներկայութեան, ներկայացուեցաւ Ցիպէի վերջին գիրքը՝ "Երեւանեան պատկերներ" որ անցնող տարուան Յուլիս ամիսէն սկսեալ "Յառաջ"ի մէջ լոյս տեսած յօդուածաշարքին համադրումն է:

***

Առաջին խօսք առնողը եղաւ Նոյնինքն Գրողներու միութեան նախագահ՝ Լեւոն Անանեան:

Ան գնահատեց հեղինակը, անոր հրապարակախօսական յատկութիւնները, ներդրումը Հայրենիք–Սփիւռք յարաբերութիւններու ամրապնդման գործին մէջ, անոր ընտիր արեւմտահայերէնը, երգիծական տաղանդը... բայց ամենեւին չգնահատեց անոր գործածած "սեւ ակնոցը", Գրողներու միութեան հասցէին ուղղուած դիտողութիւնը որ "իշխանութեան կառքին լծուած, ինք ալ չի գիտեր թէ ո՞ւր կ'երթայ...", թէ Գրողներու միութիւնը որպէս իրաւունքի եւ արդարութեան պաշտպան գոյութիւն չունի... եւ զգալիօրէն զայրացած էր թէ ինչո՞ւ Պ. Գ. Ծառուկեանի չքեղ պալատին խօսքը կ'ըլլայ, եթէ Ցիպէն այդքան կը սիրէ Հայաստանի աղքատները թող իր բնակարանը տրամադրէ անոնց եւ հանգիստ ձգէ իր բարեկամը... կամ եթէ դժգոհ է Երեւանի աղբերէն... Թող իր բնակած փողոցին աղբերը նախ մաքրէ եւ օրինակ հանդիսանայ ուրիշներու...:

«Մենք կը սպասենք – ըսաւ փակելով իր խօսքը – որ Ցիպէն յաջորդ հատորը լեցնէ միայն "վարդագոյն էջերով"» (sic):

***

Պ. Սուրէն Դանիէլեան, որ փայլուն նախադասութիւններով հանդիսութիւնը կը վարէր, իր կարգին չնշեց որ "Երեւանեան պատկերներ" գիրքը ինքնուրոյն հրապարակագրութիւն է ուր հեղինակը յաջողեր է տալ "երեւանեան խճանկարը", թէեւ հեղինակը "հապճեպագիր" է, բայց անկեղծ եւ գիտակից. ապա առիթէն օգտուելով անձնական հարցումներ ուղղեց ներկաներուն թէ ե՞րբ պիտի ծնի իսկական երկխօսութիւնը Հայրենիք – Սփիւռքի: Սոյն գիրքի ներկայացումին առիթով դաս քաղենք եւ այս պատկերներու միջոցով "երեւանցին" յայտնաբերենք:

***

Փրոֆ. Լեւոն Զուգասզեան Ցիպէի մէջ կը տեսնէ այն եզակի մտաւորականը որ կրնայ համեմատութիւն ընել Հայրենիքի եւ Սփիւռքի, միաժամանակ լաւ ճանչնալով Արեւմուտքն ու Արեւելքը որուն համեմատութենէն ծնած են բոլոր այն դիպուկ անդրադարձները որոնց կը հանդիպինք այս հատորին մէջ, եւ որ մեզի համար այնքան օգտակար են:

Ցիպէն մեզմէ լաւ կը ճանչնայ մեր ներքին գաւառները եւ մենք չենք գիտեր թէ ինչեր կը պատահին այդ աշխարհէ կտրուած լեռնային եւ սահմանամերձ գիւղերուն մէջ, ուր չկան ճամբաներ, հաղորդակցութեան միջոցներ, չկայ օգնութիւն. մենք դարձած ենք քաղաք – Պետութիւն որ կը սկսի եւ կը վերջանայ Երեւանով... Ցիպէն գիտէ հարցը. առողջ առաջարկներ կ'ընէ:

Ջուղայի խաչքարերուն քանդումը աղէտ է. Երեւանի քանդումն ալ նոյնքան աղէտ է. Ցիպէն ամէն առիթով կ'անդրադառնայ այդ փշոտ հարցին. կը պայքարի լեզուական մաքրութեան ու ուղղագրութեան համար... ո՞ւր է սէրը եւ խնամքը հանդէպ մեր մշակոյթին. Ցիպէն ինքնութեան հարց կը բարձրացնէ. իրաւունք ունի. մենք համաձայն ենք իր հետ. մենք գիտենք ամէնքս ալ որ իր կատարած դիտողութիւնները տեղին են... չենք ուզեր ընդունիլ քանի կը ցաւցնեն:

***

Խօսք առաւ նաեւ մեր ազգային մեծ նկարիչ Պ. Յակոբ Յակոբեան, որ իր պարզութեամբ, գաղափարներու յստակութեամբ եւ անմեղունակ անկեղծութեամբ դիւթեց ներկաները: "Ես կը ճանչնայի միայն – ըսաւ – Ցիպէ նկարիչը որ ունի սիրուն գոյներ եւ նորարար գիտարուեստ. որքան որ վերացական նկարչութենէ բան չեմ հասկնար՝ բայց կը յարգեմ իր արուեստը": Ապա պատմեց թէ ինչպէս ծանօթանալով Տիկ. Արփիկ Միսաքեանի, որ Շաւարշի հրաշալի գործը կը շարունակէ, սկսած է ստանալ "Յառաջ", որուն շուրջ առաջին օրերէն համախմբուած էին Եւրոպայի հայ մտաւորականները, առանց այլասերումի՝ թերթը մնաց անկախ, ամէն բանէ վեր, եւ "անոր էջերուն մէջ է որ յայտնաբերեցի առաջին անգամ Քրոնիկագիր Եւսեբեանի յօդուածները որոնք անմիջապէս ուշադրութիւնս գրաւեցին. հոն արտակարգ ոչինչ կայ բայց ամէն տող սրտիս կը խօսի. կարծես ես շատոնց ճանչնայի զինք. Ցիպէին համար ինչ որ հայկական է նուիրական է. անոր փոքրին եւ դրօշը հաւասարապէս. իր մէջ խոր հայկականութիւն կայ. ես կը փնտռեմ իր յօդուածները եւ մեծ սիրով կը կարդամ. կայ մեծ հետաքրքրութիւն Հայաստանի, Մեսրոպեան ուղղագրութեան հանդէպ. ան մեր ժողովուրդի ներկայ պատմութիւնը կը գրէ: Ես կը շնորհաւորեմ զինք":

***

Խօսք տրուեցաւ Լեւոն Լաչիկեանի, որ թէեւ չէր կարդացած խնդրոյ առարկայ գիրքը, բայց ծանօթ ըլլալով նախորդ հատորներուն, ոչ միայն շնորհաւորեց այլ հարց դրաւ թէ "Ցիպէն հաւատա՞մ է թէ մի բան կը փոխուի...": Պատմեց նաեւ ուսանողի մը հետ ունեցած խօսակցութիւնը որ Վահան Տէրեանի ո՞վ եւ ի՞նչ ըլլալը չէր գիտեր...:

***

Ոմն Մարթէն Միքայէլեան ցաւ յայտնեց որ Մանուկ Աբեղեանի եւ Ռուսերու հասցէին ժխտական ակնարկներ կան հատորին մէջ եւ փոխանակ չարչարուելու "քրոնիկներ" գրելու, լաւ կ'ըլլայ որ Ցիպէն բանասիրական եւ բարոյախօսական գործեր արտադրէ:

Հուսկ բեմ հրաւիրուեցաւ հեղինակը. ան հանդարտօրէն պատասխանեց մի առ մի բոլոր առարկութիւններուն եւ դիտողութիւններուն:

Նկատմամբ Աբեղեանի եւ Ռուսերուն, լուսաբանեց որ իր դիտողութիւնը ուղղուած չէ մեծ գրականագէտ Աբեղեանի, այլ մեր դարաւոր դասական ուղղագրութիւնը այլանդակող այն հրէշութեան որ իր անունով աւանդուած է մեզի... եւ թէ ինք եւս մեծապէս գնահատելով հանդերձ ռուս գրական եւ երաժշտական աշխարհի տիտանները, չի կրնար ընդունիլ անոնց արհամարհանքը Հայուն հանդէպ ոչ ալ մերիններուն սարկամիտ ռուսամոլութիւնը...:

Հեղինակը իր փակման խօսքը հիմնականօրէն ուղղեց Գրողներու միութեան նախագահին որուն արտայայտած տեսակէտները անտեղի թուեցան ներկաներուն: Ան չանդրադարձաւ աղբերու եւ այլնի: Եւ նրբօրէն հասկցուց որ թիւրիմացութիւն մը գոյութիւն ունի իր եւ Պ. Անանեանի միջեւ. Վերջինս կ'ուզէ որ ներկայացուի Հայրենիք մը ինչպէս որ պէտք է ըլլայ, մինչ հեղինակը կը ներկայացնէ ինչպէս որ է...: "Ես վկայելու պարտականութիւնն ունիմ – ըսաւ ան – ոչ՝ բանաստեղծութիւն գրելու... Կը հասկնամ որ Գրողներու միութեան նախագահը "պետական անձ" ըլլալով կը զգուշանայ այլ կերպ արտայայտուելէ, սա արդէն նոր գլուխի մը նիւթ կրնայ դառնալ ինծի համար.– "Ի՞նչպէս հաշտեցնել պաշտօնը եւ հայրենասիրական ներքին զգացումները"»... Սակայն Ցիպէ յիշեցուց որ գրողին պարտականութիւնը "վկայելն է", վկայել մասնաւորաբար ճշմարտութեան, մասն արդարութեան: "Ես–ըսաւ– Ապրիլ 12ին երբ բանակը մտրակներով եւ ռումբերով խաղաղ ցուցարարներու վրայ յարձակեցաւ, Բաղրամեան փողոցի վրայ էի, յոգնած, տարեց կիներու ջուր տանելու գացած էի... այդ գիշեր հաւատքս փուլ եկաւ ներկայ իշխանութեան հանդէպ: Ի՞նչպէս կարելի էր այդպէս վայրագօրէն ձեռք բարձրացնել հարազատ, խաղաղ ժողովուրդին վրայ... Պարոն Անանեան, եթէ ես ձեր տեղը ըլլայի, կը հաւաքէի Գրողներու միութեան ամենաերեւելի անձերը, կը ներկայանայի Հանրապետութեան նախագահին եւ կը պահանջէի որ խստօրէն պատժուին այդ բարբարոս արարքին պատասխանատուները...":

"Ի՞նչ ըրիք գազինօներու ներկայութեան հանդէպ որոնք օրէ օր կը բազմանան... հայերէնի մաքրութեա՞ն, ուղղագրութեա՞ն, խանութներու գովազդներու օտարամոլութեա՞ն... եւլն., եւլն.":

Հեղինակը իր համառօտ ելոյթը փակեց կոչ ընելով Հանրապետութեան նախագահին որ յարգէ հայ ժողովուրդին երեք հիմնական սիւները. Հաւատք – Լեզու – Մշակոյթ: Այդ պարագային հայ ժողովուրդը ուսամբարձ կը պտըտցնէ զինք...:

ԹՂԹԱԿԻՑ

Երեւան, Ապրիլ 7

(*) Համառօտ թղթակցութիւն մը հրատարակած էինք Ապրիլ 7ի մեր թիւով, որուն աղբիւրը "Ազգ"ն էր: Այս անգամ մեր թղթակցին աւելի մանրամասն նկարագրութիւնը:

ՊԵՐԼԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայկական Հարցերու Հաստատութիւնը կը յայտարարէ թէ համացանցի վրայ բացուած է իր կայքէջը՝ հետեւեալ հասցէով www.haydat.institut.org:

Կայքէջին վրայ բացի հաստատութեան վերաբերող տեղեկութիւններէ՝ նպատակ, գործունէութիւն, հրատարակութիւններ, յատուկ բաժին մը կայ հայկական ցեղասպանութեան զոհերու անուանացանկին նուիրուած ուր ամէն ոք կրնայ, գրուած բացատրութիւններուն հետեւելով, արձանագրել ցեղասպանութեան զոհ գացած իր հարազատներուն տուեալները (անուն – մականուն, ծննդավայր, նահատակութեան պայմաններ եւ այլ մանրամասնութիւններ):

Հայկական Հարցերու Հաստատութիւնը տակաւին 1998էն ձեռնարկած է ցեղասպանութեան զոհերու անուանացանկին կազմութեան եւ մինչեւ այժմ հաւաքած է բաւական մեծ թիւով անուններ ու տուեալներ որ յանձնած է Երեւանի Ցեղասպանութեան Թանգարանին:

Այժմս, համացանցի միջոցով յաւելեալ կարելիութիւն մը ստեղծուած է այս անուանացանկը նորանոր անուններով եւ տուեալներով լրացնելու:

Կը խնդրենք այս յայտարարութիւնը կարդացողներէն որ օժանդակէն նահատակներու անուանացանկը ամբողջացնելու այս գործին՝ իրենց գիտցած տեղեկութիւնները փոխանցելով եւ իրենց ծանօթներն ալ մղելով որ նոյնն ընեն:

Հաւաքուած տուեալները պարբերաբար պիտի յանձնուին Երեւանի Ցեղասպանութեան Թանգարանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Միւնխ, 4 Ապրիլ 2006

ՏՈՔԹ. ԶԱՒԷՆ ԵԿԱՒԵԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՆԹԻԼԻԱՍ.– Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրութեան Հայկական բաժնի վաստակաշատ տնօրէն տոքթ. Զաւէն Եկաւեանի ուղղած իր Հայրապետական յատուկ Գիրով, Արամ Ա. Կաթողիկոս տոքթ. Զաւէնը նշանակեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մշակութային ու կրթական հարցերու խորհրդատու:

Հայրապետական իր Օրհնութեան Գիրին մէջ Արամ Ա. կ'ըսէ. "Մեր Սուրբ Աթոռի ժամանակակից պատմութեան մէջ առաջին անգամն է որ նման հանգամանք կը շնորհուի": Ապա Հայրապետը կը յայտնէ թէ "Հայ մշակոյթը եւ Հայ դպրոցը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Աթոռին առաքելութեան ամէնէն կենսական բնագաւառները եղած են. Ներկայ ժամանակներու մեր ժողովուրդին տակաւ աճող հոգեմտաւոր կարիքներուն դիմաց անհրաժեշտ է որ մեր Սուրբ Աթոռը շարունակէ, առաւել յանձնառութեամբ, առաջնահերթութիւն ընծայել Հայ մշակոյթին ու Հայ դպրոցին":

Խօսելով Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ տակաւ ծաւալող մշակութային ու կրթական գործակցութեան մասին, Արամ Ա. Կաթողիկոս իր բարձր գնահատանքը կը յայտնէ ընդհանրապէս Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական բաժանմունքին ու մասնաւորաբար տոքթ. Զաւէն Եկաւեանի առանցքային դերակատարութեան Հայ մշակութային արժէքներու տարածման ու հայեցի կրթութեան ծաղկման աշխատանքներուն մէջ: Միաժամանակ, Վեհափառ Հայրապետը կը հաստատէ, որ յիշեալ գործակցութիւնը եկաւ մեծապէս հարստացնելու Հայ մշակոյթը ու հայակերտումի աշխատանքը թէ՛ Հայաստանի եւ թէ Սփիւռքի մէջ: Վեհափառ Հայրապետը յոյս կը յայտնէ որ այս գործակցութիւնը վերանորոգ աշխուժութեամբ շարունակուի՝ յօգուտ Հայ դպրոցին ու Հայ մշակոյթին:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՐԿԸՆԹԱՈՒԻ ՅՈՒՇԵՐԸ ԹՐՔԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Ա. Աշխարհամարտի տարիներուն Օսմանեան կայսրութեան ամէնէն կարեւոր վկաներէն ԱՄՆ-ու դեսպան Հ. Մորկընթաուի յուշերը Արա Սարաֆեանի յառաջաբանով լոյս տեսած են թրքերէն թարգմանութեամբ, Պէլկէ հրատարակչականէն: Հատորը խորագրուած է. "Աւագ դեսպան Մորկընթաուի պատմութիւնը": Անով թրքական ժխտողականութիւնը յըրջագոյն պատուարի մը դէմ յանդիման կը մնայ, քանի որ ինչպէս ծանօթ է, օսմանեան ղեկավարութեան ցեղասպանութեան, մեղքը բացայայտ կերպով տեղ գրտած է ամերիկացի դեսպանին օրագրութեան մէջ:

ՄԱՄՈՒԼ

«LE MONDE»

(6 avril)

ՐԱՖՖԻ ՀԱԼԱՃԵԱՆ՝ ՆՈՐԱՐԱՐԸ

Թերթը ամբողջ էջ մը նուիրած էր Րաֆֆի Հալաճեանի, յօդուածին ալ կցելով նկարը: Հոն կ'ըսուէր ի մէջ այլոց թէ Րաֆֆի Հալաճեան նոր արհեստագիտութիւններու շուկան լաւագոյն կերպով օգտագործողներէն մէկը կը համարուի, յատկապէս 2005ին իր ստեղծած "Նապաստակ" սարքով: 10 տարի Մինիթէլի իր ձեռք ձգած փորձառութենէն ետք 1994ին հիմնած է Ֆրանսայի առաջին համացանց բաշխող ընկերութիւնը՝ "Ֆրանսնէթ"ը: Ցետագային իր սիրողական հետազօտողի եւ զարգացնողի յատկութիւնները արդիւնք տուած են "Օզոն" եւ "Վիոլէ" համակարգերու ստեղծումին, որոնք "Նապաստակ"ի հետ յարմար միջոցներ կը թուին ըլլալ համացանցի միջոցաւ մարդոց միջեւ հաղորդակցութեան: "Նապաստակ"ը համացանցին հետ առանց-կապի (ռեզօ սան-ֆիլ) միացած այն սարքն է որ գործածողին կը տեղեկացնէ ստացած իմակները, դրամարժէքային շուկայի վերջին տուեալները, երթեւեկի խճողումները, օդերեւութաբանական վիճակը, եւլն.: Անկէ 30.000 հատ ծախուած է մինչեւ հիմա:

Ր. Հալաճեան միշտ նորարելու եւ յառաջդիմելու միտումով Ապրիլ 3ին ալ շուկայ հանած է "Թէլէֆոզոն" կապը, որ "Ուի-Ֆի" համակարգի միջոցաւ հեռաձայնի կապ հաստատելու կարելիութիւնը կու տայ:

Խաչիկ Թէօլէօլեան եւ Էլէն Ռունէ,
Սօսի Թէօլէօլեան–Հիրտ և Ռոժէ Հիրտ,
Անճելա Փուկլիէզէ եւ զաւակները,
Տիկին Սիրանոյշ Զօպանեան–Զէլէպի եւ ընտանիքը (Նիւ Եորք),
Տիկին Վիքթորիա Զօպանեան – Բարխեան եւ ընտանիքը (Պոլիս),
խոր վշտով կը գուժեն իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, եւ քրոջ՝

ԳՈՀԱՐ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ–Ի

(ծնեալ՝ ԶՕՊԱՆԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 11ին, Պոսթընի շրջանի "Մթ. Օպըրն" հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14 rue Saint Bazile 13001 MARSEILLE
☎ 04. 91. 50. 15. 09

SOIREE CINEMA

«LE GENOCIDE EN MOI»

Film documentaire réalisé par
ARAZ ARTINIAN

Mercredi 19 avril à 19 heures

Débat avec la réalisatrice

Collaboration de l'Association Artistique Arménienne

Métro: Réformés P.A.F. : 5 Euros
Parking: Gambetta

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ HAMASKAINE

Փ Ա Ր Ի Զ

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

Ի ՅԻՇԱՏԱԿ

Պ. Գըլաւ Ղազարեան 100 Եւրօ կը նուիրէ Իսիի Թարգմանչաց դպրոցին Հրաչ Ագմաճօղլուի մահուան առթիւ (ստանալ "Յառաջ"էն):

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ա. ԽԱՉ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ

13 rue du Perche 75003 Paris

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ.–
Թաղում՝ ժամը 18ին:

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ.–
Ժամերգութիւն՝ ժամը 17ին,
Ճրագալոյց՝ ժամը 18ին:

ԿԻՐԱԿԻ.– Զ Ա Տ Ի Կ
Պատարագ՝ ժամը 11ին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

ESPOIR POUR l'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...
Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

ՃՐԱԳԱԼՈՅՑ, ԶԱՏԻԿ, ՄԵՌԵԼՈՑ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ, Ապրիլ 15.–
Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց
Զ Ա Տ Կ Ի
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 16ին:

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 16.–
Տ Օ Ն Զ Ա Տ Կ Ի
ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.30ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 17.–
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ
Սկիզբ ժամերգութեանց ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10ին,
Պաշտօն հանգստեան՝ ժամը 11.45ին:

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ՇԱԲԱԹ.–
Ընթերցուածք՝ ժամը 16ին,
Ճրագալոյցի պատարագ՝ ժամը 17ին:

ԿԻՐԱԿԻ.–
Զատկուան պատարագ՝ ժամը 10ին:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ ժամը 10ին:
Պատարագի վերջաւորութեան հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց:
Գերեզմանօրհնէք Շաւիլի գերեզմանատան մէջ՝ ժամը 15ին:

***

Ս. ՊՕՂՈՍ–ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՇԱԲԱԹ.–
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 16.30ին:
Ճրագալոյցի պատարագ՝ ժամը 17.30ին:

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին:
Հոգեհանգիստ "Վասն համօրէն ննջեցելոց"՝ յաւարտ Պատարագի:

***

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

ՇԱԲԱԹ.–
Ընթերցուածք՝ ժամը 17.30ին,
Ճրագալոյցի պատարագ՝ ժամը 18.30ին:

ԿԻՐԱԿԻ.–
Ժամերգութիւն՝ ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ ժամը 10.30ին,
Հոգեհանգիստ՝ ժամը 12ին:

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՇԱԲԱԹ.–
Մարգարէական Թղթերու Ընթերցում՝ ժամը 16ին,
Պատարագ՝ ժամը 17ին:

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին,
Պաշտօն Հոգեհանգստեան՝ ժամը 11.45ին:

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԼԻՈՆ

ՇԱԲԱԹ.–
Ճրագալոյցի ժամերգութիւն՝ ժամը 16ին,
Ընթերցուածք՝ ժամը 16.30ին,
Պատարագ՝ ժամը 17ին:
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի փոխանորդ
Լիոնի եւ Ռոն-Ալփի Հայոց
Բազմաձայն երգեցողութիւնները կը կատարուին եկեղեցւոյ Կոմիտաս երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Պ. Յովհաննէս Պէրպէրեանի:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ եւ Հոգեհանգիստ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ.–
Ընթերցուածք Մարգարէից՝ ժամը 16.30ին,
Պատարագ՝ ժամը 17.15ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի
Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի

ԿԻՐԱԿԻ.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8.30ին,
Հանդիսաւոր պատարագ՝ ժամը 9.45ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Մասնակցութեամբ Սահակ – Մեսրոպ երգչախումբի, ղեկավարութեամբ՝ Պ. Խաչիկ Երլմազեանի:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Յաւարտ Պատարագի Հոգեհանգիստ "Վասն համօրէն ննջեցելոց":

***

ՍԷՆ ԼՈՒ – ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ.–
Հանդիսաւոր պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ

***

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ ժամը 10ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ
Յաւարտ Պատարագի Հոգեհանգիստ "Վասն համօրէն ննջեցելոց":

(Շար. Ա. էջէն)

համար կառավարել երկիրը նման պայմաններու մէջ:

Ք Ա Ն Ի Մ Ը Տ Ո Ղ Ո Վ

ՔԱՐԱՇԻԻ (Փաքիստան) կրօնական սիւննի համախմբումի մը ատեն, Ապրիլ 11ին, ռումբի մը պայթումէն 57 հոգի մեռած է: Ռումբը դրուած էր բեմի մը տակ, որու վրայ կրօնաւորներ աղօթքներ կ'արտասանէին Մոհամէտի տարեդարձին (ծնած է 570 Ապրիլ 20ին) առթիւ:

ԹԵՀՐԱՆ յայտարարած է Ապրիլ 11ին, որ կրցած է հարստացնել իւրանիումը եւ այս ձեւով բռնութեամբ մուտք կը գործէ հիւլէական երկիրներու ակումբին մէջ: Կը թուի որ Նախագահ Ահմետինեճատ կ'ուզէ փորձութեան ենթարկել Միացեալ Նահանգները եւ տեսնել թէ ինչ պիտի ըլլայ հակազդեցութիւնը: Բնութեան մէջ հարստացած իւրանիումը գոյութիւն ունի 0,7% համեմատութեամբ: Ճարտարարուեստական բարդ գործընթացով մը կրնայ հասնիլ 3,5%ի եւ վառելանիւթ հայթայթել ոչ զինուորական հիւլէական կեդրոններու, բայց եթէ այդ համեմատութիւնը հասնի աւելի քան 90%ի, կրնայ ծառայել հիւլէական ռումբ շինելու:

ՍԵԿՈՂԷՆ ՌՈՒԱՅԱԼ Ապրիլ 11ին հիւրն էր Միշէլ Տրնիգոյի (Գանալ+) եւ հոն խոստովանեցաւ թէ թեկնածու է 2007ի նախագահական ընտրութեան: Ճամէլ Տրպուզին հարցումին պատասխանելով է որ յայտնեց թէ եթէ հարցախոյզերը նոյն ձեւով շարունակուին, պատրաստ է թեկնածու ըլլալու, հակառակ անոր որ Ընկերվարական կուսակցութիւնը Նոյեմբերին պիտի տայ որոշումը եւ կուսակցութեան "փիղերը" շատ տրամադիր չեն ընդունելու նման թեկնածութիւն մը, սկսելով Սթրօս-Քահնէն...:

Մարսէյլ
ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
նահատակ բանաստեղծ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿի
կեանքի մասին գրուած

«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ»

վէպի

Կը բանախօսէ հեղինակը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

Ռուբէն Սեւակէն քերթուածներ կ'արտասանէ
Հայաստանի վաստակաւոր արուեստագիտուհի
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 21, ժամը 20.30ին
Սահակ – Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

— Մուտքը ազատ է —

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 14
VENDREDI
14 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TÉL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·434 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21·434

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՎԱՍԻԼԻ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ, որ ինչպէս գրեցինք կալանաւորէն ձերբակալուեցաւ Եուկոսի փոխ նախագահ նշանակուած օրէն 48 ժամ ետք, հացադուլի դիմած է (Ֆիկառօ, Ապրիլ 13): Ալեքսանեան կը հերքէ իրեն դէմ եղած ամբաստանութիւնները դրամի օրինականացման եւ դրամական խուցումի վերաբերեալ: Իր փաստաբանը յայտարարած է թէ 10 օրուան համար խուց մը դրուած է, որովհետեւ մերժած է բժշկական քննութեան մը ենթարկուիլ: Ֆիկառոյի համար Կրեմլին քաղաքական հետապնդումի մը դիմած է Եուկոսի դէմ եւ կը թուի որ վերջարանը կը մօտենայ:

Ռ. ՓՐՈՏԻ յայտարարած է Ապրիլ 12-ին որ իր համախմբումին յաղթանակը կասկած չի վերցներ եւ հրաւիրած է Պէրլուսքոնին, որ դատապարտած է խարդախութիւնները, որ ընդունի իր պարտութիւնը եւ հեռանայ: Պէրլուսքոնի համաձայն չէ, բայց Փրոտի օտար մամուլի թղթակիցներուն յայտարարած է թէ կը զարմանայ, քանի որ Ներքին նախարարութիւնը իր ձեռքն է եւ կրնայ ամէն բան հակակշռել: Խնդրոյ առարկայ են 43·028 քուէ Երեսփոխանական ժողովին եւ որովհետեւ տարբերութիւնը 25·224 ձայնի կը վերաբերի, Պէրլուսքոնի այդ պատճառով կ'արդարացնէ իր դիմումը; Ամէն պարագայի մէջ, Փրոտի իր կառավարութիւնը կրնայ միայն ամիսէ մը կազմել:

"ՖՐԱՆՍ ՍՈՒԱՐ" գնուած օրն իսկ (Ապրիլ 12) գործադուլի ձեռնարկեց և լոյս չտեսաւ յաջորդ օրը: Պատճառը կու գայ գնորդներու ծրագիրներէն: Արդարեւ Լիլի առեւտրական դատարանը նախապատուութիւն տուաւ լրագրող Օլիվիէ Ռէյի եւ կալուածներու գործարար՝ Ֆիլէր Պրինուայի որպէս գնորդ եւ թերթին խմբագրութիւնը գործադուլ որոշեց: Դատարանը մերժեց ռուս գործարար Արկատի Գայդամակի եւ Ժան-Ռաֆայէլ Ֆերնանտէզի թեկնածութիւնները: Թերթին աշխատաւորները չշմած են տրուած որոշումէն: Նոր գնորդները 112ի վրայ պիտի պահեն միայն 51 խմբագիր եւ բոլորովին պիտի փոխեն թերթին դիմագիծը: Նպատակն է թերթը վերածել "ժողովրդական մեծ օրաթերթի", օրինակ առնելով անգլիական թապլօյիտները, այլ խօսքով փիփըլ մամուլ ստեղծել օրաթերթերուն մէջ: Գնորդը հինգ միլիոն Եւրոյի ներդրում մը կ'ընէ ապահովելու համար նիւթականը: Ֆրանս Սուար 50·633 օրինակ կը վաճառէր 2005 Մարտին: Առաւելագոյն սպառումը կը պատկանի Փարիզիէնի՝ 498·021, ապա Էքիփ, Ֆիկառօ, Լը Մոնտ, Լիպէրասիոն, եւլն., եւլն.: Բանթողները կը սպառնան նաեւ գրաւել թերթին կեդրոնավայրը: Թերթը 12 միլիոն Եւրոյի պարտք ունի:

ԹՈՒՐՔԻՈՅ Շըրնաք գաւառին մէջ ուր Թուրքեւքիւրտ բախումները պարբերաբար կը շարունակուին, Ապրիլ 12ին, 12 քիւրտ զինեալ եւ երկու թուրք զինուորական սպաննուած են: Քիւրտ զոհերէն երկուքը կիներ են: Գաւառը կը գտնուի Իրանի սահմանակից շրջանին մէջ:

ԹՈՒՐՔԻՈՅ Կրթական նախարարութիւնը սկսած է նոր կանոնագրութիւն մը պատրաստել, ըստ որուն կարելի պիտի ըլլայ հայկական վարժարաններուն, անունները հայատառ արձանագրել չէնքերուն մուտքին: Մինչեւ այսօր 1981ին հրապարակուած կանոնագրութիւնը կը պարտադրէր որ վարժարաններուն անունները միայն թրքերէն տառերով գրուին:

Տ. ՏԸ ՎԻԼԸՓԷՆ Ապրիլ 12ին ցնոր տնօրինութիւն մերժած է ընթացք տալ հանրային վայրերու մէջ ծխելու արգելքին, որ օրերէ ի վեր գլխաւոր հարց դարձած է երկրին մէջ: Կը թուի որ Սէ. Փէ. Ը.ի հանդիսաւոր թաղումէն ետք, վարչապետը նոր փորձանքէ մը նախընտրեց ազատիլ: Այս նահանջը նոր պատակ մըն է բոլոր անոնց համար որոնք կը պայքարին ծխամոլութեան դէմ, նաեւ կրաւորական, սկսելով Առողջապահութեան նախարարէն:

ԻՐԱՔԻ Ներքին նախարարը՝ Ծապր ոՍուլաղ ընդունած է որ "մահուան հեծելազօրքեր" կան յատուկ ուժերուն մէջ, որոնց պաշտօնն է ապահովութիւնը եռաշխաւորել նախարարութիւններու, կարեւոր հաստատութիւններու որոնք կը գործեն երկրին մէջ: Ճշդած է սակայն որ "կարգ մը ուժեր հակակշռէ դուրս են կամ Պաշտպանութեան Նախարարութենէն կախում ունին": Ապրիլ 12ին առնուազն 26 հոգի մեռած են թակարդ կառքի մը պայթումէն Պաղտատի հիւսիս - արեւելքը:

ՀԱՅՐ ՏԱՐԱՏՈՒԽԻՆ այլեւս արտօնութիւն չունի պաշտօնավարելու որպէս քահանայ, որովհետեւ յայտարարած էր որ Եուկոսի նախկին նախագահը՝ Խոդորովսկի քաղաքական բանտարկեալ մըն է: Հայր Սերգէյ կը հալածուի ամիսներէ ի վեր քանի Ռուսաստանի Օրթոտոքս եկեղեցին սերտ կապեր ունէր ՔԱ. Կէ. Պէ.ի հետ, այսօր ալ՝ Պուտինի: Քահանան կը մեղադրուի նաեւ անոր համար որ հաւատացեալները կը մղէ քաղաքական հարցերու: Անցեալին, ինք ալ բանտարկուած է (1974 – 78), որովհետեւ 18 տարեկանին ուզած է հակահամայնավար երիտասարդական կազմակերպութիւն մը հիմնել: Կրօնաւորը կ'ըսէ թէ չորս լաւագոյն տարիները եղած են իր կեանքին, որովհետեւ հոն հասկցած է որ կենսականը ներքին ազատութիւնն է:

ԹՈՒՐՔԻՈՅ Արտաքին նախարարը՝ Ա. Կիւլ յայտարարած է որ Թուրքիա կարգ մը միջոցներու կը ձեռնարկէ յարմարելու համար եւրոպական պահանջներուն: Այս միջոցները կը վերաբերին բանակի իշխանութեան, ոչ մահմետական փոքրամասնութիւններու իրաւունքներուն, քաղաքական կուսակցութեանց ֆինանսաւորման, կաշառակերութեան եւ խորականութեան: "Ինչ որ կարեւոր է, ըսած է Կիւլ, այն ուղին է զոր Թուրքիա կ'առնէ աւելի ժողովրդավարութեան ճամբուն վրայ":

ԵԳԻՊՏԱԿԱՆ իշխանութիւնները վերջին շաբաթներուն 950 իսլամապաշտ նկատուածներ ազատ արձակած են: Ասոնք նախկին անդամներ են ահաբեկչական Ճեմահ Իսլամիահ խումբին, որ 1997էն ի վեր հրադադար մը հռչակած է:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 10 երեսփոխաններ յայտարարած են, Ապրիլ 12ին, որ Համասի երեսփոխաններու հանդիպած են եւ հրաւիրած զանոնք որ վերաքննեն Իսրայէլի հանդէպ իրենց դիրքը: Ջախի այս 10 երեսփոխանները Ռամալլահ եւ Գազա գացած են:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱՏՈՐՄ»Ը ՇԱՀԱԾ ՊԻ-ՊԻ-ՍԻ-Ի ՄՐՑԱՆԱԿԸ

Նախկին պոլսահայ Արթօ Թունչպոյաճեանի "Հայկական նուատորմ" նուագախումբը Ապրիլ 7ին յայտարարուած է Պի. Պի. Սի.ի երաժշտական մրցանակներուն առաջին նուաճողը: Ընտրութիւնը կատարուած է համացանցի վրայ քուէարկութեամբ: Եզրափակիչ փուլ հասած են, պրազիլական "Սեւ Ծորճ"ը, իրաքեան "Իլհամ Էլ Մատֆալ"ը, իտալական "Էնզօ Աւթէյպըլ եւ Պօթարի" խումբերը եւ "Հայկական նուատորմ"ը: Յետոյ երաժշտական քննադատներու դատակազմը այդ չորսէն յաղթական հռչակած է "Հայկական նուատորմ"ը: Մրցանակաբաշխութիւնը կատարուած է նոյն օրը Լոնտոնի մէջ:

Խումբին հայաստանցի գործավարը Տօն Գրիգորեան ըսած է թէ յաղթանակին նպաստած է "Հայկական նուատորմ"ին "Մեր հոգիին ձայնը" սկաւառակը որ 2004ին, ամբողջ աշխարհէն ընտրուած 950 սկաւառակներու մէջ 14րդ հանդիսացած էր:

Խումբը կազմուած է Արթօ Թունչպոյաճեանի հետ Անահիտ Արտուշեանէ, Արմէն Այվազեանէ, Արմէն Հիւսնունցէ, Դաւիթ Մինասեանէ, Տիգրան Սուճեանէ, Նորայր Քարտէշեանէ, Վարդան Գրիգորեանէ, Արմէն Ճէլալեանէ, Վահագն Հայրապետեանէ, Արտեմ Մանուկեանէ: "Հայկական նուատորմ"ը ծանօթ է հայկական մեղեդիներու ճազի պատշաճեցումով, աւանդական մեկնաբանութիւններով:

ԵՂՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»Ը ԹՐՔԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Թրքական աղբիւրներ կը տեղեկացնէին թէ հեռատեսիլի "Քանալթիւրք" կայանը որոշած էր Ապրիլ 13ին ցուցադրել Ա. Եղոյեանի "Արարատ"ը: Կայանը համացանցի իր կայքէջով հարցախոյզ մը բացած է այդ մասին. 55%ը ֆիլմին ցուցադրութեան ուղղութեամբ կարծիք յայտնած է: Ատիկա կը մեկնաբանուի որպէս թուրք հանրութեան յանդուգն կեցուածքը որ կարելի կ'ընէ ամէնէն թապու համարուած նիւթի մըն ալ վիճարկումը:

Ցուցադրութեան կը յաջորդէր կլոր սեղան մը որուն մասնակից հայ եւ թուրք մտաւորականներ, պատմաբաններ, քաղաքագէտներ ու շարժանկարի մարզին պատկանողներ պիտի արժեւորէին "Արարատ"ը ու վիճարկէին Ցեղասպանութեան պնդումները: Մասնակիցներուն մէջ կը գտնուէր Հ. Տինքի անունը:

Ի. ԱԼԻԵՒԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ազրբէջանի նախագահը հիմնուելով վերջին օրերուն շրջան ընող լուրերու վրայ թէ ԱՄՆ նոր առաջարկներ բերած են Ղարաբաղի հարցին կարգաւորման, յայտարարած է. "Բանակցութիւնները կը տարուին նոր ձեւաչափով որ կը համապատասխանէ Ազրբէջանի ազգային շահերուն եւ ճամբայ կը բանայ երկրին տարածքային ամբողջականութեան վերահաստատումին": Ատիկա ըսելով Ի. Ալիեւ զերծ մնացած է ռազմական յայտարարութիւններէ, ինչ որ մտածել կու տայ թէ Եւրոպական Խորհրդարանի խորհրդարանական վեհաժողովի նախագահին յայտարարութիւնը ազդեցութիւն ունեցած է: Վան տէր Լինտըն ըսած էր թէ կարգաւորման համար ուժի դիմող կողմը Եւրոպական Խորհրդարանին անդամ չի կրնար մնալ:

Նոր առաջարկներուն մասին Մինսկի խումբին ռուս նախագահը Ե. Մերզլեակով Մոսկուայի մէջ Ապրիլ 5–7 հանդիպումներ ունենալէ ետք Հայաստանի Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեանի հետ, ըսած է թէ ան տեղեկացած էր անոնց Մոսկուա ժամանումէն առաջ եւ Հայաստան մեծապէս հետաքրքրուած է կատարուած առաջարկներով:

Մերզլեակով պատասխանելով հարցումի մը ըսած է թէ կարեւոր է որ կողմերը հասկնան թէ անկարելի է իրենց պահանջներուն 100% գոհացում ունենալ:

ԹՈՒՐՔԻԱ

ՀԻՆԳ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԷՆ ՉՈՐՍԸ ԱՆՊԱՐՏ ՀՌՉԱԿՈՒԱԾ

"Կայսրութեան անկումի շրջանին օսմանցի Հայերը" գիտաժողովին յետաձգումի վճիռին քննադատութեան յանցանքով հետապնդումի ենթակայ հինգ լրագրողներէն չորսը անպարտ հռչակուած են: Հասան Ճէմալ, Իսմէթ Պէրքան, Հալուք Շահին եւ Էրօլ Քաթըրճըօղլուի դէմ դատական հետապնդումը չեղեալ համարուած է, այն պատճառաբանութեամբ որ "դատը օրինաւոր պայմանաժամերուն մէջ բացուած չէ":

Հինգերորդ լրագրողը Մուրատ Պէլկէ պիտի շարունակուի դատուիլ, որովհետեւ միակն է որուն դատը ճիշդ ատենին բացուած է...

Կը սպասուի կատակերգութեան յաջորդ արարին:

ՊՈԼԻՍԸ 2010-Ի ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱ՞Ք

Եւրոպական դատակազմ մը Ապրիլ 11ին 2010ի Եւրոպայի մշակ. մայրաքաղաքի թեկնածու նշանակած է Պոլիսը, Էսսընը (Գերմանիա) եւ Փէքսը (Հունգարիա): Պոլիսը յաղթանակած է Կիեւի հետ մրցակցութեան մէջ, որպէս Եւրոպական Միութեան ոչ անդամ երկրի քաղաք: Ընտրութիւնը առիթ կու տայ մշակութային բազմաթիւ ու բազմազան ծրագիրներու իրագործումին եւ հետեւաբար զբօսաշրջիկներ գրաւելու:

Դատակազմին նախագահը՝ բրիտանացի Ճ. Իզաաք յայտնած է թէ Պոլսի թեկնածութիւնը երկար ատենէ ի վեր պատրաստութեան մէջ էր ո՛չ Անգարայի, այլ ոչ կառավարական կազմակերպութիւններու կողմէ: Նոյն անձը ըսած է թէ Պոլսոյ ընտրութեան մէջ քաղաքական ազդակ փնտռելու տուեալ չկայ, պարզապէս այդ քաղաքին թղթածրարը աւելի լաւ էր քան Կիեւինը:

Եւրոպական յանձնախումբը առաջարկած է որ ընտրուած քաղաքներուն սահմանուած տարեկան 500 հազար Եւրոյի յատկացումը բարձրանայ 1,5 միլիոնի:

Նոյեմբերին յայտնի կ'ըլլայ թէ երեք թեկնածուներէն ո՛ր մէկը կը հռչակուի Եւրոպայի մշակութային մայրաքաղաք:

ՈՒՐՈՒԱԳԻԾ
ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Հալէպի մէջ լոյս տեսած պարբերաթերթերուն եւ հանդէսներուն թիւը բաւական մեծ է, նկատի առնելով որ օտար քաղաքի մը մէջ ապրող գաղութի մը մասին է խօսքը: Յարանուանութեանց կամ միութիւններու կողմէ հրատարակուած մամուլէն զատ եղած են գրականութեան եւ արուեստներուն նուիրուած քանի մը անոնց հանդէսներ, ուր գրականութիւնը կարեւոր տեղ ունեցած է:

Այս պարբերագիրքերէն կը յիշենք "Դէպի երկիր"ը, "Երկիր"ը, "Մշակոյթ"ը, "Սեւանը", "Սուրիահայ Ալպոմ"ը եւ այլն:

"Դէպի երկիր" պարբերագիրքը ձեռնարկուած է "Հայրենաբաղձ Հայերու ընդհանուր միութիւն"ի կողմէ եւ աշխատանքն է 1920ական թուականներուն Հալէպ ծնած երիտասարդ եւ մշակութասէր տղոց:

Պարբերագիրքին առաջին պրակին մէջ տեղ գտած քերթուածները կու գան նոր անուններէ ինչպէս՝ Վ. Նայիրեան (ծածկանո՞ւն), Մուշեղ Թահմազեան, Պետրոս Պայրլեւ, Հարէն եւ Յակոբ Արմէն: Այս անուններուն կողքին կարելի է հանդիպիլ Երուանդ Պարսումեանին եւ Զարեհ Մելքոնեանին, որոնք տակաւին հաշակ չէն նուաճած որպէս բանաստեղծ, Ստեփան Ալաջաջեանին եւ Անդրանիկ Թէրզեանին, որոնք տակաւին չեն ներգաղթած, եւ կը գրեն արեւմտահայերէնով, Վահէ Վահեանին, Եղիվարդին, ինչպէս նաեւ մեծ թիւով խորհրդահայ բանաստեղծներու ինչպէս Թաթուլ Հուրեանի եւ այլ անուններու:

Այս պարբերագիրքին յաջորդ համարներուն մէջ կը կրկնուին վերը յիշուած անունները, առանց մասնաւոր նորութիւններու:

Երրորդ պրակին մէջ կը հանդիպինք "Մեր Ձայնը" խորագրուած հետաքրքրական յօդուածի մը, ուր կը կարդանք.

«Գաղթահայ գրականութիւնը, Սուրիոյ եւ Լիբանանի իր վաստակով, եղաւ ցուցարանը անհատական յոյզերու եւ չկրցաւ ազատիլ սովորականէն, բարձրանալու համար աւելի՛ վեր, աւելի կարեւորին ու գեղեցիկին»:

«... Զգրուեցան մեր կեանքին իրական ու արդար էջերը. ու Հայուն զարհուրելի եղեռնին վաւերագիրը մնաց դուրս արուեստի պարունակէն»:

Գնահատելի ինքնաճանաչում եւ ինքնադատում...

Ճիշդ է, որ քերթուածները սիրոյ եւ հայրենիքի գաղափարներուն շուրջ հիւսուած թոթովանքներ կը մնան, ծանր ազդեցութեանը տակ Վահան Թէքէեանի, սակայն անոնք կը հաստատեն գոյութիւնը գրական մթնոլորտի մը, ուր հիմնական կռուանը եղած է սէրը գրականութեան եւ հայրենիքին հանդէպ:

"Երկիր"ը կը թուի շարունակութիւն մը ըլլալ նախորդ պարբերագիրքին. ասիկա կը հաստատուի գրեթէ բոլոր անուններուն, հանդէսին ընդհանուր ուղղութեան եւ ձեւին կրկնութեամբ: Այստեղ պարզապէս քերթուածները աւելի առատ են. առատ են նաեւ արտատպումներն ու այլ գաղութներէ աշխատակցող անունները ինչպէս՝ Մարի Աթմաճեան, Փարիզէն, կամ Յակոբ Գույումճեան Ֆիլատելֆիայէն (ԱՄՆ):

Նորութիւն է գոյութիւնը գրականութեան նուիրուած յօդուածներու, որոնց առաջին օրինակը կու գայ Հայաստանէն՝ "Մեր գրականութեան խնդիրներից", փրոֆ. Ա. Մ. Արշարունիի գրիչով ("Երկիր", Գ. հատոր, 1957, էջ 50-54):

Սիմոն Սիմոնեան Հալէպի մէջ կը թուի սկսած ըլլալ ոչ միայն իր խմբագրական աշխատանքը, այլեւ հրատարակչութիւն մը հիմնելու իր ծրագիրը, որովհետեւ 1946ին ի՛նք խմբագրած է Հալէպահայ Ուսուցչական միութեան "Սեւան" պարբերագիրքը, որ "Սեւան" հրատարակչական մարմնին ձեռնարկն էր:

Այս պարբերագիրքը երեք բաժիններ ունեցած է՝ քերթուած, արձակ եւ ուսումնասիրութիւն: Առաջին բաժնին մէջ կը գտնենք անունները Վահան Թէքէեանին, որմէ երեք անտիպ քերթուածներ ներկայացուած են, Կարապետ Մկրտիչեանին, Դամասկոսէն Միհրան Տէր Ստեփանեանին, Յովակին եւ այլոց:

Նոյնիսկ Կիւլէսէր Տէմիրճեան, որ հալէպահայութեան ծանօթ էր որպէս տէրը գլխաւորաբար հայաստանեան հրատարակութիւններու գրախանութին, ունեցած է իր անձնական՝ "Սուրիահայ Ալպոմ" խորագրով հրատարակութիւնը (ընդամէնը երեք հատոր), որուն 1929ի գիրքին մէջ (Գ. տարի, թիւ 3) նոր անուններու կը հանդիպինք, ինչպէս՝ Յասմիկ ("Ուռիներու շուքին տակ", 1924), Ակիւլնէ ("Ներշնչումներ" Աստուածածնայ Ս. տօնին առիթով, 1928), Բ. Արձան ("Յայդային"), Հ. Պ. Մովսէսեան ("Կը սիրեմ") եւ այլն:

***

ՏԱՐԵԳԻՐՔԵՐ

Քանի մը տարեգիրքեր լոյս տեսած են անցնող տասնամեակներուն: Պէտք է նշել, որ տարեգիրքերը մեծ ժողովրդականութիւն վայելող հրատարակութիւններ եղած են. անոնք դոհացուցած են ժողովուրդին գրեթէ բոլոր խաւերուն ճաշակն ու պահանջքը, որովհետեւ գրական բաժնին կողքին՝ եղած են նաեւ զուարճութեան կամ ժամանցի բաժիններ, գիտականին կողքին միջազգային քաղաքականութեան բաժիններ:

Հալէպը ունեցած է "Արեւելք" (1948), "Գեղարդ" (1975), "Մանանա" (1946), "Սասուն" (1948), "Սուրիահայ տարեցոյց" (1924), "Սուրիահայ տարեգիրք", "Տարօն" (1949), "Տիգրիս" (1946) եւ "Տաթեւ" տարեցոյցը: Թերեւս կան առնուազն տարբեր, այլ տարեգիրքեր եւս, որոնց մենք չհանդիպեցանք մեր պրպտումներուն մէջ: Յիշուած անուններէն ալ միայն քանի մը հատը կրցանք ունենալ մեր ձեռքին տակ: Մնացեալները փճացա՞ծ են արդեօք տարիներու ընթացքին, թէ՞ կարգ մը անհատներ կը պահեն զանոնք որպէս ընտանեկան յիշատակ...

"Տարօն", "Տիգրիս" եւ "Սասուն" տարեգիրքերը նուիրուած ըլլալով միայն այդ գաւառներուն, գրական բաժիններ չեն ունեցած: Իսկ "Մանանա" տարեգիրքը (Աւետարանական համայնքի հրատարակութիւն) զուտ կրօնական ըլլալուն, մեր ուսումնասիրութեան ծիրէն դուրս կը մնայ:

Այս անուններէն ամէնէն հետաքրքրականները կը մնան "Տաթեւ" եւ "Գեղարդ" տարեգիրքերը, նուազ չափով՝ "Արեւելք"ը:

"Արեւելք" տարեգիրքը թէեւ ութսուն երկու էջերու վրայ տարածուած գրական բաժին մը ունի, սակայն այնտեղ հալէպահայ բանաստեղծներ չեն երեւիր (քանի մը բացառութիւններով) արտատպուած քերթուածներով ներկայ են Կոստան Զարեան, Վահան Թէքէեան (անտիպ նշուած է քերթուածներուն տակ), Մ. Իշխան, Սամուէլ Խաչիկեան (Թեհրան), Ա. Լէյլանի, Եղ. Պոյաճեան, Ա. Ծառուկեան եւ Գ. Իւլիւպէյեան (Հալէպ):

"Տաթեւ" տարեգիրքն ալ իր կրօնական բնոյթով դուրս կը մնայ մեր ուսումնասիրութեան շրջագիծէն, հակառակ անոր, որ հոն կը հանդիպինք կրօնա-բարոյական ոգիով գրուած բանաստեղծութիւններու, որոնք Սփիւռքի տարբեր գաղութներէն կու գան, ինչպէս՝ Հրանտ Նազարեանցի (Հռոմ, Պարի), Յարութիւն Քհնյ. Սարհատեանի (Թեհրան), կամ Թոտինի (Փարիզ) քերթուածները:

"Գեղարդ" տարեգիրքը իր առաջին հատորէն իսկ (1975) մեծ տեղ տրամադրած է գրականութեան՝ արձակ եւ բանաստեղծութիւն հաւասարապէս: Այնտեղ երեւցած են հաստ ու կենտ հալէպահայ անուններ, մինչ քերթուածներուն մեծ մասը կու գայ Պոլիսէն, Սփիւռքի զանազան գաղութներէն կամ Հայաստանէն:

Զարեհ Մելքոնեան, Հայկ Պարիկեան եւ Մարտիրոս Մոմճեան կ'երեւին "Գեղարդ" Ա. եւ Բ. գիրքերուն մէջ, մինչ Գէորգ Թէմիզեան եւ Պետրոս Պոյաճեան կ'երեւին Գ. գիրքին մէջ:

Ասոնցմէ Զարեհ Մելքոնեան եւ Հայկ Պարիկեան արդէն ճանաչում նուաճած անուններ էին այդ թուականներուն (1975). Գէորգ Թէմիզեան յետագայ տարիներուն պիտի դառնար կարեւոր՝ իր քերթողութեամբ, իսկ Մարտիրոս Մոմճեան եւ Պետրոս Պոյաճեան գրեթէ անծանօթ կը մնան հալէպահայ բանաստեղծութեան մէջ:

Մարտիրոս Մոմճեան ծնած է Հալէպ 1935 թուականին. եղած է անդամ Հալէպի "Գրական շրջանակ"ին. 1960ին գաղթած է Պէյրութ, ապա 1978 թուականին՝ Ամերիկա եւ նոյն տարին մահացած: Իր քերթուածները լոյս տեսած են "Գեղարդ" տարեգիրքին եւ "Արարատ գրական"ի մէջ:

Պետրոս Պոյաճեան ծնած է Հալէպ, 1947 թուականին: Գրութիւններով հանդէս եկած է "Բարձունք" դպրոցական պարբերագիրքին, "Պայքար" օրաթերթին (Պէյրութ) եւ "Գեղարդ" տարեգիրքին մէջ: Կ'ապրի եւ կը գործէ Հալէպի մէջ, որպէս սրտաբան:

Յատուկ ուշադրութեան արժանի կը գտնենք Թորոս Թորանեանը, իր աննահանջ եռանդին եւ աւելի քան բեղուն գրիչին համար: Իր ծննդեան 75ամեակին նուիրուած գրքոյկին մէջ կը յիշուի մօտաւոր ցանկը իր անունը կրող գիրքերուն (գրած, խմբագրած, հրատարակած), որոնց մէջ որոշ տեղ կը գրաւեն բանաստեղծութեան գիրքերը, եւ որոնց թիւը կը հասնի տասնչորսի (աւելի քան հարիւր յիսուն այլ գիրքերու կողքին):

Սակայն բանաստեղծութիւնը Թորանեանի միակ խանդը չէ. ան նոյն խանդավառութեամբ կը մօտենայ հաւասարապէս արձակին, լրագրութեան, ճանապարհորդական նօթերուն թէ մենագրութիւններուն: Թերեւս այս է պատճառը, որ Թորանեանի բանաստեղծութիւնը կարեւոր տեղ մը չի գրաւեր հալէպահայ բանաստեղծութեան մէջ, բայց անպայմանօրէն տեղ ունի այդ բանաստեղծութեան պատմութեան մէջ:

"ՆԱՅԻՐԻ" ԱՄՍԱԳԻՐ

Անդրանիկ Ծառուկեանի "Նայիրի" շաբաթաթերթը սկսած է Հալէպի մէջ 1941 Նոյեմբերին, որպէս պարբերագիրք:

Ա. պրակի ներսի կողքին դրուած յայտարարութեան համեմատ «"Նայիրի"ն հատով չի վաճառուիր, այլ տարեկան բաժանորդագրութեամբ». իւրաքանչիւր բաժանորդի իրաւունքն է «պահանջել ոչ թէ որոշ թիւով պրակներ, այլ որոշ թիւով էջեր՝ 350»:

Այս առաջին պրակէն իսկ կարելի է գաղափար մը կազմել խմբագրին՝ Ա. Ծառուկեանի վճռական ոգիին եւ կամքին մասին. որոշած է չընկրկիլ, չընկրկիլ մանաւա՛նդ նիւթական խոչընդոտներու առջեւ, եւ գտած է ձեւը՝ տարեկան բաժանորդագրութիւն...

Ծառուկեան հաստատուն հիմերու վրայ կը դնէ իր պարբերագիրքը, երբ կ'ապահովէ Սփիւռքի գրեթէ բոլոր ծանօթ եւ... անծանօթ հեղինակներուն աշխատակցութիւնը:

Համաշխարհային պատերազմի բուռն տարիներուն՝ 1943 – 1944ին, "Նայիրի" լոյս չէ տեսած: 1944ին մէկ պրակ հրատարակուած է, սովորականէն աւելի փոքր չափով: Այդ պրակին մէջ երեւցած գրութիւններէն մաս մը կը գտնենք աւելի ուշ լոյս տեսած թիւերու մէջ, ինչպէս՝ Սեգայի "Նախազգացում"ը կամ Ե. Տարօնեանի "Լերան քարոզը": Ծառուկեան, որ նախանձախնդիր էր արտատպումներ կատարելու կամ կրկնութիւններ ընելու եւ տէր էր սուր յիշողութեան, նման կրկնութիւն պիտի չարտօնէր ինքզինքին: Բայց 1944ը ծանր տարի մըն էր եւ "Նայիրի"ն, թէեւ հրատարակուած, հաւանաբար կարելի չէր եղած ցրուել: Ահա թէ ինչու քանի մը գրութիւններ կրկին կ'երեւին յաջորդ տարիներուն ընթացքին:

Իսկ ծաւալին մասին խմբագիրը կ'ըսէ 1944ի Պրակ Ա.ի ներսի կողքին վրայ.

«"Նայիրի"ի ծաւալին փոքրացումը արդիւնք է տպագրական դժուարութեան: ...Անգամի մը համար բաւծ ըլլա՛նք՝ թէ "Նայիրի"ն Պարէնաւորումէն թուղթ չի ստանար, որեւէ կազմակերպութենէ նիւթական կախում եւ հասոյթ չունի եւ կը հրատարակուի իր ապրուստը ուսուցչութեամբ ապահովող գրողի մը ճիգերուն շնորհիւ»:

"Նայիրի"ն, ինչպէս ըսինք, ապահոված էր իր ժամանակի Սփիւռքին մէջ ստեղծագործող գրեթէ բոլոր անուններուն աշխատակցութիւնը, բան մը, որ իրեն առիթ կու տար Հալէպէն իրեն առաջարկուած ստանաւորներուն եւ քերթուածներուն մէջէն բծախնդիր ընտրութիւն կատարելու: Այս է պատճառը, որ թէեւ Հալէպի մէջ լոյս տեսած, "Նայիրի"ի էջերուն սակաւաթիւ են հալէպահայ քերթողներ:

Առաջին պրակին մէջ քերթուածներ ունին Վահէ-Վահեան, Եղիվարդ, եւ Արամ Աֆարեան: Յաջորդական պրակներու մէջ կը հանդիպինք Մ. Իշխանի, Ժագ Յակոբեանի, Զարեհ Մելքոնեանի, Ե. Պոյաճեանի, Արսէն Երկաթի, Լեւոն Գարմէնի, Արմէն Անոյշի, Վարուժնակի, Ա. Լէյլանիի, Հ. Արեգենցի, Գէորգ Ջէքիճեանի, Սարգիս Եափուճեանի, Միհրանի, Ե. Ներսէսի, Ս. Սահակեանի եւ այլոց անուններուն:

Այս ցանկին մէջ մէկ-երկու անուններ միայն հալէպցիներ են:

Ինչ որ մեզ կը հետաքրքրէ հալէպահայ բանաստեղծութեան եւ "Նայիրի"ի պարագային գրական ա՛յն մթնոլորտն է, որ այս հանդէսը ստեղծեց Հալէպի մէջ. այդ մթնոլորտին շնորհիւ է, որ գրական ճաշակը զարգացաւ ընթերցող հասարակութեան մէջ: Իսկ արհեստավարժութեան գաղափարը արթնցաւ գրականութեան եւ բանաստեղծութեան ուսումնասիրութեան նուիրուած լուրջ յօդուածներու երեւումով, ինչպէս՝ Մինաս Թէօլէօլեանի "Բանաստեղծութեան համար" վարժանքը (կ-թիւտ, ինչպէս ինք գրած է), "Զգայարանքը բանաստեղծութեան մէջ"ը, "Բանաստեղծութեան համար"ը, Յակոբ Օշականի "Հաստատումներ"ը սուրիահայ բանաստեղծութեան եւ "Նայիրի"ի մասին, "Սփիւռքը եւ իրաւ բանաստեղծութիւնը", Ե. Պոյաճեանի "Գրական 25ամեայ ըմբռնումներ"ը եւ այլ բազմաթիւ յօդուածներ:

Տակաւին "Նայիրի"ն իր բարերար ազդեցութիւնը ունեցաւ գրականութեան "շուկայ"ին մէջ: Գիտենք, որ այս շրջանը շրջանն էր շատ առատ եւ շատ վիրաւոր քերթուածներու: Ծառուկեան իր հանդէսին էջերէն անխնայ քննադատեց ինչ որ բանաստեղծութիւն չէր, բայց այդ անունին տակ լոյս կը տեսնէր մամուլին մէջ թէ առանձին գիրքերով: Իր "Հաւեյարդար"ները ցնցիչ էին իրենց բրտութեամբ, բայց նաեւ բարերար ազդեցութիւն ունեցան սփիւռքահայ քերթողութեան համար:

Այսօր Հալէպի Հայութիւնը հպարտութեամբ կը յիշէ, որ շրջան մը այնքան սիրուած եւ փնտռուած "Նայիրի" շաբաթաթերթը ծնունդ առած է Հալէպի մէջ, որպէս ամսագիր:

Հալէպը որ նշանաւոր էր իր մատենագիրներու դպրոցով Գաղթէն դեռ շատ առաջ, կը շարունակէր պահել իր վարկը:

1971 թուականէն սկսեալ քանի մը տարիներ շարունակ աշխոյժ գործունէութիւն ունեցած է Պարոյր Սեւակ գրական սալոնը, նախաձեռնութեամբ արձակագիր Լիւսի Սիւլահեանին, որ իր տան մէջ կը հիւրընկալէր Հալէպի հայ եւ արաբ գրողները, գրական եռուն մթնոլորտ մը ստեղծելով, որոշ շրջանի մը համար:

Հալէպի մէջ գործած է նաեւ գրական շրջանակ մը, անհատական նախաձեռնութեամբ Մարտիրոս Գուշագճեանին, որ Պէյրութ փոխադրուելէն ետք այնտեղ հիմը դրած է մինչեւ այսօր գոյութիւն ունեցող "Գրական Շրջանակ"ին:

Հակառակ անոր, որ շրջան մը բեղուն գործունէութիւն ունեցած են Հալէպի գրական շրջանակին շուրջ հաւաքուած գրասէր տղաքը, սակայն անոր ոչ պաշտօնական բնոյթը պատճառ դարձած է, որ այդ շրջանակը Հալէպի մէջ պրխիւ շունենայ եւ անոր աշխատանքը մոռացութեան տրուի:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

(Շար. 2)

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔԸ»

Նոր Տարին, այս տարի հաճելի անակընկալով մը սկսաւ ինծի համար, որովհետեւ առաւօտ մը գրասեղանիս վրայ գտայ պոլսահայ վաղամեռիկ բանաստեղծներէն Մատթէոս Զարիֆեանի "Բանաստեղծութիւններու Հատընտիր"ը, հրատարակուած՝ Թրքահայ Ուսուցչաց Հիմնարկին կողմէ, մեկենասութեամբ ծանօթ գրասէր ամոլին՝ Էմմա եւ Սարգիս Գիւլէկէճի:

Հատորը պատրաստուած է գրականագէտ ողբացեալ Մինաս Թէօլէօլեանի "Դար մը Գրականութիւն" աշխատասիրութեան վրայ, բանաստեղծին երէց քրոջ՝ Տիկին Սիրան Սեզայի հետաքրքրական յառաջաբանով:

***

Մօտ յիսուն տարի առաջ, ես բաւական լայնօրէն խօսած էի մեր այս սիրուած ու արժէքաւոր բանաստեղծին մասին՝ իսթանպուլահայ հանդէսի մը մէջ՝ "Մեր Վաղամեռիկ Բանաստեղծները" շարքով: Որքան հետաքրքրական է, որ յաջորդող տասնեակ տարիներու ընթացքին բազմաթիւ առիթներ ունեցած էի աշխատելու եւ գործ ունենալու իր քոյրերուն, քեռայրներուն եւ քեռորդիներուն հետ, յատկապէս Լիբանանի մէջ գտնուած տարիներուս՝ Պէյրութ եւ Թրիփոլի, երբ 1953ին հրաւիրուեցայ Լիբանան դլխաւոր խմբագրի պաշտօնը ստանձնելու համար հոն հրատարակուելիք "Այգ" օրաթերթին մէջ, պաշտօն, զոր որոշ ընդհատումներով կատարեցի մօտ տասնհինգ տարի, մինչեւ դադարումը թերթին, որ շարունակեց իր գոյութիւնը՝ յարակից ֆրանսերէն "Լը Սուար" օրաթերթին կողքին՝ շրջանի լիբանանահայ ականաւոր երեսփոխան Տիգրան Թոսպաթի խմբագրապետութեամբ: "Այգ"ի պատասխանատու տնօրէնուհին էր բանաստեղծին կրտսեր քոյրը՝ Լիւսի Թոսպաթ, որ իր երէց որդին՝ Մաթիկը (յետագային՝ բժիշկ) կոչած էր իր վաղամեռիկ եղբօր անունով: Հոս էր որ ծանօթացայ նաեւ մեծ քրոջը՝ Սիրան Սեզայի, որ ամուսնացած էր բնիկ եդեսիացի արժէքաւոր բժիշկ Ներսէս Քիւփէլեանի հետ: Այս վերջինը, տարիներէ ի վեր կը պաշտօնավարէր իրաքեան քարիւղի ընկերութեան "Այ. Փի. Սի."ի մէջ ու կը բնակէին երկրին հիւսիսը՝ Թրիփոլի քաղաքին մէջ, իրենց միակ զաւկին՝ Վահագնի հետ: Տիկին Սիրան Սեզա, որ յանդուգն հրապարակագիր մը եւ քաջ ատենախօս մըն էր նաեւ, երկար տարիներ անխոնջ կերպով Լիբանանի մէջ հրատարակեց "Երիտասարդ Հայուհի" հանդէսը, որ մեծ գնահատանք ու յարգանք վայելեց թէ Սփիւռքի եւ թէ Հայաստանի մէջ:

Մատթէոս Զարիֆեան, անցեալին եղած էր ծանօթ ու ականաւոր մարզիկ մը Իսթանպուլի մէջ եւ ունեցած՝ ուշագրաւ մարզական գործունէութիւններ: Հմուտ լեզուագէտ ողբացեալ Յակոբ Մարթաեան, որ լայնածաւալ ուսումնասիրութիւն մըն ալ ունէր Հայ Մարմնամարզութեան Պատմութեան մասին, շատ կարեւոր եւ ուշագրաւ էջեր յատկացուցած էր Զարիֆեանի մարզական գործունէութիւններուն եւ ձեռք բերած յաջողութիւններուն նուիրուած: Ափսոս որ այդ արժէքաւոր աշխատասիրութիւնը ցարդ կը մընայ անտիպ եւ անյայտ, որու մասին հատուկենտ տեղեկութիւններ հասած են մեզի՝ պարբերական մամուլի էջերէն եւ օրին հրատարակուած մարզական հանդէսներէն ու կարգ մը ցիրուցան անձնական յուշերէն: Ես անոնցմէ ոմանք լսած եմ երբեմնի ծանօթ մարզիկ Վահրամ Փափազեանէ (չշփոթել դերասան Վահրամ Փափազեանի հետ): Վերջին տասնամեակներուն Ամերիկա հաստատուած եւ Վիէթնամի պատերազմի ժամանակ՝ հոն ծառայող զաւկին այցելութեան օրերուն՝ Պէյրութէն անցքին կը հանդիպէր ինծի եւ յիշատակները կը պատմէր անցեալի իսթանպուլահայ մարզական կեանքէն:

***

Եղերաբախտ բանաստեղծին երկերը տասնեակ տարիներ առաջ ֆրանսերէնի թարգմանուեցան իսթանպուլահայ գրագէտ եւ բանաստեղծ Եդուարդ Սիմքէշեանի կողմէ եւ Զարիֆեանի հարազատներուն նախաձեռնութեամբ հրատարակուեցան Պէյրութի մէջ: Զարիֆեան, ի՛սկապէս իսթանպուլահայ բանաստեղծութեան եզակի դէմքերէն մէկն է եւ ան մեծ ներդրում ունի մեր գրական կալուածէն ներս: Օրին՝ իր քերթուածները մեծ ընդունելութիւն գտած են նոր սերունդին մօտ եւ շատեր դաշնաւորուելով երգըւած: Իր անզիջող գեղապաշտ մը ըլլալուն կողքին, նաեւ եղած է ջերմ բնապաշտ մը, յատկապէս պաշտելով լեռներն ու միմոզան՝ զանոնք իր տողերուն մէջ վերածելով որոշ ու գեղեցիկ, մաքուր զգացումներու խորհրդանշանի՝ մարդկային փոխյարաբերութիւններու մէջ:

Մեր կարծիքով, այսօր երբ բազմաթիւ հայ երիտասարդներ Հայաստան կ'երթան ուսանելու համար, անոնցմէ ոմանք իրենց աշխատանքներուն ընթացքին մասնաւոր հոգածութիւն եւ հետաքրքրութիւն պէտք է ցոյց տան անոր գրական վաստակին եւ արժէքին նկատմամբ ու վեր հանեն մեր այս հարազատին՝ համեստ քերթողին արժէքը որպէս եզակի տաղանդ ու շնորհ ի շարս այլոց: Եւ մենք այս ուշադրութիւնը կը սպասենք Հայրենիքի գրական շրջանակներէն ու հեղինակութիւններէն ալ:

ԵՐՈՒԱՆԴ ԿՈՊԷԼԵԱՆ

"Ակօս"

ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

Մարտ 22ին Խարթումի մէջ գումարուեցաւ արաբական վեհաժողով մը որուն մասնակից արաբ ղեկավարները ոչ մէկ կէտի շուրջ համաձայնեցան: Բայց աւելի աւելի տխուր էր տեսնել թէ չէին մերժած հիւրը ըլլալ վարչախումբի մը որ Տարֆուրի մէջ հազարաւոր անմեղներու հալածանք ու կոտորած կը կազմակերպէ:

Հետաքրքրական տուեալներէն մէկը այն է որ լաւելայն համաձայնութիւն մը գոյացած է լիբանանեան-սուրիական յարաբերութիւններուն մասին. ան Սուրիոյ նախագահին շեշտելու կեցուածքին շուրջ համախմբած է բոլորը, հակառակ Լիբանանի նախկին վարչապետ Հարիրիի սպանութեան մէջ անոր վարչակարգին հաւանական նկատուած պատասխանատուութեան: Եգիպտոսը, Սաուտի Արաբիան երկդիմի դիրք ունին Ասատի հանդէպ եւ երկուքն ալ ճնշում բանեցնելէ կը խուսափին, մինչ կրնային ընել տակա:

Եգիպտոսի նախագահը Մուպարաք կը վախնայ որ Ասատի մեկնումին պարագային Սուրիա իսլամէտներու ձեռքը կ'իյնայ: Իր երկրին այդ տարը անցեալ տարուան ընտրութեան քաջալերական արդիւնք ձեռք ձգեց, իսկ Պաղեստինի մէջ Համասը հանդիսա մեծամասնութեան մը տիրացաւ: Ինչ կը վերաբերի Սաուտցիներուն, չեն ուզեր տեսնել արաբ ղեկավար մը որ կը հեռանայ իշխանութենէն, պարտադրութիւններու ենթարկուելով: Ատիկա գաղափարներ կը ներշնչէ իրենց ընդդիմութեան: Սաուտցիները մտահոգ են նաեւ Իրաքի մէջ շիիներու եւ սիւննիներու ճակատումին իրենց թագաւորութեան մէջ համայնքային յարաբերութիւններուն վրայ կարելի ազդեցութենէն. յատկապէս արեւելեան շրջաններուն մէջ որոնք քարիւղով հարուստ են եւ ունին շիի կարեւոր համայնք:

Գահիրէի եւ Ռիյատի կեցուածքները շրջանին կամ աշխարհին մէջ որեւէ նորութեան պատշաճելու անկարողութիւն կը մատնեն: Բայց Հարիրիի սպանութիւնը փաստը տուաւ որ այլեւս անկարելի է անպատիժ կերպով կարեւոր անձնաւորութիւն մը սպաննել: ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը առաջին անգամ ըլլալով քննութիւն բացաւ սպանութեան մասին: Բայց եւ այնպէս արդէն ճեղքեր բացուած են հոն ալ, քանի որ Չինաստան եւ Ռուսաստան աւելի մօտիկ հետաքրքրութիւն ցոյց կու տան Սուրիոյ դժբախտութեան:

Արաբական երկիրներուն համար խնդական վտանգը այն է որ հետզհետէ նուազ հեղինակութիւն կ'ունենան Միջին Արեւելքի ապագային վրայ: Իսրայէլացիները միակամ են Պաղեստինցիներուն դէմ իրենց յարմար դատած ձեւով սահման մը գծելու. միջազգային հանրութիւնն ալ համոզելու մօտ են թէ այդ կարգադրութիւնը բարեբաստիկ բան է: Մինչ այդ, Արաբները ինքնատիպ ոչինչ առաջարկած են պաղեստինեան հարցին մասին:

Ինչ կը վերաբերի իրանեան եւ Թրքական կառավարութիւններուն, առաջինը վարպետօրէն կը շարժի, Պարսից Ծոցին մէջ իր գերիշխանութիւնը հաստատելու համար: Կը ջանայ հիւլէական զէնք ունենալ ու միջամուխ ըլլալ Լիբանանի հարցերուն. իսկ Թուրքիա դանդաղ քայլերով կը յառաջանայ Եւրոպայի անդամակցութեան ճամբուն վրայ: Այս ընթացքով մօտ ատենէն արաբական երկիրները ոչ մէկ խօսք պիտի ունենան իրենց գտնուած շրջանին զարգացումներուն մասին:

ՔԱՂՀԱՆ

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՍՏԱՑԱՆՔ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ
(Մեսրոպեան ուղղագրութեամբ)

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋԵԱՆ

Կլէնտէյլ 2006

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Զարեհ երբեք խորունկ միտքով մարդ եղած չէ: Կեանքը միշտ որոշ մակերեսային զուարթութեամբ առած է: Բայց հիմա գիտէ թէ ընտանիքին գլուխը անցած է: Սմբատ մեռած է, Երուանդ հեռու է, պատասխանատուութիւնը - եւ սպառնալիքը - իր ուսերուն վրայ են եւ ինք է որ վերապրողներուն հոգածութիւնը պիտի ստանձնէ: Ինքզինքին մէջ պէտք եղած զօրութիւնը, կարողութիւնը եւ վճռակամութիւնը կը գտնայ: Այդ գիշեր քիչ կը քնանայ եւ առաւօտ կանուխ կ'երթայ ֆրանսական հիւպատոսարանը խորհրդակցելու համար իր սիրելի բարեկամուհիին՝ հիւպատոսին կնոջը մադամ Մարի-Ժօզէֆինի հետ:

Մարի-Ժօզէֆին խնկապէս գորովալից, խարտեաշ բարեկամուհի մըն է, որ իր սրտին ամենախոր զգացումները երիտասարդ հայ բժիշկին տուաւ: Իրեն առաջարկեց նոյնիսկ հիւպատոսարանը ապաստանիլ, ուր Զարեհ՝ իբրեւ վստահութիւն վայելող բժիշկ, կարելիութիւնը ունէր: Ան որպէս ընտանիքին լուրերուն սպասող եւ արեւելքցիի հպարտութիւնը ունեցող, նման բան մը ինքզինքին չթոյլատրեց տակաւին:

Բայց անմիջապէս իր բարեկամուհիին խորհուրդին կը դիմէ: Ամէն բան կը բացատրէ. թէ Իսմէնիի երբեւիցէ պէտք է նախ գտնէ վերապրողները, քիչ մը ապրելու միջոցներ հայթայթէ. ասոնք կարելի է անուղղակի ձեւով ալ ընել: Բայց ինչպէ՞ս մտնել ճամբարին մէջ, եւ յետոյ դուրս ելլե՞լ: Ամբողջ առաւօտը Զարեհ եւ Մարի-Ժօզէֆին գրեթէ կը զուարճանան հնարելով Մոնթէքրիսթոյի հանճարին հետ մրցող ծրագիրներ. տասնեակ մը Քիւրտեր վարձել որ ճամբար մտնեն խենթի պէս կրակելով. հրապուրել, մոլորեցնել (այս պաշտօնը Մարի-Ժօզէֆինի կ'իյնայ) Ճեմալ փաշան եւ ազատ արձակումի հրամանագիր մը ստորագրել տալ. ոսկիներու միջոցաւ անապատի պետութիւններու ցեղախումբ մը համոզել որ...

Միակ կէտը որուն վրայ երկուքն ալ համաձայն են, ճամբար մտնելու գործածուելիք միջոցն է. անպայման պէտք է հիւպատոսարանի կապոյտ, կարմիր եւ ոսկի գոյներով կառքը գործածել որ երկու կողմերը Ֆրանսայի զինանշանը ունի եւ փարիզցի կառապանը որ բացի ֆրանսերէնէ մէկ բառ ուրիշ լեզու չի խօսիր եւ պատրաստ, արթնամիտ ու նուիրուած է: Եւ երկու առաւելութիւն ալ ունի: Իրեն համար Արաբ, Քիւրտ եւ Թուրք մէկ են: Եւ ազատել Մոնիքօրին քոյրերը եւ թոռները, կ'ըսէ, բացառիկ հաճոյք մըն է:

Մինչ այդ ախոռն ալ կարծես ապաքոյտի կեդրոն եղած է: Նազլըմ եւ Իսմէնէ իրենք ալ կը խորհրդակցին, մինչդեռ Իսաագ պահակութիւն կ'ընէ: Ամէն բանէ առաջ զիրենք գտնել պէտք է այնքան Հայերու մէջ որ կը շարունակեն Հալէպ հասնիլ. պզտիկ խումբեր, արդէն տասնորդուած կարաւանի մնացորդներ, ինքնակորոյս պզտիկներ, քանի մը կիներ, քանի մը բարկացած ծերուկներ որ չեն ուզեր մեռնիլ: Իսաագին ձեռքը քիչ մը հաց եւ շիշ մը ջուր կու տան եւ ան կը շարունակէ իր պահակութիւնը: Երկու էջերը թանկագին են եւ տակաւին բաւական ուտելիք կայ:

Առաւօտեան կանուխ Նազլըմ եւ Իսմէնէ միասին կը մեկնին: Դուրս կ'ելլեն, հակոտնեայ ճամբաներով կը յառաջանան որպէսզի քաղաքի պատերուն շրջանը ընելով իրարու հանդիպին: Գիւղանները լեցուն են դրամով եւ ուտելիքով, բայց իրենց տեսքը միշտ շատ համեստ է, ինչպէս իրենց նմաններունը:

Փառութեան, նեխումի եւ մահուան ճռնշիւն հոտը զարշահոտ շունչի մը պէս կը ծփայ քաղաքին շուրջ: Ցուլիս է. այդ լքուած մարմիններէն, այդ ձեռքերէն, որ ալ վեր երկարելու կարողութիւն չունին, կարծես մահաբեր ժանտահոտութիւններ կը բարձրանան: Անտարբեր պահակները հեռուէն կը հսկեն ջանալով շատ մօտերը չերթալ: Ցնցոտիներով պզտիկներ աննպատակ կը շրջին: Իսմէնէ անձայն, խումբէ խումբ կը դառնայ, ականջը կը լարէ, կտոր մը հաց կու տայ, ամէն տեղ նոյն բանը. անօթութիւն, ծարաւ, բռնաբարում: Դէմքերը որ իրեն կը նային կարծես տակաւին ողջ ըլլալնուն զարմացած են:

Մինչդեռ Նազլըմ կը մօտենայ պահակներուն եւ ողորմութիւն կ'ուզէ: Ցետոյ, մտացիր կը հարցնէ թէ ո՞ւրկէ կու գայ սա կամ նա խումբը: Բայց իր շրջապատը դանդաղ է եւ անպտուղ: «Ի՞նչ կ'ուզես մեզմէ, կաղ ծերունի» կը հարցնէ զափթիէ մը: «Գնա՛ անոնցմէ ուզէ: Այդ անիծուած անպիտաններէն: Որեւէ տեղ բան մը կը պահեն միշտ»:

Այդ պահուն կմախացած մերկ ծերունի մը կամաց կամաց վեր կը կանգնի պատն ի վեր ուր կռթնած էր եւ կը պոռայ մաքուր Թրքերէնով. «Եկէք, եկէք, Աստուծոյ օրհնեալներ: Խրախճանքը պատրաստ է, բայց Աստուած մեռած է» եւ լայն կը բանայ խոռոչաւոր արիւնլուայ բերան մը, ուրկէ կ'ելլէ անճանաչելի, զիլ ձայն մը: Կարծես Տանդէի դժոխային շուները կը տեսնեն:

Նազլըմ կը մօտենայ, խուլ բնազդէ մը մղուած: Եւ խոպան մօրուքին տակէն կը ճանչնայ պարզ, շատախօս եւ անվնաս փռապան Սեդրակին աւերուած դէմքը: Ապրելու բնազդի դաժան օրէնքը զինուորներուն խաղալիքին վերածած է զինքը. անոնք կենդանի կը ձգեն որպէսզի իրմով զուարճանան, երբեմն կից մը կը զարնեն կամ ակռայ մը կը քաշեն, կամ աքարեալի մը հանդէպ տմարդի գործ մը իրեն ընել կու տան: Փոխ պահակ մը, տեսակ մը fakio: Այլեւս մարդկային ոչինչ ունի. միայն երբեմն կը պոռայ, ինչպէս հիմա:

(Շար. 83)

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

ԳՐԱԿԱՆ – ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԵՐԵԿՈՅԹՆԵՐՈՒ ՇԱՐՔ

Հինգշաբթի, Ապրիլ 20, ժամը 20·30ին

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՂԷՏԸ՝
ԻՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ
ՈՒ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Հանդիպում բեմարուեստի ջանադիր՝

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

հետ

Կը ներկայացնէ՝
Կարէն ՍԻՄՈՆԵԱՆ

10 bis rue Thouin — Paris 5ème
Métro : Cardinal Lemoine / Monge

— Մուտքը ազատ է —

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14 rue Saint Bazile 13001 MARSEILLE
☎ 04. 91. 50. 15. 09

SOIREE CINEMA

«LE GENOCIDE EN MOI»

Film documentaire réalisé par
ARAZ ARTINIAN

Mercredi 19 avril à 19 heures

Débat avec la réalisatrice

Collaboration de l'Association Artistique Arménienne

Métro: Réformés — P.A.F. : 5 Euros
Parking: Gambetta

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne
en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »

Samedi 22 avril à 16 heures

MEMOIRE
91e anniversaire du Génocide

LE GENOCIDE ARMENIEN

de Laurence Jourdan
Film documentaire (2005)

Suivi de la présentation du livre
de Béatrice Kasparian-Bricout

AZADOUI, ENFANT D'ARMENIE
Editions L'Harmattan

Le livre raconte le quotidien des enfants arméniens rescapés du génocide et surtout d'Azade, petite orpheline, proie de la bestialité humaine, ramassée au milieu des morts, indemne, mais mutique et amnésique. Azade réapprend à sourire et retrouve la joie de vivre...

L'auteur dédicacera son livre.
— Entrée libre —

Informations artistiques

EXPOSITION DE PEINTURE
de **JEAN-PIERRE SEFERIAN**

« DU TEMPS ET DE LA MATIERE »

«Espace 148»
148 avenue Edouard Vaillant —
94140 ALFORTVILLE

Du samedi 22 avril au jeudi 26 avril
tous les jours de 15h à 19h.

Մարսէյլ
ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
նահատակ բանաստեղծ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
կեանքի մասին գրուած

«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ»

վէպի

Կը բանախօսէ հեղինակը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

Ռուբէն Սեւակէն քերթուածներ
կ'արտասանէ
Հայաստանի վաստակաւոր
արուեստագիտուհի
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 21, ժամը 20·30ին
Սահակ - Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

— Մուտքը ազատ է —

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՃՐԱԳԱԼՈՅՑ, ԶԱՏԻԿ, ՄԵՌԵԼՈՑ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ, Ապրիլ 15.–
Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց
Զ Ա Տ Կ Ի
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 16*ին* :

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 16.–
Տ Օ Ն Զ Ա Տ Կ Ի
ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 8·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10·30*ին* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 17.–
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ
Սկիզբ ժամերգութեանց — *ժամը* 9*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10*ին*,
Պաշտօն Հանգստեան՝ — *ժամը* 11·45*ին* :

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ՇԱԲԱԹ.–
Ընթերցուածք՝ — *ժամը* 16*ին*,
Ճրագալոյցի պատարագ՝ — *ժամը* 17*ին* :

ԿԻՐԱԿԻ.–
Զատկուան պատարագ՝ — *ժամը* 10*ին* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ — *ժամը* 10*ին* :
Պատարագի վերջաւորութեան հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց :
Գերեզմանօրհնէք *Շաւիլի գերեզմանատան մէջ՝* — *ժամը* 15*ին* :

***

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՇԱԲԱԹ.–
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 16·30*ին* :
Ճրագալոյցի պատարագ՝ ժամը 17·30*ին* :

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 9*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10·30*ին* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 9·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10*ին* :
Հոգեհանգիստ "Վասն համօրէն ննջեցելոց"՝ յաւարտ Պատարագի :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ

13 rue du Perche 75003 Paris

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ.–
Ժամերգութիւն՝ — *ժամը* 17*ին*,
Ճրագալոյց՝ — *ժամը* 18*ին* :

ԿԻՐԱԿԻ.– *Զ Ա Տ Ի Կ*
Պատարագ՝ — *ժամը* 11*ին* :

LA PAROISSE ARMENIENNE
CATHOLIQUE
SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR
DE MARSEILLE
vous invite à participer à la conférence
qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION DU GENOCIDE ARMENIEN

COMMIS PAR LES AUTORITES OTTOMANES . TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar
(Couvent et Siège Patriarcal
des Arméniens Catholiques
depuis 1749).

Un programme
d'inspiration «24 avrilienne»
suivra la conférence.

Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

ՇԱԲԱԹ.–
Ընթերցուածք՝ — *ժամը* 17·30*ին*,
Ճրագալոյցի պատարագ՝ — *ժամը* 18·30*ին* :

ԿԻՐԱԿԻ.–
Ժամերգութիւն՝ — *ժամը* 9*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10·30*ին* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ — *ժամը* 10·30*ին*,
Հոգեհանգիստ՝ — *ժամը* 12*ին* :

***

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՇԱԲԱԹ.–
Մարգարէական Թղթերու Ընթերցում՝ — *ժամը* 16*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 17*ին* :

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 9·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10*ին* :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 9·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10*ին*,
Պաշտօն Հոգեհանգստեան՝ — *ժամը* 11·45*ին* :

***

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԼԻՈՆ

ՇԱԲԱԹ.–
Ճրագալոյցի ժամերգութիւն՝ — *ժամը* 16*ին*,
Ընթերցուածք՝ — *ժամը* 16·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 17*ին* :
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ — *ժամը* 8·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10*ին* :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի փոխանորդ
Լիոնի եւ Ռոն-Ալփի Հայոց
Բազմաձայն երգեցողութիւնները կը կատարուին եկեղեցւոյ Կոմիտաս *երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Պ.* Յովհաննէս Պէրպէրեանի :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ եւ Հոգեհանգիստ՝ — *ժամը* 10*ին* :
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՇԱԲԱԹ.–
Ընթերցուածք Մարգարէից՝ ժամը 16·30*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 17·15*ին* :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի
Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի

ԿԻՐԱԿԻ.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8·30*ին*,
Հանդիսաւոր պատարագ՝ ժամը 9·45*ին* :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Մասնակցութեամբ Սահակ – Մեսրոպ *երգչախումբի, ղեկավարութեամբ՝ Պ.* Խաչիկ Եըլմազեանի :

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ — *ժամը* 9*ին*,
Պատարագ՝ — *ժամը* 10*ին* :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Յաւարտ Պատարագի Հոգեհանգիստ "Վասն համօրէն Ննջեցելոց" :

***

ՍԷՆ ԼՈՒ – ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ.–
Հանդիսաւոր պատարագ՝ — *ժամը* 10*ին* :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ

***

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ — *ժամը* 10*ին* :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ
Յաւարտ Պատարագի Հոգեհանգիստ "Վասն համօրէն Ննջեցելոց" :

ESPOIR POUR L'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...

Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 15-16
SAMEDI-DIMANCHE
15-16 AVRIL
2006

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.435 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.435

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆՃԱՄԵՆԱ (Չատ) մտած են, Ապրիլ 13ին, Միացեալ Ճակատի մարտիկները, բայց այդ մուտքը ժամանակաւոր բնոյթ ունեցած է եւ կացութիւնը պղտոր կը մնար յաջորդ օրն ալ: Յայտնի է սակայն որ 250է աւելի մեռեալ կար: Ֆրանսական բանակը զօրավիգ է երկրին օրինաւոր իշխանութեան: Չատի Արտաքին նախարարին համար, մեղաւորը Սուտանն է: Իրեն համար Խարթումէն ծրագրուած են Չատի դէմ յարձակումները: Կը թուի սակայն, որ հարցը քարիւղի կը վերաբերի: 2003ին Տոպայի շահագործումը (մէկ միլիառ տակառ պահեստ) Չատը վերածած էր ոսկիի հանքի մը: Շահագործումը արժած էր 3,7 միլիառ տոլար եւ այդ ֆինանսաւորումը ապահոված էին քարիւղի ընկերութիւններու խումբ մը եւ Համաշխարհային Դրամատունը, որու փոխարէն Չատի գանձած ռոյալթիներու 10%ը (307 միլիոն տոլար 2005ին) պէտք է յանձնուէր հաշիւի մը "ապագայ սերունդներուն համար": Բայց, անցեալ Յունուարին Չատ դրամի պէտք ունէր եւ չէր գործադրած համաձայնութիւնը. Համաշխարհային Դրամատունը առկախած էր Չատի իր բոլոր ծրագիրները: Այս պայմաններուն մէջ, Միացեալ Ճակատը ժողովրդավար փոխանցում մը կ'ուզէ նախագահ Տէպիի անկումէն ետք:

ԺԱՆ ԼԱՍԱԼ, Իւ. Տէ. Էֆ.ի երեսփոխանը, 38 օր է կը շարունակէ հացադուլը եւ Զատկուան շաբաթավերջը հիւանդանոցը պիտի անցընէ Ազգ. Ժողովի դիմումին հետեւանքով: 25 քիլօ կորսնցուցած է, որովհետեւ կ'ուզէ այդ ձեւով արտայայտել իր ընդդիմութիւնը Լաքի (Ատլանտեան Փիրէնեաններ) Աքուսի տեղափոխութեան (150 աշխատաւոր): Ապրիլ 13ին, Տ. տը Վիլփէն քովը գացած էր, նախագահն ալ իր զօրակցութիւնը յայտնած էր: Ենթական, որ Ապրիլ 14ին, արտայայտուեցաւ Ֆրանս – Էնֆոյէն (հեռաձայնով), փոքր յոյս մը ունի որ հարցը կը կարգադրուի: Չափազանց տըկարացած է, կը խոստովանի որ չուզեր մեռնիլ, բայց միտք չունի հացադուլին վերջ տալու ցորչափ հարցը առկախ կը մնայ: Սակայն, Ապրիլ 14ին, վերջին պահուն կը հաղորդուէր որ համաձայնութիւն մը գոյացած է հարցին շուրջ, ճափոնցի գործատէրերը տեղի տուած ըլլալով:

ՊԱՂՏԱՏԻ հիւսիսը գտնուող շիի թաղամասի մը մէջ, Ապրիլ 13ին Թակարդ կառքի մը պայթումէն մզկիթի մը մօտ, 15 մեռեալ կար եւ ութ վիրաւորներ, առաջին հաշուեկշիռի մը համաձայն: Նախորդ օրն ալ, նոյնանման արարքէ մը 26 հոգի մեռած էին:

ՖՐԱՆՍԱՅԻ նախագահական ընտրութեան աւելի քան տարի մը կայ, բայց ամիսներէ ի վեր արդէն ընտրապայքար կը տարուի, հակառակ անոր որ օրինաւոր բնոյթ չունի եւ ոչ մէկ թեկնածու նշանակուած է: Ապրիլ 14ին, Ֆիկառօ իր Ա. էջին վրայ հրատարակած էր Ս. Ռուայալի եւ Ն. Սարքոզիի հսկայ նկարները: Հարցախոյզերուն՝ այս թեկնածուներէն առաջինը ձայներու 59%ը կ'ապահովէ, 49% ալ Ն. Սարքոզի: Մետիաներու գլխաւոր մտահոգութիւնը ա՛յս հարցը կը մնայ...:

"ՖՐԱՆՍ ՍՈՒԱՐ"Ի աշխատաւորները կազմակերպած են իրենց դիմադրութիւնը թերթին նոր կարգադրութիւններուն դէմ: Ապրիլ 14ին, բացառիկ թիւ մը հրատարակած էին, ուր կը պարզէին իրենց տեսակէտները: Կ'առարկեն որ նոր գնորդը (Օլիվիէ Ռէ) մէկ նպատակ ունի՝ գոհացում տալ ամէնէն ցած բնազդներուն: Ռէ

(Շար.ը Դ. էջ)

ԱՏՐՊԷՅՃԱՆ

«ՏԱՐՈՒԱՆ ՄԱՐԴ» ՈՃՐԱԳՈՐԾԸ ՑՄԱՀ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Պուտափէշտի քաղաքային դատարանը Ապրիլ 13ին ցմահ բանտարկութեան դատապարտած է ատրպէյճանցի սպան որ ՕԹԱՆ-ի 2004ի դասընթացքին, Փետր. 19ին, դաժանօրէն սպաննած էր հայ սպայ Գ. Մարգարեանը: Դատաւորը Ա. Վաշքութի համոզում յայտնած է թէ ոճիրը կանխամտածուած էր եւ արտակարգ խժդժութեամբ գործուած, քանի որ ատրպէյճանցի զինուորականը կացինահարած էր իր զոհը, մինչ ան կը քնանար: Սաֆարով յանցաւոր նկատուած է երկրորդ հայ սպայի մը սպանութիւնն ալ ծրագրած ըլլալով:

Արձակուած վճիռով դատարանը ցոյց տուած է որ նկատի չեն առնուած ոճրագործը չքմեղելու անոր փաստաբաններուն հնարքները, ռուսերէնի անտեղեակութեան պնդումները: «Սաֆարով հայ ըսպան սպաննեց միայն այն պատճառով որ Հայ էր»: ըսած է դատաւորը:

Գ. Մարգարեանի կողմին պաշտպան փաստաբանը Նազելի Վարդանեան ըսած է վճիռին մասին թէ ան առաւելագոյնն էր հունգարական օրէնսգրքին տրամադրութիւններով: Սաֆարով 30 տարի ետք միայն ներումի դիմում կրնայ ներկայացնել:

Դատապարտեալին փաստաբանները ըսած են թէ վերաքննութեան կը դիմեն:

Ռ. Սաֆարովի դէմ Բ. դատ մը կը սկսի Մայիս 3ին, ան ամբաստանութեամբ որ ծրագրած էր երկրորդ հայ սպային՝ Հայկ Մակուչեանի եւս սպանութիւնը:

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԵ՞Ր ԿԱՅԻՆ...

Քաղաքականութեան մէջ քանդելու, կոտրելու կարողութեան չափ կարեւոր է ըրածը ուրանալու, աւելին՝ զոհը յանցաւոր կամ դահիճ ցոյց տալու վարպետութիւնը: Այս առումով Թրքական ախոյենութեան մօտեցող դիրքէ մը կը յայտնուի Ատրպէյճանը: Անոր ղեկավարները եւրոպացի դէտերու Ջուղայի հայկական պատմական գերեզմանոցին քանդումին առընչուած ստուգիչ այցը խոչընդոտելէ ետք նախագահն ալ լրումին հասցուցած է ուրացումը: Ի. Ալիեւ յայտարարած է թէ Ջուղայի հայկական գերեզմանոցին իրենց կողմէ քանդումը բացարձակ սուտ է, զրպարտութիւն, եւ այլն: Աւելցուցած է թէ Ատրպէյճանի մէջ գտնուող պատմական բոլոր յուշարձանները պետական պաշտպանութեան տակ են: Ան նոյն ատեն դատապարտած է հայկական կողմը որ Ղարաբաղի մէջ մզկիթներ եւ մահմետական գերեզմանոցներ քանդած է:

ԶԱՏԿՈՒԱՆ առթիւ, 'Յառաջ" լոյս չի տեսներ Երկուշաբթի Ապրիլ 17ին (Երեքշաբթի Ապրիլ 18ի թիւ): Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի, Ապրիլ 19ին:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՀ ԱՐԹՈՒՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ-Ի

"Հայաստանի Հանրապետութիւն" օրաթերթը Ապրիլ 8ի թիւով կը տեղեկացնէր թէ մահացած է ճարտարապետ Ա. Թարխանեան: Ան հեղինակներէն մէկն է Ծիծեռնակաբերդի Եղեռնի յուշարձանին որ կառուցուած է 1965ին, Ցեղասպանութեան յիսնամեակին առթիւ:

Ա. Թարխանեան ծնած էր 1932ին Երեւանի մէջ: Աւարտելէ ետք ուսումը 1957-ին ասպարէզ մտաւ ու կարճ ժամանակի ընթացքին աւանդականէն տարբեր, նորովի լուծումներու ապացոյցը տուաւ իր կառուցած շէնքերով: Յատկապէս Հրազդան ու Աբովեան քաղաքներու վերակառուցումին մէջ ուշագրաւ ներդրում ունեցած է: Յետոյ մասնակցած է երիտասարդական պալատին, մարզահամերգային համալիրին, "Զուարթնոց" օդակայանին ու այլ բազմաթիւ շէնքերու յատակագծերուն պատրաստութեան:

Ստեղծագործական իր աշխատանքներուն համար ան արժանացած էր շքանշաններու, կոչումներու, պարգեւներու:

Վարչապետին կարգադրութեամբ յուղարկաւորութեան կառավարական յանձնաժողով կազմուած է, Քաղաքաշինութեան նախարար Ա. Յարութիւնեանի գլխաւորութեամբ: Յուղարկաւորութիւնը եւ թաղումը կատարուած են Ապրիլ 9ին:

ԹՈՒՐՔԻԱ

ՑԵՂԱՍՊԱՆԸ ՅԱՐԳԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՅ

Ցեղասպանութեան անթիւ ղեկավարներէն միայն մէկն է Եոզկաթի Պողազլեան գաւառակի ղեկավարը Քեմալ Պէյ: Ան ամբաստանեալներէն եղած է 1919ի Պոլսոյ դատավարութեան որով պատժըւած են քանի մը մեղադրեալներ: Դատարանը զինք մահուան դատապարտած է ու վճիռը նոյն տարին գործադրուած: Ան կախաղան հանուած է Ապրիլ 10ին, Պոլսոյ Պէյազիթի հրապարակին վրայ: Յետոյ, 1922ին, "Ազգային Նահատակ" հռչակուած է:

Վճիռին գործադրութեան օրը նոյն հրապարակին վրայ անոր "Նահատակութեան" 87րդ տարելիցին առիթով ոգեկոչումի հանդիսութիւն մը կազմակերպուած է ու յուշարձանի մը բացումը կատարուած: Լուրին ամէնէն հետաքրքրական կողմը այն է որ «ոգեկոչումին մասնակցած են Թուրքիոյ Հանրային Հիմնարկութիւնները, կրթական սէնտիքան, Յառաջդիմական երիտասարդութիւնը, Նահատակներու մայրերու միութիւնը եւ բազմաթիւ այլ կազմակերպութիւններ». մինչդեռ, ամէն անգամ որ Թուրքիան ցեղասպանութեամբ ամբաստանող ձայն մը կը բարձրանայ, Թրքական կողմը կը պնդէ թէ այդ հաշիւը 1919ի դատավարութեամբ փակուած է, պատասխանատուները իրենց պատիժը կրած են:

Ցեղասպանի մը մատուցուած յարգանքի այս երեւոյթը տակաւին պէտք ունեցող Հայ եւ արեւմուտքցիներու փաստը կու տայ թէ որքան "անկեղծ" են Թուրքերը հարցը հաշտութեամբ, երկխօսութեամբ կարգաւորելու իրենց խաղաղասիրական կեցուածքին մէջ:

Կ'արժէ անդրադառնալ այս առիթով Քեմալ Պէյի կատարած ցեղասպանի դերին. օսմանեան տուեալներով առաջին աշխարհամարտին նախօրեակին Եոզկաթի նահանգին մէջ 33.133 Հայ կ'ապրէր. անոնց 31.147ը տարագրուեցան: Ըստ ընդհանուր դատախազին, միայն Եոզկաթ քաղաքէն ուր 1880 Հայեր կը բնակէին, 88 վերապրող եղաւ:

CCAF
FRANCE

COMMUNIQUE

LE NEGATIONNISME EST UN CRIME : POUR LE PUNIR IL FAUT UNE LOI

M. Jean-Noël Guérini, Sénateur, Président du Conseil Général des Bouches du Rhône vient de confirmer la décision du Parti Socialiste de proposer à l'ordre du jour de la séance parlementaire du 18 mai 2006, à l'Assemblée Nationale, une proposition de loi ayant pour objet de réprimer pénalement la négation du génocide arménien de 1915.

Les Français d'origine arménienne, mais aussi leurs très nombreux amis, démocrates, républicains, de toutes tendances politiques et organisationnelles se félicitent de cette initiative tant attendue. La négation systématique de l'Etat turc et les récents événements visant à falsifier la réalité de l'extermination planifiée des Arméniens, notamment à Lyon et à Berlin, rendent plus que jamais urgente une telle mesure législative qui complète le dispositif actuel.

En effet, la reconnaissance par la France du génocide arménien de 1915 a été un acte politique majeur dont chaque membre du Parlement peut encore s'enorgueillir. Par ce vote, les élus du peuple français ont rendu à la Communauté arménienne dans le monde, une part de son Histoire, et ont maintenu la France dans sa tradition de courage, de vérité et de justice

Lors de son examen, la loi du 29 janvier 2001 a reçu le soutien de l'immense majorité des historiens et des intellctuels français qui, loin d'y voir une contrainte, n'y ont vu au contraire que la proclamation naturelle d'une vérité historique qu'ils avaient toujours proclamée et défendue. Ainsi, cette loi venait, non pas limiter leur droit à l'expression, mais bien au contraire, couronner les efforts de leurs travaux et de leur engagement et confirmait les valeurs fondamentales de la République Française

Dans le prolongement de cet acte politique, le 24 avril 2005, lors de la commémoration du 90ème anniversaire du génocide, le Premier Secrétaire du Parti Socialiste s'est engagé à compléter le dispositif mis en place, en déposant une nouvelle proposition de loi visant à combattre le négaionnisme dont le Génocide de 1915 fait constamment l'objet. Le CCAF se félicite que cette promesse se concrétise aujourd'hui.

L'ensemble des forces politiques républicaines ,présentes au Parlement devront se mobiliser pour que la négation du génocide soit enfin punie. Une telle décision dépasse très largement les clivages politiques traditionnels et doit rassembler, comme en 2001, les parlementaires pour que le vote intervienne à l'unanimité. Les Arméniens ont trop longtemps souffert de cette atteinte à la mémoire des victimes et à leur dignité, pour que justice puisse, enfin, leur être rendue.

Pour compter de ce jour et jusqu'au 18 mai 2006, toutes les organisations arméniennes se mobiliseront, partout en France, sur le terrain mais aussi au plus haut niveau de l'Etat et des états-majors politiques pour qu'aboutisse le vote de cette proposition de loi.

Paris, le 14 avril
(Premier communiqué)

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ

1962ի Սուրիոյ քաղաքական պայմանները պատճառ դարձան, որ 50ականներու վերջերուն սկսած գաղթը թափ ստանար. Պէյրութ հաստատուեցան մեծ թիւով Հայեր, որոնց մէջ կարեւոր տեղ կը գրաւէին գրականութեան եւ մշակոյթի գործիչները:

Յաջորդ տասնամեակը ոչ մէկ նորութիւն բերաւ գրական առումով: 70ականներու սկիզբը քանի մը անուններ կ'երեւէին հալէպահայ քերթողութեան երկնակամարին վրայ՝ Յակոբ Զոլաքեան, Գէորգ Թէմիզեան եւ Կորիւն Շահինեան:

Առաջին երկուքը երեւցած են Սիմոն Սիմոնեանի "Սփիւռք" շաբաթաթերթին եւ անոր երիտասարդական յաւելուած՝ "Սփիւռք-Գարուն"ի էջերուն: Այս յաւելուածը այնպիսի խանդավառութիւն ստեղծած էր երիտասարդներուն մէջ, եւ Հալէպէն այնքան մեծ թիւով տղաք սկըսած էին աշխատակցիլ, որ Սիմոնեան ամբողջ թիւ մը՝ ԺԱ. տարի թիւ 12, 1969, տրամադրած էր Քարէն Եփփէ ճեմարանի գրական խմբակին եւ ըսած իր խօսքին՝ «Ողջո՜յն Հալէպի գարունականներուն»ի մէջ.

«Վաղուց, չա՜տ վաղուց նաե՛ւ սիրելի Հալէպէն ձայն չէր հնչած...»:

«Կու գաք վաղնջական Հալէպէն, Հայաստանէն ետք ամէնէն իրաւ ու հարազատ հայութեան մը օրրանէն...»:

«Ի վերջոյ կը հաւատանք, որ անոնցմէ առնուազն չորսը, ներկայ թուականէն երեք տարի ետք, պիտի հնչեցնեն իրենց ձայնը, որ – Մահարիին բառերով – վաղուց, շատ վաղուց չէր լսել» (ընդգծումը իմս է):

Սիմոնեան չըսեր թէ որո՞նք են այն չորսը, որոնց ձայնը պիտի հնչէ ներկայ թուականէն երեք տարի ետք. չըսեր նաեւ թէ ինչո՞ւ երեք տարի ետք: Սակայն Սփիւռք-Գարունի այդ թիւին մէջ երեւցող տասնմէկ տղոցմէ եւ ոչ մէկուն ձայնը լսուեցաւ երեք տարի ետք առանձին գիրքով, դժբախտաբար:

Այս թիւին մէջ քերթուածներ ստորագրած են միայն երկու տղաք՝ Վարուժան Բարսեղեան՝ "Աղօթք Վահագնին" եւ Յովհաննէս Աշոտեան՝ չորս փոքր քերթուածներ: Այս վերջինին համար Վարդ Դանիէլեան կ'ըսէ թէ «բանաստեղծի հոգի ունի, միայն եթէ կարենայ երկինքներէն ու խունկերէն հրաժարիլ»:

Սարգիս Կիրակոսեան, որ սփիւռքահայ գրականութեան մէջ կը յիշուի որպէս բանաստեղծ, Սփիւռք-Գարունի այս թիւին մէջ արձակով երեւցած է: Աւելի ուշ Ս. Կիրակոսեան մաս կազմած է Բագինի խմբակին, եւ ունեցած քերթողական իր երախայրիքը՝ «Այս է արիւն իմ» 1973ին, Պ. Սնապեանի խմբագրութեամբ:

Նոյն այս տարիներուն է, որ "Ահեկան"ի մէջ եւս հալէպահայ անուններ կ'երեւին, ինչպէս՝ Գէորգ Թէմիզեանն ու Յակոբ Զոլաքեանը: Այս վերջինը "Սփիւռք"ի հրատարակութեամբ քերթողական իր երախայրիքը ունենալէ ետք՝ "Այսպէս սկսաւ գարունը" (1970), ամբողջովին կը նուիրուի բանասիրութեան:

70ական թուականներու սկիզբէն "Բագին"ի մէջ կը սկսին հրատարակուիլ Կորիւն Շահինեանի քերթուածները, մեծ հետաքրքրութիւն արթնցնելով իր անուան շուրջ:

Քաջալերելու համար Կ. Շահինեանի բանաստեղծական խանդն ու եռանդը, "Բագին" լոյսին կը բերէ անոր առաջին քերթողագիրքը՝ "Լողարշաւ"ը, 1978ին: Մինչ այդ, 1973ին լոյս տեսած էր արդէն Գ. Թէմիզեանի առաջին գիրքը՝ "Ծով եւ կղզի":

Վահէ Օշական "Ազդակ"ի էջերուն կը ստորագրէ "Մեր բանաստեղծները" խորագրով յօդուածաշարք մը, ուր հանգամանալի կերպով խօսելէ ետք երիտասարդ բանաստեղծներու մասին, կ'առանձնացնէ անոնցմէ մէկ քանին, որոնց մէջ է նաեւ անունը Գէորգ Թէմիզեանին: Վ. Օշական կը գրէ.

«"Ծով եւ կղզի", որ ամէնէն յուսադրիչ մատեանն է ներկայիս, մեզ կը փոխադրէ քիչ մը տարբեր աշխարհի մէջ: Գիրքը կը ձգտի մարդկային աչարկու առանձնութեան զգացում տանելէ, ապրելը իմաստի վերածել, կը փորձէ սրտի մարդուն շուարումը, անձկութիւնը պարզ, ինքնատիպ արտայայտութեամբ, զուսպ արուեստով երկվայրկեան մը նուաճել» ("Ազդակ", 19 Հոկտեմբեր 1974, էջ 5):

70ականներու սկիզբէն իսկ "Շիրակ"ի էջերուն կ'երեւին տակաւին երկրորդականը չաւարտած երիտասարդի մը՝ Արա Ճուհարեանի քերթուածները, որոնք թարմութեամբ կը լեցնեն "Շիրակ"ի էջերը: Շատ ուշ, 2002 թուականին է, որ այս բանաստեղծը պիտի ունենար իր երախայրիքը՝ "Երկու", Գ. Մելիտինեցի գրական մրցանակին (Անթիլիաս) հրատարակութեամբ:

Հալէպահայ (երբեմն նաեւ ամբողջ Սփիւռքի) բանաստեղծութեան ուրուանըկարի ուսումնասիրութեան ընթացքին երեւոյթ մը մեր ուշադրութիւնը կը գրաւէ՝ արեւելահայերէնին օգտագործումը, մանաւանդ երրորդ հանրապետութենէն առաջ, այն օրերուն երբ Հայաստանը երազ կը մնար, եւ անկէ եկող մշակութային ամէն երեւոյթ, ինչպէս եւ ամէն գիր եւ գիրք կը մնար աւելի "լաւ", աւելի "որակաւոր" քան Սփիւռքի տարածքին ստեղծուածը:

Քանի մը երիտասարդ անուններ, որոնք Երեւան ուսանած են, կը շարունակեն արեւելահայերէնով ստեղծագործել, կամ արեւելահայերէն դարձուածքներ եւ ըսելաձեւեր օգտագործել իրենց գրութիւններուն մէջ, ինչպէս Յակոբ Քէօսէեան, Գէորգ Քաջբերունի, Յակոբ Նալպանտ կամ Նուշիկ:

Թէեւ դանդաղ սակայն հաստատ քայլերով է որ հալէպահայ բանաստեղծներ վերստին տեղ կը գրաւեն սփիւռքահայ բանաստեղծութեան մէջ: 1983ին Գ. Թէմիզեանի երկրորդ գիրքը՝ "Շարժում"ը լոյս կը տեսնէ, իսկ 1987ին՝ Կ. Շահինեանի երկրորդ գիրքը՝ "Գաղթականները":

1991ին նոր անուն մը մուտք կը գործէ հալէպահայ անդաստանէն ներս՝ Մարուշ (Գազանճեան-Երամեան), որ միայն անունով կ'երեւի իր առաջին գիրքին՝ "Հում բառեր..."ի վրայ: Վ. Օշական կրկին կ'արտայայտուի, այս անգամ "Նոր գիրքեր" շաբաթական իր քրոնիկին մէջ եւ կ'ըսէ՝ «Նոր շունչ մը կը փչէ Սուրիոյ աւազներուն վրայէն»:

Հետաքրքրական բայց եւ սպասելի անակնկալ մըն է Նուշիկի (Միքայէլեան) մուտքը Հալէպի քերթողական անդաստանէն ներս, 1997ին հրատարակուած երախայրիքով՝ "Սպասիր արեւ": Սպասելի կ'ըսենք, որովհետեւ Նուշիկ կու գայ գրասէր եւ գրագէտ ընտանիքէ մը՝ մեծ հայրը Թորոս Թորանեանն է, իսկ հայրը՝ հալէպահայ արձակագիր Յակոբ Միքայէլեանը: Այդ թուականէն առաջ սակայն Նուշիկ երեւցած էր արդէն "Շիրակ"ի էջերուն քերթուածներով եւ արաբերէնէ եղած թարգմանութիւններով: Հետաքրքրականը Նուշիկին բերած թարմութեան կողքին, իր օգտագործած լեզուն է՝ արեւելահայերէնը, որ ներքին մղումով մը սկիզբէն իսկ եղած է ու կը շարունակէ ըլլալ Նուշիկին քերթողական լեզուն:

Հալէպ տպուած իր այս առաջին գիրքէն ետք, Նուշիկ, որ կայք հաստատած է Երեւան, լոյսին բերած է փոքրիկ գրքոյկ մը "Երգ ծննդոց" խորագրով, 2000 թըւականին, Երեւանի մէջ, իսկ 2002ին՝ "Քամիներից այն կողմ" երկրորդ գիրքը:

Առիթով մը Վահէ Օշական կը գրէր Հալէպի մասին ու կ'ըսէր.

«Սփիւռքի դարբնոցներէն մին եղած է ան, եւ այսօր ալ իր դպրոցներով, ազգային կեանքի ներքին ջերմութեամբ, մարդկային զգացումներու որակի տեսակէտէն Հալէպ ոչ մէկ գաղութէ ետ կը մնայ»:

«Ստորակայութեան բարդո՞յթ մը կը կրծէ իրենց ինքնավստահութիւնը, երբ կը նային Պէյրութի եւ աւելի հեռու: Սխալ ու մրիպած կեցուածք, որ կ'արդարացնեն "տեղական պայմաններ" կոչուած անմխիթար պատճառաբանութեամբ» (4):

Որոշ ճշգութիւն կայ անշուշտ Վ. Օշականի խօսքերուն մէջ: Վերջին տասնամեակին բանաստեղծական բերքն ու նորարարական շունչը սակայն, ինչպէս կը տեսնենք այս ուրուագիծին մէջ, հալէպահայ բանաստեղծութեան համար նոր շրջանի մը սկզբնաւորութիւնը կ'աւետեն:

ԱՅՍՕՐ

"Գանձասար" շաբաթաթերթին կողքին, շաբաթական հերթականութեամբ գործող "Գրական աշխատանոց"ը ի մի բերաւ երիտասարդ ա՛յն ձայները, որոնք սկսեր էին լսուիլ Հալէպէն: 1999էն լոյս տեսնող "Գանձասար"ի ամսական "Գրական էջ"ը կրցաւ հաւաքական պատկերը տալ հալէպահայ նորագոյն բանաստեղծութեան, որ դիմագիծ մը կազմելու ձգտումը ունէր Տիգրան Գարոյեանի, Յակոբ Տլոըլեանի, Յարութ Վարդանեանի, Սարգիս Քէլլախչեանի եւ Նանոր Ինճէճիկեանի գրիչներով:

Այս տղոցմէն մէկ քանին արդէն գիրքերով հրապարակ եկած եւ իրենց արգասիքը ընթերցող հասարակութեան դատին յանձնած են: Միւսները կը շարունակեն երեւիլ տեղական թէ սփիւռքեան մամուլին մէջ:

2003 թուականին Անթիլիասի մայրավանքին մէջ կայացած Միջին Արեւելքի գրական առաջին համագումարին այս երիտասարդ տղոց ներկայութիւնը ոչ միայն տպաւորիչ էր, այլեւ յոյս կը ներշնչէր Հալէպի եւ Սփիւռքի բանաստեղծական ապագային հանդէպ:

Նոյն տարին տեղի ունեցաւ Գրողներու համահայկական երկրորդ համագումարը Երեւանի մէջ: Արդիւնքը նոյնքան փայլուն էր հալէպահայ քերթողութեան համար:

2005 թուականի աշնան լոյս տեսաւ "Երթ" (5) տարեգիրքի առաջին թիւը, որ լրիւ գրական բնոյթ ունի եւ ուր կ'երեւին անուններն ու գործերը հալէպահայ (նաեւ սուրիահայ՝ Լաթաքիայէն եւ Քեսապէն) 14 բանաստեղծներու, որոնցմէ երկուքը վաղամեռիկ են՝ Գէորգ Թէմիզեան եւ Կորիւն Շահինեան: Մնացեալին մեծ տոկոսը երիտասարդ անուններ են, որոնք կ'ապրին եւ կը ստեղծագործեն Հալէպի մէջ:

Այս տարեգիրքը ինքնին խօսուն փաստ մըն է հալէպահայ քերթողութեան զարթօնքին եւ առոյգ գնացքին:

Կը տեսնենք, որ հակառակ քանի մը տասնամեակներու արձանագրած նահանջին, հալէպահայ քերթողութիւնը թափ առած է եւ վերագտած երբեմնի իր եռանդին կողքին, նաեւ շունչի նորութիւն մը:

Այսօր հալէպահայ բանաստեղծութիւնը աւանդական եւ արդիական քերթողութեան ներդաշնակ փունջ մը կը ներկայացնէ. նոյն մթնոլորտին մէջ կ'ապրին եւ կը ստեղծագործեն երէց եւ կրտսեր բանաստեղծներ. անոնցմէ շատեր հաւատարիմ կը մնան արեւմտահայ քերթողութեան աւանդին, մինչ ուրիշներ ամբողջովին հակած են դէպի արդիականը:

Իսկ թէ ի՞նչ պիտի մնայ այս ամբողջէն, մնայուն արժէք որպէս, ժամանակը ի՛նք պիտի հաստատէ:

Այս ծաղկաքաղին պատրաստութեան ընթացքին նկատի առնուած են

1.– առաջին հերթին այն հեղինակները, որոնք ծնած, ապրած եւ ստեղծագործած են Հալէպի մէջ,

2.– անոնք, որոնք Հալէպ կամ Սուրիա ծնած, բայց իրենց կեանքը այլ երկիրներու գաղութներուն մէջ շարունակած են,

3.– յետ-եղեռնեան առաջին սերունդի այն բանաստեղծները, որոնք կարեւոր շրջան մը ապրած եւ ստեղծագործած են Հալէպի մէջ,

4.– եւ վերջապէս անոնք, որոնք եթէ իրենց գրական գործունէութեան սկիզբը զբաղած են բանաստեղծութեամբ եւ մէկ-երկու քերթողագիրք հրատարակած, մեր գրականութեան մէջ սակայն կը յիշուին ոչ որպէս բանաստեղծներ, ինչպէս Մինաս Թէօլէօլեան, Ստեփան Ալաջաջեան կամ Յակոբ Զոլաքեան:

(Շար. 3 եւ վերջ)

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

(4) "Գանձասար", Նոյեմբեր, Դ. 1998, էջ 6:

(5) "Երթ" սուրիահայ տարեգիրք, հրատարակութիւն Սուրիահայ Գրողներու Համախմբումի եւ Բերիոյ Հայոց թեմի առաջնորդարանի, թիւ 1, 2005 Հալէպ:

ԶԱՏԻԿ Է ԿՐԿԻՆ

Զատիկ է կրկին: Օր Յարութեան:

Մարդիկ, որ ամէն թուականի կամ տօնի մը ետին խորհուրդ մը ուզած են նշմարել, Զատկին համար սահմանած են Գողգոթային յաջորդող Յարութեան իմաստը: Խաչելութենէ ետք աստուածատիպ էակին ոգեկան կենդանութիւնը:

Արդէն այնքան պարզորոշ է Հայաստանեայց եկեղեցւոյ կամարներուն տակ հնչող խօսքը,– Մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգեւեաց: Այո՛, խաչելութիւնը պարզորոշ երեւոյթ կազմած է մարդոց եւ ազգերու կեանքին մէջ: Մանաւանդ մեզի նման լոյսին դիմող եւ լոյսով խանդավառ ժողովուրդներուն համար: Հո՛ն, ուր կայ գերագոյն գաղափարը՝ անհատական թէ հաւաքական տրոփումներով, ձգտումներով եւ իղձերով, հոն անպակաս կը մնայ խաչելութիւնը: Խաչերը վկայութիւններ կը դառնան մարմնի անճկուումով իտէալներ թաղելու անիմաստ համոզումներուն: Այն յիմար մտածումին, թէ մարմնին անհետացումով, ֆիզիքական գոյութեան փոխարինումով սրբազան վարդապետութիւններն ալ կ'անհետանան: Հողը կը թաղէ զանոնք:

Այլ սակայն, պատմութեան իսկ վկայութեամբ, խաչելութիւնները մարտիրոսներ կը ստեղծեն, իսկ գերեզմանները՝ սուրբեր: Եւ, մանաւանդ, գաղափարները առաւել սրընթաց թափով կ'արշաւեն, կը տիրեն հոգիներուն, ամուր կը խարսխեն հոն, որովհետեւ պարարտ հող կը գտնեն իրենց սերմերուն համար: Բնախօսական իմաստով բաբախելէ դադրած սիրտ մը աւելի գրաւիչ, հաղորդական կը դառնայ: Կ'ըլլայ աստուածային, գերբնական:

Եւ ասիկա այն պատճառով, որ իր համոզումներուն համար մարտնչող եւ զոհաբերող մարդը կը նոյնանայ իր գաղափարներուն հետ, երբ պարզ մահկանացուի վիճակէն դուրս ելլելով կը դառնայ նահատակ: Որովհետեւ, ժողովուրդները կենսանորոգ արիւն ձեռք կը ձգեն, երբ մեծ, նուիրական մեռելներ կ'ունենան իբրեւ իրենց առաջնորդ:

Միայն ամենազօր տգէտ պահակներն են որ չեն ըմբռնած այս պարզ ճշմարտութիւնը:

Քրիստոս սարսռեցուց Հռոմէական կայսրութիւնն ու Կեսարներու գահը այն օրը, երբ հռոմէացի զինուորներ զինք Գողգոթա առաջնորդեցին: Խաչէն արձակուած անզօր հայեացքը Անոր՝ շանթահարիչ հարուածը հանդիսացաւ ամենակալ բռնատիրութեան:

Զատիկ է կրկին: Օր յարութեան:

Եւ ամէն Զատկի, մարդիկ պէտք է մտաբերեն եկեղեցիներէ ներս թէ դուրս, գմբէթներու տակ թէ այլուր, զանգերու ղօղանջները լսելու պահուն կամ ոչ, որ ամենազօր տիրակալը գաղափարն է: Արձակուած լոյսը խաւարած երկինքին մէջ: Նետուած անտեսանելի սերմը բարեբեր դաշտին մէջ: Մանաւանդ, երբ անիկա կը նախադծէ ժամանակին իմաստը, կը խորհրդանշէ զանգուածներուն բաղձանքը, կը ներկայացնէ մարդկութեան յոյսը:

Պէտք է գիտնալ, դարերու իսկ փորձով, թէ վարդապետութիւնները կը սերմանուին, կը ծլարձակուին անզուլ խիզախութեամբ: Ուրեմն՝ պայքարով: Նաեւ զոհաբերութեամբ: Խաչելութեամբ, որուն անպայման կը յաջորդէ յարութիւնը:

Զատիկը կեանքին յաղթանակն է մահուան վրայ:

ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃԵԱՆ

ՊՈԼԻՍ

ԱՐՓԻԱՐ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐԸ ՀԱՏՈՐԻ ՄԸ ՄԷՋ

Արաս հրատարակչութիւնը վաստակաւոր հայերէնի ուսուցիչ, հանգուցեալ Արփիար Տէր Մարգարեանի պատմուածքները ամփոփեց Արձագանգ և Անցորդը(*) անուն հատորի մը մէջ։

Հատորը ունի վերհրատարակութեան բնոյթ եւ կը բաղկանայ երեք մասերէ՝ Արփիար Տէր Մարգարեանի Արձագանգ (1946) եւ Անցորդը (1962) պատմուածքներու գրքոյկները եւ հրատարակչատան կողմէ կցուած յաւելուածի բաժինը։

Արփիար Տէր Մարգարեան ընթերցողին կը հրամցնէ "մեծ մասով խոնարհ մարդոց, ուսուցչական եւ ուսանողական կեանքէն առնուած քրական եւ վաւերական պատկերներ", որոնք կարեւոր են նաեւ որպէս ներսէն դիտողի մը կողմէ բացուած պատուհաններ դէպի մեր պոլսահայ կրթական կեանքն ու իրականութիւնները։

Յաւելուածին մէջ առնուած են Արփիար Տէր Մարգարեանի գիրքերէն դուրս մնացած երկու պատմուածքներ, իր մահուան առթիւ մամուլէն արձագանգներ, հարազատներու եւ աշակերտներուն կողմէ այս հատորին համար գրի առնուած յուշեր եւ ակնարկներ, լուսանկարներ…

ՕԳՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Հրատարակչութիւնը նկատի ունեցած է հատորին գործածութիւնը նաեւ որպէս օգնական ընթերցանութեան գիրք, հետեւելով հեղինակի օրինակին։ Արդարեւ Արփիար Տէր Մարգարեան իր պատրաստած Աղբերակ (1945) հայերէնի դասագիրքին մէջ տեղ տուած էր նաեւ իր պատմուածքներէն։

Հրատարակչութիւնը չէ գոհացած հրամցնելով պատմուածքները որպէս "ատաղձ", տուած է նաեւ ընդարձակ ծանօթագրութիւններ, նկատի ունենալով թէ՛ աշխարհասփիւռ հայ ընթերցողին եւ թէ հայ ուսուցչին եւ աշակերտին՝ մանաւանդ երիտասարդ սերունդին հաւանական պահանջները։

ԱՐՓԻԱՐ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Արփիար Տէր Մարգարեան 1889ին ծնած է Պիթլիս՝ Խուլթիկ գիւղը, ուսանած Պիթլիսի եւ Խարբերդի Ամերիկեան գոլէճներուն մէջ, ապա հետեւած է Պոլսոյ Համալսարանի իրաւաբանական ճիւղին, մասնակցած Պալքանեան եւ Ա. Ընդհ. պատերազմներուն, հասնելով հարիւրապետի աստիճանին. Զինադադարէն վերջ աշխատած է Պոլսոյ զանազան Թաղային վարժարաններուն մէջ, եղած է դասախարակ ուսուցիչ, ապա տնօրէն (1926 – 33) Սահակեան վարժարանի եւ հայերէնի ուսուցիչ (1934 – 45) Ղալաթիոյ Կեդրոնականին։

(*) Արձագանգ եւ Անցորդը, Արփիար Տէր Մարգարեան, Արաս Հրատարակչատուն, Մարտ 2006, 336 էջ. հրատարակութեան պատրաստեց՝ Արտաշէս Մարկոսեան։

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

ՌԱԿ-Ի ՎԱՍՏԱԿԱՒՈՐՆԵՐՈՒ ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԹԸ

Փասատինայի Թ.Մ.Մ. "Պէշկէօթիւրեան" սրահին մէջ, Մարտ 19ին տեղի ունեցած է Ռ.Ա.Կ.ի վաստակաւորներու նուիրուած յարգանքի երեկոյթ մը։ Հանդիսութիւնը վարած է Փայլակ Ահարոնեան։ Բացումը կատարած է տոքթ. Արթօ Փօլատեան։ Մեծարուած են 10 վաստակաւորներ, որոնք մամուլի, գրականութեան եւ մանկավարժութեան ճամբով ծառայած են իրենց ապրած գաղութներուն մէջ, մաս մըն ալ Հայրենիք ներգաղթելով հոն ունեցած են կարեւոր վաստակ մը։ Յայտագրի ընթացքին շնորհակալութեան խօսքերով հանդէս եկած են մեծարեալներէն ոմանց հարազատները։ Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը։

* * *

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնախմբութիւնը տեղի ունեցած է Ապրիլ 2ին։ Առաւօտեան պատարագած եւ քարոզած է առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան։ Յաւարտ արարողութեանց, "Խաչատուրեան" Հայ Կեդրոնի "Սարոյեան" սրահին մէջ տրուած է ճաշ մը, որուն ներկայ եղած են 200 հրաւիրեալներ։ Խօսք առած են եկեղեցւոյ հովիւը՝ Աւետիս Քհնյ. Թորոսեան, հոգաբարձութեան ատենապետ Ներսէս Դշոյեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Հրայր Պալեան։ Գնահատանքի խօսքով հանդէս եկած է Առաջնորդը։ Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը։

* * *

ՀԱՅ ՉՈՐՍ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Փասատինայի Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան կեդրոնի "Պոյաճեան" սրահին մէջ, Մարտ 4ին, տեղի ունեցած է հայ չորս կին գրողներու գիրքերու ներկայացումը։ Մարի Յովհաննէսեան, Սոնա Եագուպեան, Էմմա Օշական եւ Նայիրի Նահապետեան յաջորդաբար ներկայացուցած են Սոնա Զէյթլեանի՝ "Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ", Մէյրի Թերզեանի՝ "Գաղթականի աղջիկը" (անգլերէն), Ժանէթ Քասունիի՝ "Մանկական աշխարհ ու բեմ" եւ Սարա Սիլիքեանի՝ "Հաւատարմութիւն" (անգլերէն) գիրքերը։

* * *

"ՄԵՐՏԻՆԵԱՆ" ՎԱՐԺԱՐԱՆԻ 24ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԸ

Լոս Անճըլըսի "Շերաթոն Եունիվըրսըլ" պանդոկին մէջ, Մարտ 12ին տեղի ունեցած է "Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան" վարժարանի 24րդ տարեկան ճաշը։ Յայտագիրը վարած է Լուիզ Քիւրքճեան։ Խօսք առած են հոգաբարձութեան ատենապետը՝ տոքթ. Հրայր Աթիքեան եւ երկու շրջանաւարտներ։ Տնօրէնը՝ Յովսէփ Ինճէճիքեան, իր խօսքին մէջ նշած է թէ «վարժարանը կը գտնուի երկու մարտահրաւէրներու առջեւ։ Առաջին՝ ժամանակն է որ "Մերտինեան" վարժարանը օժտուի նորակառոյց շէնքով եւ արդիական սարքերով։ Երկրորդ՝ դպրոցը բարձրանայ մինչեւ երկրորդական վարժարանի»։ Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը։ Ձեռնարկէն գոյացած է 60 հազար տոլար, ի նպաստ դպրոցին։

ԼՐԱՏՈՒ

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՄՈՆՐԷԱԼԻ Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահին մէջ, Մարտ 19ին, կազմակերպութեամբ Համազգայինի Սանահին մասնաճիւղի գրական յանձնախումբին, տեղի ունեցած է Հայաստանցի գրող-լրագրող Լ. Գէորգեանի "Ես տեսայ իմ երկիրը" հատորին ներկայացումը։ Բացումը կատարած է Վրէժ-Արմէն Արթինեան եւ բացատրած թէ ինչ պայմաններու մէջ, Հորիզոնի ընթերցողներուն արդէն ծանօթ այս հեղինակին, արեւմտահայ ուղղագրութեամբ այս հեղինակին, արեւմտեան Հայաստան ուխտագնացութեան ուղեգրութիւնը, Երեւանի մէջ հրատարակուած է Հորիզոնի հովանաւորութեամբ եւ Մեսրոպեան ուղղագրութեամբ, խումբ մը ազգայիններու նիւթական օժանդակութեամբ։ Ապա, հեղինակին կենսագրութիւնը ներկայացուցած է Սօսի Գաւասեան, որ հեղինակին դասընկերուհին եղած էր Երեւանի պետական համալսարանի բանասիրական լսարանին մէջ։ Լ. Գէորգեան ծնած ու ուսանած է Երեւան, ձայնասփիւռէն վարած է գրական գեղարուեստական հոգեւոր հաղորդումներ նաեւ այլ ծրագրեր։ Այս հատորին հետ միաժամանակ լոյս տեսած է իր "Արեւ լերան մէջ" փիլիսոփայական փորձագրութիւնը, նոյնպէս դասական ուղղագրութեամբ։ "Ես տեսայ իմ երկիրը" հատորին մասին խօսած է Վարդի Դանիէլեան եւ տուած է հատորին բովանդակութիւնը։

* * *

ԵՇԻԼԳԻՒՂԻ Հայոց վարժարանին մէջ, Մարտ 4ին, առաջին ներկայացում մը տեղի ունեցած է նուիրուած Գրերու գիւտի 1600ամեակին։ Բացման խօսքը արտասանած է վարժարանին տնօրէնուհին՝ Անի Երամեան, որմէ ետք, խօսնակը՝ Մելիսա Օղթանեան բացատրած է Մաշտոցի ջանքերով հնարուած գրերու կարեւորութիւնը հայ ազգին գոյատեւման համար։ Ապա, սկսած է գրերու գիւտը պատկերող բեմական ներկայացումը, որ պատրաստուած էր Արամ Կոստանեանի հսկողութեան տակ եւ որուն մասնակցած են վարժարանի ուսուցիչները, նախկին եւ ներկայ սաներ եւ ծնողներ։ Աւարտին, տեղի ունեցած է ընդունելութիւն մը։ Նոյն յայտագիրը կրկնուած է Մարտ 7ին եւ 9ին ալ տեղի ունեցած է կալան։

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Բայց Նազիմի համար նշան մըն է որ պզտիկ քաղաքին վերապրողները հեռու չեն։ Ահա խսկապէս ծերուկին ետեւ կ՚երեւայ գետին փռուած, ցնցոտիներու տակ խոպան մազերու կոյտ մը եւ ցնցոտիներուն վրայ Նուպարին կլոր աչքերը, որոնք տակաւին կեանքի որոշ ճառագայթ մը կը պահեն։ Նազիմ անմիջապէս հացի կտորով մը կը հանդարտեցնէ։ Յետոյ նրբաշարժ ձեւով կը շօշափէ մազերու կոյտին տակը եւ դժուարութեամբ դուրս կը քաշէ գլուխը որ անոնց տակը կը գտնուի։ Գլուխը աղէին եւ անդին կը տատանի. կարծես խաղալիք մը ըլլար։ Վերոնն է, մեռած։ Ոչ մէկը ալ իրեն պիտի երգէ «Վերոն, Վերոն, վրէ փոմփոն» եւ իր գլխարկն ալ կտոր կտոր ինկած է Տաւրոսի բարձունքներուն վրայ։ Ամէն ինչ փոխանակուած է կամ ծախուած. Ազնիւին Դամասկոսի նշանաւոր կարմիր կերպասն ալ։

Վերոն անօթութենէ մեռած է։ Բերնին շուրջը դեռ փակած է խոտին կանանչը, իր վերջին օրերուն միակ սնունդը, տառապանքի այլափոխած արտայայտութիւնը, մատները կծկուած։ Վերոն չըկարողացաւ իր սիրած բողոքական հովիւը տեսնել։ Հիմա ամէնուն հովիւը գինք կ՚առաջնորդէ կանանչ արօտավայրերէ դէպի գանդաղ սէրը որ երբեք աճապարանք չունի։ Նազիմ նուրբ շարժումով կը քակէ Նուպարին ձեռքերը որ անոր մազերուն մէջ խառնուած էին, կը փակէ աչքերը եւ կը պառկեցնէ գետնին վրայ։ Յետոյ ճամբային մէջ կը փնտռէ պզտիկները, մայրերնին եւ Ազնիւը։ Կը գտնէ զիրենք ճամբային խորը ուր ուրիշ կիներու հետ կը կռուին պարապ եւ պատահական բանի մը համար, գետնախնձորի մը համար որ գետինն է։ «Իմս է, մեր ամէնուս համար է» կը պոռայ վախցած եւ այլայլած Շուշանիկ մը, որ անզգալի կերպով կը գողայ, քովը ունենալով իրեն սեղմ կպած իր պզտիկները, լուռ եւ խելացնոր։

Նազիմ կը միջամտէ փսփսալով անոր. «Վայրկէ հանըմ, հոս եմ, հիմա ա՛լ մնցուցիր դուն։ Հիմա կ՚ազատենք ձեզի»։

Չի գիտեր ինչպէս պիտի ըլլէ վերջը, բայց հիմա կարեւորը զինք մեկդի քաշել, քիչ մը ուտելիք տալ եւ փախուստը պատրաստել է։ «Ինծի բարեկամ գափթիէն չեմ տեսներ, նոր դէմքեր կը տեսնեմ որոնք վստահութիւն չեն ներշնչեր, պատրաստ են դաւաճանելու» կը փսփսայ Նազիմ։ Միւս կողմէ Հայ մը ազատել ջանացող մը մատնելու վարձատրութիւնը շատ հրապուրիչ է։

Նազիմ պիտի ուզէր որ հիմա Իսմէնէ իր հանդարտ ճարպիկութեամբ քովը ըլլար, բայց ստիպուած է մինակը ճար մը գտնել։ Շատ աճապարանք կայ եւ քիչ ժամանակ։ Ճամբային մէջ տիրող գարշահոտը անտանելի է. յայտնի է որ ամէնքն ալ ոջիլով լեցուած են։ Մինչ այդ գաղտնի կերպով քիչ մը հաց կը բաժնէ, յետոյ շուրջը կը նայի, դրպաններէն մէկէն արագ կերպով ջրաման մը դուրս կը հանէ եւ Շուշանիկին եւ աղջիկներուն ջուր կը խմցնէ։ Յետոյ ձեւով մը կը ծածկէ զիրենք եւ կը հրահանգէ միասին մնալ, լուռ եւ հանդարտ, պահելով Նուպարը իրենց միջեւ։

Ազնիւ գացած է իր զինուորը փնտռելու, բայց կը վերադառնայ, յուսահատ, կերած ծեծէն երեսը ուռած։ Մարաշի զինուորը ճանձրացած է իրմէ, հակառակ որ ամէն գիշեր իր քովը կ՚ուզէ։ Բայց կը ծեծէ եւ ալ հաց չի տար, միայն սարսափ։ Ազնիւին աչքերը ուռած են եւ չունենը տաղնապալի է։ Նազիմ ազնուութեամբ կը շոյէ զինքը, բան մը կը կերցնէ եւ յետոյ ականջին կը մրմռայ Ճելալի եւ Ջարեհի անունները, թէ Հալէպ են, թէ այս գիշեր երկուքն ալ պիտի տեսնէ, թէ հիմա քիչ մը համբերութիւն եւս պէտք է։

Ազնիւ կարծես չի լսեր։ Անյագութեամբ կը խմէ եւ Նազիմի տուած հացը կը պահէ, բաներ մը մրմռալով։ Իր թարմ գեղեցկութիւնը խամրած է. առջեւի ակռաներէն երկու հատ կորսնցուցած է։ Բայց յետոյ լաւ մը կը նայի անոր, կը ճանչնայ եւ իրականութեան ծանրութիւնը յանկարծ կը ճնշէ զինքը։

«Ո՞վ ես դուն բարեկամ, որ ինծի մեռեալներուն երկիրը կը յիշեցնես» կը հարցնէ անմիջական պայծառութեամբ։ «Քիչ մը ջուր եւս տուր»։ Եւ յետոյ ցած ձայնով կ՚ըսէ, «Պէտք չէ իմ մասիս Ջարեհին եւ ան միւս մարդուն խօսիս։ Ես այլեւս մէկը չեմ։ Ազատէ պզտիկները»։

Նազիմ կը մտածէ ծաղկած երիտասարդութեան վատնումին, անոր ժպիտին (աւելի լաւ է իբրեւ կին տանիլ, աւելի լաւ է մուրացկանի մը կինը ըլլալ, ծաղրական ձայն մը կը մրմռայ իր մէջ, շատ խորը իր մէջ), այդ անպատիւ խայտառակները որ չորս հովին տուին կայսրութեան այնքան լաւ քաղաքացիներուն հարստութիւնները եւ կեանքերը։ Բայց այս բաներուն մասին լան մը պէտք չէ ըսել տեղակալին։ Միայն թարմացնել իր ռամիկը երազը եւ գործի լծել։

Այդ պահուն ճամբային միւս կողմը բաներ մը կը պատահին։ Իսմէնէ, որ իր շրջանը վերջացուց, կը հասնի եւ անմիջապէս կը հասկնայ կացութիւնը։ Բայց կը տեսնէ նաեւ որ ձիաւոր սպայ մը հասաւ եւ բոլոր զինուորները անմիջապէս բարեւի կեցան եւ սկսան հրամաններ արձակել դէպի տարագրեալները։ Կը տեսնէ Նազիմը որ ծռած է մէկու մը վրայ օգնելու նպատակով եւ սպային աչքերը որ կը կեդրոնանան անոր վրայ։ Արդէն ձին պարձուցած է այդ կողմ եւ մտրակը վերցուցած է, երբ Իսմէնէ շուտով կը հասնի, կը բռնէ սանձերը եւ կը սկսի պոռալ եղբայրներու բարբառով, խառնելով ամերիկեան անհասկնալի հայհոյանքներ յանկերգի պէս։

(Շար. 84)

ԶԱՏԻԿ, ՄԵՌԵԼՈՑ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, Ապրիլ 16.–
ՏՕՆ ԶԱՏԿԻ
ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.30ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 17.–
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ
Սկիզբ ժամերգութեանց ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10ին,
Պաշտօն Հանգստեան՝ ժամը 11.45ին։

***

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

ԿԻՐԱԿԻ.–
Զատկուան պատարագ՝ ժամը 10ին։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ ժամը 10ին։
Պատարագի վերջաւորութեան Հոգեհանգիստ վասն Համօրէն Ննջեցելոց։
Գերեզմանօրհնէք Շաւիլի գերեզմանատան մէջ՝ ժամը 15ին։

***

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին։
Հոգեհանգիստ "Վասն Համօրէն Ննջեցելոց"՝ յաւարտ Պատարագի։

***

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

ԿԻՐԱԿԻ.–
Ժամերգութիւն՝ ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10.30ին։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ ժամը 10.30ին,
Հոգեհանգիստ՝ ժամը 12ին։

***

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 9.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին,
Պաշտօն Հոգեհանգստեան՝ ժամը 11.45ին։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ.–
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.30ին,
Պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի փոխանորդ Լիոնի եւ Ռոն-Ալփի Հայոց
Բազմաձայն երգեցողութիւնները կը կատարուին եկեղեցւոյ Կոմիտաս երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Պ. Յովհաննէս Պէրպէրեանի։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ եւ Հոգեհանգիստ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ՝
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

***

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8.30ին,
Հանդիսաւոր պատարագ՝ ժամը 9.45ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի
Մասնակցութեամբ Սահակ - Մեսրոպ երգչախումբի, ղեկավարութեամբ՝ Պ. Խաչիկ Եըլմազեանի։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9ին,
Պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Յաւարտ Պատարագի Հոգեհանգիստ՝ "Վասն Համօրէն Ննջեցելոց"։

***

ԱԼՆ ԼՈՒ - ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

ԿԻՐԱԿԻ.–
Հանդիսաւոր պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ

***

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.–
Պատարագ՝ ժամը 10ին։
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆ
Յաւարտ Պատարագի Հոգեհանգիստ՝ "Վասն Համօրէն Ննջեցելոց"։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Կառտանէն Սեդա Սիմոնեան 50 Եւրօ կը նուիրէ "Յառաջ"ին, իր հօր՝ Թադէոս Սիմոնեանի յիշատակին։

91

91EME ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

PARIS

22 AVRIL

11h : Cérémonie organisée au Mémorial de Sèvres (92).

23 AVRIL

15h : Messe en la Cathédrale Notre-Dame de Paris
18h : Ravivage de la Flamme aú Soldat Inconnu Arc de Triomphe — Place Charles de Gaulle Etoile — Paris 8e
19h : Veillée organisée par les organisations de jeunesse arménienne sur le Parvis de Notre-Dame

24 AVRIL

15h : Messe en la Cathédrale Arménienne 15 rue Jean-Goujon — Paris 8e
17h30 : Rassemblement devant la Statue de Komitas Place du Canada — Cours Albert Ier — Paris 8e
pour :
- combattre le négationnisme et le racisme de l'Etat turc notamment pour ce qui concerne le génocide des Arméniens en 1915;
- exiger le respect absolu des valeurs européennes par l'examen de la candidature de la Turquie à l'Union Européenne;
- dénoncer les agissements anti-arméniens des nationalistes turcs en France, en Europe et en Turquie.

Prises de paroles.

Manifestation en direction de l'Ambassade de Turquie.

28 AVRIL

18h30 : Réception à l'Hôtel de Ville : Monsieur Bertrand Delanoë, Maire de Paris, rendra hommage aux victimes du génocide des Arméniens en 1915, dans les salons de l'Hôtel de Ville (sur invitation uniquement).

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN
«Le Génocide en moi»
Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25
— Entrée libre —

(Շար. Ա. էջէն)

ինքզինք կը պաշտպանէ առարկելով որ կարելի չէ ապրիլ անցեալով։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔ ՄԸ ինը տարի եւ երեք ամիս բանտարկութեան դատապարտուած է Պէրլինի մէջ, որովհետեւ քոյրը սպաննած էր։ Այս վերջինին յանցանքն էր "արեւմտեան" կեանք մը վարել։ Երկու եղբայրները, 25 եւ 26 տարեկան ազատ արձակուած են։ Դատապարտուած Թուրքը քոյրը սպաննած էր փողոցը, որովհետեւ լաչակ չէր կրեր եւ մինակը կը մեծցնէր զաւակը զոր ունեցած էր պարտադրուած ամուսնութենէ մը։

Մարսէյլ
ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
նահատակ բանաստեղծ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
կեանքի մասին գրուած

«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ»

վէպի

Կը բանախօսէ հեղինակը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

Ռուբէն Սեւակէն քերթուածներ կ'արտասանէ
Հայաստանի վաստակաւոր արուեստագիտուհի
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 21, ժամը 20.30ին
Սահակ - Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

— Մուտքը ազատ է —

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »

Samedi 22 avril à 16 heures

MEMOIRE
91e anniversaire du Génocide

LE GENOCIDE ARMENIEN

de Laurence Jourdan
Film documentaire (2005)

Suivi de la présentation du livre
de **Béatrice Kasparian-Bricout**

AZADOUI, ENFANT D'ARMENIE
Editions L'Harmattan

Le livre raconte le quotidien des enfants arméniens rescapés du génocide et surtout d'Azade, petite orpheline, proie de la bestialité humaine, ramassée au milieu des morts, indemne, mais mutique et amnésique. Azade réapprend à sourire et retrouve la joie de vivre...

L'auteur dédicacera son livre.
— Entrée libre —

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԵՐԵԿՈՅԹՆԵՐՈՒ ՇԱՐՔ

Հինգշաբթի, Ապրիլ 20, ժամը 20.30ին

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՂԷՏԸ՝
ԻՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ
ՈՒ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Հանդիպում բեմարուեստի ջանադիր՝

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

հետ

Կը ներկայացնէ՝
Կարէն ՍԻՄՈՆԵԱՆ

10 bis rue Thouin — Paris 5ème
Métro : Cardinal Lemoine / Monge

— Մուտքը ազատ է —

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14 rue Saint Bazile 13001 MARSEILLE
☎ 04. 91. 50. 15. 09

SOIREE CINEMA

«LE GENOCIDE EN MOI»

Film documentaire réalisé par ARAZ ARTINIAN

Mercredi 19 avril à 19 heures

Débat avec la réalisatrice

Collaboration de l'Association Artistique Arménienne

Métro: Réformés P.A.F. : 5 Euros
Parking: Gambetta

LA PAROISSE ARMENIENNE CATHOLIQUE SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR DE MARSEILLE
vous invite à participer à la conférence qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION DU GENOCIDE ARMENIEN

COMMIS PAR LES AUTORITES OTTOMANES - TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar (Couvent et Siège Patriarcal des Arméniens Catholiques depuis 1749).

Un programme d'inspiration «24 avrilienne» suivra la conférence.
Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 19
MERCREDI
19 AVRIL
2006

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.436 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.436

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹԵԼ-ԱՎԻՎԻ կեդրոնը, սանտիւիչի վաճառատուն մը քով, Ապրիլ 17ին, 16 ամեայ Պաղեստինցի մը անձնասպանական արարք մը գործած է, որուն հետեւանքով 9 մեռեալ կար եւ քանի մը տասնեակ վիրաւորներ: Ահաբեկչական արարքը տեղի ունեցած է Հրէական զատկըւան օրը եւ ըստ տեղացիներուն ոչ մէկուն մտքէն կ'անցնէր որ նման դէպք մը կրնայ պատահիլ, երբ պահակ մըն ալ կար ճաշարանին մուտքին: Ոճրափորձին տէր եղած է Իսլամական Ճիհատը, մինչ արարքը գործողն ալ տեսերիզով մը իր կտակը կը կարդար նախքան անձնասպանական արարքը գործելը: Կը թուի որ ամէնէն երիտասարդ քամիքազն է: Մ. Ապպաս դատապարտած է, բայց, կառավարութիւնը որ Համասի ձեռքն է արդարացուցած է ոճրափորձը, յայտարարելով.– «Ինքնապաշտպանութեան արարք մըն է, որպէս հակազդեցութիւն մեր ժողովուրդին դէմ գործըւած ոճիրներուն»: Նման յայտարարութիւն մը կրնայ շատ սուղի նստիլ, երբ մանաւանդ Իսրայէլի վարչապետը անմիջապէս պատասխանած է ըսելով թէ Իսրայէլ կրնայ հակազդել այնպէս ինչպէս պէտք է: Ռմբակոծութիւնները յաջորդած են այս խօսքերուն: Իսրայէլ հըրթիռներ արձակած է Գազայի վրայ, բայց, կ'ըսուէր թէ զոհ չկար: Սկսելով ԱՄՆ-էն, միջազգային հանրութիւնը դատապարտած է ոճրափորձը: Ուաշինկթըն այպանելի որակած է արարքը, Շիրաք ցաւակցութիւն յայտնած է Իսրայէլի նախագահին, շեշտելով թէ ահաբեկչութեան դէմ պայքարելու վճռակամութիւնը անխախտ կը մնայ, ոճրափորձը դատապարտած են նաեւ Գերմանիա, Ռուսաստան:

ԻՐԱՔԻ մէջ ալ ահաբեկչութիւնը չի դադրիր: Ապրիլ 17ին, ռումբեր պայթած են Պաղտատի կեդրոնը եւ Քէրքիւք: Առաջին հաշուեկշռի մը համաձայն 9 մեռեալ կար եւ աւելի քան 20 վիրաւորներ: 17 դիակներ ալ յայտնաբերուած են Պաղտատի զանազան շրջանները:

ՊՈԼՍՈՅ եւրոպական ափին վրայ, Պագըրգիւղի Թաղամասը, աղբամանի մը մէջ ռումբ մը պայթած է Ապրիլ 16ին, որուն հետեւանքով 31 վիրաւորներ կային (երկուքը ծանր վիճակի մէջ): Նիւթական վնասներն ալ շատ մեծ են: Արարքին տէր եղող չէ եղած, բայց, իշխանութիւններուն համար քիւրտ անջատողականներու գործն է:

ՖՐԱՆՍԱՅԻ համալսարաններն ու վարժարանները կը բացուէին Ապրիլ 18ին, բայց, հոս-հոն դեռ արգելքներ կային, ինչպէս Նանթ եւ Թուլուզ, ուր ուսանողներ չէին ձգեր որ համալսարանը գործէ: Նիւթական վնասներն ալ շատ մեծ են, ինչպէս Սորպոն, ուր մէկ միլիոն եւրօ հարկ է նորոգութիւնները կատարելու համար: Ուսանողներու մէկ մասն ալ Սէ.Փէ.Ը.-էն զատ, կ'ուզէ որ ջնջուին նախորդող միւս օրէնքներն ալ ինչպէս՝ Սէ.Էն.Ը.-ն: Կը թուի որ ամէն ինչ կարգադրուած չէ:

ԱԼԺԵՐԻՈՅ նախագահը՝ Ա. Պուլթեֆլիքա, Ապրիլ 17ին, դատապարտած է Ֆըրանսայի գործած "ինքնութեան ցեղասպանութիւնը" գաղթատիրութեան շրջանին 1830էն 1962: Հեռատեսիլէն յայտարարած է.– «Գաղթատիրութիւնը մեր ինքնութեան, մեր պատմութեան, մեր լեզուին, մեր աւանդութիւններուն ցեղասպանութիւնը իրագործած է»:

ՊՈԼՍՈՅ "Ակօս" շաբաթաթերթին խըմբագիրը Հ. Տինք մասնակցելով Մալաթիայի գործի մարդոց մէկ հաւաքոյթին, թելադրած է որ Քիւրտերը խրատուին օսմանցի Հայերուն պատահածներէն: Ցատկալէս ըսած է որ սխալ է օտար ուժերու վստահիլ եւ թէ Քիւրտերը պէտք չէ հաւատք ընծայեն Իրաքի մէջ քրտական պետութիւն մը հիմնելու խոստումներուն: "Անցեալին հայ ժողովուրդը վստահեցաւ անգլիական, ֆրանսական, ռուսական, գերմանական խոստումներուն. կարծեց թէ անոնք զինք պիտի փըրկեն օսմանեան զուլումէն. մինչդեռ այդ ուժերը իրենց գործը, հաշիւները փակեցին ու մեկնեցան: Այսօր նոյն պարագան կը կրկնուի Քիւրտերուն ու ԱՄՆ-ու հետ" ըսած է ան:

ԱՄԵՐԻԿԱՅԻ վեց նախկին սպաներ, այժմ հանգստեան կոչուած, բազմաթիւ հարցազրոյցներով եւ մամուլին տուած յայտարարութիւններով կը պահանջեն, որ քաշուի պաշտպանութեան նախարարը՝ Տոնալտ Ռամսֆելտ: Դէպքը նախընթաց չունի, նոյնիսկ եթէ Պուշ զօրավիգ է իր նախարարին: Գլխաւոր ամբաստանութիւնները կը վերաբերին Իրաքի պատերազմին: Ռամսֆելտ անգիտացած է տեղւոյն վրայ գտնուող զինուորականներու խրատները եւ ինք Իրաքի գործողութիւնները վարած է անհոգութեամբ եւ ամբարտաւանութեամբ, հիմնուած սուտերու վրայ: Հարցը մեծ աղմուկ հանած է ԱՄՆ-ու մէջ: Նախագահը ընդհատած է զատկուան իր արձակուրդը եւ ինք ու կառավարութիւնը կը ջանան սահմանափակել վնասները: Վեց զօրավարները ծանօթ եւ ձեռնհաս դէմքեր են: 2003 Մարտէն ի վեր, ոչ զինուորական իրաքցի մեռեալներու պաշտօնական թիւը 39 հազար է, ամերիկացի 2372 զինուոր մեռած է եւ 251 միլիառ տոլար արժած է Ուաշինկթընի:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ, իր առաջին զատիկը տօնեց Ապրիլ 16ին, իր ծննդեան 79րդ տարեդարձի օրը: Օրհնութիւնը տուաւ 62 լեզուներով, բայց, իր ելոյթը առաւելաբար քաղաքական բնոյթ ունէր: Կոչ ըրաւ որ համերաշխութիւն ստեղծուի ժողովուրդներուն, կրօնքներուն եւ մշակոյթներուն միջեւ: Խիստ արտայայտութիւն ունեցաւ հիւլէական տագնապին շուրջ, առանց Պարսկաստանի անունը տալու: Մաղթեց նաեւ որ Իտալացիք հանդարտութիւնը վերագտնեն, քանի կաթոլիկներու պետն ըլլալով հանդերձ, Հռոմի եպիսկոպոս է:

ՏՐԱՊԻԶՈՆԻ մէկ դատարանը, Ապրիլ 13ին, 14 ամիս բանտարկութեան դատապարտած է ձախ հոսանքին պատկանող զինուորեալ մը, որ հաւկիթ մը նետած էր Էրտողանի ուղղութեամբ, 2005 Յունիսին, առանց թիրախին հասնելու: Տրապիզոնի մէկ ճամբուն բացման արարողութեան ատեն է որ երկու ցուցարարներ հակակառավարական լոզունգներ բացագանչած են եւ երկուքէն մէկը հաւկիթ մը նետած է:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ մէջ, Ապրիլ 14ին, երեք յարձակումներ գործուած են Ղպտի երեք եկեղեցիներու դէմ եւ մէկ քրիստոնեայ մեռած է: Հակազդեցութիւնը անմիջական եղած է, հակառակ անոր որ Պետութիւնը եւ Պատրիարքը հանդարտութեան կոչ ըրած են: Հակայարձակումներէ մէկ մահմետական մեռած է: Քրիստոնեայ Ղպտիները բնակչութեան 5էն 10%ը կը կազմեն:

ԴԱՆՈՒԲԻ աննախընթաց յորդումը աւեր գործած է Ռումանիա, Պուլկարիա եւ Սերպիա, ուր բնակիչները տեղահան եղած են, շրջաններու մէջ, ուր բնակարանները ջուրերու տակ մնացած են:

ՆԻՍԻ ՄԷՋ, իր մահկանացուն կնքած է Մարի-Ֆրանս Սթիրպուա, 61 տարեկանին զոհ խլիրդի: Այրին է Ժան-Մարի լը Փէնի աջ բազուկին որ զոհ գացած էր կառքի արկածի մը: Մարի-Ֆրանս Սթիրպուա վերջին շրջանին խիստ կերպով քննադատած էր Ժան-Մարի լը Փէնը եւ կախակայուած էր քաղաքական բիւրոյէն:

ԽՈԴՈՐԿՈՎՍԿԻ յարձակումի ենթարկըւած է իր խուցին մէջ, բանտի իր ընկերոջ կողմէ, Ապրիլ 13ին, բայց, որոշած է բողոք չներկայացնել, հակառակ անոր որ վիրաւորուած է: Եուկոսի նախկին հիմնադիրը բանտն է Մոսկուայէն 6500 քիլոմեթր արեւելք, Սիպիրիոյ մէջ:

ԼԻՈՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ՊՂԾՈՒԱԾ

Ցեղասպանութեան զոհերուն յիշատակին բարձրացած նորակառոյց յուշարձանը որուն բացումը պիտի կատարուի քանի մը օրէն, Ապրիլ 24ին, պղծուած է Թրքական ուրացումը արտայայտող արձանագրութիւններով: "Ցեղասպանութիւն գործուած չէ" ու այլ զազրելի գըրութիւններ ձգած են պղծողները, յուշարձանին քարերուն վրայ:

Հայ դատի Ֆրանսայի յանձնախումբը Ապրիլ 17 թուակիր հաղորդագրութեամբ մը ցասում եւ ընդվզում յայտնած է կատարուածին, դատապարտելով արարքը: Ըսուած է որ երկրին բարձրաստիճան ղեկավարներէն կը պահանջուի ամէն միջոց ի գործ դնել, անյապաղ գտնելու համար պղծողները եւ ամբողջ Ֆրանսայի տարածքին երաշխաւորելու մօտակայ Ապրիլ 24ի նշումներուն համար ապահով մթնոլորտ մը:

ԲԱՔՈՒ

ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանական թերթերը (Ապրիլ 14) "անարդար" որակումով կը ներկայացնէին հունգարական դատարանին վճիռը որով հայ սպայ Գ. Մարգարեանի ոճրագործը ցմահ բանտարկութեան դատապարտուած էր: Նոյնիսկ կ'ըսուէր թէ Բաքուի մէջ բողոքի ցոյց մըն ալ կատարուած է: "Հայէլի" օրաթերթը լուրը տալէ ետք ափսոսանք կը յայտնէր որ տեղական ու արտասահմանեան դրամատուներու մէջ միլիոններու տէր, կամ մէկ գիշերուան ընթացքին հազարաւոր տոլարներ մսխող մեծահարուստները իրենց ունեցածին աննշան մէկ տոկոսով չեն մասնակցած ոճրագործին պաշտպանութեան: Կ'ըսէր թէ անոնք օրինակ, կըրնային լրագրողներու խումբ մը ղրկել Պուտափեշտ, որպէսզի հունգարական ատեանը պարտադրէին "առարկայական լուսաբանութեան":

Որպէս յաւելեալ տեղեկութիւն, թերթը կը գրէր թէ դատապարտեալին Ազրպէյճան փոխադրութիւնը կարելի է, բայց ատոր համար Բաքուի ու Պուտափեշտի միջեւ պէտք է բանակցութիւն տարուի ու համաձայնութիւն գոյանայ: Իսկ այդ բաները առնուազն 6-7 տարի կը տեւեն:

ԹՈՒՐՔԻԱ

«ԱՐԱՐԱՏ»Ի ՀԵՌԱՍՓՌՈՒՄԸ

Ինչպէս յայտարարուած էր Թրքական հեռատեսիլի Քանալթիւրք կայանը Ապրիլ 13 Հինգշաբթի երեկոյեան հեռասփռած է Ա. Եղոյեանի "Արարատ"ը: Հակառակ գրաքննութեան, կըրճատումի չդիմելու յայտարարութիւններու, որոշ տեսարաններ հանուած են ժապաւէնէն: Իսկ այն տեսարաններուն մէջ ուր հայհոյանքներ կային, ձայնը մարած են: Թրքական ոչ մէկ ընկերութիւն թարգմանութեան գործը ստանձնած ըլլալով, տեսարաններուն մակագրութիւնները պատրաստած է ինքը կայանը:

Կայանին պատասխանատուն հեռասփռումէն առաջ քանիցս կրկնած է թէ դիտողը բնաւ պէտք չէ մոռնայ որ սուտերու վրայ հիմնուած աշխարհակալ քարոզչութեան գործ մըն է տեսածը: Թելադրած է նաեւ ցուցադրուած վայրագութեան դէմ չվրդովիլ, շեշտելով որ ամէն բան սուտ է հոն ու այդ կարգի բաներ չեն պատահած:

Ֆիլմին յաջորդած "Ճշմարտութիւններ" յայտագրին վերջին պահուն մասնակցելէ հրաժարած է Հ. Տինք: Հանդըստեան կոչուած զօր. Ք. Եաւուզ եւ շարժանկարի քննադատ Ն. Սէօնմէզ դէմ առ դէմ մնացած են: Առաջինը ժապաւէնին ցոյց տուածներուն դէմ ժխտողական երկար մենախօսութիւն մը կատարած է, կրկնելով Թրքական թէզը թէ ոչ մէկ դիւանի մէջ ցեղասպանութեան պնդումը վաւերացնող փաստ կայ:

Ն. Սէօնմէզ ըսած է թէ Ա. Եղոյեանի նման կարող բեմադիրի մը ամէնէն տկար գործը կրնայ նկատուիլ "Արարատ"ը: Ան նաեւ քննադատած է կայանին պատասխանատուն որ հեռասփռումէն առաջ իր ժխտական քարոզչութեամբ կանխակալ կարծիքներ թելադրած էր դիտողներուն, անարդար գտնուելով:

ՄՈՍԿՈՒԱ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ երիտասարդութեան "Միտք" միութիւնը Ապրիլ 13ին կազմակերպած է հանդիպում մը Մոսկուայի միջազգային իրաւունքի եւ քաղաքագիտութեան հիմնարկի տնօրէն փրոֆ. Եուրի Բարսեղովի հետ: Քննարկումի նիւթ եղած են.

ա. Հայոց ցեղասպանութիւնը որպէս մարդկութեան եւ մարդկայնութեան դէմ ոճիր,

բ. Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ Թուրքիոյ իրաւական պատասխանատուութիւնը,

գ. Թուրքիոյ կողմէ պաշտօնապէս ճանաչումն ու դատապարտումը,

դ. Ցեղասպանութեան հետեւանքներուն արդարացի դարմանի ուղիները,

ե. Հայ դատի լուծումը միջազգային իրաւունքի հիմով:

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆԱՏԷՐ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Ապրիլ 15ին Մոսկուայի օղակաձեւ կառուղիին վրայ անծանօթներ սպաննած են քաղաքին ճաշարաններէն մէկուն տէրը որ կը կոչուի Օհանեան: Իրեն հետ վիրաւորուած են անոր հինգ ծանօթները:

ՍՈՒՐԻԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԻՍ ՇԱՔԼԵԱՆ ծնած է Զօրք Մարզպան (Տէօրթ Եօլ) 1900ին: Զբաղած է ուսուցչութեամբ Աղեքսանտրէթի եւ Դամասկոսի մէջ: Եղած է խմբագիր Հալէպի "Եփրատ" օրաթերթին 1929ին, 1931-1932ին, 1936-1937ին եւ 1943-1945ին: Մահացած է 1959ին:

Բանաստեղծական երկու գիրքերն են "Դեղին երգեր" հրատարակուած Հալէպ 1927ին, "Միջինք" 1943ին, ունի պատմուածներու հաւաքածոյ մը՝ "Կար ու չըկար" հրատարակուած 1946ին եւ հէքեաթներու հաւաքածոյ մը՝ "Բախտին անիւը" 1950ին:

Հայաստան ներգաղթած է եւ հոն լոյս ընծայած հէքեաթներու գիրքեր եւ ծաւալուն վէպ մը՝ "Ֆելլահներ" խորագրով, 1958ին:

ԱՐՄԷՆ ԱՆՈՅՇ ծնած է 1907ին, Ուրֆա: Հրաշքով կը փրկուի ջարդերէն եւ Հալէպ կ'ապաստանի: Նախնական կրթութիւնը կը ստանայ Հալէպի որբանոցներուն, ապա Հայկազեան վարժարանին մէջ, զոր կ'աւարտէ 1923ին եւ Պէյրութ կը մեկնի ուսումը շարունակելու:

Թղթակցութեամբ կը շարունակէ բարձրագոյն ուսումը, միաժամանակ ուսուցչական եւ տնօրինական պաշտօններ վարելով Սուրիոյ զանազան շրջաններու վարժարաններուն մէջ: Հայկազեան վարժարաններու երկարամեայ տնօրէն եղած է:

Ունի քերթողական չորս հատորներ՝ "Օրերուն հետ", "Սրտերուն երգը", "Դարերու երգը" 1945 եւ "Երկիր խռովքի" 1955: Ունի նաեւ Ուրֆայի հերոսամարտին նուիրուած արձակ երկ մը՝ "Այրուած քաղաքի մը պատմութիւնը" 1948:

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ծնած է Այնթէպ, 1910ին:

1912ին ընտանիքին հետ Հալէպ կը փոխադրուի եւ կը յաճախէ տեղւոյն Հայկազեան վարժարանը, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1925ին: 1931ին կ'աւարտէ Հալէպի Թէր Սէնթ (Սուրբ Հող) երկրորդականը, իսկ 1935ին կը վկայուի Մարսէյլի ճարտարագիտական համալսարանէն: Մահացած է 2004ին, Պէյրութ:

1933-1944 թուականներուն աշխատակցած է սփիւռքահայ մամուլին Ե. Ներսէհ գրչանունով:

Ունի չափածոյ եւ արձակ տասնեակ մը գիրքեր.

"Ես ինծի հետ", քերթուածներ, Հալէպ, 1944, 126 էջ:

"Երգ երգոց", պոէմ, Փարիզ, 1964, 48 էջ:

"Պրիսմակ", քերթուածներ, Պէյրութ, 1966, 118 էջ:

"Մանուկն ու մարդը", պոէմներ, Պէյրութ, 1971, 115 էջ:

"Քառուղի", քերթուածներ, Երեւան, 1974, 114 էջ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ ծնած է 1912ին Կիւրին: Ճաշակած է Եղեռնի եւ գաղթի արհաւիրքը: Ապրած է Հալէպի որբանոցներուն մէջ: Նախակրթութիւնը ստացած է Հալէպի մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանէն ներս: Մեռած է Փարիզ, 1989ին:

Իր առաջին քերթողագիրքը՝ "Առագաստներ" լոյս կը տեսնէ Հալէպ 1939ին: Իր "Թուղթ առ Երեւան" երկարաշունչ քերթուածը կ'արժանանայ բազմաթիւ հրատարակութիւններու:

Ծառուկեան իր ամբողջ կեանքը նուիրած է "Նայիրի" գրական-մշակութային ամսագրին, որ տասը տարիներ Հալէպի մէջ լոյս տեսնելէ ետք, խմբագրին Պէյրութ փոխադրութեամբ կը վերածուի շաբաթաթերթի:

Հեղինակ է արձակ եւ չափածոյ բազմաթիւ գործերու.

"Եղերաբախտ քերթողներ" առջինեկ գործը հրատարակած է 1931ին, Վ. Խաժակ ծածկանունով: Ապա "Մոխրաման" վէպը, "Առագաստներ" բանաստեղծական հատորը, "Մանկութիւն չունեցող մարդիկ" եւ "Թուղթ առ Երեւան" երկարաշունչ քերթուածը: Աւելի ուշ՝ "Հին երազներ, նոր ճամբաներ", "Երազային Հալէպը", "Նոր Հայաստան, նոր Հայեր", եւ "Վերջին անմեղը" արձակ գործերը:

ՀԱՅԿ ՊԱՐԻԿԵԱՆ ծնած է Եողկաթ, 1914ին: Տարագրութեան Հալէպ հաստատուած է ծնողքին հետ եւ յաճախած տեղւոյն Հայկազեան դպրոցն ու Ֆրէր Մարիստներու գոլէժը: Եղած է ուսուցիչ, հրապարակագիր, խմբագիր եւ հեղինակ գրական, մենագրական եւ մատենագրական երկերու:

1962ին լոյս տեսած է բանաստեղծութիւններու անդրանիկ ժողովածուն, "Այգեկութք" խորագրով, 1970ին "Լեւոն Բաշալեանց" մենագրութիւնը, իսկ 1973ին՝ "Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու" աշխատութիւնը: Հրատարակութեան պատրաստ են "Պատմուածքներ"ն ու "Ծածկանուններու բառարան"ը:

ԱՐԱՄ ԱՐՄԱՆ բուն անունով Սուրէն Պասմաճեան: Ծնած է Ալեքսանտրէթ 1923ին: 1939ին Հալէպ կը հաստատուի ծնողքին հետ, ուր կը զբաղի ուսուցչութեամբ, ապա Հայաստան կը ներգաղթէ 1946ին:

1957էն մինչեւ 1994ին Ամերիկա գաղթելը եղած է Երեւանի "Գրական թերթ"ի ոճաբան-սրբագրիչը: Մահացած է Ամերիկա:

Հրատարակած է քերթողական հինգ գիրքեր, առաջինը Հալէպի, մնացեալները Երեւանի մէջ.

"Խաչբուռ" 1942, "Վերադարձ" 1949, "Հայրենիքի եւ սիրոյ երգեր" 1955, "Սիրոյ երգեր" 1956 եւ "Քերթուածներ" 1965:

Վերջերս, 2005 թուականին Գ. Մելտոնեցի գրական մրցանակին միջոցով լոյս տեսաւ Արամ Արմանի քերթուածներուն հաւաքածոն "Քերթուածներ" խորագրով, Աբրահամ Ալիքեանի խմբագրութեամբ, Անթիլիասի տպարանէն:

ԶԱՐԵՀ ՄԵԼՔՈՆԵԱՆ ծնած է Հալէպ 1923ին: Նախակրթութիւնը ստացած է Հայկազեան վարժարանէն, իսկ երկրորդականը՝ Մխիթարեան հայրերու դպրոցէն եւ Լիսէ Ֆրանսէէն: Վկայուած է Կիպրոսի Մելգոնեան կրթ. հաստատութենէն: Անգլիական գրականութեան մէջ պսակաւոր արուեստից տիտղոսով կը վըկայուի Պէյրութի Ամերիկեան համալսարանէն (AUB), իսկ մագիստրոսութեան կ'արժանանայ մանկավարժութեան մէջ: Կը վարէ ուսուցչական եւ տնօրինական պաշտօններ Պէյրութի եւ Ամերիկայի հայկական վարժարաններուն մէջ:

Խմբագրած է "Շիրակ" գրական ամսագիրը եւ աշխատակցած Սփիւռքի թերթերուն:

Բեղուն է Զ. Մելքոնեանի գրիչը. ունի քերթողական բազմաթիւ հատորներ՝ "Ես եւ մարդիկ" 1943, "Ջրհեղեղէն յետոյ" 1947, "Երջանկութիւն" 1950, "Քերթըւածներ" 1962, "Ափերը մինչեւ անկարելին" 1967, "Լեռներ վիհերու մէջ" 1978, "Ծնծղաները ոչինչին" 1982, "Կեանքով եւ մասամբ նորին" 1995, "Բաւիղէ բաւիղ" 1998, "Հոն դէպի" 2000:

ԳԱՌՆԻԿ ԱԴԴԱՐԵԱՆ (1925-1986) ծընած է Հալէպ: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Հայկազեան Ազգ. վարժարանին, ապա Յիսուսեան հայրերու Ֆրանսական վարժարանին մէջ:

Տակաւին 16 տարեկան պատանի, քերթըւածները լոյս կը տեսնեն "Հայ գիր" պարբերաթերթին մէջ:

Հրատարակուած ունի "Պատէշին վըրայ" (Պէյրութ 1956), "Մատեան ցԱզջ եւ հաստուցման" (Պէյրութ, 1965), "Ապրիմ մեռնիմ" (Երեւան, 1968) եւ յետ մահու "Բանաստեղծութիւններ" հաւաքածոն (Պէյրութ, 1988):

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԷՐԶԵԱՆ ծնած է Հալէպ 1927ին: Շրջանաւարտ եղած է Հալէպի ամերիկեան գոլէճէն: 1946ին Հայաստան ներգաղթած է:

1947-1952 կը հետեւի Երեւանի համալսարանի բանասիրական դասընթացքներուն:

Հալէպի մէջ լոյս տեսած է իր առաջին քերթողագիրքը՝ "Արեւելք" 1946ին, իսկ Երեւանի մէջ նոյն գիրքը լոյս կը տեսնէ 1948ին:

Ունի այլ քերթողագիրքեր եւս՝ "Երգեր" 1952, "Յուշաքար" 1955, "Բանաստեղծութիւններ" 1967:

ՆՇԱՆ ՇԱՀԷՆ բուն անունով Նշան Թէքկէլեան: Ծնած է Հալէպ 1928ին: Աւարտած է Կիւլպէնկեան վարժարանը, ապա գացած է Կիպրոս, հետեւելու Մելգոնեան վարժարանի դասընթացքներուն: Սակայն մեկնած է Հայաստան, կիսաւարտ ձգելով ուսումը:

Զբաղած է ուսուցչութեամբ Հալէպի եւ Երեւանի մէջ:

Մեկնած է Ամերիկա եւ հոն ալ մահացած 1996ին:

Հալէպի մէջ հրատարակած է բանաստեղծական երկու գիրքեր՝ "Դէպի գարուն" 1948ին եւ "Բողկումներ" 1958ին. "Մինչեւ լուսաբաց" հատորը հրատարակուած է Երեւան, 1962ին: Ամերիկայի մէջ հրատարակած է ինքնակենսագրական հատոր մը՝ "Փշուր-փշուր մանկութիւն" 1993ին եւ թատերգութիւն մը՝ "Փառանձեմ թագուհի" 1995ին:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ ծնած է Հալէպ 1928ին: Յաճախած է տեղւոյն Ազգ. Կիւլպէնկեան վարժարան, ապա Ամերիկեան գոլէճը, ուրկէ կիսաւարտ մեկնած է Կիպրոս եւ ուսանած Մելգոնեան կրթ. հաստատութեան մէջ:

Տարի մը հետեւած է Սոֆիայի (Պուլկարիա) համալսարանի քաղաքատնտեսութեան, ապա տարի մը Երեւանի համալսարանի բանասիրական ճիւղերուն: Վկայուած է բժշկական համալսարանէն 1970 թուականին:

Բանաստեղծական իր հրատարակած գիրքերուն թիւը քսանի կը հասնի, առաջինը՝ "Աստղերու ճամբան" հրատարակուած 1960ին:

Բեղուն գրիչ մը ունի Թ. Թորանեան, որ գրական զանազան ճիւղերու մէջ բերք տուած է:

Գրական գործունէութեան 50ամեակին առիթով արժանացած է Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. կաթողիկոսի կոնդակին եւ Ս. Սահակ - Ս. Մեսրոպ շքանշանին:

Երեւանի պետական բժշկական համալսարանը Թորանեանին շնորհած է Պատուոյ դոկտորի դիպլոմ 2000 թուականին:

Կը շարունակէ գրել աշխատակցելով Հայաստանի թէ Սփիւռքի տասնեակ մը թերթերու:

ԺՈԶԷՖ (ՎԱՀՐԱՄ) ՀԱՃԵԱՆ ծնած է Հալէպ 1935ին:

Հեղինակ է աւելի քան տասը գիրքերու, որոնցմէ առաջինը՝ "Բարձունքներու կատարին" հրատարակուած է Հալէպ 1957ին:

Հայաստան ներգաղթելէ ետք, անցած է Ամերիկա, ուր կ'ապրի եւ կը շարունակէ գրել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՈՅԵԱՆ ծնած է Ագէղ 1937ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն աւետարանական վարժարանին մէջ: Նիւթական նեղութեան պատճառով լքած է ուսումը եւ հետեւած արհեստի:

1953ին Հալէպ կը փոխադրուի: 1954ին մաս կը կազմէ Հալէպի Գրական Շրջանակին. այնտեղ է, որ կը սկսի գրական իր գործերուն եւ քաջալերանք կը ստանայ շրջանակէն:

1961ին կը հրատարակէ իր միակ քերթողագիրքը՝ "Հեռուներու կապոյտին" խորագրով:

1962ին կը փոխադրուի Պէյրութ եւ կը հետեւի Յիսուսեան հայագիտական հիմնարկի դասընթացքներուն, զորս կ'աւարտէ 1967ին:

1976ին Պրազիլ կը փոխադրուի եւ Սան Փաւլոյի մէջ կայք կը հաստատէ: Երբեմն դասախօսութիւններով հանդէս կու գայ:

ՄԱՆՈՒԷԼ ՔԷՕՍԷԵԱՆ ծնած է Հալէպ 1939ին: Կրթութիւնը ստացած է Հալէպ, Պէյրութ, Անթիլիաս, Երուսաղէմ, Նիկոսիա: Համալսարանական ուսումը Երեւան ստացած է:

Կ'աշխատակցի հայ պարբերական մամուլին: Հրատարակած է "Հրիտակ" (1988) եւ "Շաղաւոտ" (1989) գիրքերը:

ՅԱԿՈԲ ՔԷՕՍԷԵԱՆ ծնած է Հալէպ, 1944ին: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Հալէպի Լ.Ն.Գ.Ժ. վարժարանին մէջ: Երեւանի համալսարանին մէջ հետեւած է ռուսական գրականութեան ճիւղին: Աշխատակցած է "Նայիրի" եւ "Սփիւռք" շաբաթաթերթերուն քերթուածներով եւ յօդուածներով: Մահացած է 1976ին:

ՇԱՀՊԱՆ բուն անունով Խաչիկ Իշխանեան: Ծնած է Հալէպ: Նախնական կրթութիւնը քաղաքին մէջ ստանալէ ետք, կ'ուսանի Անթիլիասի դպրեվանքը: Քանի մը տարի Պէյրութի դպրոցներուն մէջ պաշտօնավարելէ ետք որպէս ուսուցիչ, կ'անցնի ԱՄՆ ուր կը բնակի մինչեւ այսօր:

Աշխատակցած է եւ մաս կազմած սփիւռքահայ կարգ մը թերթերու խմբագրութեանց: Ունի քանի մը քերթողագիրքեր՝ "Վերջալոյս" (որուն յառաջաբանը Վահէ Օշական գրած է), "Մոմեր", "Ներհակումներ", "Ամերիկա", "Արդարութիւն" եւ այլն:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Թեկնածութիւնը մարդու յաջողութեան բանալիներէն մէկն է: Նպատակ հետապնդողներու՝ աթոռի մը, պաշտօնի մը, կամ նոյնիսկ կեանքի ընկերոջ մը տիրանալու, թեկնածու ըլլալը յաջողութեան սկիզբն է իբրեւ հիմնական նախապայման. Բայց թեկնածութիւնն ալ իր սահմանափակումները ունի: Այսպէս, ամէն բանի կարելի է թեկնածու ըլլալ, բացի բարոյական արժանիքներէն եւ բնածին խելացութենէն, որոնց որքան ալ թեկնածու ներկայանանք ու մնանք, չենք կըրնար տիրանալ անոնց:

Բարոյական արժանիքներէ զուրկ մարդոց համար արդարութիւն, ճշմարտութիւն, ազնուութիւն, ընկերասիրութիւն, երախտագիտութիւն եւ նման ...ութիւններ իմաստազուրկ բառեր են: Անոնք կը մտահոգուին միմիայն իրենց սեփական շահով ու գրաւելիք աթոռով, առանց դոյզն չափով մտահոգուելու բարոյական հասկացողութիւններով: Այդպիսիները դիւրաւ կրնան մոռնալ ոչ միայն վերոյիշեալ բարոյական հասկացողութիւնները, այլ նոյնիսկ նախկին բարեկամները, որոնք իրենց նեղ օրերուն նիւթապէս ու բարոյապէս օգնած էին: Ուրիշներու՝ բոլոր մարդոց համար... բոլորն ալ վերոյիշեալները ...

բովհետեւ, այդպիսիներուն համար, սեփական շահն ու աթոռը ապահովելէն յետոյ, մնացեալները՝ բարոյական սկզբունքներ ու բարեկամներ, օգտագործելի տարրեր են միայն իրենց նպատակին հասնելու համար:

Այդպիսիները ազգային, ընկերային ու համամարդկային յարաբերութիւններու ծիրին մէջ պատեհապաշտութիւնը հիմնական քաղաքականութիւն կը նկատեն, որ ըստ իրենց՝ դիւանագիտութիւն ու ճկունութիւն կը կոչուի: Պարագաներուն համաձայն, ի վնաս սկզբունքներու եւ բարոյական հասկացողութեան քայլեր առնելը իրենց տեսակէտով խելացութիւն է: Այսինքն, հարուստ ու դիրքերու տէր ծանօթներու շողոքորթելը, զանոնք խնկարկելը ու անոնց սխալներուն խսկ աչք գոցելը իմաստութիւն եւ "ժամանակի հետ քայլ պահելու" կարողութիւն կը պահանջէ, ինչ որ իրենց իւրայատկութիւնը կը նկատեն: Այս պատեհապաշտներուն համար նոյնքան բնական եւ խելացի գործ է նիւթական ու բարոյական դիրքեր չունեցող, կամ զանոնք կորսնցուցած նախկին բարեկամները լքել՝ աւելի զօրաւոր ու շահաբեր նորերու շուրջ դառ-

նալու համար: Շահու ու աթոռի հետամուտ այս պատեհապաշտները չատ հանգիստ եւ առանց խղճահարութեան, վերադասաւորելով իրենց ընկերային յարաբերութիւնները, կը մնան դիրքեր գրաւած նորերուն, եթէ նոյնիսկ դիրքերը կորսնցուցածներուն մէջ կը գտնուին իրենց բարեկամներն ու բարերարները, որոնք անտեսումի ու նոյնիսկ հալածանքի կ՚ենթարկուին անոնց կողմէ:

Ասոնք չահերու եւ աթոռի յաւիտենական ակնկալութեամբ ապրող թեկնածուներ են, որոնք յաճախ ալ կը մնան թեկնածու, առանց հասնելու իրենց նպատակին: Որովհետեւ նոր դիրքերու հասած պաշտօնակալները երբեմն բաւարար չափով կիրթ են գնահատելու նոր թմբկահարներու յարուցած աղմուկը, կշռելու համար անոնց օգուտն ու վնասը եւ թէ որքա՛ն անկեղծ ու անշահախնդիր են անոնք:

Եւ որպէսզի նոր "պոս"երուն աւելի հաճելի երեւան թեկնածուները, խնկարկումի եւ թմբկահարումի իրենց ծառայութեան զուգահեռ հալածանքի արշաւ մըն ալ կը սկսին բոլոր անոնց դէմ, որոնք իրենց ծառայած "պոս"երուն չեն խնկարկեր, կամ նոյնիսկ անոնց տեսակէտները չրամնելու յանդգնութիւնը կ՚ունենան: Այս պատճառով ալ անոնք գոնէ դուրս պարտելով տարակարծիքներուն մասին բերանացի "լուսաբանութիւններ" կու տան, թէեւ ո՛չ միշտ յաջողութիւն գտնելով:

Վերջապէս, թեկնածուները ամէն միջոցի կը դիմեն, իրենց "պոս"երուն "աչքին վրայ յօնք կայ" ըսողները, կամ այլախոհ տարրերը լռութեան դատապարտելու համար, առանց գիտակցելու որ ազատ աշխարհի մէջ կ՚ապրինք, ուր թապուներ գոյութիւն չունին:

Բայց ոչ մէկ ծառայութիւն նպատակին կրնայ հասնիլ եւ փրկարար դեր կատարել, եթէ անոր պէտք ունեցողներու արարքները արդար ու չիտակ չեն, եւ մանաւանդ, եթէ այդ ծառայութիւնները կը մատուցուին չահախնդիր ու պատեհապաշտ թեկնածուներու կողմէ:

Որովհետեւ այդպիսիներուն ծառայասիրութիւնը պայմանաւոր է, չահադիտական եւ աթոռամոլ հաշիւներու կապուած:

Թեկնածուները Աստուծոյ երկրպագելն իսկ հաշիւով կը կատարեն, անդին աշխարհին մէջ ալ աթոռ մը ապահովելու ակնկալութեամբ...:

Է՛հ, ի՛նչ երկնցնեմ, հաւանաբար դուք ալ հանդիպած էք նման տիպարներու, որոնք ամէն տեղ են: Ներկայ աշխարհին մէջ դժուար է "հնամենի" բարոյական սկզբունքներու կառչած "ժամանակավրէպ" մարդիկ գտնել, բայց չատ են "արդիական" հոպիտները:

Այդպէ՛ս են աթոռի հետամուտ, աթոռ երազող յաւերժական թեկնածուները:

Հ. Ն.

ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԸ ԵԳԻՊՏՈՍ ՈՒ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեցանք եւ կը հետեւինք լուրերու, ըստ որոնց ի միջի այլոց Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Տնօրէններու Կեդրոնական Խորհուրդին (ՏԿԽ) ցանկութեամբ ՀԲԸՄ-ին հիմնարկութեան հարիւրերորդ տարեդարձը պիտի տօնուի Եգիպտոսի մէջ, ուր մարմին առած էր Հայոց մեծագոյն այս բարեսիրական կառոյցը: Անոր հիմնարկութենէն 100 տարի յետոյ փոխուած են, ինչպէս այսօր, Սփիւռքի ժողովրդագրական եւ քաղաքական քարտէսը, նաեւ մտայնութիւնները, հանրային կարծիքներն ու պահանջները: Ցաւս այս փոփոխութիններուն հայկական որակուած էութեան տեւականութիւնը առաջադրող զանազան առանցքներ կան: Այդ առանցքերէն մին է ՀԲԸՄ-ի այժմու ՏԿԽ-ին որդեգրածը, որով ան յարմար դատած է հայկական վարժարան փակելը: Փակել նոյնիսկ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը (ՄԿՀ), որ կը պատկանի ո՛չ ՀԲԸՄ-ի, ոչ ալ անոր ՏԿԽ-ին. եթէ նոյնիսկ անոնց անդամները կամ անդամներուն ընտանեկան պարագաներն ու բարեկամները կաբեւոր գումարեր յատկացուցած ըլլան ՀԲԸՄ-ի գանձին: Միթէ, զոր օրինակ, Նիւ Եորքի հանրային գանձին կարեւորագոյն տուրքը կամ նուէրը վճարողը տէ՞ր կը դառնայ քաղաքին կամ նահանգին, իւրայատուկ օրէնք ու կանոններ հաստատելով տարածքի բնակիչներուն վրայ: Խոստովանելի նման, օրէնք կամ կանոններ ընթացքի մէջ չեն Արեւմտահայոց ապրած երկիրներուն մէջ:

ՀԲԸՄ-ը հիմնուած է նախաձեռնութեամբը յառաջդիմասէր անձնաւորութիւններու: Անոնց մօքի լայն հորիզոնը բնութագրուած էր հանրային գործունէութեան թափանցիկ հաշուեցոյց եւ հաշուեկշիռներով: Իսկ ներկայիս ՀԲԸՄ-ի ՏԿԽ-ին, գոնէ Մելգոնեան Հիմնադրամին ու ՄԿՀ-ին առընչեալ իր մատակարարի գործունէութիւնը կարելի չէ ըսել որ թափանցիկ հաշուեցոյցով ու հաշուեկշիռով մը կը մատուցուի հանրութեան: Ի դէպ՝ սոյն հաշուեցոյցն ու կշիռը կարելի չէ լոկ գանձատրային (ֆինանսիէ) համարատուութեամբ կատարել: ՏԿԽ-ի անդամներն ու անոնց համակիրները եթէ կ՚ուզեն երկրամասի մը հայկական վարժարանները փակել ու աշակերտները պարտադրաբար ղրկել ոչ-հայկական վարժարաններ ի հեճուկս ծնողներու եւ աշակերտներու կամքին, առնուազն գարմանք կրնան պատճառել դէտերու: Այս ու նման արարքներ թո՛ղ ըլլան՝ ապահայացման իրենց տեսութիւնները կիրարկելով կամ իրենց կիրքերուն գոհացում տալու ի խնդիր, թո՛ղ ըլլան այնքան ատեն որ ընդդիմացող արդարադատութեան մը չեն բախիր: Ցամենայն դէպս այդպիսի գործունէութիւն մը Մարդու Իրաւունքներու դէմ մեղանչել կը նշանակէ: Իսկ այդ մեղանչումը ՀԲԸՄ-էն կամ անոր վստահուած հիմնադրամէ մը գանձատրել կը նշանակէ քրէական յանցանք:

ՏԿԽ-ն ու իր բարեկամները ՄԿՀ-ն բնաջնջելու իրենց նպատակին ուղղուելով հանդերձ, ՀԲԸՄ-ի հիմնարկութեան 100րդ տարեդարձը տօնելու կը փութան Եգիպտոս: ՀԲԸՄ-ի Եգիպտոսի վարչութիւնն ու այլ անդամներն իբրեւ ի՞նչ կ՚ընդունին ՏԿԽ մը, որուն օրինաւորութիւնը կը կարօտի վաւերականութեան: Եգիպտոսի ՀԲԸՄ-ի գանձէն մասնակցութիւն մը պիտի ըլլա՞յ այն տօնակատարութեան հանդիսութեանց, զորս ՏԿԽ-ն համարձակած է կազմակերպել: Եգիպտոսի ՀԲԸՄ-ը պիտի մեղսակցի՞ ՄԿՀ-ն եւ այլ հայկական վարժարաններ բնաջնջող ՏԿԽ-ին ու անոր բարեկամներուն, մասնակցելով անոնց կազմակերպած յուղարկաւորութեան հանգոյն արարողութիւններուն:

Մինչդեռ յանձնարարելի է, որ ՀԲԸՄ-ի հիմնարկութեան 100րդ տարեդարձը տօնուի աշխարհի բոլոր ծագերուն, բոլոր Հայոց կողմէ, առանց կրօնական, ընկերային ու քաղաքական դաւանանքի խտրութեան, բայց առանց ՏԿԽ-ին ու անոր բարեկամներուն, որոնք կը յանդգնին ձեռնարկել Հայոց Սփիւռքը քանդելու, հայկական վարժարաններ բնաջնջելով: Յանձնարարելի է նաեւ որ Եգիպտոսի ՀԲԸՄ-ը իր նիւթական յատկացումները ընէ միայն Միութեան էական սկզբունքներուն անսալով: Ինչպէս ան, մօտաւոր անցեալին, եգիպտահայ մամուլին լիակատար հաւաքածոն փրկեց հաւանական կորուստէ մը, արդիական միջոցառումով եւ ՀԲԸՄ-ի վայել արժանաւորութեամբ: Այսպէսով, Հայոց մշակոյթին, երկար ու յաճախ դժուարութիւններով, նոյնիսկ ողբերգութիւններով կերտուած ճանապարհին ապագայ ուղեւորներուն ընծայեց կարելիութիւն մը եւս, որ ուղեցոյց մըն ալ է:

Սակայն նոյն գնահատականով կարելի չէ արտայայտուիլ Գահիրէի Հայոց գերեզմանատան վիճակին մասին: Հոն ամփոփուած են աճիւնները, այլոց հետ բարերարներու եւ մօքի մշակներու: Շիրիմներու ողբալին վիճակը քստմնեցուցիչ է: Եգիպտոսի ՀԲԸՄ-ի ներկայացուցիչներ, գոնէ միութեան 100ամեակին առիթով, թող այցելեն այդ գերեզմանատունը, պատշաճօրէն դարմանելու համար եղերելի կացութիւն մը: Անշուշտ Գահիրէի մէջ կան մարդիկ որոնք պիտի կրկնեն. "Մենք մեռելներով չենք զբաղիր...": Կարելի է յիշեցնել ՀԲԸՄ-ի վարիչներուն եւ այլոց, որ Եգիպտոսի փառաւոր քաղաքակրթութիւնը վայելչօրէն աշխարհի ներկայացնողներուն մէջ են փարաւոններու շիրիմները: Հայոց մօքի փարաւոններէն մին չէ՞ անզուգական Երուանդ Օտեանը, որ "Անիծեալ Տարիներ" ապրելէ յետոյ դացած է Գահիրէ, ապա մեկնած այս աշխարհէն: Անոր կիսաքանդ շիրիմը եւ չատ մը ուրիշներ ենթադրել կու տան թէ յարգուած ու ցարդ յարգելի մարդոց աճիւններ կան այդ գերեզմանատան մէջ:

Ի՞նչ հոգեվիճակով կարելի է 100 կամ 1600, 1700 ամեակ տօնել, երբ այդ ամեակներուն անքակտելիօրէն կապուած կը մնան անուններ, որոնց շիրիմներն իսկ կը մնան լքուած ու կիսաքանդ Հայոց գերեզմանատան մը մէջ:

Մինչդեռ Ռումանիոյ մայրաքաղաք՝ Պուքրէշի Հայոց գերեզմանատունը արժանաւորութեան օրինակելի պարագայ մըն է: Ի դէպ՝ զանազան վայրերու մէջ երբ անկարելի եղած է անաղարտ պահելով պատուել շիրիմները, պատուելով այժմէական վաստակներ, անոնք փոխադրուած են ու յարգանօք զետեղուած Նիֆերիլոր պողոտային ծայրամասի Հայոց գերեզմանատան մէջ: Եգիպտոս բնակող Հայոց համար եթէ անկարելի կը թուի այս կամ նման կարգադրութիւն մը, ի հեճուկս Եգիպտոսի ՀԲԸՄ-ի նիւթական լայն կարելիութիւններուն, գոնէ Երուանդ Օտեանի շիրիմին մնացորդը թո՛ղ փոխադրուի իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս, ուր ան կրնայ իր պատուոյ տեղն ունենալ Հայոց վայելչօրէն խնամուած գերեզմանատուներէն մէկուն մէջ: Նոյնպէս գգաստութեան օր մը, կարելի է մրտաբերել այլ պարագաներ, ինչպէս Արփիարեանին ու Թէքէեանինը, ի պահանջեա, հարկին փոխանցելու համար առ որ անկ է, առանց մեռելապաշտութեան:

Փոխանցման նման պարագայ մըն ալ կարելի է մտաբերել ՄԿՀ-ի եւ Մելգոնեան կտակի առընչութեամբ, երբ ՀԲԸՄ-ը իբրեւ մատակարար այլեւս անյարմար համարի չարունակել իրեն վստահուած առաքելութիւնը: Այն ատեն օրինաւոր այլ մատակարարի մը կը փոխանցէ իր պարտականութիւնը որպէսզի Հայոց Սփիւռքին անհրաժեշտ ՄԿՀ-ն չարունակէ իր առաքելութիւնը, իր իսկ հողատարածքին ամբողջութեան վրայ խարսխուած:

ՀԲԸՄ-ի հիմնարկութեան 100րդ տարեդարձը տօնելու համար անհրաժեշտ է յարգել անոր գոյութեան էական պայմանները: Հակառակ պարագային այս Միութիւնը ո՛չ թէ Ընդհանուր, այլ խումբ մը մարդոց Մասնակի Ընկերակցութիւն մը կ՚ըլլայ միմիայն, մեծ կամ փոքր: Փոյթ չէ թէ այդ խումբ մը մարդիկը ինչպիսի անուններ մը տակ եւ հանգամանքով հանդէս կու գան Գահիրէ կամ այլուր:

ՎԱՐԴԱՆ ՕՁԻՆԵԱՆ
Բանբեր Փրօ Էտիւգասիօ-ի(*)

(*) "Փրօ Էտիւգասիօ"ն կրթական հարցերով զբաղող աշխարհատարած միջազգային փորում / ասպարէզ մըն է ուր մարդուժի զարգացման ի խնդիր, օրէնքի եւ օրինաւորութեան պայմաններու ներքեւ նկատի կ՚առնուին մշակութային, ընկերային, տնտեսական, քաղաքական տարածքի չափանիշները եւ առընթերաբար աշխարհաքաղաքական իրողութիւններն ու առընչեալ մարտավարութիւններ: "Փրօ Էտիւգասիօ"յի "Կրթասէր"ը Սփիւռքահայերէ եւ ոչ-Հայերէ բաղկացած յանձնախումբ մըն է, որ կը զբաղի հայկական կրթական հարցերով. –

(proeducatio@aol.com)

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ
ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ
Թարգմանեց՝
ՎԱՀԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

«Ո՞վ է այս խելագար կինը» կը հարցնէ սպան որ – ինչպէս բոլորը – չի սիրեր եղերամայրերու անէծքը եւ անոտի յարգանք մը ունի դէպի իրենց արհեստը:

«Ես Ցոյն եմ, եւ չատ կարող եմ, էֆէնտի» կը պատասխանէ յանդգնութեամբ Իսմէնէ: «Նարծեմ հոս չատ պէտք պիտի ունենաք ինծի եւ իմ ընկերուհիներուս, բայց հոս աւելի պէտք է վճարել» եւ անամօթ կերպով կը խնդայ:

«Մի՛ կատակեր, կին» կ՚ըսէ սպան խոժոռ դէմքով մը «դուն ալ կրնայիր անոնց մէջ ըլլալ»: Բայց ինք կ՚եւլէ ոտքի իր գոյնզգոյն ցնցոտիներուն մէջ եւ կը նայի ուղիղ անոր աչքերուն մէջ. բերնէն դուրս չելած անէծքը թափահարելով կը չըջի իրենց միջեւ: Այնպէս որ մարդը յանկարծ մորթին վրայ կը զգայ չունչը եւ նայուածքը բոլոր այն ողջ մեռեալներուն որ իր չուրջը կան: Ձի ընդեր աւելի, եւ կը հարցնէ. «Ինչ՞ կ՚ուզէիր հոս»:

«Ամուսինս կը փնտռէի, այդ յաւիտենական անօթին» կը պոռայ Իսմէնէ յաղթական եւ չուտով կը հասնի Նազիմի քով: Դրամ մը կը դնէ Շուշանիկի ձեռքին մէջ եւ կը փախայ.

«Այս գիչեր: Այս գիչեր կու գանք ձեզ դուրս հանելու: Բոլորդ միասին կեցէք: Այս գիշեր»:

Բայց սպան, կասկածելով, հետեւեցաւ անոնց: «Դուրս վտարեցէք ճամբարէն այդ երկուքը» կ՚ըսէ երկու զափթիէներուն: «Ո՛չ մէկը, ըսի՝ ոչ մէկը, հոս պէտք է մտնէ այսօր: Եւ ինչ կը վերաբերի ասոնց» եւ կը դարձնէ մտրակը ճամբարին վրայ «բոլորն ալ թող պատրաստ ըլլան Տէր Զօր մեկնելու: Կարելի եղածին չափ կանուխ պիտի ճամբենք»:

***

Նազիմ եւ Իսմէնէ որ կոշտ կոպիտ հրմշտուքներով դուրս նետուեցան, դացին ապաստանեցան չինարի հսկայական ծառի ետեւ, լաւ ծանօթ ամէն անցորդի. ան իր չուքին ներքեւ կ՚առնէ թէ՛ դատարկապորտները, թէ յոգնածները որոնք քաղաքի Արեւելեան դրան մօտն են Բնագդական համբերութեամբ կը սպասեն որ ձիաւոր սպան մեկնի: Հասկցան որ ան իթթիհատական մըն է որ նախանձախնդիր հսկողութիւն կ՚ընէ տարագրեալներու վրայ, բայց վստահ՝ ան չէ ճամբարին հրամանատարը: Զինուորականներուն միջեւ անհամաձայնութեան ձայներ կան Հալէպի մէջ: Քիչ վերջ սպան կու գայ, գիրենք չի տեսներ ծառին ետեւ եւ ձին կը խթանէ ու արագ կը մեկնի: Նազիմ եւ Իսմէնէ հիմա կրնան իրենց գործով զբաղիլ:

Ահա կը ներկայանայ պահակ մը, Նազիմի պէս կաղ, եւ արագ ցատքոտելով կը մօտենայ իրեն: Պատերազմի հաշմանդամ մըն է զոր հոն դրած են այդ գէշ գործը ընելու համար:

«Դուք բարեկամներ, մէկը կը փնտռէիք, գտա՞ք զինքը» անմիջապէս բուն հարցին կու գայ: Նազիմ կը հարցնէ թէ ի՞նչ պատահեցաւ անոր որուն հետ համաձայնած էր Տաւրոսը անցնելէ առաջ: Նոր բարեկամը բան չի գիտեր: «Կարելի է ան ըլլայ որ Քիւրտերուն կողմէ ըսպաննուեցաւ աւարի մը բաժանումին ժամանակ» կ՚ըսէ անտարբերութեամբ. «բայց հիմա ինծի հետ պիտի բանակցիք: Այդ սարսափելի կացութեան մէջ ես միակն եմ ճամբարին հրամանատար հազարապետ Սելիմի հետ, որ տակաւին գիտէ զանազանել եւ գնահատել զոյգ մը ոսկեդրամի անոյշ հնչումը»:

(Շար. 85)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Ամերիկաբնակ Գոհար Թէօլէօլեանի (գրագէտ, դաստիարակուհի, հմուտ վարուժանագէտ) մահուան առթիւ դաստիարակուհին Սիրվարդ Պալեան 150 Եւրօ կը նուիրէ "Յառաջ" օրաթերթին:

Notre-Dame de Paris

91ème ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

Dimanche 23 avril à 15 heures

Liturgie célébrée par
MGR G. GHABROYAN
Evêque des Arméniens Catholiques de France

sous la présidence de
MGR ANDRE VINGT-TROIS
Archevêque de Paris

Մարսէյլ
ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
նահատակ բանաստեղծ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
կեանքի մասին գրուած

«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ»

վէպի

կը բանախօսէ հեղինակը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

Ռուբէն Սեւակէն քերթուածներ կ'արտասանէ
Հայաստանի վաստակաւոր արուեստագիտուհի
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 21, ժամը 20·30ին
Սահակ - Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

— Մուտքը ազատ է —

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ ազդերու սակացինը

	€	
Մահազդ	150	(179,40)
Հոգեհանգիստ	135	(161,46)
Շնորհակալիք	135	(161,46)
Հարսնիք-Նշանտուք	135	(161,46)
Ծնունդ	135	(161,46)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհանուր գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8րդ (12-13 տող) մնացեալին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐՈՒ ՇԱՐՔ

Հինգշաբթի, Ապրիլ 20, ժամը 20·30ին

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՂԷՏԸ՝
ԻՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ
ՈՒ ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Համալսարանի դասախօս Համազգայինի՝
Հանդիպում բեմարուեստի ջամադիր՝

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

հետ

կը ներկայացնէ՝
Կարէն ՍԻՄՈՆԵԱՆ

10 bis rue Thouin — Paris 5ème
Métro : Cardinal Lemoine / Monge

— Մուտքը ազատ է —

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine	: 06 12 93 09 80
Jeanine	: 04 94 32 11 87
Marie-Rose	: 06 22 11 81 75

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

91EME ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

PARIS

23 AVRIL

18h : Ravivage de la Flamme au Soldat Inconnu
Arc de Triomphe — Place Charles de Gaulle Etoile — Paris 8e

19h : Veillée organisée par les organisations de jeunesse arménienne sur le Parvis de Notre-Dame

24 AVRIL

15h : Messe en la Cathédrale Arménienne
15 rue Jean-Goujon — Paris 8e

17h30 : Rassemblement devant la Statue de Komitas
Place du Canada — Cours Albert Ier — Paris 8e
pour :
- combattre le négationnisme et le racisme de l'Etat turc notamment pour ce qui concerne le génocide des Arméniens en 1915;
- exiger le respect absolu des valeurs européennes par l'examen de la candidature de la Turquie à l'Union Européenne;
- dénoncer les agissements anti-arméniens des nationalistes turcs en France, en Europe et en Turquie.

Prises de paroles.

Manifestation en direction de l'Ambassade de Turquie.

28 AVRIL

18h30 : Réception à l'Hôtel de Ville : Monsieur Bertrand Delanoë, Maire de Paris, rendra hommage aux victimes du génocide des Arméniens en 1915, dans les salons de l'Hôtel de Ville (sur invitation uniquement).

SEVRES

22 AVRIL

11h : Au «Khatchkar» (devant le Musée national de Céramique).
Dépot de fleurs et prises de parole en présence de personnalités et élus locaux.

CHAVILLE

23 AVRIL

10h : Messe de Requiem;
12h30: Procession vers le Monument arménien (face Gare Chaville RD)
Dépôt de gerbes et prises de parole.

ESPOIR POUR l'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...

Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
«Rouben Mamoulian»
Samedi 22 avril à 16 heures

MEMOIRE
91e anniversaire du Génocide

LE GENOCIDE ARMENIEN
de Laurence Jourdan
Film documentaire (2005)

Suivi de la présentation du livre
de Béatrice Kasparian-Bricout
AZADOUI, ENFANT D'ARMENIE
Editions L'Harmattan

Le livre raconte le quotidien des enfants arméniens rescapés du génocide et surtout d'Azade, petite orpheline, proie de la bestialité humaine, ramassée au milieu des morts, indemne, mais mutique et amnésique. Azade réapprend à sourire et retrouve la joie de vivre...

L'auteur dédicacera son livre.
— Entrée libre —

LA PAROISSE ARMENIENNE CATHOLIQUE
SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR
DE MARSEILLE
vous invite à participer à la conférence qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION DU GENOCIDE ARMENIEN

COMMIS PAR LES AUTORITES OTTOMANES . TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar
(Couvent et Siège Patriarcal des Arméniens Catholiques depuis 1749).

Un programme d'inspiration «24 avrilienne» suivra la conférence.

Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

A la rencontre de l'Arménie et du Karabagh avec l'UCFAF

du lundi 24 juillet au dimanche 6 août
1420 Euros tout compris au départ de Paris
(sauf visas et taxes aéroports)
base chambre double et demi-pension
excursions et visites quotidiennes avec guide francophone
ainsi que circuit 4 jours jusqu'au Karabagh

Renseignements et inscriptions :
UCFAF : 6, Cité du Wauxhall — 75010 Paris
Tél. 01 42 08 76 49 (de 15h à 17h) - Fax 01 42 08 09 70
www.ucfaf.com
Madame YAZIDJIAN — 29-33, avenue Pasteur — 93100 Montreuil
Tél. 01 42 87 95 98 heures bureau

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 20

JEUDI
20 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար· 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·437 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21·437

ԹՈՒՐՔԻԱ

«ԿԱՊՈՅՏ ԳԻՐՔ»Ը ԴԱՏԻ ՆԻՒԹ ԴԱՐՁԱԾ

Երեսփոխան ու նախկին դեսպան Շ· Էլէքտաղ որ Ցեղասպանութեան մասին Թուրքիոյ մէջ կամ այլուր կազմակերպուած ձեռնարկներուն պաշտօնական թեզը ոգի ի բռին պաշտպանող մըն է, բրիտանական "Կապոյտ գիրք"ին թուրք հրատարակիչը դատի տուած է: Կը պահանջէ 20 հազար թրքական նոր լիրայի հատուցում: Ամբաստանուած են նաեւ թարգմանը եւ պատմաբան Թ· Աքչամ· այս վերջինը իր մէկ յօդուածին պատճառով· հոն հարց տուած էր թէ Շ· Էլէքտաղ եւ Ճ· մաք Գարթի (ամերիկացի ծանօթ ժխտողը) ո՞ւր կը տանին Թուրքիան:

Էլէքտաղի ամբաստանութիւնը հիմնուած է այն պնդումին վրայ որ թէ՛ հատորը, թէ Աքչամի գրութիւնը վարկաբեկած են իր անձը, անհատի իրաւունքները ծանօրէն ոտնակոխած:

Կ'արժէ աւելցնել թէ Էլէքտաղ անդամ է Ազգ· Ժողովին Արտաքին գործերու յանձնախումբին եւ Եւրոպական Միութեան ու Թուրքիոյ խորհրդարանական խառն մարմնին, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան պատշաճեցումի յանձնախումբին...

***

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՔՆԵՐՈՒՆ ԽՍՏԱԳՈՅՆ ՊԱՏԻԺՆԵՐ

Թուրքիա Եւրոպայի անդամակցութեան հեռանկարը մէկդի ձգելու գինով ձեռնարկած է ահաբեկչութեան դէմ խիստ պատիժներ սահմանող օրէնքներու պատրաստութեան: Դրդապատճառ կը տրուին վերջին արարքները, -պայթումներ, զինեալ ուժերու հետ բախումներ, եւլն.-:

Օրէնքի բանաձեւով ընդլայնուած է "ահաբեկչական արարք" նկատելի յանցանքներու ցանկը· այսպէս, ի հարկին որպէս այդ պիտի նկատուին ոճիրները, գաղթականներու, մարդոց մաքսանենգութիւնը, անձնասպանութեան պարտադրեցումը, մանկական պոռնկագրութիւնը, առեւանգումը, գողութիւնը, ատոմական ուժանիւթի գործածութիւնը, բնութեան նպատակաւոր ապականութիւնը, թմրեցուցիչի արտադրութիւնը, վաճառքը, խուճապ ստեղծելու արարքները, անտառներու հրդեհումը, պատմական արժէք ներկայացնող առարկաներու մաքսանենգութիւնը, պետութեան դերիշխանութեան խորհրդանիշերուն անարգանքը, զինուորականութիւնը թիրախ առնող կեցուածքները, եւլն·, եւլն·:

Բանաձեւը քուէարկուելու պարագային Եւրոպական Միութեան տրամադրութիւններուն հակասող բազմաթիւ կէտերով Թուրքիա պիտի վերադառնայ ոստիկանական պետութեան անցեալին, ջնջելով Եւրոպայի պատշաճելու ընթացքով բերուած որոշ ազատութիւնները, լայնախոհութիւնը:

Հետաքրքրական է տեսնել թէ Թուրքիոյ անդամակցութեան ջատագով եւրոպացի ղեկավարները ինչպէս պիտի հակազդեն այս նոր կարգադրութեան:

ԼՈՆՏՈՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԱՐՏԱՔՍՈՒՄԻ ՎԷՃԸ

Կարէն Աւանէսեան անուն 19 տարեկան հայ երիտասարդ մը իսկայատուկ կըռւախնձորի վերածուած է Լոնտոնի, Երեւանի ու Բաքուի միջեւ: Ան երեք տարի առաջ ապօրինի կերպով մուտք գործած է Մեծն Բրիտանիա ուր իշխանութիւնները մերժած են ապաստան տալ իրեն ու որոշած վերադարձնել հայրենիքը· այդ երկիրը ըստ իրենց Ազրպէյճանն է, քանի որ երիտասարդը ծնած է Ղարաբաղի մէջ:

Հայաստանի Արտաքին գործերու նախարարութիւնը գործի լծուած է, ամէն ջանք ի գործ դնելով, որպէսզի Կարէն Լոնտոնէն Երեւան ղրկուի: Մինչ այդ, Բաքուի մէջ սկսած են կարծիքներ հնչել որ Բաքու պէտք է ընդունի զինքը, առանց զգացական աւելորդ արտայայտութիւններու եւ պատրաստակամութիւն յայտնէ "իր քաղաքացի"ին ապահովութիւնը երաշխաւորելու: Ազրպէյճանցի մեկնաբաններու կարծիքով առիկա փաստը կու տայ որ Ազրպէյճան պատրաստ է երաշխաւորելու Ղարաբաղ ապրող բոլոր Հայերուն ապահովութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼՂՀ

ՆԱՄԱԿ ԱՄՆ-ՈՒՆ

Արտաքին Գործերու նախարար Գ· Պետրոսեան եւ ոստիկանապետ Ա· Իսագուլով նամակով մը դիմած են ԱՄՆ-ու Թմրեցուցիչներու միջազգային շրջանառութեան ռազմավարական հսկողութեան ղեկավար Է· Փիթըրսընին· անոր ուշադրութեան յանձնած են ԼՂ Հանրապետութեան համար կարեւոր հարց մը· 2006 Մարտին հրապարակուած Թմրեցուցիչներու միջազգային շրջանառութեան մէջ ի տարբերութիւն նախորդ տարիներուն, Լեռնային Ղարաբաղը եւ անոր հակակըշռին ենթակայ շրջանները տեղ գտած են որպէս թմրեցուցիչներու տարանցիկ գօտի:

Անոնք ըսած են թէ այդ մասին մտացածին տուեալները կը պատկանին Ազրպէյճանին, որ կեղծիքն ու հայկական կողմը վարկաբեկելը հասցուցած է պետական քաղաքականութեան մակարդակին: Կըտրուկ կերպով մերժած են կատարուած տեղեկատուութիւնը, յիշեցնելով որ Ղարաբաղի իշխանութիւնները բազմիցս դիմած են միջազգային կազմակերպութիւններու որպէսզի դէտերու խումբ ղրկեն, կացութիւնը տեղւոյն վրայ ստուգելու համար: Ապա հաւաստած են որ Ղարաբաղը թմրեցուցիչներու տարանցիկ ճամբայ չէ, հակառակ Ազրպէյճանի կիրարկած քաղաքականութեան, եւ ԼՂՀ մարմիններու կանխիչ աշխատանքին շնորհիւ: Աւելցուցած են թէ Օ· ԷՍ· ՍԷ· Ը·ի դէտերը 2005 Յունուար – Փետրուարին ԼՂՀ հսկողութեան ենթակայ շրջանները այցեն ետք իրենց տեղեկագրութեան մէջ ոչ իսկ տող մը արձանագրած են նման բացասական երեւոյթի մասին: Նամակին պատճէնը ղրկուած է ԱՄՆ-ու Արտաքին գործերու նախարար Գ· Ռայսին, նաեւ Մինսկի խումբին ամերիկացի նախագահին, Թմրեցուցիչներու ազգային բաժնի տնօրէնին:

Նամակագիրները կրկին անգամ յայտնած են փորձագիտական անկախ դէտերու խումբ մը ընդունելու ԼՂՀ իշխանութիւններու պատրաստակամութիւնը:

***

ՋԱՒԱԽՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ԱՅՑԸ

Ապրիլ 15 եւ 16ին Հայաստանի Թիֆլիսի դեսպանը Հրաչ Սիլվանեան այցելած է Ջաւախք· հոն հանդիպում ունեցած է երկրին նախագահին լիազօր ներկայացուցիչ Գ· Խաչիձէի, Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններու ղեկավարներուն, Ջաւախքի երեսփոխաններուն, հանրային կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հետ:

Հ· Սիլվանեան իր խօսակիցներուն յայտնած է թէ այցը ծանօթացումի նըպատակով է եւ ասկէ ետք որպէս դեսպան յաճախ կ'այցելէ այդ շրջանը: Դեսպանին ու հանրային կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հանդիպումին քըննարկումի առարկայ եղած են Ջաւախքի ներկայի կացութիւնը, հոն գոյութիւն ունեցող խնդիրներուն առընչութեամբ Հայաստանի ու Վրաստանի կեդրոնական իշխանութիւններու կեցուածքները: Շեշտուած են Վրաստանի կողմէ Ջաւախքի հայաթափման, այդ մասին Հայաստանի անտարբերութեան հարցերը:

Դեսպանը Գ· Խաչիձէի, Ախալքալաքի ղեկավար Ա· Երեմեանի հետ ներկայ գտնուած է Ս· Խաչ եկեղեցիին Զատկուան պատարագին:

ԼԻՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՊՂԾՈՒՄԻՆ ԱՌԹԻՒ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ (CCAF) ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ապրիլ 18ին, Ֆրանսահայ Կազմակերպութեանց Խորհուրդը արձագանգելով Լիոնի հայկական յուշարձանի պղծումին, որ տեղի ունեցած էր Ապրիլ 17ին, որոշած է Ապրիլեան արարողութիւնները դընել հետեւեալ հրամայականներուն տակ.-

– Ընդդիմութիւն Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան, որ չուզեր ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը,

– Ընդդիմութիւն Թուրքիոյ հալածանքի քաղաքականութեան իր փոքրամասնութիւններուն եւ հայկական ժառանգութեան հանդէպ,

– Ընդդիմութիւն Թուրքիոյ մղած ժխտողական միջազգային արշաւին,

– Ի նպաստ յառաջիկայ Մայիս 18ին, Ազգային Ժողովին կողմէ ընդունման օրինագիծի մը, որ կը պատժէ 1915ի Հայոց Ցեղասպանութեան ժխտումը:

Այդ օրինագիծին բնագիրն է.-

L'article unique de la loi n0 2001-70 du 29 janvier 2001 est complété par un nouvel alinéa ainsi rédigé : Article 2 : «— Seront punis comme indiqué à l'article 24 bis de la loi du 29 juillet 1881 sur la liberté de la presse ceux qui auront contestés, par un des moyens énoncés à l'article 23 de ladite loi, l'existence du génocide arménien de 1915».

***

Նոյն հարցին կապակցութեամբ դատապարտող հաղորդագրութիւններ հրապարակած են Հ·Յ·Դ·ն եւ Հ·Յ·Դ· Նոր Սերունդը, պահանջելով Ֆրանսայէն որ նոր օրինագիծը շուտով քուէարկուի:

ԱՄՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ» ՖԻԼՄԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԱԾ

Ապրիլ 17ին, ամբողջ Ամերիկայի տարածքին ցուցադրուած է Փի· Պի· ԷՍ· լրատու գործակալութեան կողմէ պատրաստուած Է· Կոլտպէրկի "Հայկական Ցեղասպանութիւն" անուն վաւերագրականը: Աւելի քան 348 կայան հեռասփռած է զայն· յաջորդած է վիճաբանական սուլիս մը:

Ֆիլմը կը պատմէ 1890ական թուականներէն սկսեալ Օսմանեան կայսրութեան մէջ Հայերու ենթարկուած կոտորածները, 1915ի տարագրութիւնը, Հայերու բնաջնջումը: Հոն իրենց տեսակէտները յայտնած են Փ· Պալաքեան, Թ· Աքչամ, Միչիկընի համալսարանէն Մինէ Կէօչէք, իսկ թրքական ուրացումին բանբերը եղած է Ճ· մաք Գարթի որ պնդած է թէ Հայերը մեռած են քաղաքացիական պատերազմի մը ընթացքին: Վիճարկումի մասը կայաններուն մէկ երրորդին կողմէ չէ հեռասփռուած:

ՊԱՏՈՒՈՅ ԼԵԳԷՈՆ

Զատկուան շնորհումներու կարգին, Արտաքին Նախարարութեան անձնակազմի դասակարգին մէջ, Պատուոյ լեգէոնի ասպետի շքանշանին արժանացած է Ժան-Փիէր Աստուածատուրեան, նոյն շքանշանը ստացած է նաեւ մանադէտ հաշուապահ Արաս Եղեղեան (փոքր եւ միջին ձեռնարկութիւններ):

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱԽԹԱՄԱՐԻ Ս· Խաչ եկեղեցիին նորոգութեան լծուած խումբը վանական ուսանողներու կեցութեան յատկացուած 13 սենեակ յայտնաբերած է: Պեղումներու պատասխանատուն ըսած է թէ սենեակներուն մէջ երեքական խորշեր եւ օճախներ կան: Անոնց կառուցումին ցեխով խառն շաղախ գործածուած է, ինչ որ առաջին անձրեւին մէկ մասին քանդուելուն պատճառ եղած է:

ՊՈԼՍՈՅ Պէյազիտի հրապարակին վըրայ Ապրիլ 9ին կանգնած արձան մը որ կը պատկանէր Ցեղասպանութեան պատասխանատու նկատուած ու կախաղան հանուած Քէմալ պէյին, յաջորդ օրը անհետացած է: Եօզկաթի Պօղազլեան գաւառակին այդ ղեկավարը մեծարուած էր թրքական աշխարհին մարդկային իրաւունքներու միութեան եւ Իրաւաբաններու միութեան կողմէ:

ԹԵԼ-ԱՎԻՎԻ ոճրափորձին զոհերուն մէջ երկու Ֆրանսացիներ կան, 75ամեայ կին մը եւ այր մարդ մը: Իսրայէլ անմիջապէս դտած է քամիքազին հայրը, զոր ձերբակալած է, տունն ալ պարպել տըւած, որպէսզի քարուքանդ ըլլայ: Ահաբեկիչին ընտանիքը Ճենինի մօտ՝ Արքա կ'ապրէր (Այսրյորդանանի հիւսիսը): Կը թուի սակայն որ Եհուտ Օլմէրթ որոշած է սահմանափակել հակազդեցութեան ծաւալը:

ՃԱՓՈՆ ԳՈՐԾԱՐԱՐԸ, որ տէրն է Թօյալ ճարտարարուեստի խմբակին, հարցազրոյցով մը Ֆիկառոյի (Ապրիլ 19) կը բացատրէ Լասալ հարցին շուրջ, որ այնքան աղմուկ հանեց: Ծանօթ է որ Իր· Տէ· ԷՖ·ի երեսփոխանը 39 օր հացադուլի դիմած էր, բողոքելու համար Աքուսի (Ատլանտեան Փիրէնէներ) տեղափոխման դէմ եւ համաձայնութիւն գոյացած էր հաստատելով որ որեւէ տեղափոխում չկայ: Արդ, բոլորովին տարբեր բացատրութիւն մը կու տայ: Կը պնդէ որ Աքուսէն տեղափոխուելու որեւէ միտք չեն ունեցած, Աքուսէն 70 քմ· հեռու արտադրութեան նոր վայր մը նախատեսուած էր եւ Ժ· Լասալ սխալ հասկցած է, կարծելով թէ ամբողջութիւնը կը տեղափոխուի:

ԳՐՈԶՆԻ, Չեչէնիոյ մայրաքաղաքը, կ'ապրի սարսափի մթնոլորտի մը մէջ, ինչպէս կը վկայէ Մարի Ժէկօ, Մոնտի մէջ (Ապրիլ 19): Առեւանգումները, ոճիրները եւ հաշուեյարդարները կը բազ-

(Շար·ը Դ· էջ)

ՍՈՒՐԻԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

(Բ. եւ վերջին մաս)

ԳԷՈՐԳ ԹԷՄԻՋԵԱՆ ծնած է Սուրիոյ Ռաս Ուլ-Էյն գիւղը (հիւսիսային Սուրիոյ Ճէզիրէի շրջան), 1945ին:

Ուսանած է Հալէպի Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանը, ապա վկայուած Դամասկոսի բժշկական համալսարանէն:

Սրտային մասնագիտութիւնը կատարած է Ամերիկայի մէջ, ուր եւ դասախօսած է Սան Ֆրանսիսքոյի բժշկական համալսարանէն ներս: Հալէպ վերադարձին եղած է դասախօս Հալէպի բժշկական համալսարանէն ներս:

Առաջին երեւումը եղած է Ս. Սիմոնեանի "Սփիւռք" շաբաթաթերթին մէջ, 1958ին: Բանաստեղծութիւններով աշխատակցած է "Բագին" եւ "Ահեկան" հանդէսներուն:

Հրատարակած է բանաստեղծական երեք գիրքեր՝ "Ծով եւ կղզի" 1973ին Պէյրութ, "Շարժում" 1983ին Պէյրութ եւ "Սերենատ" 1996ին Հալէպ:

Մահացած է Հալէպ 1999ին:

ՅԱԿՈԲ ՋՈԼԱՔԵԱՆ ծնած է Քեսապ, 1947ին: Գրական երախայրիքը քերթողագիրք մըն է, միակը իր բանաստեղծական վաստակին կողքին՝ "Այսպէս սկսաւ գարունը", հրատարակուած Պէյրութ, "ըՍփիւռք-Գարուն"ի մատենաշարով, 1970ին: Հեղինակ է մէկէ աւելի բանասիրական գործերու, ինչպէս Քեսապի նուիրուած քառահատոր աշխատասիրութիւնը: Տիրացած է բանասիրական գիտութիւններու դոկտորի աստիճանին, Երեւանի պետական համալսարանէն:

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՑԵԱՆ (Ասլանեան) ծնած է Ամուտա (Քամիշլիի շրջանէն): Նախակրթութիւնը տեղւոյն դպրոցին մէջ ստանալէ ետք անցած է Պէյրութ եւ երկրորդականէն ետք աւարտած Ցխուսեան հայրերու հայագիտական դասընթացքը: Կ'ապրի Վան Նայս (ԱՄՆ): Հեղինակ է քերթողական հինգ գիրքերու՝ "Կէտեր" 1971, "Արեւագալ" 1973, "Վերադարձ" 1992, "Ձայնը" 2004 եւ "Հայրոն" 2005:

ՎՐԷԺ ԹՈՒՐԵԱՆ-ԳԼՆՃԵԱՆ ծնած է 1950ին, Քեսապ, ուր եւ կ'ապրի մինչեւ այսօր: Նախնական ուսումը ստացած է Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց միացեալ վարժարանին, ապա Զմմառու դպրեվանքին մէջ, ուր եւ գործած է որպէս ուսուցիչ եւ մատենադարանի փոխ-վարիչ:

Հակառակ անոր, որ գրել սկսած է շատ կանուխ՝ նախակրթարանի օրերէն իսկ, միայն վերջին տասնամեակին է, որ ընթերցողը առիթ ունեցաւ ծանօթանալու այս բանաստեղծին ոտանաւորներուն "Գանձասար" (Հալէպ) շաբաթաթերթին միջոցով:

1995ին լոյս կը տեսնէ քերթուածներու իր առաջին հատորը՝ "Սրտի բեկորներ" խորագրով, Յակոբ Ջոլաքեանին յառաջաբանով եւ խմբագրութեամբ: Կը յաջորդեն երկու գիրքեր եւս՝ "Հայրենի ղօղանջներ" 1997ին եւ "Սէր ափսոսանք ու կարօտ":

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ծնած է Հալէպ, 1950ին: Շրջանաւարտ է Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն: Աւարտած է Պէյրութի Ցխուսեան հայրերու հայագիտական դասընթացքը: Երկար տարիներ եղած է "Բագին" գրական ամսագրին խմբագրութեան անդամ: Ուսուցչութեամբ կը զբաղի եւ կ'ապրի Պէյրութի մէջ:

Ունի քերթողական երկու գիրքեր՝ "Այս է արիւնս իմ" 1973 եւ "Այս է մարմին իմ" 2004:

ՅԱԿՈԲ ԱՂԱՅԵԱՆ ծնած է Հալէպ 1952ին: Աւարտած է տեղւոյն Կիլիկեան վարժարանն ու երկրորդականը:

Զբաղած է ուսուցչութեամբ: 1969ին հիմնած է Տիրունի Ուսանողական միութիւնը:

Հրատարակած է "Ծաղկեփունջ" բանաստեղծական հատորը: Կ'աշխատակցի սփիւռքահայ մամուլին, ստորագրելով գրական եւ հրապարակագրական յօդուածներ:

ՅՈՎՍԷՓ ՂԱԶԱՐԵԱՆ ծնած է Քեսապ, 1953ին: Ուսումը ստացած է Հալէպի Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանը: Աւարտած է Հալէպի համալսարանի երկրաչափական ճիւղը եւ վկայուած որպէս ճարտարապետ: Կ'ապրի Հալէպ:

Ունի քերթուածներու մէկ գիրք՝ "Ընտրեալք" խորագրով, տպուած Պէյրութ, 1991ին:

ԱՐԱ ՃՈՒՀԱՐԵԱՆ ծնած է Հալէպ 1954ին: Աւարտած է տեղւոյն Լ. Նաճարեան - Գ. Կիւլպէնկեան վարժարանը եւ վկայուած Հալէպի համալսարանէն, որպէս ճարտարապետ:

Բանաստեղծական առաջին երեւումը եղած է "Շիրակ" գրական ամսագրին մէջ, որմէ ետք դարձած է մնայուն աշխատակիցը անոր:

Բանաստեղծութիւններու առաջին հատորը՝ "Երկու" լոյս տեսած է 2001 թըւականին Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակին (Անթիլիաս) հրատարակութեամբ:

Կ'աշխատակցի "Մարմարա"յին (Պոլիս) եւ "Զարթօնք"ին (Պէյրութ):

Այժմ կը վարէ խմբագրութիւնը վերահրատարակուող "Շիրակ" հանդէսին (Պէյրութ):

ԿՈՐԻՒՆ ՇԱՀԻՆԵԱՆ բուն անունով Գրիգոր Շահինեան-Տարագճեան: Ծնած է Հալէպ 1955ին: Աւարտած է Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանը: Տարի մը ուսանած է Համազգային հայ կրթական եւ մշակութային ընկերակցութեան Պէյրութի հայագիտական ամպիոնին մէջ: Պէյրութի քաղաքացիական պատերազմը պատճառ կը դառնայ որ կիսատ մնայ ուսումը:

Շատ կանուխէն, տակաւին աշակերտ, լոյս տեսած են իր քերթուածները "Բագին" գրական ամսագրին մէջ, որուն մատենաշարով է, որ լոյս տեսած է քերթողական իր առաջին գիրքը՝ "Լողարշաւ"ը 1978ին: 1987ին կը հրատարակէ իր երկրորդ քերթողագիրքը՝ "Գաղթականներ" խորագրով:

Կը մահանայ 1992 թուականին, Հալէպի մէջ:

Վաղամեռիկ բանաստեղծը ունի բազմաթիւ անտիպ գործեր, սփիւռքահայ մամուլին մէջ լոյս տեսած, իր գրական եւ գրականագիտական յօդուածներուն կողքին:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ ծնած է Հալէպ: Շրջանաւարտ է Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանէն: Աւարտած է Պէյրութի Պետական բարձրագոյն երաշտանոցը եւ վկայուած Գաշանի (Ֆրանսա) երաժշտանոցէն: Տիրացած է բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճանին, պաշտպանելով "Սփիւռքահայ Բանաստեղծութիւնը 1965-1995 թուականներուն" նիւթը Երեւանի Աբեղեան ինստիտուտին մէջ: Ունի բանաստեղծական հինգ գիրքեր՝ "Հում Բառեր...", "Տարբերակներ", "Հալոց", "Գիշերներ", "Հին Քերթուածներ" եւ պատմուածքներու հաւաքածոյ մը՝ "Մօր Գոգնոցը" խորագրով: Կ'աշխատակցի Սփիւռքի եւ Հայաստանի մամուլին:

ԽԱՉԻԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ծնած է Հալէպ, 1965ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Ազգ. Հայկազեան վարժարանէն, իսկ միջնակարգն ու երկրորդականը՝ Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանէն:

1993ին կ'աւարտէ Երեւանի Պետական Համալսարանի ատամնաբուժութեան ճիւղը:

Գրել սկսած է կանուխէն եւ աշխատակցած "Ծիլեր" (Ք. Ե. Ազգ. ճեմարան) աշակերտական հանդէսի: Կ'աշխատակցի Հալէպի "Գանձասար" շաբաթաթերթին:

Մամուլի տակ է իր քերթողական առաջնեկը:

ՅԱԿՈԲ ՆԱԼՊԱՆՏ՝ բուն անունով Յակոբ Տլալեան: Ծնած է Հալէպ, 1968ին:

1995ին աւարտած է Երեւանի բժշկական պետական համալսարանի դեղագործական բաժինը:

Քերթուածները հրատարակուած են Սփիւռքի եւ Հայաստանի մամուլին մէջ:

2001ին կ'ունենայ իր առաջին քերթողագիրքը՝ "Արուարձանի Զայնացօղեր" խորագրով, Գ. Մելիտինեցի Գրական Մրցանակին հրատարակութեամբ:

Մամուլի տակ է "Անմահ Փրփուրներ" հատորը:

ՅԱՐՈՒԹ ՎԱՐԴԱՆԵԱՆ ծնած է Հալէպ, 1973ին: Աւարտած է Լ. Նաճարեան - Գ. Կիւլպէնկեան կեդրոնական վարժարանը: Վկայուած է AUBի մեքենագիտութեան բաժինէն: Ունի բանաստեղծական հատոր մը՝ "Եռանկիւն Արեւ", լոյս տեսած Հալէպ, 2002 թուականին:

ՏԻԳՐԱՆ ԳԱԲՈՅԵԱՆ ծնած է Հալէպ, 1974ին:

Ունի Երեւան հրատարակուած քերթողական երկու հատորներ՝ "Դէպի Երկինք Արձակուած Նետ", 1995, եւ "Անմաս", 2002:

ՍԱՐԳԻՍ ՔԷԼ ԽԱՉԵՐԵԱՆ ծնած է Հալէպ 1974ին: Աւարտած է Լ. Նաճարեան - Գ. Կիւլպէնկեան վարժարանը:

Աշխատակցած է "Տիր" (Լ.Ն.Գ.Կ. վարժարան) աշակերտական հանդէսին, "Գանձասար" շաբաթաթերթին եւ "Զարթօնք" օրաթերթին:

Մամուլի տակ է քերթողական իր առաջին գիրքը:

ՆՈՒՇԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ծնած է Հալէպ: Կրթութիւնը ստացած է Լ. Նաճարեան - Գ. Կիւլպէնկեան վարժարանէն ներս:

Հետեւած է Երեւանի Պետական Համալսարանի Գրիգոր Զօհրապ բանասիրական բաժանմունքին, ապա վկայուած Երեւանի Մանկավարժական համալսարանի բանասիրական ճիւղէն:

Ունի քերթուածագիրք մը՝ "Սպասիր Արեւ", տպուած Հալէպ 1997ին, եւ 2000 թուականին Երեւան առանձին պրակով լոյս տեսած պոէմ մը՝ "Երգ Ծննդոց": Բանաստեղծական երկրորդ գիրքը՝ "Քամիներից Այն Կողմ" լոյս կը տեսնէ Երեւան, 2002ին:

ԿԱՐՕ ԱՐՍԼԱՆԵԱՆ ծնած է Հալէպ, 1978ին: Նախնական ուսումը ստացած է Հալէպի Ազգ. Կիւլպէնկեան վարժարանէն, իսկ երկրորդականը՝ Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանէն: 2002ին վկայուած է Հալէպի Պետական համալսարանի գիտութիւններու բաժնէն: Բնագիտութեան ուսուցիչ է Ք. Ե. Ազգ. ճեմարանէն ներս:

Աշխատակցած է սփիւռքեան եւ հայաստանեան մամուլին:

ՆԱՆՈՐ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ ծնած է Հալէպ: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն Մխիթարեան վարժարանէն ներս եւ աւարտած Ք. Ե. Ազգ. ճեմարանը:

Ուսանողուհի է Հալէպի Պետական համալսարանի իրաւագիտութեան ճիւղին:

Կ'աշխատակցի "Գանձասար" շաբաթաթերթին, "Բագին" գրական ամսագրին եւ "Ազդակ" ու "Զարթօնք" օրաթերթերուն:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ԳԱՆՁԵՐԸ

ԻՆՉՊԷ՞Ս ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՄԵՐ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԴՐԱՆՑ ԹԻՒԸ ԱՆՑՆՈՒՄ Է 24 ՀԱԶԱՐԻՑ

Հարցազրոյց մշակոյթի նախարարութեան պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան գործակալութեան բաժնի պետ ՍՈՒՐԷՆ ՇԱՔԱՐԵԱՆԻ հետ

Հարցում.- Ցատկապէս Հին Ջուղայի խաչքարերի ոչնչացման փաստից յետոյ ակամայ կարծես աւելի ընդգծուեց Հայաստանի պատմամշակութային ժառանգութեան պահպանութիւնը խստացնելու հասարակական պահանջը: Պահպանութեան ներկայ վիճակը կարելի՞ է համարել բաւարար:

Պատասխան.- Գործակալութեան ենթակառոյցներում, որոնք նաեւ զբաղւում են պահպանութեան խնդիրներով, իրենց ուժերի ներածի չափով անում են հնարաւոր ամէն ինչ: Բայց իհարկէ կան պահպանութեան գործին խոչընդոտող բազմաթիւ դժուարութիւններ: Այդուհանդերձ կարեւորում եմ այն փաստը, որ 2005ին աւարտեցինք Հայաստանի բոլոր մարզերի յուշարձանների հաշուառումն ու ցուցակագրումը, որի շնորհիւ գրանցուեցին 24.143 տարբեր վաղեմութեան յուշարձաններ:

Հ.- Դա վերջնակա՞ն թիւ է:

Պ.- Ո՛չ: Դեռ կան տարածքներ, որոնք ամբողջապէս ուսումնասիրուած չեն: Մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների սղութեան պատճառով, հաշուառում իրականացնող կազմակերպութեանը չի յաջողուել լիովին աւարտել հաշուառումը: Յաջորդ փուլով, որը նախատեսուած է կառավարութեան յատուկ որոշմամբ, 2006ին պէտք է սկսուեն մոնիտորինգային աշխատանքները, որոնք էլ թոյլ կը տան լրացնել յուշարձանների հաշուառման ցանկերը:

Անդրադառնալով պահպանութեան խնդրին, նախ տեղին է նշել, որ մեր գործակալութիւնն ունի ընդամէնը 16 հոգիանոց անձնակազմ: Իսկ աւելի քան 24 հազար յուշարձանների պահպանութեան վերահսկողութիւնն իրականացնելու են մեր 19 տարածքային ներկայացուցիչները:

Ինչ վերաբերում է ամիջական հսկողութեան իրականացմանը, ապա նախարարութեան մէկ այլ մասնագիտական ստորաբաժանում համարուող "Պատմամշակոթային արգելոց - թանգարանների պահպանութիւն" ՊՕԱԿ-ը իր մարզային կառոյցներում ունի ընդամէնը 153 հսկիչ: Հաստիքների քչութեան պատճառով, որոշ պահակներ ստիպուած են հսկողութիւն իրականացնել 30-40 քիլոմեթրանոց տարածքներում: Նման վիճակում, այդուհանդերձ, մեզ յաջողուել է կանխել յուշարձանների անխաթարութեանը սպառնացող մի շարք դէպքեր:

Հ.- Հիմնականում ի՞նչ բնոյթի են եղել դրանց շարժառիթները:

Պ.- Հողայատկացում, հողի վարձակալութիւն, հողային եւ շինարարական աշխատանքներ: Միայն համապատասխան տեղազննումից եւ փաստաթղթաւորումից յետոյ է թոյլատրւում, անենք, հողայատկացումը: Բայց որոշ խնդիրներ ունենք վարձակալութեան տրուող հողերի մասով: Յաճախ նման հարցերը տեղում եւ միանձնեայ լուծում են գիւղապետարանները՝ անտեսելով կառավարութեան որոշումն այն մասին, որ վարձակալութեան տրուող հողերի դէպքում եւս պէտք է ստացուի մեր տարածքային մարմնի եզրակացութիւնը: Խնդիրը շուտափոյթ կարգաւորման կարիք ունի:

Նշեմ, որ 2002-2004 թթ. Վայոց ձորի մարզի Գնդեվազ գիւղի պահպանուող տարածքներից մէկում՝ Գնդեվանքի հարեւանութեամբ վարձակալութեան է տրուել երկու հողամաս: Հիմա արդէն զբաղւում ենք այդ խնդրով: Նման մէկ այլ դէպք էր գրանցուել Աղաւնատուն գիւղում, որտեղ վարձակալութեան էր տրուել դամբարանադաշտի տարածքը: Նման բարդութիւններ են ի յայտ գալիս նաեւ ընդերքի շահագործման բնագաւառում...

Ըստ իս, գործակալութեան վերահսկողական դերը հարկ է օրէնսդրօրէն մեծացնել կամ ընդարձակել:

Հ.- Յուշարձանների լաւ պահպանման կարեւոր նախապայմաններից մէկը տուեալ տարածքի ցանկապատումն է...

Պ.- Հիմա ցանկապատման աշխատանքներ չեն իրականացւում ֆինանսական միջոցների սղութեան պատճառով: Ցանկապատման աշխատանքներ վերջին անգամ կատարուել են 18-20 տարի առաջ: Ներկայումս եղած միջոցները տրամադրւում են առաջնահերթ, վտանգուած յուշարձանների վերականգնմանը: Այդ նպատակով այս տարուայ պետական պիւտճէով նախատեսուած է 720 մլն. դրամ, 2005 թ. 536 մլն. դրամի փոխարէն:

Հ.- Իսկ ինչպիսի՞ գործնական անելիքներ էք տեսնում Հին Ջուղայի հայկական խաչքարերի ոչնչացման փաստի առընչութեամբ:

Պ.- Ադրբեջանցիները դիմել էին Եւրախորհուրդ եւ ներկայացրել իբր Հայաստանում քանդուած յուշարձանների ցանկը: Փաստօրէն նրանք փորձում էին արդարանալ, որ Հայաստանում եւս աւերում են ադրբեջանական յուշարձանները: Նրանք Հին Ջուղայի դէպքը այսպիսով փորձում էին երկրորդ պլան մղել:

Մենք գրութիւն ենք ուղարկել Հայաստանի ԱԳՆ-ին եւ ներկայացրել Հայաս-

ՄԱՀ
ՎԱՐՈՒԺԱՆ ԱՃԷՄԵԱՆԻ

Պուէնոս Այրէսի մէջ մահացած է նախկին պոլսաբնակ արձակագիր Վ. Աճէմեան, 89 տարեկանին: Ծնած Պոլիս 1917ին, աւարտած Մխիթարեան վարժարանը, յետոյ աշխատած է որպէս հաշուակալ: Աշխատակցած էր Պոլսոյ գրեթէ բոլոր թերթերուն, հանդէսներուն եւ կարեւոր դեր կատարած որպէս նորավիպագիր եւ թատերագիր: Պատմուածքներու իր առաջին հատորը "Քովընտի փողոց" լաւ ընդունելութիւն գտած էր ընթերցող հանրութենէն: "Ամէն մարդ իր թուղթը ունի", "Ներսէն ու դուրսէն", "Պատուհանը բաց չեն թողուր" կատակերգութիւնները նորութիւններ եղած էին իրենց շրջանին: Սեպտեմբեր 6-7ի դէպքերէն ետք որոշած էր մեկնիլ Թուրքիայէն ու տարի մը ետք հաստատուած Արժանթին: Հոն վարած էր "Շարժում" եւ "Սարդարապատ" շաբաթաթերթերուն խմբագրութիւնը, նաեւ ուսուցչութիւն ըրած:

տանում եղած ադրբեջանական յուշարձանների լուսանկարները: Դրանք շատ չեն, բայց պահպանուած են իրենց սկզբնական վիճակում: Լաւ են պահպանուել ադրբեջանական գերեզմանատների շիրմաքարերը եւ դրանց կենտրոնում 15–20 տարի առաջ կառուցուած մրքատեղիները: Իհարկէ, Հայաստանի տարածքում կան նաեւ աւերուած յուշարձաններ, օրինակ, մզկիթ: Բայց հարկ է ընդգծել, որ դրանք անյայտ պատճառներով փլուել են դեռ 20րդ դարի սկիզբներին: Եւ որ ամէնակարեւորն է, դրանք որեւէ առնչութիւն չունեն ադրբեջանցիների հետ:

Հ.- Իսկ ընդհանուր առմամբ այսօր Հայաստանում քանի՞ ժողովուրդների եւ ազգութիւնների մշակութային կամ դաւանաբանական հնօրեայ յուշարձաններ են պահպանւում:

Պ.- Արդէն նշեցի, որ առկայ են ադրբեջանական որոշ յուշարձաններ: Քիչ չեն պարսկական յուշարձանները: Վերջին տարիներին վերականգնուել է Մասիսում գտնուող Թուրքմենական դամբարանը, որի շուրջ լաւ համագործակցութիւն է եղել մեր եւ Թուրքմենական կողմի միջեւ: Հնագէտների ուսումնասիրութեան շնորհիւ վերջին տարիներին Երեւանի կենտրոնում բացուեց մոնղոլական դամբարանը: Մեր ունեցած տուեալներով, եւս նման մի կառոյց կայ Գորիսի շրջանի Տեղ գիւղի մերձակայքում: Կան ասորական փոքրաթիւ եկեղեցիներ եւ գերեզմաններ: Հայաստանում ռուսական յուշարձանների թիւն անցնում է 20ից՝ դրանք ուղղափառ եկեղեցիներ, զազախական գերեզմաններ եւ այլ շինութիւններ են: Թէպէտ փոքր թուով, բայց առկայ են նաեւ հրէական յուշարձաններ:

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆԵԱՆ
«Հայոց Աշխարհ»

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝
3 - ՑԻԾԵՑՈՒՄ

ՄԱՇՏՈՑԵԱՆ ԳԻՒՏԻ
1600ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՅԹ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԱՀԱՅ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՄԱՇՏՈՑ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Մրցումի նիւթն է հետեւեալը.-

Ի՞նչ եղած է իր ստեղծումէն մինչեւ 1922 Մեսրոպեան այբուբենի եւ ազգային ուղղագրութեան դերը՝ Հայ ժողովուրդի գրաւոր հաղորդակցութեան եւ մշակութային միասնութեան կայացման մէջ, հակառակ քաղաքական եւ աշխարհագրական բաժանուածութեան, ինչպէս նաեւ՝ արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուներու տարբերութեան:

Ի՞նչ է կացութիւնը ներկայիս, 1922էն ի վեր: Մինչեւ իր արգիլումը սովետական Հայաստանի մէջ, աշխարհատարած Հայ ժողովուրդի բոլոր հատուածներուն եւ համայնքներուն կողմէ օգտագործուած Մեսրոպեան ուղղագրութիւնը կը խորհի՞ք թէ կրնայ այսօ՛ր ալ միասնական մշակոյթ յառաջ բերել՝ գրաւոր հաղորդակցութեան կապը վերահաստատելով ու զարգացնելով Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ:

Ի՞նչ պէտք է ընել, այս նպատակին հասնելու համար:

Մասնակցութեան պայմաններ.-

1) Մրցոյթին կրնան մասնակցիլ մինչեւ 30 տարեկան Սփիւռքահայեր եւ Հայաստանահայեր,

2) Մրցոյթի լեզուն է հայերէնը (արեւելահայերէն կամ արեւմտահայերէն),

3) Գրութիւնները պէտք է գրուած ըլլան Մեսրոպեան ուղղագրութեամբ,

4) Գրութիւնները պէտք է մեքենագրուած ըլլան առաւելագոյն երեք էջի սահմաններուն մէջ եւ ուղարկուին մինչեւ Ապրիլ 30,

5) Սփիւռքահայերու գրութիւնները պէտք է ուղարկուին Փարիզ, Միութեանս հասցէին, որ հետեւեալն է.-

Association MACHTOTZ
8 Rue Lamennais
92370 — Chaville/France

6) Հայաստանահայերու գրութիւնները պէտք է ուղարկուին հետեւեալ հասցէին՝
ՍՓԻՒՌՔ ԿԵԴՐՈՆ
Ալեք Մանուկեան 13
Երեւան 355070

7) Գրութիւններու վրան կամ տակը չդընել անուն, ազգանուն կամ ստորագրութիւն.

8) Անջատ թուղթի վրայ գրել մասնակցողին համառօտ կենսագրականը եւ հասցէն.

9) Դատակազմի անդամները բաղկացած են գրողներէ, ուսուցիչներէ եւ մամուլի ներկայացուցիչներէ,

10) Մրցումին արդիւնքները կը յայտարարուին Մայիսի վերջ,

11) Պարգեւներ.-

Առաջին մրցանակ՝ 250ական ԱՄՆ Տոլար (մէկը՝ Սփիւռքահայու, միւսը Հայաստանահայու համար),

Երկրորդ մրցանակ՝ 150ական ԱՄՆ Տոլար (մէկը՝ Սփիւռքահայու, միւսը Հայաստանահայու համար),

Երրորդ մրցանակ՝ 100ական ԱՄՆ Տոլար (մէկը՝ Սփիւռքահայու, միւսը Հայաստանահայու համար),

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՓԱՐԻԶԻ ՄԱՇՏՈՑ ՄԻՈՒԹԵԱՆ

► Արտասահմանի եւ Հայաստանի թերթերէն կը խնդրուի արտատպել եւ տարածել:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՓԱՐԻԶԻ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՆԴԷՍԸ

Մարտ 25, Շաբաթ օր Փարիզի 17րդ թաղամասի քաղաքապետարանի սրահը կը յորդէր հանդիսականներով որոնք ժամանած էին քաջալերելու եւ գոհունակութիւն յայտնելու Փարիզի Բարեգործականի միօրեայ վարժարանի նախկին շրջանաւարտներուն որոնք կազմակերպած էին օրուան ծրագիրը:

Այս հանդիսութիւնը Գիրերու գիւտին 1600ամեակին նուիրուած երրորդ նախաձեռնութիւնն էր: Կատարուած էր լուրջ աշխատանք մը, որ երիտասարդներու երեւակայութենէն բխած, համակարգիչի օգնութեամբ ներկայացուած էր:

Պարերով, երգերով, ոտանաւորներով և թատրոնով ամբողջական խճանկար մըն էր, ներկայացուած՝ դպրոցի աշակերտներուն մասնակցութեամբ:

Մերսոպ Մաշտոցն էր որ ներկայացուած տառերը կ՚արտագրէր ցուցատախտակին վրայ, ընկերակցութեամբ զուռնայի, դուդուկի եւ սրինգի եղանակներու:

Երիտասարդաց յանձնախումբը կը դրուատէր շաբաթօրեայ դպրոցի աշակերտներով. կը կազմակերպէ դպրոցի աշակերտներուն համար զանազան ձեռնարկներ, որպէսզի հայ աշակերտը հայ մնայ եւ տէր կանգնի իր լեզուին եւ մշակոյթին:

Փակման խօսքը արտասանեց Աւետիս Քհնյ. Պալըքեան, արտայայտուելով հայ լեզուին եւ հայախօսութեան մասին:

Շատ լաւ պատրաստուած դպրոցական հանդէս մըն էր:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՁԱՅՆԵՐ
ԳԱՒԱՌԷՆ

Մ. ՄԱՆՈՒՇԵԱՆԻ 100ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Կրընոպլի Ֆրանսահայ Նախկին Մարտիկներու եւ դիմադրականներու միութիւնը գլխաւորութեամբ իր նախագահին՝ Ժ. Ֆորէսթիէի, Հայ Մշակոյթի տան, Իզէրի հայկական միութիւններու դաշնակցութեան եւ Էչիրոլի քաղաքապետարանի օժանդակութեան ոգեկոչեցին դիմադրական շարժումի ծանօթ դէմքին՝ Մ. Մանուշեանի 100ամեակը եւ իր 23 ընկերներուն հետ գնդակահարման 62րդ տարելիցը: Այս առթիւ, պաշտօնապէս հրաւիրուած էր խումբի վերապրողներէն 90ամեայ Արսէն Զաքարեան: Առաջին յիշատակումը եղաւ, Ուրբաթ Մարտ 24ին Սէն Մարթէն տ՚Էռի "Ապրիլ 24" հրապարակը, ուր զետեղուած են Մ. Մանուշեանի եւ Ապրիլ 24ի յուշաքարերը: Ներկայ եղան տեղւոյն քաղաքապետը Ռընէ Փըրոպի եւ բազմաթիւ անձնաւորութիւններ: Այս առթիւ, քաղաքապետը Արսէն Զաքարեանը պատուեց քաղաքին մետալով եւ այս վերջինն ալ իր շնորհակալութիւնը յայտնեց եւ իր կարգին պատուոյ վկայական մը յանձնեց Ա. Գալայճեանի, հօրը յիշատակին, որ կռուած էր Ֆրանսայի համար, ինչպէս նաեւ Մ. Քէշիշեանին եւ Ա. Մխիթարեանին, անոնց կատարած ազգային գործունէութեան համար մասնաւորաբար Ապրիլ 24 հրապարակին կապակցութեամբ:

Մարտ 25ի առաւօտեան ժամը 11.30ին արարողութիւն մը եւս տեղի ունեցաւ Վիլար–Պոնոյի Մեռեալներու յուշարձանին առջեւ Մարտիկներու միութեան, անոր նախագահին Ժ. Արապեանի, տեղւոյն քաղաքապետին Տ. Շաւանի եւ համակիրներու բազմութեան մը ներկայութեան: Ոգեկոչման աւարտին Ա. Զաքարեան իր հատորը՝ Les Fusillés du Mont Valérien նուիրեց քաղաքապետին եւ պատուոյ վկայականներ բաշխեց Ֆրանսայի ծառայած հայ դիմադրականներուն՝ Լիւսի Պագալեան (հօրը յիշատակին), Յարութիւն Հայրապետեան, Գ. Մարգարեան, Ի. Գոչեան (եղբօրը յիշատակին), Ա. Մխիթարեան (հօրը յիշատակին): Այս յուզիչ պահերուն յաջորդեց ընդունելութիւն մը քաղաքապետարանին կողմէ: Կէսօրէ յետոյ, Էչիրոլի Պիւթ սրահին մէջ ցուցադրուած է Փասքալ Գոնվերի "O նոմ տէ Ֆիւզիյէ" ժապաւէնը, ներկայութեամբ տեղւոյն քաղաքապետին, հայ մարտիկներու միութեան նախագահին եւ համակիրներու: Ներկայացումէն ետք, դասախօսութիւն մը տուաւ Ա. Զաքարեան լուսաբանութիւններով եւ վկայութիւններով: Պ. Սթերփիոն եւ Շաքէ Մանուկեան երկու գրութիւն կարդացին Միսաք Մանուշեանէ, որմէ ետք քաղաքապետը փակեց հանդիսութիւնը:

Կիրակի, Մարտ 26ին, Էչիրոլի Ազատութեան հրապարակին վրայ, ներկայութեամբ երեսփոխան – քաղաքապետին, տեղւոյն քաղաքապետին, Ժ. Արապեանի, Հայ օտար դիմադրականներու եւ համակիրներու նշուեցաւ Մ. Մանուշեանի եւ ընկերներուն յիշատակը, որու ընթացքին, երկու քաղաքապետները պատուեցին Ա. Զաքարեանը քաղաքի պատուոյ մետալներով: Իր յուզումով, Ա. Զաքարեան իր շնորհակալութիւնը յայտնեց եւ իր կարգին պատուոյ վկայական յանձնեց քաղաքապետարանին: Կէսօրին, Հայ Մշակոյթի տան Ժ. Մարանճեան սրահին մէջ ճաշ մը տեղի ունեցաւ օրուան ոգեկոչումներուն առթիւ եւ Պ. Ա. Զաքարեան պատուոյ վկայականներ շնորհեց Կրընոպլի Հայ Մարտիկներու միութեան որ իր գոյութիւնը կը պահէ 1946էն ի վեր, ինչպէս նաեւ Տ. Մարանճեանի (հօրը յիշատակին), Փ. Բաբախեանի (հօրը բացակայութեան), տիկին Սթամպուլեանի (ամուսնոյն յիշատակին), Ս. Քեհէրեանի, Պ. Նիզասըլեանի, Ս. Տէմիրճեանի եւ այլք: Մեկնելէ առաջ, Ա. Զաքարեան ոգեւորեց ներկաները ջերմ խօսքերով, կոչ ընելով որ նոր սերունդը չըմոռնայ անցեալի հերոսները:

ՇԱՔԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱՀԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Իսմէնէ Նազիմի կը նայի, քիչ մը անորոշ: Ամէն բան այս պահէն կախուած է: Զօրս կողմը ամբողջ աշխարհը չունչը բռնած կեցած է: Նազիմ շուրջը կը նայի ներշնչում մը փնտռելու համար: Եւ կը տեսնէ երկու մուրացկաններ նստած ծառին ներքեւ, ուշադիր իրենց խօսակցութեան կը հետեւին: Եւ կայծակի պէս կ՚որոշէ. «Մենք պիտի վստահինք քեզի, բարեկամ, եւ լաւ պիտի վճարենք թէ՛ քեզի եւ թէ ճամբարին հրամանատարին: Բայց դուն փորձ չընես երկու լարի վրայ խաղալու: Կը տեսնե՞ս ծառին տակը երկու մուրացկանները, Եղբայրակցութենէն ղրկուած են: Եղբայրակցութիւնը պատիւի պարտք մը ունի ընտանիքի մը, որուն վերապրածները հոն ներսն են: Մենք պիտի ազատենք զանոնք այս գիշեր: Բայց եթէ պատահի որ մեզ խաբէք, Աստուած ձեզի օգնական ըլլայ, որովհետեւ մուրացկան մը եւ դանակ մը ամէն տեղ կը գտնուի»:

Նազիմ շատ վտանգաւոր գործ մը ըրաւ: Իսմէնէ կը դիտէ զինքը, վերջապէս հիացումով ("Ա՜հ, որքան խաղաղ պիտի ապրէինք դուք եւ մենք, այս օրհնեալ հողին վրայ" կը մտածէ: "Առաջ մենք ենք, Յոյներս, յետոյ, բոլոր միւսները... Բայց բոլորն ալ Աստուծոյ արարածներ են" կը կամենայ): Կաղ պահակը կ՚ըսէ. «Պէտք է հապճեպով ընել: Վաղը կրնայ շատ ուշ ըլլալ: Ասոնք բոլորն ալ անապատ, մինչեւ Տէր Զօր պիտի ղրկեն, եւ հոն..." Նշանակելի ժեստ մը կ՚ընէ ձեռքով. «փոսեր կան որ կը բացուին Եփրատի մէջ եւ հոն այդ գործով, իրենք, կուսակցութեան մարդիկը պիտի զբաղին: Մեզ ետ կը ղրկեն, մեր սրտերը շատ փափուկ են»: Իր փափկութիւնը միայն դըրամին կապուած է, իրականութեան մէջ: "Բայց միշտ աւելի լաւ է դրամը սիրել, քան արիւնը" կը մտածէ Իսմէնէ:

Իսմէնէ, Նազիմը եւ պահակը շուտով կը բաժնուին, ժամադրութիւն տալով շինարի ծառին տակը կէսօրէ վերջ ժամը երկուքին, այսինքն այն ժամուն, երբ սուրիական ամառուան մէջ, ոչ մէկը, բացի մեռելներէն, կը շրջի ճամբաներուն վրայ, ինչպէս կ՚ըսէ առակը:

Պահակը պէտք է առնէ հրամանատարին հաւանութիւնը, գաղտնի կերպով Շուշանիկին լուր տայ, որպէսզի մասնաւոր տեղ մը որոշուած ժամուն պատրաստ գտնուի: Որեւէ միջոց պէտք է գտնել թաղելու համար Վերոնը. Իսմէնէ իր վիզէն կախուած խաչը կը հանէ, երկիւղածութեամբ կը համբուրէ եւ հազարումէկ յանձնարարութիւններով կու տայ մարդուն: «Միայն Հայ մըն է մեռածը, շատ հոգ մի ըներ» կը պատասխանէ պահակը, որ Սելճուք կը կոչուի. բայց երբ իր նայուածքը դէմ առ դէմ կու գայ Իսմէնէի աչքին, անմիջապէս կը լռէ:

Իսմէնէ քիչ մը կը խառնշտկէ հագուստները որպէսզի Նազիմին կնոջ դերը առնէ եւ միասին կ՚որոշեն Զարեհին երթալ: Ժամադրութեան որոշուած ժամը չէ, բայց պէտք է ամէն տեսակ վտանգ եւ արգելք նկատի առնել: Հիմա Նազիմ եւ Իսմէնէ իրենց նպատակին հասնելու համար պէտք է փորձեն այն ամէն ինչ որ կրնան ընել. նոյնիսկ կը մոռնան Իսաադը որ այս պարագաներուն աւելի արգելք մըն է քան օգտակար: Ինք միայն ոչխարներով կը զբաղի ու կ՚աղօթէ:

(Շար. 86)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Լառա Մութէն,
Վազգէն Կիւրճեան

ցաւով կը գուժեն իրենց մօր եւ մօրաքրոջ

ՇԱՔԷ ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ-ՄՈՒԹԷՆԻ

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 6ին:

Իր յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Երեքշաբթի, Ապրիլ 25, ժամը 11:00ին, Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցին:

15 Rue Jean Goujon
75008 — Paris

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն.

LA PAROISSE ARMENIENNE CATHOLIQUE
SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR
DE MARSEILLE
vous invite à participer à la conférence
qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION DU GENOCIDE ARMENIEN

COMMIS PAR LES AUTORITES OTTOMANES - TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar
(Couvent et Siège Patriarcal des Arméniens Catholiques depuis 1749).

Un programme d'inspiration «24 avrilienne» suivra la conférence.
Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

U C F A F
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »
Samedi 22 avril à 16 heures
MEMOIRE
91e anniversaire du Génocide

LE GENOCIDE ARMENIEN

de Laurence Jourdan
Film documentaire (2005)
Suivi de la présentation du livre
de Béatrice Kasparian-Bricout
AZADOUI, ENFANT D'ARMENIE
Editions L'Harmattan

Le livre raconte le quotidien des enfants arméniens rescapés du génocide et surtout d'Azade, petite orpheline, proie de la bestialité humaine, ramassée au milieu des morts, indemne, mais mutique et amnésique. Azade réapprend à sourire et retrouve la joie de vivre...

L'auteur dédicacera son livre.
— Entrée libre —

Ի ՅԻՇԱՏԱԿ

Հրաչ Ազմանօղլուի *յիշատակին Պ. Ստեփան Ինճէճեան 100 Եւրօ կը նուիրէ Հայաստան Հիմնադրամին (ստանալ "Յառաջ"էն):*

Ի ՅԻՇԱՏԱԿ

Մարսէյլ: *Սօնիա Փիլիկեան կը նուիրէ 50 Եւրօ "Յառաջ"ին, իր հօր* Գրիգոր Փիլիկեանի *յիշատակին:*

ԼԵԶՈՒՆ ԱԶԳԻՆ ՀՈԳԻՆ Է, ԴՊՐՈՑԸ ԱԶԳԻՆ ՏՈՒՆՆ Է:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

2006-2007 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
տեղի կ'ունենան
ԱՊՐԻԼ 25-էն *մինչեւ* ՄԱՅԻՍ 31

RENTREE DES CLASSES 2006/2007

Inscriptions ouvertes du **25 avril au 31 mai 2006**

TEBROTZASSERE

Ecole mixte bilingue
Franco - Arménienne
(Académie de Créteil)
1 Boulevard du Nord — Carrefour d'Arménie
93340 LE RAINCY

Chef d'Etablissement :
Monsieur HAIG SARKISSIAN

- Maternelle: 3 sections
- Primaire: Sous Contrat Simple
- Collège: Sous Contrat d'Association avec l'Etat

Equipe pédagogique compétente et motivée

- Programmes officiels de l'Education Nationale
- Enseignement de la langue et de la culture arménienne
- Cours de chant : «Chorale Tebrotzassère»
- Cours d'informatique dès le primaire
- Langue vivante 1 : anglais
- Langue vivante 2 : allemand ou espagnol.

Equipements pédagogiques évolutifs :

Laboratoire de langues — Centre de Documentation et d'Information — Salle d'ordinateurs — Laboratoire de physique-chimie.

Ramassage scolaire par autocars suivant possibilités.
Cantine assurée.

Pour tout renseignement :

Tél. / fax : **01. 43. 81. 01. 72**
direction@tebrotzassere.com

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

91[EME] ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

PARIS

23 AVRIL

18h : Ravivage de la Flamme au Soldat Inconnu
Arc de Triomphe — Place Charles de Gaulle Etoile — Paris 8e
19h : Veillée organisée par les organisations de jeunesse arménienne sur le Parvis de Notre-Dame

24 AVRIL

17h30 : Rassemblement devant la Statue de Komitas
Place du Canada — Cours Albert Ier — Paris 8e
pour :
— combattre le négationnisme et le racisme de l'Etat turc notamment pour ce qui concerne le génocide des Arméniens en 1915;
— exiger le respect absolu des valeurs européennes par l'examen de la candidature de la Turquie à l'Union Européenne;
— dénoncer les agissements anti-arméniens des nationalistes turcs en France, en Europe et en Turquie.

Prises de paroles.

Manifestation en direction de l'Ambassade de Turquie.

28 AVRIL

18h30 : Réception à l'Hôtel de Ville : Monsieur Bertrand Delanoë, Maire de Paris, rendra hommage aux victimes du génocide des Arméniens en 1915, dans les salons de l'Hôtel de Ville (sur invitation uniquement).

SEVRES

22 AVRIL

11h : Au «Khatchkar» (devant le Musée national de Céramique).
Dépot de fleurs et prises de parole en présence de personnalités et élus locaux.

CHAVILLE

23 AVRIL

10h : Messe de Requiem;
12h30: Procession vers le Monument arménien (face Gare Chaville RD)
Dépôt de gerbes et prises de parole.

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

91ՐԴ ՏԱՐԵԼԻՑ
ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ

ՕՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵՐՈՑ
ՈՐՔ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ

մասնակցութեամբ
Հայ Կրօնական Ցարանուանութեանց

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 24.-
կէսօրէ ետք ժամը 3:00*ին*
Սուրբ Յովհաննէս - Մկրտիչ
Մայր Տաճարին մէջ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

կը մատուցուի՝ աւելի քան մէկուկէս միլիոն մեր նահատակներուն համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ HAMASKAINE

Փ Ա Ր Ի Զ

CINEMA

Samedi 22 avril à 20 heures
Maison de la Culture Arménienne
17 rue Bleue — Paris 9ème

Metteur en scène : ARAZ ARTINIAN

«Le Génocide en moi»

Tél. : 06 14 74 92 97 / 01 45 93 00 25

— Entrée libre —

Notre-Dame de Paris

91ème ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

Dimanche 23 avril à 15 heures

Liturgie célébrée par
MGR G. GHABROYAN
Evêque des Arméniens Catholiques de France

sous la présidence de
MGR ANDRE VINGT-TROIS
Archevêque de Paris

Մ ա ր ս է յ լ
Ս Ա Հ Ա Կ - Մ Ե Ս Ր Ո Պ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
նահատակ բանաստեղծ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
կեանքի մասին գրուած

«ԵՒ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ»

վէպի

Կը բանախօսէ հեղինակը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՃԵԱՆ

Ռուբէն Սեւակէն քերթուածներ
կ'արտասանէ
Հայաստանի վաստակաւոր
արուեստագիտուհի
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՃԵԱՆ

Ուրբաթ, Ապրիլ 21, ժամը 20.30ին
Սահակ - Մեսրոպ Մշակոյթի կեդրոնին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

— Մ ո ւ տ ք ը ա զ ա տ է —

(Շար. Ա. էջէն)

մանան եւ բնակչութիւնը վախի մէջ է տեւական կերպով: Առեւանգումներու պարագային, ընտանիքները չեն գիտեր թէ որո՞ւ պէտք է վճարել փրկագինը, որպէսզի ողջ գտնեն առեւանգուած անձերը: Ու թերթին թղթակիցը մի առ մի կը նկարագրէ զանազան պարագաներ:

ԷԼԻԶԱԲԷԹ Բ. Մեծն Բրիտանիոյ թագուհին իր ութսունամեակը կը տօնէ այս շաբթու (ծնած է 1926, Ապրիլ 21ին) եւ Ապրիլ 19ին Թոնի Պլէր նախագահեց համախասւոր արարողութեան, որ տեղի ունեցաւ Ներկայացուցչական ժողովին մէջ: 55 տարի է որ Էլիզապէթ Բ. գահ բարձրացած է եւ այդ տարիներու երկայնքին բաւական տաք ու պաղ տեսած է ընտանեկան գետնի վրայ, ջանալով սակայն տէրը մնալ իր արժանաւորութեան: Ժողովուրդը 66% համեմատութեամբ կապուած կը մնայ միապետութեան:

"ՖՐԱՆՍ - ՍՈՒԱՐ"ի պաշտօնէութիւնը միաձայնութեամբ որոշեց չարունակել գործադուլի շարժումը եւ Ապրիլ 19ին ալ թերթը լոյս չէր տեսած: Աշխատաւորները որոնք դէմ են գնորդներու ընթացիկ ընթրանումին, կը յուսան բեկանել տալ դատարանին որոշումը: Բանուորներու զօրակցութեան այցելութիւն մը տուած է թերթին հիմնադրին՝ Փիէր Լազարէֆի թոռը:

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 21
VENDREDI
21 AVRIL
2006

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.438 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.438

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՇԻՐԱՔ - ՄՈՒՊԱՐԱՔ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՈՒԶԷ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Շիրաք 48 ժամուան այցելութիւն մը կատարեց Գահիրէ, ուր իր պաշտօնակիցին հետ ծեծեց բազմաթիւ հարցեր, որոնց լուծումը այնքան ալ դիւրին չէ:

Ֆրանսա կը պնդէ երեք գլխաւոր հարցերու շուրջ.– ա) Համասը պէտք է ճանչնայ Իսրայէլը, բ) Հաւանութիւն տայ Օսլոյի համաձայնագրերուն եւ գ) Վերջ դնէ բիրտ ուժին: Շիրաք խուլ չի մնար արաբական աշխարհի կոչերուն, ըստ որոնց Ֆրանսա շատ մօտ է ամերիկեան քաղաքականութեան Միջին Արեւելքի մէջ եւ այդ ուղղութեամբ չուզեր որ օժանդակութիւնը դադրի Պաղեստինեան իշխանութեան, որու հետեւանքով ժողովուրդն է որ կը տուժէ: Շիրաք կը փափաքի որ միջազգային հաւաքականութիւնը "մօտէն զբաղի" այդ հարցով եւ հրաւիրէ Իսրայէլը որ վերջ տայ միակողմանի որոշումներու փորձութեան, այսինքն սահմաններ գծելու առանց խորհրդակցութեան, հրաժարի Թիրախ ունեցող ոճրափորձերէ եւ գաղթատիրական տեղաւորումներէ: Շիրաք պնդած է նաեւ օժանդակութեան պահպանման վրայ, որոշ պայմաններու տակ: Եգիպտոս ալ կը յուսայ համոզել Համասը որ գործադրէ իրմէ ակնկալուած պահանջները, այսինքն Արաբական Լիկայի խաղաղութեան նախաձեռնութիւնը եւ Օսլոյի համաձայնագրերը: Մուպարաքի վախն ալ այն է որ եթէ տագնապը ձգձգուի, Եգիպտոս ալ մաս կը կազմէ շրջանային անկայունութեան: Իրանի եւ Սուրիոյ հովանաւորութեան տակ բռնութիւնները բազմացած են Լիբանան եւ մանաւանդ՝ Իրաք: Մուպարաք ալ շատ վտանգաւոր կը գտնէ զինուորական որեւէ գործողութիւն Իրանի մէջ: Շեշտած է.– "Որոշումը տալը դիւրին է բայց հետեւանքները շատ ծանր կ'ըլլան": Եգիպտոս ալ աւելի դժուար կացութեան մատնուած է, որովհետեւ արեւմտեան օժանդակութեան դադրեցումէն ի վեր, Համասը կը դիմէ Եգիպտոսի, Քաթարի, Իրանի, Սաուտի Արաբիոյ:

Շիրաք խօսած է նաեւ Սուրիոյ հանդէպ Ֆրանսայի վարած քաղաքականութեան մասին, որ կը խոստովանի միշտ լաւ հասկցուած չէ: Գաղտնի բան չկայ, կ'ըսէ Շիրաք, այլ խօսքով, Ֆրանսա միտք չունի Պաշար ալ-Ասատը տապալելու, բայց կ'ուզէ պարտադրել անոր որ բնականոն յարաբերութիւններ հաստատէ Լիբանանի հետ եւ յանձնէ Հարիրիի մարդասպանները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼՂՀ

ՅԱՋՈՂ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ

Շաբաթ մը տեւած ռազմափորձերու աւարտին ԼՂՀ բանակի հրամանատար ու Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան Ապրիլ 18ին յայտարարած է. "Զօրավարժութիւնները ցոյց տուեցին որ ԼՂՀ պաշտպանութեան բանակը առանց երրորդ ուժի մասնակցութեան կարող է պաշտպանել Հանրապետութեան սահմանները եւ կատարել իր առջեւ դրուած խնդիրները":

Ռազմափորձերու ընթացքին ստուգուած է նաեւ պահեստի զօրքերուն մարտական պատրաստութեան աստիճանը: Այդ զօրքերը կրցած են եօթը ժամուան ընթացքին կատարել իրենց առջեւ դրուած խնդիրները, ինչ որ ինչպէս ըսած է նախարարը, կը նշանակէ թէ յանկարծ եթէ պատերազմական աննախատեսելի վիճակ ստեղծուի, այդ ուժերը ամբողջովին պատրաստ կ'ըլլան յարձակումները կանխելու:

Ռազմափորձերուն որպէս դէտ ներկայ գտնուած են Հայաստանի Պաշտպանութեան նախարարը Ս. Սարգսեան եւ փոխ նախարար, զինեալ ուժերու սպայակոյտի պետը Մ. Յարութիւնեան:

*
* *

ՋԱՒԱԽՔ

ՆԱԽԱԳԱՀ ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻԻ ԿԱՐՃԱՏԵՒ ԱՅՑԸ

Վրաստանի նախագահը Ապրիլ 19ին իր կնոջը հետ կարճատեւ այց մը կատարած է Ջաւախք: Հոն նախ ներկայ գտնուած է Ասպինձա – Ախալքալաք ճամբուն շինարարութեան սկսելու արարողութեան, յետոյ գացած է Նինոծմինդայի Գանձա գիւղը: Հոն իր նախաձեռնութեամբ նորոգուած Վ. Տէրեան միջնակարգ դպրոցին աշակերտներուն նուէրներ բաժնած, ապա մեկնած է Աճարիա:

ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԼԻՈՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՊՂԾՈՒՄԻՆ

Լիոնի հայկական յուշարձանին սրբապղծումին դէմ հակազդեցութիւնները կը շարունակուին, դատապարտելով թրքական նեղմտութիւնը, բռնութեան հակամէտ կեցուածքը:

Յուշարձանի կառուցումի ընկերակցութեան նախագահ Ժ. Մարտիրոսեանի ուղղուած գրութեամբ մը Ներքին գործերու նախարար Ն. Սարքոզի ըսած է. "Փխտողականութեան եւ ատելութեան արտայայտիչ բրտութեան այս արարքը անընդունելի է: Անոր հեղինակը, կամ հեղինակները մեր երկրին պղպղութեան կողմէ պէտք է խստիւ պատժուին":

Հայ գաղութին ամբողջական զօրակցութիւն յայտնելով նախարարը յիշեցուցած է թէ Ֆրանսա 2001 Յունուար 29ի օրէնքով հրապարակաւ ճանչցած է 1915ի Հայկական Ցեղասպանութիւնը եւ թէ Հանրապետութեան ընկավարները պիտի չարտօնեն որ օրէնքը ոտնակոխուի:

Ընկերվարական կուսակցութիւնը եւս Ապրիլ 19 թուակիր հաղորդագրութեամբ մը խստիւ դատապարտած է նոյն արարքը, անոր հետ նաեւ Հայկական Ցեղասպանութեան ժխտումը:

Հակազդեցութեան զոյգ արտայայտութիւններով հանդէս եկած է Ազգ. Ճակատն ալ. անոր Վիլէօրպանի մասնաճիւղը դատապարտելէ զատ արարքը, ամբողջական զօրակցութիւն յայտնած է տեղւոյն հայ համայնքին. աւելցուցած է թէ Թուրք պետութիւնը երբեք չէ ուզած ճանչնալ Ցեղասպանութիւնը եւ թէ Մարտ 18ին ալ հազարաւոր Թուրքեր Ռոնի նահանգապետին արտօնութեամբ թրշնամական ընթացք ցուցաբերած են:

Մասնաճիւղը հաւաստած է թէ պիտի մասնակցի յուշարձանին բացումի արարողութեան ու Ապրիլ 24ի ոգեկոչումին: Նոյն կուսակցութենէն Պ. Կոլնիշ անջատ հաղորդագրութեամբ մը յանուն կուսակցութեան ընդվզում ու դատապարտում յայտնած է: "Հայաստանի մեռեալները յարգանքի իրաւունք ունին" գրած է ան, պահանջելով որ պատկան իշխանութիւնները երաշխաւորեն յուշարձանին ապահովութիւնը:

Ապրիլ 19 թուակիր հաղորդագրութիւն մը հրապարակած է Մարդկային իրաւունքներու լիկան, դատապարտելու համար հայկական յուշարձանին սրբապղծումը:

"Լիկան կը վերահաստատէ իր փարումը 2001 Յունուար 29ի օրէնքին որով Ֆրանսա հրապարակաւ ճանչցաւ 1915ի Հայկական Ցեղասպանութիւնը եւ կը հակադրըւի մարդկութեան դէմ այդ ոճիրին սարսափը ուրանալու ամէն փորձի" ըսուած է հոն:

ԿՈՎԿԱՍԻ ՎՐԱՅ ԱՄՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ

Կովկասեան շրջանին վրայ տիրակալութեան ԱՄՆ – Ռուսաստան մրցակցութիւնը օրէ օր աւելի ակներեւ կը դառնայ: Վերջերս ԱՄՆ-ու Ուաշինկթընի մէջ Ապրիլ 14ին կազմակերպած "Կովկասեան շրջանին մէջ անկայունութիւն" խորագրուած համաժողովը պատճառ եղած է որ Մոսկուա բողոքագիր մը տայ Մոսկուայի ամերիկացի դեսպանին: Հակառակ որ գիտաժողովը կազմակերպուած է ոչ կառավարական հիմնարկի մը կողմէ, Մոսկուա զայն նկատած է նախկին խորհրդային գօտիին ռուսամէտ իշխանութիւնները անարիւն յեղաշրջումներով տապալելու ամերիկեան քաղաքականութեան մէկ շարունակութիւնը:

ԱՄՆ-ու դեսպանին յանձնուած բողոքագրին առընչութեամբ Ռուսաստանի Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարութիւն մը հրապարակած է ուր կ'ըսուի թէ դեսպանին յիշեցուցած են միջազգային անհարեկչութեան դէմ պայքարին մէջ իր երկրին պատասխանատուութիւնները եւ շեշտած՝ վերանշեալ համաժողովին առթած վրդովումը:

Բողոքագրին մէջ ակնարկութիւն մըն ալ եղած է Չէչէնիոյ հարցին. Մոսկուա ըսած է թէ ԱՄՆ-ու չէչէն մարտիկներու օժանդակելու պարագային երկու երկիրներու յարաբերութիւնները լրջօրէն կը վնասուին:

Ամերիկեան աղբիւրներ խնդրոյ առարկայ համաժողովը սահմանած են որպէս "տեղեկացնելու եւ ԱՄՆ-ու համար ռազմավարական եւ մարտավարական իմաստ ներկայացնող նիւթերու մասին լուսաբանելու արարք":

Ձեռնարկը կազմակերպող հիմնարկին անդամներէն մէկն է Զպիկնիեւ Պրզեզինսկի որ միջոց մը նախկին նախագահներէն Ճ. Գարթըրի ազգային ապահովութեան խորհրդականն էր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻՈՅ Բեկանիչ Ատեանը ստուգելէ ետք խնդրոյ առարկայ եղած քուէները, Ապրիլ 19ին, հաստատեց Ռոմանօ Փրոտիի ձախ համախմբումին յաղթանակը, անոր շնորհելով 24.755 քուէներու առաւելութիւնը Երեսփոխանական ժողովին մէջ: Ստուգումները շաբաթ մը տեւած են եւ վերջնական բնոյթ ունին, նոյնիսկ եթէ Պէրլուսքոնի դեռ կ'առարկէ: Փրոտիի փոքր յաղթանակը բաւական լուրջ դժուարութիւններ կը ստեղծէ եւ առնուազն ամիս մը հարկ է, որ կարելի ըլլայ կառավարութիւն մը կազմել: Այս առընչութեամբ իր մտահոգութիւնը կը յայտնէ Ֆայնանշըլ Թայմզ, որու համար այսքան ճղճիմ յաղթանակը վատթարագոյն սենարիօն է որպէսզի Իտալիա Եւրոյի գօտիին մէջ մնայ 2015էն ետք: Փըրսոլ որ Պէրլուսքոնին կը գտնէ Իտալիոյ տնտեսական դժուարութիւններուն միակ պատասխանատուն, հրաւիրած է Եւրոպան որ համբերութիւն ունենայ: Կ'ըսէ թէ ժամանակի պէտք ունի Իտալիան լաւ ճամբու վրայ դնելու համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ բանակին սպայակոյտին պետը՝ զօր. Եուրի Բալույեւսկի, Ապրիլ 19ին, հարկ տեսած է ճշդել որ "Ռուսաստան ոչ մէկուն, ոչ ալ միւսին" կողմն է, այն պարագային, երբ արեւմտեան զինուորական միջամտութիւն մը կը պատահի Իրան: Մամուլին առջեւ է, որ զօրավարը յայտարարած է "Իմ կարծիքով, զինուորական լուծում մը իրանեան հարցին, քաղաքական եւ զինուորական սխալ մը կ'ըլլայ": Այս դիրքորոշումը կը հաստատէ որ խոր տարակարծութիւններ կան Ռուսերուն եւ արեւմտեան աշխահին միջեւ: Նախորդ օրը, Պուշ կրկնած էր թէ ոչ մէկ լուծում կը խուսափի արգելք ըլլալու համար որ Իրան հիւլէական ռումբ ունենայ:

ՉԻՉԷՆԻՈՅ գլխաւոր դէմքը՝ Ռամզան Կադիրով յայտարարած է, Ապրիլ 19ին, որ հարկ է մաքրագործել ապստամ տեւող այն վերջին օճախները, ուր կը պահուին չէչէն գաղթականներ, որոնք ըստ իրեն, օժանդակութիւնը կը վայելեն "լրտեսներու որոնք կ'աշխատին օտար յատուկ սպասարկութեանց համար":

ԽՄՆԸՍԹԻ ԻՆԹԷՐՆԷՇԸՆԸԼԻ համաձայն, աշխարհի մէջ 20 հազար դատապարտեալներ կը սպասեն մահապատիժի գործադրութեան եւ գործադրութիւններու 94%ը, 2005ին, տեղի ունեցած են ԱՄՆ, Իրան, Չինաստան եւ Սաուտի Արաբիա: Նկատուած յառաջդիմութիւններու մէջ, Խմնըսթի կ'արձանագրէ որ ԱՄՆ-ու մէջ, 2005 Մարտին արգիլուած է անչափահասներու մահապատիժներու գործադրութիւնը:

ԿԻՐԳԻԶՍՏԱՆԻ նախագահը յայտարարած է թէ իր երկրին մէջ գտնուող ամերիկեան զինուորական խարիսխները պիտի փակուին, եթէ այդ մասին մինչեւ Յունիս 1 համաձայնութիւն չգոյանայ Ուաշինկթընի հետ: Նախագահ Ք. Պաքիեւ կը պահանջէ որ ԱՄՆ աւելի վարձք վճարէն խարիսխներուն համար ու կը դանդատի որ Ուաշինկթըն ոչ մէկ պատասխան տուած է նոր համաձայնութիւն կնքելու իր յամառ կոչերուն: Կիրգիզստանի ամերիկեան խարիսխը կը գործածուի Աֆղանիստանի գործողութիւններուն համար: Հոն ամերիկացի հազար զինուոր կայ:

ՖՐԱՆՍԱՅԻ հարցախոյզերը կը շարունակուին նախագահական ընտրութեան համար (աւելի քան տարի մը կայ) եւ Ապրիլ 20ին, Ֆիկառոյի առաջին էջը գրաւած էին նոր արդիւնքները (Թէ.էն.էս.–Սոֆրէս/Իւնիլոկ): Ըստ արդիւնքներուն, առաջին շրջանին գլուխը կը հանդի Սեկոլէն Ռուայալ ձայներու 34%ով, կը հետեւին Սարքոզի (30%), Ժան-Մարի Լը Փէն (10%), Տ. տը Վիլփէն (6%), Պայրու (5%) եւլն., եւլն.: Երկրորդ շրջանին կը

(Շար.ը Դ. էջ)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԷՐՆԵՐԻ ՍԹՐԻՓ-ԹԻԶԸ ՈՐ ԻՐ ՀԵՐԹԻՆ ԱՅԴ ԻՆՔՆԱՄԵՐԿԱՑՈՒՄԻ ՋԱՒԵՇՏԻ ԾԱՂՐՆ Է...

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

Ի ՍԿԶԲԱՆԷ...

Սթրիփ-թիզի՝ ինքնամերկացման զաւեշտի ծաղրը հիմա էլ բեմահարթակ է ստացել "Ազգ" օ. աթերթի էջերի վրայ: Թէեւ բոլորովին աւելորդ անգամ, սակայն հերթական յաջողութեամբ բացայայտուել է թէ որպիսի թերուսների ու տգէտների հաւաքածու է ներկայացնում համալսարանի բանասիրական մասնաճիւղի գիտական խորհուրդը իր ամբողջ կազմով:

"Ինչը՝ յանուն ինչի" ճապաղ վերնագրով եւ եղբայրական գերեզմաննոց յիշեցնող ստորագրութեամբ ընդամէնը հինգ պարբերութեան մէջ (տե՛ս "Ազգ", 2 Մարտ, 2006) ամփոփուած է այն ողբերգական իրականութիւնը, ինչը գիշերային ակումբներից թափանցել է հայ "լեզուաբան համալսարանականների" կենցաղ: Նրանք "մասնագիտական" վկայականներ ունեցողների նեղ շրջանակի մէջ այնքան են հիացած մէկը միւսին ցուցադրած իրենց տգիտութեամբ,– ինչը գիտական տերմինոլոգիայով կոչւում է էքսգիբիցիոնիզմ,– որ կարծում են թէ նոյն մերկութիւնը կարող է նաեւ զուարճացնել Հայոց Լեզուի, Այբուբենի եւ Ուղղագրութեան, եւ ընդհանրապէս հայ մշակոյթի ճակատագրով տագնապած մտաւորականութեանը:

Խմբակային ինքնամերկացման մէջ ոչ բնաւ նորութիւն չկայ: Կրկնւում են այն բոլոր անհեթեթութիւնները, սուտն ու խնդրի էութիւնից ու հրատապութիւնից հեռու մարդկանց մոլորեցնող զեղծումները, որոնք վերջին տասնամեակին համապատասխանօրէն բացայայտուել են բազմաթիւ հեղինակութիւնների կողմից: Այդ բացայայտումներից Հայաստանի մէջ հրապարակուած են մի քանիսը միայն եւ այն էլ դժուարութեամբ՝ գոյութիւն ունեցող թաքուն պատճառով, որը գրաքննութեան մի նոր տեսակ է իրեն "ժողովրդավարական" յայտարարած տէրութեան մէջ: Բայց լիակատար դիւանը գտնւում է "Յառաջ" օրաթերթի տարեկան հաւաքածոների մէջ:

Անշուշտ, համալսարանի բանասէրների խումբը ծանօթ է բոլոր հրապարակումներին եւ երբեք չէր համարձակուի հանդէս գալ "Ինչը՝ յանուն ինչի" խորագրով եւ ճշմարտութեան որեւէ հիմք չունեցող, ստայօդ համախօսականով, եթէ Հայաստանի հասարակութիւնը զրկուած չըլինէր ճշմարտութեանը հաղորդակցուելու հնարաւորութիւնից:

Այս է պատճառը, որ անհրաժեշտ է մէկ անգամ եւս քննել ու բացայայտել, թէ ինչ ՁԳԻՏԵՆ կոլեկտիւ ստորագրութեամբ հանդէս եկող "համալսարանականները"՝ առանձին-առանձին, եւ բոլորը՝ միաժամանակ:

Նաեւ քննել ու բացայայտել, թէ որտեղ է թաղուած այդ խորախորհուրդ տգիտութեան շան գլուխը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Համախօսականի առաջին պարբերութիւնից պարզւում է, թէ բանասիրութեան մասնաճիւղի "գիտական խորհրդի" անդամները "իմացել են, որ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում ստեղծուել է «Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնողների» միաւորում": "Ազգասիրական – հայրենասիրական մտահոգութեան տպաւորութիւն թողնող" այս միաւորումը միայն "արտաքուստ է անվըտանգ թուացող",– յայտարարում են նրանք: Այնուհետեւ բացայայտում են միաւորումի գործունէութեան քօղարկըւած վտանգը, որ "նպատակամղուած է լինելու Հայաստանում եւ Սփիւռքում մեսրոպեան ուղղագրութեան վերականգրնմանը":

Միակ բարեբախտութիւնը նրանց կարծիքով այն է, որ միաւորումը "ոչ պետական կառոյց է":

Ինքնամերկացումի ցուցքը սկսւում է հէնց այս առաջին տողերից: Եւ բացայայտում է, որ գործ ունենք թերուսների հետ, որոնք նախ եւ առաջ ՁԳԻՏԵՆ, թէ՝

Այն ամէնը, ինչը մեսրոպեան է՝ Այբուբենը, Ուղղագրութիւնը եւ Հայեցի մտածողութիւնը երբեք չեն կարող լինել վտանգ, այն էլ քօղարկուած վտանգ ներկայացնել Հայոց լեզուին: Ցաւակցաբար, որ մեսրոպեան Այբուբենի ու Ուղղագրութեան պահանջատիրութիւնը ինչպէս 1922ից ի վեր եղել է, նոյնպէս եւ այսօր մնում է բացայայտ պահանջատիրութիւն:

Սփիւռքը երբե՛ք չի խափանել մեսրոպեան Այբուբենը, Ուղղագրութիւնն ու Կէտադրութիւնը. Սփիւռքը երբեք չի՛ ընդունել բոլշեւիկեան խեղագրութիւնը: Հետեւաբար սուտ են թէ միաւորումը "իր գործունէութեամբ նպատակամղուած է... Սփիւռքում մեսրոպեան ուղղագրութեան վերականգնմանը":

Այնուհետեւ նրանք ՁԳԻՏԵՆ թէ՝

Հայոց լեզուի նկատմամբ իրականացուած ոչ միայն վտանգաւոր, այլ յանցաւոր գործողութիւնը կատարուել է մեսրոպեան Ուղղագրութիւնը սովետական խեղագրութեամբ փոխարինելով, ինչը տեղի ունեցաւ 1922 թուականին՝ բոլշեւիկեան ներխուժումով Հայաստանի օրինական Հանրապետութիւնը տապալելուց եւ մասնատելուց յետոյ:

"Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնողների" միաւորումը սոսկ "ազգասիրական – հայրենասիրական մտահոգութեան տպաւորութիւն թողնող" մի կառոյց Չէ... Կրեմլեան հրահանգներին մինչեւ այսօր կուրօրէն սպասարկող ապազգային լեզուաբանների բախտը բընաւ էլ չի բերել, եթէ նոյնիսկ նրանք պնդում են թէ միաւորումը "բարեբախտաբար ոչ պետական մի կառոյց է"... Պետական կառոյցներն են (Լեզուի հիմնարկութիւն, Տերմինաբանական կոմիտէ), որ տասնամեակներ շարունակ բռնադատեցին հայերէնը:

Իսկ "Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնողների միաւորումը" այսօր շարունակում է Հր. Աճառեանի, Յովհաննէս Թումանեանի, Պ. Սեւակի (բոլոր անունները չթուարկեմ) եւ ապա Ռ. Իշխանեանի, այնուհետեւ "Հայ Դպրութիւն" հասարակական կազմակերպութեան մարտահրաւէրը՝ Հայ Մշակութային Ինքնութիւնը վերականգնելու եւ շարունակելու մարտահրաւէրը:

Դժբախտաբար Հայաստանի իշխանութիւնները անցած աւելի քան մէկ եւ կէս տասնամեակի ընթացքին այնպէս էլ չուզեցին հասկանալ, որ ազգային մի տէրութիւն Ազգային է ամէնից առաջ իր Լեզուով եւ Մշակոյթով:

Ազգային յիրաւի մեծ դժբախտութիւն է, որ Հայ Մշակութային Ինքնութիւնը վերականգնելու եւ շարունակելու մարտահրաւէրին դէմ են ոչ միայն պետական կառոյցները, այլեւ ոչ պետական, բայց պետութեան դուդուկի տակ երգող ու պարող եւ "համաժողովրդական" ու "հասարակական" յորջորջուող կառոյցները, որոնցից է օրինակ՝ Գրողների միութիւնը իր ղեկավարութեամբ ու ամբողջութեամբ, եւ որքանով յայտնի է՝ մէկ բացառութեամբ:

Եւ ապա՝

Գիտական խորհրդի անդամները կամ իրենք են թիւր իմացութեան մէջ եւ կամ միտումնաւոր կամենում են մոլորեցնել ընթերցողին, երբ որպէս փաստարկ յիշեցնում են, ինը միլիոն Հայերին, որոնք իրենց գաղթականի կարգավիճակով բացայայտում են թուրք – ռուսական հայատեաց քաղաքականութեան ամբողջ ողբերգութիւնը:

Իրականութիւնն այն է, որ "Ռուսաստանի Դաշնութիւն, ԱՄՆ եւ այլուր գաղթած... ինը միլիոն Հայեր" բնաւ էլ չեն տիրապետում Գրական Արեւելահայերէնին եւ չեն գրում մեսրոպեան տառերով: Ռուսաստան արտագաղթած Հայերը ընդհանրապէս հայերէն խօսելու կամ գրելու առիթը չունեն եւ երբեւէ չեն ունենալու: Դեռեւս 19րդ դարի վերջին քառորդն էր, որ իշխան Գոլիցինը բացէ ի բաց յայտարարեց թէ՝ "Մեր միջնակարգ եւ բարձրագոյն ուսումնարաններից չենք պահանջում ուսուցումն, այլ պահանջում ենք ռուսացումն": Այս պահանջը երբեք չի կորցրել իր հրատապութիւնը: Ոչ միայն ինքնակալութեան, այլեւ կոմունիստական տիրակալութեան շրջանին այդ խնդիրը առաջնային էր: Սովետական Հայաստանի միջնակարգ եւ բարձրագոյն ուսումնարանները իրականացնում էին ոչ թէ ուսուցման, այլ ռուսացման խընդիրը: 1917ի բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ իրար յետեւից փակուեցին հատ ու կենտ հայկական դպրոցները, որոնք գոյութիւն ունէին Մոսկուայի, Ս. Պետերբուրգի, Նոր Նախիջեւանի մէջ:

Իսկ ինչ վերաբերում է Գրական Արեւելահայերէնը "տիրապետողներին", որպիսիք լինելու էին գոնէ Հայաստանի մէջ, ապա ժամանակին, տասնամեակներ առաջ դեռեւս Պարոյր Սեւակն էր ահազանգում, թէ Հայը խօսում է "գեաւառա – մոսկովեան", իսկ ես աւելցնում են նաեւ "գեաւառա – ղարաբաղա – փողոցային – մոսկովեան – քրէական" մի ահաւոր խառնուրդով:

Ահաւասիկ մամուլի մէջ հրապարակուած մէկը բազմաթիւ տագնապներից, որպիսիք հնչում են ամէն տարի համալսարանական ընդունելութեան քննութիւնների արդիւնքները լուսաբանելիս. "Բազմաթիւ հայագէտներ, այդ թւում եւ այլազգի, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ համարում են աստուածային լեզու, անգամ ժամանակին լըջօրէն առաջարկութիւն էր քննարկըւում՝ հայերէնը դարձնել գիտութեան միջազգային լեզու, հաշուի առնելով հարըստագոյն բառամթերքը և բառաստեղծման ու բառաբարդման գրեթէ անսահման հնարաւորութիւնները: Բայց արի ու տես, որ զարմանալիօրէն ամենաարհամարական ձեւով մեր ոսկեղինիկին վերաբերւում ենք հէնց մենք: Զարմանալի է, բայց փաստ. բուհական (առել կ՚ուզի համալսարանական) քննութիւնների Հայոց լեզուի առարկայական յանձնաժողովների ներկայացուցիչների վկայութեամբ, դիմորդների մեծամասնութիւնը անգամ "Գիքոր" չի կարդացել, եւ քընութիւն ընդունող դասախօսներ անկեղծօրէն ուրախանում են, եթէ դիմորդը գոնէ մօտաւոր պատկերացում ունի հայ գրականութեան մասին: Է՛լ աւելի զարմանալի է ,որ Հայոց լեզուից գրօ միաւոր ստացողների պակաս էլ չկայ: Եւ եթէ այսպէս շարունակուի, երեւի թէ մի քանի տարի անց հայ ժողովրդի մեծամասնութիւնը կը տիրապետի ոչ թէ գրական հայերէնին, այլ զուտ կիսաքրէական ժարկոնին, իսկ Հայոց ոսկեղինիկը երեւի թէ կը մնայ առաւելապէս օտարազգի հայագէտների մենաշնորհը":

Բանասէրների "գիտական" խորհրդի անանուն անդամները այն համոզմունքին են, թէ հայերէնի իմացութիւնը տրուած է միայն իրենց՝ "մասնագէտներին", իսկ "Տարաբնոյթ մտաւորականներ՝ հոգեբանական, քանդակագործ, աստղաֆիզիկոս, բանաստեղծ, արձակագիր, բժիշկ" եթէ լեզուի հիմնարկութեան կամ բանասիրական մասնաճիւղի գիտական խորհրդի մէջ չեն կամ բանասիրական մասնաճիւղի գիտական խորհրդի բաշխած վկայականներից չունեն, ապա "գերազանցապէս ոչ մասնագէտներ" են:

Յիրաւի, նրանք հասել են այն անհեթեթ համոզումին, որ կարծում են թէ Գրական հայերէնների իմացութիւնը անպայման իրենց խորհրդի կողմից տրուած բաւականին կասկածելի վկայականներով է հաստատւում: Նրանց անամէջութիւնն այնքան խորն է, որ բանաստեղծին ու արձակագրին կոչում են "ոչ-մասնագէտ" եւ իրենց սահմանափակ մտածողութեամբ չեն էլ պատկերացնում, որ հոգեբանը կարող է լեզու սովորեցնել սովետական ակադեմիկոսին կամ դոկտորին, որ քանդակագործը կամ նկարիչը իր գրական հայերէնով կարող է գրել անհամեմատ գրագէտ, քան սովետական "մասնագէտ լեզուաբանները", իսկ ոչ միայն Շէյքսփիրի թարգմանիչը 19րդ դարում "մասնագէտ" չի եղել, այլեւ Դանիէլ Վարուժանը, Յովհաննէս Թումանեանը, Լեւոն Շանթը, Վահան Տէրեանը մինչեւ Եղիշէ Չարենց բարեբախտաբար առիթ չեն ունեցել անցնելու "բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդի" թրիտակով:

(Շար. 1)

ՄԵՆՔ ՄԵՋԱՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ

Հայերէն տառերը քարերի կողերի վրայ շաղ են եկել գետնին: Տապանաքարերի փշուրներ են: Իրարից քիչ հեռու՝ հսկայ տապանաքարերի երկու կոյտ: Չէ, այս տեսարանը ապատագրուած Քելբաջարում չէ, եւ ոչ էլ՝ Նախիջեւանում: Սա Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երեւանում է, 2006 թ. Ապրիլին: Այգեգործների փողոցում է այս չինհրապարակը, Նորքի զանգուածից Նոր Նորք տանող ճամբեզրին:

«Տեսնես ո՞վ է սրա տէրը», հարցնում է որդիս: Նրան տարել էի հետս, որ տեսնի, թէ ինչպէս ենք Հայերս վարւում մեր մշակութային արժէքների հետ: «Ի՞նչ կարեւոր է, թէ ով է տէրը», պատասխանում եմ: Տապանաքարերն այստեղ են բերել ինչ-որ վայրից: Հաւանաբար դրանք մէկին այնտեղ խանգարել են, նա էլ "ազատել է" տարածքը եւ որոշել օգտագործել դրանք որպէս շինանիւթ: Ոչ մէկը չի փորձել կանխել տապանաքարերի տեղահանումը, ջարդը: Տապանաքարերի ճիշդ մէջտեղում՝ յաւերժութեան նշանների արանքում, սատկած մի շուն կար, քիչ այն կողմ՝ խաչի պոկուած մի կտոր:

Տապանաքարերի տեսքը, նրանց վրայի քանդակները յուշում են, որ դարերի պատմութիւն ունեն, մշակութային արժէքներ են:

Մենք՝ Հայերս, մեր նախնիների տապանաքարերով հերթական ռեստորանը կամ հիւրանոցն ենք կառուցում: Քելբաջարում մեր քանդուած եկեղեցիների քարերով, խաչքարերով ադրբեջանցիները տներ էին սարքում: Այնտեղ տասնեակ գիւղերում այդպիսի տներ կան: Երեւանում նոյն բանը մենք ենք անում:

Ողջ հայութիւնն այսօր համախմբուել եւ բողոքում է Նախիջեւանում ադրբեջանցիների կողմից հայկական խաչքարերի բարբարոսական ջարդի դէմ: Հայերիս այստեղ ո՞վ պէտք է բողոքի ու պայքարի: Գուցէ դիմե՞նք միջազգային տարբեր կառոյցներին եւ խնդրենք, որ գան, մեզանից պաշտպանեն մեր իսկ մշակութային արժէքները:

Չեզ թւում է, թէ այս պատկերները տեսնելուց յետոյ մշակոյթի նախարարը, դատախազը, կամ մէկ այլ պաշտօնեայ՝ գնալու, զբաղուելո՞ւ է այս հարցով: Իհարկէ, ոչ, նրանք աւելի կարեւոր գործեր ունեն. մէկը գալիք համահայկական մշակութային միջոցառումն է ծրագրում, միւսը ծառ է տնկում, երրորդը հիւրանոց է կառուցում, չորրորդը՝ էլիտար շէնք՝ Երեւանի կենտրոնում, հինգերորդը կոռուպցիայի դէմ պայքարի շոու է կազմակերպում Ազգային Ժողովում, եւ այսպէս շարունակ...

ԷԴԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

«Ազգ»
Ապրիլ 12

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՔԵՐ – 5
Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. ՊՉՏԻԿԵԱՆ
Երեւան 2006

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ
ՔՐՈՆԻԿԱԳԻՐ ԵԻՍԵԲԻՈՍ – ՑԻՊԷ
Երեւան 2006

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝

• 9-11 Նոյեմբեր 2005 Թուականներու միջեւ Վիթէմպէրկի աւետարանական եկեղեցւոյ կաճառին մէջ կազմակերպուած էր դասախօսութիւններու շարք մը Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին համար "Գերմանիան եւ Հայաստանը 90 տարի ետք" ընդհանուր խորագրին տակ: Դասախօսութիւնները սկսան Միջ-Եկեղեցական արարողութեամբ մը, որուն նախագահեց Գերմանիոյ Հայոց Առաջնորդ Գարեգին Արք. Պեքճեան, առընթերակայ ունենալով փրոֆ. Խաչիկ դպիր Ղազերեանը: Կատարուած հոգեհանգստեան պաշտօնին երգեց Տիկ. Անահիտ Արզաքեան: Արարողութենէն ետք դասախօսութիւններու շարքը սկսաւ բացման խօսքերով, որու ընթացքին Առաջնորդը առաւ առաջին խօսքը: Ան գնահատեց կազմակերպիչները ի մասնաւորի կաճառին տնօրէնը Տօրկէրլոհ, փրոֆ. Վոլֆկանկ Կուսթը եւ փրոֆ. Խաչիկ Ղազերեանը որ Հայերու համար մեծագոյն կարեւորութիւն ներկայացնող այսպիսի յիշատակի օրուան համար համախմբած են գիտական ու քաղաքական դէմքեր: Ներկաներուն մէջ կարելի էր տեսնել բացի երեք Եպիսկոպոսներէն, երկու քաղաքական դէմքեր, մէկը՝ Քրիստոնէական, միւսը՝ Կանաչներու կուսակցութենէն, Պրն. Պէրկմանն ու Տիկ. Պէք: Դասախօսութեամբ մը իր մասնակցութիւնը բերած էր նաեւ Տոքթ. Եօզֆ Հոսֆելտ, որ վերջերս հրատարակած էր "Օփերասիոն Նեմէսիս" անուն գիրքը, նոյնպէս նուիրուած Հայոց Ցեղասպանութեան:

• 23 Դեկտեմբերին Գարեգին Արք. իր հետն ունենալով Սերովբէ Վրդ. Իսախանեանը Պէրլինի մէջ ՀՀ դեսպանութեան նոր շէնքի օրհնութիւնը կատարեց:

Ինչպէս ծանօթ է, 2000 թուականին Դեսպանութեան նախկին շէնքը Առաջնորդարանն ու Գերմանիոյ Հայ Գործարարներու միութիւնը միասնաբար գնած եւ Դեսպանութեան տրամադրած էին: Այս նոր շէնքը առեւտրական գերմանացիի մըն է, որ կահ կարասիով միատեղ ամբողջութեամբ նուիրած է Հայաստանի Հանրապետութեան: Ինք Հայաստանի հետ առեւտրական գործեր ունի: Փոքրիկ դղեակի մը նմանող շէնքին գնումն ու կահաւորումը կատարուած է դեսպանուհի Տիկ. Կարինէ Ղազինեանի անմիջական միջամտութեամբ եւ հսկողութեամբ, ինչ որ կը դրսեւորէ ազնիւ տիկնոջ բացառիկ ճաշակը: Տնօրհնէքի արարողութենէն ետք, գերմանահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հիւրասիրութիւն տեղի ունեցաւ:

• Յունուար 27ին Սերովբէ Վրդ. Իսախանեան, հրաւէրով Գերմանիոյ Կիւլն քաղաքի կաթողիկէ կրթական կեդրոնի, բանախօսեց "Հայ ժողովուրդի եւ եկեղեցւոյ պատմութիւնը" նիւթով: Բանախօսութեան կ՚ընկերանար մեր պատմութիւնն ու պետականութիւնները, եկեղեցին ու ճարտարապետութիւնը, մշակոյթն ու ներկայ կեանքը լուսաբանող լուսասահիկներու ցուցադրութիւնը: Բանախօսութեան ներկայ էին շուրջ 50 գերմանացի ունկնդիրներ, ինչպէս նաեւ Հէսընի եւ Կիւլնի հայ համայնքներու անդամներ: Յաջորդող օրերու Կիւլնի շրջանային երկու օրաթերթեր լայնօրէն անդրադարձան բանախօսութեան:

• Փետրուար 24ին Սերովբէ Վրդ. Իսախանեան հետը ունենալով Հեսընի Հայ Համայնքի Վարչութեան անդամուհի Տիկ. Հիլտա Տեկիրմենճի, ինչպէս նաեւ Օրդ. Սիպէլ Պուլութ հանդիպում մը ունեցաւ Հանաուի գլխաւոր քաղաքապետ Պրն. Քլաուս Քամինսքիին հետ: Հանդիպման ընթացքին Պրն. Քամինսքիին մարամասն տեղեկութիւններ տրուեցան գերմանահայութեան եւ Գերմանիոյ Հայոց Առաջնորդարանի եւ ի մասնաւորի Հեսընի հայ համայնքին մասին: Խօսակցութեան նիւթ դարձան քաղաքապետարանին կողմէ համայնքիս մշակութային ձեռնարկներուն նիւթապէս աջակցելու եւ ի մասնաւորի մեր համայնքին Հանաուի մէջ համայնքային մնայուն հաւաքատեղի՝ Հայ Տուն մը եւ կամ հողամաս մը տրամադրելու հարցերը: Պրն. Քամինսքի խոստացաւ յառաջիկայ ամիսներու ընթացքին ուսումնասիրել հողամաս մը տրամադրելու կարելիութիւնները: Իսկ մշակութային ձեռնարկներուն նիւթապէս աջակցելու առընչութեամբ Հ. Սերովբէ մօտ ապագային հանդիպում մը պիտի ունենայ քաղաքապետարանի համապատասխան բաժնի դեկավարին հետ: Հանդիպման աւարտին Հ. Սերովբէ յանուն համայնքի վարչութեան գլխաւոր քաղաքապետին նուիրեց հայկական գեղեցիկ փայտեայ խաչ մը՝ անւանական փորագրութեամբ:

• Ապրիլ 1 եւ 2 Թուականներուն Գերմանիոյ Հայոց Առաջնորդարանին մէջ, ի Քէօլն տեղի ունեցան Թեմական Պատգամաւորական Ժողովի երկօրեայ նիստերը: Առաջնորդին նախագահութեան ներքոյ տեղի ունեցող նիստերուն իրենց մասնակցութիւնը բերին Գերմանիոյ տարածքին գործող 14 համայնքներու շուրջ 40 աշխարհական ընտրեալ պատգամաւորներ, ինչպէս նաեւ Թեմին հոգեւոր դասը.

Պատգամաւորական Ժողովը ի գիտութիւն ընդունեցաւ Գերմանիոյ Թեմի, ինչպէս նաեւ առանձին համայնքներու 2005 թուականի տարեկան տեղեկագրութիւններն ու նիւթական հաշուետուութիւնները: Առաջին օրուան նիստի երկրորդ բաժնին մէջ կազմուեցան Պատգամաւորական Ժողովի չորս աշխատանքային խումբեր, որոնց մէջ աշխոյժ եւ հետաքրքրական քննարկումներ տեղի ունեցան Թեմը եւ Գերմանահայ համայնքը հետաքրքրող զանազան նիւթերու շուրջ: Քննարկումներու նիւթ դարձան Առաջնորդարանի հոգեւոր եւ մշակութային գործունէութիւնը, նոր սերունդի համայնքային կեանքին եւ եկեղեցական արարողութիւններուն մասնակցութիւնը, անոնց ազգային-կրօնական դաստիարակութիւնը, արարողութիւններու եւ խորհրդակատարութիւններու մատուցման ձեւերն ու կերպերը, լեզուական հարցը, Առաջնորդարանի եւ համայնքներու իրաւական խնդիրները, նիւթական հաշուետուութիւններու կազմութեան հարցերը եւլն.:

Նախապէս յայտարարուած եւ ժողովի ընթացքին վաւերացուած օրակարգի համաձայն, յաջորդ օրը՝ Ապրիլ 2ին տեղի ունեցան Թեմական մարմիններու ընտրութիւնները: 3 հոգինոց ընտրողական յանձնախումբի կազմութենէ ետք նախ տեղի ունեցաւ Թեմական Խորհուրդի նոր կազմի ընտրութիւնը: Գաղտնի քուէարկութեամբ Թեմական Խորհուրդի նորընտիր կազմը կը բաղկանայ հետեւեալ պատգամաւորներէ.

Տոքթ. Սարգիս Ասատ, Պրն. Ռազմիկ Աւագեան, Պրն. Մուրատ Աքիւզ, Տիկ. Մելինէ Բոհլման, Պրն. Իլեաս Գէորգ Ուչեար, Տոքթ. Արման Պօյաճեան, Պրն. Ռուբիկ Արթին Քէհեաեան, Տոքթ. Սարգիս Քէհեաեան:

Այնուհետեւ յառաջիկայ երեք տարիներու համար տեղի ունեցաւ Թեմական Պատգամաւորական Ժողովի Դիւանի ընտրութիւնը, որ կը բաղկանայ հետեւեալ պատգամաւորներէ.

Տոքթ. Րաֆֆի Պետիկեան - Ատենապետ, Սերովբէ Վրդ. Իսախանեան - փոխատենապետ, Տոքթ. Մարգարիտ Ասոյեան-Լինք - Ատենադպրուհի, Տիկ. Սոնա Այբէր - Փոխատենադպրուհի:

Յառաջիկայ երեք տարիներու համար ընտրուեցաւ նաեւ Թեմական Հաշուեքննիչ մարմինը հետեւեալ անդամներով.

Պրն. Յովհաննէս Մուհճաւագեան, Պրն. Սոքրատ Ափոսթոլիտէս:

Յետ ընտրութիւններու Գարեգին Արք. Պեքճեան շնորհաւորեց բոլոր ընտրուողները, յոյս յայտնելով, որ իւրաքանչիւր ընտրուած անձ իր պաշտօնի եւ պարտականութեանց համաձայն իր ծառայութիւնը պիտի բերէ ի նպաստ Գերմանիոյ Հայոց Թեմի բարգաւաճման եւ գերմանահայ համայնքին կեանքի զօրացման: Ան բոլորին մաղթեց Աստուծոյ անսպառ օրհնութիւնը՝ հայցելով Երկնաւոր Հօր զօրակցութիւնը Գերմանահայ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն:

Թեմական Պատգամաւորական Ժողովը վերջ գտաւ միաձայն աղօթքով, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որ պատրաստուած էր Քէօլնի հայ համայնքի "Մայր եւ Զաւակ" յանձնախումբի կողմէ:

***

• Տարւոյս Փետրուար 12, Մարտ 5, 19 եւ 26 Թուականներուն համայնքային անդամական ժողովներու ընթացքին, որոնց նախագահեց Սերովբէ Վրդ. Իսախանեան, տեղի ունեցան Զաքըըն-Անհալթի հայ համայնքի (Հալլէ), հայ եկեղեցւոյ Պէրլինի համայնքի, Հեսընի (Հանաու) եւ Կիւլնի հայ համայնքներու վարչական մարմիններու ընտրութիւնները:

Հալլէի հայ համայնքի վարչական անդամներ ընտրուեցան.-

Յարութիւն Մանուկեան, Ռուզաննա Սաֆարեան, Ռաֆիկ Գասպարեան, Ռոզա Տոնոյեան, Հերմինէ Բուխհոլց-Նազարեան, Կամօ Բարսեղեան, Արտեմ Պետրոսեան:

Պէրլինի համայքի վարչական անդամներ ընտրուեցան.-

Տիկ. Սոնա Այբէր, Օրդ. Ճինա Զորլուօլ, Պրն. Լեւոն Թէքմելիքեան, Տիկ. Վարդուհի Կէօվէզ, Տիկ. Մարիամ Քարահան, Պրն. Արա Քէսալ, Պրն. Արա Քիւրքճիւ:

Թեմական պատգամաւորներ ընտրուեցան Պրն. Գեղամ Պէշիկթաշլեան եւ Պրն. Հրաչ Պետրոսեան:

***

• Հեսընի համայնքի վարչական անդամներ ընտրուեցան.

Տիկ. Անժել Գազանճեան, Պրն. Քրիստոֆէր Պետիկեան, Պրն. Դանիէլ Տէօլէն, Օրդ. Զապել Տէօլէն, Պրն. Յովհաննէս Վարուժան Տէմիրճեան, Տիկ. Անգինէ Տէմիրճեան, Տիկ. Սեդա Քէհայեան:

Թեմական պատգամաւորներ ընտրուեցան Պրն. Յովհաննէս Մուհճաւագեան, Գէորգ Սրկ. Պապասըզ եւ Պրն. Ռուբիկ Արթին Քէհայեան:

***

Կիւլնի համայնքի վարչական անդամներ ընտրուեցան.

Պրն. Նուպար Թէմէլճի, Պրն. Աբրահամ Աբրահամեան, Պրն. Միհրան Տէմիրճի, Տիկ. Ժիւլիէթ Տէմիրճի, Պրն. Օհաննէս Անտոն, Պրն. Վազգէն Տէմիրճեան, Օրդ. Լենա Զալըշըր:

Թեմական պատգամաւոր ընտրուեցաւ Տոքթ. Սարգիս Ասատ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Քէօլն, 6 Ապրիլ 2006

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱՀԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Մինչ այդ Զարեհ եւ Մարի-Ժօզէֆին կառքը պատրաստած են եւ ամէն հրահանգ տուած են կառապանին: Մարի-Ժօզէֆին պարպեց իր խոհանոցը եւ արագ արագ, ինք եւ խոհարարուհին ամէն տեսակ ուտելիք լեցուցին Զարեհին տունը, նաեւ կրակարան մը: Այդ խեղճերը պէտք է գետնափոր սենեակի մը մէջ պահել, մահճակալ, անկողին, ճերմակեղէն եւ այլ տեսակ պիտոյքներ հայթայթել... Մարի-Ժօզէֆին լի է բարութեամբ եւ անհամբեր է այս գործը գլուխ հանելու:

Բայց, շուտ շուտ ելլելով Զարեհին տան պզտիկ դռնէն, գրեթէ պիտի չանդրադառնային երկու մուրացկաններուն որոնք շուքին մէջ պահուըտած էին, եթէ անոնցմէ մէկը (ո՞վ եթէ ոչ Իսմէնէ) զուսպ ձայնով բայց հեղինակաւոր կերպով, չըսէր. "Մատա՛մ, մեզի տօքթորին տար: Ստիպողական է":

Այդ ձայնը անդրադարձում մը կը գտնէ Մարի-Ժօզէֆինի մէջ, պըլթոն իր դայեակը կը կարծէ յիշել, որ մեծ մօր մը պէս էր եւ որուն կարելի չէր չհնազանդիլ: "Հետս եկէք" կը պատասխանէ երագի մը պէս եւ կառքը կը հրաւիրէ, կառապանին մեծ զարմանք պատճառելով եւ հիւանդանոց կը տանի:

Զարեհ մինակ նստած է բացօթեայ բակին մէջ անկիւն մը, առանց պաշտօնի խամաճիկի մը պէս: Կը սպասէ, ինք ալ, ուրիշ բան չի կրնար ընել եթէ ոչ սպասել, ամէն Հայու պէս: "Լաւ մըն Մարի-Ժօզէֆինի սիրտս բացի" կը մտածէ: Յետոյ կը մտածէ ինչպէ՛ս կը զգայ մէկը ինքզինքը որ Ֆրանսացի ծնած է, Մարսէյէզէն պաշտպանուած է...

Այդ պահուն կառքը արագօրէն բակ կը մտնէ: Մարի-Ժօզէֆին վար կը ցատքէ, դէմքը կարմրած եւ տենդոտ, հիւրասէր լայն ժեսթով մը ձեռքը կ՚երկարէ անձի մը որ կառքին ներսն է: Զարեհ կը նայի, քիչ մը մտահոգուած: Եւ ահա վար կ՚իջնէ Իսմէնէ, եւ իրմէ յետոյ՝ կեղտոտ անհատ մը, կաղ, երկդիմի անորոշ անձնաւորութեամբ: Թուրք մուրացկանն է, կը կռահէ Զարեհ, նշանաւոր Նազիմը, ամբողջ ծրագրին միտքը եւ յաջողութեան բանալին: Անվստահութեան անզուսպ ըզգացում մը դէպի կոկորդն ի վեր կը բարձրանայ, յորդումի մը պէս, նողկանքի մը պէս: Բայց կը զսպէ:

Արագ, Մարի-Ժօզէֆին իր հիւրասենեակը կը տանի զիրենք եւ զովացուցիչներ կը հրամցնէ կարեւոր հիւրերու պէս, հրճուելով իր մեւսակիցի դերին, երջանիկ՝ որ դաւադրութեան մը գլխաւոր դերակատարներէն մէկն է, օգնելու համար նախատուած առաքինութեան զոհերուն, ճզմելով այդ անտանելի քանի մը Թուրքերուն ոտքերը: Զանձրոյթի շրջանը անյայտացաւ, հիմա հոս մահու եւ կենաց խնդիր է: Բայց բնական է, պէտք է խորամանկ ըլլալ եւ շարժիլ արագ, շատ արագ:

Ժամադրութիւնը ճամբարն է, ժամը երկուքին, բայց ժամանակը կ՚անցնի եւ ոչ մէկը յստակ գաղափար ունի: Ամէն բանէ առաջ պէտք է հաշուել ուժերը. Զարեհ, Մարի-Ժօզէֆին, կառքը եւ կառապանը կը կազմեն անհրաժեշտ գործօն միութիւնը աքսորեալները ազատելու համար, բայց ինչպէ՞ս ճամբարէն դուրս հանել այդ խեղճերը եւ միայն զիրենք;

Ամէնքն ալ կը խօսին եւ ենթադրութիւններ կ՚ընեն. մինչ այդ կը հասնի ժամը: ("եւ յետոյ" կը մտածէ Նազիմ, "ծելալը կայ, որ զինք կը սպասէ այս գիշեր ժամը տասնին եւ որուն պէտք է յստակ ծրագիր մը ներկայացնել եւ Ազնիւին մասին բաներ մը ըսել: Իր գաղափարը իրեն յանձնել էր, որ զինքը պահէր կամ հետը ամուսնանար": Նազիմ լաւ կը յիշէ այն գիշերը երբ ծելալ դուռը կը բախէր, կը բախէր եւ իր տարրակը կը փնտռէր. անոր համար պատրաստ էր ամէն բանի: Բայց իր այս ծրագրին մասին, խոհեմաբար, բան մը չըսաւ Իսմէնէին եւ Զարեհին):

Հիմա ժամը հասաւ պահակին ժամադրութեան: Այս զոյգը հիմա շատ աւելի անորոշ եւ այլայլած է, քան երբ կը պատրաստուէր ժամը երկուքին Արեւելեան Մուտքին մօտ գտնուիլ չինարի ծառին շուքին տակ: Արեւը բարձր է, կիզիչ, Իսմէնէի եւ Նազիմի սրտերը կը սեղմըւին եւ չտեսնելով զինուորին ներկայութիւնը, ամէն տեղ մահու հոտ կ՚առնեն: Տարագրեալներու դաշտերը կը տարածուին մինչեւ ուր որ աչքը կարող է տեսնել. ծանր գարշահոտը օդին մէջ կը ծըփայ: Թանձր մուխեր հոս ու հոն կը բարձրանան:

Ահա, հեռուն, բան մը կը շարժի: Կաղ զափթիէն է որ ծածուկ եւ շեղակի քայլերով կու գայ: Իր ետեւէն, կարծես պատահական կերպով, գէր ու անխնամ, դժուարութեամբ շնչող սպայ մը կու գայ: Հրամանատարն է:

Եւ վերջապէս ամէն ինչ շարժման կը մտնէ: Ինք պիտի ըլլայ հասուն սպայ, որ բացայայտօրէն նողկացած իրեն յանձնուած պաշտօնէն եւ մտադիր չահագործելու առիթը, պիտի յղանայ ամէն հնարաւոր ձեւ, պարզ, դիւրին, իրագործելի եւ ամէնուն համար լաւ շահ ապահովող: Հաղիւ Իսմէնէ իրեն կ՚ըսէ թէ պատրաստ դիւանագիտական կառք մը կայ որովհետեւ Ֆրանսայի հիւպատոսին կինը բարեկամուհի է հայ բժիշկի մը որ ազգականն է սպասուելիք տարագրեալներուն. Հրամանատարը ձեռքով Թուշը կը շոյէ եւ կ՚որոշէ.

«Բժիշկը պիտի գայ զիս խնամելու: Լեարդի ցաւս իսկապէս հանգիստ չի ձըգեր: Յանձնակատարս, որ Թունդ իթթիհատական է, ինք է որ պիտի գայ եւ լաւ բժիշկի մը հասցէն պիտի ուզէ հիւպատոսին կնոջմէն, իմ հին բարեկամուհիս՝, որ գայ զիս քննելու գիշերը ժամը մէկին:

«Դուք պիտի հասնիք հիւպատոսարանին կառքով, որուն մէջ կրկնայատակ մը շինած պիտի ըլլաք, եւ մինչ բժիշկը զիս քննէ, դուք կառքին մէջ պիտի դնէք այդ քննէ, դուք կառքին մէջ պիտի դնէք այդ անձերը. չեմ ուզեր գիտնալ որոնք եւ քանի՛ հոգի են:

(Շար. 87)

(Շար. Ա. էջէն)

յաղթէ Սեկոլէն Ռուայալ ձայներու 51%-ով, 49% ալ ձգելով Սարքոզիի։

ՉԵԶԱՐԷ ՊԱԹԻՍԹԻ փախստական Իտալացին լոյս ընծայած է գիրք մը՝ Մա Գաւալ, որու յառաջաբանին հեղինակն է Պեռնար-Անրի Լեւի։ Պաթիսթի Իտալիոյ ծայրայեղ ձախ այն տարրն է որ ցկեանս բանտարկութեան դատապարտուած էր Իտալիա կարգ մը մարդասպանութիւններու համար գործուած 70ական թուականներուն։ 1990ին Ֆրանսա ապաստանած էր Միթերանի շնորհիւ եւ սկսած էր ոստիկանական վէպեր գրել։ Իտալիա միշտ յանձնումը կը պահանջէր եւ 2004ին Փարիզի վերաքննիչ Ատեանը արտօնեց այդ յանձնումը եւ Պաթիսթի փախուստ տըւաւ։ Այս գիրքին հրատարակութեան առթիւ, երկու հակոտնեայ հակազդեցութիւններ լոյս տեսած էին արդէն (Ապրիլ 20)։ Մէկը՝ Ֆիկառոյի մէջ խմբագրականով մը եւ ներկայացումով մը, ուր ծանր քննադատութիւններ կան այս "մետափիզիք վերադարձին" առթիւ։ Խմբագրականը խիստ կերպով կ'այպանէ նման հրատարակութեան մը պայմանները։ Բոլորովին տարբեր մօտեցում ունի Լիպէրասիոն, որ գովեստով կ'արտայայտուի եւ շատ փայլուն կը գտնէ յառաջաբանը։ Հատորը լոյս կը տեսնէ Ապրիլ 27ին, հրատարակիչն է Կրասէ։ 1978–1979ին Պաթիսթի անդամ է "Համայնավարութիւն զինեալ պրոլետարներուն", որոնք կը սպաննեն Ուտինէի բանտապահը, մըսավաճառ մը (Մեսթրէ) եւ ոստիկան մը (Միլանօ)։ 1981ին, ձերբակալուած է երկու տարին է վեր, բայց, բանտէն կը փախի եւ Փարիզ կը հաստատուի։

Centre Culturel
SAINT MESROB
à PARIS

le jeudi 27 avril à 20h45

Bardig KOUYOUMDJIAN, photographe
et Christine SIMEONE,
journaliste à France-Inter
présenteront leur œuvre commune

DEIR-ES-ZOR

sur les traces
du génocide arménien de 1915

Préface d'Yves Ternon

(Editions Actes Sud)

Ce témoignage bouleversant sera accompagné de la projection de documents inédits exceptionnels

Vente et dédicace du livre
au 10 bis rue Thouin - Paris 5ème
Métro Cardinal Lemoine - Monge

— Entrée libre • Cocktail —

LA PAROISSE ARMENIENNE
CATHOLIQUE
SAINT GREGOIRE L'ILLUMINATEUR
DE MARSEILLE
vous invite à participer à la conférence
qui aura lieu
le samedi 22 avril à 19 heures 30

EN COMMEMORATION
DU
GENOCIDE ARMENIEN

COMMIS
PAR LES AUTORITES
OTTOMANES - TURQUES

Le Conférencier sera
LE R.P. GEORGES YEGHIAYAN,
Supérieur de Notre-Dame de Bzommar
(Couvent et Siège Patriarcal
des Arméniens Catholiques
depuis 1749).

Un programme
d'inspiration «24 avrilienne»
suivra la conférence.
Lieu: Salle paroissiale
26 rue Sibié - Marseille 1er
Tél.: 04 91 48 19 60 - 06 63 04 93 81
Fax : 04 91 94 54 20
E-mail: paroissearmenienne@wanadoo.fr

23e CYCLE DE LECTURES
MISES EN ESPACES
D'ŒUVRES DE
DRAMATURGES
ARMENIENS

Direction : ARBY OVANESSIAN

Organisé par l'Association
de THEATRE ARMENIEN

ՀԱՅ
ԹԱՏԵՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԹԱՏԵՐԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ
23րդ ՇԱՐՔ

կազմակերպութեամբ՝

ՀԱՅ
ԹԱՏՐՈՆԻ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

(Ա. ԾՐԱԳԻՐ)

Henrik IBSEN
UN ENNEMI
DU PEUPLE
Traduction/Adaptation - Levon SHANT

Հենրիք ԻԲՍԷՆ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻ
ԹՇՆԱՄԻՆ (1882)
Թարգմանութիւն/Պատշաճեցում՝
Լեւոն ՇԱՆԹ
(1949)

Կիրակի, Մայիս 14, ժամը 16ին
Dimanche 14 mai à 16 heures

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՈՍՏԱՆ
MAISON DES ETUDIANTS
ARMENIENS
57 Boulevard Jourdan - 75014 PARIS
M° Pte d'Orléans / Cité Universitaire
Մուտքը՝ 5 Եւրօ

U C F A F
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »
Samedi 22 avril à 16 heures

MEMOIRE
91e anniversaire du Génocide

LE GENOCIDE
ARMENIEN

de Laurence Jourdan
Film documentaire (2005)

Suivi de la présentation du livre
de **Béatrice Kasparian-Bricout**

AZADOUI, ENFANT D'ARMENIE
Editions L'Harmattan

Le livre raconte le quotidien des enfants arméniens rescapés du génocide et surtout d'Azade, petite orpheline, proie de la bestialité humaine, ramassée au milieu des morts, indemne, mais mutique et amnésique. Azade réapprend à sourire et retrouve la joie de vivre...
L'auteur dédicacera son livre.

— Entrée libre —

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 927 317 000 15
Commission Paritaire : **N° 0609 K 84976**

91EME ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

PARIS

23 AVRIL

18h : Ravivage de la Flamme au Soldat Inconnu
Arc de Triomphe — Place Charles de Gaulle Etoile — Paris 8e

19h : Veillée organisée par les organisations de jeunesse arménienne sur le Parvis de Notre-Dame

24 AVRIL

17h30 : Rassemblement devant la Statue de Komitas
Place du Canada — Cours Albert Ier — Paris 8e
pour :
- combattre le négationnisme et le racisme de l'Etat turc notamment pour ce qui concerne le génocide des Arméniens en 1915;
- exiger le respect absolu des valeurs européennes par l'examen de la candidature de la Turquie à l'Union Européenne;
- dénoncer les agissements anti-arméniens des nationalistes turcs en France, en Europe et en Turquie.

Prises de paroles.

Manifestation en direction de l'Ambassade de Turquie.

28 AVRIL

18h30 : Réception à l'Hôtel de Ville : Monsieur Bertrand Delanoë, Maire de Paris, rendra hommage aux victimes du génocide des Arméniens en 1915, dans les salons de l'Hôtel de Ville (sur invitation uniquement).

SEVRES

22 AVRIL

11h : Au «Khatchkar» (devant le Musée national de Céramique). Dépot de fleurs et prises de parole en présence de personnalités et élus locaux.

CHAVILLE

23 AVRIL

10h : Messe de Requiem;
12h30: Procession vers le Monument arménien (face Gare Chaville RD) Dépôt de gerbes et prises de parole.

LYON

23 AVRIL

12h à 24h : **«Memo'art»** du Nor Seround, stands et activités culturels, place Antonin Poncet.

24 AVRIL

10h : Messe de Requiem célébrée par Mgr Norvan Zakarian en l'Eglise Saint-Jacques, 295 rue André Philip, Lyon 3ème.

16h30 : Rassemblement et dépôt de gerbes devant le Veilleur de Pierre place Bellecour, suivi du départ du cortège vers la place Antonin Poncet.

17h : Cérémonie d'inauguration du Mémorial lyonnais du génocide des Arméniens, bénédiction par Mgr Norvan Zakarian, avec la participation de l'Orchestre et des Chœurs de Romans et des pays de la Drôme suivie de nombreuses allocutions.

18h30 : Fin de la cérémonie d'inauguration.

30 AVRIL

11h : Messe du 24 avril en la Basilique de Fourvière, célébrée par Mgr Grégoire Ghabroyan de Paris, sous la présidence de SE Guy de Kerimel, évêque coadjuteur de Grenoble

Notre-Dame
de Paris

91ème ANNIVERSAIRE
DU GENOCIDE DES ARMENIENS

Dimanche 23 avril à 15 heures

Liturgie célébrée par
MGR G. GHABROYAN
Evêque des Arméniens Catholiques de France

sous la présidence de
MGR ANDRE VINGT-TROIS
Archevêque de Paris

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ
ՓԱՐԻԶ

91ՐԴ ՏԱՐԵԼԻՑ
ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ

ՕՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵՐՈՑ
ՈՐՔ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ

մասնակցութեամբ
Հայ Կրօնական Յարանուանութեանց

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 24.–
կէսօրէ ետք ժամը 3:00ին
Սուրբ Յովհաննէս – Մկրտիչ
Մայր Տաճարին մէջ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

կը մատուցուի՝ աւելի քան մէկուկէս միլիոն մեր նահատակներուն համար։

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 22-23
SAMEDI-DIMANCHE
22-23 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.439 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 81e ANNEE — N° 21.439

ԹՈՒՐՔԻԱ

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Օսմանեան շրջանի հայեւթուրք յարաբերութիւններուն նիւթով համաժողովներու այժմէականութենէն ետ չմնալու մարմաջով Երճիյէսի համալսարանն (Կեսարիա) ալ կազմակերպած է հատ մը, "Օսմանեան ընկերութեան մէջ համակեցութեան արուեստը. հայեւթուրք յարաբերութիւններու օրինակը" նիւթով։ Նորութիւնը այն է որ Պոլսոյ Մեսրոպ Պատրիարքն ալ ընդունած է մասնակցութեան հրաւէրը ու ելոյթ մը ունեցած։

Ապրիլ 21ի Թուրք մամուլը կարեւորութեամբ կը տեղեկացնէր այդ մասնակցութիւնը, մէջբերումներ ալ տալով Պատրիարքին խօսքէն։ Ան գլխաւորաբար ըսած է թէ ճշմարտութիւնը յայտնել քաջութիւն պահանջող գործ է եւ յատկապէս ազգայնամոլ, զինուորական խառնուածքի տէր մարդիկ դժուարութիւն կ'ունենան իրականութիւնը նոր սերունդներուն ներկայացնելու։ Ապա թելադրած է որ թէ՛ Թուրքերը, թէ՛ Հայերը անցեալի փոխադարձ սիրոյ հաւաստումներէն հրաժարին ու շօշափելի տուեալներով, գիտական մօտեցումով ձեռք առնեն հասարակաց անցեալը։ Այդ անցեալին մէջ, յատկապէս ԺԹ. դարու վերջաւորութեան ան շեշտած է օսմանցի - հայ յարաբերութիւններուն աստիճանական լարումին Գերմանացիներու, Ամերիկացիներու, Ֆրանսացիներու, Անգլիացիներու եւ Ռուսերու հետ հայկական քաղաքական կուսակցութիւններուն, Թուրքիոյ Հայոց կրօնական խորհուրդին ազդեցութեան տակ գործող պատրիարքներու պատասխանատուութիւնը։ Եզրակացուցած է թէ "Դառն հետեւանքին մէջ կողմերու պատասխանատուութիւնը նոյնիսկ երբ հաւասար չափով չէ, բարոյապէս ճիշդ չէ մէկուն իրեն բաժին պատասխանատուութիւնը մերժելով ամէն բան դիմացինին վերագրելու կեցուածքը"։

Պատրիարքը հարկաւոր նկատած է տակաւին որ թէ՛ Թուրք, թէ՛ Հայ պատմաբանները իրենց կաղապարեալ համոզումներէն հրաժարին։

Ան նաեւ Թուրքիոյ Թուրքերն ու Քիւրտերը հիմնական տարր նկատող մտայնութիւնը քննադատած է, թելադրելով որ հայ եւ այլ փոքրամասնութիւններու կրօնական, բարեսիրական եւ ընկերային հարցերուն լուծում բերուի. Հակառակ պարագային անոնց թիւը կը շարունակէ նուազիլ ու երկիրը հետզհետէ կը կորսնցնէ իր բազմատարրութիւնը, միօրինակութիւնը կը շեշտուի։

Դատելով Թուրք մամուլին առաջին արձագանգներէն, ինչպէս ոչ մէկ նորութիւն ունէր Կեսարիոյ այս համաժողովն ալ որ ժխտող ծանօթ դէմքերու -Ե. Հալաչօղլու, եւլն. - մասնակցութեամբ միայն կրնար ցուցափեղկային մտահոգութեան հերթական ապացոյց նկատուիլ։ Մինչդեռ Թրքական թերթեր նախապէս յայտարարած էին թէ ձեռնարկը նախորդներէն տարբեր դարձնելով Մեսրոպ Պատրիարք ընդունած էր մասնակցութեան հրաւէրը։

Այլ հարց մըն է այն թէ երկու կողմին ալ պատասխանատուութիւնը շեշտելու նման ընդունելի միջին, ճամբայէ մը քալելու դերով ինչպէս կը բացատրուի Պատրիարքին մասնակցութիւնը։ Թերեւս հարկ է սպասել Մեսրոպ Պատրիարքին ելոյթին ամբողջական պատճէնը ունենալու, որպէսզի աւելի յստակ գաղափար կազմել կարելի ըլլայ իր մասնակցութեան ու արտայայտութիւններուն մասին։

ԹՈՒՐՔԻԱ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ փոխ վարչապետ եւ արտաքին գործերու նախարար Ա. Կիւլ պատասխանելով երեսփոխանի մը ներկայացուցած հարցարանին, բացատրած է թէ ի՛նչ միջոցներ ձեռք կ'առնուին ցեղասպանութեան հայկական պնդումները դիմագրաւելու համար։

Մինչեւ այսօր 18 խորհրդարան ցեղասպանութեան ճանաչումի որոշում քուէարկած է. անոնց դէմ Թրքական առաջին հակազդեցութիւնը եղած է այդ երկիրներուն Անգարայի դեսպանները նախարարութիւն հրաւիրել ու յայտնել Թրքական դժգոհութիւնը։ Յետոյ որոշուած է նոյն երկիրներուն հետ յարաբերութիւններու ոլորտը վերաքննել. կարգ մը բարձր մակարդակի այցեր ջնջուած են, զանազան մարզերու միասնական գործունէութիւններ տակախուած։

Այս առումով նորագոյն օրինակ մըն է Զուիցերիոյ հետ յարաբերութիւններու մէջ արձանագրուած լարուած վիճակը։ Թուրքիա որպէս հակազդեցութիւն եւ փոխադարձութիւն ցեղասպանութեան ճանաչումին, առանց պատճառ տալու Զուիցերիան դուրս ձգած է օդանաւ գնելու 500 միլիոն տոլարի գործառնութենէ մը, հակառակ որ չորս տարիէ ի վեր բանակցութեան նիւթ էր այդ վաճառքը։

Զուիցերիոյ տնտեսական նախարարութեան հետ արտաքին գործերու նախարարութիւնն ալ միջամուխ եղած է հարցին կարգաւորման։ Տնտեսութեան նախարարը յուսացած է լուծումի մը յանգիլ Թուրքիա կատարելիք իր յաջորդ այցին ընթացքին։ Սակայն անցեալ Սեպտեմբերին յետաձգուած այցէ մը ետք նոր թուական տակաւին ճշդուած չէ։

Քաղաքական այս քայլերէն զատ, նոյն նախարարութիւնը աշխատանքի լծուած է ցեղասպանութեան ճանաչում քուէարկած երկիրներուն պատմութիւնը քրքրելու եւ ի յայտ բերելու համար մարդկային իրաւունքի բռնաբարման, կամ մարդկութեան դէմ կիրարկութիւններու պարագաներ։

Այսուհանդերձ յայտնի կ'ըլլայ թէ Թուրքերը ամէնէն անհանգիստ ընողը համացանցի հազարաւոր այն կայքէջերն են որոնք գրեթէ բոլոր լեզուներով "հայկական քարոզչութիւն" կ'ընեն։ Հակակշռելու համար այդ գործունէութիւնը Թուրքիոյ արտաքին գործերու նախարարութիւնն ալ որոշած է կայքէջեր հաստատելով ամբողջ աշխարհին տեղեկացնել խնդրին իսկութիւնը, "պատմական իրողութիւնները"։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՈՒՐՔԻՈՅ զինեալ ուժերու կարեւոր փոխադրում կ'ըլլայ Շըրնաքի շրջանը։ Նպատակը քրտական ահաբեկչութեան արմատական մաքրագործումն է։ Զինուորական խումբերու հետ կը փոխադրուին նաեւ կարեւոր թիւով հրասայլեր, թնդանօթներ, այլ զէնքեր։ Թրքական աղբիւրներու համաձայն Իրաքի հիւսիսային շրջանին սահմանակից այդ գօտիին մէջ 240 հազար զինուոր կը գտնուի, զետեղուած Տիյարպէքիրի օդային ուժերու հըր-

(Շար.ը Դ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Եւրոպական Միութեան պատուիրակութիւն մը, գլխաւորուած՝ Աւստրիոյ Արտաքին գործերու պետական քարտուղար Հ. Վինքլէրէ, Ապրիլ 20ին հանդիպումներ ունեցած է նախագահ Ռ. Քոչարեանի, Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեանի հետ։ Տեսակցութիւններուն նիւթ եղած են Հայաստան - Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները, ուժանիւթի ու շրջանային խնդիրներ։

Խօսելով Ղարաբաղի հարցին կարգաւորման ու Ազրպէյճանի ռազմական նախընտրութեան յայտարարութիւններուն մասին, Վ. Օսկանեան ըսած է թէ ռազմական լուծումի դիմելը Ազրպէյճանի կողմէ մեծ սխալ, իրենց վերջին սխալը կ'ըլլայ։ "Եթէ Ադրբեջանն ընդունում է Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, որ նրանք հնարաւորութիւն ունենան որոշելու թէ ինչպիսի կարգավիճակ պէտք է ունենան, այդ դէպքում՝ այո, Հայաստանը պատրաստ է լրջօրէն քննարկելու պատերազմի հետեւանքների վերացման խնդիրները՝ տարածքներ, փախստականներ, անվտանգութիւն։ Սա է մեր դիրքորոշումը" ըսած է նախարարը։ Նաեւ յոյս յայտնած է որ բանակցութեան երրորդ փուլը վերջինը կ'ըլլայ, քանի որ շատ չեն անհամաձայնութեան կէտերը։

Հ. Վինքլէր Եւրոպական Միութեան անհրաժեշտ աջակցութիւնը խոստացած է կարգաւորումի հոլովոյթին, քանի որ Միութիւնը շահագրգռուած է անյապաղ լուծումով։

Վ. Օսկանեան խօսած է նաեւ Ցեղասպանութեան ճանաչումին եւ Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան կապին մասին։ Ըսած է թէ աշխարհի ու Թուրքիոյ մէջ օրէ օր կը մեծնայ ճշմարտութեան յարող քաղաքական դէմքերու, մտաւորականներու թիւը. եւ եթէ անդամակցութեան հոլովոյթին մէջ ազատութիւններու հարցը քննարկուի եւ Թուրքիա պարտադրուի աւելի լայն խօսքի ազատութիւն տալ, այդ մտաւորականներուն թիւը պիտի մեծնայ։

ԻԼ-ՏԸ-ՖՐԱՆՍ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԻՆ

Իլ-տը-Ֆրանսի Շրջանային Խորհուրդը Ապրիլ 24ի առիթով Ցեղասպանութիւնը բացատրող չորս էջնոց հրատարակութիւն մը պատրաստած է, 500 հազար օրինակով ու բաժնած շրջանի լիսէներու աշակերտութեան։ Նոյն նախաձեռնութիւնը եղած էր 2004ին, Հրեաներու Ողջակէզին նիւթով։

Ֆրանսայի Հայկական Խորհուրդին նախագահը Ա. Կէօվճեան շնորհաւորելով Իլ-տը-Ֆրանսի Խորհուրդին ու անոր նախագահ Ժ.-Փ. Հիւշոնի նախաձեռնութիւնը, ըսած է թէ ան 1915ի Հայկական Ցեղասպանութեան ողբերգութեան տեղեակ դարձնելէ զատ երիտասարդութիւնը, պիտի օգնէ յիշողութիւնը ժխտելու փորձերուն դէմ պայքարին։ Հրատարակութեան մէջ Ա. Կէօվճեան տեսած է ծագումով հայ Ֆրանսացիներու Իլ-տը-Ֆրանսի կողմէ յայտնուած զօրակցութեան խորհրդանիշը։

ԱԴՐԲԵՋԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ՞ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

Համացանցի Թրքական կայքէջ մը հիմնուելով "արտաքին աղբիւրներու" վրայ, Ապրիլ 19ին կը յայտնէր թէ Ազրպէյճանի կառավարութիւնը Ղարաբաղը վերագրաւելու համար զինեալ գործողութեան մը լրջագոյն պատրաստութեան լծուած է, թէ հաւանական է որ յառաջիկայ օրերուն ընթացքին ձեռնարկուի այդ գործողութեան։

Տեղեկատուութեան մաս կը կազմէ նաեւ այն որ ԱՄՆ - Ազրպէյճան յարաբերութիւններու վերջին շրջանի գարնանային մթնոլորտը հաւանական դարձուցած է այդ գործողութիւնը որուն համամիտ է նախագահ Պուշ։ Արդէն Ապրիլ 20ին հանդիպում մըն ալ նախատեսուած էր նախագահին ու ազրպէյճանական պատուիրակութեան մը միջեւ։ Իսկ Ազրպէյճանի նախագահը Ուաշինկթըն կ'երթայ Ապրիլ 28ին։

Այս լուրին հետ հետաքրքրական զուգահեռ մը կը գծէ "Աքշամ" օրաթերթին մէջ Ս. Թուրկութ ստորագրութեամբ ու "ԱՄՆ-ու ազրպէյճանական խաղաքարտը" խորագրուած վերլուծական յօդուածը ("Հիւրրիյէթ", Ապրիլ 20)։

Հեղինակը որ բազմաթիւ ու բազմազան աղբիւրներու դիմած ըլլալով բաւական լաւատեղեակ կը թուի, կ'ըսէ թէ ԱՄՆ արդէն սկսած են իրանեան գործողութեան։ Երկրին ներսը գաղտնի գործունէութիւն տանելու իրաւասութիւնը Սի. Ի. Ա.-էն Փենթակոնին փոխանցուած է որ մէկ կողմէն կը կազմակերպէ ղեկավարութեան դէմ ապստամբելու ատակ ազգային խմբաւորումները, միւս կողմէն լազերեան միջոցներով կը նշանակէ վաղուան ռմբակոծութեան առաջնային թիրախները, որոնց համար 400ի թիւը կը տրուի։

Ինչ կը վերաբերի ազգային խմբաւորումներու ապստամբութեան, առաջին կարգի վրայ նկատի կ'առնուին Իրանի հիւսիսի Ազրպէյճանցիները որոնց համար 30 միլիոնի թիւ կը տրուի։ Անոնցմէ կը սպասուի կատարել այն դերը զոր Իրաքի Քիւրտերը կատարեցին ամերիկեան յարձակումին։ Ու այդ վարկածով կը սպասուի որ շատ կարճատեւ ըլլայ Իրանի պատերազմը։

Այս խոհանոցը ունի Թուրքիոյ առնչուած բաժին մըն ալ. եթէ Ազրպէյճան յայտնէ թէ ամերիկեան գործողութեան մը ընթացքին կը զօրակցի Իրանի իր ցեղակիցներուն, ԱՄՆ ակնկալութիւններ պիտի ունենան Թուրքիայէն ալ որ դժուար է որ մերժէ զանոնք։ Ամերիկայի համար շահարկելի է նաեւ Ազրպէյճանի քարիւղը որ պիտի փոխարինէ իրանեանը։ Անոր գլխաւոր յաճախորդը Եւրոպան է ու Թուրքիան, քանի ԱՄՆ իրենց պէտք եղածը կրնան հայթայթել նաեւ Հարաւային Ամերիկայէն։ Ու այս խաղաքարտը Ուաշինկթըն պիտի գործածէ Թուրք կառավարութիւնը համոզելու համար եթէ համաձայնութիւն գոյանայ Ի. Ալիեւի Ուաշինկթըն այցին։ Հաշիւները այնպէս մը եղած են որ դերքերը յստակացուած ըլլան մինչեւ Գ. Ռայսի Մայիսին Անգարա այցը։

Թուրք լրագրողը վերջին ազդարարութիւն մըն ալ կ'ընէ Անգարայի, ըսելով որ Ուաշինկթընի իրանեան ծրագիրներուն հակառակելու կամ չմասնակցելու պարագային, ԱՄՆ Իրանի մէջ ատոմական զէնք գործածելուն պատասխանատուութիւնը պիտի ձգեն Թուրքիոյ վրայ. արդէն պատրաստութեան մէջ է այդ ուղղութեամբ քարոզչութիւն մը որ ամբողջ աշխարհին պիտի ըսէ. "Քանի որ Թուրքիա մերժեց մեզի հետ գործակցիլ, որպէսզի պատերազմը չերկարի, ստիպուեցանք ատոմական զէնք գործածել"...։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԷՐՆԵՐԻ ՍԹՐԻՓ-ԹԻԶԸ ՈՐ ԻՐ ՀԵՐԹԻՆ ԱՅԴ ԻՆՔՆԱՄԵՐԿԱՑՈՒՄԻ ԶԱՒԵՇՏԻ ԾԱՂՐՆ Է...

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

"Բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդի" անդամները յայտարարում են, թէ «Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնողների" միաւորումի "մի մասը տեղեակ էլ չեն իրենց ընդգրկուած լինելու մասին": Ըստ համախոսականի հեղինակների, խորհրդի նիստին մասնակցած գրաբարագէտ եւ Գրաբարի Բառարանի եւ Գրաբարի Հոմանիշների բառարանի հեղինակ Ռուբէն Ղազարեանը իբրեւ յայտարարել է, թէ «ինքն առաջին անգամ է լսում այդ մասին»: Այս յերիւրանքը ծայր է առնում այն պահից, երբ "մի մասը" ընդամէնը մէկ հոգի է եւ այդ մէկ հոգու "ուրանալու" մասին յայտարարում են "խորհրդի անդամները":

2002 թ. Ապրիլ 13ի նոյն օրը "Հայաստանի Հանրապետութիւն", "Հայոց աշխարհ" եւ "Օր" պարբերաթերթերի մէջ Հայաստանի 27 ակադեմիկոսներ ու տոքթէօներ մի ամբաստանագիր – համախոսական հրապարակեցին, որտեղ Սուրբ Մեսրոպ վարդապետ Մաշտոցի Այբուբենն ու Ուղղագրութիւնը վերականգնելու ազգային – մշակութային պահանջատիրութիւնը փորձեցին "մերկացնել" որպէս "հայ մշակոյթի քայքայմանն ուղղուած միտումնաւոր քայլեր՝ թելադրուած հայատեաց կենտրոններից": Ջահուկեանական – բոլշեւիկեան այս փաղանգը նոյնպէս ունեցաւ իր ուրացողը: Բայց ինքն իրեն միշտ հաւատարիմ Կապուտիկեանը պատասխանատուութիւնից խուսափելու համար յայտարարեց թէ առանց կարդալու է ստորագրել ամբաստանագրի տակ:

Հետեւաբար, ինչո՞ւ է ուրացումի "խոստովանութիւնը" յանձն առել դիմագուրկ "գիտական խորհուրդը": Թէ՞ մարդու արժանապատուութեան եւ հեղինակութեան հետ խաղալն է մնացել որպէս միակ "զէնք"՝ Հայոց Լեզուի ճակատագրի հետ ճամարտակող թերուսների եւ տգէտների ձեռքին: Կամ կարծում են, թէ մեզ անյա՞յտ են հոգեբանական (եւ ոչ միայն հոգեբանական) բռնաճնշումի այն միջոցները, որոնց ենթարկուելով՝ ժամանակին ստիպուած են եղել ուրանալ կամ "համաձայնել" Լէօն, Հր. Աճառեանը, Գ. Ղափանցեանը, Ա. Բակունցը, Ե. Զարենցը... Իսկ Պարոյր Սեւակը Յակոբ-Գրիգորին հասցէագրած նամակի մէջ գրել է. «Աւելորդ բաց չեմ թողել ասելու որ մեր սխալաշատ գործունէութեան մէջ ամենամեծ սխալը Սեւանայ լճի խնդրից էլ աւելի վտանգաւոր քայլ է եղել մեր ուղղագրութեան "բարե"-փոխումը... Ես խորհրդակցեցի մի շարք բարեկամների եւ համախոհների հետ եւ, չզարմանաք, ոչ մէկը խորհուրդ չտուեց անել այդ առայժմ: Մնում է առաջին փուլում... ուղղագրութեան խնդիրը արծարծել բանաւոր... Դուք հիմա ու պատճառ չունէք լռելու. պիտի գրէք ու գրէք»: (Փետր. 28, 1969):

Այսքանով հեղինակները ներկայացնում են իրենց Համախոսականի խորագրի "ԻՆՉԸ" խնդիրը:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Երկրորդ պարբերութեան մէջ ներկայացնում են համախոսական խորագրի "ՅԱՆՈՒՆ ԻՆՉԻ" հարցի պատասխանը:

«Իսկ նպատա՞կը, – հարցնում են նրանք: – Սա էլ պարզ է՝ վերադառնալ նախաաբեղեանական ուղղագրութեանը, որը արդարացնելու համար, կոչում են մեսրոպեան եւ Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն՝ գրական արեւելահայերէնը այսուհետեւ գրել արեւմտահայ ուղղագրութեամբ: Հնարաւո՞ր է թէ ոչ՝ կարելի՞ է թէ չէ՝ գիտական այս հարցը նրանց համար բնաւ կարեւոր չէ»:

Հերթական այս ինքնամերկացումից յետոյ նրանք շարունակում են մտային մարզանքներ "արարատեան բարբառի" ու "Պոլսի բարբառի" հիման վրայ ստեղծուած "լեզուական տարբեր համակարգերի", արտասանութեան "ահռելի" տարբերութիւնների, "ձեւաբանութեան, շարահիւսութեան ու ոճական համակարգերի առանձնայատկութիւնների" եւ անհեթեթութիւնների թուարկութեամբ եւ մի վստահութեամբ, թէ այդ բարբաջանքները մտածուած ու անկիրթ, կիսագրագէտ կամ զրօ նիշ ստացողների համար հնչելու են որպէս խորհրդապաշտ գիտութեան փայլատակութիւն:

Իրականութիւնը, սակայն, նրանց թիւր իմացութիւնն է, թէ՝

"Սովետիզացիայի" ենթարկուած Հայաստանի մէջ բոլշեւիկեան դեկրետներն ու որոշումները իրականացնելու գործը յանձն առած վաստակաշատ եւ երեւելի բանասէր Մ. Աբեղեանի յօրինած խեղագրութեամբ չէ, որ սկսւում է Հայոց Գրական լեզուն եւ Գրագիտութիւնը: Աւելին. առաւել անպարկեշտութիւն է, երբ "գիտական խորհրդի" անդամները Հայ գրականութեան եւ մշակոյթի պատմական ընթացքի բաժանարարութիւնը կատարում են Աբեղեանով: Նրանք այսօրինակ "գիտական" սրբապղծութիւն են կատարում չասելու համար, որ սովետական Հայաստանի մէջ Հայերէնի Ուղղագրութիւնը բաժանուեց "յեղափոխականի" եւ "հակայեղափոխականի", "սովետականի" եւ "հակասովետականի"...

Եթէ խիստ անհրաժեշտ է նման մի բաժանարարութիւն, ապա հնարաւոր է միայն ու միայն Մեսրոպեան գրական Հայերէնի ու նրա Ուղղագրութեամբ եւ նախա–Մեսրոպեան անգիր բանահիւսութեան ուղղահայեացով:

Գիտական խորհրդի "գիտունները" սլտում են, թէ Այբուբենն ու Ուղղագրութիւնը վերականգնելու պահանջատէրերը նպատակ են հետապնդում "գրական արեւելահայերէնը այսուհետեւ գրել արեւմտահայ ուղղագրութեամբ": Գրական արեւելահայերէնի ուղղագրութեամբ, առաւել եւս այնուհետեւ խօսել Գրական արեւմտահայերէնով, որը հակառակ Գրական արեւելահայերէնի՝ պահպանել է իր հմայքն ու գեղեցկութիւնը:

Եւ եբ հարց են տալիս «Հնարաւո՞ր է ["գրական արեւելահայերէնը այսուհետեւ գրել արեւմտահայ ուղղագրութեամբ"] թէ ոչ, կարելի՞ է թէ չէ՝ գիտական այս հարցը նրանց համար բնաւ կարեւոր չէ», ապա հերթական մի բացայայտում են կատարում թէ որեւէ լեզուական հարց ընդհանրապէս գիտականօրէն պարզաբանելու կարողութիւն նրանք չունեն:

Երբ համալսարանական "գիտունները" պնդում են, թէ մեսրոպեան ուղղագրութիւնը Արեւմտահայ աշխարհաբար Գրական լեզուինն է, ապա այլեւս ոչ ոք թող չկարծի որ նրանք բարեկրթուած եւ գիտելիքներ ունեցող մարդիկ են:

Ինձ համար նոյն իսկ վիրաւորական է այս պարզ ճշմարտութիւնը ապացուցել, սակայն ստիպուած եմ յիշեցնել թէ Վահան Տէրեանը գրում է.

Դու շրջում ես ամէնուրեք դու չըկաս
Աներեւոյթ դու խօսում ես աշխարհում
Յանկարծ, անկարծ շշնջում ես
որ կը գաս
Հըմայում ես կանչում, խնդում
ու լռում...

Քնքոյշաբոյր ծաղիկների թերթերում
Լոյս դաշտերի խաղաղ-նիրհող
ովկիանում
Եւ աստղազարդ, խորհրդաւոր
գիշերում
Եւ ջրերի արծաթաճօճ օրրանում:

Այս բանաստեղծութեան առաջին երկու քառատողերը արտագրել եմ Տէրեանի ձեռագրից, որ նաեւ հրապարակուած է եւ մատչելի՝ քննախոյզ ընթերցողին (տե՛ս Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, Հ. Ս., Ե. 1960, 96 եւ 97 էջերի միջեւ տեղադրուած ներդիր):

Յիշենք նաեւ Յովհաննէս Թումանեանին.

– Հէ՛յ, լաւ մանրո՛ւք
Ասե՛ղ, յուլո՛ւնք,
Մատնի՛ք, մարջա՛ն,
Ապարանջա՛ն,
Հա՛ւ – ձու բերէ՛ք,
Առէք, տարէ՛ք...

Այս մի քանի տողն էլ "Թագաւորն ու չարչին" գործից է, որի ձեռագիրը զետեղուած է 1969 թ. Թումանեանի երկերի քառահատոր հրատարակութեան Ա. հատորի 304 եւ 305 էջերի միջեւ:

Տէրեանն ու Թումանեանը գրել են Արեւելահայ Գրական լեզուով եւ նրանց ուղղագրութիւնը... Իսկապէ՛ս, այս ի՞նչ ուղղագրութեամբ են նրանք գրել...

Վահան Տէրեանը եւ Թումանեանը, ինչպէս նաեւ Աբովեանը, Նալբանդեանը, Նազարեանը, Րաֆֆին գրել են միակ ճըշմարիտ Սահակ-Մեսրոպեան Այբուբենով եւ Ուղղագրութեամբ:

Հետեւաբար Սահակ – Մեսրոպեան այբուբենը եւ Ուղղագրութիւնը վերականգնելու մեր պահանջատիրութիւնը որեւէ ընդհանուր եզր չունի Արեւմտահայ Գրական լեզուի հետ: Եւ ամէն անգամ, երբ համալսարանական ու ակադեմիական լեզուաբանները փորձում են դատողութիւններ անել Այբուբենի եւ Ուղղագրութեան շուրջ, ապա Արեւմտահայ Գրական լեզուի մասին խօսք բանալը միայն ու միայն իրենց թիւր իմացութեամբ մարդկանց թիւրիմացութիւնների մէջ նետելու նպատակ է հետապնդում:

Այնպէս որ Համալսարանի բանասիրութեան մասնաճիւղի Հայոց լեզուի ամպիոնի վարիչի այն յայտարարութիւնը, թէ "աբեղեանական ուղղագրութիւնից" հրաժարուել՝ նշանակում է խօսել արեւմտահայերէն, առաւել սեփական տըգիտութիւնը բացայայտող շատ տխուր մի փաստ է:

Այս վարիչը, որ Եզեկեանն է, ըստ էութեան ոչ միայն կրկնում է հանգուցեալ Ջահուկեանին, այլեւ իր ուսուցչի պէս անգիտանում է որ Ազգային Գերագոյն Շահի համար կենսական անհրաժեշտութիւն է Հայ մշակոյթի արժէքները պահպանելն ու աւանդութիւնները վերականգնելը:

Կեղծիքով պարուրուած եւ ամէնուրեք այդ կեղծիքը տարածող մեր թերուսները շատ են ցաւում որ "Սփիւռքում այսօր ամէնուր նահանջում է Հայոց լեզուն, իսկ այդ մարդիկ փոխանակ արեւմտահայերէնի իրաւունքները պաշտպանելու... ըզբաղուած են Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն քանդելով»:

"Գիտական" խորհրդի անդամները ՉԳԻՏԵՆ ԹԷ՝

"Պետական լեզու" հասկացութիւնը մոլորութիւն է եւ միայն կոմունիստական տոտալիտար բռնատիրութիւնը կարող էր յօրինել նման բառակապակցութիւն՝ բոլշեւիկեան կայսրութեան մէջ հարիւր քառասունից աւելի լեզուները ոչնչացնելու եւ այդ լեզուներով խօսողներին ռուսական խառնարանի մէջ հալելու եւ ձուլելու նպատակով:

Ճշմարտութիւնն այն է, որ Արեւմտահայ Գրական լեզուն հաւատարմօրէն պահպանել է Հայոց Լեզուին հարազատ՝ Մեսրոպեան Ուղղագրութիւնը: Հետեւաբար արեւմտահայերէնի Ուղղագրութիւն հասկացողութիւն որպէս այդպիսին գոյութիւն չունի:

Այս պարզաբանումից յետոյ, որ բնաւ չեն կարողանում ըմբռնել համալսարանական գիտական խորհրդի անդամները, Արեւելահայ Գրական լեզուի Այբուբենն ու Ուղղագրութիւնը վերականգնելու Ազգային Շահից բխող ամենակենսական անհրաժեշտութիւնը ընդհանրապէս պայմանաւորել կամ պայմանաւորուած տեսնել Արեւմտահայ Գրական լեզուի հետ արդէն աւելին է, քան անպարկեշտութիւնը:

Իսկ Արեւելահայ գրական լեզուով, բայց խաթարուած Այբուբենով ու խեղագրութեամբ գրող մտաւորականները ոչ միայն կտրուել են արմատներից, ոչ միայն դէպի արմատներ գնալու ճամբան նրանց համար գրեթէ դոց է, այլեւ իրենց արատաւոր մտածողութեան հետեւանքով կորցրել են ազգային նկարագիրը, եւ կարծում են թէ այդ նկարագիրը նորէն գտնելու դէպքում "իջնելու են սփռոքական – գեղումային մակարդակի" ինչպէս զգուշացնում են թերուս համալսարանականները:

Նաեւ յատկապէս նշենք որ Արեւմտահայ Գրական լեզուին եւ Մեսրոպեան Ուղղագրութեան քաջահմուտ մտաւորականը դէպի արմատները գնալու որեւէ արգելք չունի. այն պարզ պատճառով որ ընդհանրապէս չի կտրուել արմատներից:

(Շար. 2)

ԱՆԹԻԼԻԱՍ

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԷՆ ԹԵԼԱԴՐՈՒԱԾ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐ

Մ. ԵՐԱՄԵԱՆ

(Յատուկ "Յառաջ"ին)

Գրողներու Գ. Համագումարը փակուեցաւ չքեղօրէն, Կիրակի 9 Ապրիլին, նոյն այն չքեղութեամբ, որ բացուած յայտարարուեր էր չորս օրեր առաջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանքին մէջ, Անթիլիաս:

Բացումին եւ փակումին միջեւ ծիածան մը սպասելի էր՝ Սփիւռքն ու Հայաստանը, հինն ու նորը, երէցներն ու երիտասարդները կամ դասականն ու ժամանակակիցը իրար աղընչող ծիածան մը: Փնտռեցինք, բայց... չգտանք: Փոխարէնը քանի մը յստակ պատճառներ գըտանք.

Ա. Ներկայութիւն

Հակառակ ներկաներու մեծ թիւին, ներկայութեան անհաւասարութիւն մը զգալի էր. մեծ թիւով երկրորդական գըրագէտներու կողքին (բայց ո՞վ պիտի որոշէ, այս պարագային, գրագէտի մը առաջնակարգ թէ երկրորդական ըլլալը...), քանի մը առաջնակարգ հեղինակներու բացակայութիւնն էր, որ կը փայլէր առանձնապէս:

Այլ "փայլուն" բացակայութիւն մըն էր երիտասարդութիւնը: Գրական երեք համագումարներու ներկայ եղած եմ. երեքին ընթացքին ալ մտահոգութիւն յայտնըւած է գալիքի հայ գրականութեան ճակատագրին հանդէպ: Բայց երեքին մէջ ալ երիտասարդութիւնը ոչ միայն ձայն չունէր, այլ կարեւոր ներկայութիւն իսկ չէր:

Ջմեղանքը այն է, թէ Հայաստանի մէջ երիտասարդական համագումարներ հերթականօրէն տեղի կ'ունենան: Սակայն Սփիւռքի պարագային անոնց զուգահեռը չկայ, հետեւաբար սպասելի է, որ համահայկական համագումարի մը ընթացքին տեղ եւ խօսք տրուի նաեւ երիտասարդ գրողներուն:

Ինչպէ՞ս կարելի է խօսիլ ապագայի մը մասին, առանց երիտասարդներու ներկայութեան, երբ մեր ապագան միա՛յն իրենց է, որ կը պատկանի:

Այլ հարց մըն էր լուռ ներկայութիւնը կարգ մը գրողներու, որոնք կրնային այլապէս կարեւոր ըսելիքներ ունենալ, մինչ համագումարը, իր երեք օրերով խեղդամահ կ'ըլլար յաճախ անհասկնալի, երբեմըն անտեղի կամ կրկնուած շատախօսութիւններու տակ:

Բ. Համագումարի առանցք – նիւթեր.

Համագումար մը, մանաւանդ երբ որոշ հերթականութեամբ տեղի կ'ունենայ, պարտաւոր է նորութիւններ հրամցնել մասնակիցներուն: Այդ չէ՞ նպատակը՝ նոր ժամանակներու մէջ ծնունդ առած նոր հարցերու, նոր մօտեցումներու եւ նոր առաջարկներու եւ լուծումներու ծանօթանալ, մանաւանդ որ այս բոլորը յաճախ կը տարբերին Հայաստանի մէջ եւ գաղութէ գաղութ:

Վերջին համագումարներուն, երբ խօսքը կը վերաբերէր Սփիւռքի գրականութեան, ինչ ալ որ ըլլար այս խօսքին նիւթը, անխկա կը սկսէր Սփիւռքի ծնունդով, քանական թուականներէն եւ կը դադրէր 60ական թուականներու սկիզբը: Եթէ զեկուցաբերը նպատակ իսկ ունենար 60ականներէն ետք ստեղծուած գրականութեան անդրադառնալու, իրեն տրամադրուած քսան վայրկեանները պիտի չբաւէին:

Ժամանակը չէ՞ անդրադառնալու Սփիւռքի գրականութեան վերջին շրջանին, որ տարի մը առաջ արդէն իր 5րդ տաս-

ԶԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

«ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ՎԿԱՆԵՐ» ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Տէսինի Հայ Մշակոյթի Տան հրաւէրով եւ գործակցութեամբ Մարսէյլի Հայկական Կազմակերպութիւններու Ներկայացուցչական Խորհուրդին ու Կրընոպլի հայ մշակութային կազմակերպութեան, յաջորդաբար Մարսէյլի, Տէսինի եւ Կրընոպլի մէջ ամերիկաբնակ Արմէն Արոյեան ցուցադրեց "Անհետացման վկաներ" անունով փաստագրական իր վերջին ֆիլմը, նուիրուած իսլամացած Հայերու:

Տէսինի երեկոյթը տեղի ունեցաւ Շաբաթ Ապրիլ 1ին, Թօպօկան սրահին մէջ, 500 հանդիսականներու ներկայութեան: Ծանօթացման իր խօսքով Ա. Արոյեան անդրադարձաւ, թէ ֆիլմը արդիւնքն է քանի մը տասնեակ այցելութիւններու դէպի Արեւմտահայաստան եւ Կիլիկիա, ուր ան ուխտագնացներու խումբեր կ'առաջնորդէ մօտաւորապէս 15 տարիէ ի վեր: Ան լսաւ, որ մեր մեծերը չէին խօսեր եւ Հայոց պատմութեան գիրքերը լուռ կը մնային արեւմտահայութեան այս անծանօթ հատուածին մասին, որ չէ աքսորուած, չէ ջարդուած, Երկիրը մնացած է ու բռնի իսլամացած. հայութեան անծանօթ հատուած, որու ծալքերը տակաւ կը բացայայտուին ներկայ Թուրքիոյ մէջ, սկսելով Շնորհք Պատրիարք Գալուստեանի ուխտագնացութիւններէն մինչեւ Քէմալ Եալչըն, Ֆէթհիյէ Չէթին, Կիլիկիոյ խորերը կշփացած իր հայութիւնը ապրող "Կոյր Աշուղ" Նուրին եւ ուրիշներ...

Երկուքուկէս ժամ տեւող երեկոյթին որ բաղկացած էր ֆիլմի ցուցադրութենէն, հեղինակին մեկնութիւններէն, ժողովուրդին եւ Թրքութենէ հայութեան վերադարձող Հաճիին ու Արոյեանի միջեւ եղած զրոյցէն, զոր վարեց Մշակոյթի Տան տնօրէնուհին Հիլտա Զօպոյեան, ներկաները համակ ուշադրութիւն դարձած, ժամադրուած էին հետաքրքրութեան եւ յուզումներու հետ...:

Անշուշտ Թրքերէն հասկցող հանդիսականը կրցաւ աւելի խորը թափանցել ֆիլմին, որ կը ներկայացնէր անհատներ Խարբերդէն Այնթապ, Տարէնտէէն Աղըն (Արաբկիրի շրջանին մէջ) կամ հաւաքականութիւնը համշէնցիներու, իրենց ընդգրկիչ համայնապատկերին մէջ ու համով-հոտով բարբառով. բռնի օտարացած, իսլամացած Հայու զաւակներ, որոնք դեռ կը յիշեն կապը ազգին հետ եւ կը պահեն բա՛ն մը անկէ, լեզու, դաղտնի հաւատք, գոց սորված աղօթք կամ աւանդութիւններ: Անիկա ժողովածոյ մըն է Արոյեանի 400 ժամնոց տեսադարանէն, որ կը ներկայացնէ խօսուն, զգայացունց պահեր, առնուած՝ իրական կեանքէն բռնի թրքացած ու քրտացած 10 Հայերու: Վերջին վկաները սերունդի մը, յաճախ մանուկ հասակին խլուած ազգէն ու հարազատներէն, հայութիւնը գիտցած շատ կարճ, բայց զայն ջերմօրէն պահած սրտին մէջ, ապրեցնելով զայն նոյնիսկ եւ մինչեւ հոգեվարքի պահը:

Արոյեանի տեսագրող գործիքը եզակի հմտութեամբ արձանագրած է խմացտալի ու արտայայտիչ այնպիսի պահեր, երբեմն անակնկալ, ինչպէս Հայու թոռ երիտասարդ վարորդը, որ հայ զբօսաշրջիկներուն կը մօտենայ "արեան կանչով" ինչպէս ինք իսկ կ'ըսէ. կամ իննիսունամեայ աղջիկի մամիկը իր մահիճին մէջ, որ կռնակը դարձած՝ հիւրերուն, վերացած կ'աղօթէ հայերէնով, պատրաստելով անդենականին, մինչ ընտանիքի միւս անդամները զինք կը սեպեն ցընդած... ապա Նուրին, ճիպինցի Հայը, որ Արոյեանի հետ ունեցած հինգ հանդիպումներէն իւրաքանչիւրին կը վերադարձի իր հայութիւնը, երգելով "Կիլիկիա"ն, վերաքաղ մը ընելով իր գիտցած ազգային եւ հոգեւոր երգերուն եւ բանաստեղծութիւններուն, հայերէն խօսելով երազին մէջ, մինչեւ մահը, 2005 Յունուարին:

Հետզհետէ լոյսին եկող մեր պատմութեան այս անծանօթ էջը բացայայտելու գործնական լաւ միջոց մըն է այս ֆիլմը, որու պատրաստութեան համար կը շնորհաւորենք հեղինակը եւ կը սպասենք շարունակութեան:

ՍԻՐՎԱՐԴ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ

Livres reçus

« LES YEUX BRULANTS »
Mémoire des Arméniens
par ANTOINE AGOUDJIAN

Introduction d'ATOM EGOYAN
Textes de CLAUDE MUTAFIAN
et RAYMOND H. KEVORKIAN

Photo Poche - Actes Sud, Paris 2006

«ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԹԱՆԿՕՆ» ՓԼԷՍԻ ՌՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ

Ապրիլի 3ի երեկոյեան հաճելի անակընկալ էր հայ շարժանկարի սիրահարների համար:

Փլէսի Ռոպէնսոնի քաղաքապետարանը՝ "Սոլիտարիթէ Արմէնֆիլմ" կազմակերպութիւնը եւ "Ժերար Ֆիլիփ" շարժապատկերը կազմակերպել էին հայկական շարժանկարին նուիրուած տարեկան հերթական ցուցադրութիւնը: Անցած տարիներին այդ օրերը նուիրուած են եղել Աթոմ Եղոյեանին եւ Ռոպէր Քէշիշեանին:

Ալպէր Մկրտչեանի "Մեր մանկութեան թանկօն" վերջին քսանհինգ ամեակի հայկական լաւագոյն շարժանկարներից է: Մրցանակի է արժանացել Վենետիկի միջազգային փառատօնում: Գլխաւոր դերակատարուհին Գալյա Նովենցը լաւագոյն դերակատարի մրցանակն է շահել Մինսկի փառատօնում:

Ժապաւէնը թախծոտ հումորով, Գիւմրիի համով հոտով բարբառով պատմում է գիւմրեցի մի ընտանիքի պատմութիւն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ռազմաճակատից վերադարձած զինուորը թողնում է սեփական յարկը, սիրելի կնոջը՝ Սիրանոյշին եւ տնից ընդամէնը ֆոմոտը վերցրած, գնում է ապրելու ճակատում իր կեանքը փրկած, կնոջ՝ Սիրանոյշի մտերիմ ընկերուհու Վարդուշի հետ:

Սիրանոյշը մենակ է մնում իր երեք զաւակներով: Երկուսը անչափահաս, երրորդը դերասան դառնալու ճանապարհը բռնած երիտասարդ մը:

Յետպատերազմեան Գիւմրիին մի յարկանի տների տարօրինակ ճարտարապետութեամբ, թանկօ նուագի տակ պարող պատանիներով եւ աղջիկներով լեցուն բակ, իրար ցաւ կիսող եւ իրար հոգսի հասնող հարեւաններ: Սիրանոյշի ճակատագրով բեմադիրը ընդհանրացնում է հայ կնոջ, ընտանիքի մօր, ամուսնուց լքուած, բայց կենսասիրութիւնը չկորցրած ընտանեէրի եւ տնաէրի կերպարը: Կերպարային իրապաշտական նկարագրով կերտուած կերպար է Գալյա Նովենցի Սիրանոյշը: Ամէն անգամ այդ ժապաւէնը նայելուց հանդիսատեսը նոր երանգներ է յայտնաբերում նրա խաղի մէջ: Իտալական նորիրապաշտների խաղաոճը յիշեցնող Գալյա Նովենցի Սիրանոյշը երկար մնում է հանդիսատեսի յիշողութեան մէջ, որպէս հայ շարժանկարի դերասանական արուեստի միշտ այժմէական ու չխամրող կերպար:

ԵՐԿՐՊԱԳՈՒ

նամեակը թեւակոխած է, 60ականներէն առդին:

Որքա՞ն կարելի է Զահրատ ու Խրախունի կրկնել ու հրամցնել լսարանի մը, որ գրագէտներէ կը բաղկանայ:

Հայաստանի վերջին շրջանի գրականութիւնը եւ հետաքրքրական պատկեր մը կը ներկայացնէ իր գունագեղութեամբ եւ հակադրութիւններով, որոնց ակնարկութիւն իսկ չկար համագումարի ընթացքին:

Ի վերջոյ համագումար մը նաեւ հաշուեկշիռ ու արժեւորում ներկայացնելու է, կը կարծենք:

Գ. Աչառութիւններ

Թերեւս նման ենթախորագիր բանալը ճիշդ չէ. բայց երեւոյթը կայ:

Հաստատումներ չեմ ըներ. հարցադրումներ միայն.

ա. Ինչո՞ւ համար կը շարունակուի մօտեցումի տարբերութիւն մը դրուիլ Հայաստանի եւ Սփիւռքի գրագէտներուն միջեւ: Անիկա սկսած է վիրաւորական դառնալ Սփիւռքի գրագէտին համար, մանաւանդ երբ նկատի առնենք, որ Հայաստանի անկախացումէն մէկ ու կէս տասնամեակ ետք (չենք անդրադառնար անոր նախորդող վիճակին), Հայաստանի գրողներուն համար աւելի դիւրին է գիրք հրատարակել, տարբեր երկիրներէ (հայկական գաղութներ ըսել չեմ ուզեր) հրաւէրներ ստանալ, եւ գրեթէ բոլոր կենսահարցերը լուծել, մինչ սփիւռքահայ գրագէտին համար այդ հարցերը կարծէք աւելի եւ աւելի կը դժուարանան:

բ. Ինչո՞ւ համար ձայն չունէր սուրիահայ գաղութը (թէեւ գաղութային չէր անշուշտ ձայներու բաժանումը), որ քանի մը ոչ արհամարհելի յատկանիշերով ներկայացած էր համագումարին.

1.- Համեմատաբար բարձր էր խումբին երիտասարդութեան տոկոսը:

2.- Սփիւռքը հետաքրքրող քանի մը կարեւոր նիւթերու մասնագէտներ կային հոն, ինչպէս հայ-արաբ գրական կապերը, իսթանպուլահայ գրականութիւնը, ժամանակակից սփիւռքահայ բանաստեղծութիւնը, թարգմանական գրականութիւնը եւ այլն:

3.- Սուրիահայ գրագէտներուն թիւը տպաւորիչ էր համագումարին. Թէեւ միշտ չէ, որ թիւը որակ կ'ապահովէ, այս պարագային սակայն նաեւ որակը ապահովուած էր:

գ. Ինչո՞ւ կրկին եւ կրկին հրաւիրել այնպիսի դէմքեր, որոնք նախորդ համագումարներու, ինչպէս եւ այս անգամ, նիստերու ընթացքին իրենց կեցուածքով յստակօրէն կ'արտայայտեն իրենց կարծիքը, թէ իրենք ոչինչ ունին առնելիք կամ փոխանցելիք:

Եթէ այդպէս է, ուրեմն, ինչո՞ւ այդտեղ կը գտնուին: Ահա՛ հարցումը:

դ. Եւ ինչո՞ւ չկարենալ այս բոլորին մասին անկեղծ սրտաբացութեամբ խօսիլ, երբ երեւոյթը կայ, եւ երբ "գրագէտը անկեղծութեան ջահակիրը պէտք է ըլլայ":

Վերջացնելէ առաջ պէտք է անպայման անդրադառնալ համագումարին անթերի կազմակերպութեան, որուն համար շնորհաւորելու ենք կազմակերպիչ կողմը՝ Լիբանահայ գրողներու համախմբումին քարտուղարութիւնը:

Մ. Ե.

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Աղմուկ չեմ ուզեր, կամ տագնապ, խնդիր. այլապէս բոլորս կը բռնուինք: Ես լեարդի ցաւ ունիմ եւ լաւ բժիշկ մը կ'ուզեմ, միայն ասիկա կը հետաքրքրէ զիս:

«Վաղը, երբ գործը լմնցած ըլլայ, հինգ հարիւր ոսկի սթէրլին կ'ուզեմ (շատ չէ ուզածս, բայց ինքզինքս այլեւս ծեր կը զգամ. եւ յետոյ, ապրանքը աւրուած է) որ կնոջս պիտի յանձնէք, Լէյլային. ան ձուկի շուկային մօտը նոր շինուած երկյարկանի վիլլան կը բնակի: Ամէն մարդ կը ճանչնայ զինքը: Ես պիտի մեկնիմ այս թշուառներու մնացորդացով: Ամէն տեսակ մանրամասնութեան համար դիմեցէք հոս, Սելուճքին: Իրեն համար ալ տասը ոսկեդրամ պէտք է ըլլայ»:

Նողկանքի (մելամաղձոտութեա՞ն, յանցանքի՞) կարճատեւ արտայայտութիւն մը կ'երեւի հիմա սպային գիրուկ դէմքին վրայ եւ կարծես բան մը կ'ուզէ աւելցնել, բայց յետոյ անմիջապէս կը դառնայ եւ արագ կ'երթայ, սիկառէթ մը վառելով, կարծես երկու քայլ ըրած ըլլար մարսելու համար: Եւ իսկապէս դէմքը դեղնորակ է, եւ աջ ձեռքով կը ճնշէ լեարդին վրայ:

Թէեւ, կը մտածէ Նազիմ, իսկապէս հիւանդ է: Թերեւս, կը մտածէ Իսմէնէ, կարելի պիտի ըլլար խօսիլ հինգ հարիւր սթէրլինին մասին, բայց հիմա ուշ է որեւէ սակարկութեան համար: Հիմա ժամանակը կը սուրայ:

Իսմէնէ, Նազիմ եւ Սելճուք շուրջերնին կը նային կասկածով եւ կը նստին ծառին տակը: Հետատեւս Իսմէնէ դուրս կը հանէ երկու թուղ, հաց մը, եւ շիշ մը ջուր: Կը խօսին ուտելով: Եւ հինգ ոսկեդրամները տէր կը փոխեն ("Միւս հինգ հատը վաղը, բարեկամ" կը փափսայ Նազիմ: "Հալէպի Եղբայրակցութեան պետին գընա, ան պիտի տայ"):

Սելճուք, ծանրագլուխ, կը հաւանի: Ամբողջ կայսրութեան մէջ առասպելի կարգ անցած է Մուրացկաններու Եղբայրակցութեան վստահութիւնը եւ գաղտնապահութիւնը: Անոնց գործերը կրնան մութ ըլլալ, բայց տրուած խօսքը շատ յստակ է: Սելճուք պիտի կրնար խաբել եւ թերեւս աւելի պիտի շահէր: Բայց կը զգայ որ հաւանաբար Աստուած է որ պաշտօն մը կը վստահէր իրենց՝ երկու կաղերուն, աշխարհի աղբերուն. իրեն ու Նազիմին, ճամբարին վերջին զինուորն եւ մուրացկանը: Նազիմէն կը վախնայ բայց կը համակրի ալ. իսկ Իսմէնէի մէջ, գունաւոր ցնցոտիներուն տակ, կը կռահէ երկաթեայ վճռակամութիւն մը:

Իսմէնէ կ'ըսէ. "Երեք ժամէն կրկին հոս եղիր: Իսահակ անունով մարդ մը պիտի գայ հոս, ոչ ոք այս առաւօտ զինքը հոս տեսաւ, բայց Տիկինը, Մատամ Շուշանիկը լաւ կը ճանչնայ, Քու զարմիկդ է ըսելով պիտի առնես զինքը եւ տանիս Տիկինին քովը: Ան կը ճանչնայ զինքը եւ կը վստահի անոր: Քիչ մը ջուր եւ հաց տուր իրեն, նաեւ պզտիկներուն եւ Մատմուազէլ Ազնիւին. ուրիշ ոչինչ, ոչ ոք պէտք է կասկածի: Իսահակ պիտի խնամէ զիրենք եւ երբ ժամը հասնի պիտի օգնէ ձեզի: Ըսէ թէ համր է, կամ թէ լռութեան ուխտ ըրած է, բայց խօսիլ մի՛ տար: Բոլորն ալ պիտի հասկնային որ Յոյն է":

Հիմա պէտք է վազել Զարեհին որ կառքին մէջ անկիւն մը կծկտած, երկու փողոց անդին կը սպասէ: Քիչ մը վտանգաւոր է եւ կրնայ կասկածներ արթնցնել, որ Ֆրանսայի կառքը արեւուն տակը այսքան ժամանակ կեցած է պարապ եւ գրեթէ քնացած վիճակի մէջ կառապանով մը: Բայց դժբախտաբար, տարբեր ընելիք չկայ: Ուրիշ ոչ մէկ պարագայի Զարեհ ապահով պիտի ըլլար եւ Մարի-Ժոզէֆին չի կրնար հասարակութեան մէջ իրեն հետ առանձին երեւալ առանց իր վարկը վտանգելու. աւելին՝ առանց Ֆրանսայի վարկը վտանգելու. մանաւանդ որ պատերազմի մէջ գտնուող երկիր մըն է եւ ուղղակի Թուրքիոյ հետ:

Փարիզցի կառապանը Ժան-Ֆիլիփ Օպէր, ամբողջապէս արթուն, կակուղ գըլխանոցը մինչեւ աչքերը իջեցուցած, բոլորտիքը կը քննէ: Ինքզինքը հանդարտ չի զգար, հակառակ որ շրջանը հանդարտ ըլլալ կը թուի: Եւ հազիւ կը տեսնէ Իսմէնէն որ կը դառնայ անկիւնը եւ որուն շնչասպառ կը հետեւի Նազիմը, ձիերը անմիջապէս ճամբայ կը հանէ, առանց ներսը Զարեհին լուր տալու: Նոյնքան անմիջական կերպով ալ կանգ կ'առնէ յոյն կնոջ առջեւ: Զարեհ իր թմբիրէն արթնցած, կը կռահէ որ արագ պէտք է շարժիլ, կառքին դուռը կը բանայ մինչ տակաւին շարժման մէջ է: Իսմէնէ ներս կը ցատքէ եւ ետ կը ծռի Զարեհին հետ, Նազիմին ձեռքերէն կը բռնեն եւ ներս կը քաշեն յատակին վրայ ճիշդ ժամանակին: Մինչդեռ կառքը անկիւնը կը դառնայ, ճամբուն միւս ծայրէն երեք զինուորներ կ'երեւին որ ղրկուած են, որովհետեւ շուրջի տուներէն մէկուն մէջ բնակող անձ մը տեսնելով եռեւի դռնէն կառքը, կասկածած եւ լուր տուած է:

(Շար. 88)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Լառա Մուրթէն,
Վազգէն Կիւրճեան
ցաւով կը գուժեն իրենց մօր եւ մօրաքրոջ

ՇԱՔԷ ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ-ՄՈՒՐԹԷՆԻ

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 6ին:

Իր յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Երեքշաբթի, Ապրիլ 25, ժամը 11:00ին, Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցին:

15 Rue Jean Goujon
75008 — Paris

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն.

Maison de la Culture Arménienne d'Alfortville

RENCONTRE
avec
VARTAN BERBERIAN
à l'occasion de la parution de son livre
« LE FIGUIER DE MON PERE »

le Vendredi 28 avril à 20h45

Présentation — Dédicaces

— Entrée libre —

9, rue de Madrid 94140 Alfortville
Tél.:01 43 76 55 89 - Fax:01 43 78 66 64
e-mail: mca.alfo@wanadoo.fr

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »

Vendredi 28 avril à 20h30

RETOUR VERS l'ARARAT

de Pea Holmquist
Film documentaire suédois en v.o., sous-titré français,
avec Suzanne Khardalian, Goran Gunner et Jim Dowing
Musique : Komitas-Chœur Sipan-Komitas

Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

- Participation aux frais : 5 Euros
- Adhérents et Abonnements : 3 Euros

91ՐԴ ՏԱՐԵԼԻՑ
ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՕՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵՐՈՑ
ՈՐՔ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ

մասնակցութեամբ
Հայ Կրօնական Յարանուանութեանց

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 24.–
կէսօրէ ետք ժամը 3:00ին
Սուրբ Յովհաննէս - Մկրտիչ
Մայր Տաճարին մէջ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

կը մատուցուի՝ աւելի քան մէկուկէս միլիոն մեր նահատակներուն համար:

***

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

ԱՊՐԻԼ 23. –

Վարագայ Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր Պատարագ կը մատուցուի ժամը 10:30ին, որմէ յետոյ եկեղեցւոյ շրջափակի Խաչքարին մօտ կը կատարուի հոգեհանգիստ Մեծ Եղեռնի նահատակներու հոգիներուն ի հանգիստ:

***

Ժամը 12:00ին Առնուվիլ լէ կոնէսի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ Ժան Ժօրէս փողոցին վրայ գտնուող Մեծ Եղեռնի յուշակոթողին առջեւ տեղի պիտի ունենայ ծաղկեպսակի զետեղում:

Centre Culturel SAINT MESROB à PARIS

le jeudi 27 avril à 20h45

Bardig KOUYOUMDJIAN, photographe et Christine SIMEONE, journaliste à France-Inter présenteront leur œuvre commune

DEIR-ES-ZOR

sur les traces du génocide arménien de 1915

Préface d'Yves Ternon

(Editions Actes Sud)

Ce témoignage bouleversant sera accompagné de la projection de documents inédits exceptionnels

Vente et dédicace du livre

au 10 bis rue Thouin - Paris 5ème
Métro Cardinal Lemoine - Monge

— Entrée libre • Cocktail —

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

91ème ANNIVERSAIRE DU GENOCIDE DES ARMENIENS

PARIS

23 AVRIL

18h : Ravivage de la Flamme au Soldat Inconnu
Arc de Triomphe — Place Charles de Gaulle Etoile — Paris 8e

19h : Veillée organisée par les organisations de jeunesse arménienne sur le Parvis de Notre-Dame

24 AVRIL

17h30 : Rassemblement devant la Statue de Komitas
Place du Canada — Cours Albert Ier — Paris 8e
pour :

- combattre le négationnisme et le racisme de l'Etat turc notamment pour ce qui concerne le génocide des Arméniens en 1915;
- exiger le respect absolu des valeurs européennes par l'examen de la candidature de la Turquie à l'Union Européenne;
- dénoncer les agissements anti-arméniens des nationalistes turcs en France, en Europe et en Turquie.

Prises de paroles.

Manifestation en direction de l'Ambassade de Turquie.

CHAVILLE

23 AVRIL

10h : Messe de Requiem;
12h30: Procession vers le Monument arménien (face Gare Chaville RD)
Dépôt de gerbes et prises de parole.

CHARENTON-LE-PONT

25 AVRIL

17h : Dépôt de gèrbe devant le Khatchkar, rue Paul Eluard, angle rue des Bordeaux — Prises de parole — Prières — Chants à la mémoire des victimes.

ALFORTVILLE

30 AVRIL

10h30 : Messe en l'Eglise Apostolique Arménienne Sourp Boghos Bédros.

12h15 : Défilé vers le monument Khatchkar près de la place Achtarag
Dépôt de gerbes — Prises de parole,
organisés par le Comité Unitaire des Institutions, Organisations et Associations Arméniennes d'Alfortville

LYON

23 AVRIL

12h à 24h : **«Memo'art»** du Nor Seround, stands et activités culturels, place Antonin Poncet.

24 AVRIL

10h : Messe de Requiem célébrée par Mgr Norvan Zakarian en l'Eglise Saint-Jacques, 295 rue André Philip, Lyon 3ème.

16h30 : Rassemblement et dépôt de gerbes devant le Veilleur de Pierre place Bellecour, suivi du départ du cortège vers la place Antonin Poncet.

17h : Cérémonie d'inauguration du Mémorial lyonnais du génocide des Arméniens, bénédiction par Mgr Norvan Zakarian, avec la participation de l'Orchestre et des Chœurs de Romans et des pays de la Drôme suivie de nombreuses allocutions.

18h30 : Fin de la cérémonie d'inauguration.

30 AVRIL

11h : Messe du 24 avril en la Basilique de Fourvière, célébrée par Mgr Grégoire Ghabroyan de Paris, sous la présidence de SE Guy de Kerimel, évêque coadjuteur de Grenoble

VOL • SÉJOUR À LA CARTE • CIRCUITS ACCOMPAGNÉS
Les Spécialistes des Voyages en Arménie
SABERATOURS - SEVAN VOYAGES
Paris ▸ 01 42 96 10 10 armenie@saberatours.fr
Lyon ▸ 04 78 60 13 66 sevan@selectour.com
Marseille ▸ 04 95 09 30 60 marseille@wasteels.fr
www.saberatours.fr

(Շար. Ա. էջէն)

բամնատարութեան տակ: Ուշագրաւ կը նկատուի որ անհաբեկչութեան դէմ պայքարի նոր օրէնքին խորհրդարան յղումը եւ զինուորական պատրաստութիւնները կը զուգադիպին ԱՄՆ-ու արտաքին գործերու նախարար Գ. Ռայսի Անգարա այցին նախօրեակին:

ՊՈՒԹԵՖԼԻՔԱ, Ալժերիոյ նախագահը, Ապրիլ 20ին Փարիզի Վալ տը Կրասի հիւանդանոցը փոխադրուեցաւ "նախատեսուած սովորական քննութեան մը" համար, ըստ տրուած բացատրութեան: Հազիւ 48 ժամ առաջ, Պութեֆլիքա Ֆրանսայի գաղթատիրութիւնը որակած էր "ինքնութեան, պատմութեան, լեզուի, մշակոյթի ցեղասպանութիւն": Պութեֆլիքա անցեալ Նոյեմբերին վիրաբուժական գործողութեան ենթարկուած էր նոյն հիւանդանոցին մէջ: Այժմ, Իւ.էմ.Փէ-ի կարգ մը երեսփոխաններ առնուազն կը զարմանան որ Ֆրանսա այսքան բարեացակամութիւն ցոյց տայ, մինչ Ժ.-Մ. լը Փէն "պայթակղեցուցիչ" կը գտնէ որ Ալժերիոյ նախագահը նման յայտարարութիւններ ընէ եւ յաջորդ օրն ալ Ֆրանսա գայ խնամուելու համար:

ՖՐԱՆՍ-ՍՈՒԱՐ լոյս չէր տեսած նաեւ Ապրիլ 21ին եւ բանթողները ուխտագրնացութիւն մը կատարած էին թերթին հիմնադրին Փիէր Լազարէֆի գերեզմանին (Փէռ Լա Շէզ), նոյն օրը ըլլալով նաեւ հիմնադրին ծննդեան տարեդարձը: Միւս կողմէ, ներքին բանավէճեր ծագած են աշխատաւորներու մէջ, որոնց մէկ մասը կ'ուզէ աշխատիլ եւ համաձայն է նոր տիրոջ տեսակէտներուն հետ:

ՆԵՓԱԼԻ մէջ, միջադէպերը կը շարունակուին եւ վերջին օրերուն 3 մեռեալ կայ եւ բազմաթիւ վիրաւորներ, զոհ տալով ամերիկեան արդարադատութեան կրակոցներուն: Հազարաւոր ցուցարարներ կը բացադանչեն որ թագաւորը չի կրնար գիրենք լռութեան մատնել: Քաթմանտուի մէջ, լուսարդելը ի զօրու կը մնայ (ժամը 20ին էր), բայց երկարաձգուած է թոյլ տալու համար որ հեռու բնակողները կարենան տուն երթալ: Ժողովուրդին լոզունգներն են՝ "Կեցցէ՛ Հանրապետութիւնը, անկցի՛ միապետութիւնը":

ՊԵԼԺԻՈՅ Ծերակոյտն ալ, ծայրը ծայրին, (34 թեր, 33 դէմ, 2 ձեռնպահութիւն) արտօնեց որ միասեռական զոյգերը կարենան զաւակ որդեգրել:

ԱՄՆ-ու Պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակած է Կուանթանամոյի 558 բանտարկեալներու անուանացանկը, տեղի տալով ամերիկեան արդարադատութեան պահանջին: 11 էջերէ բաղկացած ցանկը կը թուէ նաեւ ենթականերուն երկիրը (40 է), բայց ըստ մասնագէտներու թերիներ կան եւ մութ կէտեր:

ՖԻԼԻՓ ՏԸ ՎԻԼԻԷ գալ շաբթու հրապարակ կը հանէ հատոր մը որուն խորագիրն է՝ "Ռուսաքի մզկիթները" եւ պատրաստուած է գաղտնաբար (գիրքը տրպուած է կեղծ խորագրով մը՝ "Սիրոյ տարօրինակ պատմութիւն մը"): Հիմնուած միջնախարարական գաղտնի փաստաթուղթերու վրայ, հեղինակը կը ծանրանայ աշխատավայրերու, մասնաւորաբար Ռուասիի անձնակազմերուն, ուր կը վխտան իսլամապաշտները: Կը թուի որ Սարքոզիի եւ Փերպէնի Ռուասի այցելութիւնը Ապրիլ 20ին, նպատակ ունէր կանխելու Ֆ. տը Վիլիէի պարսաւագիրքը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 25
MARDI
25 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Անմիջական առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·440 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21·440

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՆՈՐԷՆ ԱՊՐԻԼ 24

Քանի՛ կը մօտենանք դարադարձին, ոչ միայն Թուրքիան կը մերժէ "անցուկը մոռցուկ"ի իմաստութեան հպատակիլ, այլ մանաւանդ իրեն առընչուած նոր-նոր պարագաներ կը նորոգեն արթուն մնալու թելադրանքը: Մեզի չատ նպաստաւոր պատասխան մը պիտի չգտնէ հարցումը թէ մեր արթնութեան վիճակը պէտք ունի՞ նման թելադրանքի: Ուստի լա՛ւ է որ կան այդ պարագաները, նոյնիսկ 91 տարի ետքի "արդի", "քաղաքակիրթ", "զարգացած" աշխարհին մեր անկիւնէն:

Այդ անկիւնը մեր կորսնցուցած է: Ու անկէ ի վեր մերը եղած են աշխարհի բոլո՛ր անկիւնները, բոլոր հրապարակները: Բայց թելադրանքը կու գայ "մեր" անկիւնէն, ճիշդ այն պահուն որ մոռցած ըլլալ կը թուինք իրականութիւններ որոնք մոռնալու ոչ մէկ պատճառ ունինք. այն պահուն երբ պատմութեան հետ անփորձ աչկերտի խաղ խաղալու կ'ելլենք, մինչ ոչ մէկ բան իրաւունքը կու տայ ատոր, մեզմէ ոեւէ՛ մէկուն:

Դահիճին 91 տարի ետքն ալ ամէնօրեայ ժխտումը, ուրացումը, հազար ու մէկ ճապկումը, երբեմն մինչեւ իսկ զոհին հետ դեր փոխելու անպատկառութիւնը արգելք չեղաւ որ երկխօսութեան սեղաններու աթոռները գրաւելու վազեն մեզմէ՛ մարդիկ. անոնք իրենց ուելորդութեան պիտանիի դիմակ մը անցընելու պատրանքին հետ մատ մը մեղր ալ քսեցին Անգարայի փուռէն ելած հացին զոր աշխարհի մեծերն ու փոքրերը կարագի հաստ խաւով մը պատեր էին արդէն: Եւ ըսել որ այս ինքնակոչ քաղաքագէտները ամբողջ բազմութիւններէ ծափ ալ կ'ակնկալեն, "հեռատես"ի, "իմաստուն"ի հովեր հագած:

Ամէնէն առաջ անո՛նց հասցէն ունէր պատգամը որ Կոմիտասի արձանը, Ցեղասպանութեան յուշակոթողը պղծողները տուին. յաջորդեց Լիոնի տարբերակը. ֆրանսական աղբիւրներ էին չեշտողը թէ Թրքական պաշտօնական դասը տեղեակ էր պատրաստուածին, նոյնիսկ թելադրողն էր, ծրագրողը: Ատոր հետ կայ Ջուղան, հազարաւոր քանդուած խաչքարերով. անոնց միակ մեղքը իրենց հայկական ըլլալն էր, մինչ այդ հողին վրայ պէտք չէ այդ պատկանելութեամբ կանգուն բան մնար. մարդիկը, չէնքը մաքրուած էին չատոնց. ինչո՞ւ մնային խաչքարերը:

Այս տրամաբանութիւնը գոնէ մազի չափ տարբերութիւն կը մատնէ՞ 1915ի մեքենան պատրաստողներուն, գործադրողներուն, հետքերը սրբողներուն ու 91 տարուան ծանօթ բեմադրութիւնը ստանձնածներուն ունեցածէն: Եւ ըսել որ բեմադրութեան նորագոյն արարը մեզի կարեկից, մեր իրականութիւնը ընդունած Թուրք տիպարներ ալ զետեղած է երկխօսութեան սեղաններուն, պատմաբաններու միացեալ մարմին կազմելու յանկերգներուն քովն ի վեր. անոնք կը չարժակեն, խօսքեր կ'արտասանեն, էջեր կը հրատարակեն, ամէն անգամ երբ գիրենք վարող պտուտակները լարուին: Ճիշդ նոր օրերու "էսդի՛ համեցէք"ի խամաճիկները: Մէկը փոխադարձ սիրոյ անցեալ մը կ'ոդեկոչէ, երկրորդ մը ամօթի նմանող զգացում մը կը կմկմայ, ուրիշ մը մեր ցաւին մորթին մէջ մտնելու փորձեր կ'ընէ: Բոլորն ալ որքա՛ն լաւ սերտած են մեզ, դիտնալու համար թէ դիւրութեամբ պիտի տարուինք անոնցմէ, անտեսելով անմիջապէս քովի էջը ուր անոնք հազար լարախաղացութեամբ բառին չուրջը կը դառնան, առանց կարենալու մատ դնել անոր այրող կորիզին:

Բան չմնաց հարիւրամեակին: Մէկ - երկու տարի եւս ու 1915ը տեսած վերջին աչքերն ալ պիտի փակուին: Այն ատեն քիչ մը աւելի առանձին պիտի ըլլանք չարիքը հատուցանել տալու մեր մեծ պարտքին հետ: Ժամանակ, միջոց, մտքի ու աչքի լոյս, կորով, նիւթական չռայլելու ոչ մէկ արդարացում մնացած է այլեւս: Այդ տրամադրութեամբ մինչեւ այսօր բեմը խճողածները պէտք է պարկեչտ ըլլան գոնէ մէկդի քաշուելու չափ:

Ա՛լ ժամանակն է որ դերերը յանձնըւին ճիշդ տէրերուն որոնք պարագաներու յուշարարութեան պիտի չկարօտին:

Ա. Թ.

ԱՊՐԻԼ 91

Ապրիլեան ոգեկոչումի փարիզեան հրջանի արարողութիւնները սկսան Ապրիլ 22ին, Սեւր, Շաւիլ եւ այլ արուարձաններ: Փարիզի մէջ Ապրիլ 23ին տեղի ունեցան հետեւեալ արարողութիւնները.-

ՆՈԹՐ-ՏԱՄԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Կիրակի, Ապրիլ 23, ժամը 15ին խուռներամ բազմութիւն մը կը փութար Փարիզի Մայր տաճարը, ուր ինչպէս ամէն տարի նոյն հրջանին, Հայ Կաթողիկէ Առաջնորդը կը պատարագէր Ապրիլեան նահատակներու յիշատակին: Արարողութեան կը նախագահէր Փարիզի Արքեպիսկոպոսը՝ Անտրէ Վէնթրուա: Ներկայ էին նաեւ բազմաթիւ անձնաւորութիւններ, ինչպէս Սարքոզիի քաղաքական խորհրդականը՝ Փ. Տէվէճեան, Հայաստանի դեսպանը, եւլն., եւլն.:

Պատարագին սկիզբը, Գրիգոր Եպիսկ. Կապրոյեան ֆրանսերէն եւ հայերէն նախ շնորհակալութիւն յայտնեց Փարիզի Արքեպիսկոպոսին, որ կը տրամադրէր Մայր տաճարը եւ Ցունուար 22 թուակիր նամակով պատասխանած էր իր հրաւէրին, յայտնելով թէ պարտականութիւն եւ պատիւ կը նկատէր նման հրաւէր մը, նախագահելու արարողութեան: Կապրոյեան Եպիսկ. կը չեչտէր թէ 91 տարի առաջ Հայեր նահատակուեցան վասն կրօնի եւ հայրենեաց եւ անոնք կ'ըսեն մեզի, այսօր, սիրով ապրեցէք: Պատարագի ընթացքին, որու իրենց մասնակցութիւնը բերին Գեւտ Արք. և պատուելի Միքայէլեան, Անտրէ Վէնթրուա Եպիսկոպոսը աւուր պատշաճի հոգեւոր ճառ մը արտասանեց, ուր կրկին չեչտը դրաւ պարտականութեան եւ պատիւին վրայ, որոնք իրն էին այդ առթիւ, ցաւ յայտնելով որ 1915ին, ժողովուրդ մը որ խաղաղ կեանք մը կը վարէր իր հողերուն վրայ, ջարդըւեցաւ որովհետեւ քրիստոնեայ էր և հայ: Հայ ժողովուրդին կրած տառապանքը անտեսուեցաւ, ուրացուեցաւ: Հարկ է խոստովանիլ, որ Փարիզի Արքեպիսկոպոսին հոգեւոր ճառը մասնաւոր տպաւորութիւն մը չգործեց, դժբախտաբար:

***

ԲՈՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄ

Ապրիլ 23, Կիրակի երեկոյեան ժամը 19ին պաշտօնական դէմքերէ զըլխաւորուած մօտ երկու հարիւր հոգինոց թափօրը Շան զ'Էլիզէէն բարձրանալով հրջապատեց Անծանօթ զինուորին յիշատակը յաւերժացնող անմար կրակը: Զինուորական փողերախումբին երաժշտութեան ընկերակցութեամբ ու հայ եւ ֆըրանսացի նախկին ռազմիկներու, դիմադրականներու, ՀՄԸՄ-ի արիներու, արենոյշներու դրօշներուն տակ տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղումը. հայկական եռագոյնին երանգներով ծաղկեպսակներ զետեղեցին Ասորի-Քաղդէացիներու, Կիպրացիներու, Հելլէններու համայնքներուն ներկայացուցիչները, հայ նախկին ռազմիկներն ու դիմադրականները, Ֆրանսահայ կազմակերպութիւններու խորհուրդը, Մէօտոնի, Իսիի քաղաքապետները, Իլ-տը-Ֆրանսի հրջանային խորհուրդը եւ Հայաստանի դեսպանը: Ասոր կատարուեցաւ բոցի արծարծումը դեսպան Է. Նալպանտեանի, Ֆրանսահայ կազմակերպութիւններու խորհուրդին նախագահ Ա. Կէօվճեանի եւ երախային մը կողմէ: Դրօշներու խոնարհումէն ու վայրկեանի մը յարգանքի լռութենէն ետք փողերախումբը հնչեց Մեր Հայրենիքը ու Մարսէյէզը: Արարողութիւնը աւարտեցաւ Ա. Խաչատրեանի "Գայեանէ"էն հատուածով մը:

***

ՀՍԿՈՒՄԸ

Նոյն իրիկունը քանի մը հարիւր հոգինոց առաւելաբար երիտասարդներու բազմութիւն մը խմբուած էր Նոթր-Տամի հըրապարակին վրայ ուր հաստատուած բեմէ մը մեծաղմուկ արդիական երաժըշտութիւն կը ծաւալէին յաջորդական խումբեր, երբեմն հայերէն երգով մը ընդմիջուած: Փարիզի երիտասարդական կազմակերպութիւններուն այդ նախաձեռնութեան մօտէն կը հսկէր ոստիկանութիւնը, հաւանօրէն յետմիջօրէին հոն կանգնած պաստառները, զանոնք կանգնողները անարգած Թուրքերու նման գըրգռիչ տարրեր որսալու մղումով: Որպէս Ցեղասպանութեան ոգեկոչումի ձեռնարկ չատ դիւրաւ բացատրելի ձեւ մը չէր այդ աղմուկ - աղաղակը որ անցորդներն ալ հետաքրքրել չէր յաջողեր:

ՄԵՍԻՍ

«LIBERATION»

(22/23 avril)

LA MEMOIRE ARMENIENNE FAIT IRRUPTION A LYON

Թերթը երկու էջ նուիրած է հարցին, մեկնակէտ ունենալով Լիոնի յուշարձանին ցաւալի թերթօնը: Մանրամասն գրութիւններու կողքին կայ խմբագրական մը, որու խորագիրն է "Ծուղակը", ստորագրողն է Փիէր Հասքի, բովանդակութիւնն ալ արժանի է նորմանի մը, նաեւ իր եզրակացութեամբ: Ինչպէս բազմաթիւ յօդուածներու պարագային նուիրուած այս հարցին, սխալներն ալ չեն պակսիր ինչպէս այն հաստատումը որ Միացեալ Նահանգները ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը, 1984ին...:

Կողք կողքի կը տրուին Հայոց եւ Թուրքերու հակադրեցութիւնները, գլխաւորաբար Լիոնի վերաբերեալ:

Թուրքերու հակադրեցութիւնը նորութիւն չէ եւ ծանօթ է: Մէկ խօսքով, Հայոց Ցեղասպանութիւնը տեղի չէ ունեցած: Լիոնի քաղաքապետը՝ Ժերար Գոլոն կը խոստովանի որ երբեք մտքէն չէր անցուցած որ այս հարցը վիճարկումի նիւթ կրնար ըլլալ: Կ'աւելցնէ թէ "Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը այնքան ալ բնական չի նկատուիր եւ ոչ միայն Թուրք համայնքին մէջ": Իւ. ԷՄ. Փէ.ի թաղապետական խորհրդական Մարի-Շանթալ Տէպազէյլի համար այդ յուշարձանը հոն պէտք չէ դրուէր, նուիրագործուած հրապարակ մըն է ԻՒՆԷՍՔՕ-յի կողմէ. ինք, կը պնդէ "ժխտող վհուկ մը չէ":

Հարցը բաւական աղմուկ հանած էր եւ դեռ թերթին լոյս տեսած օրն ալ (Ապրիլ 22) կը հանէր: Բազմաթիւ նամակներ կը հասնին քաղաքապետարան, ներառեալ սպառնալիքներ: Ժիւրայի հրջանի մէկ գիւղէն հարիւր բնակիչներու խումբ մը կ'ուզէ որ այդ յուշարձանին կառուցումը տեղի չունենայ, կը բացատրէ որ այդ ցեղասպանութիւնը տեղի չէ ունեցած, պարզապէս "բնակչութիւններ տեղափոխուած են": Եւ դեռ սպառնալիքներու մէջ կը չեչտուի թէ "ծանր հետեւանքներ կրնան տեղի ունենալ":

Այն տեսակէտը կայ նաեւ որ նման յուշարձան մը միայն ատելութեան կեր կու

(Շար.ը Դ. էջ)

(Շար.ը Դ. էջ)

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖԻԼԻՓ ՏԸ ՎԻԼԻԷԻ դիրքը եւ հրապարակ հանած հատորը արդէն իսկ ծաւալուն բանավէճի նիւթ եղած են Ֆրանսայի մէջ: Ֆրանսայի համար Շարժումին նախագահը, Ապրիլ 23ին եւ 24ին կը պնդէր որ չատ հաստատ փաստեր ունէր Ռուասիի աշխատաւորներու մէջ իսլամապաշտներու ներկայութեան մասին եւ կը չեչտէր որ իսլամը խոտոր կը համեմատի Հանրապետութեան հետ:

ԻՐԱՔԻ գլուխն են այլեւս երրեակ իշխանութիւն մը՝ շիի վարչապետ մը՝ Ճավատ ալ-Մալիքի, որ պէտք է կառավարութիւնը կազմէ, քիւրտ նախագահ մը՝ Ճ. Թալապանի եւ սալաֆիստ սիւննի նախագահ մը՝ Մ. Մաշխատանի, Խորհրդարանին գլուխը:

ՖԱԹԱՀԻ ԵՒ ՀԱՄԱՍԻ տարրեր ծանր բախումներ ունեցան Ապրիլ 21ին Գազայի մէջ, որոնց հետեւանքով երեսուն վիրաւորներ կային: Համասը կ'ամբաստանէր Ապպասի իշխանութիւնը որ կը դաւէ տապալելու համար իր իշխանութիւնը, գործակցելով Իսրայէլի և ԱՄՆ-ու հետ:

ԳԱՍՊԱՐՈՎ ճատրակէն անցած է քաղաքականութեան եւ ընդդիմութեան հետ վճռած է այլընտրանք մը ստեղծել օրինակ առնելով ուկրանական "նարնջագոյն յեղափոխութիւնը": Այդ ուղղութեամբ Կ. Գասպարով հիմնած է "Քաղաքացիական միացեալ ճակատ" մը եւ գլխաւոր հիւրը եղած է նախկին ազատական վարչապետ Միխայիլ Կասեանովի համագումարին, որ հիմը կը դնէր ընդդիմութեան հայրենասիրական ժողովրդական չարժումի մը: Ֆիկառօ ամբողջ էջ մը նուիրած է Գասպարովի դիրքին, Ապրիլ 24ի իր թիւին մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ ԲԱՆԱՎԷՃԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՑԵՂԱՍՊԱՆԻՆ՝ ԹՈՒՐՔԻՆ ԱՊԱԳԱՅԻՆ ԹԵՄԱՅՈՎ

ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՈՎ ՊԷՏՔ Է ԶՈՒԳԱԴՐՈՒԻ Կ'ԸՍԷ ՓՐՈՖ. ՄԻՀՐԱՆ ՏԱՊԱՂ «ԱԶԴԱԿ»ԻՆ ՏՈՒԱԾ ԻՐ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻՆ ՄԷՋ

«Հայկական Ցեղասպանութեան Թուրքիոյ կողմէ ճանաչումին աւելի յստակութեամբ բանաւէճը կ'ըմբռնեմ ապագայ հարցերու, աւելի խոստումնալից դարձնելու թեմային շուրջ. մինչ այդ գծին կը պահանջուի հակազդողութիւն եւ համբերութիւն ցուցաբերել, նոյնիսկ՝ զիջումներ ընել», կը հաստատէ տոքթ. Միհրան Տապաղ:

Ռուր համալսարանի (Պոխում) Սփիւռքի եւ Ցեղասպանութեան ուսումնասիրութեան հիմնարկին տնօրէնը կը հաւատայ, որ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը կարած է այնպիսի ճամբայ, հասած է այնպիսի հանգրուանի, երբ այլեւս չկայ յուրք, ամէնին եւ անհրաժեշտ պայմանական կամ քաղաքական մարմին մը, որ ուրանալ փաչ, բէկուզ ուժանէ կը խուսափին կամ կը յետաձգեն այդ կեցուածքի բացայայտումը:

Ասոր դիմաց, Հրէական Ողջակիզումին առթիւ Գերմանիոյ մտաւորականութեան ճնշման ներքեւ մնացած այդ պետութեան ներկայացուցիչները "ճանաչում մը տալ"ու դարձ դէմ, Հայկական Ցեղասպանութեան պատմութիւնը գիտակցաբար վերապահելու փորձերու դէմ: Ան կը պատգամէ եւ կը գործէ վար, ներգործող, քաղաքական եւ հասարակական ոլորտներու մէջ մնայուն ներկայութեան վերաբերող Հայկական Ցեղասպանութեան:

Տոքթ. Տապաղ այս խարքերուն, այսպիսով՝ Հայկական Ցեղասպանութեան, բայց նաեւ միջազգային բեմին վրայ ճանաչումի պահանջատէրներուն եւ այդ երկրներու մեծամասնութեան մտաւորական շրջանակներուն միջեւ նոյն քննարկումը յանձնել կ'առաջարկէ "Ազդակ"ի հետ իր ունեցած հեռաձայնային հարցազրոյցին ընթացքին:

ՀԱՐՑՈՒՄ. - Տոքթ. Տապաղ, առաջին հերթին կը փափաքինք մեր ընթերցողներուն ծանօթացնել ձեր հիմնարկին եւ ձեր տարած աշխատանքներուն Գերմանիոյ մէջ:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Սփիւռք եւ Ցեղասպանութեան հիմնարկը Պոխումի համալսարանին կից գիտական ուսումնասիրական հաստատութիւն մըն է. երբեք այդ տեսակի միակը չէ ... հիմնարկը կը բերէ համալսարանի դասընթացքներուն:

Այստեղ կ'ուզէի նշել նաեւ, որ մեր դասընթացքները չեն անտեսեր հայկական փորձառութեան հետ կապուած հարցադրումները: Հիմնարկը կը ֆինանսաւորուի կ'աջակցի ...

Հիմնարկը ունի հրատարակչական շարք մը եւ տարին երկու անգամ կը հրատարակէ "Ցեղասպանութեան ուսումնասիրութիւն" (Zeitschrift für Genozidforschung) գիտական - հետազօտական հանդէսը: ...

Կարեւոր յաջողութիւն մը կարելի է նկատել նաեւ մեր նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ Պրանտենպուրկի նահանգի ուսուցիչներուն համար պատրաստուած ...

Անոնց յաջորդեց Պունտեսթակի որոշումը: Համոզուած եմ, որ ճանաչման հետ կապուած աշխատանքներուն ասոնք մեծ նպաստ բերին: Թէեւ որոշումը բոլորովին գոհացուցիչ չէ, բայց բաւական կարեւոր քայլ մըն է Գերմանիոյ համար:

Հ. - Տոքթ. Տապաղ, ձեր խօսքին մէջ մատնանշեցիք Գերմանիոյ խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը, որուն նպաստեց ձեր հիմնարկին տարած աշխատանքը: Հիմա այդ ճանաչումէն բաւական ժամանակ անցած է, եւ Գերմանիոյ մէջ քաղաքական իրավիճակը փոփոխութեան ենթարկուած է, առաւել՝ Թուրքեր փորձեցին "Թալէաթ փաշա գործողութիւն" մը Գերմանիոյ խորհրդարանին վրայ ազդելու. ի՞նչ կը նախատեսէք, որ կը պատահի. ապագային այսպիսի քայլեր ազդեցութիւն պիտի ունենա՞ն, խորհրդարանը ետ պիտի քաշէ՞ իր որոշումը:

Պ. - Բացարձակապէ՛ս, ոչ միայն ազդեցութիւն պիտի չունենայ, այլ այս ձեռնարկը ընդհակառակն, Թրքական կողմին համար ոչ նպաստաւոր հետեւանքներ կ'ունենայ: Օրինակ, վերջին օրերուն Գերմանիոյ Թուրք համայնքի միութեան վարչութիւնը հրաժարեցաւ իր պաշտօնական մասնակցութիւնը բերելէ Պէրլինի ցոյցերուն "Թալէաթ փաշա" ձեռնարկին պատճառած ընդվզումին համար:

Հ. - Այլ կէտ մը եւս ուշագրաւ է. հայկական կողմը Ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու համար ձեզի պէս անձնաւորութիւններու եւ ձեր գլխաւորած հիմնարկին պէս հիմնարկներու գիտական աշխատանքներուն ապաւինած է. ասոր դիմաց "Թալէաթ փաշա գործողութիւն"ը ցոյց տուաւ, որ հակառակ կողմը հերքումի, ուրացումի իր քաղաքականութիւնը հիմնած է այլ տեսակի՝ քաղաքական, ժողովրդային ճնշումներու վրայ: Ակադեմական գետնի վրայ կրնա՞ն իրենց թէզը՝ Հայկական Ցեղասպանութիւնը հերքող թէզը պաշտպանել:

Պ. - Այս բոլոր փորձերը պիտի ձախողին եւ արդէն ձախողած են: Ո՛չ, չկայ լուրջ ակադեմական անձնաւորութիւն մը կամ հաստատութիւն մը, որուն համար այսպիսի ուրացում մը եւ այսպիսի հիմքեր ունեցող ուրացում մը ընդունելի դառնայ: Երբեք այս ուղղութեամբ մտահոգութիւն չունիմ, որ կրնայ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցը նման յարաբերականացումներու ենթարկուիլ, այստեղ կատարուելիք աւելի տարբեր աշխատանք կայ: Այսուհետեւ մեր ուշադրութիւնը պէտք է կեդրոնացընենք Եղեռնը "պատմականացնելու" փորձերուն դէմ:

Հ. - Այս իմաստով, տոքթ. Տապաղ, յատկանշական էր Գերմանիոյ մտաւորականութեան ուղղուած ձեր յօդուածը, որ Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ յիշատակումը իրարմէ կը զանազանէ, յըստակ եզրեր կը գծէ: Արդեօ՞ք այս կէտէն զգուշացնելու համար էր այդ յօդուածը:

Պ. - Ուրեմն երբ այդ յօդուածին կ'ակնարկէք, առիթը կու տաք ինծի քիչ առաջ ըսածներս աւելի յստակացնելու: Այստեղ ուրեմն մենք ունինք հանդրուաններ, ինչպէս որ Հրէական Ողջակիզումի պարագային, ողջակիզումին հետ ու անոր գծով տարուած քաղաքականութիւնը ունեցաւ իր հանդրուանները: Վերջերս Պէրլինի մէջ հիմնուած եւ Ողջակիզումին զոհերուն նուիրուած յուշարձանը կրնայ նաեւ վերջակէտ մը դնել այդ Ողջակիզումին յիշողութեան հետ կապուած հանգրուանի մը: Ուրեմն պէտք է այստեղ ուշադրութիւն դարձնել, որ "պատմութեան" եւ "յիշողութեան" եզրերու այդ տարբերութեան, զոր միշտ կ'ընդգծեմ: Երբ յիշատակման ծէսի մը վերածուի, երբ փորձառութեան մը զուտ պատմական դէպքի մը կը վերածեմ՝ յանձնելու համար պատմութեան գիրքերուն, կը վտանգեմ կենդանի յիշողութիւնը: Պատմութեան գիրքերը նաեւ մոռացութեան վայրեր են: Ինչ կը վերաբերի Ողջակիզումին կապակցութեամբ զարգացումներուն, որոնց քննադատողներէն մէկը եղայ ես, այն պատճառով, որ ասիկա տիեզերականացնել կամ եւրոպական յիշողութեան մէկ մասին վերածել չի նշանակեր, այլ՝ Ողջակիզումը վերածել պատմութեան մը, որուն մէջ ո՛չ դահիճը եւ ոչ ալ զոհը իր անունը ունի, այսինքն կը դառնայ բարոյական պիտակ մը, որով կարելի է որոշ բարոյական դասակարգումներ զարգացընել, բայց չի դառնար ժողովուրդի մը գործօն յիշողութեան առարկայ: Երբ Հայկ. Ցեղասպանութեան այս նիւթը այստեղ ինքզինք ցոյց տուաւ, կարծես խանգարիչ պարագայ դարձաւ, որովհետեւ կու գար նոր պատմութիւն մը, ստիպելու գերման մտաւորականութիւնը այս հարցով եւս զբաղելու. եւ հազիւ թէ կը կարծէին, որ Ողջակիզումին հետ կապուած այդ յիշողութիւնը կը յաջողէին "պատմականացնել", կու գայ տարբեր արարք մը եւս իրենց յիշեցնելու ուրիշ պատասխանատուութիւն մը:

Հ. - Ասկէ մեկնած, տոքթ. Տապաղ, երկու հարց կը ծագի: Առաջինը՝ կը տեսնէ՞ք Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող թուրք պատմաբաններուն կամ անձնաւորութիւններուն մէջ անձնաւորութիւններ, որոնք կ'ուզեն այս դէպքը պատմականացնել եւ պարպել իր քաղաքական եւ կամ այժմէական նշանակութենէն: Այլ խօսքով, կա՞ն թուրք պատմաբաններ, որոնք կ'ուզեն ըսել՝ "շա՛տ լաւ, 1915ի հայկական ոճրագործութիւնը ցեղասպանութիւն էր, հիմա կրնանք բոլորս տուն երթալ եւ մեր կեանքը շարունակել. ներողութիւն կը խնդրենք եւ՝ ցտեսութի՛ւն":

Պ. - Ես յօդուածներէս մէկուն մէջ կ'ըսէի՝ "ճանաչելով ուրանալ": Ուրեմն ընդհանրապէս կրնամ ըսել ինծի անծանօթ թուրք պատմաբաններ, որոնք տակաւին չեն արտայայտուած եւ աւելի անկեղծօրէն կը մօտենան այս հարցին. բայց ընդհանրապէս արտայայտուածներուն մօտ կը նկատեմ քաղաքականութիւն մը (նաեւ որոշ հայկական շրջանակներու մէջ ալ կարելի է նկատել այդ մօտեցումը կամ անուշադրութիւնը), որ կը միտի առարքին ճանաչումը կատարելով հանդերձ, դահիճը, այսինքն անոր յաջորդները անպարտ արձակելու:

Այստեղ փորձ կը կատարուի Հայկական Ցեղասպանութեան բերել այնպիսի լուծում մը, որուն մէջ թէեւ կատարուածը իրականութիւն կ'ընդունի, բայց որեւէ մէկ պատասխանատուութիւն մը չստանձնելով: Ասիկա անընդունելի է:

Ոճրագործներուն արարքները պէտք է հետեւանքներ ունենան անոնց համար, նաեւ՝ իրենց յաջորդող սերունդներուն համար: Այստեղ պատասխանատուութիւն ստանձնելու հարց մը կայ: Իսկ Թրքական եւ ոչ Թրքական շրջանակներու մէջ այս ուղղութեամբ իրագործուած վիճարկումը աւելի Թուրքիոյ ապագային վրայ կեդրոնացած է, չահագրգռուած է, քան՝ զոհուած ժողովուրդի ներկայով եւ անոր ապագայով: Օրինակի համար, հարց կու տան, թէ ի՞նչ պէտք է ընել, որպէսզի Ցեղասպանութիւնը Թուրքիոյ համար ընդունելի դառնայ, Թուրքիոյ ժողովրդավարացման նպաստէ, Թուրքիոյ դժուարութիւնները հարթէ, եւ այլն: Իսկ այս պարագային վերապրողներու յաջորդներէն նոյնիսկ կը պահանջուի հասկացողութիւն ցուցաբերել, տեղի տալ, հրաժարիլ պատահածին իրաւաբանական ճշգրիտ սահմանումէն, եւ այսպիսով յարաբերականացման մասնակից դառնալով՝ վտանգել իր գոյութեան կարեւորագոյն յենակէտը՝ Եղեռնի փորձառութիւնը եւ անոր հետ կապուած յիշողութիւնը կրելու իրաւունքը:

(Մնացեալը յաջորդիւ)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԷՐՆԵՐԻ ՕԹՐԻՖ-ԹԻԶԸ ՈՐ ԻՐ ՀԵՐԹԻՆ ԱՅԴ ԻՆՔՆԱՄԵՐԿԱՑՈՒՄԻ ԶԱՒԵՇՏԻ ԾԱՂՐՆ Է...

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Համախօսականի մէջ մտահոգութիւն է յայտնուում 1922ից յետոյ Հայաստանի մէջ լոյս տեսած "գեղարուեստական, թարգմանական ու գիտական վիթխարի գրականութիւնը արժէզրկելու" առիթով: "Նոյն այդ գրականութիւնը այսօր ո՞վ է հրատարակելու Մեսրոպեան ուղղագրութեամբ" - հարցնում են նրանք միաբերան:

Այս սադրող "մտահոգութեանը" սպառիչ պատասխան է տուել Ա. Մադոյեանը "Հայագիտութեան դասականները միասնական ուղղագրութեան մասին" (Ե., 2005) աշխատութեամբ: "Խորհրդային շրջանի եւ նախորդ 1500 տարիների գրական արտադրանքի համեմատութիւն՝ ծաւալով եւ արժէքով" ենթագլխի մէջ (էջ 79) հեղինակը մանրակրկիտ վերլուծութեամբ բացայայտում է անհիմն եւ աւելի չուտ ամբոխավարական այդ "մտահոգութիւն"ը:

Յիշեցնելով, որ 1990ականներից Հայաստանի մէջ սկսեցին լոյս տեսնել ոչ միայն գրքեր, այլեւ պարբերականներ Մեսրոպեան ուղղագրութեամբ, Ա. Մադոյեանը նաեւ արձանագրում է, թէ ընթերցողը բնաւ չի տրտնջացել եւ այսօր էլ չի տրտնջում:

Իսկ ես ուզում եմ աւելացնել որ Մեսրոպեան Ուղղագրութիւնը վերականգնելու պահանջատիրութիւնը, ինչպէս նաեւ հայերէնի այդ ճշմարիտ Ուղղագրութեամբ գրականութեան հրատարակութիւնը դիտւում էր որպէս ազգային ինքնագիտակցութեան արտայայտութիւն, որպէս ապազգայնութիւնը մերժող գործօն, որպէս Ինքնութիւնը պահպանելու նախապայման:

Համախօսականի մէջ կայ նաեւ այն հռետորական հարցը թէ "լեզուական տարբեր համակարգերի "միասնականացումն" ի՞նչ է տալու ներկայ եւ գալիք սերունդներին»:

Գրական Արեւելահայերէնն ու Արեւմըտահայերէնը լեզուական "տարբեր համակարգեր" չեն: Գրական երկու լեզուներն էլ ՀԱՅԵՐԷՆ են եւ երկու գրական լեզուները ՀԱՅԵՐԷՆԻ անվերապահ հարստութիւնն է: Հազուագիւտ են այն հռետորական հարցը թէ «լեզուական լեզուներ:

Գրական Արեւելահայերէնի Մեսրոպեան Ուղղագրութիւնը վերականգնելը, կարծում եմ, որեւէ "միասնականացումի" պահանջատիրութիւն չէ: Եւ բոլորովին զարմանալի չէ, որ եթէ տարիներ առաջ Հայերէնի Ուղղագրութիւնը վերականգնելու պահանջատիրութիւնը փորձեցին խափանել "միասնականացում" անհեթեթութեամբ, ապա այսօր, քանի որ "միասնականութեան" սնանկ գաղափարը բընաւ էլ մոլորութիւն չդարձաւ պահանջատիրութեան համար, բանասիրական մասնաճիւղի "գիտական" խորհուրդը արդէն ինքն է հարց տալիս այդ անհեթեթութեան առիթով:

Եւ նորէն սկսում են քննարկել Արեւմըտահայ գրական լեզուն, աւելի ճիշդ արեւմտահայերէնի խօսակցական լեզուի հնչիւնափոխութիւնը, որ նաեւ վերջերս արագօրէն ներխուժում է գրաւոր խօսքի մէջ:

Հնչիւնափոխութիւնը, որ յիրաւի բացասական երեւոյթ է եւ պայմանաւորուած է լեզուն ուսուցանելու մէջ արմատացած թերութիւններով, չարիք է նաեւ արեւելահայերէնի համար: Լ. Ղազանչեանն ու Վ. Միրզոյեանը 2002 թուականին հրատարակեցին "Խոտոր ուղղախօսութիւն" աշխատութիւնը: Հեղինակները մեսրոպեան Այբուբենի եւ Ուղղագրութեան գեղծումով են բացատրում արեւելահայերէնի կամ "հայաստանեան լեզուի" մէջ ուղղախօսական այլանդակութիւնները, երբ "Թ հնչիւնի քմայնացած արտասանութիւնը արդէն իսկ Ց-ի է վերածուել՝ բարցրուցյուն, համփերուցյուն, միյուցյուն, յօցերօրթ, ուցսուն" են.:

Դ հնչիւնը դարձել է Ձ եւ Ց: Օրինակ՝ ակաձեմիա, ձյուցազն, արցյօք, ձյուրահաւատ, նալբանձյան:

Տ-ն դարձել է Ծ: Այսպէս՝ ծեխնիկա, առավօծյան, ծիգրան, դասծիյարակ, մածեմածիկա, արարածյան, արիծվածյան են.:

«Բաղաձայնից յետոյ անհարկի Յ-ն արդէն զգալիօրէն ազդել է հայաստանցիների արտասանութեան վրայ: Դիւրին է, կարծում ենք, համոզուել, թէ ինչպէս է "բաղաձայն + յ" զուգորդութիւնը յանգեցնում Ը դաղտնվանկի հնչեցմանը հետեւեալ օրինակներում՝ սըյուն (մի ազաւաղում, որն անպատկերացնելի է "սիւն" գրութեան դէպքում), հըյութ,

իրենցյում... եւ այլն: Կարելի է ենթադրել, որ այս ապօրինածին երեւոյթը համատարած դառնալով՝ ոչ հեռաւոր ապագայում մասնագիտական վաւերացման է ենթարկուելու՝ որպէս հնչիւնական օրինաչափութիւն (եթէ, ի հարկէ, չյաջողուի վերադառնալ դասական գրութեան վերահաստատմանը)» – գրում, բացատրում եւ ահազանգում են Լ. Ղազանչեանն ու Վ. Միրզոյեանը:

Նրանք նաեւ եզրակացնում են, թէ «հայերէնի ոչ միայն ուղղագրութեանը, այլեւ բովանդակ ուղղախօսութեանը հասցըւել է կործանարար հարուած: Կատարւածը ունեցել է իր քաղաքական դրդապատճառները... Մասնաւորապէս "բարեփոխիչները" չէին կարող չգիտակցել. որ իրենք առաւել խորացնում են հայութեան երկու հատուածների միջեւ արդէն այլ հիմքերով առաջացած վիհը, մի նոր հիմք են տալիս լեզուական, հոգեւոր, մշակութային փոխադարձ խորթացման»:

Հետեւաբար, ընդամէնը ծաղր է "Մէկ ազգ՝ մէկ մշակոյթ" կարգախօսը, որի ներքոյ ոչ թէ մշակութային բովանդակութեամբ, այլ քաղաքական քարոզչութեամբ զանազան միջոցառումներ են կազմակերպում:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Համախօսականի հեղինակները մի քանի տողով հանդէս են գալիս ոչ միայն "մասնագէտների" այլեւ Հայաստանի ողջ ազգաբնակչութեան անունից, որոնց կարծիքը հաշուի չեն ուզում առնել Ուղղագրութեան պահանջատէրերը:

Բայց ովքե՞ր են այդ "մասնագէտները":

Համախօսականի անդէմ եւ անանուն հեղինա՞կը, որ "ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի գիտական խորհուրդն" է. եւ ո՞վ է Հայաստանի այդ անդէմ ազգաբընակչութիւնը... Նրանք, ովքեր խօսում են քեաւառա – ղարաբաղա – փողոցային–մոսկովեան – գրէական խառնուրդո՞վ... Նրանք, ոքեր անգրագէ՞տ են իրենց դըպրոցական կամ համալսարանական վկայականներով...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

... Այստեղ երեք տողով "գիտական խորհուրդը" տեղեկացնում է, որ "Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգնողների միաւորում"ի դէմ "համախմբւում եւ ընդդիմանում են ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Սփիւռքի բոլոր լուրջ հայերէնագէտները, ուսուցիչները, աշակերտները":

Ցիրաւի, առնուազն պէտք է ոչ միայն թիւր իմացութիւն, այլեւ ընդհանրապէս անկիրթ մարդու ինքնավստահութիւն ունենալ "ժողովրդի" կամ այս դէպքում՝ "Հայաստանի եւ Սփիւռքի հայերէնագէտների, ուսուցիչների, աշակերտների" անունից յայտարարութիւններ կատարելու համար:

Ի ՎԵՐՋՈՅ...

...Ի վերջոյ ուշադրութիւն դարձնենք համախօսականի այն տագնապին որ արտայայտել է "գիտական խորհուրդը":

Արեւելահայ Գրական լեզուի Այբուբենն ու Ուղղագրութիւնը վերականգնելու պահանջը յայտարարելով "ոչ մի կերպ չարդարացւող գործ", Նրանք աւելացնում են թէ դա մի գործ է "որը ոչ կարելի է ուսանել, ոչ էլ ուսուցանել":

Հէնց այստեղ է լ թաքնուած է շան գըլուխը:

Նրանք, այդ "լեզուաբան մասնագէտների" թիւր իմացութիւնը այնքան է, որ նոյն իսկ վստահ էլ չեն թէ Մեսրոպեան Ուղղագրութիւնը հնարաւոր է ուսանել, որպէսզի յետոյ էլ ուսուցանել կարողանան:

Բայց եթէ Նրանք այնքան անճարակ են որ չեն կարող ուսանել, ինչո՞ւ են համոզւած որ "ոչ մասնագէտները" նոյնքան անճարակ են եւ բթամիտ:

Ինչո՞ւ Նրանք չգիտեն, որ Հայերէնի Այբուբենն ու Ուղղագրութիւնը Հայաստանի "ողջ ազգաբնակչութեան մէջ" տիրապետել են ընդամէնը երկու հոգի: Հէնց իրենք՝ յօրինողները... Սուրբ Սահակ կաթողիկոսը եւ Սուրբ Մեսրոպ վարդապետը... Այնուհետեւ նրանց աշակերտողները, որոնց թիւը երկու տասնեակի չէր էլ հասնում: Եւ այդ փոքրիկ խումբը մտաւոր խաւարից դէպի իմաստութեան Լոյս տարաւ հայ ժողովրդին: Ազգ դարձաւ Հայը... Հասաւ ազգային ինքնագիտակցութեան... Հաստատեց իր ինքնութիւնը... Եւ դիմագրաւեց ամէն տեսակի ձուլարանների ու խառնարանների:

Այն դէպքում, երբ ահազանգւում է համատարած անգրագիտութիւնը, որ ամէն տարի բացայայտւում է համալսարանական քննութիւնների ընթացքին, այն դէպքում, երբ լսելի խօսքը աւելի ու աւելի է օտարանում Արեւելահայ Գրական լեզուից հեռատեսիլային հաղորդումների մէջ, թատրոնների բեմերին, Ազգային ժողովի ամպիոնից հնչելիս. այն դէպքում, երբ "Հայաստանի ողջ ազգաբնակչութիւնը" գրագէտ, անսխալ հայերէնով եւ գոնէ բոլշեւիկեան խեղագրութեամբ որեւէ դիմումի մի քանի տող չի կարող գրել, ապա ճիշդ ժամանակն է որ գրաւոր խօսքի Այբուբենն ու Ուղիղ կերպը սկսենք ուսուցանել այնպէս, ինչպէս 1600 տարի առաջ ուսուցանում էին Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը եւ առանց որեւէ յոյս կապելու համալսարանական "բանասէրների" հետ, քանի որ իրենց իսկ խոստովանութեամբ՝ Նրանք անզօր ու անընդունակ են ուսանելու, հետեւաբար նաեւ ուսուցանելու:

Ցիրաւի թերուս են այս համալսարանականները: Նրանք թերուս են եւ որեւէ եզր չունեն լեզուագիտութեան հետ: Եւ այս տխուր իրողութիւնը հաստատել է, նրանց գիտելիքների չափն ու ձեւը կատարել է ուսուցչապետ Լեւոն Խաչերեանը իր "Աբեղեանականների պաշտպանական մարտավարութիւնը եւ նրանց թիւրիմացութիւնները գրաբանական տեսութեան հարցերում" աշխատասիրութեան մէջ (Կլէնտէյլ, 2003թ.), որ եթէ հասած լինէր Հայաստանի հայ հասարակայնութեանը, ապա սովետական խեղագրութեան պաշտպանները պարզապէս չէին ունենայ ինքնամերկացումի որեւէ առիթ եւ ստիպուած կը լինէին ոչ թէ անպարտութիւններ անել "գիտութիւն", "գիտական" եզրերով, այլ պարզապէս ընդունել, որ Հայոց լեզուն իր Այբուբենով ու Ուղղագրութեամբ նահատակութեան ճամբայի վրայ է:

Ես նորէն յիշեցնելու եմ Գաբրիէլ քահանայ Պատկանեանի նախազգուշացումը, երբ իր աշակերտներին յորդորում էր լիակատար ուսումն ստանալ, չմնալ թերուս, քանի որ "ուսում չունեցողը գիտէ որ չունի, վասն որոյ պահանջ էլ ունի եւ իւր վիճակին հպատակ է, իսկ թերուսը իրեն էլ է խաբում, ուրիշներին էլ":

Իսկ ինձ մնում է աւելացնել համալսարանական բանասէրներին. "Ignorentia non est argumentum", ինչպէս ասում էին Հին Հռոմի մէջ եւ ինչը թարգմանաբար նշանակում է, թէ՝ "Տգիտութիւնը փաստարկ չէ":

Կ. Ս.

Փարիզ

ԱՊՐԻԼ 24

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

Ամէն տարի Ապրիլ 24ին մեր ժողովուրդը Հայաստանի թէ արտասահմանի մէջ խոր ապրումով եւ սրտաբուխ արտայայտութիւններով կ'ոգեկոչէ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակը:

Ոգեկոչման մասնակցելու հրաւէրը մեզի կու գայ մեր պատմութեան պատուէրով: Ապրիլ 24ը դարձած է մեր ժողովուրդի ազգային գիտակցութեան եւ արժանապատուութեան գերագոյն չափանիշը:

Ապրիլ 24ը ողբերգական թուականի մը նշումը չէ միայն, այլ անիկա մեր ժողովուրդին ապրելու եւ գոյատեւելու ուխտի օրն է որ կը ճառագայթէ մեր կեանքին, մեր էութեան բոլոր երեսներուն վրայ հաւասարապէս: Սուգը եւ յուշը մերն են ու կը մնան մեր ժողովուրդի յիշողութեան մէջ յաւիտեան:

Վայ է եկեր եթէ օր մը մեր ըմբռնումը տկարանայ եւ մենք թուլանանք մեր ուխտի կատարման մէջ, այն ատեն այդ թուականը կը դառնայ պարզ ցուցական, պալատագայական ժամանակաւոր երեւոյթ մը, սովական դէպքի մը օր եւ ո՛չ աւելի:

Այսօր մեր ժողովուրդը իր բոլոր խաւերով, հրապարակային մեծազանգուած ձեռնարկներով կ'արտայայտէ իր սուգը, իր վիշտը, ցասումը, ափսոսանքը եւ մասնաւորաբար իր արդար պայքարը անտարբեր աշխարհի մը հանդէպ, որ խուլ ու համր կը ձեւանայ խորհելով թէ մեր թշնամին մեզ կոտորելէ, թալանելէ եւ բռնաբարելէ յետոյ փակած է իր արեան հաշիւը:

Այդպիսի մտածողները չարաչար կը սըխալին որովհետեւ մեր հաշիւը չէ փակւած և կը փոխանցուի սերունդէ սերունդ, մինչեւ այն օրը, երբ ցեղասպանը կ'ընդունի իր ոճիրը եւ հատուցում կը կատարէ մեր ժողովուրդին:

Արդարեւ, ի՞նչպէս կարելի է մոռնալ մեր պաշտելի մայրերու եւ հայրերու, անկար ծերերու, անմեղ մանուկներու եւ կոյս աղջիկներու ողջակիզումը ամենաբարբարոս եւ ամենավայրագ միջոցներով:

Ամբողջ սերունդ մըն է որ ոչնչացաւ: Մեր մտաւորականութիւնը ու հոգեւորականութիւնը սրածուեցաւ:

Ո՛չ մէկ ժողովուրդ մեր երկրագունդին վրայ անհաշիւ կորուստներէ յետոյ մընացած է այնքան իրաւազուրկ, որքան մեր ժողովուրդը: Ո՛չ մէկ ժողովուրդ այնքան սառապանքներէ յետոյ մնացած է անտէր եւ անպաշտպան, որքան հայ ժողովուրդը:

Ու մենք ժառանգորդներս այս ջարդուած, հալածուած բայց հերոսական ժողովուրդին, տառապած ենք դարհուրանքովը մեր միլիոնաւոր զոհերուն, որովհետեւ արդարութիւնը չըսաւ իր վերջին խօսքը տակաւին:

Բայց եւ այնպէս, մենք կը մնանք ամուր մեր դիրքերուն վրայ, առանց ետ քայլ մը առնելու, հաւատալով թէ արդարութեան զանգը պիտի հնչէ օր մը անպայման: Որովհետեւ մեր ժողովուրդին իրաւունքները արեան հեղեղներու մէջ սրբագրուեցան եւ փոխանցուեցան մեզի իբրեւ աւանդ ապագայ իրագործումներու:

Այս ուղղութեամբ վերջին քանի մը տասնեակ տարիներուն կատարուած համազգային աշխատանքները յանգած են քաջալերական արդիւնքներու, հոս թէ այլուր: Փաստօրէն միջազգային հանրային կարծիքը աւելի զգայուն է, աւելի համակիր դէպի մեր ժողովուրդը եւ իր պահանջները, հեռու՝ գձուձ անբարոյական հետապնդումներէ:

Դժբախտաբար հոս՝ Ամերիկայի մէջ, Ապրիլ 24ը Հայկական Ցեղասպանութեան Օր հռչակելու բանաձեւը բախեցաւ արեւստական բուռն ընդդիմութեան մը մեր կառավարութեան կողմէ:

Մենք խիստ ամօթ կը զգանք երբ Ամերիկայի նախագահն ու կառավարութիւնը ցարդ ինչ ինչ միջոցներու դիմած են ծուռ հայելիի մէջ ներկայացնելու համար Հայոց Ցեղասպանութիւնը:

Թուրքիան մեր չփացած պաշտպանեալն է ու ապաւինելով մեր կառավարութեան ընձեռած առատաձեռն օժանդակութիւններուն, կը դիմադարձէ մեզ, վատնելով մեր իսկ յատկացուցած միլիոնաւոր տուրքի տոլարները:

Մինչդեռ Ցեղասպանութեան հարցը հայկական հարց մը ըլլալէ աւելի համամարդկային հարց է, բարոյականութեան հարց է, վերջապէս քաղաքակրթութեան չափանիշի հարց է:

Արդեօ՞ք մեր արիւնը նուազ կը կշռէ քան միւս ժողովուրդներու արիւնը: Ինչո՞ւ երկու չափ եւ երկու կշիռ:

Բարեբախտաբար, այսօր իր ազգային եւ քաղաքական իրաւունքներուն հանդէպ Հայն իսկ կ'ապրի ինքնաճանաչման, ինքնագիտակցութեան, ազգային հպարտութեան վերածնունդ մը:

Ճշմարտութիւնը կրնայ պահ մը լռութեան դատապարտուիլ, բայց երբեք թաղուիլ, որքան ատեն որ մեր ժողովուրդը դրօշները չէ ծալած, պատրաստ՝ յուսալքուելու:

Ամէն հայ գիտակցութիւնը պիտի ունենայ թէ Հայն է Հայուն յոյսը:

Մենք է որ պիտի բաժնենք մեր ցաւը:

Մենք է որ պիտի սրբենք մեր քոյրերուն եւ եղբայրներուն աչքի արցունքը:

Ապա թէ ոչ՝ մեր գոյութիւնը իբրեւ Հայ, ամբողջական Հայ, թիւրիմացութիւն մը պիտի ըլլայ լոկ:

Այսօր աւելի քան երէկ, կը լսենք մեր նահատակներու անդրշիրիմեան արձագանգը, այնքա՛ն ուժեղ, այնքա՛ն յուզիչ... նոյնքան ներգործող, որ կը թափանցէ մեր թմրած հոգիներու եւ սրտերու ամենախաւար ծալքերը եւ անկիւնները:

Ատենն է որ սթափինք եւ ամբողջ հասակով նետուինք դաշտ մեր ամբողջական միջոցներով՝ ծառայելու մեր արդար դատի իրագործման: Մեր մէկ ու կէս միլիոն նահատակները իրենց անյայտ գերեզմաններէն այդ է որ կը պատգամեն մեզի: Անոնց հոգիները կը խայտան տեսնելով որ մեր ժողովուրդը միակամ է, միասիրտ ու ինքնավստահ իր առաքելութեան մէջ:

Գալիֆորնիա

ԵՐԳԻ ՎԵՐԱԾԵՆՔ ՎԵՐՔԸ

Տարուէ տարի ոգեկոչելով Հայաշխինջ Սարսափները, մենք պիտի ունենանք մէկ մտածում, – երգի վերածել վէրքը:

Երգ՝ հայ ժողովուրդի յաւիտենականութեան:

Երգ՝ հայրենիքի ամբողջացման եւ անկախութեան:

Երգ՝ խաղաղութեան, շինարար ու յարատեւ աշխատանքի:

Երգ՝ մշակոյթի զարգացման եւ ստեղծագործութեան:

Երգ՝ ներքին կազմակերպութեանց զօրացման եւ ներդաշնակ համակեցութեան:

Այս բոլորը պիտի կազմեն արու քայլերգ մը ինքնապաշտպանութեան, ո՛ր ափն ալ ինկած ըլլանք:

Ա՛յդ կը ներշնչեն աւելի քան մէկ միլիոն ջարդուիչուր ոսկորներուն բեկորները:

Այդ ճիչն է որ ոչ միայն կանգուն պիտի պահէ մեզ, այլեւ պիտի դառնայ ջլատիչ մղձաւանջ մը՝ Հայութեան բոլոր թշնամիներուն համար:

Երէկ ալ երգ մըն էր մեր կեանքը,– ազօթք եւ կարօտ ազատութեան:

Տեղ–տեղ երգն ու մաղթանք վերածւեցան դղրդագին մարտակոչի, սարսելով լեռ ու ձոր, կամ սուլթանախնամ եւ ցարախնամ ոստաններ:

Ձեռք ձեռքի տուին խլամն ու քրիստոնեան, գերեզմանատան մը վերածելու համար արեւմտեան Հայաստանը:

Ամայացա՛ն "վեց նահանգները", Կիլիկիան, Սեւ Ծովու ափերը եւ ուրիշ հայաշատ շրջաններ: Մարեցաւ հայկական յետին համրանքին մուխը՝ Թուրքիոյ ամբողջ տարածութեան վրայ, բացի Վոսփորի ափերէն:

Եւ այսօր "յաղթականները" դիւային քրքիջներ կ'արձակեն, տեսնելով մեզ ցիրուցան՝ ի սփիւռս աշխարհի:

Եւ սակայն, հալածական եւ արիւնլուայ ժողովուրդը այս փլուզումին ալ դիմացաւ, ստեղծելով հայրենիքի մը կորիզը Արարատեան դաշտին վրայ, ինչպէս եւ չէն բոյներ օտարութեան մէջ:

Ինչպէս հայրենիքը, նոյնպէս այդ բոյները ծաղկեցան յարատեւ ուժութեամբ, վէրքը երգի վերածելու վճռականութեամբ:

Եթէ դարերու հաւատքը սարսի, թղթատեցէք 1915 Ապրիլ 11–24ի Արհաւիրքին յիշատակները, դրաւոր թէ անգիր, թօթափելու համար թմրութեան եւ դասալքութեան փուշերը:

Հայոց պատմութեան էջերը չատոնց փակուած էին, եթէ վէրքերը երգերու վերածուած չըլլային անընդհատ, մէկ սերունդէն միւսը:

Ոչ միայն հայրենի լեռներն ու ձորերը, այլեւ խաղաղութեան ժամանակի հողվըրտիքներն անգամ պատմութեան ձայնը կը փոխանցէին սերունդէ սերունդ:

Եւ ձայնը կ'արձագանգէր, կը ծաւալէր ամէն ուղղութեամբ, միշտ արթուն պահելով ամբողջ բազմութիւններ:

Ոեւէ թշնամի չի կրնար մարել այդ ձայնը, եթէ ժողովուրդը ինք մոլցած չէ անոր եղանակները:

Հայաշխինջ Արհաւիրքին զոհերը այդ եղանակներուն արտայայտիչներն են ոչ միայն հաւաքաբար, այլեւ անհատ–անհատ:

Ո՞վ չունեցաւ հարազատ մը, 1915ի ծըրագրեալ Սպանդին մէջ:

Զոհերէն իւրաքանչիւրին վերջին նայւածքը խորհուրդ մըն է ձեզի եւ ամէնուն համար:

Անոնք ահա քառասուն տարիէ ի վեր կը սպասեն որ ամէն մէկս վէրք մը դարմանենք, վարդավառ երգ մըն ալ դուք հնչեցնենք յանուն տարագիր բազմութեանց ինքնապաշտպանութեան:

Շ.

24 Ապրիլ 1956

Տէր եւ Տիկին Կապրիէլ եւ Հերմին Արխեան–Ապունայեան եւ զաւակները՝ Տիգրան եւ Արմէն

Եւ ընտանեկան բոլոր պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց մօր եւ մեծ մօր՝

ԲԱՐԻՍ ԱՐԽԵԱՆ-Ի

(Ծնեալ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 20ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Երեքշաբթի, Ապրիլ 25, ժամը 14·30ին Փարիզի Ս. Յովհաննէս–Մկրտիչ եկեղեցին, 15 rue Jean-Goujon, 75008 Paris, ուրկէ մարմինը կը փոխադրուի Փէր Լա Շէզի գերեզմանատունը, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը։

Որեւէ մահազդ դրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

6 rue Saint-Lazare
75009 Paris

"ՅԱՌԱՋ". – Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Արխեան–Ապունայեանի։

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱԼՖՈՐՎԻԼ. – Տիկին Նուարդ Գույումճեան եւ զաւակներն ու թոռները կը նուիրեն 150 Եւրօ "Յառաջ"ի բարգաւաճման իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝ Յակոբ Գույումճեանի մահուան 27րդ տարելիցին առթիւ։

(Շար. Ա. էջէն)

տայ երկու կողմերու միջեւ (հայ եւ թուրք)։

Խմբագրականը, ինչպէս ըսինք, նորմանտական բնոյթ ունի։ Հեղինակը կողմերու վերլուծումը կ'ընէ եզրակացնելու համար, որ "... երբ, Լիոնի մէջ, Թուրք վիրաւորուած ազգայնականութիւնը կ'ըմբոստանայ Հայկական յիշողութեան դասին կողմէ ընդունուած յարգանքին։ Պատասխանը չի՞ գտնուիր "պատմութեան պարտականութեան" մէջ, աւելի կամ այդ "յիշողութեան" տեղը, որ կրնայ այդքան ընտրովի ըլլալ։ Համաքական յիշողութեան յարգանքը, անկասկած, շահած կ'ըլլայ"։

Գրութիւններու կողքին, թերթը առանձին առանձին կը յիշէ 1915 Ապրիլ 24ը, Կէսօ օրէնքը, Ֆրանսայի ճանաչումը, Հայկական Սփիւռքը (զոր երեք միլիոն կը նկատէ, որուն 400 հազարը Ֆրանսա, Թուրքիոյ համայնքն ալ 380 հազար, որուն 150 հազարը Քիւրտ), նաեւ մտաւորականներու ճակատումը (Լէուիս եւ Վայնշթայն)։

***

«JOURNAL DU DIMANCHE»

(avril 23)

A LYON INAUGURATION SOUS TENSION

Կիրակնօրեայ թերթը վերոնշեալ խորագրին տակ կ'անդրադառնայ Լիոնի յուշակոթողին ստեղծած լարուած կացութեան։ Գրութեան սկիզբը հետեւեալ հարցականը կը դնէ. "Լարուածութի՞ւն, ամոքո՞ւմ, յուզո՞ւմ", որուն կը պատասխանէ Գէորգ Քեփէնէկեան՝ "երե՛քն ալ"։ Ապա, յօդուածագիրը համառօտ պատմականը կու տայ անցած միջադէպերուն, թէր ու դէմ կարծիքներով եւ Թրքական պղծումին ստեղծած խոր վիրաւորանքին։

***

Ֆիկարօ (Ապրիլ 24) կարճ անդրադարձ մը ունէր, ուր կը յիշէր մասնաւորաբար Նոթր-Տամի առջեւ զետեղուած հանրագրերը ժխտողականութեան դէմ եւ 1915 Ապրիլի յիշատակութեամբ։

***

Ձայնասփիւռի կայաններն ալ բաւական տեղ տուին Լիոնի ստեղծած հարցին։ Եւրոպա 1 կայանը հարցազրոյց մը սփռեց Ժիւլ Մարտիրոսեանի հետ, Ֆրանս-Էնֆօ ալ քանիցս կրկնեց բացումին հարցը ծանր մթնոլորտի մը մէջ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Լառա Մութէն,
Վազգէն Կիւրճեան
ցաւով կը գուժեն իրենց մօր եւ մօրաքրոջ

ՇԱՔԷ ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ-ՄՈՒԹԷՆԻ

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 6ին։

Իր յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Երեքշաբթի, Ապրիլ 25, ժամը 11:00ին, Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցին։

15 Rue Jean Goujon
75008 — Paris

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն.

Maison de la Culture Arménienne d'Alfortville

RENCONTRE
avec
VARTAN BERBERIAN
à l'occasion de la parution de son livre
« LE FIGUIER DE MON PERE »

le Vendredi 28 avril à 20h45

Présentation — Dédicaces

— Entrée libre —

9, rue de Madrid 94140 Alfortville
Tél.:01 43 76 55 89 - Fax:01 43 78 66 64
e-mail: mca.alfo@wanadoo.fr

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel
Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »

Vendredi 28 avril à 20h30

RETOUR VERS L'ARARAT

de Pea Holmquist
Film documentaire suédois en v.o., sous-titré français,
avec Suzanne Khardalian, Goran Gunner et Jim Dowing
Musique : Komitas-Chœur Sipan-Komitas
Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

- Participation aux frais : 5 Euros
- Adhérents et Abonnements : 3 Euros

ԵՂԵՌՆԻ 91ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԹՈՒՐՔԵՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ԶԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

երեք անջատ գիրքեր, լոյս տեսած երեք տարբերակներով
ԹՐՔԵՐԷՆ – ՀԱՅԵՐԷՆ – ՖՐԱՆՍԵՐԷՆ
Ամէն մէկ գրքին մէջ 110 գրութիւններ (2001 - 2005)

Մենք կը հաւատանք որ ամէն մէկ գրութիւնը ցեղասպան Թուրքին կուրծքին մխրճուած դաշոյն մըն է։

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ

Le Verdon B, Domaine du Loup, 06800 CAGNES-SUR-MER.

— ARMENIE — ARTSAKH — IRAN DU NORD — SYRIE DU NORD —

ԵՐԿԻՐ ԵՒ ՄՇԱԿԱՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ORGANISATION TERRE ET CULTURE

DINER DE SOUTIEN

ET PRESENTATION DES PROGRAMMES

Samedi 13 mai à 19 heures

au NOVOTEL-PARIS LES HALLES,
8 Place Marguerite de Navarre, Paris 1er
Métro Châtelet, sortie rue de la Laverie ou Place Saint-Opportune

Participation : 50 Euros (35 Euros pour les étudiants).

Réponse souhaitée avant le 8 mai
Tél.: 01 42 33 08 98 — Courriel: a.andreassian@wanadoo.fr

Centre Culturel SAINT MESROB à PARIS

le jeudi 27 avril à 20h45

Bardig KOUYOUMDJIAN, photographe et **Christine SIMEONE**, journaliste à France-Inter présenteront leur œuvre commune

DEIR-ES-ZOR

sur les traces du génocide arménien de 1915

Préface d'Yves Ternon

(Editions Actes Sud)

Ce témoignage bouleversant sera accompagné de la projection de documents inédits exceptionnels

Vente et dédicace du livre

au 10 bis rue Thouin - Paris 5ème
Métro Cardinal Lemoine . Monge

— Entrée libre • Cocktail —

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԵՆ

Հայաստանցի կին մը որեւէ աշխատանք կը փնտռէ (տարեցի կամ մանուկի խնամք տանիլ, մաքրութիւն ընել, եւլն., եւլն.)։

Հեռաձայնել՝ Անահիտ Խաչատուրեանի
06·33·85·39·73

***

Հայաստանցի տիկին մը կարի կամ երախաներու, տարեցներու ընկերացողի աշխատանք կը փնտռէ։

Դիմել՝ 01·45·04·60·17
կամ 96·18·80·47·17
Թիւերուն, Տիկին Պետրոսեանին։

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

COLLOQUE INTERNATIONAL

DU COLLECTIF RECONNAISSANCE
Mémoires partagées des génocides et des crimes contre l'humanité : démarche préventive et dynamique de paix
28 et 29 AVRIL . LYON

***

A propos du Collectif Reconnaissance
Association Loi 1901 créée en janvier 2002, le collectif rassemble 15 associations : **ACAT**-Action des Chrétiens pour l'abolition de la torture et des exécutions capitales — **ARTAG**-Association Régionale des Tsiganes et de leurs amis Gadgé — **CEDIA**-Centre d'études, de documentation et d'informations arméniennes — **CDCA**-Comité de défense de la cause arménienne — **COMITE UKRAINE 33**-Association d'information sur la famine de 1933 en Ukraine — **CVKR**-Comité des Victimes des Khmers Rouges — **ETL**-Etudiants pour un Tibet Libre — **IBUKA**-«Souviens-toi» association pour la mémoire du génocide rwandais — **LDH**-Ligue des droits de l'homme — **LICRA**-Ligue internationale contre le racisme et l'antisémtisme— **LION DES NEIGES**-Association pour le respect des droits de l'homme au Tibet — **MAINPAT TIBET**-Association pour la défense des droits du peuple tibétain et de sa culture—**PLACE DES FETES**-Association pour la valorisation des cultures minoritaires — **RADDHO**-Rencontre africaine pour la défense des droits de l'homme — **RHONE TIBET**-Association pour la défense des droits du peuple tibétain et de sa culture.

Le Collectif Reconnaissance est présidé par Jules MARDIROSSIAN, président du Centre d'Etudes, de documentation et d'information arméniennes.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 26
MERCREDI
26 AVRIL
2006

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.441 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.441

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

ՓԱՐԻԶ

ՑՈՅՑԸ

Յայտարարուած ժամէն արդէն ուշագրաւ բազմութիւն մը ու ծփացող եռագոյններու պուրակ մը հրջապատած էր Կոմիտասի արձանը: Ճիշդ ժամուն սկսաւ ոգեկոչումը, Գիւտ Արք.ի գլխաւորած հոգեւորականներու դասուն աղօթքով ու ծաղկեպսակներու զետեղումով, մինչ կը հասնէին քաղաքական դէմքերը: Կոմիտասին ու անոր անձին ընդմէջէն մեր բոլոր նահատակներուն ուղղուած Գիւտ Արք.ի խօսքէն ետք օրուան խօսնակը՝ Փ. Սապունճեան մէկ-մէկ բեմ հրաւիրեց ՍՕՍ. Ցեղասպանութեան, Լիքա-ՐԱ-յի ներկայացուցիչները, Ֆրանսահայ կազմակերպութիւններու խորհուրդին նախագահ Ա. Կէօվճեանը, Ֆ. տը Վիլիէն (Ֆրանսայի համար շարժում), Հելէն Լիւքը (համայնավար), Ֆր. Հոլանտը (ընկերվար), Ֆր. Պայրուն, Ա. Սանթինին, Մ. տը Սարնէզը (Իւ. Տէ. էՖ.), յետոյ Հրեայ ուսանողներու միութեան, կանաչներու, Իլ-տը-Ֆրանսի Շրջ. Խորհուրդէն Ժ.-Փ. Հիւշոնի ներկայացուցիչը, բոլորէն ետք Փ. Տէվէճեանը:

Ելոյթներուն մէջ հասարակաց էին Ի. դարու առաջին ցեղասպանութեան զոհերուն յարգանքը, մոռացութեան, յատկապէս ժխտումին դէմ պայքարի վճռակամութիւնը: Ամէն մէկ ուղերձ զօրակցութեան, անցնող տարիներուն տրուած խոստումներուն յարգանքին, ժխտումը պատժելու եւ վերջապէս Թուրքիոյ ճանաչումին յանգելու վճռակամութիւնը կը պարունակէր: Շատեր դատապարտումի խօսքերով անդրադարձան Թրքական վերջին ցոյցերուն, նահատակներու յիշատակն ալ անարգող ընթացքին: Շեշտուեցաւ անոր ետին պաշտօնական դերակատարութիւնը որ ըսել կու տար թէ Եւրոպայի դրան առջեւ կանգնած այդ երկիրը ընդունելութեան գլխաւոր պայմանը պէտք է յարգէր պատշաճելով ու կիրարկութեան յանձնառու ըլլալով եւրոպական չափանիշներուն. իսկ ատիկա կը նշանակէր ի միջի այլոց պաշտօնապէս ճանչնալ 1915ի իրականութիւնը: Ժխտողականութեան երեւոյթին ծաւալումին դէմ բոլորն ալ համամիտ էին այդ կեցուածքը պատժելի արարք դարձնող օրէնքի բանաձեւին Մայիս 18ին վաւերացումի անհրաժեշտութեան:

Քաղաքական դէմքերու բազմազան խումբին մէջ բացառիկ խանդավառութեամբ ընդունուեցաւ Փ. Տէվէճեան. ան ժխտողականութիւնը պատժելու օրէնքին առընչութեամբ նախորդներէն զանազանող կեցուածքով մը ըսաւ թէ սկիզբը վերապահ էր այդ մասին. նման օրէնքի հռչակում քիչ մը անհաշտ կը թուէր իրեն արտայայտութեան ազատութեան երկրին մէջ որ Ֆրանսան էր: Բայց անդրադարձ թէ Թուրքիոյ մէջ պատժելի արարք յայտարարուած էր Ցեղասպանութեան հաստատումը, ապա Թրքական վերջին արարքները հարց տալու կը մղէին զինքը թէ այս երկրին մէջ մեր զաւակներու խաղաղութիւնը պիտի մերժուէ՞ր մեզի մեր նախկին հալածիչին շառաւիղներուն կողմէ: Այդ մտածումը պետութեան պահպանումը ունենալու ձգտումին կ'առաջնորդէր. ուզելու որ Ֆրանսան չարտօնէ մեր մեռեալներուն յիշատակին պղծումը: Ուստի պէտք էր կարենալ ըսել. եթէ Թուրքիոյ մէջ Ցեղասպանութեան հաստատումը արգիլուած է, Ֆրանսայի մէջ ալ պատիժի արժանի կը նկատուի անոր ժխտումը:

Խօսք առնողներէն զատ քաղաքական բազմաթիւ ներկայացուցիչներ կային քաղաքապետարաններէն — Ալֆորվիլ, Սարսէլ, Մէօտոն, Լիվրի, Գլիշի, Իսի, Արնուվիլ, Գրէթէյլ, եւլն. եւլն. —, Շրջանային խորհուրդներէն:

Մօտ երկու ժամ տեւած խօսքի բաժինէն ետք, մինչ բազմութիւնը անդադար կը ստուարանար, ցոյցի 7-8 հազարնոց թափօրը ուր քաղաքական դէմքերէն մնացած էր տիկ. Լիւքը, ուղղուեցաւ դէպի Շան դ'Էլիզէի Թրք. ներկայացուցչութիւնը, անցնելով Ֆրանսուա Ա. հրապարակէն, Ժորժ Ե. պողոտայէն: Ցեղասպանութիւնը շեշտող, արդարութիւն պահանջող լոզունգներու արձակումով, ֆրանսական և հայկական եռագոյններով, պաստառներով, տպաւորիչ թափօրը ժամը 20ի մօտ հասաւ Թրքական ներկայացուցչութեան հանդիպակաց մայթը, ուրկէ անդին անցքը խափանուած էր: Օրուան վերջին ելոյթները ունեցան ՍէՍէԱէՖ.ի կազմէն Ռ. Ծակոյեան եւ Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Բիւրոյի ներկայացուցիչ Մ. Փափազեան: Կէս ճամբան սկսած անձրեւը մինչ այդ սաստկացած էր, քիչ ետք վերածուելու համար կատարեալ ջրհեղեղի մը:

*

Ցոյցէն առաջ, խուռներամ բազմութիւն մը փութացած էր Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր եկեղեցին, ուր արտայայտուեցաւ Գիւտ Արք.:

ԼԻՈՆ

ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ

Այս տարուան ապրիլեան ոգեկոչումներուն Ֆրանսայի կիզակէտը կը հանդիսանար Լիոնը, հոն կանգնած նոր յուշարձանին հանդէպ Թրքական ծանօթ հակազդեցութեան պատճառով: Օրը սկսաւ Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի մատուցած պատարագով, որուն յաջորդեց հոգեհանգստեան պաշտօնը. այդ ընթացքին Ֆրանսերէն խօսքով մը հանդէս եկաւ վեր. Զօղանեան, հայերէնով Անդրանիկ Վրդ. Ադամեան (կաթողիկէ համայնքէն): Ներկայ էին քաղաքապետ Ժ. Գոլոնի գլխաւորութեամբ քաղաքական դէմքեր:

Կէսօրէն ետք Պէլքուր հրապարակին վրայ հաւաքուած էր հինգ հազարի շուրջ բազմութիւն մը որ մեռեալներու յուշարձանին ծաղկեպսակներու զետեղումէն ետք ուղղուեցաւ Անթոնէն Փոնսէ հրապարակը ուր կանգնած էր նորակառոյց կոթողը: Ֆրանսական ու հայկական դրօշներուն հետ ցուցարարները կը կրէին պաստառներ որոնք կը մերժէին ժխտողական Թուրքիան: Թափօրին մասնակից էին կրօնական համայնքներու ներկայացուցիչներ, Լիոնի եւ Ռոն-Ալփի նահանգապետ Ժ.-Փ. Լագրուա, նախարար Տ. Փերպէն որ կը ներկայացնէր նախագահ Շիրաքը ու պարտականութիւնը ունէր փոխանցելու անոր պատգամը:

Յուշակոթողին բացումի հանդիսութիւնը սկսաւ ճարտարապետ Լ. Պասմաճեանի բացատրութիւններով. կոթողը կը բաղկանայ 36 "քարէ տերեւներ"է, Կոմիտասի մեղեդիներէն մէկուն 36 նօթերուն հիմով: Ապա քաղաքապետ Ժ. Գոլոն կուռ ճառ մը արտասանեց, Հայ Դատին իր զօրակցութիւնը յայտնելով եւ գոհունակութիւնը՝ զոր կը զգայ Լիոնի սրտին վրայ բանալով Ապրիլեան նահատակներու յուշակոթող: Ապա հարկը շեշտեց Ֆրանսայի ճանաչումէն ետք ցեղասպանութեան եւս ժխտումը պատժելի արարք հռչակող օրէնք ունենալու: Թուրքիոյ ուղղելով խօսքը, ան յիշեց Վ. Պրանտի ներողութիւնը, ինչպէս եւ Յովհաննէս-Պօղոս Բ.ի, Լացի Պատին առջեւ: Յետոյ շեշտեց. "Թուրք ժողովուրդը իսկապէս ազատ պիտի չըլլայ, այնքան ատեն որ ինքզինք չէ ձերբազատած անցեալի ոճիրներէն":

Յուշակոթողի կառուցման յանձնախումբին նախագահ Ժիւլ Մարտիրոսեան պատասխան ուղերձով մը անդրադարձաւ Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան, ակնկալութիւն յայտնելով որ Եւրոպացիները կատարեն իրենց բաժին պարտականութիւնը:

Հայաստանի դեսպանը Է. Նալպանտեան յանուն հայ ժողովուրդին երախտիք յայտնեց քաղաքապետին ու շեշտեց երկու ժողովուրդներուն բարեկամութեան ամուր կապը:

Իսկ նախարար Փերպէն Ցեղասպանութեան զոհերուն ընծայուած մեծարանքի եւ ճանաչումի խորհրդանիշ նկատեց նոր յուշարձանը:

Բացումը կատարուեցաւ բոցի արծարծումով, ձեռամբ քաղաքապետ Ժ. Գոլոնի, դեսպան Է. Նալպանտեանի ու Ժ. Մարտիրոսեանի: Ապա Նորվան Եպիսկ. օրհնեց կոթողը, որուն ստորոտին առջեւ ցեղասպանութեան ենթակայ ժողովուրդներու խումբ մը աղջիկներ մոմեր կը զետեղէին:

Գեղարուեստական բաժնին մասնակից եղան Ռոմանի երաժշտանոցին նուագախումբը, ղեկավարութեամբ Ալ. Սիրանոսեանի, Հալէ Էկայեանի պարախումբը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ ժամը 19.30ի մօտ. ապա քաղաքապետարանին մէջ ընդունելութեամբ մը քաղաքապետը պատուեց Ֆրանսացի եւ հայ անձնաւորութիւնները:

ՄԱՐՍԷՅԼ

ՆՈՐ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ

ՄԱՐՍԷՅԼ ("Յառաջ"). –

Առաւօտեան ժամը 10:30ին հանդիսաւոր արարողութեամբ մը բացումը կատարուեցաւ Մարսէյլի 12րդ թաղամասին մէջ (մերձակայ Պօմոնի հայաշատ արուարձանին) կառուցուած յուշարձանին, որուն ներկայ գտնուեցաւ Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ նախագահ՝ Արթուր Պաղտասարեանի: Յուշարձանը ներշնչուած է Ծիծեռնակաբերդի յուշակոթողի ճարտարապետութենէն: Բոլորաձեւ եւ գետինը կրագիսուած, հաստատուած տասներկու քարեր ներկայացնելով պատմական Հայաստանի տասներկու նահանգները, մէջտեղը աղբիւր մը՝ խորհրդանիշ կեանքի եւ շրջանակին մէջ երկու մեթր երեսուն բարձրութեամբ յուշաքար մը, հետեւեալ արձանագրութեամբ (հայերէն եւ ֆրանսերէն). կու տանք հայկականը նոյնութեամբ. – «Ի յիշատակ ի թրքական կառավարութեան գործած 20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ մէկուկէս միլիոն հայերուն»:

Հանդիսութիւնը լաւ կազմակերպուած էր: Սկսաւ ազգային փառերգներով երգուած Սահակ – Մեսրոպ երգչախումբի կողմէ եւ պարզումովը հայկական, ֆրանսական ազգային դրօշներուն, ինչպէս նաեւ Մարսէյլ քաղաքի եւ Եւրոպական Միութեան դրօշներուն: Կրօնական դասը, երեք յարանուանութիւններէ կազմուած, նախագահութեամբ Զաւէն Վրդ. Աւետեքեանի՝ օրհնեց յուշաքարը որ քօղազերծուեցաւ անձնաւորութիւններու ձեռամբ: Սահակ – Մեսրոպ երգչախումբը մեկնաբանեց "Ի վերին Երուսաղէմ"ը եւ "Հայր մեր"ը:

Խօսք առին յաջորդաբար Հայաստանի Խորհրդարանի նախագահ՝ Արթուր Պաղտասարեան, Պուշ տիւ Ռոն նահանգի ընդհանուր խորհուրդի անունով փոխ նախագահ՝ երեսփոխան Քրիսթոֆ Մաս, Փրովանս Ալփ քոթ տ'Ազիւրի շրջանային խորհուրդի նախագահ Միշէլ Վօզէլ, Մարսէյլի ծերակուտական քաղաքապետը Ժան-Գլօտ Կօտէն եւ հուսկ Պուշ տիւ Ռոնի փրէֆէն՝ Քրիսթիան Ֆրէմոն: Ապա, երիտասարդներ ծաղկեպսակներ զետեղեցին քարերուն առջեւ, մինչ երգչախումբը կ'երգէր "Ով հայոց աշխարհ":

Այս արարողութեան մասնակցեցան ԺԱՖ-ի, Հ.Յ.Դ. Նոր Սերունդի երիտասարդներ, Հայ սկաուտները, Անարատ Յղութեան հայ քոյրերու եւ Համազգայինի դպրոցի աշակերտութիւնները, Հ.Յ.Դ. Պատանիները:

Ներկայ գտնուեցան Ֆրանսայի Հայաստանի դեսպանը՝ Էտուարտ Նալպանտեան, մեծ թիւով քաղաքական անձնաւորութիւններ եւ շուրջ հազար հինգ հարիւրէ երկու հազար ժողովուրդ:

ԵՐԵՒԱՆ

Ինչպէս ամէն տարի, օրը սկսած է պետական աւագանիին ու Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին Մայր Աթոռի միաբաններու ընկերակցութեամբ Ծիծեռնակաբերդի յուշարձան այցով: Հոն կաթողիկոսը եւ նախագահ Ռ. Քոչարեան ծաղկեպսակներ զետեղած են, ապա յուշահամալիրին անմար կրակին շուրջ հանդիսապետութեամբ Գարեգին Բ.ի հոգեհանգստեան արարողութիւն կատարուած է, ի յիշատակ 1915ի զոհերուն: Ներկայ եղած են նաեւ վարչապետ Ա. Մարգարեան, Սահմանադրական ատեանի նախագահ Գ. Յարութիւնեան, նախարարներ, երեսփոխաններ:

Նոյն օրը Էջմիածնի մէջ պատարագ մատուցանած է Ներսէս Արք. Պօզապալեան, ապա միաբաններու թափօրը ուղղուած է Եղեռնի նահատակներուն յիշատակին կանգնած խաչքարին ուր հոգեհանգստեան արարողութիւն կատարած է Գարեգին Բ.:

Օրուան առընչութեամբ հայ ժողովուրդին ուղերձ մը յղած է նախագահ Ռ. Քոչարեան: Ան ըսած է. «Այս ոճրագործութեան համար Օսմանեան Թուրքիան եւ նրա իրաւայաջորդը կրում են լիակատար պատասխանատւութիւն: Եղեռնից վերապրած հայ ժողովրդի ողջ յետագայ պատմութիւնը կրել է կատարուած ոճրագործութեան ծանր հետեւանքները:

Ցաւն առաւել ուժեղ է, քանի որ ստիպուած ենք նաեւ պայքարել պատմու-

(Շար.ը Դ. էջ)

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՏԱՀԱՊԻ ծովափը, եգիպտական Սինայի մէջ, Ապրիլ 24ին, երեք յաջորդական ռմբափորձեր գործուած են երկու ճաշարաններու եւ մէկ մեծ վաճառատան դէմ: Առաջին հաշուեկշիռի մը համաձայն 23 մեռեալ կար, աւելի քան 60 վիրաւորներ: Մեռեալներուն մէջ կան օտարներ, որոնց մէջ նորածին Գերմանացի մը, վիրաւորներու մէջ ալ կան երկու Ֆրանսացիներ. ծանօթ է որ վայրը կը յաճախեն գլխաւորաբար զբօսաշրջիկներ: Եգիպտոս փակած է Իսրայէլի հետ սահմանը, որպէսզի կասկածելիներ չկարենան խոյս տալ: Միջազգային հաւաքականութիւնը դատապարտեց արարքը, որու ոչ ոք տէր եղած էր Ապրիլ 25ի առաւօտուն: Կը թուի որ արարքին հեղինակները երկու քամիքազներ են:

ՊԱՂՏԱՏԻ մէջ, Ապրիլ 24ին, եօթը ռմբափորձեր գործուած են, որոնց հետեւանքով 19 Իրաքցիներ մեռած են եւ աւելի քան 100 վիրաւորներ կան:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ նախագահը Մ. Ապպաս յայտարարած է հեռատեսիլէն տուած հարցազրոյցի մը ընթացքին, որ կրնայ պաշտօնազրկել Համասի կազմած կառավարութիւնը, զոր կը հրաւիրէ երկխօսութեան Իսրայէլի հետ: Շեշտած է որ Համասի մերժումը այդ ուղղութեամբ, դէմ է պաղեստինցի ժողովուրդին շահերուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ ԲԱՆԱՎԷՃԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՑԵՂԱՍՊԱՆԻՆ՝ ԹՈՒՐՔԻՆ ԱՊԱԳԱՅԻՆ ԹԵՄԱՅՈՎ

ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՈՎ ՊԷՏՔ Է ԶՈՒԳԱԴՐՈՒԻ

Կ'ԸՍԷ ՓՐՈՖ. ՄԻՀՐԱՆ ՏԱՊԱՂ «ԱԶԴԱԿ»ԻՆ ՏՈՒԱԾ ԻՐ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻՆ ՄԷՋ

(Բ. եւ վերջին մաս)

Հ. – Տոքթ. Տապաղ, ձեր պատկերացումով, գոհի եւ դահիճի հոգեվիճակէն դուրս գալու եւ իսկական խորքային բովանդակալից ճանաչում մը ունենալու համար ի՞նչ պէտք է: Այդ ճանաչումը ի՞նչ պէտք է ընդգրկէ. այսինքն դահիճին ժառանգորդները ի՞նչ ձեւով պէտք է քալեն այդ մեղքը: "Անբաւարար է ճանաչումը", կ'ըսէք, ատկէ յաւելեալ ի՞նչ կ'ակնկալուի:

Պ. – Ճիշդ է, որ մենք չենք կրնար դահիճին ժառանգորդները այդ պատժական օրէնքի տեսանկիւնով պատասխանատու նկատել, բայց այստեղ պատասխանատուութիւն ստանձնելու հարց մը կայ: Ուրեմն ժառանգորդ ըլլալ՝ կը նշանակէ նաեւ որոշ պատասխանատուութիւն ստանձնել: Ես չեմ գիտեր, թէ Հայկական Հարցի հետապնդումը կամ հայկական պահանջատիրութիւնը ինչպիսի լուծում մը պիտի գտնէ, բայց մէկ բան ինծի համար յստակ է. պէտք է սփիւռքահայութեան եւ Հայաստանի, պէտք է հայկական ապագան ապահովող բոլոր միջոցները տրամադրուին նաեւ Թուրքիոյ կողմէ, որպէսզի կարենանք այն պատմութիւնը, որ մեր մէջ կը կրենք, աւելի ապահով ձեւով շարունակել կրել եւ նաեւ ունենալ ապագայ մը այս համաշխարհայնացուած աշխարհին մէջ: Կարճ ձեւով եթէ ուզեմ պատասխանել, այստեղ պէտք է ծրագրուած աշխատանք տարուի հայ ժողովուրդի ապագային հետ կապուած:

Հ. – Տոքթ. Տապաղ, Ցեղասպանութիւնը շատ սրտանմլիկ նիւթ մըն է ուսումնասիրելու: Որոշ հանգրուաններու աշխարհի, քաղաքակիրթ աշխարհի մտաւորականութիւնը եւ պետական շրջանակները անցեալին պատկանող արարք մը կամ գործելաձեւ մը կը նկատէին ցեղասպանութիւնը: Բայց Ի. դարը փակուեցաւ Ռուանտայի մէջ ցեղասպանութեամբ մը, ԻԱ. դարը սկսաւ Տարֆուրի մէջ մինչեւ այսօր շարունակուող ցեղասպանութեամբ մը: Հիմնարկները, ակադեմական շրջանակները եւ քաղաքական շրջանակները ի՞նչպէս կը հակազդեն այս իրավիճակին՝ ցեղասպանութեան ոճի գործածութեան շարունակութեան: Երկրորդ բաժինը հարցումիս՝ այս ցեղասպանութիւններուն մէջ որեւէ օրինաձեւութեան զարգացուած տարբերակներ, մեթոտներու նմանութիւններ կը տեսնէ՞ք նախորդող ցեղասպանութիւններուն հետ:

Պ. – Շատ սերտ կապ կը տեսնեմ, որովհետեւ ցեղասպանութիւնները, որոնք կատարուեցան, բոլորն ալ ազգային –ըստ դահիճներու սահմանումին– նոր ապագայ մը կերտելու համար գործուած են: Իբրեւ իրենց "կողմը", իրենց համար սահմանուած երկրամասին վրայ, անոր հողին եւ ժողովուրդին նոր, միատարր ինքնութիւն մը տալու համար: Այս առումով ես ցեղասպանական արարքը "ինքնութեան քաղաքականութիւն" պիտի սահմանէի, քաղաքականութիւն մը, որ կ'ուզէ միատարր ինքնութիւն մը ամէնէն կարճ ժամանակի մէջ իրագործել: Հետեւաբար ցեղասպանութիւնները միշտ ազգային ոճիրներ են: Այս ուղղութեամբ, բոլոր ցեղասպանութիւնները նոյն նկարագիրը ունէին, ինչպէս՝ Հայկականը, այսինքն՝ Երիտթրքական արարքը, որ կ'ուզէր միատարր Թուրքիա մը ստեղծել նոր ինքնութեամբ, "զօրեղ ինքնութեամբ", նոյնը կ'ուզէր նաեւ Գերմանիան, ինքնութիւն մը ստեղծել ըստ իր սահմանումին, առանց որեւէ մէկ տարբերակի. նոյնն էր նաեւ Ռուանտայի մէջ, եւ ինչ որ այսօր Տարֆուրի մէջ կը կատարուի, երկու ցեղերու միջեւ հակամարտութիւն մը չէ կատարուածը, այլ՝ ազգային քաղաքականութիւն մըն է, որ կ'ուզէ իրագործել նոր, աւելի միատարր կառոյց մը Սուտանի մէջ:

Հ. – Տոքթ. Տապաղ, եթէ իրավիճակը այսպէս է, ուրեմն ՄԱԿ-ի Ցեղասպանութեան ուխտը եւ աշխարհի դառն փորձառութիւնները ոչինչ կրցան ընել այս ամէնէն ահաւոր ոճիրը աշխարհի երեսէն ջնջելու: Քաղաքակրթութիւնը այս հանգրուանին հասաւ: Միջազգային հեղինակութիւն մը կայ, ՄԱԿ-ը, օրէնք կայ՝ միջազգային օրէնքը, եւ անոնք ոչինչ կրնան ընել: Ասկէ աւելի ի՞նչ կարելի է ընել, որպէսզի մարդկութիւնը ապահով ըլլայ, թէ այդպիսի զարհուրելի ոճիրներ պիտի չկրկնուին այլեւս:

Պ.– Ասիկա հարցում մըն է, որ ոչ միայն իրաւացի է, այլ նաեւ շատ կարեւոր: Այստեղ մենք ընդհանրապէս աշխարհի վրայ կամ ընդհանուր միջազգային քաղաքականութեան մէջ ունինք ուղեցոյց մը. այս աշխարհը կ'երեւակայենք միայն ազգային պետութիւններու շրջագիծին մէջ, ուր ոչ ազգային, պետական սահմաններէն դուրս կառոյցները որպէս անվստահելի եւ ժամանակաւոր կառոյցներ կ'ուզենք տեսնել: Ուրեմն աշխարհի վրայ կայ միայն պետութիւններու միջեւ գործակցութիւն մը, ընդդէմ՝ պետականութենէ զուրկ ժողովուրդներուն, այստեղ նման ցեղասպանական արարքներուն վերջ տալու կամ նուազեցնելու համար պէտք ունինք ազգային պետութիւններու ըմբռնումին, այսինքն՝ այս կառոյցներու մէջ լուրջ փոփոխութիւններ բերելու: Մենք պէտք ունինք միատարր ազգային պետութեան հասկացողութեան յարաբերականացումին, որպէսզի պետականութիւն չունեցող ժողովուրդները իբրեւ գոյականներ, այսինքն՝ իբրեւ հաւաքականութեան մը իրաւունքներու տէր կառոյցներ, կարենան գոյատեւել եւ ունենան իրենց ապահովութիւնը իբրեւ խումբ, իբրեւ ժողովուրդ ունենան իրենց երաշխիքները այդ պետութիւններուն մէջ իրենց ինքնութիւնը ապահով ձեւով կերտելու եւ շարունակելու. եթէ նման պարագաներու մէջ կարենայինք պետութիւններուն հրաժարիլ տալ միատարր պետութիւն մը ստեղծելու իրենց գաղափարէն, կը կարծեմ, որ այն ատեն անոնք կարիք կամ անհրաժեշտութիւն պիտի չզգային օտարին կամ տարբերին գոյութեան վերջ տալու: Պէտք է այստեղ հաստատել, ամէնէն մեծ հարցերնիս ազգային պետութիւններու մտապատկերն է, իրենց ինքնութեան սահմանումն է, որուն մէջ օտարը կամ "տարբեր"ը տեղ չունի (տարբերը իրե՛նք կը սահմանեն):

Հ. – Կը կարծէ՞ք, որ պետական կարգավիճակ չունեցող ազգերը ՄԱԿ-ի նման միջազգային կազմակերպութիւններու մէջ առնելը այս իմաստով երաշխիք կ'ըլլայ:

Պ. – Շատ շնորհակալ եմ այս հարցումին համար. իրապէս միշտ նման առաջարկներ ըրած եմ, որովհետեւ այդ ՄԱԿ-ը դարձած է տեղ մը, ուր պետական կառոյցները միայն տեղ ունին եւ ոչ-պետական համայնքները (միայն կարծեմ Պաղեստինցիներն են, որ որոշ եզակիութիւն մը ունին այս պարագային), զոր օրինակ Քիւրտերու պէս ժողովուրդներ, ուրիշ ժողովուրդներ, որոնք որոշ պետութիւններու մէջ կ'ապրին, որեւէ մէկ ձեւով սահմանում մը չունին այս համակարգին մէջ: Այս հաւաքականութիւններուն նման կառոյցներու մուտքը անպայման տարբեր վիճարկումի պատճառ պիտի դառնայ, նաեւ այս ժողովուրդներուն համար ապահովութիւն մը պիտի ըլլայ իրենց ապագային հետ կապուած, այն ատեն ՄԱԿ-ի այդ դիմագիծը պիտի փոխուի, եւ մենք պիտի սկսէինք տարբեր ձեւով սահմանել աշխարհը եւ ոչ թէ աշխարհ մը, ուր միայն ազգային պետութիւններուն ապագան երաշխաւորուած է:

Հ. – Նախապէս, Օսմանեան կայսրութեան մէջ գործուած Հայկական Ցեղասպանութեան մը մասին կը խօսուէր: Այժմ կամաց-կամաց սկսած է լսուիլ նաեւ այլ ոչ թուրք ցեղերու ցեղասպանութեան մասին, որ նախապէս կ'ընդգրկուէր Հայկական Ցեղասպանութեան հետ. ի՞նչ կը նկատէք այս ուղղութեամբ ակադեմական շրջանակներու մէջ, ցեղասպանութիւնները ուսումնասիրող շրջանակներու մէջ:

Պ. – Այս վիճարկումը կարծեմ թէ Գերմանիոյ մէջ սկսաւ, եթէ չեմ սխալիր, որոշ շրջանակներու կողմէ, որոնք Հայկական Ցեղասպանութիւնը փորձեցին վերածել քրիստոնեաներու դէմ գործուած ոճիրի: Ես այդ սահմանումէն գոհ չեմ, քանի որ այս Երիտթրքական ցեղասպանական արարքը կրօնական հարցի մը կամ կրօնական տարբերութեան մը հետեւանքը կը դարձնէ: Երիտթրքական գաղափարական սահմանումին պատճառով յղացուած ու նիւթուած ոճիրին թիրախներուն շարքին մէջ գոյութիւն չունէին միւս ժողովուրդները, այլ միմիայն Հայերն էին, իսկ միւս զոհերը, ինչպէս Ասորիներու պարագային, պիտի ըսէի, անշո՛ւշտ որ ցեղասպանութեան մը զոհ են, բայց անոնք զոհը դարձան ծրագրումով եւ նպատակակէտով յստակօրէն Հայերու դէմ ուղղուած ցեղասպանական արարքի մը: Այդ պատճառով հիմա, այս պարագային մանաւանդ այս շրջանին, երբ Հայերուն դէմ գործուած ցեղասպանութիւնը կ'աշխատի իր տեղը գրաւելու, շատ ճիշդ չէի գտներ այսպիսի սահմանումներու դիմել, ինչպէս՝ քրիստոնեաներու դէմ գործուած ոճիր, որոնք կրնան պատճառ դառնալ Հայկական Ցեղասպանութեան հետ կապուած մեր աշխատանքները աւելի յարաբերականացնելու եւ անդիմագիծ դարձնելու: Ըսել կ'ուզեմ, որ նախ Երիտթրքական ցեղասպանական արարքը Հայերու դէմ ուղղուած ցեղասպանական արարք էր եւ իրենց գաղափարական սահմանումին մէջ թիրախը Հայերն էին, եւ ոչ՝ միւս ժողովուրդները: Եթէ միւսները զոհ դարձան Հայկական Ցեղասպանութեան շրջագիծին մէջ, ապա այդ չի նշանակեր, թէ ինչ որ Ասորիներուն պատահեցաւ, ցեղասպանական արարք մը չէր: Այնուհանդերձ անոնք այդ սահմանումին մէջ չէին, Երիտթրքական սահմանումին հիմնական թիրախ չէին: Ուրեմն իր դիտաւորութիւնն էր գործել Հայկական Ցեղասպանութիւն, եւ Հայկական Ցեղասպանութիւնը գործելու ընթացքին Ասորիները գործնապէս դարձան ցեղասպանական արարքի մը զոհը, որուն Հայերը պէտք է մեծ պատասխանատուութեամբ մօտենան եւ անոնց զօրավիգ կանգնին:

Հ. – Ինչպէ՞ս կը տեսնէք Հայկական Ցեղասպանութեան միջազգային մակարդակի վրայ մեծ պետութիւններու կողմէ, ապա՝ Թուրքիոյ կողմէ ճանաչումի աշխատանքներուն ապագան: Ճիգերը պիտի արդիւնաւորուի՞ն:

Պ. – Արդէն արդիւնաւորուած են, ըստ ինծի, չկայ աշխարհի վրայ որեւէ պետութիւն եւ լուրջ հաստատութիւն մը, որ Հայկական Ցեղասպանութիւնը Հայկական Ցեղասպանութիւն չկոչէ: Կան պետութիւններ, կան հաստատութիւններ, որոնք ցայսօր կը խուսափին ասիկա իր անունով կոչելէ, այս եղբը գործածելէ: Կրնանք ըսել, որ 90 տարուան մեր ճիգերը արդիւնաւէտ եղան: Բայց հիմա յարացուցութեան փոփոխութիւնը կը նշանակէ ոչ թէ այդ վէճը շարունակել՝ "Ցեղասպանութի՞ւն. այո կամ ոչ"ի, որ կը նշանակէ դահիճին տրամաբանութեան մասնակից դառնալ, այլ ջանալ Հայկական Ցեղասպանութիւնը "յիշողութեան մշակոյթ"ին, յիշողութեան քաղաքականութեան մասնակից դարձնելու ճիգ ընել: Այստեղ պայքարը այլեւս պէտք է "յիշողութեան մշակոյթ"ին մաս դառնալու եւ ոչ թէ միմիայն Հայկական Ցեղասպանութեան ճանաչումի համար տարուի: Մենք Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը գրեթէ իրագործեցինք: Հիմա պէտք է աւելի ուշադիր ըլլանք, որպէսզի անիկա չդառնայ պատմութեան գիրքերուն վերապահուած արձանագրուած ցեղասպանութիւն մը, պատմական դէպքի մը պարզ հաստատումով, այլ դառնայ վառ, ապրուած յիշողութիւն՝ "յիշողութեան մշակոյթ"ին մէջ նշանակալից տեղ մը գրաւելով եւ այս ճիշդ սահմանումով:

Ասիկա կը պահանջէ ոչ միայն պատմագիտական եւ իրաւաբանական մօտեցում, այլ՝ փորձառութեան մտաւորականացում, որուն սկիզբը Օշական, Սարաֆեան եւ ուրիշներ դրին, որոնց յաջորդները լուռ այս գործը կը շարունակեն ճանաչման տաղտուկին մէջ, առանց ուշադրութիւն գրաւելու:

Ատենն է, որ մենք մեր մօտեցումներուն մէջ ուղղումներ մտցնենք եւ Եղեռնը իբրեւ զուտ պատմական դէպք ձերբազատենք պատմագիտութեան մենաշնորհէն եւ զայն փորձառութեան վերածենք, մտաւորականացնենք:

ԳԻՏԱԿԱՆ - ԱՅԺՄԷԱԿԱՆ

Քաղեց՝ ՍՈՒՐԷՆ ՇԷՐԻՔ

ՆԻՒԹԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ

Մեր ուսանողական տարիներու տարրական գիտելիքներուն մաս կազմած են նիւթին կամ մարմնին 3 գոյավիճակները. հաստատուն (կամ պինդ), հեղուկ եւ կազային:

Ուրեմն ո՞րն է չորրորդը: Պատասխանը, Հանրապետութեան նախագահին անունը վերյիշելու չափ պարզ պէտք է ըլլար, քանի որ տիեզերքը 90 տոկոսով անկէ բաղկացած է: Երկրագունտը նիւթին այդ չորրորդ գոյավիճակով շրջապատուած է, հիւսիսայգը (aurore boréale) անոր կատարեալ մարմնացումն է, ինչպէս նաեւ փայլակները: Արեւը գլխաւորաբար նիւթին այդ գոյավիճակէն կազմուած է: Կրակ, բոց պիտի ըսէիք հաւանաբար: Բաւական մօտեցած էք, սակայն ճշգրիտ պատասխանը "բլազմա"ն է: Յունական ծագում ունեցող այս բառին բուն իմաստը (յարդարուած կործ) շատ ալ աղերս չունի իր բնագիտական նշանակութեան հետ: Բլազման, նիւթին իբրեւ չորրորդ գոյավիճակը, կազ մըն է որուն մէջ հիւլէները իրենց ժխտական ելեկտրական բեռէն ձերբազատած են: Այս իսկ պատճառաւ, մագնիսական եւ ելեկտրական դաշտ մը կը ներկայացնէ որ անկանոն եւ աննախատեսելի ձեւով կը տեղափոխուի եւ իր շրջապատը փոփոխութեան կ'ենթարկէ: Եւ որքան այս վերջինը փոփոխուի, նոյնքան բլազման ինքիր շրջապատին հետ փոխ հակազդեցութեան կը մտնէ: Ընդհանուր առմամբ բլազման տաք է, բայց ան պաղ ալ կրնայ ըլլալ:

Բլազման կամ, "ելեկտրականացած կազը" առաջին անգամ ԺԹ. դարու վերջերը Անգլիացի գիտնական Քրուքսի կողմէ նկարագրուեցաւ, սակայն 1928 թուականին է որ ամերիկացի քիմիագէտ Լանկմուիր զայն կնքեց "բլազմա" անունով: Բայց ինչ որ ալ ըլլայ իրեն տրուած անունը, գիտնականները կը շարունակեն փորձել հասկնալ այս գոյավիճակին շարժակերպին հիմնական օրէնքները: Դեռեւս այս է պատճառը որ բլազման երբեք իր արժանի ուշադրութիւնը չէ վայելած: Այս պարագան հաւանաբար պիտի փոխուի, ոչ միայն բլազմային հետատեսիլներու մէջ գտած լայն գործածութեան համար (յիշեցնելով որ հարթ տափարակ պաստառը ներկայիս բնակարաններու ամենափնտռուած սարքաւորումը կը համարուի). իր պաղ բլազման որ թեթեւօրէն ելեկտրականացած է, առաւել կ'ընծայէ փոխարինելու երբեմնի ծանր քաթոտիք խողովակը:

Բլազման նոր ուժանիւթի աղբիւրներու բանալին կրնայ ըլլալ: Արեւուն կեդրոնը կապարէն ալ աւելի խիտ բլազմա մըն է 15 միլիոն աստիճանի հասնող արտակարգ ուժանիւթ: Շատերուն ծանօթ է որ տասնեակ տարիներէ ի վեր, գիտնականները կը փորձեն իրագործել արեւուն հիւլէական ձուլումը (fusion nucléaire): Սակայն եւ այնպէս ձեռք ձգուած արդիւնքները գոհացուցիչ ըլլալէ շատ հեռու են հակառակ աննախընթաց ջերմաստիճաններու տաքցուած բլազմայով պատրաստուած սարքաւորումներու: Այսուհան-

ղերձ մասնագէտներու կողմէ բլազմայի կիրարկումները հետզհետէ կը բազմապատկուին: Ապագայի հրթիռները բլազմայի բարակ խուրձերով շատ աւելի արագ կարելի պիտի ըլլայ առաջ մղել: Իսկ պաղ բլազման ճարտարարուեստական բազմազան կիրարկութիւններու անհրաժեշտ է. զոր օրինակ, տեղեկատուական միաւորներու մակերեսին վրայ ան կարելի կ'ընէ խոռոչներ փորագրել որոնք կը ծառայեն արձանագրելու ծաւալուն տեղեկութիւն: Վերջերս վիրժինիացի բընագէտ մը հնարած է տեսակ մը գրիչ որ կ'արձակէ պաղ բլազմայի խուրձ որ տաքութեան պատճառով վնասուած նիւթ մը ամլացնելու կը ծառայէ: Ան կրնայ հականեխել վէրքերը, սպաննելով մանրէները (առանց վնասելու ողջ բջիջներուն), Բլազման նորածիններու չորերը աւելի ծծիչ կը դարձնէ, կերպընկալ պարկերու վրայ մելանին հաստատ կառչիլը կ'ապահովէ: Վերոնշեալ բնագէտը կ'ըսէ որ ինք լսէլ դասընթացքներուն բլազմայի խօսքը երբեք լսած չէր բայց այս վերջինը տիեզերքի մէջ այնքան ներկայ է եւ ունի բազմազան կիրարկութիւններ որ վստահ է թէ մօտ օրէն ան պաշտօնապէս պիտի ընդունուի նիւթին իբրեւ չորրորդ վաւերացուած գոյավիճակը:

ԱՄԵՆԱՇԱՏ ՎԱՃԱՌՈՒԱԾ ԴԵՂԵՐԸ

Միջազգային առողջապահութեան կազմակերպութիւնը, յետ ուսումնասիրութեան հրապարակած է 2005ին աշխարհի տարածքի վրայ ամէնէն շատ ծախուած 10 դեղերու ցանկը: Լիբիթորը (ֆրանսական համարժէքը Թահոր) որ Ֆայզեր լաբորաթուարի հակաքոլեսթերոլային մէկ արտադրութիւնն է, դասաւորման առաջին տեղը գրաւած է: Այս դեղը զոր պէտք է գործածել ցկեանս, 10 միլիառ Եւրոյէ աւելի արժող շուկայ մը կը ներկայացնէ: Դասաւորման երկրորդ տեղը վիճակած է "Բլավիքս"ի (4·9 միլիառ եւրօ): Այս 10 դեղերուն 2ը հակաքոլեսթերոլային, 2ը շիզոֆրենիի դէմ եւ 2ը կեղային ցաւերու դարմանումին համար գործածուած դեղեր են: Ահա 10 առաջիններու ցանկը իրենց գործածութեան ոլորտներով նշուած.

1. Լիբիթոր (քոլեսթերոլ)
2. Բլավիքս (սրտերակային հարցեր)
3. Նեքսիում (կեղային հարցեր)
4. Ատվաիր (ասթմ)
5. Զոքոր (քոլեսթերոլ)
6. Նորվասք (գերճնշում)
7. Զիբրեքսա (շիզոֆրէնի)
8. Րիսբերտալ (շիզոֆրէնի)
9. Բրեվասիտ (կեղային հարցեր)
10. Էֆֆէքսոր (ջղապրկում)

Ս. Շ.

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՄՈՆՐԷԱԼԻ Թէքէեան կեդրոնին մէջ, Մարտ 11ին, ԹՄՄ-ի վարչութիւնը պատուած է յանձնախումբերու անդամները, որոնք իրենց նպաստը բերած են համայնքի կեանքին եւ իրենց վստահուած ձեռնարկներու յաջողութեան: ԹՄՄ-եան վարչութեան ատենապետը՝ Նուպար Պապիկեան բացումը կատարած է, յիշելով Միութեան պաշտօնաթերթը՝ "Ապագա"ն եւ տարբեր յանձնախումբերու գործունէութիւնը եւ իրականացուցած նախաձեռնութիւններուն բնոյթը: Խօսք առած է ԹՄՄ-ի Մոնրէալի մասնաճիւղի հիմնադիրներէն եւ գլխաւոր ճարտարապետներէն տոքթ. Արշաւիր Կէօնճեան, որ պատմականը ըրած է ԹՄՄ-ի տեսլականին, գաղափարական հաւատամքին եւ անոր բերած անուրանալի նպաստին: Հաւաքոյթը վերջ գտած է հիւրասիրութեամբ:

***

ՊՈԼՍՈՅ Մխիթարեան Սանուց Միութեան սրահին մէջ, Ապրիլ 3ին, Բանկալթըի Մխիթարեան Սանուց Միութեան հիմնադրութեան 60ամեակի շրջագօտին մէջ ներկայացուած է Յակոբ Պարոնեանի գործերէն զանազան հատուածներ: Ներկայացումը բաղկացած է երկու արարներէ: Առաջին արարին մաս կազմած են "Շողոքորթ"էն, "Հարս ու կեսուր"էն, "Ատոնին տեսարաններ"է նմոյշներ, երկրորդ բաժնին մէջ ալ "Զոքանչ ու փեսայ", "Ատամնաբոյժն արեւելեան", "Մեծապատիւ մուրացկաններ", "Պաղտասար աղբար", "Պարոնհիներ" գործերէն հատուածներ: Իրագործումը կատարած է բեմադիր Արամ Կոստանեան:

***

ՄՈՆՐԷԱԼԻ Նոթր Տամ տը Լուտ եկեղեցւոյ մէջ Սանքթէ Եոհաննէս երգչախումբը Ապրիլ 6ին ներկայացուցած է իր երրորդ ելոյթը, հիւր խմբավար ունենալով Հայաստանէն Թէնոր Վարուժան Մարգարեանը: Ցայտայրին մաս կազմած է Կապրէիլ Ֆօրէի Ռէքուիէմը: Վ. Մարգարեան ծնած է Երեւան, աւարտած է Երաժշտա - մանկավարժական Արովեան համալսարանը, 1993ին ալ աւարտած է Կոմիտաս Երաժշտանոցին մեներգի ճիւղը, ուսուցիչ ունենալով Մարիանա Յարութիւնեանը:

***

ՊՈԼՍՈՅ Մխիթարեան Սանուց Միութեան սրահին մէջ, Ապրիլ 1ին բացուած է երիտասարդ արուեստագիտուհի Շիլա Կարագեանի ցուցահանդէսը, որ եզակի բնոյթ ունէր: Ան կզզիներէն հաւաքած է զանազան ձեւերով եւ ծաւալով խճաքարեր եւ զանոնք ջնարակելով եւ իրարու փակցնելով մարմին տուած է անոնց: Այսպէս, Շիլա Կարագեան այդ խճաքարերէն պատրաստած է 25 արձանիկներ յենած ջընարակեալ փայտիկներու վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԳԱՐԵԳԻՆ Բ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ»

Ապրիլ 20ին Մայր Աթոռի դիւանապետ Արշակ Եպիսկ. Խաչատրեանի եւ "Հաբիթա" ձեռնարկութեան ներկայացուցիչ Ք. Պէնսընի միջեւ համաձայնագիր ստորագրուած է. անով կը նախատեսուի որ միջազգային ընկերութիւնը "Գարեգին Բ. շինարարական ծրագիր" անունին տակ գործունէութիւն ծաւալէ: Այդ գործունէութիւնը կը վերաբերի շուրջ հարիւր բնակարանի կառուցումին: Այս տարի մարզերու տնազուրկներուն համար 37 տուն կը կառուցուի: Ապահովելու համար ծրագրին անհրաժեշտ նիւթականը, ԱՄՆ-ու արեւելեան թեմի միջեկեղեցական յարաբերութիւններու պատասխանատու, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի ԱՄՆ-ու ազգային եկեղեցիներու խորհուրդի նախագահ Վիգէն Եպիսկ. Այքազեան դիմած է ամերիկեան եկեղեցիներուն, հայկական թեմերուն եւ Սփիւռքի թեմական առաջնորդներուն ու ապահոված ծախքերուն մեծ մասը: Ծրագրով Սփիւռքէն կամաւորական խումբեր պիտի ղրկուին Հայաստան:

ՍՏԱՑԱՆՔ

ՎՐԱՑԵՐԷՆ - ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

Ռ. Կ. ԳՈՐԳԱՁԷ

Երեւանի Պետական Համալսարանի հրատարակչութիւն, հովանաւորութեամբ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան

ՓԻՔԱՍՕՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈ՞Ղ

"Փիքասօ եւ Ափրիկէն" ցուցահանդէսը ափրիկեան մամուլին մէջ գետին արամադրած է բաւական սուր վէճի մը: Եոհաննէսպուրկի մէջ բացուած ցուցահանդէսը որ աւելի քան 50 հազար այցելու ընդունած է, յետագային պիտի բացուի Գափի մէջ ալ: Ու հարաւային ափրիկեան օրաթերթի մը մէջ այդ առիթով տեղ գըտած նամակ մը հրահրած է վէճը: Հոն երկրին մշակոյթի նախարարութեան բանբերը որ ճշդած է թէ անձնական նախաձեռնութեամբ կը գրէ, Փիքասօն արուեստի գողութեամբ ամբաստանած է: Ան գրած է. «Այս ցուցահանդէսը կը վկայէ թէ Փիքասօ երբեք ծանօթ արուեստագէտ մը պիտի չըլլար, եթէ ափրիկեան անանուն արուեստագէտներու գործեր գողցած ու պատշաճեցուցած չըլլար: ...Կայ այն տեսակէտը թէ Փիքասօ շատ սիրած է ափրիկեան արուեստը, ուզած զայն ծանօթացնել ամբողջ աշխարհին: Սակայն պէտք չէ մոլորիլ. Թշնամին միշտ ներկայ է եւ վճռած արդէլք ըլլալ որ Ափրիկէն յառաջդիմէ. ու առիկա՝ շնորհիւ ըրաափիւններու սուտերուն»:

Բնական է որ նման պնդումներ անպատասխան չեն մնացած: Նախարարութեան բանբերին ընդդիմադիր ճակատէն մէկը հարց տուած է. «Պիտի գրէի՞ք նման բաներ եթէ քաղաքական ձեր մեծաւորը համաձայն չգտնուէր»: Իսկ յօդուածագիրը պատասխանած է թէ իր տեսակէտը քննադատողները ցեղապաշտներ են. ըստ իրեն, սպիտակամորթերը իրենց կը վերապահեն արուեստի վերաբերող նիւթերով միճարկումները:

ՔԱՂՀԱՆ

ԲԱՔՈՒ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ

Ազրպէջանի Մշակոյթի եւ Զբօսաշրջութեան Նախարարութիւնը նպատակ ունի գրադարանի վերածելու Բաքուի Հայոց եկեղեցին: Նախարար Կարայեւ ըսած է թէ իր կարծիքով յարմար կարգադրութիւն մը կ'ըլլայ առիկա, քանի որ այդ կրօնքին հաւատացեալներէն մեծ թիւ մը մնացած չէ մայրաքաղաքին մէջ, բայց եկեղեցիին շէնքը հարկ է պահպանուի:

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝ ՎԱՀԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Բարեբախտաբար կէսօրէ ետքի հանգիստի ժամն է եւ տղան որ գաղտնի ղըրկուած է կուսակալութեան, դժուարաւ հոն մէկը գտաւ եւ մանաւանդ դժուարաւ կրցաւ իրեն հետեւողները համոզել. եւ հիմա մեկնող կառքին ձայնը միայն կը լսեն: Բայց Յուլիս ամսու կէսօրէ ետքի ժամը երեքին, ոչ մէկ բան կրնայ այդ ընչահեղձ քաղաքին հիւանդագին տաքին, ի գին ժանտախտի, տեղ մը երթալու համար վազելու մղել:

Այսպէս, Իսմէնէ եւ Նազիմ կրցան Զարեհը տեղեկացնել, մինչ չնչասպառ եւ յուսահատ Մարի-Ժօզէֆինին կ'երթան: Եւ ինք կ'ըլլայ կացութեան ղեկը առնողը: Վիթ-վիթ, կը բացատրէ Ժան-Ֆիլիփին որ տախտակ, գամ եւ մուրճ գտնէ բարեփոխելու համար կառքը: Վիթ-վիթ, ինք, Զարեհ եւ Ժան-Ֆիլիփ կը ջանան երկրորդ յատակ մը շինել: Վիթ-վիթ, Իսմէնէն եւ Նազիմը ճամբայ կը հանեն խոհարարուհիին հետ, որ բանէ վախ չունի եւ Հալէպը գոց գիտէ, Իսաագը պատրաստելու եւ ճամբար տանելու համար: Խոհարարուհին պիտի մնայ հոն իբրեւ պահակ ոչխարներուն եւ էշերուն: Հետը ունի խոշոր դանակ մը եւ անբաժանելի հաստ գաւազանը որ կը ծառայէ գնում ըրած ժամանակ շուրջի հետաքըրքիրները հեռացնելու: Ճարպիկութեամբ կը գործածէ իր գաւազանը:

Իսաագ իր դերին մէջ կը մտնէ, երջանիկ՝ որ վերջապէս օգտակար պիտի ըլլայ: Իսմէնէ զինք կը տանի խոշոր չինարի ծառին մօտ սահմանուած ժամադրութեան: Նազիմ Մուրացկաններու Եղբայրակցութեան պետին կ'երթայ: Անոր պէտք է պատմել ամէն բան եւ վճարել իրենց տուած պաշտպանութեան փոխարժէքը:

"Գտայ հայ բժիշկը" մանրամասնօրէն կը պատմէ: "Բայց ճշմարտութիւնը չըսի երէկ քեզի":

"Բարեկամ, գիտեմ որ երկու Յոյներու հետ ես" կը պատասխանէ միւսը "եւ անշուշտ պատճառ մը ունեցար ինծի ստելու: Բայց հիմա գիտես որ ինծի պէտք ես ամէն բան պատմել: Գործիդ կու գա՞յ":

Եւ Նազիմ խելապէս ամէն բան պատմեց Հալէպի մուրացկաններուն պետին: Նոյնիսկ իր նախկին մեղքերը, նոյնիսկ իր լրտեսի արհեստը, եւ իր յարումը Շուշանիկին: Երբ լմնցուց, միւսը վայրկեան մը լուռ մնաց, յետոյ ըսաւ.

«Գնա խաղաղութեամբ, մենք քեզի պիտի օգնենք: Հինգ սթէրլին տուր պահակ Սելճուքին, կաղ զափթիէին համար, եւ վճարէ Եղբայրակցութեան, իր օգնութեան համար: Կէս գիշերէն սկսեալ տասը հոգի պիտի ըլլան մուտքին շուրջ: Մի փնտռեր զիրենք, անոնք պիտի միջամտեն եթէ պէտք ըլլայ: Մէկ ուրիշ մարդըս Ճէմալ փաշայի մօտերը տեղ մը պիտի ըլլայ լուր տալու համար եթէ անսպասելի բան մը պատահի: Վարպետ տաղձագործ մը մէկ ժամէն ֆրանսական հիւպատոսարանը պիտի ըլլայ»:

«Բարեկամ, ծառայութիւն մը եւս» կ'ըսէ Նազիմ: «Հիմա պէտք է գտնել հրամանատարին կնոջ տալիք հինգ հազար սթէրլինը: Կրնա՞ս ոսկի սթէրլինի վերածել դրամը, թանկագին քարերը եւ գոհարեղէնները, որ հետերնիս բերինք»:

«Կրնամ եւ կ'ուզեմ» կ'ըսէ մուրացկաններու պետը, որ քաղաքին բոլոր լումայափոխերը կը ճանչնայ. «պարկեշտ ծառայութիւն մը պիտի ընեմ: Այս պատմութիւնը պէտք է լաւ վերջաւորութիւն մը ունենայ: Եւ ցոյց տալու համար բարի կամքս, պիտի սկսիմ սթէրլինները հաւաքել նախքան դրամը եւ թանկագին քարերը բերելդ»:

Ասոր վրայ Նազիմ իր գրպանի ունեցածը կը պարպէ եւ եղած գանձը առանց հաշուելու կը յանձնէ. յետոյ, թեթեւցած՝ ծերունին հետ հաշիշի ծխամորճ մը կը ծխեն միասին ու երկուքն ալ ինքզինքնին Հարուն ալ-Ռաշիտի ձիաւորները կը զգան:

Յետոյ, վիթ-վիթ, անվերջ օրը սկսաւ կրկին սուրալ: Ատաղձագործը գաւակներուն հետ արագօրէն ստանձնեց Մարի-Ժօզէֆինի, Զարեհի եւ Ժան-Ֆիլիփի սկսած խառնակ գործը բարելաւել:

Անխօս եւ վարժ շարժումներով քանի մը ժամուան մէջ կազմեցին ամուր կըրկնակ յատակ մը եւ կառքին ետեւը ծռող մուտք մը բացին որուն դուրսի կողմը ծպտեցին որթատունկի ճիւղերով: Բազմաթիւ ծակեր բացին յատակին վրայ եւ փայտէ շարժական շեղանկիւն աւելի մութ ներկուած կտորներով ծածկեցին, զոր Իսմէնէ, կծկուած անկիւն մը, ներսի կողմէն պիտի բանար երբ փախստականները ներս մտնէին:

Վրան կրկին դրուեցաւ կաշիէ գեղեցիկ նստարանները, Գաշմիրի նշանաւոր շալերը որոնցմով Մարի-Ժօզէֆին աւելի ֆըրանսական կը դարձնէր կառքը, թէյի սպասի ճամբորդական տուփը որ կը պարունակէր նաեւ թերմոսներ, մէկը զօրացուցիչ խմիչքով, ուրիշ մը սուրճով եւ տուփ մը թեթեւ պիսքոթներով:

Զարեհի բժշկական պայուսակը իբրեւ պաշտօնական արդարացում, դրուեցաւ առջեւի նստարանին վրայ, բայց յետոյ աւելի յարմար նկատուեցաւ որ Զարեհ ձեռքը ունենար զայն, երբ Մարի-Ժօզէֆին զինքը պիտի կանչէր, ինչպէս կ'ըլլայ ամէն լաւ բժիշկի պարագային:

Իսաագ եւ Իսմէնէ պատշաճ կերպով հրաժարուեցան մուրացկաններու պետէն որ պարպեն իրենց գրպանները: Բայց Իսմէնէ խոհեմաբար դրպանին մէջ պահեց տոպրակ մը քարեր եւ աժէքաւոր իրեր, ամէնուն վաղուան համար: Եւ մուրացկաններու պետին հետ որ հասկցած էր, իրարու աչքին մէջ նայեցան, բայց ձայն չհանեցին:

(Շար. 89)

(Շար. Ա. էջէն)

թեան այդ սեւ էջի ճանաչման ու դատապարտման համար: Հայաստանի հանրապետութիւնն իբրեւ հայրենաքնակ եւ աշխարհասփիւռ հայութեան ազգային շահերի արտայայտիչ, շարունակելու է այդ պայքարը»:

Նախորդ գիշերը Երեւանի մէջ ջահերթ կազմակերպուած է ՀՅԴ երիտասարդական եւ "Ն. Աղբալեան" ուսանողական միութիւններուն կողմէ: Երթը սկսած է Ազատութեան հրապարակէն, մասնակցութեամբ 2500–3000 երիտասարդներու որոնց մէջ եղած են 300–400 սփիւռքահայեր: Բազմութիւնը "Ճանաչում" կոչերով բարձրացած է Ծիծեռնակաբերդի յուշարձանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

ԱՄՆ

Ինչպէս ամէն տարի, 91ամեակի նախօրեակին եւս Գոնկրէսի երկու ժողովներէն 209 անդամի ստորագրութեամբ նամակ մը ղրկուած է Նախագահ Պուշի, թելադրելով որ ոգեկոչման ուղերձին մէջ չէրջանցէ "ցեղասպանութիւն" որակումը: Ստորագրած են Ներկայացուցիչներու ժողովէն 178, ծերակոյտէն 31 անդամ: Երկրորդ խումբին մաս կազմած է Նախկին Նախագահ Գլինթընի կինը Հիլարի Գլինթըն:

ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Նահանգապետ Ա. Շվարցընէկէր Ապրիլ 23–27 յայտարարած է "Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի շաբաթ": Նաեւ ճանաչումի կոչ ըրած է բոլոր անոնց որոնք տակաւին չեն ընդունած 1915-ի իրականութիւնը: «Աւելի ապահով ապագայի մը հիմերը կը դրուին անցեալը ճանչնալով: Ես այս յոյսով ճանաչումի կոչով հանդէս եկող հայ համայնքի մեր բարեկամներուն կը զօրակցիմ եւ նոյն բանը ընել կը թելադրեմ Ամերիկայի ու աշխարհի միւս ժողովուրդներուն» *ըսած է ան:*

ԱՐԺԱՆԹԻՆ

Խորհրդարանը Ապրիլ 19ին յատկապէս յայտարարած է թէ կը դատապարտէ Հայերու դէմ գործուած եղեռնը եւ ցաւակցութիւն կը յայտնէ զոհերուն հարազատներուն: Յայտարարութեամբ շեշտուած է թէ ժխտումը ոճիրը կրկնելու հիմ կրնայ դառնալ:

ԳԱՆԱՏԱ

Վարչապետ Ս. Հարփըր ոգեկոչած է 91ամեակը ու յիշեցուցած թէ երկրին Ծերակոյտը ճանաչումի բանաձեւ մը քուէարկած է "Ի. դարու առաջին ցեղասպանութեան մասին", իսկ խորհրդարանը ընդունած ու դատապարտած 1915ի ցեղասպանութիւնը որպէս մարդկութեան դէմ գործուած ոճիր:

ՄԵՏԻՍ

Ֆրանսական մեծամասնները լայնօրէն արձագանգեցին Ապրիլ 24ի հանդիսութեանց, գլխաւորաբար Փարիզի, Լիոնի եւ Մարսէյլի ոգեկոչումներուն: Ձայնասփիւռ եւ հեռատեսիլ Ապրիլ 24ի իրիկունն իսկ անդրադարձան արարողութիւններուն: Ապրիլ 25ին, Ֆիկառօ *գրեթէ ամբողջ էջ մը նուիրած էր Լիոնի յուշակոթողի բացման, նկար մըն ալ կցած, ուր Նորվան Եպիսկոպոսի կողքին էին Հայաստանի դեսպանը եւ ռաբունին: Թղթակցութեան կցուած էր հարցազրոյց մը Ֆիլիփ Վիտըլիէի հետ (*"Թրքական գիշեր"*ի հեղինակը), ինչպէս նաեւ նոր օրինագիծին բնագիրը, որ կը վերաբերի ժխտողականութեան դատապարտումին:*

***

Լիպէրասիոն *նոյնպէս լայնօրէն արձագանգած էր Լիոնի յուշարձանի բացման, որ կատարուեցաւ հանդարտ մթնոլորտի մէջ, ինչպէս գրած է իր խորագրով իսկ:*

***

«LE SOIR»

(24 avril)

FRERES ARMENIENS, FRERES TUTSIS, FRERES HUMAINS

Նացիական ցեղասպանութեան հրեայ զոհերուն ոգեկոչումին -Ապրիլ 25- առթիւ Պելժիոյ Հրեայ լայիք համայնքի կեդրոնի նախագահ Մ. Շվարսպուրթ եւ "Հայեացքներ" պարբերականի տնօրէնը Ն. Զոմէրըյթայն յօղուած մը ստորագրած են ուր կ'անդրադառնան Ռուանտայի Թութսիներուն եւ Հայերու ցեղասպանութիւններուն: Երկուքին համար ալ հարկաւոր կը նկատեն որ երկու պարագաներն ալ ժխտողականութիւնը պատժելի արարք նկատող օրէնքի տրամադրութեան մէջ առնուին: Այդ ուղղութեամբ կոչ կ'ուղղեն Պելժիոյ ղեկավարներուն որ հրէական Ողջակէզին ուրացումը, ժխտումը պատժող 1995 Մարտ 23ի օրէնքին կիրարկութեան դաշտը ընդլայնուի, որպէսզի ամէն օր ժխտումի նոր տարբերով հանդէս եկող ուրացողներուն ճամբան փակուի:

Centre Culturel SAINT MESROB
à PARIS

le jeudi 27 avril à 20h45

Bardig KOUYOUMDJIAN, photographe
et Christine SIMEONE,
journaliste à France-Inter
présenteront leur œuvre commune

DEIR-ES-ZOR

sur les traces
du génocide arménien de 1915

Préface d'Yves Ternon

(Editions Actes Sud)

Ce témoignage bouleversant sera accompagné de la projection de documents inédits exceptionnels

Vente et dédicace du livre
au 10 bis rue Thouin - Paris 5ème
Métro Cardinal Lemoine - Monge

— Entrée libre • Cocktail —

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Section «Archalouisse Tatéossian» de Paris

Circuit en Arménie et Artsakh

Du 2 au 12 septembre (Arménie) ou du 2 au 14 septembre (Arménie + Haut Karabagh) — Pension complète sauf à Erévan (1/2 pension) — Hôtels 3 et 4 étoiles — Vol Air France — Prix à partir de 1280 Euros.

Renseignements et inscriptions :
— Araxie : 01 39 83 71 19.

Nombre de places étant limité, date limite d'inscription : **15 juin.**

□

CHAVILLE

Soirée Cabaret

La Section «Ter Tavtian» de Chaville organise le samedi 20 mai à partir de 20 heures une **Soirée Cabaret** avec Alain POSTURE, imitateur et GIGI la Fleur de Montmartre, chanteuse et French CANCAN, ainsi que Philippe et Vartan pour les musiques traditionnelles arméniennes.

□

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE
organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie

Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne
en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ HAMASKAINE
ՓԱՐԻԶ

BOIS-COLOMBES

**Le Dimanche 14 mai
à 16 heures 30**
LA COMPAGNIE DE DANSE
YERAZ
présente
PARFUMS D'ARMENIE
Direction artistique :
Christina GALSTIAN-AGOUDJIAN
— Salle Jean Renoir —
7 Villa des Aubépines
92270 Bois-Colombes

Réservations :

01 56 83 91 03 — 06 24 33 35 86 — 06 14 74 92 97

Maison de la Culture Arménienne d'Alfortville

RENCONTRE
avec
VARTAN BERBERIAN
à l'occasion de la parution
de son livre
«LE FIGUIER DE MON PERE»

le Vendredi 28 avril à 20h45

Présentation — Dédicaces

— Entrée libre —

9, rue de Madrid 94140 Alfortville
Tél.:01 43 76 55 89 - Fax:01 43 78 66 64
e-mail: mca.alfo@wanadoo.fr

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

CINE-CLUB
Paris 10e
«Rouben Mamoulian»

Vendredi 28 avril à 20h30

RETOUR VERS l'ARARAT

de Pea Holmquist
Film documentaire suédois en v.o., sous-titré français,
avec Suzanne Khardalian, Goran Gunner et Jim Dowing
Musique : Komitas-Chœur Sipan-Komitas
Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

- Participation aux frais : 5 Euros
- Adhérents et Abonnements : 3 Euros

A la rencontre de l'Arménie et du Karabagh avec l'UCFAF

du lundi 24 juillet au dimanche 6 août
1420 Euros tout compris au départ de Paris
(sauf visas et taxes aéroports)
base chambre double et demi-pension
excursions et visites quotidiennes avec guide francophone
ainsi que circuit 4 jours jusqu'au Karabagh
Renseignements et inscriptions :
UCFAF : 6, Cité du Wauxhall — 75010 Paris
Tél. 01 42 08 76 49 (de 15h à 17h) - Fax 01 42 08 09 70
www.ucfaf.com
Madame YAZIDJIAN — 29-33, avenue Pasteur — 93100 Montreuil
Tél. 01 42 87 95 98 heures bureau

ESPOIR POUR l'ARMÉNIE

Voyage du 5 au 15 juillet
Logement en hôtel 3* en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh.
Lac Sévan, Khor Virab, Guéghart, Garni, etc...
Prix : 1.350 Euros

Pour tout renseignement :

Serge KURKDJIAN - Tél. : 04. 91. 77. 23. 44

**Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84876**

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 27

JEUDI
27 AVRIL
2006

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.442
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
81e ANNEE — N° 21.442

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

ՊՈԼԻՍ

«ԱՅԼԵՒՍ ԵՐԲԵ՛Ք»

"Մարդկային իրաւունքներու միութեան" Պոլսոյ մասնաճիւղը Ապրիլ 24ին յատուկ նիստով մը նշած է Ցեղասպանութեան 91ամեակը: Այդ առիթով յայտարարութիւն մըն ալ հրապարակուած է: Հոն կ'ըսուի թէ Ապրիլ 24ը որ Ցեղասպանութիւնը խորհրդանշող թուական է, Թուրքիոյ մէջ Թապուի մը թուականն է: Պետութեան բոլոր միջոցները լծուած են օրուան իմաստը ուրանալու: Դիւանագիտական շրջանակներու մէջ պաշտօնական թեզը իւրացուցածներ կը պնդեն թէ կ'ընդունին մեծ ողբերգութեան մը իրականութիւնը ու միայն "ցեղասպանութիւն" որակումը կը մերժեն, սակայն ճիշդ չէ ատիկա. անոնք կ'ուրանան նաեւ ապրուած մեծ ցաւը, պատճառաբանութիւններ կը ճարեն, կատարուածը արդարացնելու միտումով:

Ուրացումը, կ'ըսեն յայտարարութեան հեղինակները, մաս կը կազմէ ցեղասպանութեան. միայն Հայ ըլլալուն պատճառով ցեղային մաքրագործումի ենթարկուած ժողովուրդին ազատօրէն սգալու արարքը կ'արգիլէ, կ'անարգէ մեռեալները: Եւ թերեւս ամէնէն կարեւորը այն է որ "Այլեւս երբե՛ք" ըսելու յանձնառու չըլլար:

Յայտարարութիւնը մէկէ աւելի նըշումներով ներկայի Թուրքիան Իթթիհատեան տեսակէտները շարունակող պետութիւն կը նկատէ: Փոխուած բան չըկայ. այն ատեն ալ հարցերու լուծումը բնաջնջումով, ուրացումով կը բերուէր, այսօր ալ: Հարցումներուն պատասխանը այն օրերուն ալ զէնքին ծայրն էր, այսօր ալ: 1915էն ետքն ալ Հայերու հայրենիքին մէջ արիւն հոսեցաւ, ապացոյց՝ Քրտական հալածանքը:

Առանց Իթթիհատէն ի վեր տեւող պետական հասկացողութեան շարունակական բնոյթին վերջակէտ դնելու, Թուրքիա պիտի չկարենայ քայլ մը իսկ առնել ժողովրդավարութեան ճամբուն վրայ: Առանց ստեղծումին միջավայրի մը ուր կարելի ըլլայ Ցեղասպանութեան զոհերուն առջեւ յարգանքով խոնարհիլ, անոնց զաւակներուն, թոռներուն վշտակցիլ, ուր յանցանքը ընդունելի դառնայ, մարդկային իրաւունքներու բռնաբարումը վերջ պիտի չգտնէ:

Յայտարարութիւնը կ'աւարտի հետեւեալ տողերով.

" Մենք մարդկային իրաւունքներու պաշտպաններս, Ցեղասպանութեան 91-ամեակին Թուրքիոյ եւ ամբողջ աշխարհի Հայերուն կ'ուղղենք մեր խօսքը, ըսելու համար թէ վշտակից ենք ձեզի, յարգանքով կը խոնարհինք ձեր կորուստներուն յիշատակին առջեւ, որովհետեւ անոնք նոյն ատեն մե՛ր կորուստներն են: Հոս, մարդկային իրաւունքներու ի նպաստ մեր տարած պայքարը, նոյն ատեն մեր հաւաքական կորուստներուն սուգը, անոնց յիշատակին առջեւ մեր յարգանքին ապացոյցն է":

***

ԱՐՑԱԽ

Ստեփանակերտի մէջ եւս նշումները սկսած են Ապրիլ 23ի երեկոյէն երբ երիտասարդական յուշերթը Վերածնունդը հրապարակէն սկիզբ առած է, հասնելու համար Յուշահամալիր: Մասնակիցները 91 մոմով, ջահերով, կարգախօսներով անցած են ճամբան, յետոյ Յուշահամալիրին մէջ ներկայ եղած Ջիւան Աւետիսեանի "Սեփական պատմութեան արահետներով" ֆիլմին ցուցադրութեան:

Յաջորդ օրը առաւօտ կանուխ սկսած է բազմութեան երթը դէպի նոյն Յուշահամալիրը ուր գացած են նախագահ Ա. Ղուկասեան, Ազգ. Ժողովի նախագահ Ա. Ղուլեան, վարչապետ Ա. Դանիէլեան, Ազգ. Ժողովի երեսփոխաններ, նախարարներ, բարձրաստիճան զինուորականներ: Եղեռնի զոհերու յիշատակը յաւերժացնող կոթողին ծաղկեպսակներ զետեղուած են ԼՂՀ իշխանութիւններու, Արցախի թեմին, դերատեսչութիւններու, հանրային կազմակերպութիւններու կողմէ: Կատարուած է հոգեհանգիստ ու ոգեկոչումի արարողութիւն:

Օրուան առթիւ ԼՂՀ նախագահը պատասխանած է հարցումներու եւ համոզում յայտնած որ օր մը անպայման Ցեղասպանութեան, ահաւոր ոճիրը կը պատժուի: "Ես յուսով եմ որ Հայոց Մեծ Եղեռնի միջազգայնօրէն ճանաչումը, այդ թւում նաեւ Թուրքիայի կողմից, կը դառնայ նմանօրինակ ազգային ողբերգութիւննե-րի աւարտի գլխաւոր ազդակը" ըսած է Ա. Ղուկասեան:

ՄՈՍԿՈՒԱ

Ապրիլ 24ի առաւօտը Ս. Յարութիւն տաճարին շրջափակի խաչքարին ծաղկեպսակներ զետեղուած են Հայաստանի դեսպանատան, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմերուն, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն կողմէ: Յետոյ պատարագ մատուցուած է: Կէսօրէն ետք ցուցարար բազմութիւնը դրօշներով, պաստառներով դիմած է Թրքական դեսպանատուն: Անոնք դատապարտած են Անգարայի ուրացումը, շեշտելով թէ Թուրք պետութիւնը կը խուսափի իր արատաւոր անցեալին հետ ճակատելէ, բայց ատիկա չի կրնար քօղարկել իրականութիւնները: Մոսկուաբնակ Քիւրտերու խումբ մըն ալ քրտական դըրօշներով մասնակցած է ցոյցին:

Գիշերը տեղի ունեցած է պելժահայ "Ապաքս" խումբին համերգը:

***

ՇՈՒԷՏ

Հայ համայնքները զանազան քաղաքներու մէջ նշած են 91ամեակը: Ուփսալայի մէջ հանրահաւաք կազմակերպուած է հայկական բազմաթիւ միութիւններու կողմէ. ներկայ գտնուած են շուէտացի անձնաւորութիւններ ալ: Ելոյթ մը ունեցած է քրիստոնեայ դեմոկրատ երեսփոխան Մ. Օսքարսըն, ըսելու համար թէ իր պաշտօնակիցներուն հետ Խորհրդարանին մէջ պիտի բարձրացնեն Հայկական Ցեղասպանութեան հարցը, դիմեն Արտաքին գործերու նախարարին եւ բացատրութիւն պահանջեն թէ Շուէտի կառավարութիւնը ի՛նչ կ'ընէ Թուրքիոյ ուրացումին առընչութեամբ: Երեսփոխանը ըսած է տակաւին թէ անցեալ տարի պաշտօնական այցով մը Թուրքիա գտնուած է, հանդիպում ունեցած Թուրք երեսփոխաններու հետ, բացած Ցեղասպանութեան նիւթը: Շփոթած է անոնց մօտ նշմարելով լռութեան պատը, ապա տրուած պատասխանը թէ զոհը Թուրքերն են...:

Հետաքրքրական ելոյթ մը ունեցած է պատմաբանութեան դասախօս Քարլսոն. ան հեղինակն է "Արարատէն Լեռնային Ղարաբաղ" եւ "Ցեղասպանութիւններու պատմութիւնը" ուսումնասիրութիւններուն:

Ձախակողմեան երեսփոխանուհի Ուլլա Հոֆման դատապարտած է Թուրքիոյ ժխտող կեցուածքը, իսկ բնապահներու

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼՂՀ

ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՆԻՍՏ

Ապրիլ 21ին ԼՂՀ Ազգ. Ժողովի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը "Ղարաբաղեան հիմնախնդիր. կարգաւորման հեռանկարներ" թեմայով խորհրդարանական ունկնդրութիւն մը կազմակերպած է: Ներկայ գտնուած են Հայաստանի Ազգ. Ժողովի երեսփոխանական խումբը, ԼՂՀ իշխանութիւններու ներկայացուցիչներ, հանրային - քաղաքական կազմակերպութիւններու ղեկավարներ, փորձագէտներ, հիւրեր: Նիստը վարած է ԼՂՀ Ազգ. Ժողովի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահը Վահրամ Աթանէսեան: Ընդարձակ ելոյթով մը հանդէս եկած է ԼՂՀ Արտաքին գործերու նախարար Գ. Պետրոսեան: Հայաստանի Ազգային Ժողովի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Ա. Ռուստամեան շեշտած է մարտավարութիւնը դիւանագիտական դաշտ փոխադրելու անհրաժեշտութիւնը եւ երկու նախապայման կարեւոր նկատած. առաջինը Բաքուի հետ խաղաղ բանակցութիւնները շարունակելն է, երկրորդը Ղարաբաղի կարգավիճակի յստակացման խնդիրը: Իրմէ ետք բազմաթիւ ելոյթներ եղած են, գլխաւորաբար ծանրանալով բանակցութեան հոլովոյթին մէջ ԼՂՀ-ն լիիրաւ կողմ ճանչնալու, միջազգային հանրութեան կողմէ Ազրբէջանի որպէս յարձակող դատապարտումին եւ Ղարաբաղի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքին վրայ:

***

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՀԱՅՈՒ ՆՈՐ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Ապրիլ 22ին, օր ցերեկով Մոսկուայի մեթրոյին մէջ 17 տարեկան հայ պատանի մը դաշունահարուած է, հերթական օղակը կազմելով ռուսական մայրաքաղաքին մէջ օրէ օր շեշտուող օտարատեացութեան: Զոհը կը կոչուի Վահան (կամ Վիգէն) Աբրահամեանց. ուսանող էր համալսարանի: Անոր յուղարկաւորութիւնը կատարուած է քաղաքին հայկական գերեզմանատան մէջ, Ապրիլ 25ին: Նոյն գիշերը շուրջ հարիւր Հայեր Մոսկուայի մէջ խաչմերուկ մը փակած են, որպէս բողոքի ցոյց յատկապէս սպանութեան հետաքննութեան արդիւնքին դէմ. անով ըսուած է թէ հայ երիտասարդը աղջիկ մը հետապնդած է մեթրոյին մէջ, սպանութեան պատճառ դառնալով...: Արդէն վերջին տարիներուն հազարաւոր թիւերու հասնող Հայերու այս սպանութիւնները ռուսական պատկան իշխանութիւնները միշտ "խուլիգանական արարք" կը նկատեն, մերժելով ցեղապաշտութեան վարկածը:

Այս անգամ այնպէս կը թուի որ ռուսական լրասփիւռներն ալ սկսած են հակազդել. թերթ մը գրած է. "Ֆիւրհէրի հետեւորդները ռուսական քաղաքները կը գրաւեն աւելի արագ, քան Ֆաշիստ զօրքերը 1941ի աշնան":

Երկրորդ նորութիւնը այն է որ վերջապէ՛ս Ռուսաստանի Հայերու միութեան նախագահ Ս. Աբրահամեան յայտարարութիւն մը կատարած է հայ պատանիին սպանութեան առընչութեամբ: Անով "խոր վրդովում" յայտնուած է "ֆաշիստական յարձակումից դրսեւորումներուն որոնք հետեւանք են իշխանութեան եւ ուժային կառոյցներու թոյլտուութեան": Նաեւ միութիւնը փաստաբան վարձած է, հոգացած յուղարկաւորութեան ծախքը: Պահանջուած է որ մարդասպանը գտնըւի եւ ամենախիստ կերպով պատժուի:

Ոստիկանութիւնը ռուս պատանի մը ձերբակալած է որպէս կասկածելի. այս վերջինը Ապրիլ 24ին խոստովանած է ըսպանութիւնը:

Ֆրանսական մամուլը եւս, յատկապէս "Մոնտ" լայնօրէն անդրադարձած էր դէպքին:

ներկայացուցիչը Հելէնա Լինտըր ըսած է թէ Շուէտացիները պէտք է նոյնքան լաւ գիտնան Հայկական Ցեղասպանութիւնը, որքան Հրեաներու Ողջակէզը:

Երեկոյթը շարունակուած է գեղարուեստական բաժինով մը:

***

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Կալկաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցիին բակի Ցեղասպանութեան յուշաքարին (1965) մօտ Հնդկահայոց հոգեւոր հովիւ եւ Մարդասիրական ճեմարանի վարիչ Օշական Վրդ. Գիւլգիւլեան հոգեհանգստեան պաշտօն կատարած է, յետոյ ներկաներուն թելադրած զօրացընել հայրենիքն ու եկեղեցին: Արարողութենէն ետք ծաղիկներ դրուած են Ս. Աշխարհամարտին ինկածներու յուշարձանին: Երեկոյեան ճեմարանի պարտէզը եղեւին մը տնկուած է հայ նահատակներու յիշատակին: Հայաստանի դեսպանը կարդացած է նախագահ Ռ. Քոչարեանի ուղերձը ու համառօտ կերպով անդրադարձած միջազգային ճանաչումի ընթացքին: Ներկաները դիտած են օրուան նուիրուած վաւերագրական տեսերիզ մը: Մասնակցած են Կիպրոսի, Սլովաքիոյ պատուակալ հիւպատոսները, Հնդկահայեր, ճեմարանի սաները:

ԱՒԵԼՈՐԴ ԼՈՒՐ

Ինչպէս ամէն տարի, այս անգամ եւս Ապրիլ 24ի նախորդող օրերուն առաւել կամ նուազ հետաքրքրութեամբ ակնարկները կը դառնան Ուաշինկթընի: Յատուկ կարեւորութեամբ կը սպասուի ԱՄՆ-ու նախագահին այդ օրուան ուղերձին մէջ 1915ին կատարուածին տալիք որակումին: Այս տարի այդ սպասումի շրջանին գլխաւոր տուեալը Գոնկրէսի անդամներուն կողմէ Ճ. Պուշի յղուած դիմումնագիրն էր որով կը պահանջուէր "ցեղասպանութիւն" եզրին գործածութիւնը: Յատուկ կարեւորութեամբ ալ կը շեշտըւէր թէ նախկին նախագահ Պ. Գլինթընի ծերակուտական կինն ալ ստորագրած էր դիմումնագիրը:

Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ ամերիկահայ կազմակերպութիւն մը հետաքրքրութիւնը ունեցա՞ծ է հարց տալու տիկին Հիլարիին թէ ամուսնին նախագահութեան աւարտէն ասդի՞ն տեղեկացած է 1915ի իրականութեան...

Հասկնալի է որ ԱՄՆ-ու նախագահին կողմէ բառին ընտրութիւնը կամ շրջանցումը քաղաքական իմաստ ներկայացնող քայլ է. անով կը շարունակուի ամուր պահուիլ Թուրքիոյ ժխտումի, ուրացու-

(Շար.ը Դ. էջ)

ՆԱԽԱՐԱՐԻՆ «ԽՈՒԼԻԿԱՆՈՒԹԵԱՆ» ԴԱՏԸ «ԿԱՐՃՈՒԵԼ Է»

Տարօրինակ է, որոշ չափով մըն ալ զուարճալի որ անկախութեան մէկուկէս տասնամեակին Հայաստան շատ բախտաւոր չեղաւ մշակոյթի նախարարներու տեսակէտէ. անիկա խորքին մէջ տխուր պէտք էր նկատել երկրի մը, ժողովուրդի մը համար որ օրը հարիւր անգամ կը կրկնէ դարաւոր, հազարամեայ մշակոյթի իր տիրութիւնը, ամէն անգամուն տասը հազար չափի գոհունակութիւն, հպարտութիւն զգալով: Այդ մարզը գլխաւորելու կոչուածները կամ փայլեցան իրենց անտարբերութեամբ, կրաւորական ընթացքով, կամ երգիծական անէքթոտներու հերոս դարձան ինչպէս Վարդանիկը կամ Մարկօն, կամ մարդ ծեծողի ամօթալի համբաւով լքեցին իրենց յանձնըւած պաշտօնը:

Այս վերջինը պարագան եղաւ նախորդ նախարարին Հ. Հովէեանի: Ան բանաստեղծի, այդ բնագաւառին մէջ հատորներու հեղինակի համբաւը մէկդի դրած, նոր տարուան առաջին օրերէն օր մը գացեր էր իր տան խզուած ելեկտրականութեան համար բացատրութիւն պահանջելու պատկան մարմինէն եւ տեղւոյն վրայ ապտակած, ատրճանակին կոթով հարուածած աշխատակիցները: Պատահարը տեղ գտաւ մամուլին մէջ քիչ մը լռջութեամբ, շատ մը հեգնանքով, իսկ դատական իշխանութիւնները հետաքննութիւն բացին կատարուածին մասին: Մանաւանդ որ խոշտանգուածներէն մէկը հիւանդանոց փոխադրուած էր:

Անկէ ի վեր դէպքերու յաջորդական հոսքը մոռցուցած էր նախարարին սխրագործութիւնը. մանաւանդ որ ան պատահարէն քիչ ետք հրաժարած էր, ինչպէս ըսուեցաւ, անսալով նախագահ Ռ. Քոչարեանի հրահանգին: Ու Հայաստան որ ընդհանրապէս նախարարականի նման աթոռի համար թեկնածուի նեղութիւն ունեցող երկիր չէ, օրերով չկրցաւ յաջորդ մը ճարել հրաժարեալ նախարարին: Ըստ հայաստանեան մամուլին, կառավարական այդ մակարդակի պաշտոնները ի յառաջագունէ բաշխուած էին կուսակցութիւններուն եւ մշակոյթի մարզը պէտք է գլխաւորէր "Օրինաց երկիր"էն մէկը. այս կէտն էր որ դժուարութիւն կը ստեղծէր:

Ինչ կը վերաբերի պաշտօնեայ ծեծող մշակոյթի նախարարին, Մարտի կէսերուն ան դարձեալ յայտնուեցաւ տեղական մամուլի էջերուն մէջ, քանի որ իր "գործը կարճուել է"ր... Այս բացատրութիւնը որ ո՛վ գիտէ ռուսերէն ո՛ր որակումին թարգմանութիւնն է, պէտք է նըշանակէ թէ դատարանը դատավարութեան արժանի տուեալ գտած չէ ներկայացուած գիտումին մէջ ու թղթածրարը փակուած, անկիւն մը դրուած է, անգամ մըն ալ չբացուելու համար:

"Կարճուած" դատի մը ուշագրաւ առաջին պարագաներէն եղած էր նախորդ վարչակարգի օրով բացայայտուած "Դրօ" կառոյցի անդամներէն Վահան Յովհաննիսեանի վերաբերողը: Հակառ Լ. Տէր Պետրոսեանի հրաժարականին յաջորդած էր Ռ. Քոչարեանի փոխանորդութիւնը երբ ծանրածանր մեղադրանքներով յանցաւոր նկատուած կառոյցէն յիշեալ անձը ազատ արձակուած էր, գործն ալ "կարճըւած", մինչ իր "մեղսակից"ները կը շարունակէին կրել իրենց պատիժները ու ոմանք կը կրեն մինչեւ այսօր ալ: Միջոց մը ետք երբ Փարիզ կը գտնուէր Վ. Յովհաննիսեան, մամուլի աշխատակից մը իրեն հարցում ուղղուեցաւ իր ազատ արձակումին մասին. աշխարհի ամէնէն սովորական ճշմարտութիւնը յայտնելու պէս ըսաւ թէ իր "գործը կարճուած է" պարզապէս, քիչ մըն ալ զարմանալով լրագրողներուս զարմանքին:

Հիմա նոյն պիտակով կը ներկայանայ նախարարին "գործը": Մարդ կը տարուի մտածելու թէ "կարճուած" գործերը Հայաստանի մէջ կը պատկանին որոշ "ընտանի"ի մը որով կը սահմանուի հասարակ մահկանացուներու ոչ մատչելի չափանիշերով դասակարգ մը: Այլապէս, ինչու չենք հանդիպած պարագաներու ուր "կարճուած" հռչակուին կօշկակարի մը, նպարավաճառի մը, դռնապանի մը "գործ"երը:

Հ. Հովէեանի այս թղթածրարին սեւեռուած էր "Հայկական ժամանակ"ը Մարտ 14 եւ 16ի իր թիւերով: Առաջինին մէջ կը տրուէր կարճումին լուրը ու կարճ գրոյց մը դատին վայրին՝ Նորք-Մարաշ համայնքներու դատախազի տեղակալ Աղւան Գէորգեանի հետ: Վահագն Յովակիմեան մօտ երկու սիւնակի մէջ կ'ամփոփէր պատահարը, չմոռնալով գրելու թէ նախարարին ընթացքին առընչութեամբ քըրէական գործ յարուցուած էր "խուլիկանութեան" յատկանիշերով: Յետոյ կ'ըսէր թէ դատախազութիւնը որ պէտք է որոշէր թղթածրարին յետագայ ընթացքը, գործը "կարճել էր": Ա. Գէորգեանի բացատրութիւնը այն եղած է որ այդ եղրակացութիւնը արդիւնք եղած էր "իրադրութեան փոփոխութեան": Այսինքն, Հ. Հովէեան այլեւս նախարար չէր, այլ բանաստեղծ, մշակոյթի գործիչ, «ուստի այլեւս անիմաստ է նրան պատասխանատուութեան ենթարկելը»:

Զրոյցին ամէնէն հիմնական հարցումը հետեւեալն է. "Աշխատանքից ազատուելն (նախարարին) ի՞նչ կապ ունի կատարուած փաստի հետ": Պատասխա՞նը. "Եկէք ինձ մի հարցաքննէք, ես ձեզ ասում եմ՝ գործը կարճուել է: Մնացածը ես պարտաւոր չեմ ձեզ զեկուցել, թէ ինչու է կարճուել, ոնց է կարճուել: Դա մեր իրաւունքն է մարդուն ներել: Օրէնքը թոյլ է տալիս դատախազին կարճել, դատախազը կարճել է: Մնացածն արդէն պարտաւոր չենք որեւէ մէկի հաշուետուութիւն տալ, թէ ինչու ենք կարճել"...

Երկու օր ետքի թիւին մէջ լոյս տեսած է զրոյց մը, այս անգամ "կարճուած" գործին տիրոջ հետ. նախկին նախարարը որ վերոնշեալ պատասխանը տալու կարող զօրակից ունի, բնական է որ ի՛նք յայտնուի ամբաստանողի դիրքէն: Ան համոզուած է որ "դատաքննչական մարմիններում աշխատում են հրաշալի, ազնուագոյն մարդիկ" եւ որ լրասփիւռներու աշխատակիցներէն ոմանք «արհեստածին "սկանդալների" թունդ սիրահարներ են»: Իր արարքին կու տայ "կենցաղային անհեթեթ միջադէպ" սահմանումը, աւելցնելով. "Կովկասցի իւրաքանչիւր տըղամարդ, իթեն յարգող իւրաքանչիւր անձ նոյն կերպ կը վարուէր": Հակառակ յամառ հարցատիրոջ ուղղած յաջորդական "ի՞նչ"երուն, "ի՞նչպէս"ներուն, ոչ մէկ բացատրութիւն պատահարին մասին: Նոյնիսկ ատրճանակին միջամտութեան մասին ուղղակի հարցումը զուրկ կը մընայ գոհացնող պատասխանէ: "Արդեօք ատրճանակը, որով իրականացրել էք յայտնի յարձակումը, յանձնե՞լ էք, թէ շարունակում էք զինուած մնալ" հարցումին պատասխանը կ'ըլլայ ինքնագոհացումի համեստագոյն կենսագրական-յայտարարութիւն մը: Նախկին նախարարը կ'ըսէ թէ "զինուած է" "բանասիրականի ժուռնալիստիկայի բաժրի կարեկիրթ շըրջանաւարտի, պետական, ազգային, ապա եւ հանրային ռատիոյի եւ հեռուստատեսութեան փրոֆէսիոնալ փորձ ունեցող աշխատակցի, Հայաստանի գրողների միութեան քարտուղարի, փաստագրական շուրջ քսան ֆիլմերի սցենարների և տեքստերի հեղինակի հնարաւոր գիտելիքներով եւ փորձառութեամբ": Մարդ կարդալէ ետք քիչ մը տրամաբանականի նմանող այս տողերը, դրեթէ կ'ամչնայ որ նման անձնաւորութեան մասին մարդ ծեծելու լուրեր հրապարակուած են: Ու գրեթէ մխիթարական ելք մը կ'ընծայէ տեղեկութիւնը որ "գործը կարճուել է":

Արդեօք այս բաներուն մասին ի՞նչ կը մտածեն ելեկտրական ցանցերու Միասնիկեան մասնաճիւղի տեսուչ Արմէն Կարապետեանը որ նախարարական ապտակներու արժանացած է, կամ այն աշխատակիցները որոնք թիրախ եղած են ատրճանակի կոթով տրուած նոյնպէս նախարարական հարուածներուն:

Անոնց ցասումն ու վարկաբեկումն ալ կարճելու միջոցը կը տրամադրէ՞ արդեօք Հայաստանի օրէնսդրութիւնը:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Ի՞ՆՉ ԵՆ ՅՈՒՇՈՒՄ ՀԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԵՐԸ

ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅՈՑ ՇՈՒՇԻԻ ԱՆԽՕՍ ՎԿԱՆԵՐ

ԴԱՒԻԹ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Բերդաձորցի Հրաչիկ Յարութիւնեանը մէկն է աւանդապահ այն մտաւորականներից, որը վերադառնալով իր արմատներին, Շուշիի ազատագրուելուց առաջիններից թւում իր ընտանիքով վերահաստատուեց բերդաքաղաքում: Ականատեսը լինելով Հայերի նկատմամբ վարուող խտրական հայատեաց քաղաքականութեան (70ական թուականների սկզբներին նա Շուշիի կոմերիտշրջկոմի երկրորդ քարտուղարն է) եւ չհամակերպելով տեղական իշխանութիւնների պահուածքին ու քօղարկուած "բարեկամութեանը", նա ստիպուած էր հրաժարուել պաշտօնից եւ տեղափոխուել Ստեփանակերտ, ուր երկար տարիներ աշխատել է ՆԳ համակարգում: Լինելով բանասէր – պատմաբան, Թօշակի անցնելուց, հաւատարիմ իր նախասիրութիւններին ու հետաքրքրութիւններին, որոշեց պարապ չնստել եւ ինչ-որ օգտակար գործ ձեռնարկել՝ փորձելով, իր իսկ խօսքերով, նպաստել Հայոց Շուշիի մշակութային եւ հոգեւոր արժէքների վերականգնմանը:

– «Օրերից մի օր ձեռքս էր ընկել պատմաբան Ս. Բարխուդարեանի "Դիւան հայ վիմագրութեան" գիրքը (այն լոյս է տեսել 1982 թ.), ուր հեղինակն անդրադառնալով Շուշիի պատմութեանը՝ մասնաւորապէս նշում է. "Շուշին Արցախի ամենափոքր շրջանն է ու զբաղեցնում է Կարկառ գետի վերին հանքը: Յաւալի է, որ շրջանում հին յուշարձանները վատ են պահպանուել եւ յատկապէս Շուշիից արձանագրութիւններ շատ քիչ ունենք": Այդ իրողութիւնն ինձ շատ մտահոգեց, խոստովանում է Հ. Յարութիւնեանը: – Ու ես որոշեցի՝ իմ ուժերի ներածին չափով զբաղուել բերդաքաղաքի պատմութեամբ: Սկսեցի գրի առնել քաղաքի հին հայկական գերեզմանատների ու պատմաճարտարապետական յուշարձանների վիմագիր արձանագրութիւնները, որոնք հաւաստի տեղեկութիւններ են հաղորդում Շուշիի մասին:

Ու թղթապանակը թեւի տակ, լուսանկարչական ապարատը՝ ձեռքին, նրան յաճախ կարելի էր տեսնել Շուշիի հայկական հին գերեզմանոցներում՝ ուսումնասիրութիւններ, դրառումներ կատարելիս: Նրան հետաքրքրում են ինչպէս անւանի մարդկանց, զօրապետների, արուեստագէտների եւ գրողների, ազգի նուիրեալների ճակատագրերը, նրանց տոհմածառերը, այնպէս էլ հայկական օջախների հարուստ աւանդոյթները: Իր տքնանքի ու աշխատասիրութեան, երկարատեւ պրպտումների արդիւնքում հեղինակը յետագայում տպագրութեան պատրաստեց "Շուշի. Նորայայտ նիւթեր քաղաքի պատմութեան մասին" աշխատութիւնը, ուր առաջին անգամ տեղ են գըտնում մի շարք արժէքաւոր արձանագրութիւններ: Գրքում ներկայացուող վիմագիր, համառօտ կենսագրականները՝ հընագէտների ու պատմաբանների համոզմամբ, եզակի տեղեկութիւններ են հաղորդում հինաւուրց ծաղկուն բերդաքաղաքի 18–19րդ դարերի գաւառային իշխանութիւնների, մարդկանց նիստուկացի, արհեստագործութեան եւ առեւտրի, դատաիրաւական համակարգի, հարուստ մշակոյթի, ինչպէս նաեւ արտաքին ու ներքին թշնամիների դէմ՝ հայ բնակչութեան մղած հերոսական պաշտպանական մարտերի, արտաքին աշխարհի հետ ունեցած կապերի մասին:

Ըստ Հ. Յարութիւնեանի, ուսումնասիրութիւնների ժամանակ երեւան են հանուել մի շարք վիմագիր արձանագրութիւններ, որոնք կարող են կարեւոր սկզբնաղբիւր հանդիսանալ քաղաքի ոչ վաղ անցեալի բուռն իրադարձութիւնների վերաբերեալ: Նպատակ ունենալով մոռացութիւնից եւ անգիտութիւնից փրկել այդ նշխարները, նա համոզուած է, որ իրական այդ բացառիկ փաստարկներով դիւրին կը լինի սանձահարել ադրբեջանցի վայգիտականներին:

Յատկանշական է, որ քաղաքն ունեցել է 6 հայկական գերեզմանատներ, որոնցից պահպանուել են հիւսիսային մասի, Երեւանեան դռների հարաւ-արեւմտեան մասի ու քաղաքի հարաւային մասում (Ժամհարեանների յայտնի տնից վերեւ) գտնըւող գերեզմանատները: Ըստ որում, վերջինից բացի միւսները մխտումնաւոր պատուել են ակացիաներով, փշոտ թըփերով եւ մացառներով՝ վերածուելով շամբուտների, որպէսզի անծանօթ մարդը պատկերացում չունենայ այդ մասին եւ հայկական գերեզմանատները յաւերժ զոցուած մնան գալիք սերունդների, հընագէտների ու պատմաբանների համար: Իսկ պատմական վկայագրութիւններից դժուար չէ ենթադրել, թէ ինչպիսի դառն ճակատագիր է ունեցել քաղաքի իսկական տէրը՝ Շուշիում ապրող Հայը, որը շարունակ փորձութիւնների էր ենթարկւում՝ դարաւոր թշնամու կողմից յայտնուելով բնաջնջման յորձանուտում:

– Գիտական շատ աղբիւրների թւում իմ ուշադրութիւնը գրաւել էր պարսիկ պատմաբան Համիդ Ալգարի "Միրզա Մելքում խան" 308 էջանոց գիրքը, որը հրատարակուել է 1973 թուականին: Ինձ համար առեղծուած էր մնում մի շիրմաքարի արձանագրութիւն, որը տեղեկութիւններ է հաղորդում Մելքում խանի գերդաստանի, նրա հարուստ տոհմածառի մասին, – պատմում է Հրաչիկը:– Այն գտնուում է քաղաքի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հարաւ-արեւելեան կողմի գերեզմանատանը, որի վիմագիր արձանագրութեան համաձայն, գերդաստանի նահապետը բնակուել է Շուշիում 17րդ դարի վերջերին: Ըստ Հ. Ալգարի, Միրզա Մելքում խանը, որ կըրում է դերդաստանի նահապետի անունը եւ տոհմածառի 7րդ սերունդն է ներկայացնում, "սերուած է Ղարաբաղից եւ բնիկ հայկական ընտանիք է, իսկ արմատները՝ Շուշի քաղաքից են": Այս մասին են վկայում նաեւ շիրմաքարերին յաւերժած բազմաթիւ այն արձանագրութիւնները, որոնց "հաւաստմամբ" Հայերը Շուշիում ապրում են դեռ 1600ական թուականներից ի տարբերութիւն այն մտացածին վարկածի, թէ իբր Շուշին հիմնադրել է թուրքական քոչուորական ցեղի առաջնորդ Փանահ խանը...

Գաղտնիք չէ, որ 19րդ դարավերջին եւ 20րդ դարասկզբին հայ թուրքական ընդհարումների, աւելի կոնկրետ՝ հայ բնակչութեան ջարդերի հետեւանքով, Շուշիում տարեցտարի նուազում էր նրանց թիւը, շատերն իրենց ընտանիքների անվտանգութիւնն ապահովելու նպատակով ստիպուած էին լքել ծննդավայրը եւ տեղափոխուել այլ բնակավայրեր: Քիչ չեն եղել դէպքերը, երբ հայկական կամաւորական ջոկատները սեփական օջախների պատիւը փրկելու համար զէնք են վերցրել ու դիմակայել թշնամուն: Ոմանք էլ, խաղաղ աշխատանքի ժամանակ, ընկել են թուրքի նենգ գնդակից: Այդ մասին են խօսում շիրմաքարերին փորագրըւած բազում արձանագրութիւնները, որոնք թէկուզ եւ մի քանի խօսքով, սերունդներին տեղեկացնում են Հայերի յայտնի ողբերգութիւնների մասին: Ինչպէս Հ. Յարութիւնեանն է հաւաստում, հարիւրների է հասնում նման շիրմաքարերի թիւը:

> « Անգութ հրացանը թուրք աւազակին,
> Ինձնից յափշտակեց խլեց իմ հոգին,
> Թողեց քարհատում իմ անշունչ
> մարմին,
>
> Քառասուն և հինգ տարոյս հասակին:
> 1876 ամի, 15 մայիսի »,–

այս է արձանագրուած Գեւորք (յարի) քարհատում աշխատելիս թուրքի գնդակից սպանուած քարհան Իվան Ղուկասի Տէր-Մկրտչեանցի շիրմաքարին:

Նման արձանագրութիւնները յատկապէս "խօսուն" են 1905–1906թթ. հայթուրքական ընդհարումները, 1920թ. հայ բնակչութեան ջարդերը վկայագրող տեքստերով: Ըստ Հրաչիկ Յարութիւնեանի, յուատուել արիւնահեղ է եղել 1906թ. յուլիս-օգոստոսը, երբ "Հայերի արեամբ

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՊԷՅՐՈՒԹԻ Հայկազեան համալսարանի հայագիտական ամպիոնի կազմակերպութեամբ եւ գործակցութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Հայ Դատի մարմնին, Մարտ 28-ին, դասախօսութիւն – զրոյց մը տեղի ունեցած է, համալսարանի սրահին մէջ․ Դասախօսն էր Հայկազ Ալվրցեան, որու նիւթը եղած է․– «Համշէնահայ Թղթածրարը»: Ձեռնարկին բացումը կատարած է Արշալոյս Թօփալեան, որ հակիրճ կերպով ներկայացուցած է դասախօսը, որու խօսք առնելէն առաջ ցոյց տրուած է տեսերիզ մը Համշէնի եւ Համշէնահայութեան մասին: Հ. Ալվրցեան ամփոփ կէտերով խօսած է համշէնահայութեան պատմութեան մասին, շեշտելով թէ "Համշէնը, իբրեւ հայարնակ տարածք, միշտ յայտնի եղած է իբրեւ Պոնտոսի հայութեան ու Պոնտոս, ուր Ն.Ք. նաեւ Հայեր բնակութիւն հաստատած էին": Ըսուած է նաեւ թէ պատմութեան ընթացքին, բաւական ծանր ճակատագիր վիճակուած է Համշէնահայութեան, աւելցնելով թէ երբ շրջանը Թրքական տիրապետութեան տակ ինկած է, դիմագրաւած է այլ մարտահրաւէր մը, որ Թրքական բռնի խլամացման քաղաքականութեան դէմ յանդիման կենալն էր: Անդրադառնալով այսօրուան վիճակին, Հայկազ Ալվրցեան շեշտած է որ տակաւին այսօր Թուրքիոյ մէջ գոյութիւն ունին Համշէնահայեր որոնք հայախօս են եւ կը պահեն իրենց հայկական դիմագիծը:

***

ԱՅՆՃԱՐԻ Գ. Կիւլպէնկեան սրահին մէջ, Մարտ 25ին ելոյթ ունեցած է հայաստանցի մատուցիչ Հայկազ Ալվրցեան նիւթ ունենալով․– "Ջաւախքահայութեան իրավիճակը այսօր", կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Հայ Դատի մարմնին: Շեշտը դրած է Վրաստանի վարած հայաթափման քաղաքականութեան վրայ ընկերային, տնտեսական եւ քաղաքական մարզերու մէջ: Դասախօսութեան աւարտին տեղի ունեցած է հարց–պատասխանի բաժին մը: Յաջորդ օրն ալ, նոյն դասախօսութիւնը տրուած է Անթիլիասի "Ալբալեան – Հ.Մ.Ը.Մ." մարզամշակութային համալիրի "Հրայր Մարուխեան" սրահին մէջ:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Ազատամարտ ակումբի Զուխատարեան սրահին մէջ, Մարտ 25ին, չորրորդ տարին ըլլալով, երաժշտական աշակերտական երեկոյթ մը տեղի ունեցած է: Կազմակերպողը եղած է Համազգայինի Ռուբէն Զարդարեան մասնաճիւղը, որու գլխաւոր նպատակներէն մէկը եղած է արուեստը քաջալերել: Բացման խօսքը արտասանած է մասնաճիւղի վարչութեան անդամ՝ Յարութ Վարժապետեան: Ձեռնարկին մասնակցած են զանազան երաժշտանոցներէն եկած աշակերտներ:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Հայ Կաթողիկէ միութեան "Յովհաննէս Պօղոսեան" Թատերասրահին մէջ, Մարտ 25ին, կազմակերպութեամբ Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններու տնօրէններու խորհուրդին, նախագահութեամբ հայ կաթողիկէ վարժարաններու տնօրէններու խորհուրդի նախագահ՝ Վարդան Եպսկ. Աշգարեանի եւ հովանաւորութեամբ կաթողիկոս – պատրիարքին, տեղի ունեցած է միացեալ տօնակատարութիւն մը նուիրուած Հայ Գրերու Գիւտի 1600ամեակին: Փառաբանութեան ուղերձներէն ետք, բացման խօսքը արտասանած է Զուարթ Նաճարեան, որ շեշտած է Գրերու Գիւտի կարեւորութիւնը եւ անոր անժամանցելի արժէքը Հայութեան համար: Հայր Վարդան Վ. Գազանճեան խօսք առած է նիւթ ունենալով՝ "Մեսրոպ Մաշտոց հոգեւորականը": Գեղարուեստական բաժինէ մը ետք, արտայայտուած է Րաֆֆի Աշգարեան, որ Գրերու Գիւտը նկատած է հայ ժողովուրդի գոյատեւման կռուանը: Ձեռնարկին աւարտին Հայր Յովսէփ Վրդ. Թօփալեան իր սրտի խօսքին մէջ յայտնած է թէ "ըմարդ" եւ "տհայ" կ'անուանէ, անոնք որոնք կը մարեն Հայոց Լեզուի մոմերէն մէկը:

***

ՓԻՔՍԻ (Յունաստան) ակումբին մէջ, Ապրիլ 10ին, Հայ Դատի յանձնախումբը զրոյց մը կազմակերպած է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան հիմնարկի տնօրէն փրոֆ. Աշոտ Մելքոնեանի հետ: Երեկոյթին բացումը կատարած է Հայ Դատի յանձնախումբին ատենապետը՝ Գասպար Կարապետեան, որ ներկայացուցած է փրոֆէսէօրին կենսագրական գիծերը, ապա, խօսքը տուած է դասախօսին: Ան նախ, կարճ պատմական անդրադարձ մը կատարած է Ջաւախքի մասին, յայտնելով թէ պատմական Մեծ Հայքի Թագաւորութեան հիւսիսը գտնուող Գուգարաց աշխարհի ինը գաւառներէն մէկն է: Ներկայիս, Ջաւախք եւ յարակից հայաբնակ միւս շրջանները դժուար օրեր կ'ապրին ու այդ ուղղութեամբ մանրամասնութիւններ տուած է: Դասախօսը ծնած է 1961ին Ախալքալաք:

***

ՆԷԱ ԶՄԻՌՆԻԱՅԻ (Յունաստան) հայկական յուշակոթողին առջեւ, Ապրիլ 15-ին, հովանաւորութեամբ կրօնական պետերուն, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուած է, նախաձեռնութեամբ Աթէնքի նահանգապետութեան: Օրուան հանդիսութեան նախագահած է Նորա Քիւրտօղլեան–Գուլումճեան, որ հայերէն եւ յունարէն փոխանցած է օրուան խօսքը: Ներկայ եղած են բազմաթիւ յոյն անձնաւորութիւններ, նաեւ Հայաստանի դեսպանը՝ Վահրամ Կաժոյեան, կուսակցական ներկայացուցիչներ: Խօսք առած են Աթէնքի նահանգապետարանի ներկայացուցիչը, Նէա Զմիռնիայի փոխ քաղաքապետ հայազգի Վանկելիս Խաչատուրեան: Ապա, ծաղկեպսակներ զետեղուած են:

***

ԹՕՓՔԱՊՈՒԻ (Պոլիս) Լեւոն Վարդուհեան վարժարանի աշակերտներու կազմակերպութեամբ մշակոյթի օր մը տեղի ունեցած է նուիրուած Երուանդ Օտեանի, Ապրիլ 6ին, Սահակեան Սանուց միութեան սրահին մէջ: Բացման խօսքը արտասանած է Վարդուհեան վարժարանի տնօրէնուհին՝ Անի Ազշէհիրլիօղլու, որ նշած է թէ գիրն ու գրականութիւնը ազգի մը գոյատեւումը կ'ապահովեն: Ցայտագիրին մէկիզը ներկայացուած են Ե. Օտեանի կենսագրական գիծերը պաստառի մը ցուցադրութեամբ, որու յաջորդած են երկու խաղեր, որոնք կը կրէին Օտեանի ստորագրութիւնը՝ "Հնդկաստանի Գիշերները" եւ "Փանջունիի մանկութիւնը": Ցայտագրի Բ. մասին մէջ, աշակերտական երգչախումբը, երաժշտութեան ուսուցչուհի Սէլին Էօզճէնկիզի մականին ներքեւ հրամցուած է հայերէն երգերու փունջ մը:

լուացուել են Շուշիի փողոցներն ու հրդեհուած տների բակերը":

Շուշիի հայկական հին գերեզմանատանն է ամփոփուած Բ. Բահաթրեանի աճիւնը, որի գրքի մասին ժամանակին գրախօսել է մեծն Եղիշէ Չարենցը՝ այն համարելով որպէս քննական տեսութեան դասագիրք:

Շուշիի հայկական հին գերեզմանատանը կարելի է հանդիպել խորհրդաւոր մի "չիրմաքարի", որի ձախ մասում խաչ է քանդակուած, իսկ աջ կողմին՝ հրացան: Քիչ ներքեւում փորագրուած է. «Սա է մեր կիանքը վտանկից պաշտպանողը: 1905 ամի, 6 փետրվարի»: Այն զգօնութեան է կոչում Հայերին, որպէսզի համախմբուեն եւ զինուեն, պատրաստ լինեն հակահարուած տալու թշնամուն: Շուշեցի անյայտ վարպետի փորագրութիւնը մի իւրայատուկ կոչ–ահազանգ է, "որ հնչեցւում է՝ "կանխատեսելով" Բաքւից՝ հայկական հինաւուրց թերդաքաղաք "տեղափոխուելիք" հայկական ջարդերի նոր ալիքը...

Վերջերս Արցախ այցելած բելգիահայ պատմաբան Մաթոս Մաթոսեանը, Հ. Յարութիւնեանի հետ շրջելով Շուշիի հայկական գերեզմանատներում, գննելով ուշադրաւ զարդարաքանդակներով չիրմաքարերը եւ խիստ տպաւորուած լինելով հազուագիւտ արժէքներով, նկատել է. «Աշխարհի շատ երկրներում եմ եղել, սակայն նման գերեզմանատուն երբեք չեմ տեսել:– Սա մի կատարեալ թանգարան է: Որոշ չիրմաքարերի տակ հայկական զարմանահրաշ գործեր են...»:

Ասուածի մէջ համոզուելու համար պարզապէս տեսնել է պէտք այդ իւրայատուկ "թանգարանը"...

Դ. Մ.

« Հայաստանի Հանրապետութիւն »
Ապրիլ 12

Publications reçues

HAKOB's GOSPELS

The Life and Work of an Armenian Artist of the Sixteenth Century

Sue Bond Public Relations
Hollow Lane Farmhouse, Thurton, Bury
St. Edmunds, Suffolk IP31, 3RQ, UK.

ՍՏԱՑԱՆՔ

VIVOS VOCO !
ՊԷՏՔ Է ՍՈՎՈՐԵՆՔ ՀԱՅԵՐԷՆ ՄՏԱԾԵԼ

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

Երեւան, 2006

Հեղինակի հասցէն՝
25 Place S. Allende
94140 — Alfortville

ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Զարեհ եւ Մարի–Ժօզէֆին կը վազվզէին ամէնուրեք, իրարու մօտ կենալով: Պիտի յիշեն այդ օրերը որպէս իրենց երջանկութեան օրերը: Կը կարծէին ամէն անկիւն տեսնել իրենց հաւանական սխանկութեան անձկութիւնը, յուսահատ սարսափը եւ ամէն բան հարկ եղած ժամանակին չկարենալ կազմակերպելու վտանգը: Եւ չէին անդրադառնար որ այդ վտանգին, այդ անձկութիւններու պատճառաւ իրեն կապը աւելի կ'ամրանար, իրենց կեանքը աւելի համ կը ստանար: Եթէ Զարեհ սապետ կ'ըլլար, Մարի–Ժօզէֆին կ'ըլլար զլեակին տիրուհին, աշուղներու երգած հերոսուհին...

Յաջորդ տարուան դանդաղութիւնն է որ պիտի յղկէ իրենց սրտերը, պիտի դնէ տարբերութիւնը յաղթական երկրի մը զեղեցիկ փրանսուհիին եւ պարտուած հայ բժիշկի մը միջեւ, որպէս Հայ ազգութեամբ եւ որպէս Թուրք հպատակութեամբ: Եւ առաւել եւս, անսպասելիօրէն այժմ կայ նաեւ գաղտնի, անծանօթ ընտանիքի մը պատասխանատուութեան հոգը:

Միւսները – Իսմէնէ, Նաջիմ, Իսաադ, նորմանտացի խոհարարուհին, Փրանսացի շարժավարը, մուրացկանները, կաղ զափթիէն – ամէն մէկը իր գործին լծուած է եւ իրարու հետ շատ լաւ կը հասկցուին:

Ժամը ութին մօտերը ամէն տեղ կը հանդարտի: Հիմա միայն կը սպասեն որ ճամբարին հրամանատարը իր խօսքը յարգէ: Եւ սպան որ պիտի ղրկէ պէտք է որ հիւպատոսարանը տօնական շարժումի մէջ գտնէ, նոյնիսկ ուշ գիշերով: Պրինճի խաղ մը կը հնարուի: Քանի մը հրաւիրեալ երկու սեղան գրաւելու համար, եւ հիւպատոսը որ բարեացակամութեամբ կը քալէ սրահին մէջ:

Պրնուա տը Սէն Լազար շատ աւելի տարբեր է Մարի–Ժօզէֆինէն. այնքան նեղացած եւ ժպտերես է իրեն հետ, որքան խորամանկ աղուէս մը տանիքը Թուրքերուն եւ քաղաքին բնակիչ Արաբներուն հետ: Համակրանք ունի Զարեհին հանդէպ, կը գնահատէ իբրեւ բժիշկ: Քոնֆիսըրնի Սիսփլիէննէն կը հասնին լաւագոյն պաղպաղակները եւ արեւելեան վերջին ճաշակի անուշեղէններ, փխրուն "կատուի լեզուներ" որոնք նորութիւններու կարգին կ'անցնին: Շաքարապատ սեխերու խորանարդներ, ձմերուկահեւ փոքրիկ նշածաղեր, եւ հորին մէջ պաղած ձմերուկ եւ սեխ պաղասուրճներուն համար:

Ամօթ չէ ուտելը երբ մարդ գոհ է ինքնիրմէն: Անձկութիւնը եւ սպասումը բոլորին ախորժակը կը գրգռէ եւ լաւատեսութեան թեթեւ հով մը կը սկսի փչել:

***

Մինչ այդ, Իսաադ կը սպասէ չինարի ծառին տակ: Խոնարհութեամբ կը սպասէ գործադրելու Իսմէնէի հրահանգը, որ իրեն համար դժուար չէ՝ մխիթարութիւն եւ սփոփանք տալ դիմացինին: Զըզայնութեամբ կը փնտռէ գրպաններուն մէջ, ձեռքը կ'անցնի ջրամանը, քանի մը կտոր հացեր: Կը յուսայ իրեն տրուած պաշտօնը կարենալ կատարել: "Գոնէ" կը մտածէ "սորվուած չեմ խօսիլ եւ սխալ բաներ չեմ ըսեր": Ոչ մէկը իրմէ աւելի պիտի փափաքէր քարոզ չտալ: Այլութիւնը իրեն համար տանելի բան չէ, կը մտածէ եւ արդէն յարած ալ է Իսմէնէին: Քահանայ մը կրնա՞յ եղերամայրի մը հետ ամուսնանալ: Այս հարցումն է որ մինչ կը սպասէ դանդաղօրէն յարդի ճիւղի մը պէս կը դարձնէ իր ակռաներուն մէջ:

"Երբ ամէն բան վերջանայ" (ինք ալ օդին մէջ լաւատեսութեան հով մը կը զգայ, փսփսուք մը, կը մտածէ որ կը հասնի բարի Գաթէրինայէն եւ Տիմիդրափիսէն, որոնք վերջապէս երջանիկ են միասին) "եւ ես ալ ներում ստացած պիտի ըլլամ, կ'ուզեմ կրկին իմ կալոյտ պատմուածանս հագուիլ, մազերս երկընցընել, կարենալ չինել հանդոյցը եւ կրկին քահանայութիւնս ընել: Ծխակատարութեան, այնչափ պէտք պիտի ըլլայ պատերազմէն վերջ: Ես ալ աղուոր ձայն ունիմ եւ բոլոր երգեցողութիւնները գիտեմ":

Այդ պահուն կաղ զափթիէն կը հասնի եւ իրեն կու տայ աղտոտ համազգեստ մը: "Հագուէ որ երթանք" կը փսփսայ. "շատ ժամանակ չունինք: Պէտք է բարեկամներուդ ըսես որ այս գիշեր պատրաստ ըլլան: Բարեբախտաբար բաւական միւնակ են, հեռու են միւսներէն, քեզ իրենց կը տանիմ, բայց շուտ պէտք է ընես: Ամբողջ ճամբարը ջղայնոտ է եւ առտուան սպան կրնայ անսպասելիօրէն վերադառնալ": Իսաադ, արդէն համբիդերին մէջ մտած, գլուխը վար ծռելով կը հաստատէ:

"Հայերը խլրտումի մէջ են" կը շարունակէ միւսը, "բաւական ժամանակ դրին, այդ կծծի խանութպանները, հասկնալու համար որ ազատում չունին, կ'երթան մեռնելու: Բայց վաղը, մեկնելէ առաջ, գեղեցիկ մանչուկ մը պիտի զատեմ եւ հետս տանիմ: Հիմա որ քիչ մը դրամ ունիմ, կ'ուզեմ երթալ: Եւ այսպիսով բարի գործ մըն ալ ըրած կ'ըլլամ":

Իսաադ, ինչ կը վերաբերի բարի գործին, չի պատասխաներ: Մեծ վախ մը ունի, Ագարակի սարսափելի գիշերը յիշելով: Բայց այս անգամ յանպատրաստի չէ: Եւ կը վախնայ նաեւ Իսմէնէէն: Ցետոյ, աւելի խոր մտածելով, կը կրկնէ. "Հիմա կորսնցնելիք բան չունիմ" եւ կը ջանայ ինքզինքը համոզել որ իսկապէս այդպէս է եւ ամէն պարագայի, փոքրիկ Միքայէլ Հրեշտակապետը որ գրպանին մէջ ունի, հաւանաբար զինք պաշտպանէ:

(Շար. 90)

(Շար. Ա. էջէն)

մի կռուանը, կամ ան կը խորտակուի, նոր կեցուածք թելադրելով Անգարայի: Ու ներկայի իրավիճակին մէջ երբ ԱՄՆ կը պատրաստուին Իրանի դէմ պատերազմի մը համար "իրենց"ները հաշուել, սկսելով Թուրքիայէն, Ատրպէջանէն, աւելորդ էր "ցեղասպանութիւն" բառին կապուած հետաքրքրութիւնը:

Այսուհանդերձ, այդ հետաքրքրութիւնը ունեցողները յուսախաբ ընելու գնով րսենք թէ այս տարի եւս ԱՄՆ-ու նախագահը յայտնուած է շրջանցումի լարին վրայ, թելադրելով որ ոչ ոք մոռնայ մարդկային այն ողբերգութիւնը որ 1915-ին մէկուկէս միլիոն Հայու տեղահանութեամբ եւ զանգուածային սպանութեամբ կը բնորոշուի:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՄՆ-ու արտաքին գործերու նախարարուհին Գ. Ռայս Ապրիլ 25ին Աթէնքէն Անգարա գացած է: Այցին գլխաւոր պատճառը Թուրքիոյ նեցուկը ապահովել է Իրանի դէմ գինեալ միջամտութեան: Անգարա առոր փոխարէն թոյլտուութիւն կ'ուզէ քիւրտ զինեալներուն դէմ Իրաքի մէջ զինեալ գործողութիւններու ձեռնարկելու: Այցը հակամերիկեան ցոյցերու ալ պատճառ եղած է Անգարայի մէջ:

ԹՈՒՐՔԻՈՅ արտաքին գործերու նախարարութիւն կանչուած է Գանատայի դեսպանը ուր իրեն յայտնուած է վարչապետ Ս. Հարփըրի Հայկական ցեղասպանութեան մասին ըրած յայտարարութեան առթած դժգոհութիւնը: Շեշտուած ալ է թէ ատիկա կրնայ ժխտական ազդեցութիւն ունենալ թուրքեւգանատական յարաբերութիւններուն վրայ:

ԹՈՒՐՔԻԱ կը յամառի անդրսահմանեան գործողութիւններու ձեռնարկելու Իրաքի մէջ, քիւրտ զինեալներ հալածելու պատրուակով. մինչդեռ Իրաքի նախագահը Ճ. Թալապանի յայտնած է յստակօրէն թէ անընդունելի կը նկատէ նման միջամտութիւն:

ԻՐԱՔԻ մէջ, ջարդը դադար չունի եւ Ապրիլ 25ին 15 մեռեալ եւս կար, որոնց մէջ դատաւոր մը եւ 6 թանուորներ:

Տ. Տը ՎԻԼԸՓԷՆ, Ապրիլ 25ին, Սորպոն գնաց, ոստիկանական խիստ պաշտպանութեան տակ ամբողջ շրջապատող շրջանը: Ջախողութենէն ետք Սէ. Փէ. Ը.-էն ետք, նախարարապետը կը ջանայ այլ ձեւով սիրաշահիլ ուսանողները եւ ելոյթը կը վերաբերէր "համալսարան - աշխատանք" թեմային:

ՉԵՐՆՈՊԻԼԻ հիւլէական կայանի աղէտին քսանամեակը կ'ոգեկոչուի նաեւ Ուկրանիայէն դուրս, քանի "ամպը" վարակեց հեռաւոր շրջաններ եւ ցայսօր պատասխանատու է վահանագեղձի հիւանդութիւններու: Տեղւոյն վրայ ալ, փակ կայանին շուրջ հսկում մը կատարուեցաւ Ապրիլ 25ին, զոհերու ընտանիքներու կողմէ: Պաշտօնապէս 16 հազար մեռեալ կայ Եւրոպայի տարածքին վրայ եւ ցարդ ամէն վտանգ վերցած չէ:

ՆԵՓԱԼԸ մէջ, միթնոլորտը աւելի հանդարտ է շնորհիւ թագաւորին որոշումին, լուծուած Խորհրդարանը նիստի հրաւիրելու Ապրիլ 28ին: Հակառակ այս մասնակի զիջումին, ընդդիմութիւնը աչալուրջ կը մնայ եւ միշտ կը պահանջէ թագաւորին քաշուիլը եւ Հանրապետութեան մը հաստատումը:

ԶԻՆԵՏԻՆ ԶԻՏԱՆ, Ֆութպոլի մեծ ախոյեանը, յայտնեց Ապրիլ 25ին Գանալ+ կայանէն, որ վճռած է քաշուիլ իր այդ փայլուն ասպարէզէն համաշխարհային թաժակէն ետք: Լուրը կը հաստատէր յաջորդ օրը, մամուլի ասուլիսով մը Ռէալ Մատրիտի մարզումի կեդրոնէն: Այս որոշումը գլխաւոր լուրը նկատուելով Ապրիլ 25ին, առաջին տեղը գրաւեց լրատուութեան հաղորդումներուն մէջ (հեռատեսիլ, ձայնասփիւռ), երկրորդական տեղ ձգելով Եգիպտոսի եւ Իրաքի ոճրափորձերուն կամ Չերնոպիլի 20ամեակին:

ՄԱՄՈՒԼ

« IHT »

(Ապրիլ 25)

"ԹՈՒՐՔԻԱ ՎԵՐՋԱՊԷՍ ԱԿԱՆՋԱԼՈՒՐ Կ'ԸԼԼԱՅ ԻՐ ԱՆՑԵԱԼԻՆ"

1915ին ԱՄՆ-ու Օսմանեան կայսրութեան դեսպան Հ. Մորկընթաուի թոռը Հ. Մորկընթաու Գ. այս խորագիրով յօդուած մը ստորագրած է Ցեղասպանութեան 91րդ տարելիցին առթիւ: Կը յիշէ թէ մեծ հօրը յուշերը որոնք անցեալ ամիս առաջին անգամ ըլլալով Թրքերէն լոյս տեսան, տեղեկատուութեան նշանաքարի մը իմաստը ունին Թուրք ժողովուրդին համար եթէ ուզէ գիտնալ թէ ինչեր պատահեցան իր երկրին մէջ աւելի քան 90 տարի առաջ: Կ'ըսէ թէ այդ շրջանին տակաւին ցեղասպանութիւն բառը հնարուած չէր ու մեծ հայրը գործածեց "հայկական ցեղին բնաջնջումը", ազգի մը ըսպանութիւնը" բացատրութիւնները: Անոր առանձին աղաղակն էր որ աշխարհին ահազանգեց իրենց գերմանացի մեղսակիցներուն հետ Երիտասարդ Թուրքերու ծրագրուած վայրագութեան մասին:

Յետոյ կը յիշէ 1914ի վերջերուն նոյն անձնաւորութեան Թրքական սահմաններուն մէջ Հրեայ դէմքերու ուղղուած ամբաստանութիւններէն Պէն Կուրիոնի, Եիցաք Պէն-Զվիի նման անձնաւորութիւններ փրկելու աշխատանքը: Կ'ըսէ թէ նոյն փրկարար կեցուածքը չէր կրնար ունենալ ի նպաստ Հայերուն, քանի որ անոնք օսմանեան եւ ռուսական կայսրութիւններուն սահմանակից շրջաններու բնակիչ էին ու հայկական Սփիւռքը այդ շրջանին չունէր հրէականին հզօրութիւնը, օգնութեան փութալու համար իր հալածուած ազգակիցներուն:

Մորկընթաու երբ Պատերազմական նախարար Էնվէրին դիմեց որպէսզի արտօնուի ամերիկացի միսիոնարներու կողմէ սովահար Հայերուն օգնելու գործը, ան պատասխանեց. "Չենք ուզեր որ Ամերիկացիները օգնեն Հայերուն··· անոնք կը կարծեն որ այլ երկիրներու մէջ բարեկամներ ունին, ինչ որ զիրենք կառավարութեան դէմ ընդդիմութեան կը մղէ ու զայն ամբաստանելու իրենց կրած թշուառութեան պատասխանատուութեամբ":

Ներքին գործերու նախարար Թալաթին պատասխանն ալ նոյն ոճով էր. "Թուրքերուն եւ Հայերուն միջեւ ատելութիւնը այնքան խոր է որ պարտէինք ոչնչացնել զիրենք: Եթէ չընէինք, վրէժի պիտի դիմէին":

Ըսելով թէ այսօր 91 տարի ետք Թրքական ղեկավարութիւնը կը յամառի ժխտելու ցեղասպանութեան իրականութիւնը, յօդուածագիրը հարց կու տայ. "Ինչո՞ւ Թուրքիա կը պաշտպանէ անցեալի ոճրագործները": Ապա կ'ըսէ թէ հարցումը պէտք է ուղղուի կրկին ու կրկին, մինչեւ որ իրականութիւնը տեղ գտնէ գիտակցութիւններու մէջ: Թուրքիա որ Եւրոպայի անդամակցութեան կը ձգտի, պէտք է խօսքի ազատութեան ընթացք տայ: Ատիկա անմերժելի իրաւունք է Թուրքիոյ նման արդիական երկրի մը քաղաքացիներուն համար որոնք առաւել յարգանքի արժանի են: ԱՄՆ-ու կառավարութիւնը որ նեցուկ կանգնած է ուրացումի Թրքական քաղաքականութեան, ներկայիս բոլոր կողմերուն կը թելադրէ ընդունիլ պատմական իրողութիւնները:

"Թուրքերուն արդար իրաւունքն է լաւ կամ գէշ իրենց սեփական պատմութիւնը գիտնալ, առանց պետութեան միջամտութեան: Ուրացումի առարկայ ոճիր մը կրկնուած ոճիր մըն է: Պատմութեան մեծ ազգերը գիտակցած են իրենց նախորդ կառավարութիւններուն մեղքերուն: Ժամանակը հասած է որ Թուրքիա մեծ ազգերու շարքին մաս կազմէ" կ'եզրակացնէ Հ. Մորկընթաու Գ.:

***

"ՆՕԶԿԻՒՐ ՓՈԼԻԹԻՔԱ"

(Ապրիլ 25)

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Ա. էջի գունաւոր մեծադիր լուսանկարով մը ուր Ֆրանսական ու Հայկական եռագոյններով, երիտասարդներով շրջապատուած հայկական յուշարձան մը կ'երեւի եւ ներսի կոյտ էջերով լայն արձագանգ կը տրուէր ամբողջ աշխարհի ոգեկոչումներէն, Հայաստանի ներկայէն:

Այդ ներկան նկարագրուած էր բաւական տխուր գոյներով. Հայաստան կ'ենթարկուէր Կովկասի վրայ ռուսեւամերիկեան մրցակցութեան հետեւանքներուն, տընտեսութիւնը լուրջ տոկոսով մը օտարականներու ձեռքն էր, կար խաղաղարաններու, պանդոկներու մեծ թիւ մը, մինչ ժողովուրդը անգործութենէ, թշուառութենէ կը տառապէր: Աշխատանք ունեցողն ալ չնչին վարձատրութիւն մը կը ստանար: Ուշագրաւ էր արտագնայ աշխատանքի մեկնած այրերու կարեւոր համեմատութիւնը որ երկրին մէջ կիներու ներկայութիւնը 70%ի կը հասցնէր: Անդրադարձ ալ կ'ըլլար Ղարաբաղի հարցին ու անով պայմանաւորուած Թուրքիոյ սահմանին հարցին: Հայաստանի նուիրուած էջը խորագրուած էր. "Երկիրը որ մէ միայն անուն մը կայ":

***

Նոյն թիւին մէջ "Թուրքիոյ հայկական եկեղեցիները կը քանդուին" խորագիրով արձագանգ մը տրուած է Հայաստանէն Թրքագէտ Ռ. Սաֆրաստեանի տեղեկատուութեան ուր ըսուած է թէ Թուրքիոյ 913 հայկական եկեղեցիներէն 464ը քանդուած են: Տրուած է նաեւ Պոլսոյ շրջանին մէջ քանդուած եկեղեցիներու, գերեզմանատուներու ցանկ մը:

***

Մոնտ ալ լայն տեղ տուած էր Ապրիլ 26ի իր թիւին մէջ, ծանրանալով Լիոնի ոգեկոչումին վրայ:

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 03 76 49

CINE-CLUB
Paris 10e
« Rouben Mamoulian »

Vendredi 28 avril à 20h30

RETOUR VERS l'ARARAT

de Pea Holmquist
Film documentaire suédois en v.o., sous-titré français,
avec Suzanne Khardalian, Goran Gunner et Jim Dowing
Musique : Komitas-Chœur Sipan-Komitas
Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

- Participation aux frais : 5 Euros
- Adhérents et Abonnements : 3 Euros

***

Jeudi 4 mai à 20 heures 45

CONFERENCE - DEBAT

VARTAN BERBERIAN
« LE FIGUIER DE MON PERE »
Editions Anne Carrière

Portrait haut en couleurs d'une communauté discrète, travailleuse et solidaire. Ces mémoires sont un hommage de l'auteur aux siens, réfugiés en France au début des années 20, après avoir tout perdu au cours du génocide de 1915.

L'auteur dédicacera son livre.
P.A.F. : 6 Euros — Adhérents : 4 Euros

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Հայաստանցի տիկին մը որեւէ աշխատանք կը փնտռէ:
Հեռաձայնել Անահիտ Ելիմեանի՝
06. 98. 45. 10. 07

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Section «Archalouisse Tatéossian» de Paris

Circuit en Arménie et Artsakh

Du 2 au 12 septembre (Arménie) ou du 2 au 14 septembre (Arménie + Haut Karabagh) — Pension complète sauf à Erévan (1/2 pension) — Hôtels 3 et 4 étoiles — Vol Air France — Prix à partir de 1280 Euros.

Renseignements et inscriptions :
— Araxie : 01 39 83 71 19.

Nombre de places étant limité, date limite d'inscription : **15 juin.**

□

CHAVILLE

Soirée Cabaret

La Section «Ter Tavtian» de Chaville organise le samedi 20 mai à partir de 20 heures une **Soirée Cabaret** avec **Alain POSTURE**, imitateur et **GIGI** la Fleur de Montmartre, chanteuse et French CANCAN, ainsi que Philippe et Vartan pour les musiques traditionnelles arméniennes.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

BOIS-COLOMBES

Le Dimanche 14 mai à 16 heures 30
LA COMPAGNIE DE DANSE
YERAZ
présente
PARFUMS D'ARMENIE
Direction artistique :
Christina GALSTIAN-AGOUDJIAN
— Salle Jean Renoir —
7 Villa des Aubépines
92270 Bois-Colombes

Réservations :

01 56 83 91 03 — 06 24 33 35 86 — 06 14 74 92 97

Maison de la Culture Arménienne d'Alfortville

RENCONTRE
avec
VARTAN BERBERIAN
à l'occasion de la parution de son livre
« LE FIGUIER DE MON PERE »

le Vendredi 28 avril à 20h45

Présentation — Dédicaces

— Entrée libre —

9, rue de Madrid 94140 Alfortville
Tél.:01 43 76 55 89 - Fax:01 43 78 66 64
e-mail: mca.alfo@wanadoo.fr

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 28
VENDREDI
28 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.443 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 81e ANNEE — N° 21.443

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼԻԹՈՒԱՆԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Լիթուանիոյ նախագահը Վ. Ատամքուս որ Երեւան կ'այցելէր, իրեն ընկերացող պատուիրակութեան հետ Ապրիլ 25ին բարձրացած է Ծիծեռնակաբերդի բարձունքը. իրենց ընկերացած է Երեւանի քաղաքապետը: Ցեղասպանութեան Թանգարանի տնօրէնը Լ. Բարսեղեան ընդունած է զիրենք, բացատրութիւններ տուած 1915ի մասին:

Հիւր նախագահը Թանգարանի յուշամատեանին մէջ արձանագրած է. "Դժուար է արտայայտել զգացումները, տեսնելով մարդուն դէմ մարդկային դաժանութիւնը: Հաւանօրէն ոչ մէկ լեզուի մէջ բառեր կան արդարացնելու համար այդ գործողութիւնները":

Ատամքուս ծաղկեպսակ զետեղելէ ետք Եղեռնի զոհերու յուշարձանին, իր երկրորդ ծառը տնկած է հոն:

***

ՀՐԱԴԱԴԱՐԸ ՉԻ ՅԱՐԳՈՒԻՐ

Ատրպէյճանի կողմէ հրադադարի ոտնահարումները գրեթէ կանոնաւոր բնոյթ ստացած են. Ապրիլ 26ին անոնց կրակոցներէն վիրաւորուած է Վայքի զօրամասի զինուորներէն Ցարութ Մանուչարեան: Վիճակը մտահոգիչ չէ: Նախօրեակին ալ երկու ուրիշ զինուոր վիրաւորուած ու հիւանդանոց փոխադրուած են: Ատրպէյճանական կողմը այս միջադէպերով հանդերձ յայտարարած է անգամ մը եւս որ հրադադարը բռնաբարուած է հայկական կողմէն:

***

ՋԱՒԱԽՔ

ԱՐԳԵԼՔ ՌԱԶՄԱԿԱՆ ԹԷՔՆԻՔԻՆ ԴՈՒՐՍ ՀԱՆՈՒԵԼՈՒՆ

Ապրիլ 26ին Ախալքալաքի թիւ 62 ռուսական ռազմակայանէն պէտք է սկսէր ռազմական թէքնիքին դուրս հանուիլը. սակայն շուրջ 200 ախալքալաքցիներ արգիլած են գործողութիւնը: Իրենց քայլը բացատրած են անով որ այդ թէքնիքը դուրս հանել Ջաւախքի հայութեան ֆիզիքական ապահովութեան խնդիր կը ստեղծէ: Այդ առումով անոնք կը պահանջեն որ զօրքերը այլ տեղ փոխադրելու եւ անոր ձեւին բանակցութիւններուն իրենք ալ մասնակցին:

Ախալքալաքցիներուն միւս մտավախութիւնն ալ այն է որ հոնկէ դուրս բերուող ռազմական միջոցները Ռուսաստան կը տեղափոխուին ատրպէյճանական տարածքէն, ինչ որ շարք մը կասկածներու տեղի կու տայ:

***

Ռ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՓԱԿՈՒՄԻ ՎՏԱՆԳԻՆ ՏԱԿ

Ախալքալաքի "Ռ. Տէր Մինասեան" միջնակարգ վարժարանը փակման սպառնալիքի տակ է, շէնքին անմխիթար վիճակին պատճառով: Կառավարութիւնը որոշած է շրջանին մէջ դպրոցներ նորոգել եթէ անոնք 500է աւելի աշակերտ ունին. իսկ "Ռ. Տէր Մինասեան" վարժարանը 120 աշակերտ ունի:

Ախալքալաքի կրթութեան բաժնի վարիչ Ն. Կարապետեան ըսած է թէ եթէ անցեալին համբաւի տէր այդ դպրոցը կարելի չըլլայ նորոգել, յաջորդ տարեշրջանին ոչ միայն Ա. դասարան չի բացուիր, այլեւ միւս դասարաններու աշակերտներն ալ այլ դպրոցներու կը բաշխուին ու հաստատութիւնը կը փակուի:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԱՐՔՈԶԻԻ դաղթի սահմանափակման օրինագիծը, որ շաբաթ մը պիտի ներկայացուի Ազգ. Ժողովին, կը շարունակէ բողոքներու առիթ տալ: Եկեղեցիներու պատասխանատուները բուռն կերպով կ'ընդդիմանան, գլխաւորաբար զայրացած են Ներքին նախարարին այն արտայայտութենէն, ըստ որուն անոնք որոնք Ֆրանսան չեն սիրեր կրնան Թողուլ երթալ: Ապրիլ 25 թուակիր նամակով մը ուղղուած՝ Տ. տը Վիլփէնի, Քրիստոնեայ եկեղեցիներու խորհուրդը իր խոր մտահոգութիւնները կը յայտնէ անոնց համար որոնք փափուկ կացութեան մէջ են: Ֆրանսայի եպիսկոպոսներու նախագահն ալ՝ ծիրանաւոր Ռիքար Ապրիլ 28ին հանդիպում մը պիտի ունենայ Շիրաքի հետ:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ նախագահը՝ Մ. Ապպաս Փարիզ հասաւ Ապրիլ 27ին եւ հանդիպում ունեցաւ Շիրաքի հետ: Շրջապտոյտը կը միտի եւրոպական զօրակցութիւն ապահովելու, մանաւանդ նիւթական օժանդակութիւն՝ Պաղեստինեան իշխանութեան:

ՏԱՀԱՊԻ (Սինայի) ռմբափորձերէն 36 ժամ ետք, երկու նոր անձնասպանական ռմբափորձեր գործուած են նոյն շրջանը, բայց զոհ չկայ, բացի հեղինակներէն: Այս անգամ թիրախներն էին Բազմազգեան Ուժերը եւ դէտերը, որոնց պաշտօնն է եգիպտական-իսրայէլեան խաղաղութեան համաձայնագրերու յարգանքին հսկողութիւնը: Արարքը գործուած է զինուորական ճամբու մը վրայ, ալ-Կորայի օդային կայանին մօտ:

ՆԱՍԻՐԻԱՅԻ (հարաւային Իրաք) մէջ, Ապրիլ 26ին, ռմբափորձի մը զոհ գացած են իտալական ուժերու պատկանող չորս զինուորներ:

ԻՐԱՆ, իրեն ճշդուած պայմանաժամէն 48 ժամ առաջ, իր կարգին սպառնաց Միացեալ Նահանգներուն, այլ խօսքով նախընտրեց ինքն ալ յարձակողականի անցնիլ: ՄԱԿ-ը մինչեւ Ապրիլ 30 վերջնագիր տուած էր Թեհրանի, որպէսզի դադրեցնէ ուրանիոմի հարստացումը եւ Թեհրան ալ կը սպառնայ առկախել Հիւլէական Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան հետ իր յարաբերութիւնները, եթէ իրեն դէմ տրուին այնպիսի որոշումներ որոնք զինք կը զրկեն իր օրինաւոր իրաւունքներէն: Այաթոլլա Ալի Խամանէյ ալ ազդարարած է որ Իրան կը հարուածէ ամերիկեան շահերը ամբողջ աշխարհի մէջ:

"ՖՐԱՆՍ ՍՈՒԱՐ"ի աշխատաւորները կը շարունակեն գործադուլի շարժումը եւ Ապրիլ 27ին ալ թերթը լոյս չէր տեսներ, մինչ նոյն առաւօտը օրաթերթին հրատարակիչները, աշխատաւորները եւ գնողները ժողով մը գումարած էին լուծում մը գտնելու համար: Ապրիլ 25ին ալ զօրակցութեան երեկոյթ մը տեղի ունեցած էր Տէֆանսի Առչը եւ որու ներկայ եղած էր Ֆր. Հոլանտ:

ԹՈՒՐՔԻՈՅ Խորհրդարանը ընդունած է օրէնք մը որով որոշ ազատութիւններ կը բերուին անձնաթուղթերու մէջ կրօնքի նշումի կերպին: Անհատ մը իրաւունք կ'ունենայ գրաւոր պահանջելու որ պաշտօնական տոմարներուն մէջ ընտանիքին կրօնքի պատկանելիութիւնը փոխուի, կամ ոչ մէկ բան արձանագրուի այդ բաժնին մէջ: Իրաւունք կը տրուի նաեւ որ զաւակ մը 18 տարեկանին ընտրէ իր կրօնքը ու արձանագրել տայ անձնաթուղթին մէջ:

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

ՊԷՅՐՈՒԹ

50 ՀԱԶԱՐ ՀՈԳԻԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Նախաձեռնութեամբ Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման կեդրոնական մարմնին, Ապրիլ 24ին, Լիբանանի Հայութիւնը ոգեկոչած է Ապրիլեան Եղեռնի 91ամեակը: Առաւօտուն, ժողովուրդը փութացած է Անթիլիաս, որ քայլարշաւի սկզբնաւորութեան վայրն էր եւ ուր տեղի կ'ունենար հոգեհանգստեան պաշտօն մը: Մայր տաճարին մէջ մատուցուած պատարագէն ետք Արամ Ա.ի գլխաւորութեամբ թափօրը ուղղուած է Նահատակներու աճիւններով սրբագործուած մատուռը ուր հոգեհանգստեան պաշտօն մը տեղի ունեցած է:

Պատարագէն ետք Արամ Ա. դիմած է ներկաներուն, Ապրիլ 24ը բնորոշելով որպէս "Նահատակներու օր, ազգային պահանջատիրութեան օր եւ հաշուետուութեան օր": Արարողութենէն ետք եւ ծաղկեպսակներու զետեղումէն, 50 հազարի հասնող բազմութիւնը կը փութար դէպի Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտը: Կէսօրուան ժամերուն, քայլարշաւի մասնակիցները հասած են 91ամեակի ոգեկոչման վայրը, ուր տեղի կ'ունենար հանդիսութիւնը: Պաշտօնական հիւրերու կարգին եղած են նախագահ Լահուտի, Խորհրդարանի նախագահին, վարչապետին ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Հայաստանի դեսպանը, երեք յարանուանութիւններու եւ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները: Հաւաքոյթին բացման խօսքը արտասանած է Արմէն Իւրնէշլեան, որմէ ետք բեմ բարձրացած է Հրայր Ճէպէճեան, որ բացման խօսքը արտասանած է արաբերէն: Այս խօսքերէն ետք, յանուն կազմակերպիչ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման կեդրոնական մարմնին խօսք առած է Ալեքսան Քէօշկերեան, որմէ ետք ոգեկոչման հանդիսութեան, արաբերէն խօսքը արտասանած է Ալէն Թապուրեան. եզրափակիչ խօսքը ըրած է Լիբանանահայոց առաջնորդը՝ Գեղամ Եպիսկ. Խաչերեան:

ՌՈՒՄԱՆԻԱ

Ապրիլ 23ին եւ 24ին, զանազան ձեռնարկներով ոգեկոչուած է 91րդ տարելիցը: Եկեղեցական թեմին, Ռումանահայոց միութեան, այցով այդ երկիրը գտնուող Հայաստանի Արտաքին գործերու փոխ նախարար Ա. Կիրակոսեանի, Հայաստանի դեսպանութեան կողմէ ծաղկեպսակներ զետեղուած են Պուքրէշի մէջ 2002ին եւ 2005ին կանգնած երկու խաչքար - յուշարձաններուն: Փոխ նախարարը Ապրիլ 24ին ելոյթ մը ունեցած է Ցեղասպանութեան զոհերու ոգեկոչումի արարողութեան:

Ցիշատակութեան ձեռնարկներ տեղի ունեցած են Պուքրէշէն զատ Գոսթնացա, Սուչաւա եւ հայաբնակ այլ վայրերու մէջ: Ռումանական լրասփիւռները անդրադարձած են են ձեռնարկներուն:

ՎՐԱՍՏԱՆ

Թիֆլիսի Ս. Գէորգ առաջնորդանիստ եկեղեցիին մէջ մատուցուած պատարագէն եւ հոգեհանգիստէն ետք, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները խաղաղ հանրահաւաք եւ մոմավառութիւն կազմակերպած են Թրքական դեսպանատան առջեւ: Հոն ընթերցումը կատարուած է Թուրքիոյ կառավարութեան ուղղուած նամակի մը որով կոչ եղած է Հայերու դէմ կատարուածին իրականութիւնը ընդունելու:

Ցեսմիջօրէին Թիֆլիսի հայկ. Թատրոնին մէջ սուգի ցերեկոյթ տեղի ունեցած է որուն բացման խօսքը արտասանած է Հայաստանի Թիֆլիսի դեսպանը Հրաչ Սիլվանեան: Երեկոյեան Ս. Գէորգ եկեղեցիին մէջ քրիստոնեայ քոյր եկեղեցիներու երգչախումբերուն մասնակցութեամբ հոգեւոր երգի համերգ տեղի ունեցած է:

Երկրին այլ շրջաններուն մէջ ալ -Ախալցխա, Ախալքալաք, Նինոծմինդա, Բաթում- նման արարողութիւններով, սուգի հանրահաւաքներով նշուած է Ցեղասպանութեան 91րդ տարելիցը:

Աճարիոյ պետական հեռատեսիլը ցուցադրած է "Արարատ"ը:

Ս. ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ

Օրը սկսած է Ս. Կատարինէ հայկական եկեղեցիին, հոգեհանգստեան արարողութեամբ: Աւարտին Հայաստանի հիւպատոսութիւնը, Հայաստանի զինեալ ուժերու պատուոյ պահակախումբը, տեղական համայնքը եւ Ռուսեր ծաղկեպսակներ զետեղած են, եկեղեցիին մուտքին, կանգնած խաչքարին առջեւ: Իսկ կէսօրէն ետք Նոր սերունդի երիտասարդները ցերեկոյթ մը կազմակերպած են, ֆիլմ ցուցադրած:

ԹԱԼԱԹ ՓԱՇԱՅԻ ԱՔՍՈՐԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԸ

Թուրք լրագրող Մուրատ Պարտաքչը որ պատմական անցքերու փաստացի հրապարակումներով ծանօթ անուն մըն է, անցեալ տարի Ապրիլ 24ի առիթով հրապարակած էր Թալաթի տետրը. օսմանեան Ներքին գործերու նախարարը հոն ամփոփած էր աքսորուած Հայերու ցանկերը ("Յառաջ" 2005 Ապրիլ 28 – Մայիս 7): Այս տարի նոյն թուականներուն (Ապրիլ 24-26) հրատարակութեան տուած է նոյն դէմքին պատկանած այլ տեսրի մը տուեալները, նոյն օրաթերթին -"Հիւրիյէթ"- մէջ:

Նախարանի տողերով կ'ըսէ. "Հայերու աքսորին ճարտարապետ, Ներքին գործերու նախարար ու վարչապետ Թալաթ փաշա 1915ի աքսորէն ետք Ներքին նախարարութեան «Բնակութեան, ցեղախումբերու եւ գաղթականներու տնօրէնութեան» եզրափակիչ ցանկեր պատրաստել տուած ու մէկ օրինակն ալ ինք պահած է: Այս փաստաթուղթերը որոնք առաջին անգամ կը հրատարակուին, ես առած էի 1982ին Թալաթի կնոջմէն որ այդ թուականին տակաւին կենդանի էր:

Փաստաթուղթերուն մէջ տեղ գտած թիւերը, վստահ եմ թէ շատ մը ընթերցողի ենթադրութենէն աւելի բարձր պիտի թուին. պատճառը այն է որ մինչեւ այսօր մենք թուական տուեալներու հիմով ակադեմական հրատարակութիւն մը չենք կատարած եւ Հայկական Սփիւռքին պնդումներուն միայն մեզի ուղղուած քարոզչութեան մը հիմով պատասխաններ տուած ենք: Հետեւաբար «Թալաթ փաշայի աքսորի փաստաթուղթեր»ը Թուրքիոյ համար ոչ թէ «յանցանքի ապացոյց», այլ «ինքնապաշտպանութեան» փաստ են":

Պատրաստուած ցանկերուն մէջ 23 բնակավայրի անուն կայ ուր Հայեր ապրած են ու տարագրուած: Նոյն փաստաթուղթերը կը պարունակեն նաեւ աքսորուած Հայերու պատկանող կալուածներուն ցանկերը: Անոնց համաձայն, այդ կալուածներուն թիւը 41.117 է:

Կ'անդրադառնանք աւելի մանրամասնօրէն:

ՏԷՎԷՃԵԱՆՆԵՐԸ ՊՈԼՍԷՆ ՓԱՐԻԶ

ՕՍՄԱՆՑԻ ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՆ ՀԱՏՈՐԸ ԵՒ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԹՈՌՆԻԿԸ

Պոլսոյ "Արաս" հրատարակչատունը որ լուրջ, բծախնդիր ու հետեւողական ընթացքով արդար գնահատանքի արժանացած է Թուրքիայէն դուրսի շրջանակներուն մէջ ալ, վերջերս կոթողային գործ մը կատարած է, վերհրատարակելով Գարեգին Տէվէճեանի "Թուրքիոյ մէջ ձուկ եւ ձկնորսութիւն" ստուար աշխատասիրութիւնը:

Հեղինակը եղած ըլլալով Պոլսոյ ձկնաբանին տնօրէնն ու ձկնորսութեան աւագ քննիչ, մեծ հմտութեան տէր է ջրային արտադրութեան ոլորտին մէջ: Աշխատասիրութիւնը 1915ին լոյս տեսած է օսմաներէն, յետոյ 1926ին ընդլայնուած լոյս տեսած է ֆրանսերէն, "Pêche et pêcheries en Turquie" խորագրով: Այս վերջինէն թրքերէնի թարգմանուած է վերհրատարակուած հատորը էրօլ Իւյէփազարճըի կողմէ որ օգտագործած է նաեւ օսմաներէն հրատարակութիւնը: Գործը հրատարակութեան պատրաստած է Ռոպէր Գոփթաշ, խմբագրած՝ Սոսի Տօլանօղլու: Կողքի նկարը պատրաստուած է 1926ի ֆրանսական հրատարակութեան կողքին ընդօրինակութեամբ:

576 էջնոց պատկերազարդ աշխատասիրութիւնը կը բաղկանայ երեք գլխաւոր գլուխներէ. Ձուկերը, Պատենաւորներ – կակղամորթեր, Ձկնորսութեան գործիքներ, առարկաներ: Յաւելուածներու բաժնին մէջ զետեղուած են բազմաթիւ տախտակներ, աշխարհագրական անուններու ցանկ, բառարան, քարտէսներ, անուանացանկ:

Թուրքիոյ մէջ իր տեսակին մէջ առաջին աշխատասիրութիւնն է ան որ մինչեւ այսօր ալ անմրցակից մնացած է. փաստը այն է որ համալսարանի ջրային արտադրութեան բաժնին ուսանողներուն յանձնարարուած է ան, հետեւաբար կարեւոր տոկոսով արդէն սպառած:

Գարեգին Տէվէճեան ծնած է 1868ին (կամ 1867ին) Խարբերդի մէջ. նախակրթութիւնը նոյն քաղաքին մէջ ստանալէ ետք աւարտած է Պոլսոյ Լուսաւորիչեան կաթողիկէ վարժարանը: 1891էն պետական զանազան պաշտօններ վարելէ ետք 1910ին նշանակուած է Պոլսոյ ձկնարանին տնօրէն, 1917ին ձկնային գործերու, իսկ 1922ին ձկնորսութեան աւագ քննիչ: 1927ին հանգստեան կոչուած է:

Ունեցած է մամուլի աշխատակցութիւն մըն ալ. 1893էն գիտական բազմաթիւ յօդուածներ ստորագրած է թերթերու, պարբերականներու մէջ: Այդ աշխատանքը 1948ին Թրքական մամուլի միութեան կողմէ պարգեւատրուած է որպէս յիսնամեայ վաստակի տէր լրագրող:

Գ. Տէվէճեան ունեցած է չորս զաւակ. Լեւոն, Շնորհիկ, Վահրամ եւ Գեղամ: Անդրանիկը հայրն է նախկին նախարար, ներկայիս ներքին գործերու նախարար Ն. Սարքոզիի խորհրդական Փաթրիք Տէվէճեանի:

Մահացած է 1964ին Պոլիս, թաղուած Շիշլիի հայ կաթողիկէ գերեզմանատան մէջ:

Մեծ հօրը հատորին վերհրատարակութիւնը պատճառ եղած է որ "Աքթիւէլ" շաբաթաթերթը (Ապրիլ 6-12) ծաւալուն հետաքրքրական հարցազրոյց մը հրատարակէ թոռնիկ Տէվէճեանին հետ, խորագրուած՝ "Օսմանցիին թոռնիկը 2007ին Ֆրանսայի վարչապետ":

Զրուցավար Պէլքըս Քըլըչքայա ցեղասպանութեան Ֆրանսայի կողմէ ճանաչումին մէջ գլխաւոր դերը կը վերագրէ Փաթրիք Տէվէճեանին. կ'ըսէ թէ ան տարիներէ ի վեր կը գտնուի ֆրանսական շրաղաքական բեմին վրայ, նախագահ Շիրաքի ամէնէն մօտիկ անձնաւորութիւններէն է, 2007ի նախագահութեան ընտրութեան ամէնէն հաւանական թեկնածու Ն. Սարքոզիի 30 տարուան բարեկամը, աջ բազուկը եւ խորհրդականը: Կ'աւելցնէ թէ շշուկներ կան որ Սարքոզիի ընտրութեան պարագային Տէվէճեան վարչապետ կը նշանակուի: Իսկ Թուրքիա զինք կը ճանչնայ որպէս "ԱՍԱԼԱ-յի փաստաբանը" եւ Անգարան թիրախ առնող յարձակունակ ելոյթներով:

Համացանցի անոր կայքէջին վրայ նախընտրած գրողներուն՝ Մ. Քունտէրայի եւ Մ. Տիւրասի շարքին է Օ. Փամուքը գոր կը ներկայացնէ որպէս "շատ մեծ թուրք գրող մը որուն շնորհիւ կարելի է վաղուան Թուրքիան հասկնալ ու յուսալ":

Հ. – 1915ը ի՞նչ նշանակութիւն ունի ձեզի համար:

Պ. – Ա. Աշխարհամարտին Հայերուն ուղղուած բնաջնջումի կամք մը խնդրոյ առարկայ է. կայ կանոնաւոր, կառավարութեան կողմէ պատրաստուած ծրագիր մը: Այս մասին ոչ մէկ տարակոյս: Սակայն տարագրութիւնը հրահանգողները դատուեցան: Կատարուածին տարողութիւնը այնքան մեծ է որ անկարելի կը դարձնէ ցեղասպանութենէն տարբեր որակում գործածել: Ամէն մարդ կը վկայէ թէ Ապրիլ 24ի գիշերը հայ ընտրանին ձերբակալուեցաւ, սպաննուեցաւ, աքսորուեցաւ: Այս կէտը ուրացողներու թեզերէն, բոլոր վիճարկումներէն դուրս կը մնայ, որպէս բոլորին յայտնի իրողութիւն: Թուրք բանակը Հայերը Լիբանան չտարաւ: Զորս հազար տարիէ ի վեր այդ հողերուն վրայ ապրողները –կին, երախայ, տարեց–, բոլորն ալ ղրկեց Սուրիոյ անապատները: Ո՛չ որպէսզի այլ տեղեր ապրին. այլ որպէսզի մահանան, անյայտանան.. Եթէ ճամբան չմեռար, ահագին Անատոլուն կտրեցիր ու դիպուածով ողջ մնացիր, անապատ կը հասնիս: Ասիկա ի՞նչ է եթէ ոչ ցեղասպանութիւն:

Հ. – Ճի՞շդ է Հրեաներու ցեղասպանութեան հետ համեմատել 1915ի դէպքերը ու զանոնք ցեղասպանութիւն որակել:

Պ. – "Ցեղասպանութեան որակումին համար բաւարար թիւով Հայ չսպաննուեցա՞ւ" ըսել կ'ուզէք: Անշուշտ տեղին է համեմատութիւնը: Երկու պարագային ալ այլ ազգ մը բնաջնջելու կամքը կայ եւ երկուքն ալ գործուած են աշխարհամարտի մը ընթացքին: Կրօնական եւ ընկերաբանական կացութիւնը որոշիչ ազդակ եղած է տրուած որոշումին մէջ: Ուրացողներու պատճառաբանութիւնները երկու ցեղասպանութիւններուն համար ալ նոյնն են: Այս համեմատութեան համար աշխարհ մը հիմնակէտ կրնամ ներկայացնել:

Հ. – Ինչպէ՞ս կը բացատրէք որ Հայերը դարերով "Հաւատարիմ համայնք" կոչուած, իրենց ընտրած վայրին մէջ հաստատուելու ազատութեան տէր միակ հաւաքականութիւնը եղած են: Պետութեան բարձրագոյն մակարդակին վրայ պաշտօններ ունեցած են ու դարերով ոչ մէկ հարց ծագած է: Ասով հանդերձ ի՞նչպէս եղաւ որ 1915 պատահեցաւ:

Պ. – Օսմանեանն ալ այլ կայսրութիւններուն նման զինուորական նուաճումներով հիմնուեցաւ: Խաչակիրներու արշաւանքներէն ետք մինչ Արեւմուտքի մէջ այլ կրօնքներ ճանչցուած չէին, ան կրցաւ օրթոտոքս կրօնքին վայելած լայնախոհութիւնը պահպանել, ճանչցաւ կրօնական ազատութիւնը եւ երկար ատեն ապահովեց կարեւոր եւ տրամաբանական համերաշխութիւն մը: Կայսրութիւնը ԺԹ. դարուն արդիականացումի տագնապ մը ապրեցաւ, չյաջողեցաւ անցնիլ դաշնակցային կառոյցի մը: Ասիկա միակ ճարն էր զանազանութիւնը միասնական պահելու, պահպանելու եւ ազգայնական ընդհանուր հոսանքին դէմ պաշտպանուելու: Թուրքիոյ արդիականացումի շարժումին, բոլորը հաւասար նկատող օրինավիճակի մը անցքին Հայերը լայն չափով նեցուկ կանգնեցան ու մասնակից եղան: Երիտասարդ Թուրքերը Եւրոպայի ազգայնական, միւս շարժումներուն նման կը պաշտպանէին ըմբռնում մը որ ազգային կը փառաբանէր ու միատարր ազգի մը կողմակից էր: ԺԹ. դարուն բոլոր ժողովուրդները ազգայնական այս հոսանքով կայսրութիւնը ալեկոծեցին. Թուրքերը, միւսները եւ բնական է Հայերն ալ ետ չմնացին: Այսուհանդերձ 1915ը մէկ գիշերուան մէջ տեղի չունեցաւ: Հայերուն ուղղուած քանամեայ բնաջնջումի շարժում մը խնդրոյ առարկայ է:

Հ. – Ինչո՞ւ Օսմանցին ազգայնական մրւս շարժումներուն տուածէն տարբեր, տարագրութեան վճիռ արձակեց Հայերու դէմ:

Պ. – Հայերը Անատոլուի մէջ, Օսմանցիին սրտին վրայ կ'ապրէին: Ծայրամասերու ապստամբները բանակով, պատերազմով պիտի ճնշուէին: Դժուար էր անշուշտ, եւ արդէն կայսրութեան հողերը պատերազմական պարտութիւններով կորսուած էին. Յունաստանը, Ալպանիան... Ասոր փոխարէն աւելի դիւրին էր յաջողիլ հոն ուր արդէն բանակը տեղւոյն վըրայ էր: Յաւելեալ, անկախացումի պահանջը կայսրութեան սրտին վրայ զետեղուած էր: Այսուհանդերձ, կը կրկնեմ՝ տարագրելու վճիռը արձակուած է ամբողջ ժողովուրդի մը համար: Այսինքն, ազգայնականները լռեցնել չէ հարցը: Բոլոր Հայերը –երախայ, կին, տարեց– բընաջնջելու ծրագիր է: Հայկական կարգ մը կազմակերպութիւններու Աբդուլհամիտին դէմ մահափորձերը կը յիշեցնէք ինծի, սակայն ի՞նչ կրնամ ըսել. ոմանք "դիւրին մը մեռնինք", "մեզ թող բնաջնջեն" չեն ըսեր, կը դիմադրեն: Յեչեցընեմ թէ ահաբեկիչ բառը առաջին անգամ Ժ. Կէօպէլսի կողմէ գործածուած է:

Հ. – Թուրքիոյ Անկախութեան պատերազմին Թուրքերուն հետ պատերազմած ու մեռած Հայերը դաւաճա՞ն են:

Պ. – Անշուշտ կան Թուրքերուն հետ պատերազմող Հայեր: Այդ պատճառով Թուրքերը միւսները դաւաճան կը կոչեն: Մինչ մէկ կողմէ Հայերը կը բնաջնջուին, մնացեալը Թուրքերուն հետ պատերազմելէ չէր կրնար խուսափիլ:

Թարգմանեց՝ Ա. Թ.

(Մնացեալը յաջորդիւ)

ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈՂ ԱԼ ԿԱՅ

"Էօզկիւր Կիւնտէմ" քրտական օրաթերթին մէջ (Ապրիլ 19) Այշէ Կիւնայսու "Ներողութիւն կը խնդրեմ" խորագրուած յօդուած մը հրատարակած է, ներշնչուելով Թուլա Աքեօլին գրութենէն ("Միլլիյէթ", Ապրիլ 16) ուր այս վերջինը թելադրած է որ բոլոր Հայերէն մէկ-մէկ ներողութիւն խնդրուի:

Ա. Կիւնայսու երեւակայելէ ետք թէ Թուրքիոյ մամուլը, գրողները, արուեստագէտները, ակադեմականները կ'ընդառաջեն այդ թելադրանքին, կ'ըսէ թէ ինք ալ գոչած է. "Ներողութիւն կը խնդրեմ": Յետոյ կը թուէ այն պատճառները որոնք կ'արդարացնեն իր այդ խնդրանքը. ուշ տեղեկացած է ճշմարտութեան, համայնավար նկատելով հանդերձ ինքզինք, բնաւ չէ հետաքրքրուած ցեղասպանութեան նիւթով, հանդիսատես մնացած է երկրին պաշտօնեաներուն, մտաւորականներուն, մեռեալներու յիշատակը անարգելուն, եւլն.:

Լրագրողուհին այդ տրամադրութեամբ կը քննադատէ Ապրիլ 18ին "Ռատիքալ"ի մէջ լոյս տեսած Կ. Աքթանի գրութիւնը, որ յստակ զանազանութիւն կը դնէ Հրեաներու եւ Հայերու ցեղասպանութիւններուն միջեւ, ի վնաս բնականաբար երկրորդին: Կ'ըսէ թէ Կ. Աքթան ամէնէն լաւ գիտցողներէն մէկն է իրականութիւնը. տարբերութիւնը այն եղած է որ Գերմանացիները պատերազմէն պարտուած դուրս եկած են, իսկ 1915ի ոճրագործները՝ յաղթական: "Այդ պատճառով ալ որեւէ մէկը յանցանքի պախուց չձերբակալուեցաւ. մէկը չկրցաւ լուսանկարել այն գետերը որոնցմէ ջուրի փոխարէն արիւն կը հոսէր: Այն հողը որ երկինքը մթագնելու աստիճան դիակներով բեռնաւոր էր եւ ուր եկեղեցիները կը ոմբակոծուէին: Ո՛չ ոք կրցաւ լուսանկարել քարուքանդ սրբուած գիւղերն ու գիւղաքաղաքները: Եւ քանի որ այդ էր պարագան, պետութեան բարձրաստիճան դէմքերը միշտ ուրացան ու ժխտեցին":

Ա. Կիւնայսու կ'ըսէ թէ այս բոլորին տեղեակ ըլլալով հանդերձ եթէ Աքթան կրցած է այնքան անամօթաբար գրել ու ծաղրել սերունդէ սերունդ փոխանցուած հայկական ողբերգութիւնը եւ վստահ է թէ նման գրութեան համար պիտի չվըճարուի ու պիտի շարունակէ գրել, իսկ ինքը եթէ շարունակէ կարդալ այդ թերթը, գոնէ ատոր համար ներողութիւն կը խնդրէ:

ԱՊՐԻԼԵԱՆ

ՍԵՒՐ

Առաջին անգամ ըլլալով Մեծ Եղեռնի 91րդ տարելիցը ոգեկոչուեցաւ Ապրիլ 22ին Սեւրի մէջ: Շուրջ հարիւր հոգի, որոնց մէջ Մխիթարեանի միօրեայ դպրոցի տասնեակ մը աշակերտներ, համախմբըուեցան հինգ տարի առաջ զետեղուած խաչքարին առջեւ, դէմ յանդիման այն շէնքին ուր 85 տարի առաջ ստորագրուեցաւ Սեւրի դաշնագիրը: Արարողութիւնը սկըսաւ ծաղկեպսակներու զետեղումով. յաջորդաբար՝

Փարիզի Քրտական հիմնարկը, Շաւիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Ֆրանսական բանակի նախկին ռազմիկներու միութիւնը, Փարիզի Հայկական Միութիւններու Համարկումի Խորհուրդը (CCAF), Սեւրի քաղաքապետը:

Ապա, Շաւիլի Հայոց եկեղեցիի հովիւ Տէր Գրիգոր Աբղյ. Խաչատրեան, խաչքարին առջեւ հոգւոյ մը արտասանեց, մինչ դրօշակները կը խոնարհէին եւ քանի մը րոպէ լռութիւն կը յարգուէր:

Այս առաջին բաժինի աւարտէն վերջ, ժողովուրդը ուղղուեցաւ դէպի քաղաքին մշակութային կեդրոնը (SEL) ուր խօսք առին հետեւեալ անձերը.

– Հրայր Հրաչեան՝ Շաւիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ատենապետ, որ Եղեռնի կարճ պատմականը ըրաւ նշելով որ մարդկային ցեղասպանութիւնը շարունակուեցաւ մշակութային ցեղասպանութեամբ մը որ կը տեւէ մինչեւ այսօր:

– Անթուան Պաղտիկեան՝ նախկին Ռազմիկներու միութեան նախագահ, որ կարդաց Ֆրանսայի սպաներու եւ քաղաքական դէմքերու գրաւոր արտայայտութիւնները Հայերու մասնակցութեան համար ֆրանսական բանակին երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին:

– Ալէքսի Կէօվճեան՝ Սէ.Սէ.Ա.էֆ-ի նախագահ, որ շեշտը դրաւ ժխտողականութիւնը դատապարտող նոր օրէնքի մը ընդունման անհրաժեշտութեան վրայ: Ան մատնանշեց խլամի եւ ծայրայեղութեան վտանգները եւ եզրակացուց ըսելով որ պայքարը արդարութեան եւ ճշմարտութեան պայքարն է:

– Ֆրանսուա Քոսխուքօ-Մորիզէ՝ Սեւրի քաղաքապետը, իր կարգին խօսեցաւ այդ մեծ ոճրագործութեան մասին: Յիշեց Սեւրի դաշնագիրը, արտայայտեց իր հակառակութիւնը Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան եւ մաղթեց որ Թուրքիան ալ, ինչպէս շատ մը երկիրներ, կատարէ իր պատմութեան վերանայման աշխատանքը: Ելոյթը աւարտեց փառաբանելով հայ-ֆրանսական բարեկամութիւնը:

Նշենք որ ոգեկոչմանը ներկայ էր նաեւ ֆրանսական պետութեան ներկայացուցիչ՝ Հօ-տը-Սէնի փոխ նահանգապետ Ֆ. Լամըլօ, ինչպէս նաեւ Պրն. Պէնսուսան՝ Սեւրի հրեայ համայնքի պատասխանատու, Շաւիլի, Մէօտոնի եւ Գլամարի ներկայացուցիչները, թրքական հեռատեսիլի լրագրողուհի մը: Արարողութիւնը աւարտեցաւ ընդունելութեամբ մը:

ՇԱՒԻԼ

Շաւիլի մէջ, ցեղասպանութեան 91ամեակը նշուեցաւ Կիրակի Ապրիլ 23ին, նախ հոգեհանգստով որ կատարեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Գրիգոր Աբղյ. Խաչատրեան կիրակնօրեայ պատարագի աւարտին: Ապա, ժողովուրդը, մօտ հարիւր հոգինոց թափորով, ուղղուեցաւ դէպի հայկական յուշարձան ուր տեղի ունեցաւ պաշտօնական արարողութիւնը: Նախ ծաղկեպսակներ զետեղեցին Շաւիլի կրօնական ընկերակցութիւնը, Շաւիլի քաղաքապետը եւ Մէօտոնի քաղաքապետը: Զօրակցութեան եւ համակրանքի դերեր յղած էին Նիքոլա Սարքոզի, Ռ. Պատէնթէռ, Հօ տը Սէնի նահանգապետ Միշէլ Պառօ եւ մերձակայ քաղաքներու քաղաքապետերը (Վերսայլ, Վիրոֆլէ, Սեւր, Վիլ Տաւրէ):

Յաջորդաբար խօսք առին Գրիգոր Աբղյ. Խաչատրեան որ (հայերէն) ընդգծեց Յիսուսի Գողգոթային եւ Հայոց

ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

չարչարանքին եւ չարունակեց. «Անոնք մեռան որպէսզի մենք ապրինք, ինչպէս հողը ինկած հունտը որ նորէն կը ծաղկի»: Ճառը կարդացուեցաւ նաեւ իր ֆրանսերէն թարգմանութեամբ:

Ցաջորդ բանախօսն էր Ստեփան Թոփալեան որ յանուն Շաւիլի կրօնական ընկերակցութեան, բացատրեց ցեղասպանութեան, ներկայ օրէնքին ծրագրուած բ. յօդուածի յաւելումը, որով կալ եկի կ՚ուզ ժխտողականները դատապարտել: Ան յիշեցուց որ այդ կարեւոր եւ անհրաժեշտ որոշումը պիտի տրուի յառաջիկայ Մայիսին ֆրանսական խորհրդարանի յատուկ նիստի մը ընթացքին, ընկերվարական կուսակցութեան նախաձեռնութեամբ:

Իր կարգին, Ժան-Ժաք Կիյէ (Իւ.Էմ.Փէ), երեսփոխան եւ Հօ ալ Սէնի ընդհանուր խորհուրդի նախագահը, կարեւորեց նահատակներու յուշարձաններու անհրաժեշտութիւնը որոնք "մեռելներուն շիրիմ մը կ՚ըլլան եւ Թուրքիոյ ուղղուած շեշտակի ազդանշաններ են որպէսզի ան իր անցեալը վերանայի": Հայոց ժամանակակից պատմութեան քաջածանօթ երեսփոխանը հաւաստեց որ նոր օրէնքին ի նպաստ պիտի քուէարկէ եւ իր խօսքը աւարտեց ըսելով թէ այսօրուան քէմալական Թուրքիան ժառանգորդն է Երիտթուրքերու Թուրքիային եւ որ որեւէ ձեւով ան չի կրնար անդամակցիլ Եւրոպայի:

Վերջին ելոյթ ունեցողը եղաւ Շաւիլի քաղաքապետ Ժան Լըվէն (ձախ արմատական): Ան իր վշտակցութիւնը յայտնելէ վերջ ներկաները զարմացուց երբ յայտարարեց "1915ին Թուրքիան, համեմատաբար զարգացած եւ բարգաւաճ երկիր մըն էր" եւ ուր "200.000 Հայեր կը ծառայէին Թրքական բանակին մէջ" առանց ճշդելու անոնց վերապահուած ողբալի ճակատագիրը... Վերջաւորութեան, քաղաքապետը դրուատեց Շաւիլի հայ համայնքը, իր օրինակելի ընթացքին համար:

Արարողութիւնը վերջ գտաւ Հիլտա Գալֆայեան-Փանոսեանի երգած "Տէր ողորմեա"յով:

ԹՂԹԱԿԻՑ

ՄԻԼԱՆՕ

Երկուշաբթի Ապրիլ 24ին, առաւօտեան ժամը 10:30ին, Հայոց Ցեղասպանութեան 91ամեակին առիթով, առաջնորդութեամբ Իտալահայոց Հոգեւոր Հովիւ Առէն Արքյ. Շահէնեանի, Միլանոյի Ս. Ամպրոսիոս հնամենի մայր տաճարին մէջ մեծաշուք հանդիսաւորութեամբ մատուցուեցաւ Պատարագ, ի յիշատակ Ապրիլեան նահատակաց մերոց որք կատարեցան յընթացս համաշխարհային Առաջին պատերազմին ծրագրեալ մեծ եղեռնի, այլ եւ Արցախեան գոյամարտին: Սուրբ եւ Անմահ Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Մուշեղ Արքյ. Բաբայեանը:

Պատարագի արարողութեան ներկայ էին Իտալիոյ մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Ռուբէն Շուգարեանը, Միլանոյի քաղաքապետի ներկայացուցիչը, տեղի քոյր եկեղեցիներու ներկայացուցիչը, Միլանոյի եկեղեցական խորհրդի անդամները, Միլանոյի մէջ հաստատուած Էքիւմենիք կեդրոնի ներկայացուցիչները, Իտալիոյ Հայոց Հիւրնուեթեան ազգային-եկեղեցական հոգաբարձութեան անդամները՝ գլխաւորութեամբ ատենապետ Պրն. Սարօ Խուտավերտեանի, Իտալիոյ Հայոց միութենական վարչութիւններու ներկայացուցիչները, տեղաբնակ բազում հայորդիներ, ինչպէս նաեւ իտալացիներ:

Իր խօսքին մէջ պատարագիչը կարեւորութեամբ կ՚ընդգծէր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը, շեշտեց նաեւ որ, «Մեծ Եղեռնի նահատակներուն նուիրուած յարգանքի այս յուշատօնին, մենք ոչ միայն մեր խոր յարգանքն է, որ կը մատուցանենք մեր անշիրիմ մէկուկէս միլիոն նահատակներուն, այլեւ մենք մեր նահատակները կեանքի կը հրաւիրենք, կը խօսեցնենք իբրեւ ստոյգ պատգամ ու անմահ խորհուրդ որպէսզի յետ մահու անոնց յիշատակը չթառամի եւ կ՚ուխտենք՝ անոնց նման Ազգն ու Եկեղեցին բարձր պահել ամէն բանէ վեր»:

Իր քարոզէն ետք խօսք առաւ Տիմիթրի Ֆանթինի Իտալիոյ Ռուս Ուղղափառ եկեղեցւոյ ներկայացուցիչը որ իր խօսքը աւարտեց ըսելով. «Այսպիսով, այս ողբերգութիւնը կը համարենք որպէս քրիստոնէական ցեղասպանութիւն, վկայութիւն, որ քրիստոնէական հաւատքը ունի մարտիրոսութեան սուրբ կնիքը»:

Ցաւարտ Պատարագի ներկայ բազմութիւնը թափոր կազմած, մոմերով եւ ծաղիկներով ուղղուեցաւ դէպի նոյն եկեղեցւոյ հարեւանութեամբ զետեղուած՝ Հայոց Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներու յիշատակը յաւերժացնող յուշակոթող-խաչքարը, ուր Միլանոյի հայոց Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ երգչախումբը, գլխաւորութեամբ Պրն. Ժան Անսըլեանի, հնչեցուց "Անոնց համար, որ ինկան" երգը (խօսք՝ Վահան Թէքէեանի):

Ոգեկոչման այս բացառիկ արարողութիւնը մեծապէս տպաւորած էր ներկաները, որոնք գիրար կ՚ողջունէին արցունքոտ աչքերով եւ գոհունակ սրտով. այն հաստատ համոզումով, ոգեկոչման այս արարողութիւնները պիտի շարունակուին մինչեւ որ ցեղասպանը ընդունի իր կատարած ոճիրը եւ հայ ժողովուրդին 91ամեայ դատը արդար լուծում մը գտնէ:

Արարողութիւնը աւարտին հասաւ Տէրունական "Հայր Մեր" աղօթքով:

ԴԻՐԱՆ ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ

Ապրիլ 24

ՄԻՋՎԱՐԺԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

ՄԱՐՍԷՅԼ

Պոլսահայ Մշակութային միութեան կազմակերպած 20րդ միջվարժարանային արտասանութեան մրցումը այս տարի տեղի ունեցաւ Կիրակի Ապրիլ 2ին, Ս. Թարգմանչաց մայր եկեղեցւոյ Ա. Ջրբաշեան սրահին մէջ:

Ամէն տարի մեծ հետաքրքրութեան արժանացող սոյն ձեռնարկը, այս տարի անգամ մը եւս եկած էր ամբողջութեամբ լեցնել սրահը: Խուռներամ հանդիսատեսներ եկած էին ունկնդրել մեր մայրենին, միօրեայ եւ ամէնօրեայ 4 դպրոցներէ ժամանած մօտ 30 մանուկներու շըրթներէն:

Օրուան հանդիսավար Օրդ. Մարթա Պասմաճեան, նախ Տէրունական աղօթքի հրաւիրեց ներկաները, ապա խօսքը տըւաւ միութեան ատենապետ Պրն. Սարգիս Տուրսունեանի: Պրն. Տուրսունեան իր բացման խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնելէ յետոյ մասնակից դպրոց, ուսուցչաց կազմ, աշակերտ եւ ծնողներու, ի մասնաւորի շեշտելով ըսաւ. «Այս մըրցոյթին մէջ շահող կամ կորսնցնող չկայ, այլ միակ մրցանակակիրը Հայ լեզուն է»:

Այս տարի մրցոյթին մասնակցութիւն բերած էին 4 դպրոցներ՝ Լիոնէն Դաւիթեան եւ Կապոյտ Խաչի միօրեայ վարժարանները, իսկ Մարսէյլէն՝ Համազգային ամէնօրեայ եւ Խ. Աբովեան միօրեայ վարժարանները, որոնք մասնակցեցան 4 տարիքի մակարդակներու վրայ՝ 6-9, 9-11, 11-13 եւ 13-16:

Դատակազմին մաս կը կազմէին 4 դըպրոցներէ մէկ-մէկ ներկայացուցիչ՝ Դաւիթեանէն՝ Անդրանիկ քահանայ Մալճեան, Կապոյտ Խաչէն՝ Տիկ. Թամար Ստեփանեան, Համազգայինէն՝ Տիկ. Լուսի Մալիքեան եւ Աբովեանէն՝ Տիկ. Սիլվա Աշըքեան, նաեւ 3 անձեր նշանակուած միութեան կողմէ՝ Տիկ. Նուշիկ Գուզուլեան, Պրն. Արման Ջէքիքեան եւ Տիկ. Անի Ցովսէփեան:

Առաջին հերթին, մրցոյթի մասնակցող աշակերտները բեմ բարձրացան արտասանելու համար նախ մակարդակի համաձայն ընտրուած հետեւեալ պարտադիր արտասանութիւնները, 6-9 տարիքի համար Խ. Դաշտենցէն՝ "Մեսրոպ Մաշտոց", 9-11 տարեկաններու համար՝ Ա. Տատըրեանէն "Ա.Բ.Գ.Դ.", 11-13 տարեկաններու համար Ս. Մուրատեանէն "Իմ Հայաստան", իսկ 13-16 տարեկաններու համար Պ. Սեւակէն "Հայաստան": Տրուեցաւ 15 վայրկեան դադար, որուն ընթացքին դատակազմը ընտրեց ամէն մէկ մակարդակէն հինգական լաւագոյն արտասանողներ: Դժուար էր դատակազմին ընտրութիւնը, տրուած ըլլալով թէ՝ առաջին երեք մակարդակներու վրայ, բոլոր երախաներն ալ թէ՛ առոգանութեամբ, թէ՛ ոճով եւ շեշտով շատ յաջող էին եւ մեզ ակամայ թէ՛ յուզումի, թէ՛ ծիծաղի պահեր ապրեցուցին: Երկրորդ հերթին, ընտրուած հինգական աշակերտները այս անգամ բեմ բարձրացան ազատ արտասանութիւններով, աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշխումը: Առաջնութեան յատկացուած էր՝ ոսկէ մետալ, Հայաստանի քարտէս. երկրորդութեան՝ 75 Եւրօ տրամադրուած՝ երկու մակարդակներու համար Մարսէյլի Ս. Թադէոս-Բարթողիմէոս եկեղեցւոյ կողմէ, իսկ միւս երկու մակարդակներու համար մէկը՝ Թէաթր Ժիրաֆի, իսկ միւսը Վալանսէն Տիկ Գափոյեանի կողմէ. երրորդութեան՝ ոսկեզօծ մետալ, չորրորդութեան՝ արծաթ մետալ, նաեւ բոլոր մասնակից երախաներուն տրուեցան մետալներ:

6-9 ՏԱՐԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԷՆ.-

Առաջին - Գառնի Հարպոյեան - Կապոյտ Խաչ, Վալանս. Երկրորդ - Անգինէ Ռաստկէլէեան-Դաւիթեան, Վալանս. Երրորդ - Սիլվի Պաքքալեան - Դաւիթեան, Վալանս. Չորրորդ - Սերովբ Եաղըր - Համազգային:

9-11 ՏԱՐԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԷՆ

Առաջին - Լոռի Զորտուքեան - Համազգային. Երկրորդ - Մինաի Ռէժան - Դաւիթեան. Երրորդ - Արամ Երեմեան - Համազգային. Չորրորդ - Փօլին Սադըխեան - Համազգային:

11-13 ՏԱՐԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԷՆ

Առաջին - Դրօ Պզտիկեան - Համազգային. Երկրորդ - Գոռիս Խայիկեան - Համազգային. Երրորդ - Լուսինէ Պապայեան - Խաչատուր Աբովեան. Չորրորդ - Քէնթէն Փիւյօլ - Համազգային:

13-16 ՏԱՐԻՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԷՆ

Առաջին - Ալպէր Տէր Արսէնեան - Համազգային, Երկրորդ - Սամանթա Բոչարեան - Համազգային, Երրորդ - Թամար Սիրանոսեան - Դաւիթեան:

Իսկ 4 մակարդակներու մէջէն ամենալաւագոյն արտասանողը ստացաւ 150 Եւրօ, տրամադրուած Մայր եկեղեցւոյ կողմէ, Սիմիթեան կտակէն: Սոյն մրցանակին այս տարի անգամ մը եւս արժանացաւ Վալանսի Կապոյտ Խաչի միօրեայ վարժարանէն՝ Ցարութ Հարպոյեան, արտասանելով Համբարձում Մարտիրոսեանի երկարաշունչ "Նահատակներ" բանաստեղծութիւնը:

12ամեայ այս երախան բացառիկ խոստմնալից արտասանող մը ըլլալով, կախարդեց ոչ միայն դատակազմը այլ նաեւ ունկնդիրները, որոնք յոտնկայս եւ տամկացած աչքերով երկարօրէն ծափահարեցին զինքը: Ան գրաւեց սիրտերը անգամ մը եւս երբ մրցանակը ստացած պահուն համարձակօրէն, մաքուր հայերէնով մը արտայայտուեցաւ ըսելով թէ՝ երեք տարիէ ի վեր ստացած այս գումարին մէկ մասը կը յատկացնէ Հայաստան հիմնադրամին: Այսպիսի պատկերով մը երբ կը հեռանայինք սրահէն մօտենալով միութեան տիկնանցի կողմէ պատրաստուած ճոխ հիւրասիրութեան սեղաններուն, ակամայ կը խորհինք թէ Սփիւռքի մէջ ամէն բան շատ ալ սեւ չէ, ունինք տակաւին ապագայի սեւեռած յոյսեր:

ԱՆԻ ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐՏՕՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ

Թարգմանեց՝
ՎԱԶԳԷՆ ԲԱՄԳԱԿԵԱՆ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԻԿ

Գիշերը այսպէս ազատութեան խաբկանքներու որոգայթ մը կը հիւսուի: Իսաագ կը գտնէ Շուշանիկը որ կրկին գտած է իր արթնութիւնը, կիսով երկնցած է պզտիկներուն վրայ եւ հրահանգներ կը փսփսայ մօրեգին կերպով: Բայց անոնք այլեւս սովորութիւն չունին հնազանդելու, այլ ճամբարին մէջ հացի կտորի մը, հունտի մը, մոռցուած կեղեւի մը անօգուտ փնտռտուքին մէջ անհատնում թափառումներ կ՚ընեն: Աշխարհը գոցուեցաւ իրենց վրայ եւ կը ջանան վերապրիլ հետաքրքրութեամբ պրպտելով գետինը: Աչքերը պէտք չէ վեր վերցնել դէպի երկինք պարապ կամարը, հեղձուցիչ անշարժ տաքութիւնը, եւ պէտք չէ որ զիրենք տեսնէ վերի անողոք Աստուածը որ իրենց ամբողջ ուտելիքը կը պահանջէ ունենալ: (Ամիսներ շարունակ, փրկութենէն վերջ, պզտիկները երբեք պիտի չյոգնին խաղալէ իրենց հացով զոր Նուպար եւ Հանրիէթ պուպրիկի կը վերածեն):

Կ՚օգնէ իրեն մեծ աղջնակը, Արուսեակը, տգեղուկ, հանդարտ պարմանուհի մը, որ լռութեամբ կրեց իրեն վիճակած ընաբարութիւնները եւ ոչ մէկուն պատմեց: Հաւանաբար քիչ ալ հաճոյք նուիրեց զինքը առնող զինուորին, բայց բարկութիւն ալ չպատճառեց: Այսպէս, իրեն պահեց այդ ցաւը, մտածելով որ տարբեր ձեւ օգուտ չունէր:

Ազնիւ քիչ մը անդին նստած է, ինքն իր մէջ փակուած, նայուածքը պարապութեան մէջ: Իսաագ նախ կ՚երթայ իրեն, կու տայ ջուր եւ հաց. աղջիկը արագ շարժումով մը կ՚առնէ: Բայց ոչ մէկ հակազդեցութիւն անոր խօսքերուն: Իսաագ անձկագին կը վազէ Շուշանիկին քով, կու տայ ջրամանը եւ աւելցած հացը եւ մըրմունջով մը կ՚ըսէ իրեն. «Մայրիկ, այս գիշերուան համար է: Սելճուքը եւ ես ձեզ դուրս պիտի հանենք: Ջարեհ տաղրդկառքով պիտի գայ»: Շուշանիկ մտիկ կ՚ընէ եւ հին ժպիտի նշոյլով մը կը դիմաւորէ Իսաագը: «Դուն հաւատարիմ ես, Իսաագ: Պզտիկները եւ ես շնորհակալ ենք քեզի: Բայց մանաւանդ Սմբատ եւ միւս զաւակներս քեզի շնորհակալ են»:

Հրամանաւ սպային որ մեկնումները կը կազմակերպէ, կարաւանները աւելի խիստ հսկուած են: Հալէպ քաղաքին մէջ շատ են դժգոհները եւ խռովութիւն կայ: Արաբները անհանգիստ են եւ կոււազան: Ոչ մէկը կը սիրէ շրջապատուիլ աղտոտ ողբերգութիւններով, այդ սարսափները մօտէն տեսնել, ամբողջ շրջակայքին մէջ մահուան հոտը զգալ - եւ ոչինչ կարենալ ընել: Ջափթիէները նոյն կոշտութեամբ հեռու կը պահեն հետաքրքիրներու եւ կարեկիցներու բազմութիւնը:

Սելճուք արագ ասդին կը քաշէ "զարմիկ" Իսաագը եւ կը նստեցնէ գետինը հսկելու համար իր էշը: Այլեւս իրեն համար սովորութիւն եղած է ամբողջ օր մը անցընել լուռ, էշերուն հետ: Եւ շատ զանգատ ալ չունի այս վիճակէն: Կը քընանայ կամ կ՚աղօթէ:

***

Նազիմ իմացուց Իսմէնէի - եւ միայն իրեն - իր ժամադրութիւնը Ճելալի հետ: Եւ Իսմէնէ, չի գիտեր նոյնիսկ թէ ինչո՞ւ Նազիմ կ՚ուզէ Ճելալին հանդիպիլ: Ինք կը կարծէր որ Նազիմ միայն սպային մընայուն յաճախորդներէն էր: Բայց այլեւս անոր վրայ վստահութիւն ունի: Ամէն պարագայի Նազիմ ճիշդ ժամուն հիւպատոսարան պիտի վերադառնայ: Միաժամանակ, իրաւացիօրէն կը մտածէ որ Ճելալի հետ հանդիպումին համար Աստուած է որ իրեն ցոյց տուաւ ճամբան որուն պէտք է հետեւիլ: Այսպէս, հանդարտ ջուրի մը փոխ կ՚առնէ եւ Հալէպի գիշերային վխտացող փողոցներէն ճամբայ կ՚ելլէ, փրկութեան ուրիշ ուղկան մը հիւսելու համար: Բայց ի՞նչ ըսել Ճելալի: Ինչքա՞ն պատմել

(Շար. 91)

Պ. Թորգոմ Պասմաճեան եւ զաւակները Արէն եւ Րաֆֆի,
Տէր եւ Տիկին Պետրոս եւ Անի Պասմաճեան եւ զաւակները Ստեֆան եւ Սոֆի
եւ ընտանեկան բոլոր պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց քրոջ, հօրաքրոջ եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ
ՄԱՔՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ-Ի
(Ծնեալ՝ ՊԱՍՄԱՃԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 25ին, 99 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Ուրբաթ, Ապրիլ 28, ժամը 11ին Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցին
15 rue Jean-Goujon — 75008 Paris
ուրկէ մարմինը կը փոխադրուի Թիէի գերեզմանատունը, ժամը 13ին։

Որեւէ մահագդ դրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

"ՅԱՌԱՋ". – Մեր ցաւակցութիւնները Պասմաճեան ընտանիքներուն։

REMERCIMENTS

M. et Mme Armen PESHDIKIAN, et leurs enfants Rebeca, Bruce et Jena, M. Raffy Peshdikian, M. et Mme Lecocq, ses enfants et petits-enfants, très touchés par votre présence et par les marques de sympathie que vous avez témoignées sur le registre du souvenir, lors des obsèques de

NAZARETH PESHDIKIAN

leur père et beau père,
vous prient d'accepter leurs remercîments empreints d'une grande émotion.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

BOIS-COLOMBES

Le Dimanche 14 mai
à 16 heures 30
LA COMPAGNIE DE DANSE
YERAZ
présente
PARFUMS D'ARMENIE
Direction artistique :
Christina GALSTIAN-AGOUDJIAN
— Salle Jean Renoir —
7 Villa des Aubépines
92270 Bois-Colombes

Réservations :

01 56 83 91 03 — 06 24 33 35 86 — 06 14 74 92 97

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.
Reconnue d'utilité publique
par décret du 8 juin 1956

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԱԿՈՒՆՔՆԵՐ

2005 Նոյեմբեր 15ին Ը. Օ. Հ. Ընկերակցութիւնը բացաւ իր նոր կեդրոնատեղին, Ֆրանսայի մէջ ապրող ապաստանի դիմումը մերժուած եւ ապօրէնի կացութեան մէջ գտնըւող Հայերուն համար։

Գրասենեակիս աշխատակազմը սիրով կ'ընդառաջէ եւ կը տրամադրէ բարոյական ու դրամական աջակցութիւն եւ ցոյց կու տայ մասնագիտական տեղեկութիւններ բոլոր այն անձերուն, որոնք կ'ուզեն վերադառնալ Հայաստան եւ հոն լծուիլ նոր կեանքի մը։

Հայաստանի մէջ եւս կը շարունակէ ուղեկցիլ վերադարձողներուն եւ կ'օգնէ վերահաստատուելու գործընթացին, ընծայելով փոքր ձեռնարկութիւն ստեղծելու հնարաւորութիւններ։

Սոյն ծրագիրը կ'իրագործուի ապաստանեալներուն յատկացուած Եւրոպայի Հիմնադրամի Ֆինանսաւորմամբ և համագործակցութեամբ Գաղթականութեան Ազգային Գործակալութեան։

Հասցէ՝
5 rue Marché Ordener —
75018 Paris
Métro : Guy Moquet (ligne 13)
Jules Joffrin (ligne 12)
☎ 01 42 63 32 45 / 01 48 78 02 99
Ընդունելութեան ժամ. –
Աշխատանքի օրերուն ժամը 10էն 18։

U C F A F
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

Jeudi 4 mai à 20 heures 45
CONFERENCE - DEBAT
VARTAN BERBERIAN
«LE FIGUIER DE MON PERE»
Editions Anne Carrière

Portrait haut en couleurs d'une communauté discrète, travailleuse et solidaire. Ces mémoires sont un hommage de l'auteur aux siens, réfugiés en France au début des années 20, après avoir tout perdu au cours du génocide de 1915.

L'auteur dédicacera son livre.
P.A.F. : 6 Euros — Adhérents : 4 Euros

ԼԵԶՈՒՆ ԱԶԳԻՆ ՀՈԳԻՆ Է, ԴՊՐՈՑԸ ԱԶԳԻՆ ՏՈՒՆՆ Է։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ

2006-2007 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
տեղի կ'ունենան
ԱՊՐԻԼ 25-էն մինչեւ ՄԱՅԻՍ 31

RENTREE DES CLASSES 2006/2007

Inscriptions ouvertes du **25 avril** au **31 mai 2006**

TEBROTZASSERE
Ecole mixte bilingue
Franco - Arménienne
(Académie de Créteil)
1 Boulevard du Nord —
Carrefour d'Arménie
93340 LE RAINCY

Chef d'Etabissement :
Monsieur HAIG SARKISSIAN

- Maternelle: 3 sections
- Primaire: Sous Contrat Simple
- Collège: Sous Contrat d'Association avec l'Etat

Equipe pédagogique compétente et motivée

- Programmes officiels de l'Education Nationale
- Enseignement de la langue et de la culture arménienne
- Cours de chant : «Chorale Tebrotzassère»
- Cours d'informatique dès le primaire
- Langue vivante 1 : anglais
- Langue vivante 2 : allemand ou espagnol.

Equipements pédagogiques évolutifs :

Laboratoire de langues — Centre de Documentation et d'Information — Salle d'ordinateurs — Laboratoire de physique-chimie.

Ramassage scolaire par autocars suivant possibilités.
Cantine assurée.

Pour tout renseignement :

Tél. / fax : **01. 43. 81. 01. 72**
direction@tebrotzassere.com

23e CYCLE DE LECTURES MISES EN ESPACES D'ŒUVRES DE DRAMATURGES ARMENIENS

Direction : ARBY OVANESSIAN
Organisé par l'Association de THEATRE ARMENIEN

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ 23րդ ՇԱՐՔ

կազմակերպութեամբ՝
ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

(Ա. ՏՐԱԳԻՐ)

Henrik IBSEN
UN ENNEMI DU PEUPLE
Traduction/Adaptation - Levon SHANT

Հենրիք ԻԲՍԷՆ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԹՇՆԱՄԻՆ (1882)
Թարգմանութիւն/Պատշաճեցում՝
Լեւոն ՇԱՆԹ
(1949)

Կիրակի, Մայիս 14, ժամը 16ին
Dimanche 14 mai à 16 heures

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՈՍՏԱՆ
MAISON DES ETUDIANTS ARMENIENS
57 Boulevard Jourdan - 75014 PARIS
M° Pte d'Orléans / Cité Universitaire
Մուտքը՝ 5 Եւրօ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ ԳԻՐՔ ՆՈՒԻՐԵՑԷՔ
«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ	16€

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ	13€
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ	12€

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Տաղկախաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 19€

Դիմել՝ «ՅԱՌԱՋ» ի։
Թղթատարի ծախք՝ 6 €, հատոր գլուխ։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Section «Archalouisse Tatéossian» de Paris

Circuit en Arménie et Artsakh

Du 2 au 12 septembre (Arménie) ou du 2 au 14 septembre (Arménie + Haut Karabagh) — Pension complète sauf à Erévan (1/2 pension) — Hôtels 3 et 4 étoiles — Vol Air France — Prix à partir de 1280 Euros.

Renseignements et inscriptions :
— **Araxie :** 01 39 83 71 19.

Nombre de places étant limité, date limite d'inscription : **15 juin.**

□

CHAVILLE

Soirée Cabaret

La Section «Ter Tavtian» de Chaville organise le samedi 20 mai à partir de 20 heures une **Soirée Cabaret** avec Alain POSTURE, imitateur et GIGI la Fleur de Montmartre, chanteuse et French CANCAN, ainsi que Philippe et Vartan pour les musiques traditionnelles arméniennes.

□

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE organise
DU 24 MAI AU 8 JUIN
— 16 jours —

un Voyage en Arménie
Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 29-30
SAMEDI-DIMANCHE
29-30 AVRIL
2006

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 Եւրօ — Վեցամսեայ : 135 Եւրօ
Արտասահման : Տար. 300 Եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 Եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 Եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

81ՐԴ ՏԱՐԻ - 21.444 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 81e ANNEE — N° 21.444

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼՂՀ

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Նախագահ Ա. Ղուկասեան Ապրիլ 27-ին ընդունած է Հայաստանի ու Ղարաբաղի միջեւ գործակցութեան յանձնաժողովին աշխատանքներուն մասնակցելու համար Ստեփանակերտ գացած Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւնը: Քննարկուած են միջխորհրդարանական կապերը ընդլայնելու առընչուած հարցեր:

Նոյն օրը Ստեփանակերտ գացած է նախարար Վ. Օսկանեան հանդիպումներ ունենալու Նախագահ Ա. Ղուկասեանի, խորհրդարանի ու կառավարութեան ղեկավարներու, նաեւ ԼՂՀ իր պաշտօնակից Գ. Պետրոսեանի հետ: Երկօրեայ այցին ընթացքին Վ. Օսկանեան, զեկուցումով հանդէս կու գայ նաեւ Ստեփանակերտի համալսարանին մէջ:

***

ՋԱՒԱԽՔ

ԸՆԴՀԱՐՈՒՄ ԾԱԼԿԱՅԻ ՄԷՋ

Ծալկայի յունական Եափքիլիսա գիւղին մէջ Հայեր եւ Յոյներ ծեծկուած են վերաբնակ սուաններու հետ: Պատճառը այն եղած է որ սեղանի մը վրայ Հայերն ու Յոյները իրենց ժողովուրդներուն կենացը խմած են, ինչ որ հաճելի չէ թըւած միւսներուն: Ծեծկուքին միջամտած են Ներքին գործերու եւ Ազգային ապահովութեան նախարարութեան ջոկատները, բայց այդ միջամտութենէն աւելի տուժած են Հայերն ու Յոյները:

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԻ ՄԸ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ

Բաքու լոյս տեսնող "Այնա" օրաթերթը (Ապրիլ 27) գրած էր թէ ռուսական լրատափիւռներուն մէջ հետաքրքրական նոր գաղափար մը յայտնուիլ սկսած է Ղարաբաղի հարցին կարգաւորման մասին, քանի որ մինչեւ հիմա առաջարկները բոլորն ալ կողմերէն չեն ընդունուած: Թերթը կ'աւելցնէ նաեւ որ դժուար է ճշդել թէ մէ՛կ հողիի մը յղացածն է ան, թէ "մտքեր չօշափելու" նպատակով շրջանառութեան դրուած է:

Իրենք ռուսական կայքէջէ մը տեղեկացած են առաջարկին որ կ'ըսէ. "Լեռնային Ղարաբաղի Ազրպէյճանի գերիշխանութեան վերադարձը, կամ անոր ամենալայն ինքնավարութիւն տալու գաղափարը իրատեսական չէ: Սակայն իրատեսական է Լեռնային Ղարաբաղին երկուքի բաժանումը Հայաստանի ու Ազրպէյճանի միջեւ: Ասկէ ետք Բաքու իր բաժինը նիւթական հատուցումի փոխարէն Հայաստանին կը ձգէ, գումարը ինք որոշելով: Այսինքն Բաքու իր հողին մէկ մասը դրամի փոխարէն կու տայ եւ Ղարաբաղի ու Հայաստանի միջեւ ցամաքային անցք ալ կը ձգէ: Հատուցումի գումարին մէկ մասը կրնան ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Եւրոպական Միութիւնը վճարել, մասնակցելով խաղաղութեան ապահովման":

Թերթը դիտել կու տայ թէ նման առաջարկ բերողները պէտք է գիտնան թէ Արեւմուտքի մէջ բառ կամ սահման գծելու շրջանը շատոնց փակուած է եւ ի զօրու են միջազգային օրէնքները, իրենց անփոփոխելի տրամադրութիւններով:

ԹՈՒՐՔԻԱ

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐ ԲԱՑՈՒԱԾ

Թրքական լրատափիւռներ Ապրիլ 26ին կը տեղեկացնէին թէ բացուած են Ապահովութեան տնօրէնութեան 1915ի տեղահանութեան առընչուած արխիւները: Տրուած Գ. տեղեկութիւնը այն էր թէ անոնք կը փաստեն որ օսմանեան պետութիւնը ցեղասպանութիւն գործած չէ...

Բացուած արխիւները կը պարունակեն Ներքին գործերու նախարարութեան ու Ապահովութեան տնօրէնութեան միջեւ թղթակցութիւնները. փաստաթուղթերը ամփոփուած են երկու հատորի մէջ: Առաջինը կը պարփակէ 1914-16 թուականներու 5.940 փաստաթուղթ, երկրորդը 1914-21ի 9.193 փաստաթուղթ: Ըստ նոյն աղբիւրներուն, փաստաթուղթերը կը վերաբերին Հայերու ճամբորդելու դիմումներուն, փախստականներու, կամ կասկածելիներու մասին հետաքննութեան, գաղթականներու կացութեան: Յայտնի կ'ըլլայ որ Ապահովութեան տնօրէնութիւնը հետաքննութիւն սահմանած է ԱՄՆ-ու, Եւրոպայի Հայերուն մասին ալ: Տրուած օրինակներուն մէջ կայ Կոմիտաս Վարդապետին դարմանումի համար Վիէննա մեկնելու արտօնութիւնը:

ԱՄՆ

ԳՈՆԿՐԷՍԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՆԱԼՈՒ ԿՈՉԸ

Ներկայացուցչական ժողովին մէջ Ցեղասպանութեան ոգեկոչումի հանդիսութեան մասնակից երեսփոխաններ կոչ ուղղած են Թուրքիոյ, ճանչնալու Հայկական Ցեղասպանութիւնը: Անոնք ծանրօրէն քննադատած են Թուրքիան, չեշտելով այն գաղափարը թէ այդ երկիրը ԱՄՆ-ու դաշնակից նկատողները պէտք է գիտնան թէ ոչինչով կ'արդարանայ սուտի վրայ հիմնուած քաղաքականութիւն մը: Ծերակուտական Փ. Սարպանէս ըսած է. "Եթէ այլ երկիրներ կը յաջողին ճշմարտութեան մասին խօսիլ, մեր երկիրն ալ պէտք է կարենայ". ապա պահանջած է որ ԱՄՆ-ու Արտաքին գործերու նախարարութիւնը պաշտօնապէս խւրացնէ ցեղասպանութեան թեզը:

Մասնակիցներէն ոմանք, ինչպէս Ներկայացուցչական ժողովէն Ս. Քէյլի նշած են թէ Եւրոպական Միութիւնը Թուրքիոյ անդամակցութեան պայման պէտք է դնէ Ցեղասպանութեան ճանաչումը: Իսկ նոյն ժողովէն, ուրիշ անդամ մը Գ. Մալոնէյ յայտարարած է թէ ստորագրութեան հաւաքի ձեռնարկած են նամակի մը որով Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան ճանաչումի պայմանը կը պահանջեն:

Ելոյթ ունեցողներէն, նմանապէս Ներկայացուցչական ժողովի անդամ Ս. Ռոթման Տարֆուրի մէջ այսօր ապրուածը նմանցուցած է Օսմանեան կայսրութեան Հայերուն դէմ գործուածին, իսկ Տ. Փէյն ըսած է. "Եթէ Հայերու Ցեղասպանութեան յանցանքին հաշուեյարդարը տեսնուած ըլլար, թերեւս նացիները չէին յանդգներ Ողջակէզը կազմակերպելու եւ Գամպոճի, Ռուանտայի, Տարֆուրի ցեղասպանութիւններն ալ կը կանխարգիլուէին":

Նոյն հաւաքոյթին որպէս "պատուոյ հիւր" մասնակցած են մօտ հարիւրամեայ չորս վերապրողներ:

ՄԱՅԻՍ ՄԵԿԻ աշխատանքի տօնին առթիւ "Յառաջ" լոյս չի տեսներ Երկուշաբթի, Մայիս 1ին (Երեքշաբթի, Մայիս 2ի թիւ): Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի, Մայիս 3ին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԼԻՐՍԹՐԻՄԻ հարցին մասին, հարց մը որ դեռ կը շարունակէ ապականել կառավարութիւնը, Տ. տը Վիլփէն լայն բացատրութիւններ կու տայ Ֆիկառոյի մէջ (Ապրիլ 28): Ծանօթ է որ հարցը ծագած էր 2001ին Լիւքսանպուրկի մէջ (Գլիրսթրիմ ֆինանսական լիւքսանպուրկեան հաստատութիւն մըն է) "ապօրէն խարդախութեան եւ դրամին օրինականացման" համար եւ գիրքի մը պատճառաւ ու արագօրէն փակուած էր: Բայց, 2004 Մայիսին "աղուէ" մը նամակ մը գրած էր դատաւոր վան Ռիւյմպէքէ ուր անուանացանկ մը կը տրուէր անձնաւորութիւններու, ի շարս որոնց Ն. Սարքոզիի, որոնք հաշիւներ ունին արտասահման, դատական քննութիւն բացուած էր եւ պարզուած որ ամբողջ գրպարտութիւնները եւ մատնութիւնները շինծու խաղի մը հետեւանքներն են: Բայց, հարցը չէր փակուեր, խուզարկութիւններ կը կատարուէին (Պաշտպանութեան նախարարութիւն եւ այլուր): Այդ շրջանին Տ. տը Վիլփէն Արտաքին, ապա Ներքին նախարար եղած էր եւ Սարքոզի կը մեղադրէր Տ. տը Վիլփէնը, որ առեղին գինքը տեղեակ չէր պահած որ չշուկներէն զատ բան մը չկայ: Վարչապետը, այսօր իր վրդովումը կը յայտնէ "անարդար" շշուկներու պատճառաւ եւ կը հասկնայ որ խնդրոյ առարկայ անձերը իրենք զիրենք վիրաւորուած զգան: Ֆր. Հոլանտ ալ զայրացած է որ Պետութեան գլուխը նըման գայթակղութիւն մը երեւան ելլէ եւ հարկ եղած բացատրութիւնները չտրուին:

ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՈԶԻ հարցազրոյցով մը Մոնտի (Ապրիլ 28) եւ հեռատեսիլի Ա. կայանէն Ապրիլ 27ին, երկարօրէն կը բացատրէ գաղթի իր օրինագիծը, որ օրակարգի նիւթ է Մայիս 2էն Ազգ. Ժողովին մէջ: Ընտրովի գաղթ մը կ'ուզէ եւ ոչ թէ պարտադրուած գաղթ մը, այսինքն Ֆրանսա պէտք է ընդունի այն անձերը որոնց պէտք ունի: Բնական կը գտնէ որ ով որ Ֆրանսան չի սիրեր, ձգէ երթայ: Դէմ է զանգուածային օրինականացման անոնց որոնք ապօրինի կերպով Ֆրանսա կը գտնուին: Այս նոր օրինագիծը բուռն կերպով կը քննադատուի ոչ միայն ձախի, այլեւ Իւ. Տէ. Էֆ.ի եւ Ֆրանսայի համար Շարժումին, նաեւ Լը Փէնի կողմէ:

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ գործազրկութիւնը նոր նահանջ մը արձանագրած է Մարտին, 1,3% համեմատութեամբ, այսինքն 30.900 գործազուրկի նուազում մը կայ: Գործազրկութեան համեմատութիւնը 9,5% է ներկայիս:

ՓԱՐԻԶԻ 17րդ թաղամասի (ռիւ տը Փրոնի) դեղարանը որ կը վաճառէր նիհարցնող ժելիւլներ, զորս կը պատրաստէր, փակուած է եւ դատական քննութիւն մը բացուած է: Դեղը գործածողներէն կին մը մեռած է եւ 126 կիներ ալ, որոնք գործածած են այդ ժելիւլները, վըտանգուած են: Ասոնցմէ 14ը հիւանդանոցն են եւ հինգը՝ ծանր վիճակի մէջ:

ՓԱՐԻԶԻ ԺԱ. թաղամասի ժիմնազ Ժափիի մէջ, Ապրիլ 27ին տեղի ունեցած է ձախի եւ կանաչներու առաջին փորումը, որու գաղափարը ծնած էր Փեսըրւարին ձախի տասը կազմակերպութեանց կողմէ: Առաջին հաւաքոյթը փորձած է համախմբուած ճակատի մը պատկերը տալ, գոնէ երեւութապէս: Ընկերվարական կուսակցութեան մէջ սակայն մրցակցութիւնները շատ են եւ կը փնտրուի համախմբող դէմք մը, որ առայժմ Սեկոլէն Ռուայյալն է, բայց կուսակցութեան

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՄՆ ԱՑՑԸ

Ազրպէյճանական մամուլը գրելով Ի. Ալիեւի Ուաշինկթըն այցին (Ապրիլ 25-28) մասին, անոր առաջին շփումներէն երկու պարագայ կ'առանձնացնէր. առաջինը Իրանի դէմ պատերազմի մը մասնակցութիւն չունենալու կեցուածքն է որ յայտնած է ան ամերիկացի պաշտօնատարներուն, երկրորդը Ղարաբաղի հարցը:

Իրանի պատերազմի մը պարագային առընչուած հարցումին պատասխանելով Ի. Ալիեւ ըսած է թէ իր երկիրը Իրանի հետ ոչ յարձակողական փոխադարձ համաձայնագիր ստորագրած է ու ան կը շարունակէ ի զօրու մնալ:

Ինչ կը վերաբերի Ղարաբաղի հարցին, զրոյցին ներկայ եղած է նախագահ Պուշի ազգային ապահովութեան խորհրդականներէն Պ. Սուքըրոֆթ ալ. ան ըսած է թէ Հայաստան ազրպէյճանական հողեր գրաւման տակ կը պահէ, սակայն հակամարտութիւնը միայն եւ միայն միջազգային իրաւական չափանիշերով եւ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան շրջանակին մէջ պէտք է լուծում գտնէ:

Ազրպէյճանի նախագահը կրկնած է Ղարաբաղին Եւրոպայի մակարդակով ամենաբարձր աստիճանի ինքնավարութիւն տալու իրենց պատրաստակամութիւնը: Ըսած է նաեւ թէ Հայաստան հարկ է մեծ թափով զարգացող իր դրացիին դէմ թըշնամական կեցուածք ունենալէ հրաժարի: "Ազրպէյճան կ'ուզէ խնդիրը խաղաղութեամբ լուծել, սակայն ժողովուրդին համբերութիւնը սահման ունի եւ ան կրնայ օր մը սպառիլ" ըսած է Ալիեւ, չբացառելով պատերազմի այլընտրանքը:

"Փիղերը" կը յուսան որ շուտով չնչահեղձ կ'ըլլայ:

ԻՐԱՔԻ մէջ կացութիւնը չի հանդարտիր եւ մեռեալները կը բազմանան օրէ օր: Ալ-Զարքաուի կը շարունակէ սպառնալ սիւննիներուն եւ Ապրիլ 27ին Պաղտատի մէջ անծանօթներ սպաննած են նոր փոխ նախագահին՝ Թարէք ալ-Հաշէմիի քոյրը: Եղբայրներէն մէկն ալ՝ Մահմուտ ալ-Հաշէմի սպաննուած էր Ապրիլ 13ին:

ԹՈՒՐՔԻՈՅ փոխ վարչապետ ու Արտաքին գործերու նախարարը Ա. Կիւլ հակազդելով թրքական ուժերու անդրսահմանեան գործողութիւններուն, պատճառով Իրաքի յղած բողոքագրին, ըսած է թէ իր երկիրը պիտի շարունակէ ապահովութեան միջոցներու դիմել, այնքան ատեն որ Իրաք ի վիճակի չէ իր ուժերով սահմանները պաշտպանելու: Ապա աւելցուցած է. "Պէտք է գոհ ըլլան մեր ձեռք առած միջոցներէն": Հարցը այն է որ թրքական զինեալ ուժեր 15 քմ.ի չափ Իրաք մտած ու գործողութիւններու ձեռնարկած են, ինչպէս միշտ "ՓՔՔ-ի ահաբեկիչները հալածելու, անզօրացնելու" պատրուակով:

ԼԻԲԱՆԱՆԻ երկրորդ մեծ քաղաքին՝ Թրիփոլիի մէջ հրապարակ մը վերամըկրտուած է "Սուլթան Ապտիւլհամիտ": Արարողութեան մասնակցած է Թուրքիոյ Լիբանանի դեսպանը:

ԲԵԼՈՌՈՒՍԻՈՅ ընդդիմութեան պարագլուխը՝ Միլինկեվիչ, 58 տարեկան, ձերբակալուած է Ապրիլ 27ին եւ անմիջապէս 15 օրուան բանտարկութեան դատապարտուած է, իբրեւ հետեւանք ցոյցի մը Չեռնոբիլի աղէտին 20ամեակին առթիւ: Ենթական հազիւ կրցած է ըսել թէ ինչ որ կ'անցնի կը դառնայ Բելոռուսիոյ մէջ չիզոփրէնի կը կոչուի: Նշելու համար Չեռնոբիլի տարեդարձը, որմէ յայնօրէն վարակուած էր Բելոռուսիան, ընդդիմութիւնը 6.000 ցուցարար հաւաքած էր Գիտութեան ակադեմիային առջեւ:

ՏԷՎԷՃԵԱՆՆԵՐԸ ՊՈԼՍԷՆ ՓԱՐԻԶ

ՕՍՄԱՆՑԻ ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՆ ՀԱՏՈՐԸ ԵՒ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԹՈՌՆԻԿԸ

(Բ. եւ վերջին մաս)

Հ.- Հայկական Սփիւռքը ինչո՞ւ 55 տարի սպասեց 1915-ի մասին խօսելու համար:

Գ.- Որովհետեւ Ֆրանսա հասած Հայերը հազիւ այդ ժամանակ հասունցած էին: Եկան 1920ական տարիներուն սկիզբը: Օսմանեան երկրին մէջ որպէս արհեստաւոր աշխատողներ էին. Ֆրանսայի մէջ իրենց արհեստները արժէք չունէին, լեզու չէին գիտեր. Կարմիր Խաչի վրաններուն մէջ կ'ապրէին: Այդ միջոցին 20 տարի ետք աշխարհամարտը սկսաւ: Մէկ մասը գործատուներու բանուոր եղաւ, երբ մէկը աշխատանք գտաւ միւսն ալ կանչեց: Առաջին համայնքները Մարսէյլի արուարձաններուն մէջ կազմուեցան: Յետոյ ժամանակի ընթացքին Վալանս, Լիոն, Փարիզ հաստատուեցան: Երկրորդ սերունդը Ֆրանսայի քաղաքացի եղաւ: Երրորդը ամբողջովին համարկուած էր: Այլեւս Ֆրանսացիներու հաւասար պայմաններ ունէին: Սակայն "առանց ինքնութեան" հաւասարութիւն կարելի չէր: Իրենց ինքնութեան որոնումին ձեռնարկեցին: Ատիկա շատ կարեւոր հարցի մը վերածուեցաւ: Իսկ Թուրքիա, բնական է, համարձակութիւն առաւ երբ 50 տարի նիւթը լռութեան մատնուած մնաց: Մինչդեռ պատահարներուն շրջանին շատ խօսուած էր այդ մասին: Միջազգային մամուլին մէջ 1915-1922 հազարաւոր գրութիւն ու լուր լոյս տեսած է: Ատիկա հայկական ցաւի մը քարոզչութիւնը չէ: Թուրքերը հաւատացին թէ քաղաքական պատահար էր: Նախ Խորհրդային միութեան ձեռնածումը կարծուեցաւ. Թուրք պաշտօնակիցներէս այսպէս ըսողներ գտնուեցան: Միակ պատճառ մը ունէր ատիկա. Հայերս միայն 1970ական թուականներուն խեղճուկրակութենէն դուրս եկան ու կրցան իրենք զիրենք արտայայտել: Սակայն Թուրքերու պոռթկումներն ու միջամտութիւնները պատահարին վըտանգաւոր բնոյթ տուին:

Հ.- Հայկական Սփիւռքին 1970ի առաջին նախաձեռնութիւնը ինչպէ՞ս տեղի ունեցաւ:

Գ. - 1970ին առաջին դէպքը Սեւրի յիսնամեակին արձանագրուեցաւ: Յետոյ հայ երիտասարդները սկսան Ապրիլ 24ը ոգեկոչել: 1973ին Մարսէյլի պատահարները եղան. Հայկ. եկեղեցիին պարտէզը Ցեղասպանութեան զոհերուն յիշատակին կոթող մը կանգնեցին, Թուրք դեսպանը անմիջապէս Ֆրանսայի այդ շրջանի արտաքին գործերու նախարարին դիմեց ու կատարուածը դատապարտեց: Ան ալ Մարսէյլի քաղաքապետին հրահանգեց կոթողը քանդել: Քաղաքապետը չյաջողեցաւ, որովհետեւ քանդելու իրաւասութիւն չունէր, կոթողը եկեղեցիին պատկանող տարածքին մէջ գտնուելով: Մարսէյլի հայութիւնն ալ ընդվզեցաւ միջամտութեան: Քաղաքապետը որպէս դարմանի միջոց յիշատակի հանդիսութիւն մը կազմակերպեց: Անոր մասնակցեցաւ Մարսէյլէն ընտրուած երիտասարդութեան ու մարմնամարզի նախարարն ալ: Թուրքիա դատապարտեց կառավարական անդամի մը այդ հանդիսութեան մասնակցութիւնը: Ատով յուշարձանը որուն քանդումը կը պահանջուէր, ա՛լ աւելի արժէք ստացաւ: Դեսպանը Անգարա կանչուեցաւ եւ դիւանագիտական յարաբերութիւնները վեց ամիս առկախուեցան: Վեց ամիս ետք ղրկուած Թուրք նոր դեսպանը համազգենի մը կողմէ սպաննուեցաւ: Ատիկա ահաբեկչական առաջին արարքն էր: Ոչ թէ ԱՍԱԼԱ-ի այլ անյայտ ինքնութեամբ խումբի մը կողմէ կազմակերպուած էր. մինչեւ այսօր բացայայտուած չէ: Յետոյ ծագումով հայ Ժ. Մ. Գառզու "Տիպար ցեղասպանութիւն մը" հատորը գրեց: Թուրք կառավարութիւնը "Հաշէթ" հրատարակչականին տեղեկացուց որ եթէ հատորը հրատարակէ, այլեւս չի կրնար Թուրքիոյ մէջ գործել: Հաշէթ ալ հեղինակին թելադրեց գիրքը որեւէ հրատարակչատան յանձնել ու տպուած հատորներուն կողքերուն վրայ անոր անունը դնելով հրապարակ հանել: Հատորը "Ֆլամարիոն"ի կողքով հրապարակ ելաւ: Հեղինակը անոր ծանօթացումին համար ամէնէն ծանօթ ձայնասփիւռի յայտագրին պիտի մասնակցէր, բայց Թուրք դեսպանը արգելք եղաւ: Այդ շրջանին մեծ անձկութիւն կը տիրէր: Երիտասարդները սկսան ըսել "Մեր ընտանիքները բնաջնջելով չգոհացան, մեր խօսելուն, ախորի մէջ մեր ինքնութիւնը փնտռելուն ու պահպանելուն արգելք կ'ըլլան": Հայերու այս ընթացքը եւ Թուրքիոյ միջամտութեան կապուած բազմաթիւ պատահարներ լարումը աւելցուցին. Լիբանանէն եկած խումբ մը Հայերու հիմնած ԱՍԱԼԱ-ն սկսաւ իր արարքներուն:

Հ. - Եթէ Թուրքիա 1970ական տարիներուն այլ կերպ վարուէր, ըսէր թէ իրենց կեանքը կորսնցուցած Հայերու վիշտը կը բաժնէ, կացութիւնը տարբեր կ'ըլլա՞ր:

Գ. - Վստահ եղէք, այդ ժեսթը ամէն բան կը փոխէր: 1980ական տարիներուն Հայերը մարտավարութիւն որոշեցին ու բոլոր երկիրներուն ատիկա ընդունիլ տալու ձեռնարկեցին:

Հ. - Դուք ԱՍԱԼԱ-յի փաստաբանն էիք...

Գ. - Այո, սակայն փաստաբաններն ու պաշտպանողականը միմիայն միահեծան վարչակարգերու մէջ վիճարկումի նիւթ կրնան ըլլալ: Պաշտպանեցի զիրենք որովհետեւ շատ մարդ չկար այդ գործին թեկնածու: Կրնայի անցուդարձը հասկնալ: Ատկէ զատ, ամէն մարդ փաստաբանի մը պէտք ունի, նոյնիսկ ուրացողները:

Հ. - 1998ին Ազգ. Ժողովի ձեր ելոյթին Ֆրանսացիներն ալ ամբաստանեցիք, ըսելով որ Ալժերիոյ մէջ Հարքիներուն կատարուածին փորձը նախ Օսմանեան երկրին մէջ եղած էր: Ըսիք թէ անոնք ֆրանսական համազգեստով Օսմանցիին դէմ կռուելէն ետք, Ֆրանսայի կողմէ լքուած էին տեղւոյն վրայ ու սպաննըւած:

Գ. - 1915ի Մայիսին Ֆրանսա, Անգլիա եւ Պելճիա Թրքական կառավարութեան տեղեկացուցին թէ մարդկութեան դէմ ոճիր գործած է եւ պատերազմէն ետք պիտի դատուի: Պատմութեան մէջ առաջին անգամ նման յանցանք սահմանուեցաւ. մարդկութեան դէմ ոճիր: Անթաքիան Ֆրանսացիները գրաւած էին: Ցեղասպանութենէն վերապրողները հոն եկած էին. Ֆրանսական դրօշին ապաստանեցան, 1916-1922: Յետոյ Ֆրանսական զօրքը մեկնեցաւ, ժողովուրդը հոն ձգեց: Ոմանք փրկուեցան, ոմանք սպաննուեցան. Լիբանանի համայնքը հոնկէ խոյս տուողներով կազմուեցաւ:

Հ. - Թուրքիա վճռապէս կ'ըսէ թէ իր հողերուն վրայ ցեղասպանութիւն գործուած չէ:

Գ. - Թուրքիա ոչ միայն ցեղասպանութեան, կոտորածներու առընչուած տեսակէտներն իսկ կը մերժէ: Շատ ժամանակավրէպ մտածելակերպով մը կը կարծէ թէ ատիկա ընդունիլ իր արժանապատուութիւնը կը վիրաւորէ: Կարծեմ կը մտածէ թէ նման ճանաչում պիտի առաջնորդէ պահանջներու որոնք կրկին իր հողային ամբողջականութիւնը պիտի վտանգեն: Ատկէ զատ 80 տարիէ ի վեր ամբողջ Թուրք ժողովուրդին տարբեր տեղեկութիւններ տրուեցան: Թուրքերուն մեծ մասը անկեղծօրէն կը հաւատայ թէ 1915ին ոչինչ պատահած է: Երբ "Նման բան չըրինք" կ'ըսեն, մեծ մասը կը հաւատայ ըսածին: Վստահ եմ, եթէ ամբողջ այս պատմութիւնը փոխանցուէր Թուրքերուն, ցաւը կը բաժնէին:

Հ. - Տարիներէ ի վեր շատ յարձակուճակ ելոյթներ կ'ունենաք. սա պահուն ձեր գործածած ոճէն շատ տարբեր:

Գ. - Այո, երբեմն շատ կը պոռչտամ: Մենք Հայերս խենթուկ ենք: Խոփ խոշոր Թուրքիոյ հանրապետութեան, բանակին, կազմակերպութեան եւ միջազգային զօրակցութեան նայեցէք մէյ մը, մէյ մըն ալ Հայկական Սփիւռքին...: Յատկապէս շեշտեմ թէ չեմ հաւատար հաւաքական պատասխանատուութեան: Ատիկա ո՛չ Հայերուն, ոչ ալ Թուրքերուն համար վաւեր է: Չեմ ալ կարծեր որ Թուրք քաղաքական մարդոց ըսածները կը բաժնէ ամբողջ Թուրք ժողովուրդը: Ոմանք այնքան առաջ տարին գործը որ "Հայերը մեզի դէմ ցեղասպանութիւն գործեցին" ըսին ու յուշարձան կանգնեցին: Ասիկա գրգռութենէն ալ աւելին է: Թուրքերուն մեծ մասը անկեղծօրէն կը հաւատայ, երբ կ'ըսէ թէ Հայերը կը զրպարտեն: Մտածումի ու արտայայտութեան ազատութեան մարզին մէջ մնայուն դժուարութիւններու տէր երկիր մըն է: Սակայն համաշխարհայնացումը շատ բան կը փոխէ: Ազգային մշակոյթները չեն կրնար անտեսել տիեզերական մշակոյթը: Համացանցը Հայերուն մեծագոյն նեցուկն է:

Հ. - Կը հաւատա՞ք թէ երկու ժողովուրդները պատմական հաշտութեան մը պիտի յանգին:

Գ. - Երբեմն նոյնիսկ երբ ճամբան երկար թուի, կը հաւատամ: Սակայն հաշտութիւնը եւ երկխօսութիւնը ամուսնութեան կը նմանին. երկու կողմ հարկաւոր է: Օ. Փամուք իրաւացի է, կամ անիրաւ. ատիկա կարեւոր չէ. պէտք է կարենայ մտածումը ազատօրէն արտայայտել: Սակայն այսօր իսկ հարց է ատիկա: Թուրքիոյ մէջ կան զինքը դաւաճան նկատողներ, բայց ան ուրացողներէն նուազ չի սիրեր իր երկիրը. զայն կը սիրէ հակառակ անոր ցաւոտ, վշտոտ պատմութեան: Ես ալ Թոռներս, զաւակներս շատ կը սիրեմ, բայց անոնց ամէն շարժումին չեմ հիանար: Թուրքիա այս ճանաչումով արժանապատուութիւնը պիտի չկորսնցնէ, աւելի պիտի մեծնայ: Իսկ Հայերը իրենց մեռեալները միայն այս իրողութեան ճանաչումէն ետք թաղած պիտի ըլլան ու յետոյ մոռնան: Չեն կրնար զանոնք սուտին մէջ թաղել: Մենք քաղաքական մարդիկս, շատ կարեւոր պարտականութիւն մը ունինք: Ֆրանսայի մէջ ալ ժողովուրդը դիւրութեամբ ցեղապաշտի կրնայ վերածուիլ, քանի երբեմն այսպէս կը խօսին: Օրինակ, Սեպտ. 11էն ետք պարտինք Իսլամին դարձած ակնարկներուն առումով անոնց մակարդակը բարձրացնել, սորվեցնել ընդհանրացումներէ խուսափիլ: Անթոնիի մէջ մահմետականներ ներգրաւեցի վարչութեան մէջ: Նախ մերժողներ եղան: Հիմա տեսան թէ իրենց նման մարդիկ են: Արդիական ժողովրդավարութեան մը անցքով կը դիւրանայ անցեալը դիմել: Բոլոր ժողովրդավար երկիրները այդ ճամբէն անցան: Մեր, Ֆրանսացիներուս անցեալն ալ միւսներէն աւելի փայլուն, մաքուր չէ: Մութ, ահաւոր, տարապայմանի շրջաններ ունի: Սակայն Թուրքիա տակաւին ժողովրդավար չէ: Ձեր վարչապետը ոտանաւոր մը կարդացած ըլլալով բանտարկուեցաւ: Ֆրանսա վերջին անգամ մէկ բանաստեղծը՝ Շ. Պոտլէռը դատած էր ԺԹ. դարուն: Կամ ամէնէն ժամանակակից պարագան, Օ. Փամուքի պատահարը առէք: Թուրքիա այսօր կը պնդէ թէ յարգած է Գոփընհակընի չափանիշները, նոյն ատեն իր մէկ գրագէտը անոր տեսակէտներուն պատճառաւ դատաւորին դէմ կը կանգնեցնէ:

Հ. - Կ'ուզէի՞ք Թուրքիա երթալ:

Գ. - Անշուշտ, շատ կ'ուզեմ: Հօրաքրոջս մահէն ի վեր չգացի, երեսուն տարի է: Երբեմն շատ նրբօրէն ըսուեցաւ թէ պէտք չէ երթայի, թէ նոյնիսկ կրնար ատիկա վտանգաւոր ըլլալ:

Թարգմանեց՝ Ա. Բ.

Զ Ղ Ջ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Պուրճ Համուտի այսօրուան Թիրօ ու Սանճաք Թաղերը, ուր բազմայարկ արդիական շէնքեր բարձրացած են եւ գործարաններ կը բանին, ժամանակին, քանի մը շարք փայտաշէն ու թիթեղաշէն տնակներէ անդին, մինչեւ ծովեզերք տարածուող կանաչ դաշտագետին մը կար, գուցէ մէկ քիլոմեթր երկայնքով ու լայնքով՝ ըստ մանկական յիշողութեանս: Եթէ յիշողութիւնս կը խաբէ զիս, քանի որ ամէն բան մեծ կ'երեւար մեր մանկական աչքերուն, ենթադրենք թէ յիշածիս կէս տարածութիւնը ունէր այդ դաշտը, որուն մէկ ծայրը Թիր-օ-փիժոնը կար, իսկ միւս կողմը՝ ուր Անդր Նահրի փոքրիկ գետակը ծով կը թափէր՝ Ջաթալպաշեանին կաշեգործարանը, եւս աւելի անդին՝ Իմաստունեանենցը:

Անշուշտ Թիրօ թաղը իր անունը առած է Թիր - օ - փիժոնէն, որ նշանառութեան խաղարան մըն էր: Թիթեղեայ հսկայ ցանկապատ մը կ'անջատէր զայն դաշտին մնացեալ մասէն, որպէսզի արձակուած կապարները ցանկապատէն դուրս խաղացող մանուկներու չհասնեն: Յաճախ կը պատահէր որ վիրաւոր աղաւնին ցանկապատէն դուրս իյնար, պատճառ դառնալով յափշտակութեան կռիւի մը, որ յաճախ կը վերջանար աղաւնիին ալ բզքտումով: Ես այդ աւարտէն չեմ կրցած օգտուիլ, բացի բացառիկ մէկ-երկու պարագաներէ, երբ վիրաւոր թռչունը մեր տունը եկած-իյնկած էր:

Այդ ընդարձակ դաշտագետնին մէջ, զանազան խումբերու բաժնուած, մենք ֆութպոլ կը խաղայինք: Բայց ի՛նչ ֆութպոլ. ո՛չ կօշիկ կար, ո՛չ գնդակ. Ֆութպոլին անունը կար միայն: Գնդակի տեղ իրարու մէջ թխմուած ու կլոր կարուած լաթէ գունդ մը, իսկ կօշիկը հարուստներու յատուկ հագուածք մըն էր այդ օրերուն: Հարուստ արդէն չկար. բայց, կային իհարկէ, "քանի մը դրուշի տէր" մարդիկ, կամ մակարդակ պահել ուզողներ, որոնք իրենց զաւակներուն կօշիկ կը հագցնէին: Որպէս ուսուցչի զաւակ՝ անոնցմէ մէկն ալ ես էի: Բայց կօշիկը ոտքս կը մնար մինչեւ դաշտ հասնիլս, ուր բոպիկ ընկերներուս մէջ իրբեւ բացառութիւն ծաղրի առարկայ ալ կ'ըլլայի, եւ հաւատացէք որ առօրակայութեան բարդոյթ զգալով ես ալ կը բոպիկնայի: Ժամերով խաղալէ ու յոգնելէ յետոյ, տուն կը վերադառնայի աղտոտած եւ յաճախ արիւնոտած ոտքերով, մօրս կողմէ ալ յանդիմանութեան ու ծեծի ենթարկուելով. բայց այս բոլորը չէին բաւեր որ ընթացքս փոխէի, եւ յաջորդ անգամ կ'ընէի նոյնը՝ ծաղրէ խուսափելով ընդհանուրին պէս ըլլալու համար:

Աղքատ եւ աղտոտ էր գաղթական հայ ժողովուրդը: Հայ կիներուն աւանդական մաքրամոլութիւնը իրենց տուներու սահմանէն անդին չէր անցներ: Ջուրի բաժանման խողովակներ չկային տուներէն ներս: Խմելիք ջուրը մաքուր աղբիւրներէ ապահովելով, լուացքի եւ այլ պէտքերու ջուրը Անդր-Նահրի գետակէն կ'ապահովուէր: Տուները, աւելի ճիշդ է ըսել խրճիթները, լուացարան եւ արտաքնոց չունէին: Դաշտին հեռաւոր մէկ անկիւնը, մանաւանդ գետակին եզերեայ մասը, գիշերները ընդհանրապէս, հասարակաց արտաքնոցի կը վերածուէին: Յարմարութիւն ունեցողները քարիւղի թիթեղի մը յատակը ծակ մը հաստատելով, զայն վերի յարկի պատշգամին անկիւնը դրած՝ իբրեւ լուացարան կը գործածէին, իրենց թափած օճառ ջուրով յաճախ վարի անցորդներն ալ լոգցնելով:

Այդ ժամանակներուն, այս կացութեան մէջ է որ հիմնուեր է Լիբանանի առաջին հայ դպրոցը՝ Նուպարեան վարժարանը, որուն հիմնումի մանրամասնութիւններուն մասին գրեր էի նախապէս:

Բայց հակառակ մեր աղքատութեան երջանիկ ու ինքնավստահ էինք մենք: Մենք՝ հոն ծնած մանուկներս, նոյնիսկ տէր - տիրականի հոգեբանութիւն ունէինք, առանց գաղթականի բարդոյթի: Տարբերելով մեր ծնողներէն՝ այդ դաշտին ու վտակին տիրականներն էինք մենք:

Այդ օրերուն էր, երբ հազիւ 5-6 տարեկան անզուսպ լաճ մըն էի ես, դաշտին մէջ խրճիթներէն հեռու, փաթթոցաւոր մարդ մը ծունկի եկած, եւ առնենք մէյ մը

գետինը համբուրելով կ'աղօթէր: Մեր ծնողներէն լսեր էինք որ այդպէս նամազ կ'ընէին Թուրքերը...: Ուրեմն Թուրք էր այն մարդը. վճիռը տրուած էր: Եւ հայտէ՛, խումբ մը լաճեր սկսանք քարկոծել զայն: Հակառակ տեղացող քարերուն, մարդը առանց ընդմիջումի աղօթքը վերջացնելէ յետոյ, պաւազանը ճօճելով սկսաւ մեր ետեւէն վազել: Իսկ մենք գաղթականին նեղ ու ցեխոտ գոհնները մտնելով ապաստանեցանք մեր տուները:

Այդ օրերէն ի վեր անցեր է եօթանասունամեակ մը, բայց գլխումը դեռ կը կոտտայ հոգիիս խորը: Ի՞նչ էր այդ խեղճ, հաւատացեալ մահմետականին յանցանքը, որուն համար մենք՝ նոյնպէս անմեղ երախաներ քարկոծեցինք զինք:

Ան ալ մեզի պէս ցեղասպան Թուրքին անուղղակի զոհերէն մէկն էր, որմէ ես ներողութիւն պիտի ուզէի խնդրել յապաղած կերպով, հոգ չէ թէ Թուրքը տակաւին կը յամառի ներողութիւն չխնդրել մեզմէ:

ԽՂՃԻ ԽԱՅԹԸ

Այդ տարիներուն ծովեզերէն Պէյրութի հեռաւոր մէկ արուարձանն էր: Ժայռոտ ու բարձրաղիր՝ սնոպարի (չոճի) պուրակներով զարդարուած շրջան մըն էր, ուր գաղթական հայ ժողովուրդին մէկ կոտորակը հանգրուաներ էր, մեծ մասամբ հողագործութեամբ զբաղելով: Եւ ուր հայ համայնք՝ հոն հայկական դպրոց աւանդութեան հետեւելով, Հայրիս Բարեգործականի կողմէ հոն ուղարկուեր էր դպրոց մը հիմնելու համար: Հոն կար արդէն Վարդապետեան ընտանիքին կաւագործարանը, ուր բաւական մեծ թիւով հայ գործաւորներ թրծուած կաւէ ջնարակուած ամաններ ու կաթսաներ կ'արտադրէին:

Փոքրիկ լաճ մըն էի, հազիւ 7-8 տարեկան, դպրոցական ժամերէն յետոյ եւ Շաբաթ ու Կիրակի օրերը, ընկերներով անտառները տակն ու վրայ կ'ընէինք՝ ալոճ, մոշ ու վայրի տանձ հաւաքելով: Մեր սիրելի զբաղումներէն մէկն ալ բալուտի (վայրեկաղին) ճիւղերով ածուխ չինելն էր:

Այսպիսի պտոյտներու ընթացքին տեսանք զէյնօ կին մը, մինչեւ գլուխը սեւ լաչակներով պարուրուած, առուակի մը եզերքը ծոթրին (զա'թէր) եւ փիփերդ (քէօմէճ) կը հաւաքէր: Ձեմ գիտեր ինչո՞ւ զէյնօ կը կոչուէին երեսը կապտաւուն նախշերով կիտուած այդ գնչու կիները, որոնք իրենց բերքը շալկած՝ հայկական թաղերը կը պտտէին իրենց հունձքը ծախելու համար: Հանգիստ աշխատելու համար կինը իր մէկուկէս-երկու տարեկան երախան առուակին եզերքը նստեցուցած էր:

Այդ տարիներուն դեռ շատ թարմ էր Թուրքին պատճառած ցաւը հայ ժողովուրդին: Հօրս բարեկամ մի քանի հողամշակներ իրենց պարտէզներուն բերքէն լոլիկ, վարունգ, սոխ ու պղպեղ բերելով օղիի սեղանի մը շուրջ, յաճախ կը խօսէին Թրքական զուլումին ու ջարդերուն մասին, տարագրութեան ճամբաներուն վրայ իրենց կրած տառապանքին մասին, կարօտով ու կսկիծով յիշելով իրենց ծննդավայրերուն մէջ անցուցած երանելի կեանքը: Մենք՝ Լիբանան ծնած երախաները, Թուրք կոչուած արարածը չէինք ճանչնար, չէինք տեսած: Բայց պատմուածներուն համաձայն՝ մեր երեւակայութեան մէջ զէնքն ու սուրը ձեռքին, փաթթոցաւոր, շալվարով ու լաչակով մարդիկ ու կիներ էին անոնք: Այս խեղճ կինը սուր ու զէնք չունէր անշուշտ, բայց մեր երեւակայած Թուրք կիներուն պէս սեւ լաչակով պարուրուած էր մինչեւ գլուխն ու դէմքը, բաց պահելով միայն աչքն ու քիթը: Ուրեմն, Թուրք ըլլալու էր: Եւ այդ ենթադրութիւնը բաւեց որ կիցով մը գետնին հաւասարեցնէինք այդ երախան ու վրէժխնդրական գոհունակութեամբ փախչէինք:

Տխուր, ցաւատանջ եւ անջնջելի յիշողութիւն մըն է, որ պարբերաբար կը յաճախէ ինծի, մանաւանդ ապրիլեան այդ օրերուն:

Թուրքին կատարած մեծ ոճիրին հանդէպ մէջս կուտակուած վրէժխնդրութեան սխալ ընտրուած զոհը եղաւ այդ երախան ալ, ինչպէս վերեւ յիշուած փաթթոցաւոր մարդը, անարդար կերպով անմեղ թիրախը հանդիսանալով Թուրքին հանդէպ մեր ատելութեան:

Հ. Ն.

28 Փետրուար 2006

ԳՈՂԳՈԹԷ ԳՈՂԳՈԹ

ՊՈԼՍՈՅ Ս. Փրկիչ հիւանդանոցի երկու նոր բաժիններու բացումը կատարուած է Ապրիլ 8ին, ներկայութեամբ հրաւիրեալներու հոծ բազմութեան մը: Հայկ եւ Անէլ Ասլանեան ամոլի նուիրատուութեամբ է, որ բացուած է կենսական նշանակութիւն ունեցող մարդոց եւ նորածին մանուկներու համար այդ երկու բաժինները: Բացման հանդիսութեան նախագահած է Մեսրոպ պատրիարք: Նախ, բացումը կատարուած է "խնամեալ խնամքի" բաժնին եւ խորհրդանշական ժապաւէնը կտրելէ առաջ, իրենց սրտի խօսքը արտասանած են տոքթ. Ալման Զաքըրօղլու եւ խնամեալ երկու բաժիններու պատասխանատու փրոֆ. Փէրվին Պօզքուրթ: Այս երկու ելոյթներէն ետք, պատրիարքը, բարերարները եւ հոգաբարձութեան ատենապետը՝ Պետրոս Շիրինօղլու կտրած են խորհրդանշական ժապաւէնը եւ ներկաները կրցած են շրջիլ բաժինէն ներս, հաստատելով թէ բարերարները ոչ մէկ ծախք խնայած են ամենաբդիական սարքերը ապահովելու համար: Ապա, բոլորը բարձրացած են երրորդ յարկը, ուր Ասլանեան ամոլին կողմէ բացումը կատարուած է, այս անգամ "Նորածին մանուկներու խնամեալ խնամքի" բաժնին: Այս ամբողջէն ետք, բազմութիւնը հաւաքուած է "Պիլէք" հանդստարանի սրահը, ուր կազմակերպուած էր ճոխ ընդունելութիւն մը: Խօսք առած են Յարութիւն Խօջէլիք, Պետրոս Շիրինօղլու: Ելոյթներէն յետոյ, Մեսրոպ պատրիարք Հիւանդանոցի ոսկեայ մետալներ շնորհած է Տէր եւ Տիկին Հ. Ասլանեանի: Շնորհակալութեան իր խօսքը ըսած է բարերարը: Հուսկ բանքը արտասանած է Մեսրոպ պատրիարք իր ուրախութիւնը յայտնելով որ «Ապրող համայնք մըն ենք» եւ իշխանավայել օրհնած է Հայկ Ասլանեանի նուէրը:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Թէքէեան կեդրոնի "Հրաչեայ Սեդրակեան" սրահին մէջ, կազմակերպութեամբ Թէքէեան Մշակութային Միութեան, Ապրիլ 4ին, հայկական այբուբենին նուիրուած հանդիսութիւն մը տեղի ունեցած է: Բացման խօսքը արտասանած է է յանուն ԹՄՄ-ի Արտաւազդ Մելիքսէթեան, որ շեշտած է գրերու գիւտի կարեւորութիւնը, նշելով թէ "Մեսրոպեան գիւտերը հայ ժողովուրդի ինքնուրոյն գոյատեւումը պահելու հզօր եւ մնայուն միջոցներ են": Օրուան բանախօսը եղած է տոքթ. Թորոս Թորանեան, որու համար՝ "տակաւին ոչ ոք կրցած է Մեսրոպ Մաշտոցի մեծութիւնը իրաւացի ներկայացնել": Ան ըսած է նաեւ թէ Մեսրոպը հայ ժողովուրդի "վերջը" սկիզբի վերածած է, գիտել տալով թէ այսօր միեւնոյն մարտահրաւէրին դէմ յանդիման կը գտնուինք: Ձեռնարկի աւարտին յուշանուէրներով պարգեւատրուած են տոքթ. Թ. Թորանեան, Անի Եփրեմեան եւ Մանուկ Հոփալեան:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետութեան "Պետոլեան" սրահին մէջ, Մարտ 31ին տեղի ունեցած է Հայ գրերու գիւտի 1600ամեակին նուիրուած "Այբբենական ասոյթներ" գրքոյկի շնորհահանդէսը: Գրքոյկը պատրաստուած է վարժարանին աշակերտութեան կողմէ: Բացման խօսքը կատարած է ԺԱ. դասարանի աշակերտ Քրիսթիան Գարատաղլեան, որ շեշտած է թէ Մաշտոց դիւանագէտ մըն էր եւ ընտեղծելով մեր այբուբենը լուսաւորեց ապրած դարը՝ փրկելով հայ ժողովուրդը օտարացումի վտանգէն: Վարժարանի Ժ. եւ ԺԱ. դասարաններու աշակերտներ ընթերցումներ կատարած են նորատիպ գրքոյկէն: Վարժարանի տնօրէնը Զուարթ Նաճարեան յայտնած է որ գրքոյկը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ արգասիքն է Հայ գրերու գիւտի 1600ամեակի տօնակատարութեանց սահեղծած ոգեւորութեան: Յայտնած է թէ գրքոյկը ձօնուած է Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններու տնօրէններու խորհուրդի նախագահ Հ. Վարդան Եպիսկ. Աշգարեանի: Ապա, Հ. Մեսրոպ Թօփալեան վարած է հանդիսութիւնը, ներկայացուցած է գրքոյկին բովանդակութիւնը և բացատրած հաւաքոյթին իմաստը: Հ. Վարդան Եպիսկ. Աշգարեան սրտի խօսքը ուղղած է ներկաներուն շեշտելով թէ որքան ատեն որ կ'ապրի հայ դպրոցը, կ'ապրի հայ ժողովուրդը: Ձեռնարկը աւարտած է Հ. Անդրանիկ Վրդ. Կռանեանի խօսքով:

***

ՊԷՅՐՈՒԹԻ Մար Եուսէֆի "Անահիտ" ակումբին մէջ, Մարտ 31ին, կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. Ս. Թէհլիրեան կոմիտէի քարոզչական յանձնախումբին, տեղի ունեցած է դասախօսութիւն մը, նիւթ ունենալով "Հայաստանի Սահմանադրութիւնն ու երկքաղաքացիութեան դրութիւնը": Բացման խօսքը արտասանած է յանուն քարոզչական յանձնախումբին Պաղտիկ Տէմիրճեան, որ ըսած է թէ Սփիւռքահայութեան համար երկքաղաքացիութեան դրութեան որդեգրումը իրականացած է շնորհիւ Սահմանադրութեան հանրաքուէին ընթացքին Հայաստանի քաղաքացիներու ունեցած մեծամիւ "այո"-ներուն: Բանախօսը՝ Շահան Գանտահարեան հաստատած է որ "Քաղաքացիութիւնը ազգային միութեան փաստաթուղթ" մըն է, աւելցնելով որ այդ փաստաթուղթը նոյնինքն Սփիւռքի մէջ ձուլման վտանգին դէմ կարեւոր ազդակ մըն է, որ կ'ապահովէ Սփիւռքահայութեան հայ ազգին պատկանելու կամ Հայաստանը իբրեւ հայրենիք ունենալու գաղափարը: Եզրակացնելով իր խօսքը, ան ըսած է որ ինչ որ ալ ըլլան պայմանները, "ուէ Հայ օրէնքներուն ենթարկուելով պէտք է պատրաստ ըլլայ անպայման ստանալու Հայաստանի քաղաքացիութիւնը":

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՍԿ
Պաշտօնական ամսագիր
կաթողիկոսութեան Հայոց
Մեծի Տանն Կիլիկիոյ
Թիւ 1, Յունուար 2006

Անթիլիաս (Լիբանան)

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

ՄԱՐՍԷՅԼ

Բացի Նահատակաց յուշարձանի բացումէն ուր տեղական իշխանութիւններուն շուրջ գաղութի զանազան "ներկայացուցչական" ըսուած հաւաքականութիւններն ու տարբեր հոսանքները ներկայ գտնուեցան քանի հրաւէրը կու գար իշխանութիւններէն, Մարսէյլի մէջ տեղի ունեցան նոյն օրերը եւ նոյն ժամերուն, Ապրիլ 22էն 24, համանման կամ այլ բնոյթի նախաձեռնութիւններ, հանդիսութիւններ, ձեռնարկներ, ցոյցեր, արարողութիւններ, տողանցքներ, վազք, եւլն.:

Ցարգելով ժամանակագրութիւնը, ահաւասիկ պատկերը, առանց մեկնաբանութեան:

ԱՊՐԻԼ 22

● Նախաձեռնութեամբ ՍԷ.ՍԷ.Ա.ԷՖ.ի 12 եկեղեցիներու վազքը, մարաթոն: Մեկնում Գամփ. Ֆրէզի Ս. Կարապետ եկեղեցիէն ժամը 9ին եւ վերջ՝ Սրբոց Թարգմանչաց եկեղեցին ժամը 17.45ին, յիշողութեան ջահի արծարծումով եւ անցնելով բոլոր հայ առաքելական, աւետարանական, եւ կաթողիկէ եկեղեցիներէն: Մասնակցեցան երիտասարդներ, սկաուտներ, մարզական եւ քաղաքական աշխարհին պատկանող անձեր եւ անձնաւորութիւններ:

Ժամը 20.30ին, ԺԱՖ-ի մշակութային կեդրոնը տեղի ունեցաւ համերգ մը, նուիրուած Ցեղասպանութեան զոհերուն, Սասուն նուագախումբին ելոյթով:

● Նախաձեռնութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ կաթողիկէ ժողովրդապետութեան, ժամը 19.45ին, եկեղեցւոյ սրահին մէջ դասախօսեց Գէորգ Թ. Ծ. Վրդ. Եղիայեան նիւթ ունենալով "Թուրք օսմանեան իշխանութիւններուն կողմէ կատարուած Հայերու ցեղասպանութիւնը": Հրամցուեցաւ գեղարուեստական հայերէն պատշաճ յայտագիր մը: Ներկայ եղան Եղիա Վրդ. Դերձակեան, Զատիկ Վրդ. Աւետիքեան, Մակար Ս. Քհնյ. Նաճառեան, Վեր. Ժիլպէր Լեւոնեան:

ԱՊՐԻԼ 23

● Նախաձեռնութիւն՝ Մարսէյլի հայկական կազմակերպութիւններու ներկայացուցչական խորհուրդին.

– Պլ. Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ժամը 10ին պատարագ եւ ապա ծաղկեպսակի զետեղում Ցեղասպանութեան զոհերու յուշաքարին: Պատարագը մատոյց Մակար Ա. Քհնյ. Նաճառեան: Հոգեհանգիստ տեղի ունեցաւ յուշաքարին առջեւ ուր խօսք առին եկեղեցւոյ Թաղական խորհուրդի Նախագահը՝ Սագօ Տէմիրճեան եւ Հայաստանի Խորհրդարանի երեսփոխան Հրայր Կարապետեան:

– Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ժամը 19ին, հոգեհանգստեան արարողութիւն եւ ապա տողանցք եկեղեցիէն մինչեւ Նահատակաց յուշարձան: Խօսք առին երիտասարդական միութիւններու եւ շարժումներու ներկայացուցիչները: Հ. Յ. Դ. Նոր Սերունդի եւ պատանիներու կողմէ երգ, թատերական ներկայացում եւ ժապաւէնի լուսարձակում:

● Նախաձեռնութիւն՝ ՍԷ.ՍԷ.Ա.ԷՖ.ի.

– Ժամը 18.30ին Սրբոց Թարգմանչաց եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան արարողութիւն: Ժամը 19.15ին Մշակութային կեդրոնին մէջ զրոյց՝ մշակութային, հոգեկան, պատմական, այժմէական հարցերու շուրջ: Ապա, մատաղօրհնութիւն:

● Նախաձեռնութիւն Սէն Թ'Անթուանի Ս. Թադէոս-Բարթողիմէոս եկեղեցիի.

– Առաւօտեան պատարագ եւ հոգեհանգստեան կարգ. ժամը 18ին հոգեհանգստեան արարողութիւն եւ ապա մոմերով թափօր մինչեւ եկեղեցւոյ բակը զետեղուած յուշարձանը: Երգ, արտասանութիւն, խօսք եւ փակում մատաղօրհնութեամբ:

ԱՊՐԻԼ 24

● Նախաձեռնութիւն՝ Մարսէյլի հայկական կազմակերպութիւններու ներկայացուցչական խորհուրդին.

– Ժամը 8.30ին Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ էքիւմէնիք արարողութիւն եւ ապա տողանցք մինչեւ Յուշարձան:

Ամբողջ օրը արիւնի տուչութիւն 1915 Ապրիլ 24 պողոտային վրայ:

– ՍԷ.ՍԷ.Ա.ԷՖ.ի նախաձեռնութեամբ համախմբում Փրատոյի պողոտայի "Տաւիտ"ի արձանին առջեւ եւ անկէ ցոյցի մեկնում դէպի Թրքական հիւպատոսարան: Հիւպատոսարանին առջեւ խօսք առին ՍԷ. ՍԷ. Ա. ԷՖ.ի ներկայացուցիչը, հրեայ համայնքի (ԳՐԻՖ) նախագահը՝ մէթր Իզիտոր Արակոնէս, Մարսէյլի մեծ մուֆթիի ներկայացուցիչը Մոհամէտ Լաքիլա: Ցոյցին առջեւէն քալեցին 91 կիներ իրենց ձեռքը ճերմակ մեխակ մը եւ որպէս պահանջատիրական պաստառ՝ "Ուրանալ՝ երկրորդ անգամ մեռցնել է":

Յետոյ, ցուցարարները անցան Սրբոց Թարգմանչաց եկեղեցին ուր կատարուեցաւ կարճ արարողութիւն մը Նահատակաց յուշարձանին առջեւ եւ խօսք առին քաղաքական անձնաւորութիւններ: Ցուցարարներու թիւն է մօտ հազար հինգ հարիւր:

ՏԵՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒ ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

– Լա Փրովանս.– "Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնը արձանագրուած յատենապէս"

– Լա Մարսէյէզ. – "Հայկական Ցեղասպանութիւն: Համաշխարհային ճանաչումի մը համար":

Կ. Յ.

A.A.A.S.
ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956
recherche
DIRECTEUR(TRICE)
DE MAISON DE RETRAITE

L'Association Arménienne d'Aide Sociale recherche un(e) Directeur (trice) pour une de ses maisons de retraite de la région parisienne.

Le(la) candidat(e) devra faire preuve de ses capacités de gestion et posséder une bonne connaissance de la culture et de la langue arménennes.

Possibilité de logement de fonction.

Prière d'envoyer lettre de motivation et CV à l'adresse suivante:
Monsieur le Président
ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
77 rue La Fayette
75009 PARIS
e-mail : aaas.paris@aaas.fr

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAINE
ՓԱՐԻԶ

BOIS-COLOMBES

Le Dimanche 14 mai
à 16 heures 30
LA COMPAGNIE DE DANSE
YERAZ
présente
PARFUMS D'ARMENIE
Direction artistique :
Christina GALSTIAN-AGOUDJIAN
— **Salle Jean Renoir** —
7 Villa des Aubépines
92270 Bois-Colombes

Réservations :
01 56 83 91 03 — 06 24 33 35 86 — 06 14 74 92 97

UCFAF
6 Cité du Wauxhall
75010 Paris — Métro: République
☎ 01 42 08 76 49

Jeudi 4 mai à 20 heures 45
CONFERENCE - DEBAT

VARTAN BERBERIAN
«LE FIGUIER DE MON PERE»
Editions Anne Carrière

Portrait haut en couleurs d'une communauté discrète, travailleuse et solidaire. Ces mémoires sont un hommage de l'auteur aux siens, réfugiés en France au début des années 20, après avoir tout perdu au cours du génocide de 1915.

L'auteur dédicacera son livre.
P.A.F. : 6 Euros — Adhérents : 4 Euros

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Section «Archalouisse Tatéossian» de Paris

Circuit en Arménie et Artsakh

Du 2 au 12 septembre (Arménie) ou du 2 au 14 septembre (Arménie + Haut Karabagh) — Pension complète sauf à Erévan (1/2 pension) — Hôtels 3 et 4 étoiles — Vol Air France — Prix à partir de 1280 Euros.

Renseignements et inscriptions :
— **Araxie** : 01 39 83 71 19.

Nombre de places étant limité, date limite d'inscription : **15 juin.**

□

CHAVILLE

Soirée Cabaret

La Section «Ter Tavtian» de Chaville organise le samedi 20 mai à partir de 20 heures une **Soirée Cabaret** avec Alain POSTURE, imitateur et GIGI la Fleur de Montmartre, chanteuse et French CANCAN, ainsi que Philippe et Vartan pour les musiques traditionnelles arméniennes.

□

MARSEILLE

La Croix Bleue REGION MARSEILLE organise
DU 24 MAI AU 8 JUIN
— **16 jours** —
un Voyage en Arménie
Hôtel ANI pension complète
Tourisme en car air conditionné

Etcmiadzine — Gumri — Khor Virab — Noravank — Haghpat — Guéghart — Garni — Tadev — Goris — Sartarapat — Djermouk etc., etc...

3 jours au KHARABAGH Hôtel

Départ de Marseille via Paris Erévan
Visas Arménie et Kharabagh
taxe aéroport compris

Prix : 1750 Euros par personne en chambre double.

Réservations :

Christine : 06 12 93 09 80
Jeanine : 04 94 32 11 87
Marie-Rose : 06 22 11 81 75

ՂՊՏԻՆԵՐՈՒ Ի ՆՊԱՍՏ

Եւրոպայի Ղպտիներու Միութիւնը ցոյց մը կը կազմակերպէ Շաբաթ, Ապրիլ 29, ժամը 15·30ին Թրոքատերոյի հրապարակը զօրակցելու համար Եգիպտոսի Ղպտիներուն (Աղեքսանդրիա երեք եկեղեցիներու յարձակման առեն, Ղպտի մը սպաննուեցաւ) :

VOL • SÉJOUR À LA CARTE • CIRCUITS ACCOMPAGNÉS
Les Spécialistes des Voyages en Arménie
SABERATOURS - SEVAN VOYAGES
Paris 01 42 96 10 10 — **Lyon** 04 78 60 13 66 — **Marseille** 04 95 09 30 60
armenie@saberatours.fr — sevan@selectour.com — marseille@wasteels.fr
www.saberatours.fr

«ՅԱՌԱՋ»ի
ընթացիկ ազդերու
սակագինը

	€	
Մահազդ	150	(179,40)
Հոգեհանգիստ	135	(161,46)
Շնորհակալիք	135	(161,46)
Հարսնիք-Նշանտուք	135	(161,46)
Ծնունդ	135	(161,46)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհանուր գումարը) :

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8րդ (12-13 տող) մնացեալին :

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին Վարչութեան :

A la rencontre de l'Arménie et du Karabagh avec l'UCFAF

du lundi 24 juillet au dimanche 6 août
1420 Euros tout compris au départ de Paris
(sauf visas et taxes aéroports)
base chambre double et demi-pension
excursions et visites quotidiennes avec guide francophone
ainsi que circuit 4 jours jusqu'au Karabagh
Renseignements et inscriptions :
UCFAF : 6, Cité du Wauxhall — 75010 Paris
Tél. 01 42 08 76 49 (de 15h à 17h) - Fax 01 42 08 09 70
www.ucfaf.com
Madame YAZIDJIAN — 29-33, avenue Pasteur — 93100 Montreuil
Tél. 01 42 87 95 98 heures bureau

Fabriqué & Distribué par CEPOVETT S.A
150, ancienne route de Beaujeu - GLEIZÉ BP 421
69653 VILLEFRANCHE / SAÔNE CEDEX
Tél : 04 74 62 47 00 - Fax : 04 74 68 20 09 - Em@il : stk@stk.fr

— ARMENIE — ARTSAKH — IRAN DU NORD — SYRIE DU NORD —
ԵՐԿԻՐ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
ORGANISATION TERRE ET CULTURE

DINER DE SOUTIEN

ET PRESENTATION DES PROGRAMMES

Samedi 13 mai à 19 heures

au NOVOTEL-PARIS LES HALLES,
8 Place Marguerite de Navarre, Paris 1er
Métro Châtelet, sortie rue de la Laverie ou Place Saint-Opportune

Participation : 50 Euros (35 Euros pour les étudiants).

Réponse souhaitée avant le 8 mai
Tél.: 01 42 33 08 98 — Courriel: a.andreassian@wanadoo.fr

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976